

Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող **Արցախի Էլեկտրոնային Գրադարանի** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:



Уважаемый читатель!

На сайте **Электронной библиотеки Арцаха**, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха (ОМУСА)**, размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - **Artsakh E-Library** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: <http://artsakhlib.am/>

E-mail: info@artsakhlib.am

Facebook: <https://www.facebook.com/www.artsakhlib.am/>

ВКонтакте: <https://vk.com/artsakhelibrary>

Twitter: <https://twitter.com/ArtsakhELibrary>

ԵՐԿԱՆԻ ԼԱԼԱՅԱՆ

ԵՐԿԵՐ

I

ԵՐԵՎԱՆ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

ЕРВАНД ЛАЛАЯН

ТРУДЫ

В ПЯТИ ТОМАХ

ТОМ

I

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1983

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԳԵՄԻԱ
ՀԱՎԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

63.5
214

ԵՐՎԱՆԻ ԼԱԼԱՅԱՆ


ԵՐԿԵՐ

ՀԻՆԳ ՀԱՏՈՐՈՎ

ՀԱՏՈՐ

I

50.429



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱՎՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1988

Տպագրվում է ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության
ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Հատորը կազմել, ծանոթագրել և տպագրության են պատրաստել

Կ. Վ. Մելիք-Փաշախանյանը և Ա. Մ. Նազինյանը

Պատասխանատու խմբագիր՝ պատմական գիտ. քեկնածու
Գ. Ս. ՎԱՐԳԻՆԻՄՅԱՆ

Գիրքը հրատարակության են երաշխավորել գրախոսներ՝ պատմական գիտ. դոկտոր Վ. Հ. ԹԳՈՅԱՆԸ և բանասիրական գիտ. դոկտոր Գ. Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆԸ:

Լալայան Ե.

Լ 140

Երկեր, Հինգ հատորով /Պատ. խմբ.՝ Գ. Ս. Վարդումյան.—Եր.: ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1983:

Վերնախորագր.՝ ՀՍՍՀ ԳԱ, Հնագիտ. և ազգագր. ին-տ.

Հ. 1 /Հատորը կազմել, ծանոթագրել և տպագր. են պատրաստել Կ. Վ. Մելիք-Փաշախանյանը, Ա. Մ. Նազինյանը. 1983, 457 էջ, 1 թ. նկ.:

Հատորն ամփոփում է Ջավախքի պատմաազգագրական շրջանին վերաբերող Ե. Լալայանի հավաքած ազգագրական-բանահյուսական նյութերը, որոնց մեծ մասը ժամանակին հրատարակվել է «Ազգագրական հանդեսի» Ա—Գ զրբերում և «Ջավախքի բուրմունք» ժողովածուում: Հատորում տեղ է գտել նաև «Կարնո զաղթականություն» անտիպ աշխատությունը: Բուն նյութերից բացի տրված են ներածություն, ծանոթագրություններ և ցանկեր:

Նախատեսված է պատմաբանների, ազգագրագետների, ժողովրդական բանահյուսությունը զբաղվողների և ընթերցող լայն շրջանների համար:



Երվանդ Լալայան (1864—1931)

0508000000

ԳՄԻ 63.5

Լ ————— 36—82

902.7

703 (02)—83

ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԿՈՂՄԻՑ

Հայ ազգագրության և բանահյուսության մեծ երախտավոր Երվանդ Լալայանի գիտական ժառանգությունը ցրված է տպագիր պարբերականներում ու ժողովածուներում, գերազանցապես «Ազգագրական հանդեսի» էջերում և ձեռագիր արխիվային ֆոնդերում: Հիշյալ հրատարակություններն ինքնին մատենագիտական հազվագյուտ օրինակներ են, եվագ մատչելի գիտական լայն շրջաններին: Մինչդեռ Ե. Լալայանի գիտական ժառանգությունը, մասնավորապես Հայաստանի պատմագագագրական շրջաններին նվիրված նրա համալիր նյութերն ու հետազոտությունները մինչև օրս պահպանել են իրենց այժմեականությունն ու քարմությունը: Այս նկատառումով էլ Ե. Լալայանի աշխատությունների գիտական հրատարակությունը հույժ կարևորություն է ստանում:

Հրատարակության համար հիմնական սկզբունք է ընդունված՝ ընդգրկել Ե. Լալայանի ազգագրական, բանահյուսական, պատմաճանաչատական ու վիճագրական բոլոր այն* նյութերը և օտումնասիրությունները, որոնք չեն կորցրել իրենց գիտական արժեքը: Ե. Լալայանի աշխատությունների ներկա հրատարակության մեջ չեն ընդգրկվում նրա հավաքում ու հրատարակած հեֆիաթները, քանի որ դրանք տեղ են գտել ու շարունակվելու են տպագրվել «Հայ ժողովրդական հեֆիաթների» բազմահատորյակում: Ներկա հրատարակությունից դուրս է թողնվում նաև «Ցուցակ վասպուրականի ձեռագրաց» աշխատությունը, նկատի ունենալով, որ դրանք նշգրտված ու լրացված օգտագործված են Մաշտոցյան Մատենադարանի կողմից հրատարակվող ընդհանուր ձեռագրացուցակում: Բացառված են բանահյուսական այն նյութերը, որոնք հրատարակված են ժանրային համանավաճներում (ավանդություններ, առակներ, անեկդոտներ և այլն):

Երվանդ Լալայանի աշխատությունների գիտական հրատարակությունը նախատեսվում է իրագործել հինգ հատորով: Առաջին շարս հատորում կգտնեղվեն Հայաստանի պատմագագագրական շրջաններին վերաբերող ազգագրական-բանահյուսական ամբողջական, համալիր

նյութերը (Ջավախք, Արցախ—Սյունիք, Լոռի—Գուգարք, Գեղարձունիք, Վայոց ձոր, Գողթն, Վասպուրական, Տուրքիստան): Հիշյալ հատորներում կօգտագործվեն նաև Ե. Լալայանի հրատարակած երեք պրովի լասանկարները: Վերջին՝ հինգերորդ հատորում կընդգրկվեն ազգագրության, բանահյուսության, պատմության, հնագիտության և մշակույթի այլ բնագավառներին վերաբերող Ե. Լալայանի առանձին ուսումնասիրություններն ու հոդվածները: Առաջին հատորի սկզբում տրվում է Ե. Լալայանի կյանքին ու գործունեությանը նվիրված ներածական ակնարկ, վերջին հատորում կգեթեղվի Ե. Լալայանի տպագիր և անտպարուր նյութերի ընդարձակ մատենագիտական ցուցակը: Յուրաքանչյուր հատոր բնագրերին կից կունենա ծանոթագրություններ և ցանկեր:

Ներկա հրատարակության մեջ առպես բնագրաբանական ընդունված սկզբունք պահպանված են հեղինակի լեզուն և ոճը: Կատարվել են միայն մասնակի շտկումներ՝ հին ուղղագրությունը փոխարինված է նորով, ուղղված են տպագրական վրիպակներն ու բացահայտ վրիպումները, նշգրտված են սկզբնաղբյուրներն ու դրանցից կատարված ֆոնվածմաները: Հեղինակի օգտագործած այն վիճագիր արձանագրությունները, որոնք տեղ են գտել «Դիվան հայ վիճագրության» համանավաճում, նշգրտված են ըստ «Դիվանի» բնագրի: Աշխատության մեջ ընդգրկված պատմական փաստերն ու վիճակագրական տեղեկությունները անդադարձնում են իր ժամանակի սկզբնաղբյուրների հնարավորությունները և կարող են որոշ չափով հնացած կամ վիճարկելի լինել:

ԵՐՎԱՆԻ ԼԱԼԱՅԱՆԻ ԿՅԱՆՔԸ ՈՒ ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Ականավոր ազգագրագետ, բանահավաք-բանագետ, հնագետ, մանկավարժ ու հասարակական գործիչ երվանդ Լալայանը բացառիկ տեղ է գրավում հայագիտության երախտավորների շարքում: Մասնավորապես մեծ են Ե. Լալայանի ծառայությունները հայ ժողովրդագիտության զարգացման տպարեզում: Իր գիտական աշխատություններով և հատկապես իր հիմնադրած «Ազգագրական հանդեսով» (1896—1916) Ե. Լալայանը բազմակողմանի, խոր և ծավալուն աշխատանք է կատարել հայ ազգագրության ու բանահյուսության բնագավառում: Անցնելով ժամանակի ուսական և եվրոպական ժողովրդագիտության ուսումնառության հիմնավոր դպրոց, զինված գիտելիքների հարուստ պաշարով և ժամանակի առաջավոր մեթոդներով, Ե. Լալայանը հայ իրականության մեջ ազգագրության և բանահյուսության ուղղությամբ իր նախորդների սկսած նույժ կարևոր գործը բարձրացրեց նոր մակարդակի: Նա փաստորեն դարձավ հայ գիտական ազգագրության ու բանագիտության հիմնադիրը:

Երվանդ Ալեքսանդրի Լալայանը ծնվել է 1864 թ. մարտի 13-ին, Ալեքսանդրապոլում (այժմ՝ Լենինական), բանվորի ընտանիքում: Ե. Լալայանի ծնողները սերում էին Լեոնային Ղարաբաղի նահապետական նին գերդաստանից: Նրանց բազմակողմ ընտանիքում հարգի էին հասակետական ազգային սովորույթներն ու ավանդույթները: Նախնական կրթությունը տեղում ստանալուց հետո, ուշիմ և ընդունակ պատանին ընդունվում է Քիֆլիսի ներսիսյան դպրոցը և ավարտում այն 1885 թ.: Կրթությունը շարունակելու համար նյութական միջոցներ չունենալով, Ե. Լալայանը հինգ տարի ուսուցչությամբ է զբաղվում Ախալցխայում, Ալեքսանդրապոլում և Ախալքալախում, դասավանդելով այդ ֆազանե-

րի թեմական դպրոցներում: Ախալքալաքում էլ Ե. Կալայանն ամուսնա-
նամ է տեղի առաջավոր հասարակական գործիչ Արտեմ Հարությունյանի
դստեր՝ Հայկանուշ Հարությունյանի հետ: Ուսման հարգն իմացող ու
լուսավոր հայացքների տեր Արտեմ Հարությունյանը միջոցներ է հայ-
քայքում, և 1890 թ. Ե. Կալայանը կնոջ՝ Հայկանուշ Կալայան-Հարու-
թյունյանի հետ մեկնում է ժենև, որտեղ ինքն ուսանում է ժենևի հա-
մալսարանի հասարակագիտական բաժնում, իսկ կինը՝ բնագիտական:
Նրանց ուսումնառությունն ընթանում է նյուրթական սուղ պայմաններում:
Պահպանվել են Ե. Կալայանի դիմումները, ուղղված Կովկասի Հայոց
բաժնեգործական ընկերությանն ու ամենայն հայոց կարողիկոս Մկրտիչ
Խրիմյանին: Ե. Կալայանը կաթողիկոսին գրում է. «Սաչը երբ մտա էինք
վերջացնելու մեր այսման դժվարությամբ սկսածը, մեր նյուրթական մի-
ջոցներն սպառեցան, և ես ստիպվեցա թողնել ամուսնուս ժենև և վերա-
դառնալ հայրենիք՝ նոր միջոց գտնելու: Շատ ապարդյուն դիմումներ
անելուց հետո՝ եկել եմ ամենախոնարհաբար խնդրելու Ազգալույս հայ-
րապետիդ՝ բարեհաճել նպաստելու մեզ մեր ուսումը վերջացնելու,
և մեծահույս եմ, որ Արեղ վեհափառությունը շախախտված մեր խնդիրը
կատարելու»¹: Ի վերջո, Ե. Կալայանը կաթողիկոսից որոշ գումար է
ստանում այն պայմանով, որ համալսարանն ավարտելուց հետո ինքը
և կինը կաշխատեն հայկական դպրոցներում:

1894 թ. Կալայան ամուսիններն ավարտում են ժենևի համալսարանի
դասընթացը: Ե. Կալայանին շնորհվում է սոցիալական գիտություն-
ների թեկնածուի աստիճան: Այնուհետև Ե. Կալայանը վեց ամիս աշ-
խատում է Վիեննայի Մխիթարյանների մոտ, ապա՝ Փարիզի Մարգա-
րանական դպրոցում: Ե. Կալայանը ավարտում է նաև Լոնդոնի համա-
լսարանին կից մանկավարժության դասընթացը և ստանում է մանկա-
վարժի որակավորում: Վերադառնալով Անդրկովկաս, նա 1895—1897 թթ.
աշխատում է Շուշիի թեմական դպրոցում որպես դասատու²:

Ե. Կալայանը փայփայում էր ազգագրական հանդես ստեղծելու գա-
ղափարը և մեծ ջանքեր է գործադրում այդ ուղղությամբ: 1896 թ. նրան
հաջողվում է հենց Շուշիում լույս ընծայել «Ազգագրական հանդեսի»
առաջին գիրքը, ու «Հրատարակչից» խորագիրը կրող համառոտ առա-
ջաբանում շարագրում է ամսագրի նպատակները: Նա գրում է. «Ռպեա-

կան ազդեցության տակ շենև վնոել մի այդպիսի հանդեսի հրատարա-
կության ձեռնամուխ լինել, ոչ էլ պատահամբ ենք բնորել այս. մեզ
հանաչողները գիտեն, թե որքան ժամանակից յ վեր փայփայել ենք այս
միտքը և որքան արգելքներ ենք հաղթել փոփոխատե նախապատրաստ-
վելու այս գործի համար: Այսօր մենք հանդես ենք գալիս ոչ թե միայն
մեր ուժերի վրա վստահացած, այլ ազգի ինքնահանաչության զգացման:
Թերթերի մեջ սփռված և ստահոթին լույս տեսնող ազգագրական հոդ-
վածներն արդեն ապացուցում են, որ հայոց ազգն էլ վերջապես գար-
բել է խոր ֆնից և ցանկանում է կատարել գիտության ամենիմաստ
խոսքը. «Մանի՛ր գեղզ». նա կամենում է հանաչել իրեն և յուր ազգային
հատկությունների վրա նիմնել ազգային զգացումը»: Այնուհետև Ե. Կա-
լայանը նշում է, որ մենք մասնագետ ազգագրադեմներ չունենք,
ուստի և կոչ է անում ուսուցիչներին և ուսուցչուհիներին ձեռնամուխ
լինելու ազգագրական նյութերի հավաքմանը: Ե. Կալայանը նշում է, որ
այժմ մեր խնդիրը միայն նյութեր հավաքելն է, որովհետև ստանց
դրան անհնարին է գիտական աշխատություն գրելը և վերջացնում է
հետևյալ խոսքերով. «Մենք կլրենք ֆաբերը, և երանի նրան, ով կգա
այդ ֆաբերով ազգային ինքնահանաչության շենևը կատուցանելու և հա-
մամարդկային էվոլյուսիոնի օրենքները գծելու»³:

«Ազգագրական հանդեսը» հրատարակվում է 20 տարի, 26 գրքով:
Հանդեսի շուրջն էին համալսարնական ժամանակի լավագույն գիտական
ուժերը՝ Մ. Արեղյանը, Թ. Թորամանյանը, Հ. Անադյանը, Լեռն, Է. Մե-
լիսեթ-Յեկը, Սա. Կոսիցյանը, Ս. Ջելինսկին, Ե. Շահագիրը, Հ. Կարա-
Մուրզան և ուրիշներ: «Ազգագրական հանդեսի» հրատարակումը շերտ-
րեն ողջունեցին մի շարք ամսագրեր: «Հանդես ամսօրյայի» 1896 թ.
№ 5-ում տպագրված գրախոսականում բարձր է գնահատվում «Ազգա-
գրական հանդեսի» նոր լույս տեսած առաջին գիրքը, և նրա խմբագիր
Ե. Կալայանը համարվում է առաջին հայ ազգագրագետը: Թիֆլիսում
հրատարակվող «НОВОЕ СООЗРЕНИЕ» թերթը իր 1896 թ. № 4213-ում հա-
ղորդում է «Ազգագրական հանդեսի» Ա գրքի լույս ընծայման մասին
և ցանկանում հաջողություն՝ հետագա հատորների հրատարակման գոր-
ծում:

«Քաղմավեպում» Հ. Թորոսյանը «Ազգագրական հանդեսի» մասին
հետևյալն է գրում. «Այս համառոտ ակնարկը կվերջացնենք, հայտնե-

¹ Ս. Մարգարյան, Ե. Կալայանի կյանքն ու գործունեությունը արտացոլող փաստա-
թղթեր: ՏԵՍ՝ Վեհերի Հայաստանի արխիվներին, Երևան, 1963, № 1, էջ 124:

² Ան. Պատմությունը Հարարագի հայոց թեմական հոգևոր դպրոցի, 1838—1913,
Թիֆլիս, 1914, էջ 38:

³ «Ազգագրական հանդես» (այսուհետև ԱՀ), գիրք Ա, Շուշի, 1896, էջ 6:

լով հարգելի հրատարակչին մեր ուրախությունը, մեր համակրանքաց շերտ գրագումունները, փոխանակ այս անգին ծառայության՝ զոր կը մատուցանե մեր ազգայինը իրեն հանդեսի տեսնով»⁴:

Երկուսն էլ հասուն կանգնելով ուղղունում է «Ազգագրական հանդեսի» հրատարակ գալը, գրելով. «Պր. Ե. Լալայան, խմբագիր ազգագրական վեցամսեայ հանդեսի, որ բունաշան վաստակո՞ք ի լոյս էած գլխեսին հառառ հանդեսին ազգագրական, տեղագրական, հնախօսական և գիտական նոխ բովանդակութամբ, և մեք գիտեմք, թէ քանիսն դժուարին է հաւաքումն, դաստորումն և հրատարակութիւնն նոցին, և որչափ կարօտին այնպիսիք բնդհանրապէս հրատարակիչք՝ Բաշալեւութեան և նպաստից, թէ նիւթական և թէ բարոյական»⁵:

2. Մեղավորյանը «Ազգագրական հանդեսի» մասին «Մուրն» ամսագրում գրում է հետևյալը. «Ազգագրական հանդեսի» երևալը մեր պարբերական մամուլի աննախանձելի ասպարեզում մի նշանավոր երեվոյթ է և մեր սրտին շատ մտ»⁶:

Նման ուղղույններով հանդես եկան նաև «Դեղուրի»⁷, «Անահիտ»⁸ և մյուս հանդեսները:

Անդրկովկասում ազգագրական աշխատանքներն ավելի ծավալելու նպատակով, Ե. Լալայանը 1900 թ. նոյեմբերի 21-ին Քիֆլիսում հիմնադրում է Ազգագրական հրատարակչական ընկերությունը, որի անդամների թիվը 1905 թ. հասնում է 80-ի: Ե. Լալայանը մտադիր էր ավելի ընդարձակել Ազգագրական հրատարակչական ընկերության գործունեությունը, այն վերածելով Հայոց ազգագրական ընկերության: Այդ նպատակով 1906 թ. կազմվում է ընկերության ծրագիր: Դրանով հիմն է դրվում Հայոց ազգագրական ընկերությանը: «Մշակի» 1906 թ. № 116-ում տպագրված է ընկերության նախագահ Ա. Մելիք-Ազարյանի և անդամ-հարուստը Ե. Լալայանի շրջաբերականն ընկերության հիմնադրման մասին⁹, և «Մշակի» ուղղույնն այդ առթիվ¹⁰:

4 2. Քարոյան, Գրախոսական ակնարկ. տե՛ս «Բազմակից», Վենետիկ, 1900, № 3, էջ 370:

5 Ա.2, գիրք Ե, Քիֆլիս, 1899, էջ 1:

6 2. Մեղավորյան, «Ազգագրական հանդես», գիրք Ա, տե՛ս «Մուրն», Քիֆլիս, 1896, № 3-4, էջ 463:

7 «Գեղուրի», Վենետիկ, 1903, էջ 78:

8 «Անահիտ», Փարիզ, 1899, № 5-6:

9 «Մշակ», Քիֆլիս, 1906, № 116:

10 Նույն տեղում, № 127:

Ընկերության նպատակը, ինչպես գրված էր հիմնադրության առաջին կետում, հետևյալն է. «...Ուսումնասիրել Կովկասը, նրան կից երկրները և հայկական գաղութները, մասնավորապես ազգագրական և ընդհանրապես մարդաբանական գիտությունների տեսակետից»¹¹: Այս իրագործելու համար ընկերությունը պետք է հրատարակեր պարբերականներ, գրքեր, ֆարսեզներ, կազմակերպեր գիտական արշավամբեր, կատարեր ննագիտական պեղումներ, նպաստեր էջմիածնի և կովկասյան թանգարանների ֆոնդերի հարստացմանը, բաց աներ գրադարան, կազմակերպեր հրատարակչային դասախոսություններ, ազգագրական-երաժրշտական երեկույթներ, մրցանակներ սահմաներ արևելագիտական լավագույն աշխատանքների համար: Վերոհիշյալ աշխատանքների մեծ մասը պետք է կատարեր խմբագրական մասնաժողովը, որը, ընդհուպ մինչև ընկերության գործունեության դադարումը, ղեկավարում էր Ե. Լալայանը:

Նորաստեղծ Ազգագրական ընկերությունը Ե. Լալայանի գլխավորությամբ իր գոյության ավելի քան տասը տարվա ընթացքում նկատելի աշխատանք ծավալեց: Ընկերությունը կարևոր գործ կատարեց ազգագրական-ննագիտական թանգարան հիմնելու ուղղությամբ: 1907 թ. մարտի 30-ին հրավիրված Հայոց ազգագրական ընկերության ժողովը որոշում ընդունեց նախապատրաստական աշխատանքներ տանել թանգարան ստեղծելու համար, և այդ կապակցությամբ անհրաժեշտ համարվեց հրատարակել նյութեր հավաքելու ծրագիր, պատրաստել մասյաններ՝ նյութերը գրանցելու համար, ստեղծել պահեստ Քիֆլիսում և այլն: Շուտով ծրագիրը տպագրվում է «Ազգագրական հանդեսի» 16-րդ գրքում, այսպ՝ առանձին գրույկով:

Ե. Լալայանի եռանդուն ջանքերի շնորհիվ կազմակերպվում է թանգարան, ուր կարևոր տեղ են գրավում նրա հավաքած և պեղած նյութերը: Թանգարանը գնալով հարստանում է, հասարակայնությունը ակտիվ մասնակցում է նյութական և հոգևոր մշակույթին վերաբերող նյութերի հավաքման գործին: Թանգարանն արդեն այնքան ճանաչում էր ստացել, որ ռուսական բնասերների, և բժիշկների 1913 թ. կապացած XIII համագումարի աշխարհագրական ենթասեկցիայի բյուրոն դիմել էր Հայոց ազգագրական ընկերությանը՝ խնդրելով համագումարի օրերին Քիֆլի-

11 Ա.2, գիրք 14, Քիֆլիս, 1906, էջ 186:

սում ցուցանանքն կազմակերպել¹²: Ուշագրավ է նաև այն փաստը, որ Ի. Բորոդինը կայսերական աշխարհագրական ընկերության անունից 1913 թ. ապրիլի 24-ին դիմում է Ե. Լալայանին, խնդրելով միջոցներ ձեռք առնել բնության պահպանության համար¹³: Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց հետո Ե. Լալայանի ջանքերով բանգարանը փոխադրվում է Երևան, նրա բազայի վրա կազմակերպվում է Հայաստանի պատմության պետական բանգարանը, որի ազգագրության բաժնի առաջին վարիչը դառնում է Ե. Լալայանը:

Հիմնադրելով Հայոց ազգագրական ընկերությունը, Ե. Լալայանը նպատակ ուներ դարձնել այն ոչ միայն ազգագրական-բանասիրական բնույթի նյութերի հավաքման և հրատարակման մի ընդարձակ հաստատություն, այլև գիտական ուսումնասիրությունների կենտրոն: Ահա քեղինչու նա շատ ջանք է թափում Քիֆլիսում ազգագրական-մարդաբանական գրադարան բացելու ուղղությամբ: «Մշակ»-ի 1908 թ. № 55-ում տպագրված է Հայոց ազգագրական ընկերության հախագան Ա. Մելիք-Ազարյանի, անդամ-հարուստ Ե. Լալայանի և մյուս անդամների՝ խմբագրությանն ուղղված նամակը, որտեղ ասվում է, որ ընկերության խորհուրդը 1908 թ. հունվարի 4-ի նիստում որոշեց Քիֆլիսում բացել այդպիսի գրադարան, օգտվելով այն հանգամանքից, որ Ե. Լալայանը այդ գիտությունների վերաբերյալ իր հարուստ գրադարանը (5000 ուսուցիչական) դնում է ընկերության տրամադրության տակ: Նամակի ներկայացրած միաժամանակ խնդրում էին հասարակությանը՝ օգնություն ցույց տալու այդ գործին: Գրքերի ֆանակը գնալով անում է, հատկապես նվիրատվությունների, զբաղմունքանկությունների հաշվին, և շուտով դրանց թիվը հասնում է տասը հազարի: Գրադարանի վարիչ է դառնում Ե. Լալայանի կինը՝ Հայկանուշ Լալայանը, որն այդ գործը կատարում է առանց վարձատրության: Հայոց ազգագրական ընկերությունը բույրավորություն էր ստացել հայ գրքերի գյուտի 1500-ամյա և հայկական տպագրության 400-ամյա հորելյանի առթիվ Քիֆլիսում կազմակերպելու հայկական հրատարակությունների ցուցանանքն և դասախոսությունների շարք: Այդ ցուցանանքն կազմակերպման գործում գրադարանը մեծ դեր խաղաց: Հրատարակվում է նաև «Ազգագրական գրադարան» խորագրով մատենաշար, որից լույս տեսավ ընդամենը հինգ գիրք:

Հայոց ազգագրական ընկերությունը Ե. Լալայանի գլխավորությամբ

¹² Ե. Զարեհյի անվան գրականության և արվեստի թանգարան, Ե. Լալայանի ֆոնդ, 714/24:

¹³ Նույն տեղում, 714/21:

Պարևոս տեղ էր հատկացնում ազգագրական և մարդաբանական գիտությունների պրոպագանդանը. այդ կապակցությամբ պարբերաբար կազմակերպվում էին դասախոսություններ և զեկուցումներ, որոնցով հանդես էին գալիս ժամանակի նշանավոր գիտնականները: Այսպես, Մ. Հովհաննիսյանը դասախոսություն է կարդացել «Կրոնի գաղափարի ծագման և էվոլյուցիայի մասին»¹⁴ թեմայով, Գ. Լեոնյանը հանդես է եկել հայ աշուղների և մասնավորապես Ջիվանու կյանքի ու ստեղծագործության վերաբերյալ դասախոսությամբ, որը զուգակցվել է աշուղների ելույթներով, Ե. Լալայանը զեկուցում է կարդացել ասորիների մասին: Գ. Խալաթյանի մահվան տարեդարձի առթիվ տեղի է ունեցել Հայոց ազգագրական ընկերության հրատարակային նիստը, որ Ե. Լալայանը և Աուրյետը հանգամանաբեկ են երկայացրել են հանգուցյալի գործունեությունը: Հ. Համբարձումյանը հանդես է եկել սովորության իրավունքի էության, նրա օբյեկտիվ արտահայտության և ժամանակակից հասարակական կյանքում ունեցած ազդեցության հարցին նվիրված դասախոսությամբ¹⁵: Գ. Իսիկյանը զեկուցել է «Հայկական ամուսնական սովորությունները» թեմայով և այլն: Ձեկուցումներից հետո տեղի են ունեցել վիճաբանություններ, որտեղ հանդես են եկել Ե. Լալայանը, Լեոն, Մ. Արեղյանը, Ս. Կանայանը, Մ. Խոստիկյանը, Լ. Մելիքսեթ-Քեկը և ուրիշներ:

Հայոց ազգագրական ընկերությունը հանախակի կազմակերպում էր նաև գիտական ու գրական երեկոներ, համերգներ, պարանանդեսներ, օպերաների դիտումներ, որոնցից ստացված եկամուտները մուծվում էին Հայկերության գանձարանը¹⁷: Նման երեկույթներ կազմակերպվում էին ոչ միայն Քիֆլիսում, այլև ուրիշ ֆաղաֆներում:

Ե. Լալայանի հրատարակած առաջին աշխի ընկնող գործը «Ջավախքի բուրմունք» բանահյուսական ժողովածուն էր¹⁸:

Այնուհետև Ե. Լալայանը հրատարակում է մի ֆանի փոքր, բայց հետաքրքրական հոդվածներ: Դրանցից են. «Սուրբ Սարգիս», որ համառուսակի նկարագրում է Ս. Սարգսի պաշտամունքը և մեջ բերում գրույցներ Ախալքալաքի բարբառով¹⁹: «Տանկախոս հոտմեական հայերը» հոդ-

¹⁴ «Մշակ», 1912, № 279:

¹⁵ Նույն տեղում, 1913, № 43:

¹⁶ Նույն տեղում, № 31:

¹⁷ «Մշակ», 1913, № 92:

¹⁸ «Ջավախքի բուրմունք», հավաքեց Ե. Լալայանը, Քիֆլիս, 1892:

¹⁹ «Հանդես ամսօրյա», 1894, № 11, էջ 350—353:

վածք²⁰ վերաբերում է Ախալալախի գավառի Բավրա, Խուզումա, Կարախիլում և մասամբ Տուրս գյուղերի բնակիչներին, որոնք այդտեղ են գաղթել 1829 թ. Արդանանի գավառից: Վերահիշյալ երկու հոգվածներն էլ նույնությամբ ընդգրկված են հեղինակի «Ջավախխ» պատմագագագրական աշխատության մեջ:

Ե. Լալայանը Փարիզի ժողովրդական ավանդույթների ընկերության գործուն անդամներից էր և 1895 թ. այդ ընկերության պարբերականում տպագրվում է նրա «Հայկական ավանդությունները և սնտիապաշտությունները» հոդվածաշարը: Մասնա հետազայում տեղ գտան հեղինակի «Ջավախխ» պատմագագագրական աշխատության մեջ: Ե. Լալայանը Փարիզի մարդաբանական ընկերության ժողովում դասախոսություն է կարդացել «Հայոց նախնի պատմական երգերի և ավանդությունների մասին»: Զեկուցումը տպագրվել է „Bulletin de la societe d' Anthropologie“²¹ 1896 թ., իսկ Ե. Լալայանը ընտրվել է վերահիշյալ ընկերության քրթակից-անդամ:

«Ազգագրական հանդեսի» Ա. գրում գետեղված է Ե. Լալայանի «Համառոտ տեսություն հայ ազգագրության» հոդվածը: Պետք է նկատել, որ XIX դարի երկրորդ կեսին ազգագրությունը և բանահյուսությունը դեռևս տարանջատված չէին, ուստի հեղինակը խոսում է թե՛ բանահյուսության, թե՛ ազգագրության մասին, առավելապես ծանրանալով հոգեվոր մշակույթի վրա: Հոդվածը, սակայն, անախարհ է և շատ հեռու հայ ազգագրության համառոտ տեսություն լինելուց:

«Ազգագրական հանդեսի» Ա. և Բ. գրքերում տպագրված է Ե. Լալայանի «Ջավախխ» մեծածավալ, արժեքավոր աշխատությունը, որը գրված է հեղինակի հավաքած նյութերի հիման վրա և որպես այդպիսին ամբողջովին նորույթ է: Աշխատությունը կազմված է հետևյալ մասերից՝ «Պատմական համառոտ տեսությունը», որ տրվում է Ջավախխի պատմական անցյալը հնագույն ժամանակներից մինչև XIX դ. վերջը, «Ջավախխի տեղագրությունը»՝ լեռներ, լճեր, գետեր, կլիման, բուսական և կենդանական աշխարհը, նշանավոր գյուղերը, հնությունները՝ եկեղեցիներ, ամրոցներ: Մյուս գլուխները նվիրված են Ջավախխի բնակչությանը. հանգամանորեն տրվում են փհնակագրական տվյալներ Ջավախխում բնակվող հայերի, հայ բոշաների, ռուսների, վրացիների, հույների, թուրքերի, ֆրդերի, ինչպես նաև ազգաբնակչության տեղաշարժի, տրն-

²⁰ «Հանդես ամսօրյա», 1894, № 10, էջ 313—315:

²¹ Տե՛ս „Revue des traditions populaires“, Փարիզ, 1895, № 1, էջ 1—9, № 3, էջ

տեսական դրույթան, ժողովրդի լուսավորության մասին, ապա՝ բնակա-
տանների, ամուսնության և հարսանեկան սովորույթների, բնտանե-
կան կյանքի, բժշկության, հավատալիքների, սնանկավատության, հոգու
և հանդերձյալ կյանքի և այլ հարցերի վերաբերյալ:

Ե. Լալայանի աշխատությունը շեմ ընդունելություն գտավ: Անգամ
նրա կենդանիներից Գ. Վանցյանը ստիպված էր ընդունել, որ «Հանդեսի»
ժուռն ու էությունն է «Ջավախխ» ինքնուրույն ժողովրդական հավաքա-
ծուն, որ յուր առատ, բազմակողմանի նյութով մի ահագին գանձ է հայ
ազգագրության համար»²²:

«Ազգագրական հանդեսի» Բ և Գ գրքերում է գետեղված Ե. Լալայա-
նի խմբագրությամբ լույս աեսած կոլեկտիվ «Վարանդա» աշխատու-
թյունը: Այդ արժեքավոր հետազոտության իրագործմանը մասնակցել են
Ե. Լալայանը, Լ. Աթաբեկյանը, Ղ. Տեր-Ղազարյանը, Հ. Վ.—ն և Ա. Բ.—ն,
աշխատության մեծ մասը գրել է Ե. Լալայանը²³: «Ազգագրական հան-
դեսի» Գ գրքում նույն ընդարձակ ծրագրով շարադրված են «Սիսիան»
և «Ջանգեզուր» աշխատությունները²⁴: Նույն մեթոդով ու սկզբունքներով
Ե. Լալայանը «Ազգագրական հանդեսի» տարբեր գրքերում հրատարակ է
հանում Գանձակի գավառի²⁵, Բորչալուի գավառի²⁶ նվիրված ծավա-
լուն աշխատությունները:

Այնուհետև լույս է տեսնում նաև Ե. Լալայանի «Նոր Բայազետի
գավառ կամ 'Կեղարհունիք' մեծածավալ աշխատությունը²⁷, որ հա-
մանգամանորեն տալիս է նոր Բայազետի տեղագրությունը, պատմու-
թյունը, հարսանեկան սովորույթները, հավատքը: Աշխատությունը
գրված է երկար տարիների ընթացքում Ե. Լալայանի հավաքած ազգա-
գրական-բանահյուսական նյութերի և կատարած պեղումների հիման
վրա: Ե. Լալայանի «Նոր Բայազետի գավառ» աշխատությունն արժանա-
ցել է Դավաթյան մրցանակի, իսկ «Գանձակի գավառը»՝ Մահակ-Մես-
րոյան մրցանակի:

²² Գ. Վանցյան, «Ազգագրական հանդես», գիրք Ա. Տե՛ս «Մուրճ», Թիֆլիս, 1896,
№ 5, էջ 635:

²³ Ա.Է, գիրք Գ, 1898:

²⁴ Ա.Է, գիրք Գ, 1898:

²⁵ Ա.Է, գիրք Ե, 1899: գիրք Զ, 1900, գիրք Դ—Տ, 1901:

²⁶ Նույն տեղում, գիրք Դ—Տ, 1901, գիրք 9, 1902, գիրք 10, 1903, գիրք 11, 1904:

²⁷ Ա.Է, գիրք 13, 1906, գիրք 15, 1907, գիրք 16, 1907, գիրք 17, 1908, գիրք 18,
1908, գիրք 19, 1910, գիրք 20, 1910, գիրք 22, 1912, գիրք 23, 1912, գիրք 24, 1913:

Իր հաշորդ աշխատանքը՝ «Վասպուրականը», Ե. Լալայանը նախատեսել էր հրատարակել մի քանի հատորով, սակայն դա նրան չի հաջողվում: Հրատարակված աշխատությունը կազմված է հետևյալ մասերից՝ Վասպուրականի ազգագրությունը, բանահյուսությունը, Վասպուրականի ասորիները, տնայնագործությունը, նշանավոր վանքերը, բնդ որում նա ոչ միայն վանքերի նկարագրությանն է անդադառնում, այլև խոսում է վանքերի շուրջը կատարվող ծեսերի մասին, տալիս է վանքերի և նրանց շրջակա տապանաբարերի արձանագրությունների վերլուծությունը: Գա մի հիմնաբար և արժեքավոր աշխատություն է Վասպուրականի վերաբերյալ և արդյունք է ներդրեալի մի քանի տարիների համառ, քրտնաշան աշխատանքի:

Ե. Լալայանի տեսական բնույթի աշխատություններից է «Միսական կարգերը հայոց մեջ» հոդվածաշարը²⁹ (շարադրված է Հ. Խլիկեսների մեթոդով), որը թեև պարունակում է մի շարք սխալ դրույթներ. բայց արժեքավոր է փաստական հարուստ նյութի օգտագործմամբ: Ե. Լալայանի կյանքի վերջին շրջանում գրած աշխատություններից է «Նիժի և Վարդաշենի ուտիները ազգագրական տեսակետից»³⁰ հոդվածը, որը նրա երկամյա ուսումնասիրության արդյունքն է և հիմնականում գրված է իր հավաքած նյութերի հիման վրա: Հեղինակը համառոտակի նկարագրում է Նիժի և Վարդաշենի տեղագրությունը, բուսական և կենդանական աշխարհը, ուտիների ծագմանը վերաբերող տեսակետները, ապա անցնում է լեզվին: Սոցիալական կարգը բնորոշելիս նետաբերելով տվյալներ է բերում անցյալում ուտիների մեջ գոյություն ունեցած մայրիշխանության մասին: Բայց աշխատությունն ամբողջական չէ, որովհետև չեն արված ուտիների սոցիալական հարաբերությունները, հավատքը, մշակույթը:

Ե. Լալայանի վերջին աշխատությունը «Տղաբերքի սովորությունների զարգացումը հայոց մեջ» զեկուցումն է, որ հա կարդացել է ՀՍԽՀ գիտության և արվեստի ինստիտուտի պատմահասարակական բաժնում, 1930 թ. մայիսի 10-ին, այն լույս է տեսել նեյիհեակի մահից հետո՝ 1931 թ., նույն ինստիտուտի «Տեղեկագրի» 5-րդ հատորում: Հոդվածում Ե. Լալայանը օգտագործելով իր հավաքած նյութերը, ինչպես նաև համեմատական ազգագրության հարուստ տվյալները, հանգամանորեն բացահայտում է տղաբերքի սովորությունների էվոլյուցիան՝ սկսած նեա-

²⁸ ԱՀ, գիրք 20, 1910, գիրք 21, 1912, գիրք 22, 1912, գիրք 23, 1912, գիրք 24, 1913, գիրք 25, 1914, գիրք 26, 1916:

²⁹ ԱՀ, գիրք 21, 1912, գիրք 23, 1912, գիրք 25, 1914, գիրք 26, 1916:

³⁰ «ՀՍԽՀ Գիտության և արվեստի ինստիտուտի տեղեկագիր», № 1, Երևան, 1925:

գույն շրջաններից մինչև XX դարի սկիզբը: Տալիս է տղաբերքի սովորությունների համալիրը բոլոր տարրերով հանդերձ՝ ամուլություն, հոդի կնոջն օգնող և հալածող ոգիներ, ծնունդ, քառասուն և այլն: Տղաբերքի սովորությունները ֆենեյիս Ե. Լալայանը հիմնաբեն ցույց է տալիս նրա աղբսր ջրի, կրակի, կենդանիների, ծառերի, փառերի պաշտամունքի և նմանական կախարհության հետ:

Երվանդ Լալայանի գիտական գործունեության հիմնական բնագավառներից է եղել ժողովրդական բանահյուսությունը: Ե. Լալայանը գիտական ասպարեզ մտավ այն ժամանակ, երբ հայ բանահյուսության ուսմովիւր Գաբրիել Մելամադյանցի օրինակով նշանակալից աշխատանք էր կատարված բանահյուսական նյութերի հավաքման և հրատարակման ասպարեզում: Բացի Գ. Մելամադյանցի հանրահայտ «Գրոց-բրոց», «Մանակա» և «Համով-հոտով» ժողովածուներից, հրատարակելի վրա կային Տ. Նավասարդյանի «Հայ ժողովրդական հեկիարսների» I—10 գրքերը, Գ. Շերեկցի «Վանա սագ» (I և II մաս), Գ. Տեր-Աղեհանդրյանցի «Յիֆիսեցոց մաւվոր կյանքը» ժողովածուները և մի քանի այլ ժողովածուներ: Բանահյուսական նյութեր էին հրատարակում «Մեղու Հայաստանի» լրագիրը, «Փոռն» ամսագիրը և ուրիշ այլ պարբերականներ: Ժամանակի հասարակական ու գրական մատվորական գործիչների կողմից բանահյուսությունն ընկալվում և դիտվում էր որպես ազգային մշակույթի առաջադիմական ու կարևոր բնագավառներից մեկը: Այստամենայնիվ, պետ է ստել, որ տվյալ շրջանում ժողովրդական բանահյուսության նյութերի հավաքման ու մասնավորապես հրատարակության գործը դեռևս մնում էր առանձին անհատ գործիչների նախաձեռնության ու հնարավորությունների շրջանակներում: Նեղ էր ու սահմանափակ բանահյուսական նյութերի հավաքման ոլորտը:

1887 թ. Գր. Խալաթյանի «Մրագիր հայ ազգագրության և ազգային իրավաբանական սովորությունների» գրքի հրատարակմամբ և հատկապես 1896 թ. Ե. Լալայանի «Ազգագրական հանդեսի» հիմնադրմամբ խաշու բեկում է կատարվում հայ ժողովրդական մշակույթի հետազոտության բնագավառում. ազգագրությունն ու բանահյուսությունը նյութերի տարերային հավաքման վիճակից բարձրանում և դառնում են գիտականորեն կազմակերպված, հասարակական լայն նախաշում ցած մասնաճյուղեր: Առաջնորդվելով եվրոպական և ռուսական առաջավոր գիտա-

կան մտքի նվաճումներով, Ե. Լալայանը, բացի գեղարվեստահանաչորական կողմից, բանահյուսությունը դիտում էր նաև որպես պատմաագգագրական կարևորագույն տեղեկությունների սկզբնաղբյուր: Ե. Լալայանը ժողովրդական բանահյուսությունը դիտում էր որպես ազգագրության մի անբաժանելի օղակ և իր ազգագրական աշխատությունների մեջ մեծ տեղ էր հատկացնում բանահյուսական նյութերին, որոնք ոչ միայն լրացնում ու լուսաբանում են բնարկվող պատմաագգագրական շրջանի ընտանեկան բարեքն ու հավատալիքները, այլև հենց իրենք՝ բանահյուսական այդ ստեղծագործություններն էլ հասկանալի են դառնում ու պատկերավորանվում տվյալ համալիրի մեջ: Այդպիսիք են՝ ամուսնության, հարսանիքի, մահվան, քաղման, ծննդյան, ավանդական տոնակատարությունների հետ կապված ծիսական երգերը, պատմական տեղանուններին, իրադարձություններին, դեմեքին վերաբերող, ինչպես նաև բնական տարերիք՝ ջրի, կրակի, նաև հավատալիքների ու նախապաշարմունքների հետ կապված ավանդություններն ու աստղաբանական գրույցները: Պատմական ավանդություններից են՝ Դավիթ Անհաղթի, Օհան Օձնեցու, Կրիզոս Տաբեացու մասին Լզամ և ուրիշ այլ պատումներ, որոնք սուղագրված են «Ազգագրական հանդես» էջերում³¹: Տարբեր առիթներով ազգագրական աշխատանքներում օգտագործվում են նաև այսպես կոչված փոքր ժանրերի նմուշներ՝ առածներ, անեմներ, օրհնանքներ և այլն, որոնք, շնայած հարեանցի և անցողիկ օգտագործման բնույթին, ուշագրավ հարցեր են պարզում: Այսպես, Ե. Լալայանը «Ջավախք»-ում հիշատակում է ժողովրդի մեջ գործածական «այ՛ մազղ կտրած» կամ «մազղ մկրատ» նախառական անեմ-արտահայտությունը: Շատերի համար անհասկանալի է այդ արտահայտության նախատական իմաստը: Ե. Լալայանը պարզել է, որ դա ծագում է ժողովրդական մի հին սովորույթից, համաձայն որի, մեռած կնոջը բաղնիքս ծամերը կտրել են՝ երախտիք պահելու համար: Ե. Լալայանը զգի է առել նաև հայերի մեջ պահվող մի շարք ավանդություններ Ալեքսանդր Մակեդոնացու³² մասին, որոնք տարբերակներ են համաշխարհային բանահյուսության շատ տարածված սյուժեներին: Ուշադրության արժանի է նաև նրա նայունարևած և սպագրած «Արա Գեղեցիկ»³³ ավանդակը, որը յուրահատուկ ձևով արձագանքում է Մովսես Խորենացու ներկայացրած «Արա Գեղեցիկ և Շամիրամ» առասպելական-վիպական գրույցին:

³¹ ԱԶ, գիրք 10, Քիֆլիս, 1903:

³² Նույն տեղում, էջ 304—313:

³³ ԱԶ, գիրք 9, 1902, էջ 114—159:

Ազգագրական նյութերին միանույնված ու շողկապված բանահյուսական այս նյութերից բացի, որպես պատմաագգագրական տվյալ շրջանի հոգևոր մշակույթի մի բնագավառ, «Ազգագրական հանդեսում» Ե. Լալայանը սուղագրել է առանձին ժանրերով կամ էլ բազմաժանր խառն նյութերի հավաքածուներ, ինչպես, օրինակ՝ Բորչալուի և Վասպուրականի բանահյուսության նմուշները³⁴: Առանձին ժանրի նյութերից շատ տարածված են վիճակի կամ ջանգչալումի երգերը, որոնք սովորաբար կատարվում են Համբարձման տոնակատարության և ընդհանրապես ժողովրդական տարբեր տոների ժամանակ: Վիճակի երգերը անխաբոյս հայելու նման ցոլացնում են ժողովրդի առօրյան ու կենցաղը, թեև դրանց հիմնական թեման սերն է, կապված գեղջուկ աշխատավորի հոգսերի ու ապրումների հետ: Ե. Լալայանի հավաքածուներում մեծ տեղ են զբաղում տարբեր ազգագրական շրջաններից (Ջավախք, Գանձակ, Ջանգեզուր, Լոռի) զբի առնված վիճակի կամ ջանգչալումի երգեր-խաղիկները:

Ջգալի արժեք են ներկայացնում հայ բանահյուսության համար նաև Ե. Լալայանի զբի առած ու հրատարակած «Սասնա ծռեր» վեպի նոր՝ այսագրերի³⁵, Վանի³⁶ և Ալաշկերտի³⁷ պատումները և իրանական «Ռոտամ-Ջալ»³⁸ վեպի հայկական տարբերակը:

Երկուդ Լալայանը իր ժողովածու բանահյուսական նյութերը հրատարակ է նաևել նաև առանձին գրքերով, ի մի հավաքելով տվյալ շրջանից զբի առնված բանավոր ստեղծագործության բոլոր տեսակները: Այդպիսի մի ժողովածու է նրա «Ջավախքի բուրմունք»³⁹, որի նյութերը հավաքել է անձամբ, 1880-ական թվականների վերջերին, երբ ուսուցչությամբ էր պարապում Ախալքալաֆում:

«Ջավախքի բուրմունք» ժողովածուի կտրված արժանիքներից է նրա բազմաժանր բնույթը, հատկապես այն, որ Ե. Լալայանը պատշաճ ուշադրություն է դարձրել բանահյուսական բանաձևային և վիպական ու բնարկական մի շարք տեսակների (աղոթքներ, ասացվածքներ, ավանդություններ, երգեր և այլն), որոնք սերտորեն աղերսվում են ազգագրությանը: Ե. Լալայանը բանագիտի հետադարձ նյութերի ոչ միայն ժան-

³⁴ ԱԶ, գիրք 9, 21, 25 և այլն:

³⁵ ԱԶ, 18-րդ գիրք, Քիֆլիս, 1906, էջ 37—82:

³⁶ ԱԶ, 20-րդ գիրք, Քիֆլիս, 1910, էջ 61—101: ԱԶ, 21-րդ գիրք, Քիֆլիս, 1910, էջ 101—126:

³⁷ «Մարդարիտներ հայ բանահյուսության», 9 գիրք, Քիֆլիս, 1915:

³⁸ ԱԶ, 14-րդ գիրք, Քիֆլիս, 1906, էջ 69—85:

³⁹ «Ջավախքի բուրմունք», Քիֆլիս, 1892 թ.:

րային բաժանում է կատարել, այլ նաև յուրաքանչյուր ժանրի տակ ենթաառնակներն է զանազանել: Ժողովածուի մեջ առանձին բաժիններով ներկայացրել է առողջությանն ու հիվանդությանը, առօրյա կյանքին վերաբերող աղբյուրները: Ե. Լալայանը խորապես գիտակցել է դրանց դերը ժողովրդի մտածողության ու աշխարհըմբռնման պարզարևման խնդրում, նկատի առնելով, որ ժողովրդական աղբյուրները հեթանոսական արմատներ ունեն և հանայա հակադրվում են քրիստոնեական աշխարհայեցողությանը:

Հարուստ ու բազմազան են ժողովածուում ներկայացված ժողովրդական երգերը (սիրո, հարսանյաց, սգո, պանդխտության և այլն): Ե. Լալայանի գրի առած սիրո երգերը մեծ մասամբ գովերգեր են և իրենց կառուցվածքով, կրկնեցներով ու բովանդակությամբ հիշեցնում են հայ ժողովրդական երգերի մյուս տարբերակները («Կայնե ֆիտան պոյիդ դուրպան», «Քելե՛, քելե՛ պոյիդ մատաղ», «Ա՛խ լու իմ, լու իմ...» և այլն): Սիրո երգերի մեջ ուշադրության արժանի է «Ես վառեն կուզայի, դուն դուրք բացիր» նշանավոր երգի տարբերակը, որը հայտնի է «Անտունի» անվամբ և նուազրված է Կոմիտասի կողմից: Հարսանեկան, հատկապես հարսին վերաբերող երգերի մեջ («Աղջի, հաբանվուր էկավ գեղի վերեն...», «Չե՛մ էրբա, մերիկ, չե՛մ էրբա...») որոշակի նկատվում են տխուր ու թախծոտ տրամադրություններ, որոնք անդրադարձնում են կնոջ իրավական վիճակը անցյալի սրայմաններում: Ժողովածուի մեջ ներկայացված են ընտանեկան, կենցաղային, պանդխտության, երկրագործի, սգո, երգիծական և ծիծաղաշարժ երգերի նմուշները:

«Ջավախքի բուրմունի» ժողովածուում աչքի են ընկնում ավանդությունները, որոնք Ե. Լալայանը բաժանել է հետևյալ խմբերի՝ կոննական, կերպարանափոխության, պատմական, տեղագրական և կյանքի պատկերներ: Ավանդությունների մեջ պատմական արժեք են ներկայացնում Պապ բագավորի մասին եղած նյութերը, որոնք հեղինակը բազմաթիվ անգամ է Փավստոս Բուզանդի պատմության մեջ եղած վիպությունների հետ և հետաքրքրական նմանություններ գտնում: Կերպարանափոխության բաժնում դրված ավանդություններից շատերը իրերի և կենդանիների շուրջը հյուսված լեգենդներ են («Փեթակ», «Մկներ և կատու», «Լու» և այլն): Ե. Լալայանի գրառած «Թրմկաբերդի առումը» սեղմ, մի քանի տողից բաղկացած ավանդության հիման վրա մեծ բանաստեղծ Զ. Քումանյանը կերտել է իր նշանավոր նույնանուն պոեմը: Հանախ գեղագիտական ու բարոյախոսական խոր ընդհանրացում կարող է պարունակել անգամ մի փոքր ավանդություն: Դրա ցայտուն մի օրինակ է Ե. Լա-

լայանի ժողովածուում դրված «Քինգյուր»։ «Փաշին մեկը կերթա Քինգյուրու սարերը Բեֆ էնելու, նոխարը դոխմ՝ մորթե, աանի կը աղբուրը լվալու: Քիրտան դոխը սաղնա թաի կը, վրայեն կաթկթած շուրը մե-մե աղբուր դառնա, ակե բխա կը, առու հմար ա Քինգյուր կըսվը»⁴⁰: Հայտնի է, որ Քինգյուրի մասին շատ ավանդություններ են հյուսվել, որոնք մշակվել են մեր բանաստեղծների կողմից (Ավ. Իսահակյան):

Հայկական բանահյուսության մեծարժեք գործերից է Ե. Լալայանի «Մարգարիտներ հայ բանահյուսության» եռախոսը ժողովածուում, որը սյարունակում է բացառապես հեքիաթներ⁴¹: Դա Տ. Նավասարդյանի «Հայ ժողովրդական հեքիաթներ» առաջին պրակներից հետո մեր հեքիաթագրության ամենաձավալուն հավաքածուն է: Ժողովածուի առաջին երկու գիրքը պարունակում է բուն Աբարտայան դաշտի հեքիաթները (Աշտարակ, Օշական, Փարսի, Վաղարշապատ), իսկ 3-րդ գրքում ընդգրկված է Ապարանում բնակություն հաստատած արևմտահայ վերաբնակիչների (մշեցիներ, վանեցիներ, ալաշկերտցիներ, մանգլեկերտցիներ և այլն) հեքիաթները: «Մարգարիտներ» երեք գիրքը միասին պարունակում է 91 հեքիաթ, որոնք 1912—1914 թթ. գրի է առել Ե. Լալայանը: «Մարգարիտներ» ժողովածուում գերակշռող տեղ են գրավում հրաշալիքալից սյուժեները, ինչպես, օրինակ՝ Հագարան բլրույի, անմահական խնձորի ու ջրի, կախարդի անեծխով կերպարանափոխված մարդկանց արկածների, աղա դարձող աղջկա փառաբանությունների և բազմաթիվ այլ սյուժեներ, որոնք միավորվում են մի ընդհանուր թեմայի տակ՝ պայքար գերբնական ուժերի դեմ՝ անեծխով սլաոտնալված մարդուն ու բնությունը վերակենդանացնելու կամ կախարդված գեղեցկուհիներին ու անմեղ մարդկանց փրկելու համար: Հեքիաթների մի փոքրիկ ժողովածու էլ Ե. Լալայանը հրատարակել է Ալեքսանդրապոլում՝ «Պառավաշունչ» խոհագրով, որտեղ զետեղված է Ջավախքի չորս հեքիաթ⁴²:

Հավաքական գործունեության ընթացքում Ե. Լալայանին հետաքրքրել են նաև առակներն ու կենդանական վեպիկները, երգիծական գրույցներն ու անկողումները, որտեղ վառ դրսևորում են գտել ժողովրդական երգիծանքն ու հումորը: Դեռևս «Ազգագրական հանդեսի» II գրքում (1897 թ.) Ե. Լալայանը ապագրում է «Կենդանական վեպ» խո-

⁴⁰ Ե. Լալայան, *Ջավախքի բուրմունք*, էջ 59:

⁴¹ Ե. Լալայան, *Մարգարիտներ հայ բանահյուսության, Ա—Գ գրքեր, Քիֆիս—Վաղարշապատ (1914—1915 թթ.)*:

⁴² Ե. Լալայան, *Պառավաշունչ, Ալեքսանդրապոլ, 1911*:

րագրի տակ մի շարք առակներ: Հետագայում առանձին գրով հրատարակում է իր իսկ գրի առած ժողովրդական զվարհախոսներ Մոլլա-Նասր-էղ-Դինի և Հօբոսի անուններով հասած երգիծական գրույցներն ու առակները⁴³:

«Մոլլա Նասր-էղ-Դին» ժողովածուի առաջաբանում Ե. Լալայանը բացատրում է իր մտադրությունը՝ հավաքել հայ ժողովրդի մեջ շրջող առակները, հետագայում ուսումնասիրության կատարելու և ցույց տալու նրանց ծագումը, զարգացումը, արտանայտած փիլիսոփայությունն ու բարոյական սկզբունքները, ժողովրդական ծագրի ուժը:

Ե. Լալայանը գիտական մոտեցում է ունեցել նյութերի նկատմամբ, հավաքելով կրկնվող բոլոր տարբերակները: Ավելի ուշագրավ ու հետաքրքիր է Ե. Լալայանի մի դիտողությունը. «Առակների այս շարքը սկսում ենք Մոլլա-Նասր-էղ-Դինին վերագրված առակներով, — գրում է նա, — ասացինք, որ մեր նպատակն է հայ ժող. առակներ հավաքել, մինչդեռ սկսում ենք մի մոլլայի առակներով: Ճշմարիտ է, մոլլան բար է, սակայն նրան վերագրված առակների մեծագույն մասը հայ ժողովրդի ստեղծագործությունն է, նման այն բազմաթիվ քրեական երգերի, որ ասել են մեր հայ աշուղները կամ ժողովուրդը: Մոլլա-Նասր-էղ-Դինի ժողովրդականությունը պատճառ է եղել, որ տեղական փառերիկ առակախոսների՝ հարսուների, ծակ-սահակների, պրլը-պրուղիների և ուրիշ այսպիսիների առակները նրան են վերագրվել»⁴⁴:

Ե. Լալայանը միշտ էլ հիմնական ուշադրությանը բևեռել է ժողովրդական բանահյուսության նավաման գործին: Նա այդ գործին մատնեցել է հայրենասեր գիտնականի խոր ըմբռնմամբ, բազմաթիվ առիթներով անդադադունալով հավաքման գործին, գրել է. «Քանի որ ուսումնասիրություններ կատարելու համար երբեք ժամանակ չի պակասելու, մինչդեռ եթե մի փառոզ դար էլ անտարբեր գտնվենք հայկական նյութերի հավաքելու, շատ ու շատ նյութեր բախտվին անհետանալու են, ուստի իմ անմիջական նպատակը ոչ թե, ուսումնասիրության տալն է, այլ եվրոպական ուսումնասիրության լույսով հայկական նյութերը որոնելը, գտնելը, կորստից ազատելը»⁴⁵:

Ե. Լալայանը, համփորդի մախաղն ուսած և ցույց ձեռքին, սափաակ է առել Հայաստանի ֆաղաֆները, գյուղերն ու ավանները (Ալեքսանդրապոլ, Լարս, Կարզվան, Արարատյան դաշտ, Լոռի, Շարուր-Ռարալագյազ, Հին Նախիչևան, Զանգեզուր, Կարաբաղ, Վան, Մակա և այլուր) և անդադրում ու անխոնջ պեղել է մարդկանց հոգու բնորոշը, հայանաբերելով բանավոր գրականության անբավ գանձեր: 1915 թ. Հայոց ազգագրական ընկերությունը Ե. Լալայանի նախածնունդյալ կազմակերպում է գիտաբանական Անդրկովկասի ավաններում ու գյուղերում ցրված առևմտահայ գաղթականներից բանահյուսական և ազգագրական նյութեր գրի առնելու նպատակով: Դիտարշավը, որը գլխավորում էր ինքը, իր կազմում ուներ այդ գործին նվիրված ուսուցիչներ ու մտավորականներ (Ն. Մարտիրոսյան, Ե. Պեղազյան, Ս. Շալոյան, Ա. Բարսեղյան, Մ. Կոստիկյան, Ա. Գարաղյան-Վեսպեր և ուրիշներ): Վնայած անբարենպաստ պայմաններին, Ե. Լալայանի արշավախումբը շուրջ հինգ ամսվա ընթացքում շրջագայել է Անդրկովկասի ֆաղաֆներն ու գյուղերը, իր շուրջը համախմբել բուրևական շարդերից մագապուծ Մշո, Մոկսի, Վանի, Բիբրիսի, Արենշի, Ռշտանիի, Սասունի, Ալաշկերտի, Բասենի, Շառախի, Հարիի և այլ վայրերի անօրևան ծերունիներին ու երիտասարդներին և բարոյապես ու նյութապես սփռվել նրանց՝ գրի առել հնավանդ հեկիարաները, գրույցները, ստակները, երգերը, խաղերը, առածներն ու հանելուկները: Շատերն այդ գաղթականներից ղոնվել են, շղիմանալով ֆաղիյն, համանարակներին ու գրկաններին, բայց փրկվել է նրանց իմաստուն խոսքն ու գրույցը, արդարության, ազատության ու երջանկության մասին նրանց բանաստեղծական երազանքը: Ե. Լալայանի գիտական այդ խմբաբազմի արդյունքները բեղմնավոր են եղել: Գրի է առնվել շուրջ 800 հեկիար, գրույց ու ավանդություն, բազմաթիվ երգեր ու բանահյուսական այլ ժանրերի ստեղծագործություններ:

Անձամբ շրջագայելուց ու նյութեր հավաքելուց բացի, Ե. Լալայանը մեծ ջանքեր է գործադրել այդ կարևոր գործի մեջ մտավորականության լայն խավերին ներգրավելու համար: Նա մամուլի էջերում հրատարակած հայտարարություններով, Հայոց ազգագրական ընկերության կազմակերպած դասախոսություններով և բազմաթիվ այլ միջոցներով հորդորում և խրախուսում էր հայ մտավորականներին՝ գրականության ու լուսավորության գործիչներին, ազգային մշակույթի պահպանման փափագով նվիրվել այդ մեծ գործին: Ե. Լալայանը գրում էր. «Եվ դեռ ֆանի ֆաղաֆակրթության հուրը լափում է անցյալի բոլոր հիշատակները, մենք

43 Ե. Լալայան. *Ժողովրդական առակներ*, Ա. «Մոլլա-Նասր-էղ-Դին», Ա և Բ տիպ. Թիֆլիս, 1903—1904: Բ. Հոբոս, Թիֆլիս, 1903:

44 Ե. Լալայան, *Ժողովրդական առակներ*, Ա. «Մոլլա-Նասր-էղ-Դին», էջ 6—7:

45 Ե. Լալայան, *Միսական կարգերը հայոց մեջ* (արտատպված «Ազգագրական հանդեսից»), Թիֆլիս, 1913, էջ 3:

պետք է շտապենք հավաքելու, ինչ որ դեռ մնացել է...»⁴⁶:

Ե. Լալայանն իրավացիորեն գտնում էր, որ հայ ժողովրդի բանավոր գրականության գանձերի և հոգևոր մշակույթի այլևայլ նյութերի հայտնաբերումն ու հավաքումը անհատական գործ չէ, այլ պետք է դառնա համագրային, համաժողովրդական գործ՝ մասվորականության գիտակցված ու կազմակերպված մշտական ու եռանդուն աշխատանքի ասպարեզ: Ե. Լալայանը բանահյուսությունն ու ազգագրությունը դիտում էր որպես «ժողովրդական կյանքի նշմարիտ հայելի, մի շտեմարան, որ տեղից վիպասանն իր նյութը կվերցնե՝ ազգային վեպ ստեղծելու, լեզվաբանը քառեր ու ոներ կհաղե՝ ազգային լեզուն հարստացնելու և օտարանալուց ազատելու, հրապարակախոսն ու հոգևորականն ազգի վերհերը կնկատեն՝ նրանց դարմանումը փարոզելու, բժիշկը նրանց ցավերը կտեսնեն՝ սպեղանիներ հասցնելու, ուսուցիչը մանկան ընտանեկան կյանքը կըմբռնե՝ այն բարեփոխելու, իսկ գիտնականը իր նյութը կվերցնե՝ գծելու էվոլյուսիոնի օրենքները»⁴⁷:

Ե. Լալայանը տաղանդավոր կազմակերպիչ իր արտակարգ ընդունակությամբ տարբեր գավառներից ու ավաններից դեպի այդ կարևոր գործն է ձգում ուսուցիչներին, գրողներին ու հասարակական գործիչներին և համապատասխան ցուցումներով, ծրագրերով օգնում նրանց հավաքչական աշխատանքին: Շնորհիվ նրա այդ եռանդուն գործունեության «Ազգագրական հանդեսի» էջերում և այլուր հրապարակ են գալիս Հայաստանի պատմական տարբեր գավառների բանահյուսական արձեմավոր նյութեր: Դրանցից նիշատակության արժանի են՝ Գրիգոր Բան. Նժդեհյանի Այաշկերտի բանավոր գրականության բազմաժանր հավաքածուն, Հրաչյա և Արմենուհի Անառյանների պոլսահայ ոամկական անգիր գրականության հավաքածուն, Բենեսի (Սահակ Մովսիսյան) Հարք գավառի (Բուլանիս) բանահյուսության նետաբեռական նմուշները, Ա. Բահանյանի «Փշրանքներ ժողովրդական բանահյուսությունից», ինչպես նաև Քաչքերումու (Արցախ, Շարուր-Ղարապաղ), Արամ Չարբգի (Բասեն), Դադյանի (Վարանդա), Արհայիկի (Ղափան), Ա. Սալախյանի (Վան), Խ. Փոբեջյանի (Նոր Նախիջևան), Վրթ. Փախաղյանի (Հայ բաշաներ) և ուրիշ այլ բանահյուսական հավաքածուներ: «Ազգագրական հանդեսում» տպագրվում են նաև «Մասնա ծներ» ու «Թոստամ-Ջալ» վե-

46 ԱԸ, գիրք Ա, էջ 6:

47 Նույն տեղում, էջ 5:

պերի մի շարք պատումներ, Մանուկ Աբեղյանի «Հայ ժողովրդական վեպը» ուսումնասիրությունը և այլն⁴⁸:

* * *

Գիտական, մանկավարժական աշխատանքներին զուգընթաց, Ե. Լալայանը ակտիվ մասնակցություն է ցուցաբերել գրական-հասարակական կյանքին: Նա բարեկամական-ընկերական կապեր էր պահպանում հայ գրողների հետ, որոնք բարձր էին գնահատում Ե. Լալայանի գործունեությունը ժողովրդական բանավոր գրականության գանձերը կորստից պահելու համար:

Ե. Լալայանի բազմաբեղուն գործունեության մեջ կարևոր տեղ են գրավում հնագիտական աշխատանքները: Նա հնագիտական պեղումներ է կատարել Շարուր-Ղարապաղյազի և Նախիջևանի գավառներում: Այնտեղ (Քյուլթափա, Ուզուն-Օրա-Աշաղա, Կարմիր վանք գյուղերում, հրամ ավերակ ֆաղափում) պեղված են մի շարք դամբարաններ, որ գտնված են կավե անոթներ, այլևայլ իրեր, կենդանիների և բույսերի մնացորդներ (այբոված ցուխ և զարի): Այս նյութերը նա օգտագործել է իր «Նախիջևանի ոստիկանական շրջան կամ Նախնավան» աշխատության վաղ պատմական շրջանը շարադրելու: Այս պեղումների մասին գեկուցել է Կովկասի հնագիտական ընկերության նիստում, որը կայացել է Ռիֆլիսում, 1904 թ. նոյեմբերի 14-ին, կոմսսիի Պ. Ուվարովայի նախագահությամբ: Զեկուցման ժամանակ ցուցադրվել են պեղումների ընթացքում հայտնաբերված նյութերը, որոնք բարձր են գնահատվել մասնակիցների կողմից⁴⁹:

Ավելի հանգամանորեն և տևական պեղումներ է կատարել Ե. Լալայանը 1905, 1906 և 1908 թթ. Նոր Բայազետի գավառում, որ պեղել է 518 դամբարան: Իր պեղած դամբարանները նա դասակարգել է հետևյալ կերպ. ա) միկարասյան դամբարաններ, բ) երկկարասյան, գ) դամբարաններ, որոնք արտափուտ ներկայացնում են հողակույտ բմբեր՝ 0,5--7 մ բարձրությամբ, հանախ կյո՝ 3--100 մ արամագծով և երբեմն՝ ձվաձև: Դրանց մանրամասն նկարագրությունները կան «Ազգագրական հանդեսի» 14--17-րդ գրքերում: Հայտնաբերվել է հարուստ հնագիտական նյութ՝ դաշույններ, ապարանջաններ, մատանիներ, ու-

48 ԱԸ, 4--18-րդ գրքեր:

49 «Նուրբեր», տե՛ս «Մշակ», 1904, № 251.

լուսններ, պուլիկներ, մարդկանց և կենդանիների կմախքներ, պաշտամունքի առարկա եզան գերեզման, հաշտնի «իշխանական սայլը» և այլն. որոնք շափազանց կարևոր նշանակություն ունեն նախահայկական մշակույթի շատ հարցեր պարզելու համար:

Ե. Լալայանը 1908 թ. Դուպլի գյուղի մոտ դիպվածորեն հայտնաբերել է արամեական վիմագիր արձանագրություն, որը անմիջապես ուղարկել է Քիֆլիսի Հայոց ազգագրական թանգարան, իսկ լուսանկարը և էստամպով՝ մասնագետներին: Նույն թվականին Ե. Լալայանը Մրթալի ձորում հայտնաբերել է պաշտամունքի առարկա եզան գերեզման:

Ե. Լալայանին հաջողվել է գտնել ցցառների (պալաֆիտ) հետքեր Սևանա լճի արևելյան կողմում՝ Գիլլի գետակը լինը թափվելու տեղում:

Սակայն Ե. Լալայանի ամենակարևոր հնագիտական հայտնագործություններից մեկը եղավ Ադիաման գյուղի Գեմեր կոչված վայրում պեղված դամբարանը, որի մեջ բացվեց բարձրադաստ փորագրությամբ զարդարված սայլ: Սայլի վրա գետեղված էր մի երկարագույն մարդու կմախք, իսկ հանգուցյալի հետ թաղված իբերը (դաշույն, ապարանջան, մատանի) բրոնզից էին: Շուրջը անկանոն կերպով ընկած էր 13 մարդու կմախք. ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանք ստրուկներ են եղել կամ ազգագրերի: Գիտական լծված է եղել չորս եզ: Լծի մոտ գտնվել է սայլապանի կմախք: Սայլը հասնիվ է, լծի վրա կանգնեցված բրոնզե այծյամի սնամեջ իրանում գտնվել է երեք փոքրիկ դանակ, որոնք սայլը շարժվելիս զնգզնացել են: Սայլը խիստ փայլաված էր, բայց Ե. Լալայանին հաջողվում է փակակազոր՝ Վարձիգույանի հետ միասին վերականգնել դրա պատկերը: Սայլի մնացորդներն այժմ գտնվում են Հայաստանի պատմության պետական թանգարանում:

Պեղումներ կատարելիս Ե. Լալայանը միաժամանակ բացատրական մեծ աշխատանք է տանում հնագիտական հուշարձանները պահպանելու ուղղությամբ: Նոր Բայազետի 1905—1906 թթ. պեղումների հետևանքով հայտնաբերված նյութերը հանձնվում են Կովկասյան թանգարանին, որովհետև դրանք կատարված էին Մոսկվայի հնագիտական ընկերության միջոցներով և այժմ գտնվում են Վրաստանի թանգարանում:

1908 թ. պեղումները ֆինանսավորվել են Հայոց ազգագրական ընկերության կողմից, և ի հայտ բերված նյութերը այժմ պահվում են Հայաստանի պատմության պետական թանգարանում: Վերոհիշյալ նյութերի հիման վրա է գրված Ե. Լալայանի «Նոր Բայազետի գալիտ կամ Գեդարունիք» աշխատության նախապատմական շրջանի զգալի մասը: Նոր Բայազետի պեղումների մասին Ե. Լալայանը բազմիցս զեկուցել է

Հայոց ազգագրական ընկերության ժողովներում և նիստերում: Այդ պեղումները բարձր են գնահատվել մամուլի կողմից: Այսպես, «Էույսի» մեջ տպագրված գրախոսականում ասվում է. «Պեղումներ նոր Բայազետի գավառում, որ կատարել է ինքը՝ պ. Լալայանը 1908 թ., շատ հետաքրքիր հնագիտական գյուտեր է արել մեր հեղինակը, որոնք, անշուշտ, ապագա հնագիտական ուսումնասիրությունների համար հարուստ նյութեր են պարունակում»⁵⁰:

Ե. Լալայանը նեոլիթյան հուշարձաններ հայտնաբերելու նպատակով ուշագրավ պեղումներ է կատարել 1913 թ.՝ Շեշ բլուրում և 1927 թ.՝ Էլարում: Էլարում Ե. Լալայանը բացել է գրեթե բոլոր ժամանակների՝ բրոնզի, երկաթի դարին վերաբերող դամբարաններ: Այնտեղ գտնված են Ե. Լալայանի կարծիքով նեոլիթին վերաբերող (իրոք էնեոլիթյան դարաշրջանի) խեցեղեն, փայտե մուրներ, վանակափղի դանակներ, աղաբիներ, հերուններ և այլն: Էլարի մշակույթը, ըստ Ե. Լալայանի, նման է էշմիսոնի գավառի Շեշ բլուրի մշակույթին: Այստեղ Ե. Լալայանը պեղումներ է կատարել 1913 թ. ամառը և զեկուցել Հայոց ազգագրական ընկերության հրատարակչին նիստում: Շեշ բլուրում հայտնաբերված են փայտե մուրներ, փայտե կացին, աղաբիներ, կավե ամաններ: Պատերազմը խանգարեց պեղումների հետագա շարունակմանը, իսկ զեկուցումն էլ մնաց անտիպ:

Մոսկվայի հնագիտական ընկերության կովկասի բաժանմունքի միջոցներով Ե. Լալայանը 1915 թ. մայիսի 1-ից մինչև հուլիսի 15-ը պեղումներ է կատարել Նուխի գավառի Նիժ և Վարդաշեն գյուղերի շրջակայքում, ուր պեղել է երկաթի դարին պատկանող մի շարք դամբարաններ: Այդ մասին նա զեկուցել է վերոհիշյալ ընկերության 1916 թ. ապրիլի 15-ի նիստում, որի որոշմամբ էլ զեկուցումը տպագրվել է⁵¹:

Հնագիտական բնույթի աշխատությունների մեջ կարևոր տեղ է զբաղում Ե. Լալայանի «Պեղումներ նոր Բայազետի գավառում»⁵² հոդվածաշարը, որը լույս է տեսել նաև ռուսերեն թարգմանությամբ: Վերոհիշյալ հոդվածներում նա մանրամասն նկարագրում է իր կատարած պեղումները, թվագրում հնագիտական նյութը, տալիս իլյուստրացիաներ:

⁵⁰ «Պեղումներ նոր Բայազետի գավառում», տե՛ս «Էույս», նոր նախիջևն, 1910, № 19, էջ 13:

⁵¹ «Известия Кавказского отделения Московского археологического общества», выпуск V, Тифлис, 1919.

⁵² Ա.Շ., գիրք 15, 1907, գ. 19, 1910:

Հնագիտական բնույթ ունի նաև նրա «Վարձիա կամ Վարձունիք» հոդվածը⁵³, որը վերաբերում է Ախալալախից 25 կմ հեռավորության վրա գտնվող Վարձիա ամրոց-ապարանին: Ե. Լալայանը մանրամասն նկարագրում է իր աեսակի մեջ եզակի այդ հուշարձանը: Այս հոդվածը նույնպես մտել է «Ջավախի» մեջ:

Ուշագրավ է Ե. Լալայանի «Հուղարկավորության և գերեզմանների զարգացումը Հայաստանում»⁵⁴ աշխատությունը, որը նրա կարգացած դասախոսությունն է ՀԱԽՀ գիտության և արվեստի ինստիտուտի պատմամասնաբանական բաժնում, 1928 թ. հունվարի 14-ին: Ե. Լալայանը հանգամանորեն կանգ է առնում հուղարկավորության ձևերի վրա՝ միկարայան, երկկարայան, մենհիրներ, կրովեխներ, դովեններ, դավրաւաններ, տապան, դիակիզություն, գերեզմաններ, նկարագրում է դրանց հետ կապված սովորույթները՝ ննջեցյալների հետ զարդեր և զենքեր դնելը, կանանց, ձիերին, ծառաներին տիրոջ հետ բաղելը, հագու հաց տալը և այլն: Այդ բոլորը նկարագրելիս նա վարպետորեն օգտագործում է համեմատական ազգագրական նյութեր:

Ե. Լալայանի հնագիտական բոլոր աշխատությունները ամփոփված են նրա «Դամբանների պեղումները Խորհրդային Հայաստանում» գրքում⁵⁵, որը լույս աեսալ հեղինակի մահից հետո:

Ե. Լալայանը պեղումներով հայանարեւել է մեծ քանակությամբ գանգեր, որոնք գտնվում են Հայաստանի և Վրաստանի բանգարաններում: Այդ գանգերի շափումները կատարել է պրոֆ. Բունակր և հուղված է տպագրել «Русский антропологический журнал»-ում. Ե. Լալայանի առաջարկով⁵⁶: Ե. Լալայանը հնագիտական նյութեր ուսումնասիրելիս փորձել է օգտագործել նաև ժամանակի գիտական առաջավոր մեթոդները: Նա իր պեղած նյութերը ուղարկում է Լենինգրադ, Բիմիկոս Սկինդերին՝ անալիզներ կատարելու համար: Ե. Լալայանի կողմից արած քվագրումների մի մասն այժմ վիճարկվում է հնագետների կողմից՝ այն նյութերը, որ նա վերագրում էր*Նեոլիթին, յվագրվում են էնեոլիթով:

Հետաքրքիր են Ե. Լալայանի մտքերը հնագիտության մասին: Լուսժողովում Ա. Մոսվյանին ուղղված 1927 թ. նոյեմբերի 2-ի դիմումում նա գրում է, որ հնագիտությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ նախապատմական

ազգագրություն, ազգագրությունն իր բոլոր խնդիրների սկիզբը սրոնում է հնագիտության մեջ⁵⁷:

Ե. Լալայանը Թիֆլիսի հայագիտական դասընթացներում դասախոսել է ընդհանուր և հայ հնագիտություն առարկաները, իսկ Հայաստանի պատմության պետական բանգարանում երկար տարիներ ղեկավարել է հնագիտության բաժինը:

Ե. Լալայանն իր գործունեության ընթացքում մեծ ուշադրություն է դարձրել ձեռագրերի հավաքմանը և անձամբ հավաքել է բավական թվով ձեռագրեր: Նա որոշել էր հրատարակել ընդարձակ ձեռագրացուցակներ, կազմել Լե Վասպուրականի հայերեն ձեռագրերի ցուցակ, երեք սովոր հատորներից բաղկացած, բայց լույս է տեսել այդ ժողովածուի միայն առաջին պրակը⁵⁸, որը ընդգրկում է 480 ձեռագրի նկարագրություն, ձեռագրեր, որոնք կարևոր նշանակություն ունեն հայ ժողովրդի պատմության՝ մատենագրության, հնագիտության և ազգագրության համար: Դրանց մեծ մասը 1896 թ. Վանի կոտորածի ժամանակ թափցված է Եղեղի եկեղեցիների գաղտնարաններում, շատերը փչացել են: Ե. Լալայանին հաջողվել է փրկել դրանց զգալի մասը: Այդ աշխատությունը բարձր գնահատվեց գիտական հասարակայնության կողմից⁵⁹:

Ե. Լալայանը գրադվել է նաև վիճագիր արձանագրությունների հավաքմամբ, նրա գրեթե բոլոր աշխատություններում տպագրված են մեծ քանակությամբ վիճագիր արձանագրություններ: Բացի դրանցից, նա ցանկացել է հրատարակել արձանագրությունների դիվան, այդ է վկայում նրա հայտարարությունը «Ազգագրական հանդեսում», որ ասվում է. «Տասն տարուց ի վեր կազմում եմ «Հայկական արձանագրությունների ժողովածու», զարգարված արձանագրությունների բազմաթիվ լուսանկարներով: Ուստի խնդրում եմ ուղարկել ինձ արձանագրությունների լուսանկարներ...»⁶⁰:

Ակադեմիկոս Ե. Մառին գրած նամակում նա բազմիցս կիշատակում է, որ հավանում է արձանագրություններ: «Պատրաստել եմ, — գրում է Ե. Լալայանը, — էջմիածնի ամբողջ զավառի, Մխիթար Գոշի, Հաղարծնի և Սանահինի (Վանների) գրեթե բոլոր արձանագրությունների

53 «Հանդես ամսօրյա», 1895, № 1:

54 «Տեղեկագիր ՀԱԽՀ Գիտության և արվեստի ինստիտուտի», Երևան, 1928, № 3:

55 Ե. Լալայան. Դամբանների պեղումները Խորհրդային Հայաստանում, Երևան, 1931:

56 «Русский антропологический журнал», 1929, № 7, вып. 3, 4.

57 Հայաստանի պատմության պետական թանգարանի արխիվ, Ե. Լալայանի անձնական գործերի վեթապանակ:

58 «Ցուցակ Հայերեն ձեռագրաց Վասպուրականի», կազմեց Ե. Լալայան, պրակ 1, Թիֆլիս, 1915:

59 Տե՛ս «Մշակ», 1915, № 86:

60 ԱՀ, գիրք 23, 1912, էջ 240:

լուսանկարները 13×18 սմ մեծությամբ, 100 հատ: Արդյո՞ք չէի՞ք բարեհաճիլ միանգամից կամ մաս-մաս հրատարակել»⁶¹:

Ե. Լալայանի կազմած հայերեն արձանագրությունների կորպուսը արժանացել է Լազարյան նեմարանի Քանանյան մրցանակին⁶²:

Հայ նյութական մշակույթը հասարակության լայն խավերին ծանոթացնելու նպատակով Ե. Լալայանը ձեռնամուխ է լինում այլաժաներ կազմելուն. նա հրատարակում է երեք սովորածավալ այբու՝ նվիրված Վաչոց Ջառի, Վասպուրականի և Նոր Բայազետի գավառի հուշարձաններին: Նկարների տակ բացատրությունները տպագրված են հայերեն, ռուսերեն և ֆրանսերեն լեզուներով: Ա. Չոպանյանը բարձր է գնահատել Ե. Լալայանի հրատարակած այբուժը և առաջարկել է ընթերցողներին ձեռք բերել այն: Իսկ կազմողի մասին հետևյալն է գրել. «...Մեր տոհմային ինքնահանաչման տեսակետով այս ձեռնարկին մեջ ես ի՞նչ պետք եմ է իր վարպետ գործչի բոլոր թանկագին հատկությունները»⁶³: Գրվառանքի խոսքեր են ասել Ե. Լալայանի այդ ձեռնարկման մասին Կ. Պոլսի «Արևելք»⁶⁴ թերթը և մյուս ամսագրերը:

Հայագիտությունը պրոպագանդելու, նրանով գրադվողների թիվը բնդլայնելու նպատակով Ե. Լալայանը 1909 թ. «Մշակում» հանդես է գալիս «Մի առաջարկ Վենետիկի Մխիթարյան ովստին» հոդվածով, խնդրելով նրանց հաշի և օտար ուսանողների համար հայագիտական ամառային դասընթացներ բացել⁶⁵: Նույն թերթի № 161-ում գետնդրված է նրա «Հայագիտության ամառային դասընթացների առթիվ» թղթակցությունը: Մխիթարյանները բացեցին ամառային դասընթացներ: Ե. Լալայանը որոշում է նման դասընթացներ բացել նաև Թիֆլիսում, որտեղ պետք է դասախոսվեին հետևյալ առարկաները՝ Կովկասի և Հայաստանի աշխարհագրություն, Կովկասի, մասնավորապես Հայաստանի հնագիտություն, հայոց սլավոնություն, կրոնների պատմություն, հայ ազգագրություն և այլն: Դասընթացները բացվում են 1917 թ., և այնտեղ դասախոսելու են նրավիրվում լավագույն ուժերը: Ե. Լալայանը դասախոսում է Կովկասի և Հայաստանի հնագիտություն առարկաները⁶⁶: Դասըն-

61 Ա. Սարգսյան, Ե. Լալայանի կյանքն ու գործունեությունն արտադրող փաստաթղթեր: Տճ՝ «Քաների Հայաստանի արխիվներին», Երևան, 1963, № 1, էջ 138:

62 «Մշակ», 1917, № 86:

63 «Անահիտ», Փարիզ, 1909, № 5-6, էջ 191:

64 «Արևելք», Կ. Պոլս, 1901, № 4619:

65 «Մշակ», 1909, № 151:

66 «Մշակ», 1917, № 65:

բացում ընդգրկվում է 70 հոգի: Նման դասընթացներ Ե. Լալայանը կազմակերպեց նաև 1920-21 թթ.⁶⁷:

Ե. Լալայանը գրադվել է նաև բարգմանություններով: 1881 թ. լույս տեսավ նրա առաջին բարգմանությունը՝ «Մամմեդի տոպրակ» արևելյան դրույցը, 1882 թ.՝ Ժ. Զանդի «Վարդագույն ամպը», 1886 թ.՝ Մոլիերի «Երեկոյան կանգնած հիվանդ» պիեսը: Հատկապես ազգագրական և մարդաբանական գիտությունները պրոպագանդելու համար նա ձեռնամուխ է լինում նշանավոր ազգագրագետների և մարդաբանների աշխատությունների բարգմանությանը: Ֆրանսերենից նա բարգմանել է պրոֆ. Պետրիի «Մարդաբանության պատմական զարգացումը»⁶⁸, Շ. Լետուրնոյի «Ամուսնության գաղափարը»⁶⁹, Ա. Պոգոբայի «Նորագույն տեսություններ գեղաստանի, հասարակության և պետության ծագման վերաբերյալ»⁷⁰, հայկ. «Մարդաբանությունը»⁷¹, Գ. Կանեստրինի «Մարդաբանություն» աշխատությունը⁷², ռուսերենից՝ Ե. Զվյագինցևի և Ա. Բերնաշևսկու «Դառեր և մարդկանց աշխատանքը» (Երևան, 1926) գործը: Պետք է նկատել, որ բարգմանությունների ընտրությունը միշտ չէ, որ հաջող է կատարված. հայտնի ազգագրագետների՝ Լ. Մորգանի, է. Թեյլորի, Մ. Կովալևսկու աշխատությունների փոխարեն նա բարգմանել է Շ. Լետուրնոյի ոչ այնքան արժեքավոր վերոհիշյալ գիրքը: Ընտրության գործում հավանաբար դեր է խաղացել այն հանգամանքը, որ Շ. Լետուրնոն եղել է Ե. Լալայանի դասախոս պրոֆեսորը ժնևում:

Երկար տարիների համառ, Բրտնաչան և գրկանհներով լի կյանքը հայհայել էր Ե. Լալայանի առողջությունը, բայց նա դեռևս լի էր իր սիրած գործը շարունակելու բուն ցանկությամբ: Երբ սրտի ծանր հիվանդությամբ պառկած ժամանակ նրա բարեկամներից մեկը՝ Պ. Արեւյանը հարցնում է, թե ինչպե՞ս է զգում իրեն, նա պատասխանում է. «Իրեն առողջանամ, այնքան պետք է աշխատեմ, որ նորից հիվանդանամ»: Ե. Լալայանը վախճանվեց 1931 թ. փետրվարի 24-ին: Նրա մահը չափազանց մեծ կորուստ էր հայագիտության համար: Միանգամայն իրավացի է պրոֆ. Խ. Սամալայանը, երբ Ե. Լալայանի մասին գրել է.

67 Ա. Սարգսյան, Ե. Լալայանի կյանքն ու գործունեությունն արտադրող փաստաթղթեր: Տճ՝ «Քաների Հայաստանի արխիվներին», 1963, № 1:

68 ԱՀ, գիրք Ա:

69 Նույն տեղում:

70 ԱՀ, գիրք Գ, 1898, գիրք Գ, 1898, գիրք Ե, 1899:

71 ԱՀ, գիրք Գ, 1898, գիրք Զ, 1900:

72 ԱՀ, գիրք Բ, 1897:

«Հիւրավի, Ե. Լալայանը ծավալել է մի այնպիսի էֆայանսիվ աշխատանք, գլուխ բերել այնպիսի հսկա գործ, որի նմանը թե արտասահմանում և թե Ռուսաստանի գիտական-հետազոտական ասպարեզում կատարել են հատուկ ընկերություններ՝ ինստիտուտներ, կազմակերպված հավա-
ֆական ուժերով, կոլեկտիվ ջանքերով, խմբական էֆայեդիցիաներով: Այսօր Ե. Լալայանը մեզ քողել է սոսկ իր անհատական ջանքերով, իր միանձնյա գործունեությամբ կատարած աշխատանքի մի անագին ժա-
ռանգություն, որը պատիվ կրերի ամեն մի գիտական կազմակերպու-
թյան կամ ինստիտուտի, երբ այս կատարված լինեւ վերջինիս հույնիսկ հավաքական ուժերով»⁷³:

Նշանավոր հայագետ Ն. Ակիւնյանը Ե. Լալայանի մահվան առթիվ գրել է. «Բայց և այնպես ինչ որ ամբարեց Լալայանը, հավաքեց ժամա-
նակին, անոնք փրկված են կորուստեն և պիտի մնան ստացված գի-
տության: Սկող սերունդները պարտավոր են երախաագիտության, պիտի
օրհնեն հիշատակը մեծ վաստակավորին»⁷⁴:

Ե. Լալայանը երազում էր հրատարակված տեսնել բազում տարի-
ների իր տննաչան աշխատանքի արդյունքները: Բազմաժամանակ ազգա-
գրագետի, բանահավաք-բանագետի բաղձանքը իրականանում է: Հա-
յաստանի գիտությունների ակադեմիայի հրատարակությամբ լույս տես-
նող «Հայ ժողովրդական հեքիաթների» գիտական համահավաքի շուրջ
տասը հատորը բնդգրկում է Ե. Լալայանի ժողոված նյութերը: Բազմա-
վաստակ ազգագրագետ-բանահավաքի երկերի ներկա հրատարակու-
թյունն էլ կհանդիսանա որպէս նրա հիշատակի հավերժացում և հայա-
գիտությանը մատուցած մեծ ծառայությունների գնահատություն:

Կ. Վ. ՄԵԼԻՔ-ՓԱՇԱՅԱՆ
Ա. Մ. ՆԱԶԻՆՅԱՆ

⁷³ Խ. Խամբուկյան, Ե. Լալայանի (մահախոսական): Տե՛ս «Երրորդային Հայաստան»
(լրագիր), 1931, № 50:

⁷⁴ Ն. Ակիւնյան, Ե. Լալայանի (մահախոսական), տե՛ս «Հանգես ամսօրյա», Վիեննա,
1931, № 3-5, էջ 294:

Ջ Ա Վ Ա Խ Ք

ՆՅՈՒԹԵՐ ԱՊԱԳԱ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ՋԱՎԱԽԷ ԵՎ ԱՆԱԿԱԿԱՔ

Ջավախքը Գուգարք նահանգի ինը գավառներից մեկն է: Վրաց վախճանգ և թագավոր մատենագիրը յուր «Վրացվոց բարք» (Քարթլիս ցիտվրեբա) պատմության մեջ ասում է, թե այդ երկիրն, այսինքն՝ Կուրի գաղտավայրը, Երուշեատը և Փոցխով ու Տոր-ժղալի գետերի միջավայրը, ժառանգություն է ընկել վրաց նախահայր Քարթլոսի որդի Մցխեթոսի Ջավախոս որդուն, որի անվամբ և Ջավախք է կոչվել:

Շուպենը առասպելական համարելով Ջավախոսին, Ջավախքի անունը հանում է ջավ (գարի) վրացերեն խոսքից, որովհետև երկրի բորձրության պատճառով ամենից լավ գարի է բուսնում այդտեղ:

Մինչև Արշակունյաց հարստության սկիզբն ինչպես մեր, այնպես և վրաց պատմագիրներն այս գավառի մասին համարյա ոչինչ չեն հիշում: Սրանց ժամանակ, Մովսես Խորենացու ասելով, Վաղարշակ Ա-ն այս գավառի կեսը տալիս է Շարալի ցեղից Գուշարին ժառանգություն¹, իսկ նահանգի վրա կարգում է մի բզեշխ, որ հայոց հյուսիսային կողմերը պահպանե ավազակ ազգերից: Իսկ ընդդեմ լեռինն Կալկասայ,— ասում է Խորենացին,— կողմնակալ հիսիսոյ կարգել զմեծ և զհզոր աղզն. և նահապետութեան անուն կարդայ՝ բղեշխն զուգարացուց²: Այս բրդեղիս միանգամայն իշխում էր վրաց երկրի կամ ժողովրդյան մի մասին ես. ուստի և մի քանի մատենագիրներ անվանում են նրան «բղեշխ վրաց»: որպես Աշուշային Խորենացին կոչում է բղեշխ զուգարացվոց, իսկ Վարդան՝ բղեշխ վրաց, թույլատ այդ ժամանակ վրաստանում թագավոր էր Արշեղ կամ Արշիզը, ինչպես և նրանից հետո Վազգենը: Իսկ

¹ Մովսես Խորենացի, Պատմութիւն հայոց, Վենետիկ, 1881, գիրք Բ, գլ. Ը, նաև՝ Ստեփանոս Մսոզիկ, Պատմութիւն տիեզերական, ՍՊԲ, 1855, գլ. 7, էջ 39:
² Մովսես Խորենացի, նշվ. աշխ., գիրք Բ, գլ. Ը:

Միհրանին նորենացին կոչում է առաջնորդ վրաց և բղեշի գուգարաց-վոց³. բայց սա վրաց թագավոր էլ էր: Գուգարքի առաջին բղեշին էլ, որ Վաղարշակ Ա կարգել էր, Աղեքսանդր Մակեդոնացու վրացի զորիների վրա կարգած իշխանի, Միհրդատի թոռն էր: Հայոց Արտաշես Ա թագավորն ընդարձակում է այս բղեշի իշխանությունը և կողմնակալ է կարգում Պոնտոս ծովի վերա, ինչպես ասում է նորենացին. «Բայց (Արտաշէս) զուսար իւր զԱրտաշամայ տայ կին Միհրդատայ ումեմն վրաց բղեշի մեծի... և հաւատայ սմա զկողմնակալութիւն հրափսային լերանցն և Պոնտոս ծովու»⁴:

Արշակ Բ-ի ժամանակ այս նահանգն էլ ապստամբելով անցնում է վրաց կողմը, սակայն Պապ թագավորի Մուշեղ սպարապետը նորից նվաճում է, ինչպես պատմում է Բուզանդը: «Ապա խաղայր սպարապետն Մուշեղի վերայ Վրաց արքային, և նեղէր զնա մեծապէս. և հարկանէր զերկիրն, և վանէր զամենայն աշխարհն Վրաց. և հանէր ընդ սուր զամենայն ազատս և զազգս նախարարացն... և բղեշին Գուգարաց, որ յառաջն ծառայէր թագաւորին Հայոց և ապստամբեաց, կալեալ զլխատէր... և թափէր զամենայն գաւառն և առնոյր պատանդս, և զմնացեալսն ի հարկի կացուցաներ: Եւ զհին սահմանս, որ յառաջուն էր լեալ յերկիրն Հայոց և ընդ երկիրն Վրաց, որ է ինքն մեծ գետն Կուր, այնուհետև յինքն վտարեալ դառնայր անտի»⁵: Բայց Ս դարում արդեն Գուգարքի բոլոր գավառները դարձյալ անցած էին վրաց ձեռքը, ուստի և Մովսես նորենացին յուր՝ աշխարհագրութեան մեջ բոլոր գավառները, բացի Կողբոփորից, Վրաստանի գավառների կարգն էլ է դասում:

Բագրատունյաց ժամանակ Սմբատ Ա նորից վերադարձնում է այս նահանգը Հայաստանին, ինչպես պատմում է Հովհաննես կաթողիկոսը. «Եւ անտի դարձեալ իբրև զօղապարիկ իմն երթեալ շուէ զկողմամբը Գուգարաց և զայնս ևս ամրոցս իւրոյ տէրութեան՝ առ հասարակ յինքն զրաւէր նուաճէր»⁶:

Ժ դարում Գուգարքի մի մասն ընկնում է հայոց Կյուրիկյան թագավորության ձեռքը, իսկ Զավախքն անցնում է վրաց իշխանության ներքո: Վրաց Բագրատ Գ թագավորը (980—1014) հիմնում է Ախալքա-

լաքը, առանց բերդի, իսկ սրա թոռ Բագրատ 4-րդ (1027—1072) 1045 թվին յուր վասալ կիւրարիդ Օրբելյանի հետ ունեցած պատերազմի ժամանակ շինում է բերդը: Ախալքալաքը վրացերեն նշանակում է նոր քաղաք: Սրա թագավորության ժամանակ, այսինքն 1064 թվին, ինչպես պատմում է Մատթեոս Ուսնայեցին (ՃԺԶ). «Յարուցեալ սուլտանն (Ալփաույան) ահագին բազմութեամբ իւրով մտաւ յաշխարհն Վրաց... և բանակեցաւ ի գաւառն, որ կոչի Զաւախս և պատերազմաւ մեծով պատեաց զքաղաքն, որ կոչի Ախալ. և առ հասարակ զամենայն քաղաքն սրով կտորեաց՝ զայր և զկին անողորմ և զամենայն քահանայսն և զկրօնաւորսն և զիշխանսն սրախողխող արարեալ. և լցաւ ամենայն բողոքն արեամբ. և անհամար մանկունս և աղջկունս տարան՝ ի Պարսիկս ՚ի գերութիւն և գանձս ոսկւոյ և արծաթոյ ականց մարգարտացն որ ոչ գոյ թիւ»⁷:

ԺԳ դարում, թաթարների արշավանքների ժամանակ, երբ վրաց պետությունը սաստիկ թուլանում է, Ախալքալաքի և Ախալցխայի հոյսաւորները սկսում են անկախության ձգտել և ինքնազուրիս կառավարել այս գավառները: Ըվ որովհետև Ախալցխայի դիրքը սաստիկ նպաստում էր անկախություն ձեռք բերելու, ուստի ժԳ դարու առաջին կեսում վրաց թագավորներն ստիպվում են անկախ համարել այդ երկիրն և այդտեղի հոյսաւորներից Սարգսին ճանաչել Ախալցխայի և Ախալքալաքի միացյալ դավառների աթաբեկ (հայրիշխան): Հարյուր տարի շանցած այդ աթաբեկներից մին՝ Աղբուղան՝ հրատարակում է արդեն յուր օրենքները (Աղբուղայի օրենքներ):

1484 թվին Պարսից Յակուբ շահը հարձակվում է այս Սահաթաբեկոյի (Աթաբեկի երկիր) վրա, թալանում է Զավախքը և պաշարում Ախալքալաքը: Մեսխինները շեն կարողանում երկար պաշտպանվել, քաղաքը տոնվում է, և Յակուբը բոլոր նշանավոր Մեսխիններին և քաղաքի լեռնիչներին գերի է տանում: Հետո վառում է Ախալքալաքը և գնում պաշարում Ախալցխան:

1637 թվին Սահաթաբեկոն ընկճվելով Վրաց և Իմերեթու թագավորներից և թուրքերից, կորցնում է յուր անկախությունն և դառնում հստակաստանի մի փաշայություն: Այնուհետև Ախալքալաքը կառավարվում է թուրք բեկերով:

1772 թվին Կախեթու Հերակլես և Իմերեթու Սողոմոն թագավորները պաշարում են Ախալքալաքը և քիչ է մնում, որ առնեն: Բայց այս


7 Պատմութիւն Մատթեոս Ուսնայեցայ, Երուսաղեմ, 1869, էջ 175:

3 Մովսէս նորենացի, նշվ. աշխատութիւնը, գիրք Գ, գլ. Կ:

4 Նույնը, գիրք Բ, գլ. ԺԱ:

5 Փաստոս Բուզանդացի, Պատմութիւն հայոց, Վենետիկ, 1832, դպրութիւն Ե, գլ. ԺԵ:

6 Յովհաննէս Գրախանակեթացի, Պատմութիւն հայոց, Մոսկուա, 1853, էջ 133:
Իճճիհեան Ղ., Ստորոգութիւն Հին Հայաստանեայց, Մեծ Հայք, Վենետիկ, 1822, էջ 356:



Փոլտավայի

ժամանակ Սողոմոն թագավորը ժանտախտով բռնվում է, և պաշարումը դադարում:

1807 թ. ուսաները Գուղովիչ զորավարի առաջնորդությամբ պաշարում են Ախալքալաքը, սակայն չեն կարողանում առնել, և 1200-ից ավելի ուս զինվորներ ընկնում են բերդի պարսպի ներքե, 3 թնդանոթ մնում է թուրքերի ձեռքը:

1810 թ. սեպտեմբերի 4-ին ուսաները Պատուլչի գնդապետի առաջնորդությամբ զիշերով հանկարծակի հարձակվում են Ախալքալաքի դաշտում բանակած տաճկաց և պարսից միացյալ զորքերի վրա, ուր գտնվում էր և վրաց թագաժառանգ Ալեքսանդրը: Շփոթություն ձգելով զորաց մեջ՝ ուսաները հաջողացնում են մեծ ջարդ տալ թշնամիներին: Երևանու սարդարը, Ախլցխու փաշան և թագաժառանգ Ալեքսանդրը փախչում են և մեծ ավար թողնում ուսաներին:

1811 թվին դեկտեմբերի 7-ին ուսաները Կատրալսկու առաջնորդությամբ անպատմելի նեղություններ կրելով՝ ուղղակի անցնում են Թրիալեթու լեռներով և գիշերը հանկարծ հարձակվելով Ախալքալաքի վրա շփոթություն են ձգում և առնում բերդը: Թուրքերը փախչում են՝ թողնելով ուսաներին 16 թնդանոթ և 2 դրոշակ: Սակայն հաշտությունից հետո Ախալքալաքը դարձյալ մնում է թուրքերին:

Վերջապես 1828 թ. հուլիսի 28-ին ուսաները Պասկևիչ զորավարի առաջնորդությամբ Ղարսն առնելուց հետո՝ հարձակվում են Ախալքալաքի վրա և արշավահեղ պատերազմ տալով՝ տիրում բերդին, խլելով 14 թնդանոթ և 13 դրոշակ⁸:

1829 թվի Սեպտեմբերի 14-ին կայացած Ադրիանուպոլսի դաշնագրությամբ Ախալքալաքը մնում է ուսաներին:

Դարու սկզբի պատերազմների ժամանակ Ախալքալաքի բնակիչները փախչում են և ցրվում են զանազան կողմեր: Պասկևիչի պատերազմին այդ քաղաքը բոլորովին ամայանում է, և նրա բնակիչները պատերազմից հետո վերազառնալով բնակվում են Խոսպիա գյուղը:

1830 թ. էրզրումի և մասամբ Արդահանի գավառների հայերը գաղթում և բնակվում են Ջավախքի գյուղերում, միայն քաղաքը մնում է ավերակ:

1831 թ. Ախալցխայից Աղաբար Փեշտամալճյանը, Պետրոս Տեր-Մանվելյանը, գիշերապահ Հովհաննեսը և մի ոմն Ստեփաննոս գալիս են Ախալքալաք և բերդի հարավային կողմում, տաճկաց գերեզմանատան

⁸ В. Потто. Кавказская война, том IV, СПб., 1889, стр. 110.

մոտ շինում են բնակարաններ, մի փուռ և մի սրճատուն: Այնուհետև հետզհետե մարդիկ գալիս բնակություն են հաստատում այստեղ և այսպիսով կազմում են մի փոքրիկ գյուղ, որ Զավարթի հետ միասին համարվում էր մի մոկոտություն:

1860 թ. 30 տարվա ընթացքում, Ախալքալաքի բնակիչների թիվը կազմում է մինչև 366 տուն, 1101 ար. 1088 իգ. սեռի, ընդամենը 2189 հոգի:

1868 թ. Ախալքալաքը մոկոտությունից փոխվում է պրիստավության և պատկանում է Ախլցխու գավառին:

1874 թ., երբ բնակիչների թիվը հասնում է 493 տան, 1549 ար. 1418 իգ. սեռից, ընդամենը 2967 հոգու, Ախալքալաքը կազմում է մի առանձին գավառ և համարվում Գ կարգի գավառական քաղաք:

1889 թ. Ախալքալաքի գավառը բաժանվում է Բարալեթու և Գարեւլայի ոստիկանությունների և յուրաքանչյուրը կառավարվում է մի ոստիկանով, որոնք ենթարկվում են գավառապետին:

1890 թ. Ախալքալաքը վերածվում է գավառական Բ կարգի քաղաքի: Իսկ ներկա 1896 թ. ստանում է քաղաքային պարզ ինքնավարություն:

ԽԸՐԹԸԶ

Խըրթըզը գտնվում է Ախալքալաքից դեպի հյուսիս, 21 վերստ հեռավորությամբ, Կուրի ձորակում, այնտեղ, ուր Ախալքալաք և Կուր գետերը միանում են, և ահա այդ «միանում են» վրացերեն էրթվիս, իսկ սրանից էրթվիսի բառից ստացել է նա յուր անունը: Շատ հին քաղաք և բերդ է եղած: Բերդի հիմնարկությունը վերագրվում է պարսից Կյուրոս թագավորին (†529 Ք. առաջ): Վրաց պատմագիրների ասելով այս բերդը սաստիկ ընդդիմացել է Աղեքսանդր Մակեդոնացուն: Խըրթըզ բերդը հիշվում է և Պոմպեոսի արշավանքների ժամանակ, որին նա տիրում է երկարատև և արյունահեղ պաշարումից հետո: Այստեղ վրաց թագավոր Վախիթանգ Ղուրղասախանը սպասել է հույների և պարսից պատերազմների հետևանքներին, և երբ հույները հաղթել են, Վախիթանգը թարմ ուժերով հարձակվել է նրանց վրա և սաստիկ ջարդ տվել:

1624 թ. հուլիսի 1-ին մոկոտավ Գեորգ Սահակաձեն այստեղ ջարդում է պարսիկներին և ազատում Խըրթըզը նրանց լծից:

Վախուշտի ժամանակ (ԺԸ դարում) այստեղ կենում էին ենիչևներ, բայց 1770 թվին վրաց թագավոր Հերակլը Ասպինջայի մոտ տաճիկներից

տարած մեծ հաղթությունից հետ տիրում է և Խըրթըզին, սակայն հետո տաճիկները նորից գրավում են: Խըրթըզի վերջին գալմագամն էր Բաշապու, որ ամուսնացած էր Աջարիայի փաշի մոտիկ ազգական Խմշի-Օղլու աղջկա հետ: Բաշապան յուր հարեմն է մտցնում գոթելեցի Դավիթ անուն և բարալեթցի Խամալեձեի վրացի աղջիկները, սրա կինը պրզավում է և աղերսում է Աջարիայի յուր ազգական փաշին, որ սուլթանից հրաման աննելով գալիս է պաշարում Խըրթըզը: Այս ժամանակ Բաշապան իր հարեմում զվարճանալիս է եղել. փաշան վառողով խցկել է տալիս ամբոցի պատը, սպանում և սպա գլխատում է Բաշապին ու գլուխը սուրկում է Պոլիս: Նրա դին թաղվում է Կուրի ձախ ափին: Եվ մինչև այս էլ ձերերը ցույց են տալիս ամբոցի այն պատը, որ վառողով պայթեցրել էին:

1828 թ. հուլիսի 26-ին Պասկելիշի՝ Ախալքալաքը աննելուց հետո, Նրա զորապետ Ռանսկին առանց պատերազմի անում է Խըրթըզը:

Այժմ բերդը բոլորովին ավերակ է, իսկ գյուղը բաղկացած է 229 տեղից, 756 ար., 604 իգ. սեռից, ընդամենը 1360 հոգի: Սրանցից միայն 1 սուներ, 13 արական, 12 իգական սեռից հայ լուսավորչական են, մընացածները թուրք սուննիներ են:

ՏՅՈՒՄՈՒԿ ԿԱՄ ԹՄՈՒՎԻ

Տյումուկ նշանակում է քրմապետ: Այս բերդի հիմնարկությունը վերագրվում է արիաների՝ (բաքտրիացիների և իրանցիների) Կովկասի տիրապետության առաջին ժամանակներին: 1590 կամ 1570 թվականներին Քր. առաջ բաքտրիական թագավորության հիմնադիր Վերա Զիմյուսար (որի անվամբ և, ասում են, կոչվել է Թիֆլիսի Վերա թաղը), ափից ամբողջ Ասիան և, ի միջի այլոց, Կովկասը, տարածելով այստեղ երկրպագություն երկնային լուսատուների և հիմնեց իր քրմերի համար պիսավոր կացարաններ թմոկվում, Մցխեթում և ուրիշ տեղեր: Հետո արգին թմոկվին հիշվում է «Քարթլիս ցխովրեբայում» առաջին անգամ 920 թվին Քր. հետո, երբ Աղբեջստանի էմիր Աբդուլ Կասինն ամբողջ Արևելքի և Պարսկաստանի տիրապետողի հրամանով անհամար մահամեղական զորով խուժում է Վրաստան և Սամցխեի (Ախալցխու գավառ) ճանապարհին պաշարում թմոկվի բերդը: Բայց հավաստիանալով նրա անմտայնի և անառիկ դրություն, թողնում է այն և պաշարում Կվելի բերդը (Ախալցխայի գավառում, Զակիո-ժղալի գետի ձախ ափին):

Այստեղ Բագրատ Մեծ (1027—1072) վրաց թագավորը բանտար-

կում է Բագրատ Արտանուոցու որդիներին՝ Սմբատին և Գուրգենին, ուր և նրանք մեռնում են: Այստեղ այս Բագրատ Մեծը հիմնում է մի ընդարձակ և վայելչակերտ սաճար, ինչպես ասվում է «Քարթլիս ցեխովըրբայում»: Սրա որդու՝ Գեորգի Բ-ի թագավորության ժամանակ (1072—1089) Թմոկվին կործանվում է սաստիկ երկրաշարժից, որ ամբողջ Վրաստանին մեծամեծ վնասներ է պատճառում և տևում է՝ մի ամբողջ տարի: Թմոկվիի մեջ երկրաշարժից սպանվեց և էրիստավ Կոխոբեշին:

Վրաց Դիմիտրի Ա-ի թագավորության ժամանակ (1125—1155) սրա ջուլը Թամարան հիմնում է այստեղ Սուրբ Խաչի վանքը:

Այստեղից է Սարգիս Թմոկվեցին, որ մի ուսյալ, փիլիսոփա և հռետոր մարդ էր և վրաց իշխանների հետ ջանք էր թափում ազատել Վրաստանը մոնղոլների լծից:

1553 թվին Թմոկվուն տիրում է պարսից Թամազ շահն և հանձնում Կալխոսրո աթաբեկին:

Մ Ո Ւ Ն Գ Ս

Մունդան Վրաստանի ամենահին և ամուր բերդն է: Նրա հիմնարկությունը վերագրվում է Քարթլոսի թոռ, Մցխեթոսի որդի Ջավախոսին: Երբ արիաները տիրապետում էին Կովկասը, նրանք բնակեցնում են Մունդայում մարդերին, որոնց անվամբ և այդ հովիտը կոչվում է Մարդաստան: Վրաց Փառնավազի (302—237 Ք. առաջ) թագավորության ժամանակ մինչև Վրաստանի բաժանումը (1455—1463) Մունդան մայրաքաղաք էր Մունդայի էրիստավության (նախարարություն): Վրաց Փարսրմանի թագավորության (72—87) ժամանակ հայոց թագավոր Երվանդը խլելով վրացիներից Մունդան կոչում է Քաջաց-տուն: Բայց Փարսրմանի հաջորդները՝ Ազոբկը և Արմազեկը (87—103) նորից վերագործնում են Վրաստանին: Վրաց Միհրդատ Գ (364—379) վերանորոգում և գեղեցկացնում է Մունդայի եկեղեցին: Վրաց Վախթանգ Ղուրղասյանի թագավորության ժամանակ (446—499) այստեղ էրիստավ էր Նասար անունով մին, որին նա տանում է յուր հետ Հնդկաստան պատերազմի: Այս թագավորը նշանակում է այստեղ մի եպիսկոպոս: Մունդան Վախթանգ Ղուրղասյանի կրասնը որդիների ամառանոցն էր, որոնք էրիստավի իրավունքներով կառավարում էին Արևմտյան Վրաստանը և Արխազիան: Վախուշտի ժամանակ՝ ՓԸ դարում Մունդան այլևս քաղաք չէր, միայն բերդը դեռևս պահպանվում էր: Այսօր Մունդայի բերդը ևս ավերակ է, ինչպես և եկեղեցին: Այստեղ բնակվում են 15 տուն թուրք սունիներ, 52 ար., 56 իգ. սեևից, ընդամենը 108 հոգի:

Այս եկեղեցին կառուցել է Հովհաննես վրացի եպիսկոպոսը (957—964) արխազաց Լեոն Գ թագավորի թագավորության (955—957) և Զվիտաղի էրիստավության ժամանակ, ինչպես վկայում են պատերի վրա եղած արձանագրությունները:

Գլումուրդոյում նստում էր Ջավախքի վրաց առաջնորդը:

Վրաց Մեծն Բագրատ թագավորը (1027—1072) շինել է նրա արևմտյան զավթիքը:

Վ Ա Ր Ձ Ո Ս Ա Ս Ա Վ Ա Ր Ձ Ո Ւ Ն Ի Ք

Վարձիա վրացերեն նշանակում է վարդերի ամրոց: Սրա հիմնարկությունը վրաց տարեգիրները վերագրում են վրաց Գեորգի Գ թագավորին (1156—1184), Թամար թագուհու հորը, որ կիսակատար է թողելու նրա դուստր. մեծահոգև թամար թագուհին (1184—1212) ոչ միայն մոռացության չտվեց յուր հոր ձեռնարկությունը, այլև յուր աշակերտները գարձնելով նրա վրա, յուր համար մի փառավոր ապարանք դարձրեց, որ նրա ժամանակ 360 սենյակ ուներ: Նա այստեղ ժայռի մեջ փորել տվեց և Ս. Աստվածածնի վերափոխման հրաշալի եկեղեցին, որ 1553 թվին պարսից Թամազ շահը կողոպտեց:

Այստեղ մի փոքրիկ մատուռի մեջ թաղված է վրաց թագավոր Կոստանդին Ա (1407—1414):

Ումանք Ս. Աստվածածնի վերափոխման եկեղեցու մեջ եղած գերեզմանը Թամար թագուհունն են համարում, բայց սխալվում են, Թամար թագուհին թաղված է Գելադի վանքում:

Ահա այս է վրաց տարեգիրների տված տեղեկությունը, իսկ հայոց պատմագիրներից Վարդան Բարձրբերդցին ասում է, թե է դարու ըսկրպում «Ք Դպրավանից տարան դիաչն, որ յանուն սուրբ Աստուածածին, որ արդ Վարձիոյ կոչի՝ յայնժամ ձոնեացն կոչիւր: Եւ տարավ զնա Սարդիս ձոնեացն ի գողով յերեսաց այլազգեաց, ուր արար սքանչելիս ձևոք Տրմոթ վարդապետին—զկինն Դիմիտրեայ արքային վրաց յարկութենէ առողջ արարեալ ամենեկին, վասն որոյ և առին ի Հայոց և է սրբոյն Մեսրոպբայ աբհնեալ և կամ Բարսղի սրբոյն ձոնին և ունի զիր հայերէն յաջ թեկն»:

Սրանից երևում է, որ ավանդության ասելով ս. Աստվածածնի տված դրախտի ծառի ճյուղից շինված ձոնյաց սուրբ խաչը ապահովության

՝ Վարդան Բարձրբերդցի, Պատմութիւն տիեզերական, Մոսկուա, 1861, էջ 96—97:

համար է դարձել սկզբում Վարձիա է փախցրած, որի պատճառով և Վարձիո է կոչվել: Հետևապես և այս Վարձիան ոչ թե ժ: դարձան է շինվել, ինչպես վրաց տարեգիրներն ուզում են հավատացնել, այլ է դարձաց առաջ, թերևս մի հայ իշխանի ձեռքով: Իսկ Գեորգ և Թամար թագավորն ու թագուհին միայն նորոգել և նորանոր շինություններով հարստացրել են¹⁰:

ՋԱՎԱԽՔԻ ՏԵՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՍՍՀՄԱՆՆԵՐԸ

Ջավախքի սահմաններն որոշապես հայտնի չեն, այժմ այդ տեղը կոչվում է Ախալքալաքի դավառ, որ պատկանում է Թիֆլիսի նահանգին և գտնվում է 61°—61° 33' հյուսիսային լայնության և 41° 35'—41° 57' արևելյան երկարության աստիճանների տակ:

Մրա սահմաններն են. հյուսիսից՝ Գորվա դավառի Բորժոմի հասարակությունը Տավ-Գոթելի սարով, որ գտնվում է Ախալքալաքի, Բորժոմի և Մալկայի սահմանագլխում, Տմսխուր լճով, Մոլիտ գյուղից հարավ ձգվող փոքրիկ բլրակներով, Ախալցխայի դավառը՝ ճոռու սարով, Ցիպլիբտիսկեզի լեռնաշղթայով և Կյուպոկլու սարով: Արևմուտքից՝ Ախալցխայի դավառը՝ Կուր գետով, Հարավից՝ Արտաշանի դավառը Խոզապին լճով, Գյուգազի լեռնաշղթայով, Ուշ-Թափալար լեռներով, օրթուլ-դաղ սարով, որ կանգնած է Ախալքալաքի, Արտաշանի և Աղեքսանդրապոլի սահմանագլխում, Աղեքսանդրապոլի դավառը՝ Մատատապի սարերով: Արևելքից Օալկան՝ Ղարախաչի լեռնաշղթայով, Մոկրիա սարերով, Գավաղրան շղթայով, Մարսևի ձորով, Ելանդաղ, Ղոչուն դաղ, Պիկես, Գրեչիշի սարերով, Սամսարի լեռնաշղթայով, Վարադուզեյ, Շավնաբաթ կամ Գալի-դաղ, Բեքեր և Տավգոթելի սարերով:

Այս դավառը ձգվում է զուգահեռականների ուղղությամբ 40—55, իսկ արևմուտքից արևելք 30—60 վերսա: Ամբողջ տարածությունն է՝ 2392,86 քառակուսի վերսա:

ԱՆՍԼՔԱԱՔԻ ԴԱՇՏԱՎԱՅՐԸ

Ախալքալաքի դավառը Կուր գետի ջրամբարներից մին և արևմուտքից գետի արևելք հետզհետե բարձրացող մի դաշտավայր է:

Այս դաշտավայրի արևմտյան սահմանը՝ 30 վերսա տարածություն, այսինքն մինչև Խըրթըզ գյուղը, է Կուրի խորունկ ձորի ժայռոտ սփերը: Միայն բացառություն է կազմում դաշտավայրի հարավ արևմտյան անկյունը, ուր նա հետզհետե միանում է Մուրազվայի լեռներին և որոշ սահմաններ շունի: Խըրթըզից այն կողմն՝ արևմտյան սահման կարող է համարվել և Չորուրետու-չայը կամ Վարևանդու գետակը, որի այն կողմը գտնվում են քարոտ բլուրներ: Հյուսիսից դաշտավայրը մոտ 18 վերսա երկարությամբ ընդհատվում է Ցիխե-չվարի լեռներով, որոնք ձգվում են Կոկիայից մինչև Բեժանո գյուղերը: Միևնույն լեռները հարավ ուղղվելով և մտնելով Ախալքալաքի դաշտավայրը՝ կազմում են և նրա արևելյան սահմանը՝ մոտ 30 վերսա երկարությամբ և ապա հետզհետե քամրանալով՝ կազմում են Օրշա-չայի և Թափարավան-չայի քարոտ բլրաշարքը:

Եթե Թափարավան լճի շուրջն և համանուն գետի երկու եզերքը տարածվող հարթությունն էլ Ախալքալաքի դաշտավայր հաշվենք, այն մասնանկ սահմանը պետք է ձգվի Տուման-գյուլ լճից Տամբովկա դուրբ և Ռադիոնովկայից և Սաղամոյից՝ Տրոիցկա: Հարավ-արևելքում դաշտավայրը կտրվում է Մատատապու լեռներով, իսկ հարավում՝ Չլտրի լեռներով:

Այդ դաշտավայրի երկարությունն ամենաշատը 36 վերսա է, հաշվելով Դիլիֆ գյուղից հարավ ձգվող բլուրներից մինչև Բեժանո գյուղը: Իսկ լայնությունը հասնում է մինչև 40 վերսա՝ միայն հարավային մասում, իսկ հյուսիսայինում՝ նեղանում և հասնում է 5—8 վերսա:

Այս դաշտավայրի մակերևույթը հավասար է 650 քառակուսի վերսա: Ամբողջ դաշտավայրը մոտ 2080¹¹ ոտնաչափ հաստությամբ ծածկված է հրաբխային խանձողով, որի վրա տարածված է սևահող: Խո մոլի մակերևույթից միջին հաշվով 6000 ոտնաչափ բարձրություն տնի:

Ախալքալաքի այս ընդարձակ դաշտավայրը բաժանված է հետևյալ ստորաբաժանումների. Գարելայի դաշտավայր, որ բաժանվում է Սաթխուլի 4375 ոտնաչափ բարձրություն ունեցող լեռնաշղթայով: Ջրեշու գյուղավայր, որ բաժանվում է Ղրոխբուլաղի ձորով և ձգվում է մինչև Կուրի ձորը: Մա այսպես է կոչվում Ջրեշ ավերակի անվամբ, որ Հայր Ալիյանը Շիրակումն է դնում:

¹⁰ Վարձիայի մասին ավանդություններ տե՛ս իմ «Ջավախքի բուրմունք»-ում:

¹¹ Կուրի և Խըրթըզ գյուղերի մակերևույթի բարձրության տարբերությունը:

Զավախքի ամենաբարձր լյառն է Արուլը, որը բարձրանում է գավառի գրեթե կենտրոնում: Նա բաղկացած է երկու գագաթներից, որ միմյանցից հեռացած են գրեթե 10 սաժեն: Մեծ Արուլի բարձրությունն է 10826 ոտնաչափ, փոքրինը՝ 9191: Մեծ Արուլից բխում է մի քաղցրահամ աղբյուր: Գյուղացիները պատմում են, իբր նախնիք խմել են այդ աղբյուրից և սաստիկ հավանելով ասել. «Բնատակ ապուր է», այդտեղ բնակություն հաստատել և գյուղն ու սարը կոչել Ապուր, որ աղավազվելով դարձել է Արուլ:

Մեծ Արուլի արևմտյան լանջին նկատվում է պղնձի հանք և վանակատ (ՕՃՏԱՃՅԱՆ), սակայն դեռ չէ հետազոտած, թեև ակադեմիկ Աբիխն էլ մի անգամ բարձրացել է սրա գագաթն երկրարանական նպատակով: Սրա գագաթն ամառը ևս ծածկված է ձյունով:

Իսկ Փոքր Արուլի լանջին կառուցված է եղել մի ամբոց, որ այժմ ավերակ է:

Երկու Արուլների միջև գտնվում է Արուլ լիճը:

Արուլի շրջակայքն և առհասարակ Զավախքի այս արևելյան մասը բարձրավանդակ և շատ լեռնոտ է: Այս կողմը Փարվանա լճի մոտերքը հասնում է մինչև 7014 ոտնաչափ բարձրության:

Այստեղ Մեծ Արուլից հյուսիս-արևելք Քափարավան լճի հանդեպ բարձրանում է Գոգորբերի լյառը, որ Արուլից հետո երկրորդ բարձր լյառնն է: Սա ծովի մակերևույթից 10466 ոտնաչափ բարձր է, և սրա գագաթից պարզ եղանակին երևում են Արագած, Մեծ և Փոքր Մասիս, Կազբեկ և էլբրուս լեռները: Իսկ սրանից արևելահյուսիս՝ գտնվում է Քոռ-Օղլու լյառը, մի ավերակ ամրոցով: Այս լեռից դեպի արևմուտք զբոսնելով են միմյանցից հազիվ կես վերստ հեռավորությամբ երկու ժայռոտ լեռներ, որոնցից արևմտյանի վրա գտնվում է Քոռ-Օղլու ապաստանը:

Զավախքի արևելյան սահմանագլխում, Քափարավան լճից դեպի հարավ գտնվող Գրեչիշնայա լեռան մոտից ձգվում են նախ դեպի արևմուտք և ապա դեպի հյուսիս Մամսար լեռները: Սրանց մեջ ամենաբարձր գագաթն է Մամսարը, որ 10777 ոտնաչափ բարձրություն ունի ծովի մակերևույթից: Սրանից դեպի հյուսիս 7 վերստ հեռավորությամբ բարձրանում է Ղարաղուզեյ գագաթը, որից երեքական վերստ միմյանցից հեռու, դեպի հյուսիս գտնվում են Շավնարաթ կամ Դալի-դաղ, Բեբեր-

դարա և Տավկոտեի գագաթները, վերջինս 9211 ոտնաչափ բարձրությունով:

Այս լեռները մինչև կեսը ծածկված էին խիտ անտառներով, սակայն 1853 թվականի պատերազմին և ռուսոբուռնների գաղթականության մասնակ անխնա կտրատելով՝ ամայացրին, այժմ միայն մացառներ կան:

Մամսար լեռներից մի լեռնաշղթա բաժանվելով ձգվում է դեպի արևմուտք և հասնում գրեթե մինչև Ալաթուման. սա կոչվում է Ղարադուզեյ: Սրան միանում է բլրակների մի երկարաձիգ շղթա, որ սկսվում է Կարդիկամ գյուղից և ուր կրում է այն գյուղերի անունները, որոնց մոտով նա անցնում է, օր. Մաճաթիու, Արագովայի և այլն:

Ին՝ Մամսար լեռներից և թե՛ Ղարադուզեյ լեռնաշղթայից բխում են պաղպաղուն աղբյուրներ և սառնորակ վտակներ, փչում է զովազին քամի, և երկիրը ծածկվում դալար խոտով ու բյուրավոր ծաղիկներով, ուստի և սամսարցիները, բուրաշենցիներն ու դակցիները ամուսն իրենց բազմաթիվ հոտերն ու նախիրներն առած գալիս են այս կողմերը լսյալ:

Գավառի արևելյան սահմանագծում, Քափարավան լճի հանդեպ բարձրանում են Գոյին-դաղ և Ինագ-դաղ գագաթները և ձգվում է Դափադրան լեռնաշարքը, որոնցից ամենահյուսիսայինի և ամենաբարձրի բարձրությունն է 9254 ոտնաչափ: Սրանց միանալով, դեպի հարավ ձրգվում է Մոկրիա (թաց) լեռները, փոքր-ինչ դեպի արևելք ուղղվելով: Այս լեռները, որ իրենց անունը ստացել են ուսաներից, վերին շերտերում ծածկված են խանձուղով, որոնք հեշտությամբ լուծվում են ջրում և դառնում կաշող: Այս լեռների ամենաբարձր գագաթն է էմլեկին, որ 10018 ոտնաչափ բարձրություն ունի ծովի մակերևույթից:

Այնուհետև ձգվում են Ղարախաչի լեռները, որոնցից միայն մի քանիսն են սահմանակից Ախալքալաքի գավառին:

Գավառի արևելահարավային սահմանում ձգվում են Մատատապու լեռները: Իսկ արևմտահարավային սահմանագլխում ձգվում է Գյոզդաղ (Կապույտ լեռ) լեռնաշղթան, որ սկսվում է հանչալի գյուղից և ձրգվում մինչև Զուրգունիս գյուղը: Այս շղթայի բարձրությունն է 9145 ոտնաչափ:

Զավախքը շատ հարուստ է լճերով, սակայն սրանք ընդհանրապես փոքր են և ոչ մինի վրա նավակներ անգամ չեն լողում: Սրանք գլխա-

վորապես տարածված են դավառի սահմանադիտներում, նրա ամենաբարձր տեղերում, և սկիզբ են տալիս Զավախքի համարյա բոլոր գետերին և վտակներին:

Ամենից նշանավորն է Փարվանու կամ Թափարավան լիճը. նախնի ծովակ Հյուսիսո, որ տարածված է Զավախքի արևելահյուսիսային սահմաններում, սա ծովի մակերևույթից 6876 ստնաչափ բարձր է. իսկ նրա շրջակայքի մակերևույթը մոտ 714 ստնաչափ բարձրություն ունի:

Լճի մակերևույթն է 30 քառակուսի վերստ, իսկ խորությունը՝ մոտավորապես ութ սաժեն է: Լճի ջուրն անուշահամ է և պարզ:

Սրա մեջ թափվում են հետևյալ վտակները.

Հյուսիսից՝ Ղրխ-բուլախ (քառասուն ակ), արևելքից՝ Մակարդարասու, Մարսու գետակները, արևմուտքից՝ Տամրովկու:

Իսկ հյուսիսից դուրս է հոսում Թափարավան-չալը, որ Ախալքալաքի ամենամեծ և ամենանշանավոր գետն է: Սա հոսելով դեպի հարավ արևմուտք՝ Ղավուրմա գյուղի մոտ խառնվում է Սաթխաչի դետակի հետ և ապա դեպի արևմտահյուսիս հոսելով՝ անցնում է Ախալքալաքի արևելյան կողմի ձորով, ընդունում է յուր մեջ փոքրիկ վտակներ, ապա դեպի հյուսիս գնալով՝ Կորխ գյուղի մոտ խառնվում է Մեծ ջրի հետ, ու դեպի արևմուտք հոսելով, Խըրթըզ գյուղի առաջ թափվում է Կուրի մեջ: Զմեռը թափարավան լիճը բոլորովին սառչում է:

Լճից որսում են սև, ալապալխ (գեղաբրունի), դալխան, սաղան, մործա ձկներ, սակայն այնպիսի մի փոքրիկ քանակությամբ, որ միայն շրջապատող մի քանի գյուղերին է բավարարություն տալիս, ուստի և կառավարությունն անուշադրության է թողած և կապալով չի տալիս:

Այս լճի ափին կան երկու ամրոցի ավերակ: Մինը լճի արևմտյան կողմը, անմիջապես ափին, մյուսը հարավային կողմը, Փոկա գյուղում:

Այս լճի ափին, հյուրասեր ձկնորսների խրճիթում, հանգստացել է նաևն կույսը, երբ գնում էր Մցխեթ:

Թափարավանից դեպի հարավ, գրեթե միևնույն գծի վրա գտնվում է Տուման-գյուլ լիճը, որ ավելի արևելքից արևմուտք է տարածված, և որի մակերևույթը հավասար է 10 ք. վերստի: Լիճն այսպես կոչվելու պատճառն այն է, որ գրեթե միշտ պատած է տուման-մշուշով: Սրա անմիջապես ափին գտնվում է Սաղամո թուրքաբնակ գյուղը:

Սրա մեջ թափվում են Գանձաու և Բոչուկդարու (մեծ ձոր) գետերը, վերջինս սկիզբ է առնում Մոկրիա լեռներից: Հարավարևմտյան կողմից հոսում է Տումոյու ջուրը, որ դեպի արևմուտք հոսելով անցնում է երկու

Արազյանների միջից և Պատկանա գյուղի հանդեպ թափվում է Սաթխաչ գետակի մեջ:

Այս լճից էլ հարավ դարձյալ միևնույն ուղղության վրա գտնվում է Ատատափու լիճը համանուն լեռնաշղթայի ստորոտում:

Սրա մեջ արևելյան կողմից թափվում են Կուրյան-չալ և ուրիշ վտակներ: Սրա արևելյան ափին, Կուրյան-չալի բերանի մոտ կա մի հին ամրոցի ավերակ, արևմտյան ափին կից ձգվում է Աղեքսանդրապոլից Ախալքալաք տանող փոստային ճանաչարհը: Այս լիճն ամառը ճիլով, իսկ ձմեռը սառցով պատած է լինում:

Այս լճից դեպի արևմուտք, Ախալքալաքից դեպի հարավ գտնվում է Խանչալլի լիճը: Սա տարածված է հարավ-արևելքից հյուսիս-արևմուտք, փոքր-ինչ նեղանալով: Սրա մակերևույթն է 16 ք. վերստ: Զուրը բազրբահամ է: Սրա մեջ թափվում և դուրս են գալիս փոքր և անանուն առուներ ու վտակներ: Ափերն ամրոցապես ծածկված են երկար նիլով, որ գործ են ածում համետներ շինելու:

Լճի արևելյան ափին բլրակների վրա կան երկու ամրոցի ավերակներ, որոնցից հարավայինը կոչվում է Սղնաղ: Տեղացիները ոչինչ չգիտեն այս ամրոցների մասին, պատմությունն էլ լուրս է:

Ախալքալաք գավառի հյուսիսային սահմանադիտում տարածվում է Տմսխուր լիճը, որ մոտավորապես քառանկյունի դիրք ունի. մակերևույթն է 13 քառ. վերստ: Զուրը կապտագույն է և քաղցրահամ, այստեղ զբոսնում է ամենալավ գեղաբրունի:

Սրա հյուսիսային մասում մի լեզվակի վրա շինված է Ղըղըլ-քիլի-սա հայաբնակ գյուղը, որ գեղեցիկ դիրք ունի:

Այս լիճը սրանից մի տաս տարի առաջ ամբողջովին պատկանում էր Ախալքալաքի գավառին, և նրանից օգտվում էին Ախալքալաքի գավառացիները, այժմ միայն հարավ և արևելյան մասերն են պատկանում, իսկ մնացածն իշխան Միխայել Ալեքսանդրովիչի սեփականությունն է: Գավառիս հարավարևմտյան սահմանադիտում տարածվում է Խոզապին լիճը: Սրա մեկերևույթը 26 քառ. վերստ է: Երկարությունը 10 և լայնությունը՝ 2—3 վերստ է:

Զուրը գառն-աղային համ ունի և պարունակում է կիր, նատրիում, մոզնեզիա, քլոր, ածխաթթու և ծծմբախառն թթվատ. 1000 խոր. ամ ջրի մեջ պարունակվում է 0,8804 գրամ պինդ նյութ: Ոչ մի ձուկ չկա լիճում և չի էլ կարող ապրել:

Լճի մեջ կան շորս հատ փոքրիկ կղզիներ, որոնց վրա ամառը վայրի բազկերի մի ահագին բազմություն բներ է շինում: Գյուղացիները հա-

սարակ լաստերով մոտենալով այս կողմերին, հազարավոր ձկեր և թռչուններ են տանում: Այս լճից ոչ մի առվակ չի դուրս գալիս, շնայելով որ գարնանը շատ վտակներ են թափվում նրա մեջ: Հավանական է, որ անցյալում, արևմտյան կողմից մի անցք լիներ դեպի Կուրը: Լճի ափին կա մի ամբողջ ավերակ: Այժմ այս լճի միայն կեսն է պատկանում Ախալքալաքի գավառին, մյուս կեսը Արտահանինն է:

Բնե կան ուրիշ լճեր ևս, սակայն նրանք շատ փոքր են, մի քանիսն էլ ամառը շորանում են և մի առանձին նշանակություն չունին: Այսպիսիներն են Վաչիանու, մի պղտոր լիճ, որի ջուրը վաշիանցիք ստիպված խմում են: Բուղդաշեն, Արլովկա գյուղի մոտ, որից սկիզբն է առնում Սաթխա վտակը, Ալիշան, Դյումուրդա գյուղի հարավարևելյան կողմը, Տանկալ, Հոկամ, Ալիշանից փոքր-ինչ հարավ, միմյանց մոտ. Աբուլ, համանուն լեռների արևմտյան կողմը, գյուղից դեպի հարավ: Չպլախ, հանշալի լճից դեպի հյուսիս: Արնբատեր, Ալաթուման գյուղի սահմանում, բլրակների միջև, ս: այսպես է կոչվում, որովհետև մի հոտաղ մանուկ խեղդվել է մեջը:

ԿԼԻՄԱՆ

Ջավախքի կլիման բավականին առողջաչար է, և ինչպես երևում է Տորոպովի կազմած կլիմայաբանական (пиретологическая) քարտեզից, տեղից ազատ սակավաթիվ գավառներից մինն է, որի բարեխառն կլիման, բարձր դիրքը և ջրի առատությունը բավական արգելք են վարակիչ նյութերի զարգացման:

Այստեղ ձմեռը ըստ պ. Ռիչենկամպֆի վեցամյա դիտողության, այնպես խիստ չէ, ինչպես առհասարակ պարծվում է, միայն շափազանց ձյուն է գալիս: Առաջին անգամ ձյուն գալիս է նոյեմբերի սկզբին, իսկ երկրորդ ձյունով ծածկվում է և սահանակները լծվում են դեկտեմբերի սկզբին: Ցերեկվա բարեխառնությունը համարյա միշտ 0° է լինում և քիչ անգամ—2-ից 3°: Բայց գիշերը, արևը մայր մտնելուց ետ բարեխառնությունը մոտ 10 աստիճան արագությամբ իջնում է, իսկ ընդհանրապես՝ ձմեռվա գիշերների բարեխառնությունը —13° ցած հազիվ է պատահում: Վեց տարիների ընթացքում միայն մի անգամ է իջել մինչև —23°: Աշունն ու աշնան վերջը շափազանց երաշտ են լինում, այնպես որ ձյունը նստում է շոր գետնին, մարգերում երբեք չի լինում կանաչ, որովհետև ցրտի և շորության պատճառով չի կարողանում բուսել: Մարտի վերջին արգեն կտրում է ձյունը, բայց գյուղերում կանաչ դեռ երկար ժամանակ չի կարելի դանել, որովհետև գարունը բավական ցուրտ

լինելով խոտի աճելուն սաստիկ արգելք է լինում: Այստեղ խոտը ավելի կամաց է աճում, քան Մոսկվայի նահանգներում և մինչև անգամ Ղարս սարահարթում: Ամբողջ գարունը և ամռան մի մասը, մինչև հուլիսի կեսը, սաստիկ անձրևային է, միայն անձրևները երկար չեն տեղում, այլ տեղատարափ են, որից հետո շուտով երևում է արևը. և եղանակը պարզվում է: Ամբողջ օրվա մեջ հազիվ է պատահում ամպամած եղանակ: Ամառն էլ գարնան չափ աննպաստ է գյուղատնտեսության, որովհետև շատ ցուրտ է և առավտները սաստիկ ցուրտ բամբներ են փչում: Այսպիսի դաշտերի բույսերը կարճ են, այսպես օրինակ, կանեփը ուսականի երրորդ մասի չափ էլ չի բարձրանում:

Ախալքալաքի դաշտավայրում կան և ավելի ցուրտ տեղեր, օրգոխոբուտների բուր և Փսկա, Գանձա, Սաթխա, Մեծ-Արագչալ գյուղերը և ուրիշները, որոնք 6000—7000 ֆուտ բարձր են ծովի մակերևույթից, և ուր օդի բարեխառնությունը ձմռանն իջնում է 20—30°: Ռադիոսովկա գյուղում, որ գտնվում է 7000 ֆուտ բարձրության վրա, ամռանը հացը վնասվում է ինչպես երաշտից, այնպես էլ առավոտյան ցրտերից: Այս վերջինի պատճառն այն է, որ սեահողի մի բարակ շերտ միայն ծածկում է բարձրորոտ երկիրը և խոնավության մի մասը արագությամբ շոգեանում է, իսկ մյուս մասը հոսում է քարքարոտ երկրի միջով, ուստի և ցանրերը վնասվում են խոնավություն չլինելու պատճառով: Այս գյուղում ձյունը գալիս է մինչև անգամ հոկտեմբերի 15—20-ին և երբեք ապրիլի կիսից առաջ չի վերջանում:

Այս բարձրությունների վրա ձմեռը լինում է սաստիկ և ձյունախոտն բքեր, որոնք ձյունով լցնում են գյուղացիների բնակարանները, ծածկում դռներն ու պատուհանները, այնպես որ գյուղացիներն ամբողջ շաբաթով բանտարկված են մնում և կերակրվում են այն հացով, որ բարեկամները հերթիկը բանում և վայր են կախում: Եթե այս ողորմելիները կամենում են թոնիրը վառել մի տաք կերակուր պատրաստելու համար, բուքը թույլ չի տալիս ծուխը քաշվելու և փչում լցնում է ամբողջ տունը, երկուտեք՝ դրսից բուքը, ներսից ծուխը՝ հալածված, սրանք պպղում են տաք անկյուններում, անիծելով իրենց բախտը: Նույնպիսի բքեր պատահում են և ամառը. այսպես, 1886 թ. լուսնի 20-ին Քոռոզլու լեռան լանջում սաստիկ բուք է բարձրանում և խեղդում բազմաթիվ հոտեր:

Փիրազ ամսում էլավ տուման,
Քոռոզլինն զարկեց բիհան,
Հարզավ օշխարն, շունինք գյուման,
Թարիֆը էնեմ սեֆիլ Դավիթ:

Այսպես է նկարագրում ժողովրդական երգը:

Բնակիչներն ամառը մինչև անգամ հուլիսի կիսին շեն հանում բրդյա հագուստներն ու ուշիարի մորթուց կարած մուշտակները: Եվ եթե այսպիսի համարյա բեռնային գոտու նման կլիմայում բնակիչները կարողանում են ապրել և բավարար ապրուստ հոգալ, այդ պիտի գլխավորապես վերագրել նրանց տոկունությանն և՛ երկաթե եռանդին:

Ախալքալաքի դաշտավայրի կլիմայի անհարմարություններից մեկն էլ այն է, որ հաճախ կարկուտ է գալիս, որից առաջացած վնասը, տեղային ոստիկանության հաշվով, հասնում է մի պատկանելի թվի՝ 200 000 ուլբի:

Ախալքալաքի դավառի իւրթըզու հովտի կլիման բուրբոնիկ հակառակ է Ախալքալաքի կլիմային և բուրբոնիկ նման ախալցխայինին: Այնտեղ ձմեռն օդի բարեխառնությունը 4,55°Ց. գարնանը 7,9°Ց. ամռանը 22,74°Ց և աշնանը 5,6°Ց: Ամենասաստիկ ցուրտը հասնում է —28°Ց., իսկ ամենատաքը՝ 34,9°:

ՀԱՆՔԱՑՈՒՆ ՋՐԵՐ

Ախալքալաքի դավառը շատ աղքատ է հանքային ջրերի կողմից, ոչ մի նշանավոր ջերմուկ չկա, մի քանի տեղ միայն բխում են հանքային ջրեր, սակայն նրանք ևս բուրբոնիկ անխնամ են թողնված և ծառայում են որպես հասարակ լողարաններ՝ պատահական անցորդներին և գյուղի երիտասարդներին:

Սրանցից նշանավորներն են.

Սարու. ծծմբային 16,5°R տաքություն ունեցող ավազան է:

Խանդոյինը գետի աջ ափին մի փոքրիկ հարթության վրա մի կեղտոտ ավազան է: Ջուրը 13,7°R տաքություն ունի, մուգ կանաչագույն է և պղպաղակներ անգամ շունի: Մորիցը կարծում է, թե այս ջրի մեջ պղզինձ կա: Եկատելի է, որ հնումն սա պատենել է ունեցել, որ այժմ քանդված և ավազանն է լցված:

Իւրթըզու ճանապարհի վրա, Պայպուրացյանի կալվածքում, Ախալցխայի Փիտ գյուղի հանդեպ, սարի ստորոտում կա ծծմբային 25,9° ջերմության մի ավազան, որ բուրբոնիկ անխնամ է թողնված: Այս ավազանից փոքր ինչ հյուսիս, Կուրի անմիջապես ափին կա և մի ուրիշ այսպիսի ավազան:

Կարծախ գյուղում, Խոզապին լճի մոտ կա սառը ծծմբային ջրի ավազան, ուր բորոտները լողանում և բժշկվում են:

Օլադա, Կուրի աջ ափին, 5—6 վերստ հեռու Մուրագվալ գյուղից, ստուն թույլ աղային ջրի ավազան է:

Չխարտբելու, Չագյուրտան լեռան ստորոտում 22,5°Ց ջերմութուն է լինում:

Մուրագվալի, համանուն գյուղի մոտ տաք ջերմուկ է:

ԲՈՒՍԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ախալքալաքի գավառը գրեթե բուրբոնիկ գուրկ է անտառներից, միայն Չըխըզզվար և Սամսար սարերի լանջերին կան փոքրիկ մացառներ: Մեծ անտառներ, որոնք շինության փայտ մատակարարեին, պատահում են բնակիչներին քիչ մատչելի և Ախալցխային սահմանակից Չորեբևտի սարերում: Սրանք ընդամենը բռնում են 6740 դեկայարին տեղ:

Սակայն շատ հարուստ է յայլաներով, որոնք գլխավորապես տարածվում են գավառի հարավարևմտյան և արևելյան մասերում, և ուր տրածում են ոչ միայն գավառի, այլև Սղնախի և այլ կողմերի անասունները:

Այստեղի արտերում ցանում են կտավատ, գարի, ցորեն, կարտոֆիլ: Պարտեզներում պարտեզի բույսեր՝ ավելուկ (Rumex), բազուկ (Beta), բուհան (Ocimum), թարխուն, ծիթրոն (Serpyllum), կոտեմ (Nasturtium), կաղամբ, համեմ, մաղատանոս, պոսս (Porrum), սամիթ (Anemum), սպանխ, սոխ, սխտոր, վարունգ, տերաղոթի և այլն: Բայց ամենից ավելի նշանավոր է Գյոնգուրու և Վաչխանու շաղգամը, որ մեծ քանակությամբ տանում են Ալեքսանդրապոլ վաճառելու:

Դաշտերում և գլխավորապես Գիլիֆում լինում են հետևյալ ծաղիկները: Անթառամ (Helichrisum), ապրի ծաղիկ, ավելի ծաղիկ, դավի ծաղիկ, դավի սապոն, գեղին ծաղիկ կամ ծածք, լորի աչք, լվի ծաղիկ (Pulicaria), խաշլուաշ (Papaver), խնկածաղիկ (Pollum-montanum), խորտու-մորտու, կակաշ (Tulipae), կոկոռ (Ribes), կոված, կուժկոտրակ, հինու, ձնծաղիկ (Colchicum), մանուշակ, միխակ, նավթուղ, նուզու, շանբերան, չիգիտամ կամ սավդակ (Colchicum autumnale), սուրբուր, սուսամյար, սպիտկունք (Purola), սուղոտ (Malvae), փուշ կամ գլուգում ծաղիկ, քրքրում (Crocus, Safran), օշոշ:

Կանաչներից և խոտերից նշանավոր են. աշըղպանդ անվույտ-յոնճա (Frikolle-fibrin), առուլ, ավիլ, բաթաթուկ (Convolvulus liseron), բըբըուկ, բուղուկ, դառի խոտ, գիլու փոտիկ, գնձմճուկ (Thalictfrum), գոմեշ կոտրակ, գոմշի անկան, դաղձ (Mentha), դանդուռ, եղինջ (Urtica), գոխ,

էրիժնակ, թել բանջար, թելուկ, թթիւ սոր, թթու թթվաշ, ժախ իշկաթ, նուկ (Lathysus), իշու էրիժնակ, լվի ծաղիկ (Conyza), լոշտակ (Bryonia alba), խաթնխոտ (Polygola), խելառ խրինտուկ, խոնտատ, կծմնծուկ (Barborea), կծուկծմանի, կոճղեզ, կոպուխ, կովճակատուկ, կորնգա (Melilotus), կրծիկ, հոտղի փլավ, դանգիկ, դառղոճի հաց, դմի, դրնճըլոզ, ճառճըրտուկ, ճիլ (բարակ եղեգն), ճմուկ, ճնճղապաշար, ճրճատուկ, մամուռ, մանթար, մատուկ, մուկոտոմ, շաղիամուկ, շանթութ, շոր-շորուկ, ուսվենիկ, պնտպնտուկ, ջրակոտեմ (Sium), սիպիս (Coronopus), սիրի-սիրի (եռատերև է, սրանով գուշակում են, թե որ ազդեցան պիտի սիրեն: Մրանց քառատերևը գտնողին թաքնված դանձերը կերևին): Սոխուկ, սորեկ, սուտ տատրակ, տատրակ, տերևատ, քիս:

Խըրթըզի ձորակում և Մարգաստանում աճում են հետևյալ պտղատու ծառերը. թթենի, ընկուզենի, կեռասենի, խնձորենի, տանձենի:

Այստեղ ցանում են ծխախոտ և սիմինտը. որից քրդերը հաց են թխում:

ԿԵՆՐԱՆԻՆԵՐ

Ջավախքի ֆաունան հարուստ չէ: Դաշտերում գտնվում են բազմաթիվ արտոտիկներ և շահեններ, ինչպես նաև կիլուններ, արտերում՝ ճնճղուկներ և սարյակներ: Լճերի վրա կան բազմաթիվ թռչուններ, իսկ լեռներում նապաստակներ, աղվեսներ, գայլեր, այծյամներ և փոքր արջեր:

ԱՆՍԱԿԱՆՆԵՐ

Թափարավան և Ղըրխ-բուլաղ գետերը միախառնվելով՝ մի պայտաձև թերակղզի են ձևացնում, որի վրա գտնվում են Ախալքալաք քաղաքն ու բերդը:

Բերդը կառուցված է թերակղզու ծայրին, որի երեք կողմը ձգվում են բավական ընդարձակ զառիվայրեր: Այս զառիվայրերում գտնվելիս է եղել հին քաղաքը, որ այժմ բոլորովին ավերակ է:

Կիսավեր պարսպի հետքերը ցույց են տալիս, որ քաղաքը պարսպապատ է եղել և միայն արևելյան և արևմտյան ձորերի մեջ բաց արած ճանապարհներով հաղորդակցություն է ունեցել գավառի հետ:

Արևելյան պարսպի դռան վրա դեռ մինչև այսօր նկատելի է վրաց Մեսրոպյան տառերով մի համառոտ արձանագրություն:

Այժմ միայն երկու եկեղեցու ավերակ, հացի հորեր, սոճորերկրյա հունապարհներ և զանազան տների որմեր են նշմարելի, մյուսները ծածկված են հողի տակ: 1832 թվին, երբ արքունական շինությունների համար քարեր էին կրում այդ ավերակներից, պատահել են մի քարուկրյա պատի, փորել են և գտել սրբատաշ քարերից շինած մի. սալատակ և նրա տակ արդեն մի քանի գերեզմանաքարեր, խաչքարեր, մի րարե աշտանակ, եկեղեցու դռան վերևի մի քար և այլն: Գտնված քարերից շատերը ծածկված են եղել հայերեն արձանագրություններով, որոնք վերաբերում են ԺԳ, ԺԴ և ԺԵ դարերին: Դրանցից ամենահինն ունեցել է այսպիսի արձանագրություն. «Այս է հանգիստ ներսէս (քահանային) թվ. չիգ» (1294): Մյուս գերեզմանաքարի վրա քանդակված են եղել երկու մարդկանց կերպարանք, շուրջը այսպիսի արձանագրություններ. «Այս է հանգիստ եթէ գիտես հարազատ որ ճանաչես, եղբարք... վա... աղին և ներքսաղին»: Վերևից՝ «թվ. Պ. Ժա» (1362): Եկեղեցու դռան վերևի քարի վրա հազիվ կարդացվել է. «թվ. ջ» (1451):

Քարերից մի քանիսի վրա նկատվել է աղյուսի թանձր շերտ, զորորինակ՝ մի կանգուն խաչքարի վրա, որ հավանականորեն քահանայի գերեզմանաքար է, դժվարությամբ կարդացվել է մի քանի հատ ու կասր բառեր, այն է՝ «բնկալ, կեցո, ողորմեա... հանգուցեալ»: Քարե աշտանակը մոտ 7 վերջուկ բարձրության է եղել և բավական կոշտ շինված. սրա վրա ևս արձանագրության հետքեր են երևացել, բայց անվերծանելի են:

Այժմյան քաղաքը գտնվում է բերդի հարավային կողմը, ուր առաջ գտնվելիս է եղել տաճկաց գերեզմանատունը: Ընդամենը յոթ բավական լայն և կանոնավոր փողոցներ են 1360 սաժեն երկարության և երեք սաժեն լայնության, որոնք կտրվում են վեց փողոցներով, որոնց երկարությունն է 270 սաժեն: Փողոցներից միայն մի քանիսի երկու կողմը շինված են մայթեր, մեջտեղը բացի մինից, խճուղի չէ, ուստի և սաստիկ ցեխ է լինում:

Թեև ժողովուրդը փողոցներին անուն տալիս է, սակայն ոչ մի փողոցի վրա անուն չէ գրված: Տները շինված են քարից և արտաքուստ համարյա բոլորը սպիտակեցված են. ամբողջ քաղաքի մեջ երկու հարկանի միայն մի տուն կա, մյուսները մի հարկանի են: Քաղաքի գրեթե կիցրոնում գտնվում է հայոց Ս. Խաչ եկեղեցին, որ 1856 թվին կառուցել է Կարապետ Յաղուբյանը՝ զխավորապես յուր և մասամբ հասարակության դրամով: Սա մի հասարակ շինություն է, առանց նույնիսկ դմբեթի. միայն մի զանգակատուն ունի: Այժմ այս եկեղեցին ներքուստ

բաժնական նորոգել են: Սրա գավթում գտնվում են հայոց եկեղեցական ծխական Ս. Մեսրոպիւսյան տղայոց և Ս. Սանդխտյան օրիորդաց երկ- դասյան դպրոցները: Քաղաքի հյուսիսային ծայրում, բոլորովին առան- ձին, պարսպապատ գտնվում է ուսաց եկեղեցին, որ կառուցված է Ստեփանոս Անանիկյանի աշխատությունով և բավական օժանդակու- թյունով, որի համար և ստացել է առաջին քաղաքական աստիճան: Քաղաքի հարավային կողմն էլ մի ընդարձակ տարածություն պարսպա- պատ է արած և հատկացված է հայոց եկեղեցու համար, որ շինելու են իրենց ծախքով արժանահիշատակ Գրիգոր Կիրակոսյանի ժառանգ- ները: Հայոց եկեղեցուց ղևպի արևմտահյուսիս գտնվում է քաղաքային աղիին, որ շինված է 1880 թվին, երկարությունն է 40 սաժեն, իսկ լայ- նությունը՝ 22 սաժեն և 1 արշին: Այգին փայտյա ճաղերով շրջապատ- ված է և ունի միայն մի հովանոց: Աղբյուր և ավազան չունի, միայն մի ջրհորից ջրահան մեքենայով ջուր են հանում և ուշ-ուշ ջրում սակավա- թիվ ծառերը, որոնք և այս պատճառով չեն աճում:

Քաղաքի զբոսավայրը համարվում է և արևելյան ձորը, ուր գետի ափին կա մի փոքրիկ, կիսավեր մատուռ: Սրա կողքին երևացող հետ- քերը ցույց են առնում, որ նրան կից եղել են և այլ շինություններ: Սը- բանց մոտ սառն ջրի մի ավազան կա, որի մեջ լվացվում են տեղով բռնվածները և իբր առողջանում:

Մատուան հանդեպ, գետի աջ ափին կան մի այլ մատուան հետ- քեր և նրա մոտ քարափում մի քանի այրեր, որոնցից մինը կոչվում է Ճգնավորի այր: Ոչ մի արձանագրություն չկա այդ բոլոր ավերակների վրա: Այս ձորի մեջ նշանավոր է այն զորեղ ներգործությունը, որ արել է անձրևը վայր թափված և դեռ ժայռերի մեջ մնացած կարծր քարերի վրա յուր ուժգին և երկարատև հարվածով, մի տեղ ծակելով ահագին քարը, մյուս տեղ փոսացնելով նրան, երրորդ և չորրորդ տեղ այլ և այլ ձևեր տալով նրան: Քաղաքում ոչ մի աղբյուր չկա, միայն արևմտյան ձորակում բխում են երեք, իսկ արևելյանում մի աղբյուր, որոնց ջուրը մաքուր և քաղցրահամ է: Այս շորս աղբյուրը միայն ջուր են մատակա- րարում ամբողջ քաղաքին: Կան նաև մի քանի ջրհորներ, սակայն նը- բանց ջուրը չեն խմում:

ՆՃԱՆԱՎՈՐ ԳՅՈՒՂԵՐԸ

ԿԱՐԾԱՍ

Կարծախ գյուղը գտնվում է Ախալքալաքից 26 վերստ ղևպի արևե- լահարավ, հողապին լճից երկու վերստ արևմուտք, 41°14' հյուսիսա-

յին լայնության և 61°50' արևելյան երկարության տակ: Նա մոտավո- բապես ծովի մակերևույթից 5540 ֆուտ բարձր է: Սրա արևելյան կող- մում գտնվում է Բիդեշինու և Բողալու բարձրավանդակը, արևմուտքում հողապին լիճը և Աղղաշը (սպիտակ քար), մի սպիտակ քար, որ զբո- նրվում է Ախալքալաքի և Արտահանի ճանապարհի մոտ և որ մինչև վեր- ջին ուս-թրքական պատերազմը սահմանաքար էր Ռուսաստանի և Տաճկաստանի միջև: Հարավում Գյոզգաղի (Կապույտ լեռներ) շղթան, որ սկսվում է հանչալիի գյուղից և ձգվում մինչև Զուրղունիս գյուղը Արտահանի գավառում: Հյուսիսում Գյունեյ սարը:

Գյուղի տարածությունն արտատեղեկերով ու վարելահողերով 2598 զեսյատին է, որից 46 դ. գյուղի շինություն տեղն է, 2074 դ. վարելա- հող և 478 դ. արոտատեղ: Գյուղը բաժանվում է երեք թաղի՝ Կարծախ, Կիլերտա և Նորաշեն: Կարծախ թաղը գտնվում է Գյունեյ սարի ստորո- տում, այստեղ տները շատ մոտ են շինված և կալերը տներից հեռու են, իսկ մյուս երկու թաղում կալերը տների առաջն են: Կիլերտա թաղը բա- ժանվում է սրանից մի գետակով, որ հոսում է 189 դ. դաշտի վրայով գարնան և ամռան հալվող ձյունից և թափվում է հողապին լիճը: Կի- լերտինի մոտ մի բլրի վրա կա ամբողջ ավերակ: Նորաշեն թաղը զբո- նրվում է Գյունեյի փեշին, ընդամենը 14 տուն է և հիմնված է 1884 թը- վին: Կարծախում կա երկու աղբյուր, Կիլերտինում՝ մի. կան և շատ ջրը- հորներ: հողապին ավերակի մոտ կա մի ծծմբային ջերմուկ, ուր բո- ռոտները լողանում և բժշկվում են:

Գյոզգաղի լանջին, մի ձորակի մեջ, մոտ 2 սաժեն բարձրության մի ժայռ կա, որի վրա գերեզմանաքարի նման մի քար է ընկած: Քուր- քերը սուրբ համարելով այդ տեղը՝ Օղլան վերան (որդի տվող) էին ան- վանել, և ամուլ կանայք ուխտ էին դնում: Այժմ նույնն անում են և կարծախցի հայերը, միայն «Օղլան վերան» անվան փոխարեն «Սուրբ Գևորգ» կոչելով, որովհետև գյուղի քահանան սրբատեղին քրիստո- նեացնելու համար Սուրբ Գևորգի պատկերն է դրել:

Կարծախի կլիման մեղմ է, հողն արգավանդ, բուսականությունը հարուստ, այստեղի հացը սպիտակ է և համեղ:

Այստեղ փշում են երկու քամիներ. արևելահյուսիսային և արևմը- տահյուսիսային. առաջինը փշում է ձոռի և Աբուլ սարերից և սառն է, երկրորդը հողապին լճից և տաք է. քամիները սաստկանում են հուլիսի վերջին և հետզհետե նվազում մայիսին:

Բնակիչներն էրզրումի գաղթականներ են Հոկամ, Ալվար, Նիստ, Մեծ և Փոքր Դու գյուղերից:

Գաղթականության ժամանակ սրանք նախ բնակել են Չանդուրա գյուղում, իսկ շորս տարուց հետո, Կարսը և սրա հետ այս գյուղը Տաճկաց վերագործնելու պատճառով՝ տեղափոխվել Կարծախ, որի թուրք բնակիչներն էլ փոխադարձաբար զնացել են Չանդուրա: Կարծախի բնակիչները, բացի մի կիճ և մի այր հույնից, բոլորը լուսավորչական հայեր են, թվով 212 տուն, 1872 հոգի, որոնցից 1001 հոգի արական, 871 իգական սեռից: Սրանցից 22 արական և 21 իգական հոգևորական կոշման են, մյուսները գյուղացի:

1881 թվից այստեղ բացված է գյուղական արքունական միդասյան դպրոց, որից մինչև 95 թվականը դուրս են եկած փոքր ի շատե գրել կարողալ իմացողներ 49 հոգի. ամբողջ գյուղում մեր համարելով կան 91 հոգի հայերեն գրել-կարդալ իմացողներ:

Կարծախը մինչև էրզրումի գաղթականությունը պատկանելիս է եղել Հաճի-բեկ և Քախր-բեկ Նազիր-բեկզատե եղբայրներին, որոնք 83 քիսա (մի քիսան 25 ուրբի է) ստակի ծախել են Տայոց առաջնորդ Կարապետ նախկողոսին: Այժմ պատկանում է Ախալցխայի Ս. Փրկիչ եկեղեցուն:

ԲԱՐԱԼԵԹ

Գրկնա գյուղից մինչև Ս. Հովհաննեսի ուխտատեղին տարածվում է մի ընդարձակ բարձրավանդակ, որի արևելյան կողմը ձգվում է բլրակների մի երկարածիգ շղթա, որ սկսվում է Կարտիկամ գյուղից և հասնում մինչև Ղարաղուղա լայնան: Այս բարձրավանդակի միջով ուղղապտույտ հոսում է Մեծ ջուր կոչված գետը, սկիզբն առնելով Լեկնա և Կարանտա ավերակներից:

Սա անցնելով Բեժանոյի առջևով, գալիս է Ալատուման, Կաճո, հետո հոսելով Բարալեթի միջով, Ձակ գյուղի մոտ միանում է Խմեմիխեվի գետի հետ և անցնելով Արագվայի միջով, տաշում է Օրճայի ակերն և Կորխի մոտ թափվում Ախալքալաք-շայի մեջ: Ահա այս գետի ափին գտնվում է Բարալեթ գյուղը, որ բռնում է 2490 դեսյատին տեղ:

Սա բաժանվում է երկու թաղի, և թեպետ գետն ընդարձակ է և զարնանը հեղեղվում է, սակայն մի կանոնավոր կամուրջ չկա, այլ միայն մի գերան է ձգված գետի վրայով: Հեղեղների ժամանակ այս երկու թաղերի հարաբերությունը բոլորովին կտրվում է: Գյուղի հարավային մասում դեռ կիսավեր են մի հին մարտկոցի պարիսպներ, հյու-

սխալին մասում գյուղից 1/2 վերստ հեռու գտնվում է 7 արշին երկարության 3 արշին լայնության և 6 արշին բարձրության սրբատաշ քարե մատուռ: Ձեղունը քանդված է. միակ, հարավային դռան վրա կա հայերեն աղավաղված արձանագրություն: Այս դռան մոտ կա մի գերեզմանաքար, որի վրա դեռ որոշ կարգացվում է հետևյալ տապանագիրը. «Սուրբ նշան տէրունական արեամբ ներկեալ պատուական Բարսեղ բՆՆՅՍ լեր քաւարան. եւ յակոր իրիցիս լեր ավանական»: Գյուղացիք այս մատուռին Ս. Ստեփանոսի վանք են կոչում և ուխտ գալիս: Մատուռի շուրջը կան գերեզմաններ: Գետի աջ ափին շինված են հայոց և վրաց բարաշեն բավական զեղեցիկ եկեղեցիները: Գետի մյուս ափին զբոսնելով էր արքունի գյուղական միդասյան դպրոցը: 1867 թվին կառուցված է մի անհարմար շենք, որի բակում կան մարմնամարզության փրտած գործիքներ: Այս դպրոցը հիմնել և մինչև 1884 թվականը պահպանել է Կովկասում հունադավանությունը վերահաստատող քնկերությունը, այնուհետև պահվում է ժողովրդական փողով: Այժմ կառավարությունն այս դպրոցը երկդասյան է դարձրել և գիշերօթիկներ է պահում: Ուսումնարանի մոտ գտնվում է դատարանը և հասարակաց շտեմարանը:

Տները կիսագետնափոր են, փողոցները համեմատելով մյուս գյուղերի հետ՝ փոքր ինչ կանոնավոր:

Ընդհանրապես գյուղը գետի շնորհիվ ուրիշ գյուղերից մաքուր է: Բնակիչները հայեր և վրացիներ են, առաջինները 91 տուն են, 262 արական, 250 իգական, երկրորդները 13 տուն, 205 արական, 181 իգական: Բացի սրանցից կան և երկու տուն քրդեր, 8 արական, 7 իգական, և 3 տուն թուրքեր, 10 արական, 9 իգական: Ընդամենը՝ 109 տուն, 485 արական, 447 իգական, երկու սեռը միասին 932: Վրացիք և 10 տուն լայերը բնիկներ են, մյուսները գաղթական են Արտասանից: Թե հայերն և թե վրացիք դեռ շատ անկիրթ են, սրանք դեռ չեն ազատվել իրբաց աղդեցությունից: Նրկուսի բարբառն ևս լի է թուրքերեն բառերով, զարձվածքներով, առածներով և այլն, իսկ երգերն ու առակները թուրքերեն են ու թուրքերեն:

Հայերից միայն 9 հոգի դիտե հայերեն և ուսերեն գրել կարդալ, իսկ վրացիներից 10 հոգի վրացերեն և 25 հոգի ուսերեն: Տիրապետող տարր հանդիսանում են վրացիք. նրանք դիտմամբ հայերեն չեն սովորում և եթե նույնիսկ գիտեան, իրենց բահանայի հորդորման համաձայն, չեն էլ խոսի, այնինչ հայերը, փոքր երեխայից մինչև ծերը գիտեն վրացերեն, և ոչ միայն վրացիների հետ, այլև տանը վրացերեն են խոսում: Կան և հայերեն բոլորովին չգիտցողներ:

Բնակիչները պարապում են երկրագործութեամբ. ունին 1205 դե-
յատին անջրդի բաշխված վարելահող և 74 դ. արոտատեղի: Ամեն մի տանը
գալիս է 11,26 դ. վարելահող և 0,69 դ. արոտատեղի, երկու սեռից յու-
րաքանչյուրին 1,37 դ. բոլոր բաշխված հողից: Այս հողով շրջակա-
նանալով կապալով վերցրել են արքունական հողերից 41 դ. վարելա-
հող և 159 դ. արոտատեղի, ընդամենը 400 դ. և ազայապատկան հողե-
րից 253 դ. վարելահող: Ուրեմն կապալով վերցրած են 294 դ. վարե-
լահող և 159 դ. արոտատեղի: Ընդամենը բաշխված և կապալով վերց-
ված հողը՝ 1499 դ. վարելահող, 233 դ. արոտատեղի, ի միասին՝
1732 դ.: Գյուղացոց մյուս պարապմունքն է՝ անասնապահութուն, ներ-
կա 1895 թվին ունին 497 եզ և զոմեշ, 392 կով և մատակ, 523 հորթ,
2698 այծ և ոչխար, 68 ձի, 12 էշ:

ԱՐԱԳՈՎԱ

Արագովա գյուղը գտնվում է Ախալքալաքից դեպի հյուսիս 9,5
վերստ հեռավորությամբ համանուն գետի ափերին: Սա հնումն բաղկա-
ցած է եղել Արա բերդից, որ կառուցված է եղել դետի ձախ ափին
բարձրացող լեռան վրա, և Գովա գյուղից, որ գտնվելիս է եղել բերդից
դեպի հյուսիս, գետի աջ ափին:

Այժմ այդ երկու անունները միանալով կազմել են Արագովա անու-
նը: Արա բերդն այժմ ավերակ է, մի ստորերկրյա անցք բերդի միջից
իջնում է մինչև գետը: Եկեղեցու մի պատը գեռևս կիսավեր կանգնած
է, և նրա միջի խորանն ուխտատեղի է դարձած Ս. Սարգիս անունով:
Գովա գյուղն այժմ բոլորովին քանդված է, և նրա տեղը շինված են
մարագներ:

Բերդի հանդեպ հինգ բլուրներ միմյանց կտրելով կազմում են մի
ձոր, որ կոչվում է Մեծ ձոր: Սրա մոտ կա մի բլրակ, որի վրա մի խաչ:
Սա ևս ուխտատեղի է Սուրբ Մինաս անունով:

Բերդի սարի լանջին, մի հարթության վրա ի Տեր հանդուցյալ Տեր
Գրիգոր Տեր Ավետիսյանի ծախքով շինված է հայոց բավական մեծ և
գեղեցիկ եկեղեցին: Սա ներքուստ զարդարված է 12 առաքյալների ձի-
թանկար պատկերներով եկեղեցու 12 սյուների վրա, և «Վերջին դա-
տաստանի» 7 արշին երկարության և 4 արշին լայնության դարձյալ
ձիթանկար պատկերով՝ հյուսիսային պատի վրա: Սեղանի առաջ կախ-
ված է մի գեղեցիկ ջահ:

Եկեղեցու գավթում կա նաև սրբատաշ քարերով հայոց դպրոցի մի
շենք, սակայն ուսաց դպրոցի հիմնելուց ի վեր ծառայում է որպես

հասարակաց շտեմարան: Գետի աջ ափին, գյուղից գրեթե դուրս, բարձ-
րավանդակի վրա շինված է գյուղական արքունական միզասյան դըպ-
րոցը: Գետի ափերին տնկված են ծառեր, առավելապես ուռնի-
որոնք բուսում են 5 դեսյատին տեղ: Տներն ընդհանրապես կիսագետնա-
փոր են, միայն քահանան ունի եվրոպական ճաշակով շինված և զար-
դարված սենյակներ:

Այստեղ է գտնվում շինական դատարանը: Ամբողջ գյուղը բուսում
է 20 դեսյատին տեղ: Բնակիչներն էրգրումի Ջինիս գյուղից գաղթական-
ներ են, 114 տուն, 475 ար. 446 իգական սեռից, ընդամենը 971 հոգի:
Պարապում են անասնապահությամբ, ֆուրգոններ բանեցնելով և զխա-
վորապես երկրագործությամբ. ունին 1335 դ. վարելահող, 1290 դ. ար-
ոտատեղի: Ուրեմն մի տանը գալիս է 24,25 դ., մի հոգուն (երկու սե-
ռից)՝ 3,23, աշխատելու ընդունակ մի անձի՝ 8,78 դ.:

Տղամարդկանցից 25 հոգի գիտեն հայերեն, 16 հոգի ուսերեն
գրել-կարդալ:

ՍԱԹԻՍԱ

Սաթիսա գյուղը գտնվում է Ախալքալաքից դեպի արևելահյուսիս,
մոտ 23,5 վերստ հեռու մի ձորակի մեջ, որի միջով հոսում է մի գե-
տակ: Սա սկիզբն է առնում Բուղղաշենու լճից և թափվում է Թափարա-
վան գետը: Գյուղի հյուսիս արևելյան կողմից դեպի արևելահարավ
ձգվում են 7 բլուր, որոնց վրա կա ամրոցի ավերակ: Ամրոցը հիմնված է
եղել այդ 7 բլուրների վրա և ունեցել է երկու դուռ՝ մին արևելահարավ,
մյուսը դեպի արևելահյուսիս: Առաջինի կամարի վրա եղած է արձա-
նազրություն, սակայն գյուղացիները պոկել են այդ քարը և եկեղեցու
շենքի առջև ձգել, այնպես որ արձանագրությունը չի երևում: Գյուղա-
ցիներն ասում էին, թե այդ արձանագրությունը կարդացողներն ասել են,
թե այստեղ նշանակված է բերդի հիմնարկության տարին, որ իրենք չէին
հիշում, անունը՝ Սուկերլաթ և տերը՝ Ամբակում իշխանը:

Իրենք գյուղացիներն ասում էին, թե այս գյուղը պատկանելիս է
եղել մի ինչ որ Սաթղ անունով աղայի, որի անունով և գյուղը կոչվել
է Սաթիսա:

Բերդի միջից մի ստորերկրյա անցք ձգվելիս է եղել մինչև գյու-
ղը, որ երկրաշարժի ժամանակ փակվել է և մի աղբյուր սկսել է բը-
խել:

Գյուղի մեջ, հին ավերակ եկեղեցուն կից, շինված է հայոց եկեղեցին: Այս գյուղումն է գտնվում այդ հասարակության արքունի գյուղական ժողովրդական միդասյան երկու դպրոցներից մինը և դատարանը: Չորի մեջ, գլխավորապես գետի ափին տնկված են գլխավորապես ուռի և դավազի ծառեր, ընդամենը 10 դեռյատին տարածության վրա: Ամբողջ գյուղը բռնում է 30 դեռյատին տեղ:

Բնակիչները բոլորը հայեր են էրզրումի Սոկյուտլի, Մաղկի և Չեֆիս գյուղերից, ընդամենը 163 տուն, 1587 հոգի, 835-ը արական, 752-ը իգական սեռից:

Պարապում են դլխավորապես երկրագործությամբ, ունին 2727,30 դեռյատին բաշխված հող, որից 2167 դ. վարելահող, խոտատեղի և այգի է, 530,30 դ. արոտատեղի և անհարմար, 30 դ. բնակության համար է: Որովհետև յուրաքանչյուր մի անձի գալիս է 1,3 դ. վարելահող, 0,3 դ արոտատեղի և շի բավականացնում, ուստի կապալով վերցնում են Ա) արքունական հողերից՝ 910,30 դ., որից 7,30 վարելահող, 836 դ. արոտատեղի է. Բ) ազայապատկաններից 722 դ., որի 222 դ. վարելահող և 500 դ. արոտատեղի է: Այսպես ուրեմն՝ նրանք կապալով են վերցնում 1632, 30 դ. արքունական և ազայապատկան հող, որից 296,30 դ. վարելահող է, 1336 դ. արոտատեղի. յուրաքանչյուր անձին 0,2 դ. վարելահող և 0,9 դ. արոտատեղի:

Ուրեմն՝ այս գյուղացոց ունեցած թե բաշխված և թե կապալով վերցրած հողն է 4359,60 դ., որի 2493,30 դ. բնակատեղի, այգի, վարելահող և խոտատեղի է, 1666, 30 դ. արոտատեղի: Յուրաքանչյուր անձին ընկնում է 1,5 դ. վարելահող, 1,2 դ. արոտատեղի, բոլորից 2,7 դ.: Բացի երկրագործությունը, գյուղացիները պարապում են նաև անասնապահությամբ. վերջին 1395 թվին այս գյուղացիներն ունեին 869 եզ ու գոմեշ, 714 կով ու մատակ, 346 Նորթ, 7587 ոչխար ու այծ, 227 ձի, 7 էշ, 431 խոզ:

Բնակիչներից 1386 թվի աշխարհագրության համեմատ միայն 62 հոգի գիտեն հայերեն և 24 հոգի ռուսերեն գրել-կարդալ, որոնցից 3-ը սովորել են 3-րդ կարգի ստորին դպրոցներում, իսկ 83-ը տարրական ուսումնարաններում:

ԳԱՐԻՆՈՎԱ ԵՎ ԿԱՆԻՎՈՎՆԵՐԻ ԲՆԱԿԱՐԱՆԸ

Դուխոբուրների ամենանշանավոր գյուղը, ուր և նստում էր նրանց հոգևոր պետը, էր Գարիտովկան:

Սա գտնվում է Ախալքալաքից Աղեսանդրապոլ տանող փոստային ճանապարհի վրա, Ախալքալաքից 29 վերստ դեպի հարավ: Գյուղի արևմտյան կողմից հոսում է մի դետակ: Չորս կանոնավոր և լայն փողոցներ ձգվում են հյուսիսից հարավ, որոնց երկու կողմում գտնվում են դուխոբուրների բավական գեղեցիկ տները, իրենց ընդարձակ բակերով և որոնց թիվը հասնում է 168: Բնակիչները բոլորն էլ դուխոբուրներ են, 672 արական, 673 իգական սեռից, ընդամենը 1345 հոգի: Այստեղ նստում է Գարիլիայի ոստիկանության սասիկանը:

Այստեղ գտնվում է և Կալմիկովների բնակարանը: Սրանք մինչև վերջին ժամանակներս համարվում էին դուխոբուրների հոգևոր գլուխ և մեծ հարգանք ու սեր էին վայելում ժողովրդից: Երբ 1890 ես այցելեցի այդ բնակարանը, նա այժմյանի պես բոլորովին դատարկ չէր, այլ վերջին Կալմիկովների ժամանակի պես կահավորված, որն և ես նկարագրեցի: Այս բնակարանը թեև դյուղական տներից հարմարավոր և ղեղեցիկ է, սակայն քաղաքի տներից մի առանձին առավելություն չունի: Գլխավոր փողոցի վրա պարսպի մեջ մի հարկանի շինություն է:

Ամբողջ բնակարանը բաղկացած է հինգ սենյակներից. դահլիճ, ընդունարան, ննջարան, ամառային սենյակ և ժողովարան:

Գահլիճը մի մեծ սենյակ է, երեք սաժեն երկարության և 8 արշին լայնության, 3,5 արշին էլ բարձրության: Արևմտյան և հարավային պատերի մեջ բացվում են երկ-երկու պատուհան, 1 արշին և 5 վերջոկ երկարության և 1 արշին 2 վերջոկ լայնության, հյուսիսային պատից մի դուռ բացվում է բակը: Սրա մյուս ծայրում գտնվում է երեք արշին երկարության և երկու արշին լայնության դուխոբուրի ճաշակով շինված մի վառարան: Սենյակի պատերը պատտառած են, հատակն ու առաստաղը ներկած, դռան և պատուհաններին վարագույրներ են կախած: Արևմտյան պատուհանների միջև կախված է մի հայելի, իսկ դռան երկու կողմում մի մի պատկեր, «НУБА»-ի պրեմիաները:

Սենյակը վառարանի առջևից կտրված է, վերեում մի շիրմայով, իսկ ներքևում սպիտակ վարագույրով: Դռան հանդեպ, հյուսիսային պատից կախված է կայսր Աղեքսանդր Բ-ի պատկերը, ներքևում դրված է մի թավապատ դիվան՝ առաջը մի քառակուսի սեղան, գեղեցիկ ծածկոցով ծածկված, վրան մի լամպ: Սեղանի երկու կողմը մի մի թավապատ բաղկաթու: Արևմտյան պատի ուղղությամբ շարված են 10 թավապատ աթոռ. դռան և պատուհանի անկյունում մի ուրիշ սեղան, վրան մի զույգ մոմակալ:

Շիրմի մյուս կողմը, արևելյան պատի ուղղությամբ դրված է մի երկաթյա մահճակալ, պատին խփված մի գեղեցիկ գորգ. վրան կախված ուսաց կայսերական տոհմից վեց պատկեր: Պատուհանի առաջ դրված է մի կտոր և շիրմի առջև մի քառանկյունի սեղան, ծածկոցներով ծածկված, վրան մոմակալներ և մի փորրիկ հայելի, կողմն երկու թավապատ աթոռ: Մահճակալին կից դրված է մի կամոդ, վրան ապակյա դռներով պահարան, որի մեջ դարսած են ղանաղան ապակեղեններ և արվեստական ծաղիկներ:

ԺՈՂՈՎԱՐԱՆՆԸ

Դահլիճի բակից ղեպի արևմուտք մտնում են ժողովարանը, որ գավառի բոլոր դուխոբուրների ազոթատեղին է:

Սա 3 արշին երկարության, 3 արշին լայնության և 3,5 արշին բարձրության մի հասարակ սենյակ է, տախտակ ծածկով: Արևմտյան պատի մեջ կա երեք, իսկ հարավայինի մեջ երկու պատուհան: Դուռը մի է, որ դահլիճի բակից բացվում է աղոթատեղու մեջ: Պատերը պաստառած են, առաստաղը ներկված, իսկ հատակը քարած:

Հյուսիսային և արևելյան պատերի անկյունում կա 3 արշին երկարության, 2 արշին լայնության և առաստաղի բարձրության մի վառարան: Երևք պատի առջև դրված են երկար նստարաններ, անկյունից կախված է մի փոքրիկ ժամացույց, վրան երեսուրբիչ ձգած: Սրա հանդեպ դրված է մի հասարակ սեղան: Հյուսիսային և արևմտյան պատերին կան կախարաններ. որոնցից կյուրակի և տոն օրերը կախ են անում երեսուրբիչներ: Պատուհաններում դրված են ծաղկամաններ:

ԿԱԼՄԻԿՈՎՆԵՐԻ ԳԵՐԵԶՄԱՆԱՏՈՒՆԸ

Գյուղից երեք վերստ հեռու, հյուսիսային կողմը գտնվում է Կալմիկոմենի տոհմային գերեզմանատունը, որ պարսպապատ է և ունի երկու սենյակ՝ հոգու հաց տալու համար: Գերեզմաններն եռակողմանի հատվածակողմի ձև ունին. մի քանիսը տաշած քարից, մյուսները ձիթ շինված, 5 արշ. երկարությամբ, 4 արշ. լայնությամբ և 272 արշ. բարձրությամբ: Եզրերը ղանաղան նշխեր են փորված. արևմտյան երեսի մարմարիտի կամ հասարակ քարի վրա կան ուսերեն տապանագրեր, որոնց առաջ դրված էին տանձ ու խնձոր:

Սուղդա գյուղը գտնվում է Ախալքալաքից ղեպի արևմտահարավ 18 վերստ հեռավորությամբ մի ձորի մեջ: Սրա արևելահարավային կողմում ձգվում է Գյոզգաղի շղթան, հարավային կողմում բարձրանում է Սրբի սարը, որի գագաթին կանգնեցրած է մի քարե մեծ խաչ, շինված է Ս. Գևորգ անվամբ մի մատուռ՝ մեջը մի քարե խաչ դրված: Հյուսիսային կողմում Ղատանա սարը, լանջին մի գյուղի և եկեղեցու ավերակ. սրանից ղեպի արևմտահյուսիս Մեծ Գյունեյ սարը՝ գագաթին մի ավերակ եկեղեցի: Հյուսիս-արևելյան կողմը Փոքր Գյունեյ սարը և հյուսիսային կողմը Բերդի կանաչ փոքրիկ լիճը, ուր որսում են վայրի բազրու: Սարի գագաթին կա մի ամրոցի ավերակ, որի միջից ղանաղան ստորերկրյա անցքեր ձգվում են մինչև գյուղի տները: Ձորի մեջտեղից հոսում է մի հեղեղատ: Տներն ընդհանրապես կես զետնափոր են. բերդի սարի լանջին շինված է հասարակ մի եկեղեցի: Ուսումնարան չունին:

Բնակիչները Բասենու Քորթան գյուղից են 134 տուն, 630 ար. 555 իգական սեռից, բացի սրանից 4 տուն քրդեր՝ 11 արական, 7 իգական:

Պարապում են զլխավորապես երկրագործությամբ. գյուղացիների ձեռքի հողը 2300 դեսյատին է: Հացը սև է լինում: Արական սեռից 9 հոգի ուսերեն և 30 հոգի հայերեն կարգալ-գրել գիտեն:

ՍԱՂԱՄՈ

Սաղամո թրքաբնակ գյուղը գտնվում է համանուն լճի արևելյան ափին, դաշտավայրի վրա, Ախալքալաքից արևելահյուսիս, մոտ 3,2 վերստ հեռու:

Այս գյուղում կան երկու ավերակ մատուռ և մի եկեղեցի: Վերջինիս զավթի դուռն երկու կողմը կան կանանց մի մի անդրիներ, ձեռքերը ղեպի վայր ուղղած և մի մի դրոնակ բունած: Այս եկեղեցու արևելյան պատի պատուհանը շրջապատված է երկու ոլորապտույտ օձերի բանդակով: Եկեղեցու, իւպիս և մատուռների շուրջը կան գերեզմաններ. որոնցից մի քանիսի գերեզմանաքարերը ներկայացնում են թամբած ձի: Ոչ արձանագրություն և ոչ տապանագիր կա: Բնակիչները թուրք են՝ 56 տուն, 244 արական, 205 իգական. ընդամենը 443, բո-

լորն էլ մասնեղական սյուննիներ: Կան և երկու տուն հայ լուսավորչա-
կաններ՝ 6 արական, 8 իգական սեռից:

Գյուղն անմիջապես պատկանում է թուրք Հասան-խան և Փաշա-
աղա Հասան Օղլիներին: Բնակիչները պարապում են երկրագործու-
թյամբ, ձկնորսությամբ և անասնապահությամբ:

Կրթությունը բոլորովին չէ տարածված, միմիայն 5 հոգի տանը սո-
վորել են թուրքերեն և 4 հոգի ուսերեն մի քիչ գրել, կարդալ:

Հ Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

ՀԵԹՈՒՄ Բ ԹԱԳԱՎՈՐԻ ՀԱՎԱՔԱՍԾ ՆՇՈՒՐՆԵՐԻ ՏՈՒՓԸ

Գյումուրղո գյուղի արժ. Տեր-Առսրել Կուրղինյանի մոտ կա մի
մասնատուփ, որ պատրաստել է տվել Հեթում Բ թագավորը:

Տուփի երկարությունն է 2 վերշոկ, լայնությունը 1,5 վերշոկ, իսկ
հաստությունը 2 սանտիմետր: Տուփի մի երեսը զարդարված է մի խա-
չով, վրան Քրիստոս խաչված, չորս ծայրերին մի մի սրբի անդրիներ
կերտված: Տուփի երեսի չորս անկյուններում մեխված է չորս սրբերի,
թերևս Ս. Հակոբյ Մծբնա Հայրապետի, Ստեփաննոս Նախավկայի, Նի-
կողայոս Աքանչեղագործի և Պանդելոն բժշկի սուկյա գլուխները:

Տուփի մյուս երեսի վրա երկաթագրերով գրված է.

ԵՍ ՀԱՅՈՑ ԹԳԱՐՍ ՀԵԹՈՒ
Մ. ԲԶԻՄ ԱՇԽԱՏՈՒԹԻ
ԺՂՎՅԻ ՆՇԽԱՐՔՍ ՍՐԲՈՑ Մ
ԷՍԻՆ ԱԿՈՐԱ ՄԾՊՆԱ
ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ԵՒ ՆԻԿ
ՈՂԱՍՍԻ ՍՔԱՆՉԵԼԱԳՈՐ
ՍԻՆ ԵՒ ՍՏԷՓԱՆՈՍԻՆ ՆԱԽ
ԱՎԿԱԻՆ ԵՒ ՊԱՆԴԷԼԵՒՈՆԻ
ԲԺՇԿԻՆ ԶՈՐ ԱՍՏ ԿԱ ՊԶՊԱ
ՆՈՒԹԻՒՆ ՀՈԳՈՅՍ ԵՒ Մ
ԱՐՄՆՈՑ ԻՄՈՑ ԹՎԻՆ Է
ՃԽՆ ԻՆ ՄԱԻՍԻ Ի ԻՆ ՍԲ ՆՇ
ԱՆՍ ՇԻՆՎԷՅԱԻ:

Այս արձաթյա տուփի զերեզմանի մեջ դրված է սրբոց նշխարներն
սուկյա տուփով-դազաղով:



Հեթում Բ-ի հավաքած նշխարների տուփը (1296 թ.)

Գազադի երեսը և կողքերը զարդարված են թանկագին ակնեքով, որոնց թիվը հասնում է քառասունի:

Գազադը լցված է արյունով շաղախված հողով, որի մեջ դրված են Ս. Հակովբ Մծրնա հայրապետի միջին մատը, Ս. Նիկողայոս սբանչելագործի ճկույթը, Ս. Ստեփաննոս Նախավկայի բուխը և Պանդելեվոն բրձրչկի մի մատը: Կարծիք կա, թե այդ սրբությունը Հեթում թագավորը հանդիսավոր օրերին կախելիս է եղել վզից:

Այս մասնատուփը Տեր-Առաքել հայրը գնել է բարալեթցի Աղաջան Գալստյանից 800 ուրբով: Այս վերջինս իմ Բարալեթ գնացած միջոցին պատմում էր, թե այդ սրբությունը մնացել է իրեն յուր հայր Գալստից, որը Սողոմոն անունով մի արգահանցու որդեգիրն է եղել:

Այս Սողոմոնի, որի ազգանունը չէր հիշում, Երուսաղեմի միաբան եպիսկոպոս եղբայրը, որի անունը նույնպես չէր կարողանում տալ, Կարնում նվիրակ եղած միջոցին գալիս է Արտահան, եղբոր մօտ, ուր և մեռնում է: Սողոմոնը եղբոր կողոպուտը հանձնում է Կարնո եպիսկոպոսին, իսկ այս մասնատուփը պահում յուր մոտ: Հետո գնում է Երուսաղեմ՝ եղբոր ունեցվածքից մաս ստանալու, ճանապարհին մեռնում է, բոլոր կարողությունը, որի հետ և այդ մասնատուփը, թողնելով Գալստին, որովհետև զավակ չի ունեցել:

ՄՈՒՆՈՒՑԻ ԵԿԵՂԵՑԻՆ

Համանուն գյուղի գրեթե կենտրոնում, մի բլրակի վրա բարձրանում է Մունդայի եկեղեցին:

Նախ սև քարից մի սաժեն բարձրության ներքնահարկ է շինված և ապա սրա վրա կարմիր քարերով կանգնեցրած է եկեղեցին, որ շորս սաժեն երկարություն և երկուսկան սաժեն լայնություն ու բարձրություն ունի:

Եկեղեցու ձեղունը բոլորակաձև է՝ առանց գմբեթի, արևելյան պատի մեջ բացվում է գեղեցիկ նխշերով եզրափակված մի պատուհան, նույնպիսի, միայն փոքր ինչ նեղ, պատուհան էլ կա արևմտյան պատի մեջ, որի ներքև բանդակված է մի ողկույզներով պատած խաչ, սրա տակ կա վրացիներն մնարովբյան տառերով մի անվերժանելի արձանագրություն: Այս պատի մեջ կա և մի կամարակապ դուռն, որ այժմ վեր է շարված: Հյուսիսային պատը բոլորովին պարզ և առանց պատուհանի է. հարավայինին կից է գավիթը, որ եկեղեցուն հավասարաչափ և սրանից ավելի գեղեցկաշեն է: Չորս սյուների վրա բոլորում են բարակ կամարներ, որոնց վրա բարձրանալիս է եղել գմբեթը:

Հարավային կամարը ծառայելիս է եղել որպես մուտք և խաչաձև բանդակներով զարդարված է:

ԳՅՈՒՄՈՒՐԴՈՒ ԵԿԵՂԵՑԻՆ

Գյումուրդու եկեղեցին սրբատաշ սև ու կարմիր քարերով շինված խաչաձև գեղեցիկ եկեղեցի է:

Նրա երկարությունը՝ 6 սաժեն, լայնությունը՝ 5 սաժեն և 1 արշին և բարձրությունը մինչև կաթողիկեն 7 սաժեն է: Կիսաբոլոր բազմանկյունի սյուների վրա ձգվում են կամարներ, և սրանց վրա բարձրանալիս է եղել գմբեթը, որ այժմ քանդված է:

Եկեղեցու հարավային կողմը շորս գեղեցիկ կամարներ իրենց ծայրերում ամփոփելով կես արշինանոց մի մի քարե հրեշտակ, բոլորում և կազմում են 8 արշին երկարության, 6 արշին լայնության և 9¹/₂ արշին բարձրության մի գեղեցիկ նախագավիթ: Սրա միջից դեպի եկեղեցին բացվում են երկու դուռ, մին, որ տանում է եկեղեցին, իսկ մյուսը մի փոքրիկ խորան: Եկեղեցու դուռը, որ 3,5 արշին բարձրության և 2 արշին լայնության է, կամարակապ է և նխշերով զարդարված:

Եկեղեցու դռներից փոքր ինչ աջ բացվում է մի ուրիշ փոքրիկ դուռ՝ 2 արշին երկարության և 1,5 արշին լայնության խորանի մեջ, որի մեջ այժմ խաչքարեր կան դրված:

Նախադուռն արևմտյան պատը բոլորովին քանդված է, միայն սրան կից կանգուն են երկու գերեզմանի կոթողներ. երկու քառ. արշին բարձրության հողակույտի վրա մի քառակուսի արշինաչափ կարմիր քարե պատվանդան է դրված, որի վրա կանգնեցրած են շորս արշին երկարության և կես արշին լայնության քառանկյունի քարեր:

Կոթողների վրա չկա ոչ մի արձանագրություն, միայն սրանց պատվանդանի վրա քանդակված են խաչեր և մի ծառ:

Եկեղեցու պատը գավիթի ձեղունից 4³/₄ արշին բարձր է, պատի մեջտեղը մոտ շորս արշին երկարության և 1,5 արշին լայնության եռանկյունաձև ներս անկվածք կա, գլուխը ճաճանչավոր հրեշտակի քարեգլխով դարդարված: Սրա երկու կողմում մի սաժեն երկարության և 0,5 արշին լայնության մի մի պատուհան կա: Այս պատին բոլորովին նման է հյուսիսային պատը, միայն սրա առջև չկա ոչ գավիթ և ոչ դուռն:

Եկեղեցու արևելյան կողմը, պատի ծայրերից 3,5 արշին հեռավորությամբ կան մի մի ներսանկվածներ, կամարների ճաճանչների մեջ մի Ավետարանչի գլուխ և մի արծիվ քանդակված: Սրանց մեջտեղը բաց-

վում է մոտ 2 արշին երկարության և մոտ 0,5 արշին լայնության մի պատուհան՝ զեղեցիկ քանդակներով եզրափակված, սրա շուրջը բոլորում է մի կամար, մի ծայրը մի մարդու, իսկ մյուսը մի արծվի քանդակի վրա հենված: Կամարի վրա բացվում է մի փոքրիկ կլոր պատուհան:

Արևմտյան պատին կից է գավիթը, որ 25 արշին երկարության և 14 արշին լայնության և 9 արշին բարձրության երեք սենյակների բաժանված շինություն է:

Արևմտյան կողմն ունի մի գեղեցիկ քանդակագործ դուռ, բարձրում խաչ և արձանագրություն¹², մյուս պատերն էլ կամարավոր և գեղեցիկ քանդակներով զարդարված են:

Ճեղքեցին ներքուստ բաժանված է յոթ խորանների, որոնցից երեքն՝ արևելյան կողմն են:

Սեղանի երկու կողմից բարձրացող կիսասյուների վերին հանդիպակաց անկյուններում կան մի այր և մի կին մարդու փոքրադիր քանդակագործ պատկերներ: Սեղանի երկու կողմը կա մի մի հանդերձատուն: Հյուսիսային և հարավային կիսաբլուրածն երկերկու խորաններից առաջինների արևելյան պատերի մեջ կան մի մի ավազան:

Գլուժուրդեցի հայ գլուղացիք եկեղեցու արևմտյան մասը, որ հավանականորեն միաբանից բնակարանը պիտի լինի, դարձրել են եկեղեցի, սեղանի համար տեղ առնելով եկեղեցու մեջ, որ բռնել է գրեթե կես մասը: Իսկ կողքի երկու սենյակն առաջներն իբրև ուսումնարան, իսկ այժմ որպես հասարակաց շտեմարան են ծառայեցնում: Բացի այդ՝ եկեղեցու խորաններից դեպի արևելք դռներ են բացել և այստեղ ևս ցորեն են լցնում:

ԹՄԿՈՒԿ ԿԱՍ ԹՄՈՎՎԻ

Վեց ապառաժոտ 8761 ոտնաչափ բարձրության լեռներ միմյանց կպած և ձգված են Կուրի ուղղությամբ, հարավից հյուսիս: Սրանցից միջի երեքը, որոնցից դեպի հյուսիս գտնվում են երկու, իսկ դեպի հարավ մի լյառն, մյուսներից փոքր ինչ բարձր են, և ահա այս երեք լեռների վրա կառուցված է մի ամրոց, որի երկարությունը կլինի մոտավորապես 100, իսկ լայնությունը՝ 20 սաժեն:

Պարիսպը, որի լայնությունը 1,5 արշին է, կրով և տեղ տեղ սրբատաշ քարերով շինված, բոլորում է այս երեք լեռների շուրջը, յուրա-

¹² Որովհետև այս արձանագրությունները վրացիներն են, ուստի ես արժան համարեցի միայն նրանց իմաստը գրել պատմականի բաժնում:

բանչուրի վրա մի մի աշտարակ բարձրացնելով ու ձգվում գնում կողքի լեռները, ուր միանում է յուրաքանչյուրի վրա շինված մի մի աշտարակի:

Բուն ամրոցի հանդեպ, արևելյան կողմը բարձրանում է այս երեք լեռներին կպած մի տափարակ բլուր, որ նույնպես պարսպապատ է:

Ամբողջ բերդն ունի երեք դուռ՝ հարավից, հյուսիսից և արևելքից, որ տանում է դեպի բլուրը: Այս բլրի վրա կա մի փոքրիկ մատուռ, մոտ 7 արշին երկարության, 4 արշին լայնության և 5 արշին բարձրության: Այս մատուռի միայն արևելյան ու հարավային պատերն են կանգուն մնացել:

Սեղանի երկու կողմը կա երկար խորաններ: Պատին նկարած է Ս. Աստվածածինը, կողքը երկու կույս, ներքևը երկերկու առաքյալ: Հարավային պատին մի կամարի ներքև նկատելի է մի սրբի պատկեր, ներքևում վրաց մևսրովբյան տառերով սև գույնով գրված մի արձանագրություն: Իզուր անցավ բոլոր ջանքս ընդօրինակելու, որովհետև սաստիկ ևղծված էր:

Հարավային դռան մոտ մի ստորերկրյա անցք ժայռի միջով իջնում է մինչև Կուրը, ջուր բերելու համար:

Բլրի՝ առջև կանգնած է կիսավեր, 3 սաժեն բարձրության մի կոթող, որի շուրջը նկատվում են բնակարանների ավերակներ: Այստեղ է եղել դյուղը, որից փոքր ինչ հյուսիս գտնվում է գերեզմանատունը:

Այստեղ կան շատ խաչարձաններ և գերեզմանաքարեր հայկական արձանագրությամբ: Սրանցից միևի վրա գրված է.

բվ. պ կ գ
ես Միխրաբ և և կեհակիցս. կանգնեցաք
գխաչ

Մի եռանկյունաձև գերեզմանի քարի արևելյան կողմը, երեսը դեպի արևմուտք դարձրած կա մի խաչարձան ևս հետևյալ արձանագրությամբ.

բվ. պ հ ղ
Յահեղ աուր-և աներեկի յուսով փայլեալ ի մէջ
եկեր զոգիս Սրգս. քհի. յուսաուրեա յայես առենի ճաե
եղիայի իւրոյ

Մի ուրիշ գերեզմանի կարմիր քարե խաչարձանի վրա, որի բարձրությունը 1 սաժեն է և լայնությունը 1 արշին, գրված է.

Խաչս կանգնեցաւ

խաչի փեղկերի միջև փորագրված է՝ սբ. Նիկողոս. սբ Սարգիս.

Աստուածածին. սբ. Կամայկատար. ս. Գրիգոր.

Խաչի պատուհանի վրա՝ Այդ եւ Էրեցս կանգնեցի զխաչս յիշատակ ինձ ծնաւ... Բռ. յար... ունկին եւ արագերին... եզրաբոցս իմաց տր. Մխիթարայ եւ տր.... իր եւ ամենայն արական..., կա... աց եւ երեխայոց:

Քմբուկ բերդի հանդեպ գետի աջ ափին կան ընդարձակ սենյակներ ընդ պատեր: Փողոզվորդան ասելով դա թմբկաբերդցիների խաներն են եղած: Սրանցից փոքր ինչ հյուսիս կա մի շինություն, փոքրիկ սենյակներից բաղկացած, որից միայն մինը կանգուն է: Շինությունը շատ նման է բաղանիսի:

ՄԱՆԻՑ ԳՈՄ

Ախալքալաքից դեպի արևմտահարավ, մոտ 17 վերստ հեռավորությամբ Կուրի արևելյան ափին մի ձորակ կտրվում է երկու ահագին ժայռերով, որոնք գրեթե 30 սաժեն հեռավորությամբ ձգվում են միմյանց զուգահեռական:

Այս ժայռերն սկսվում են ձորի ծայրից և ինչու մինչև գետի ափը, մոտավորապես մի վերստ երկարությամբ: Ժայռերի միջև, գետին մոտիկ կա պատնեղի կիսավեր մի հաստ պատ: Այս ժայռերը բաղկացած են մեծ ժայռ բարերից, մանր խճից, կրից և կարմիր կավային հողաշերտերից, մոտավորապես երկու վերստ բարձրությամբ:

Այս երկու ժայռերի միջից հոսում է մի սառն աղբյուր: Ժայռերի մեջ կան արհեստական բաղամթիվ այրեր, որոնցից մի քանիսը մի, իսկ մյուսները մի քանի աչքից են բաղկացած: Կան և այնպիսիներ, որոնք նեղ անցքերով ուղիղ և դեպի վեր ձգվելով՝ բարձրանում են մինչև ժայռի գլուխը, իսկ տեղ տեղ փոքրիկ պատուհաններ են բացվում դեպի ձորը:

Առհասարակ պատուհանների զոգում կան փոքրիկ անցքեր, թերևս հրացանների համար:

Այս ժայռերից հարավայինում կան երեք եկեղեցի, որոնցից երկուսը ստորոտում են, իսկ մյուսը գագաթին: Վերջինս գմբեթավոր է և հեռվից պարզ երևում է, միայն թե այդտեղ տանող այրերից շատերը քանդված լինելով՝ անհնարին է բարձրանալ մինչև այնտեղ: Մյուս երկու եկեղեցիներ խորաններ ունին:

Այրերը լի են թռչունների բներով, հովիտը՝ բյուրավոր ծաղիկներով:


Կուր գետի ձախ ափին, գետից մոտ 40 սաժեն հեռավորությամբ բարձրանում են ահագին ժայռեր, 5 վերստից ավելի բարձրության: Այս ժայռերը կազմված են ժայռ քարի և ավազի շերտերից: Այս ժայռի մեջ արվեստորեն փորված են յոթհարյուրի շափ սենյակներ, եկեղեցիներ և այլ շինություններ: Ընդհանրապես բոլոր շինությունները շատ մաքուր փորված են և բաղկացած են 2—4 սենյակներից, մի սաժենից ավելի բարձրության և դանազան մեծության: Ամբողջ շինությունը բաղկացած է յոթ հարկից, որոնցից յուրաքանչյուրի կտուրը ծառայում է երկրորդին որպես պատշգամբ կամ ճանապարհ: Առաջին հարկը դետնից մոտ 20 սաժեն բարձր է: Այս ահագին շինությունն ունեցել է միայն երկու ճանապարհ ժայռի երկու կողքերից ու սրանք մի սաժենից ավելի բարձրության և երկու արշին լայնության կամարածե անցքեր են, որ ժայռի ստորոտից տեղ տեղ ոլորվելով բարձրանում են մինչև վերջին հարկը, յուրաքանչյուր հարկի համար դռներ բանալով:

Արևմտյան կողմը գրեթե երեք վերստ հեռվից փողոսն է դրված, որ դալիս հասնում է մինչև դատարանը: Խողովակներից մինը հանված է և պահվում է: Ավազներն ասում են թե սա կաթ բերելու համար է շինվել, բայց հավանական է, որ չոր համար լինի: Շինություններից գլխավորապես նշանավոր են.

Ա. Աստվածածնի վերափոխման եկեղեցին. Սա ամբողջապես փորված է ժայռի մեջ, երկրորդ հարկում, միայն հարավային պատը, սրահն և երկկայմանի դավիթը, որ 4 սաժեն երկարություն, 1,5 լայնություն և 5 սաժեն բարձրություն ունի, շինված է սրբատաշ քարերից: Այս պատի դրսի երեսին նկարված է վերջին դատաստանը, իսկ գավթի առաստաղի վրա շորս հրեշտակ մի խաչ բռնած և մի քիչ ներքև, մի սայլ, վրան մի աղջիկ և մի տղա քնած:

Գավթից միայն մի դուռ բացվում է եկեղեցու մեջ: Եկեղեցու երկարությունը 6 սաժեն և երկու արշին, լայնությունը մոտ 3 սաժեն 2,5 արշին, և բարձրությունը մոտ 5 սաժեն է: Առաստաղը կամարածե է, խորանը բոլորածև և կամարակապ. հյուսիսային և հարավային պատերին կից ձգվում են երկու բարակ կեղծ սյուներ, որ կամար են ձգում սյուների վրա. խորանի հարավային պատի մեջ բացվում են երկու երկայն ու նեղ և սրանց վրա մի կարճ ու նեղ պատուհան: Նույն պատի մեջ բացվում են երեք մեծ և սրանց վրա երկու փոքր պատուհան:

Ավազ խորանի մեջտեղը մի սաժեն բարձրության, մեկ ու կես արշին լայնության և մի արշին խորության մի սրբատուն կա, սրանից մի



Նկ 4. Վարձեա

փիշ ձախ մի այդպիսին էլ կա, որի մեջ մի անցք բացվում է դեպի կող-
քի սենյակը:

Այս խորանի առաստաղի մեջտեղը նկարված է ս. Աստվածածինը,
երկու հրեշտակների հետ, շուրջը վրաց մեսրոպեյան տառերով գրած.
«Ամենասուրբ Աստուածածին, օգնեա թամար թագուհուս»:

Աստվածածնի պատկերի շուրջը նկարված են տասներկու առաք-
յալների պատկերները, մինի տակը վրաց մեսրոպեյան, մյուսինը՝ հու-
նական տառերով անունը գրած:

Եկեղեցու հյուսիսային պատի առաջին կամարի մեջ նկարած է ս.
Աստվածածինը հրեշտակներով շրջապատված, մոտը Գեորգ Գ թագավո-
րը, ձեռքը դեպի նա պարզած, իսկ սրա մոտ թամար թագուհին՝ ձեռին
այս եկեղեցու հատակագիծը: Սույն պատի մյուս կամարի մեջ նկարված
են վրաց չորս թագուհիներ, մյուս պատերը և պատուհանները ծածկված
են սրբոց նկարներով: Ընդհանրապես բոլոր պատկերները շատ հաջող-
ված են և պատիվ են բերում անհայտ նկարչի վրձնին: Հյուսիսային
պատի մեջ, սեղանին կից բացվում է մի դուռն մի ընդարձակ սենյակի
մեջ, ուր դռան մոտիկ կա մի փոքրիկ մատուռ, մեջը երկու գերեզման:
Ոմանց ասելով, սրանք Գեորգի Գ-ի և թամարի գերեզմանները պիտի
լինին: Այս սենյակի արևելյան պատի մեջ բացվում է մի նեղ դռնակ.
երկու արշին բարձրության և 1,5 արշին լայնության մի անցք ձգվում է
դեպի վեր, և բաժանվելով երկուսի, մինը գնում է դեպի հյուսիս և ուղ-
ղակի իջնում այս սենյակի վրա, այս ուղղահայաց անցքը մոտ 10 սա-
ժեն խորություն, 2 արշին երկարություն և 1,5 արշին լայնություն ունի:
Մյուս անցքը սանդուղքներով, 60 սաժենաչափ բարձրանալով մտնում է
մի ընդարձակ սենյակ, 60 սաժեն երկարության, 2 սաժեն լայնության և
1 սաժեն բարձրության: Այս սենյակից երկու սանդուղքով իջնում են մի
փոքրիկ տեղ, ուր կա բարե մի դուռ, որտեղ երկու պատուհան նայում են
դեպի ձորը:

Այս ընդարձակ սենյակը ունի մի մեծ պատուհան, որտեղից կարելի
է դուրս գալ և մտնել մի ուրիշ, բոլորովին անջատ այրի մեջ, որ ինքն
էլ ստորաբաժանումներով տարածվում է ժայռի մեջ: Տաճարի արևմտյան
պատի մեջ բացվում է մի ուրիշ դուռ, որ մտնում է մի ընդարձակ սեն-
յակ, ուր կա չորս գերեզման: Այս սենյակը մի դռնով հաղորդակցու-
թյուն ունի և տաճարի հյուսիսային կողմը զտնվող՝ սենյակի հետ, ուր
գտնվում է թագավորի և թագուհու կարծեցյալ գերեզմանները, փոքրիկ
մատուռով: Արևմտյան պատի մեջ էլ բացվում է դուռն մի անագին, եր-
կու սաժենից ավելի բարձր սենյակի մեջ, որի առաստաղում բացված է

մի կլոր անցք, որ սանդուղքներով տանում է վերև և ստորաբաժանվելով մտնում զանազան սենյակների մեջ: Այս սենյակի հյուսիսային կողմում ձգվում է մի սաժեն բարձրությամբ մի լայն անցք, որ տանում է դեպի սառը ջրի ավազանը:

Զանգակատունը գտնվում է եկեղեցուց փոքր ինչ ցած՝ դեպի արևմուտք, մոտ 8 սաժեն հեռու առաջ ցցված ժայռի գագաթին: Չորս սրբատաշ կամարների վրա բարձրանալիս է Լոբլ գմբեթը, որ այժմ քանդված է: Արևմտյան և արևելյան պատերի մեջ բացվում են կամարաձև դռներ, գեղեցիկ նշխերով եղրափակված: Զանգակատունը առանց դմբեթի քառակուսի է, երկու սաժեն մեծությամբ: Հյուսիսային պատը այժմ քանդվել է: Արև արևելյան պատի ունկյունում այժմ կա քանդակված մի ողկույզ երկու ճուֆ խաղողով և մի պսակաձև օղակ, որի մեջ և կանացի սրբյակ մի դեմք:

Թագուհու բնակարանը. զանգակատնից արեմուտք, ժայռի մեջ փորված է 4 սաժ. երկարությամբ, 2 սաժեն լայնությամբ և մոտ 3 սաժեն բարձրությամբ մի կամարավոր սենյակ: Արև հյուսիսային պատի վրա մի կամար է բոլորում, իսկ արևմտյան պատի մեջ 2,5 արշին խորությամբ և 1 սաժեն բարձրությամբ և 2 արշին լայնությամբ մի պահարան է բացվում. մյուս պատերի մեջ ևս կան մեծ և փոքր պահարաններ: Պատերին կից ձգվում են 0,5 արշին բարձրության քարե նստարաններ: Այս սենյակից բացվում են դռներ դեպի ուրիշ 2 սենյակ: Գուռը մեծ և կամարավոր է: Դռան մոտ գտնվում է մի փոքրիկ մատուռ և ուրիշ սենյակներ: Ասում են, թե սա թագուհու բնակարանն է եղած:

Խորհրդարանը կամ դատարանը 4 սաժեն երկարությամբ, 2 սաժեն 2 արշին լայնությամբ և 2 սաժեն բարձրության կամարավոր մի սենյակ է, ժայռի մեջ փորված: Դուռը կամարաձև է, 5 արշին բարձրության և 2 արշին լայնության, կողքերին մի մի նեղ պատուհաններով: Հյուսիսային պատի մեջտեղը փորված է պատկեր դնելու տեղ, իսկ ներքևում մի պահարան՝ թերևս նստելու տեղ: Արանից ձախ 4 արշին երկարությամբ, 2 արշին խորության և 5 արշին բարձրության կամարաձև մի խաշ կուսյապիսի խորշեր, միայն փոքր ինչ փոքր, կան և արևմտյան ու արևելյան պատերի մեջ: Հյուսիսային պատի մեջ բացվում է մի դուռ մի ուրիշ սենյակի մեջ, որ 3 սաժեն երկարություն և 4 արշին լայնություն ունի: Արևելյան պատի մեջ ևս զլխավոր դռան մոտ մի դուռ տանում է մի փոքրիկ սենյակ: Գլխավոր դռան առաջ փոքրիկ հրապարակ կա, կողքին քարե նստարաններ: Արևելյան կողմը մի փոքրիկ մատուռ կա:

Մյուս շինություններից նշանավոր է մի փոքրիկ եկեղեցի, հնձանը,

ժայռի մեջ փորված մառանը, ուր բացի ներս փորված պահարաններից կան և 6 հատ ժայռի մեջ փորված գինու կարասներ, խանութներ, որոնց դարակները ժայռի մեջ են դուրս փորված և այլն:

Մինչև դարուս կեսը վարձիան բոլորովին անխնամ էր թողնված և ուշադրության պահանջության էր ծառայում, իսկ այժմ շնորհիվ սկզբում մի հույն սարկավաղի, իսկ այժմ մի վրացի վարդապետի մաքրված և ուխտատեղի է դարձված: Ամեն տարի Ս. Աստվածածնի վերափոխման տոնին շրջակա գյուղերից և քաղաքներից ահադին բազմություն հաչերի, վրացիների և հույների գալիս է այդտեղ ուխտի: Ախալքալարի գավառն էլ մի փոքրիկ նպաստ է տալիս այդ վանքի պահպանության համար¹³,

ՄՈՒՐՑ

Գոթեկա գյուղից դեպի արևելահյուսիս մի և կես վերստ հեռավորությամբ ընդարձակ դաշտավայրի վրա բարձրանում են երկու բլրակներ, որոնցից հյուսիսայինի վրա նկատվում է պարսպի հիմք և մարտկոցի ավերակ: Այս բլրի արևմտյան կողմը տարածվում է մի ընդարձակ գյուղի ավերակ և ցորենի բազմաթիվ հորեր, պատերը բարով շարված: Ելքի լանջին, գյուղի կողմը, միմյանցից մոտ 50 սաժեն հեռավորությամբ երկու ստորերկրյա այր ձգվում են հեռու-հեռու, գոթեկեցոց ասելով մինչի նացարգորայի գետը: Այրերի մեջ բացվում են բազմաթիվ մեծ և փոքր սենյակներ, որոնցից մի քանիսի կտուրները ծածկված են մեծ մեծ քարերով:

ՔՈՌՈՂԼՈՒ ԲԵՐԴԸ

Սամսար լեռների հարավային վերջին գագաթի և Թափարավան լճի հյուսիսային եզրի հանդեպ բարձրանում են միևնույն ուղղությամբ և միմյանցից մոտ կես վերստ հեռու երկու լյանն, որոնց վրա գտնվում է Քոռոզլու բերդը:

Այս լեռներից հյուսիսայինը մյուսից բարձր է, սրա արևմտյան լանջին գտնվում են սեպացյալ ժայռեր, որ ձգվում են մինչև գագաթը:

Այս ժայռի մեջ բավական մաքուր փորված են իրար վրա երեք սենյակներ, որոնք, ժողովրդյան ասելով, Քոռոզլու ապաստարանն են եղած:

Մի փոքրիկ, մի արշին բարձրության և $\frac{3}{4}$ արշին լայնության դուռ, որի առաջ ընկած է $\frac{1}{4}$ արշին հաստության քարե փեղկը, բացվում է 3

¹³ Այս հատվածը տպվել է «Հանդես ամսօրյաում», 1895 թ. № 1:

արշին երկարութեամբ, 2 արշին լայնութեամբ և 1 սաժեն բարձրութեամբ սենյակի մեջ: Սրա արևմտյան պատի մեջ բացվում է մի փոքրիկ պատուհան, քարե փեղկով ծածկված, կողքերին երկու ծակ միայն թողնելով, որ հրացանի համար է:

Արևելյան պատի մեջտեղը մի վերշոկ խորութեան, $\frac{3}{4}$ արշին բարձրութեան և $\frac{1}{2}$ արշին լայնութեան կամարաձև փորվածք է, իսկ հարավային պատի մեջ $\frac{1}{2}$ արշին երկարութեան 3 վերշոկ լայնութեան և 5 վերշոկ բարձրութեան կամարաձև մի խորշ կա:

Դռան մոտից 1,5 արշին բարձրութեան և 1 արշին լայնութեան մի անցք երկու սաժեն երկարութեամբ սանդուղքով բարձրանում է և վերջանում մի փոքրիկ դռնով, որի շուրջը հրացանի համար անցքեր են թողած:

Իմ առաջնորդ արժ. Տեր-Մակար Տեր-Հարությունյանն ասում էր, թե մի տարի առաջ ինքն այդ դռնով մտել էր մի ուրիշ սենյակ, որ այժմ քանդվել և վայր է թափվել: Այս սենյակն առաջինին նման, միայն նրանից փոքր ինչ մեծ է եղել:

Հարավային պատի մեջ մի արշինից ավելի բարձրութեան և մոտ $\frac{3}{4}$ արշին լայնութեան և $\frac{1}{4}$ արշին խորութեան կամարաձև ներս է փորված եղել, մեջը մի գլխաբաց, հանդերձը մինչև ծնկները, առանց զենքի մարդ քանդակված:

Պատկերի երկու կողմն եղել է արձանադրություն, որ ոչ ինքը և ոչ յուր վրացի ուղեկիցը կարողացել են խմանալ, թե ինչ ազգի տառերով է: Այս սենյակի առջև գետնից մի արշին լայնութեան պատ է դրված եղել, որի վրայով քայլելով բարձրանալիս են եղել երրորդ և վերջին սենյակը, որ դեռ կանգուն է: Սա ժայռ քարերի մեջ փորված 4 արշին երկարութեան, 3 արշին լայնութեան և մի սաժեն բարձրութեան սենյակ է, որի արևմտյան պատը բոլորովին քանդված է:

Արևելյան պատի մեջ երկու վերշոկ խորութեան, $\frac{3}{4}$ արշին երկարութեան և $\frac{1}{2}$ արշին լայնութեան խորշ կա, իսկ հարավայինում $\frac{1}{4}$ արշին խորութեան մի կամար, որի վերև մի ուրիշ մի արշին երկարութեան և երկու վերշոկ լայնութեան և $\frac{1}{4}$ արշին խորութեան խորշ, ուր մի թուղն բուն էր դրել և ձու ածել:

Սենյակի արևելյան պատի անկյուններում դրված / ին երկու խաչարձան: Մեր ջանքն իդուր անցավ արձանադրություն և մարդու պատկեր կրող քարը գտնելու:

Մեծ կամ թոք և Փոքր Սամսարները գտնվում են Ախալքալաքից դեպի արևելք, Սամսար լեռներից արևմուտք մի բարձրավանդակի վրա:

Այս երկու Սամսարների միջի հեռավորությունը հազիվ կես վերստ լինի: Այս երկու գյուղերի միջև ձգվում է մի ձոր, որ հազիվ 6 սաժեն խորություն և 4 սաժեն լայնություն ունենա: Սա սկսվում է Մեծ Սամսարից հարավ $\frac{1}{2}$ վերստ հեռվից և ձգվում է մինչև Փոքր Մեհերնիա ավերակը: Չորակի միջով հոսում է մի վճիտ և սառնորակ առվակ, որ սկիզբըն է առնում Մեծ Սամսարից մի վերստ հեռու արևելահարավ գտնվող Քեխուտի սարի աղբյուրներից:

Չորակի երկու կողմերը քրշեր են՝ սև, կարմիր և սպիտակ մեծ ու փոքր քարերից, կարմիր, կրային և կավային հողից ու խճից բաղկացած:

Այս քրշերի մեջ փորված են մի փառավոր եկեղեցի, մի քանի մատուռ և բազմաթիվ այրեր: Եկեղեցին, որ գտնվում է Փոքր Սամսարի ձորակում, գետի աջ ափին, ամբողջովին փորված է քրշի մեջ:

Նրա երկարությունն է 20 արշին, լայնությունը՝ 10 արշին և բարձրությունը մոտ 5 սաժեն: 2 արշին երկարութեան, 1,5 լայնութեան և 4,5 սաժեն բարձրութեան քառանկյունի բնականից թողնված սյուներ կամարակապ բոլորում են, և սրանց վրա բարձրանում է գմբեթի փորվածքը:

Սեղանի երկու կողմը կա մի մի հանգերձատուն, 2 սաժեն երկարութեան, 3,5 արշին լայնութեան և մոտ 4 սաժեն բարձրութեան:

Եկեղեցու հարավային պատը, որի մեջ բացվում է եկեղեցու դուռն և երեք պատուհան, կիսով չափ քանդված է:

Դռան վերև վրաց մեսրոպյան տառերով կա մի եղծված արձանագրություն:

Խորանի պատուհանի և եկեղեցու արևմտյան պատի միջից մի նեղ անցք ձգվում և գնում խառնվում է ձորակի միջի բազմաթիվ այրերին:

Այս քրշերից պրծել, գետի ափն է գլորվել 10 արշին բարձրութեան, 6 սաժեն լայնութեան և 1 սաժեն հաստութեան մի ժայռ քար, որի մեջ փորված է մի մատուռ, մի սաժեն բարձրութեան, 2,5 արշին երկարութեան և երկու արշին լայնութեան: Միևնույն քարերից, արևելյան պատին կից դուրս է փորված $\frac{1}{2}$ արշին բարձրութեան մի վեճ քար, որի պատի մեջ կա մի փոքրիկ խորշ: Դռան տեղը կտրված է:

Միայն դռան երկու կողմում կա վրաց տառերով մի եղծված արձանագրություն:

Այս ամբողջ ձորակի մեջ մանավանդ Մեծ Սամսարում կան բազմա-

թիվ այրեր, սրանք ընդհանրապես մեծ և փոքր գետնափոր խորշեր են՝ նեղ և երկարածիզ անցքերով միմյանց միացած, որոնք երբեմն վայր են իջնում, երբեմն ուղղակի աստիճանաբար վեր բարձրանում և երբեմն ուղիղ ձգվում, իրենց միջից դանազան կողմեր անցքեր բանալով: Ընդհանրապես այս անցքերն այն մեծության են, որ մարդ պարզած ազատորեն կարող է առաջ գնալ, իսկ տեղ տեղ այնքան բարձր են, որ կարելի է և կանգնած քայլել:

Խորշերը, որ հավանականորեն մարդկանց բնակարաններ են եղել, միշտ մի սաժենից բարձր են, 1—10 սաժեն երկարության և 1—5 սաժեն լայնության:

Կան խորշեր ևս, ուր շինված են քարե մատրններ, ժայռի մեջ փորված են պահարաններ, քարե նստարաններ, ձորակի մոտի սենյակները պատուհաններ էլ ունին դեպի ձորը քարե կափարիչներով: Պատուհանները գոգերում կան փոքրիկ ծակեր:

Ընդհանրապես այս բոլոր անցքերն ու խորշերը շատ մաքուր են, օդը՝ նույնպես, այրերից մինի միջի ջուրը նույնպես շատ հստակ և սառն:

Այս աղբյուրն այժմ կախված է ձորի մեջ, շնորհիվ գյուղի առաջին հարուստ և շատ հյուրասեր Կարապետ Գղլյանի և ջուր է մատակարարում ամբողջ Մեծ Սամսար գյուղին:

Ես մտա այս այրերից բոլոր նշանավորները: Ինձ ուղեկցում էին գյուղի արժանապատիվ Տեր-Մակար Տեր-Հարությունյան, որ մի աշխույժ և հետաքրքիր երիտասարդ է և մի քանի գյուղացի:

Բավական է կարծեմ նկարագրել միայն մի այրի ուղղությունը. ժողովրդյան կոչած «հաշ մաղարան» գտնվում է Մեծ Սամսարի ձորում առվակի աջ ափին, աղբյուրից փոքր ինչ բարձր:

Ժայռ քարի մեջ փորված մի փոքրիկ անցքով մենք մտանք ներս և ուղղահայաց 10 ոտք քարի սանդուղքով մազլցեցինք վերև, մտանք մի ընդարձակ, լուսավոր սենյակ: Անցքի բերնի կափարիչը գյուղացիք տարել գործածել էին:

Սենյակը քառակուսի է, 7 արշին մեծության և մի սաժեն բարձրության, հյուսիսային պատի մեջ կա մի 1,5 արշին երկարության և 1 արշին լայնության պատուհան. որ նայում է դեպի ձորը: Նկատելի է, որ պատուհանն ունեցել է քարե փեղի: Պատուհանի գոգից մի ծակ կա: Պատուհանի ձախ կողմը, մի արշին հեռու կա մի փոքրիկ ծակ և մի մարդու նստելու տեղ: Սրա մեջ կա երեք դուռն:

Արևելյան պատի մեջ բացվում է 4 ³/₄ արշին բարձրության, 1 արշին լայնության և 1 ¹/₄ արշին հաստության մի դուռ, որի մոտ բարձրից

¹/₄ արշին մեծության մի խաչ է քանդակված: Սրա երկու կողմում նկատելի են Բ. Մ տառերը՝ իսկ ներքևում կան երկու փոքրիկ խորշեր: Հայ գյուղացիք այստեղ ուխտ են գալիս և մոմ վառում: Այս դռնից մտանք նույն բարձրության, միայն մի սաժեն երկարության և երկու արշին լայնության մի սենյակ, որի հյուսիսային պատի մեջ բացվում է մի ձվաձև պատուհան 0,5 արշին երկարության և քառորդ արշին լայնության. ներքևում գնեթի համար ծակ: Սրա արևելյան պատի մեջ կա քարե մի պահարան, 1,5 արշին խորության, 1,5 արշին երկարության և մեկ արշին լայնության: Հարավային պատի մեջ բացվում է մի նույնչափ դուռն, որ տարավ մեզ մի սաժեն երկարության և կես սաժեն լայնության, նույնչափ և բարձրության մի խորշ, որի մեջ այլևս ոչ մի անցք չկար: Մենք վերադարձանք խաչի սենյակը և մտանք արևմտյան պատի մեջ գտնվող անցքով, որ մեկ արշին բարձրության և ³/₄ արշին լայնության կլինի: Պարզած 10 քայլ առաջ գնացինք, անցքը փոքր ինչ լայնացավ ու բարձրացավ, 10 քայլ ևս, և մենք իջանք մի սաժեն խորության և 8 արշին մեծության քառակուսի մի սենյակ, որի մեջ գտանք մարդկանց և անասունների ոսկորներ: Միայն սրանք մի առանձին մեծությամբ չէին զանազանվում: Այստեղից մի նեղ անցքով ուղղակի վայր կախվեցանք և ընկանք մի մեծ սենյակ, մի սաժենից ավելի բարձրության, 3 սաժեն երկարության և 8 արշին լայնության: Այս սենյակից մի նեղ անցքով երկար գնացինք, մի ուրիշ նեղ անցք վայր էր իջնում, սակայն արդեն բլել էր. մենք շարունակեցինք կուզեկուզ գնալ, և վերջապես տեսանք, որ անցքը բլել փակվել է:

Մենք միևնույն անցքով վերադարձանք կրկին խաչի սենյակը և մտանք հարավային պատի միջից դեպի արևմուտք ձգվող նեղ անցքը, որ մի արշին բարձրության և մի արշին լայնության է: Քսան քայլից հետո այս անցքի մեջ բացվում է և մի այլ անցք, որ տանում է դեպի արևմտահյուսիս: Մենք շարունակեցինք գնալ միևնույն անցքով, սակայն մի հարյուր քայլից հետո ստիպվեցանք ետ դառնալ, որովհետև անցքը փուլ էր եկել և փակվել: Ուղեկից գյուղացիներս ստում էին, թե մի քանի տարի առաջ իրենք մտել էին այդ անցքով և շատ հեռու գնացել: Նրանք չավատացնում էին, թե այդ անցքը ձգվում է մինչև Մերենիա և միանում Բլրի մեջ այժմս էլ երևացող այրին: Վերադարձին մենք մտանք այդ անցքից դեպի արևմտահյուսիս ձգվող անցքը, որ երկար ձգվելուց հետո բացվեցավ մի սենյակի մեջ, ուր գտնվում է չրի ավազան: Մենք վերադարձանք, դուրս եկանք այդ այրից և մտանք մյուս այրերը: Մեծ Սամսարում նշանավոր է այսպիսի ութ այր:

Բացի եկեղեցուց և բազմաթիվ աշուրից, Սամսարներում նշանավոր են և քարի մեջ փորված երկու փոքրիկ ջրաղացերը, որոնք գտնվում են Փոքր Սամսարի ձորակում, Քեխուտի գետի աջ ափին:

Արանցից մին փորված է մի շորս սածեն լայնության, 6 արշին երկարության և 5 արշին բարձրության քարի մեջ: Սրա դեպի հյուսիս նայող երեսի վրա բացված է 1,5 արշ. բարձրության և 14 վերշոկ լայնության մի փոքրիկ դուռ: Նկատելի է, որ ներքուստ ունեցել է քարե փեղկ: Քարի մեջ ամբողջ փորվածքը 3 արշին լայնության, 4,5 արշին երկարության և 3,5 արշին բարձրության է: Դռան կից, սեմից 4 վերշոկ ցածր, իսկ գետնից 12 վերշոկ բարձր ձգվում է 0,5—1 արշին լայնության և 2 արշին երկարության մի տեղ, որ հավանականորեն ջրաղացպանի քնելու տեղն է եղել:

Սրա մոտ 1,5 արշին լայնության փորված է մինչև դետին՝ ջուրը գնալու համար, մյուս կողմը կեսից մեկ ու կես արշին լայնության և 2 արշին երկարության և միևնույն բարձրության մի տեղ էլ իրեր ղնելու համար է: Մնացած 2 արշին երկարության և լայնության տեղը ջրաղացի տեղն է, որի ոչ քարը և ոչ մյուս պարագաներն են մնացել, որովհետև գյուղացիք տարել են: Հարավային կողմում կա 12 վերշոկ երկարության և 0,5 արշին լայնության ձվաձև մի պատուհան:

ՍԱՄՍԱՐԻ ԱՅՐԵՐՈՒՄ ԳՏԱԾ ՎԱՅՐԵՆԻՆ

Այժմյան աղանեցիք գաղթականության ժամանակ վերաբնակած էին Մեծ Սամսար: 1837 թ., երբ Սամսարը պատած էր խիտ անտառով, այժմ ձերունի նահապետը բռնել է մի վայրենի մարդ:

«Մի գիշեր,— պատմում էր նա ինձ,— կացինը ուսս գնացի Մեծ Սամսարի ձորակի հաշ մաղարից փոքր ինչ բարձր գտնվող ջրաղացը: Հանկարծ մի արտասովոր ձայն լսեցի, նայեցի՝ ու մի միջահասակ, անմորուս և անպիս մարդ, փոքրիկ աչքերով, ոտից մինչև գլուխը մերկ, միայն խոտով փաթաթված, գլխաբաց, վիզը մի կաշյա բան ձգած ունքերը կիտել կանգնել և ծվծվացնում է: Կամաց մոտեցա դրան և ուզեցի կացնով խփել գլխին, սակայն նա հարձակվեց ինձ վրա և այնպես սաստիկ կծեց ուսս, որ արյունն աղբյուրի պես սկսեց հոսել: Ծա հավաքեցի ուժերս և մի այնպիսի հարված տվի վայրենուն, որ վայր գլորվեց: Իսկույն ոտից բռնեցի և ձայնեցի ջրաղացպան ընկերոջս՝ Պետրոսին, որի օգնությամբ քաշեցի տարա վայրենուն ջրաղաց և դուռը վրայից միեցի: Վայրենին այս ու այն կողմն ընկավ, աշխատեց մի կերպ դուրս պրծնել,

բայց երբ տեսավ, որ չի կարող, հը՛, հը՛, հը՛ արավ և ցատումով նախ երկիր և ապա երկինքը սկսեց ցույց տալ: Առավոտուն ես ու Պետրոսը մի լավ կապեցինք սրա ձեռքին ու տարանք գյուղ տանուտերին: Երկու օր մնաց տանուտերի գոմում, հաց, կերակուր էինք տալիս՝ չէր ուտում. անկողին էինք պցում, չէր պառկում, կովի առաջ ձգված խոտը ջոկում ուտում էր: Ծա մոտեցա նրան, վիզը ցկած կաշին քանդեցի առա, նա սկսեց երկինքը ցույց տալ և աղաչել, մինչև որ ես կրկին կապեցի վզից: Երրորդ օրը պինդ կապեցի ձեռքերն ամուր թոկով և տվի շորս մարդու, որ տանեն երբեք՝ գավառապետին ընծա, — ես էլ գնացի որ հանդերձս փոխեմ, հետևներից հպսնեմ: Սակայն մինչև իմ գնալու վայրենին սաստիկ բզավում է, այնպես որ տանողները սարսափում են, քաշում պրծրցնում է թոկերն ու փախչում: Ծա հենց այս միջոցին վրա հասա ու ընկա վայրենու ետևից. նա փախավ եկավ մտավ հաշ մաղարան (այրը): Ծա ընկերներին հետ կտրեցի դուռը և հրացան արձակեցի: Այս ժամանակ նա հանկարծ դուրս թռավ, սաստիկ բղավեց և անհայտացավ անտառի մեջ»:

ԲՆԱԿԻՉՆԵՐ
ՀԱՅԵՐ

Ախալքալաքի գավառի հայերը գլխավորապես գաղթականներ են էրզրումի վիլայեթից, որ եկած են 1830 թ. էրզրումի առաջնորդ Կարապետ եպիսկոպոսի առաջնորդությամբ: Գաղթած շատ ձերունիներից լսելով և դրավոր աղբյուրներից քաղելով՝ ես արդեն պատրաստել եմ այս գաղթականության մանրամասն պատմությունը, որ ավելի ևս մշակելու հույսով առայժմ հետաձգում եմ հրատարակել:

Բացի Կարնո գաղթականներից, կան և Արտահանի գավառի գաղթականներ, որոնք բնակվում են Խորենյա և Փոկա գյուղում, իսկ դիրիֆ-ցիները Խնուսից են: Շատ հետաքրքիր է սրանց գավառաբարբառի կրած փոփոխությունը Կարնո գավառաբարբառի ազդեցության տակ, ուստի և ես առաջ կբերեմ մի քանի երգեր և հեքիաթներ սրանց բարբառով իմ «Ջավախքի բուրմունքում»:

Ժողովրդի վարք ու բարքին և հավատին վերաբերյալ նյութերս ինքս հավաքել եմ գլխավորապես Կարնո գաղթականներից:

ՀԱՅ ԿԱԹՈՒԼԻԿՆԵՐ

Ջավախքում բնակվող հայախոս հայ կաթոլիկները բնակվում են հետևյալ գյուղերում.

Ալաստան	706 ար.	627 իգ.	183 տուն
Վարդավ	52 »	61 »	10 »
Վարեան	106 »	169 »	40 »
Տարցի	233 »	225 »	41 »
Խիզարավրա	673 »	601 »	137 »
Թորիս	185 »	160 »	46 »
Ուճմանա	181 »	164 »	40 »
Էշտիս	799 »	720 »	196 »

Ընդամենը 8 գյուղ 3025ար. 2727իգ. 699 տուն

Երկու սեռից՝ 5752 հոգի:

Ալաստանի բնակիչները մինչև վերջին ժամանակներս գնում էին Կ. Պոլիս աշխատելու, և այս պատճառով գավառիս մյուս գյուղացիներից ավելի զարգացած և կրթված են: Տները փայլում են վերին աստիճանի մաքրությամբ:

Վարեանցիք էրզրումի Թվանճ գյուղից են: Սրանք թե հանդերձներով և թե նիստ ու կացով չեն տարբերվում վաղիանցի հայ լուսավորչականներից, որոնց հայրենակից են:

Վարդավցիք և խզարավրացիք բնիկներ են: Սրանք վաղուց մոռացած են իրենց մայրենի լեզուն և խոսում են վրացերեն: Եվ թեպետ ընդունած են վրաց սովորություններ, բայց և այնպես ընտանեկան կյանքը հայկական է:

Թորիայի, Ուճմանայի և Էշտիայի բնակիչները խնուփ քիլվա գյուղից են, խոսում են Մշու բարբառով, տղամարդկանց հանդերձը նման է Կարնո գաղթականներին, միայն ընդհանրապես հազնում են «նախընտրել գուլբա» որով և, լուսավորչականների ասությանը, ճանաչվում են: Կանանց մեծ մասը հազնում է արտահանցիների և դելիֆցիների նման՝ դելրա:

Բացի կրոնական ծեսերից ու սովորություններից, ընտանեկան կյանքը, սովորությունները բոլորը նման են հայ լուսավորչականներին: Սրանց մեջ զբաղիսությունը սաստիկ քիչ է տարածված:

Ընդհանրապես սրանք կրոնամուլ են, սիրում են կրոնական հարցերով զբաղվել, իրենց ուղղափառ կամ կաթոլիկ են կոչում և երբեք չեն ուզում լսել, թե ազգով հայ են:

Սրանք հաճախ վիճում են լուսավորչականների հետ կրոնական հարցերի մասին:

Թե կաթոլիկ և թե լուսավորչական հայերը միմյանց հետ ավելի

վատ են վարվում, քան թե շրջապատող մյուս ազգությունների, օրինակ, վրացոց կամ թուրքերի հետ:

Այս գավառի բոլոր կաթոլիկները ունին մի գործակալ քահանա, որ Եշանակվում է Ախալցխայի կաթոլիկաց հոգևոր կառավարությունից:

ՏԱՃԿԱՆՈՍ ԿԱԹՈՒԼԻԿ ՀԱՅԵՐ

Ախալքալաքի գավառի Բավրա, Խուլղումա, Կարտիկամ և մասամբ Տուրս գյուղերի բնակիչները տաճկախոս կաթոլիկ հայ են: Սրանք 1829-ին դաղթած են Արտահանի գավառի Գեոլա հասարակության վել գյուղից:

Ինչպես ծերունիները պատմում են, իրենց նախնիքը լուսավորչական հայեր են եղած և զանազան ժամանակներում այլևայլ տեղերից եկած բնակած են այս գյուղը: Անցյալ դարում Արտահանի բեկը արգելած է վել և շրջակա հայախոս գյուղերին հայերեն խոսել և ամեն մի անգամ խոսելիս 50 բաղդադ տուգանք է առած:

Այս ժամանակները մի կապոցին (capucin) քահանա, որ միանգամայն պարապում էր բժշկությունը, գալիս Արտահանի բեկին բժշկում է: Երբ բեկը լավի է դառնում, կապոցին ուզում է հեռանալ, պատճառարանելով, թե յուր պաշտոնն է կաթոլիկ հավատք քարոզել: Իսկ բեկը, որպեսզի քահանային իրենից շատ չհեռացնե, ուղարկում է մոտակա վել գյուղը՝ քարոզելու վելցիք, որ քահանա չէին ունեցել քանի այնտեղ գաղթել էին, կամաց կամաց ընդունում են կաթոլիկությունը:

Գաղթական ծերունիների ասելով՝ դարուս սկզբում այդ գյուղում բնակվում էին 26 տուն կաթոլիկ հայեր և միայն երեք տուն վրացիք: Սկզբում այս երեք տունը կազմում էր ժիժոգելի գերդաստանը: Այս երեք տուն վրացիք հունազավան էին, ունեին իրենց փոքրիկ եկեղեցին: Կաթոլիկ հայերը վրացիներին սափալում էին իրենց կաթոլիկ կրոնն ընդունելու և երբեք միմյանց աղջիկ չէին տալիս-առնում, մինչդեռ լուսավորչական հայերի հետ միշտ խնամություն էին անում: Կրոնական վիճաբանություններ անպակաս էին իրենց մեջ:

Շատերը պատմում են, թե նաքալաքի գյուղից Սապոգելա անուն մի վրացի շատ խնդրել է վելի Կարապետ քհնի (Բյալայի—գյուղի տանուտիրոջ) աղջկա՝ Հեղինեի ձեռքը, և երբ մեքովել է, ընծաներով հաճեցել է Արտահանի բեկին՝ բռնությամբ խլել աղջկան և տալ իրեն: Սրա դեմ հուզվել և բողոքել են վել գյուղի բոլոր կաթոլիկ հայերը և միայն այն ժամանակ են հանգստացել, երբ բեկը ստորագրություն է առել Սապոգելայից, որ շատիպ Հեղինեին հունադավանություն ընդունելու: Սա-

կայն հակառակ յուր խոստման, սաստիկ ստիպում է յուր կնոջը՝ Հեղինեին, որ ընդունի հունադավանություն, և երբ սա հաստատ է մնում, կապում է ձեռքն ու սարքը, վրան մածուն բոսում, դնում շնեքի առաջ, որ լիզեն, ս. մեռսնը հանեն, որպեսզի հետո օրթոդոքս մկրտեն: Այս որ լսում են Վեյի հայ կաթողիկեները, բողոքում են Արտահանի Ալի-բեկին: Քեկը 100 դուռուշ տուգանք է առնում, Սապոգեկենց Պետրեի որդի Հովսեփին բանտարկում և խստիվ պատվիրում է նրան՝ ազատ թողնել կնոջը յուր կրոնը զավանելու: Այնուհետև կրոնամուլ վրացիի աղատ է թողնում Հեղինեին, և սա մինչև մահ մնում է կաթողիկ:

1887 թվին այս կինը, որ 1829 թ. Կարնո գաղթականության ժամանակ գաղթել էր Մալկայի գավառի Ռեխա գյուղը, զգալով մահվան մերձեկայր, ստիպում է յուր վրացի սրբվաց, որ տանին իրեն զավառի Տուրս գյուղը, ուր և մեռնում և թաղվում է հայ կաթողիկ ծեսով: Այս գյուղերի բոլոր կաթողիկեները հաճախ հիշում են Վարդան անուն վեյցի հայրենակից մի նահատակ, որ քրիստոնեության վրա վկայել է մարտիրոսական մահվամբ: Այս ժողովուրդը բացի այն, որ հայ տիպ է կրում, այլև յուր աշխատասիրությամբ ու տեղունովյամբ նրանից չէ առաքելովում: Սրանց ընտանեկան կյանքը, սովորությունները բուրբովին հայկական են: Հարսանյաց ժամանակ 12 դուռուշ, ի խորհուրդ 12 առաքելաց, տալիս են ազգիա մորը, ինչպես մյուս գյուղացիները: Թաղման ժամանակ տալիս են «փետտոտի հացը», որ է գերեզման փորելու մասնակցության ուտելիք:

Ընտանեկան բուսերից շատերը դեռ հայկական են՝ հորո (հորբույր), սանամեր, սանիկ, խնամի, փեսա, ճակատ, անթեղ, խաչերկաթ, ակիշ, թաթակիշ, մուխրաշ, ծափ, կճուճ, կրծկալ, կապան (փորբաշ), խտակուս, թևաթ, գոմ, ախոս, մարազ, բնկալ, կոնո, կոպ, կրկալ, թաս, փակ, մատակ, սըփահ, հարսը, քոթան, խոփ, ձկիշ, մաճ, մաճկալ, սամի, խաշիլ, մախոխուպուր, լուկ: Գարձյալ՝ բարև, սատրձու բարին, բարի-րիկուն, գավացյալ Հիսուս, կենդանութեն, սաղըլիք: Եկեղեցական բույր սպասքների անուններն ևս հայկական են:

Մարդկանց անուններն ևս մեծ մասով հայկական են, օրինակ՝ Օսկեհատ (80 տարեկան մի կին է), Մարգարիս, Միրբին (Սբբուհի), Հոռոմ (Հոխիսիմե), Սիխաբեթ, Շուշան, Վարթուն (86 տարեկան մի կին): Մարդիս, Պապիկ, Գրիգոր, Ներսես (91 տարեկան ձերուհի), Վարդան:

Հայկական ժողովրդական ազոթքներից սրանք գիտեն «Աստվածածին, դուն կուս ես», «Լուսացա՛վ լուսն ի բարին»:՝ և այլն: Հին սերուն-

դր իրեն ուղղափառ էր անվանում, իսկ նոր սերունդը՝ շնորհիվ ուսուցիչների և բահանաների իրեն «հայ կաթողիկ» է անվանում և աշխատում է սովորել մայրենի լեզուն:

1886 թ. աշխարհագրի ժամանակ նախկին գավառապետ Սմբատով վրացի իշխանը եկել էր այս գյուղերը և աշխատել էր սրանց «վրացի» գրել տալ, սակայն միմիայն մի տուն վախից վրացի էր գրվել, մյուսները ևս անել էին, թե հայ են: Ուստի կարծում եմ, որ բուրբովին անհիմն է ոմանց և Զաղուրսկիի յուր «Поэзка в Ахалцхский уезд» աշխատության մեջ սրանց «վրացի» կոչելը¹⁵:

ՀԱՅ ԲՈՑԱՆԵՐ

Ախալքալաքում բնակվում են 17 տուն՝ 21 արական, 19 իգական սեռի հայ բոշաներ:

Սրանց մասին ես կհիշեմ միայն մի քանի ավանդություններ, որ իրենք պատմեցին ինձ իրենց ծագման մասին, իսկ սրանց կյանքի մանրամասն ուսումնասիրությունը և արդեն պատրաստ հայերենից բոշերեն բառարանը կմնան զարձյալ մշակելու:

Բոշաներն իրենց ծագման մասին կարողանում են պատմել միայն լեռնյալ ավանդությունները:

Շատ վաղ ժամանակներում ապրում էր մի վարդապետ, որի երեք տարկավազները կաշապելով թշնամիներից՝ մի կին են բերում, տանում նրա խուցը: Երբ թշնամիները գալիս բռնում են վարդապետին կնոջ հետ, սա հասկանում է սարկավազների խարդավանքը և անիծում նրանց՝ ասելով. «Սենրևներ, գնացեք, էլ մարդոց մեջ չերևաք»:

Իսկույն սրանց երեսներին կեսը սեանում է, առնում են մի մի պարկ և զավազան ու գնում, անվերջ գնում: Ծանապարհին սրանց հանդիպում են ձի. կով, ոչխար և այլն, սակայն սրանցից և ոչ մինը չի մնում դրանց մոտ, միայն էլը հալատարմություն է ցույց տալիս, և չի հեռանում աիրոջից: Սրանք վերցնում են էլը և գնում, հասնում են մի անտառ, ճյուղեր կտրտում, քթոց, բաթաթ, մաղ շինում, բայց որովհետև իրենց կրեքսի կեսը սեացած էր, չէին կարող մարդկանց մեջ մտնել, ուստի տալիս են իրենց կանանց տանել ծախելու: Այսպես շարունակվում է սրանց կյանքը, ամուսինները տանը նստած շինում են մաղ, բաթաթ, սյալա, քթոց և փոկ, իսկ կանայք ման անում քաղաքն ու գյուղեր ու վաճառում:

¹⁵ Այս հատվածը ևս տպված է «Հանդես ամսօրեա»-ում և տրամադրված «Արձագանքում»:

¹⁴ Տե՛ս Ե. Լալայան, Զավախի բուրմունքը, Թիֆլիս, 1892:

Մի դառամյալ կին բռնա ևս պատմում էր, թե շատ վաղ ժամանակներում Կիլիսիեղնոս անունով մի մարդ, շկարողանալով յուր գերդաստանին ապրուստ հայթայթել, հուսահատվել և գնացել մտել է թոնիրը, որ քաղցածությունից մեռնի:

Կինը եկել հանել է նրան թոնրից և հուսադրել, ասելով.

Կերթամ մուրամ,
Բերեմ պահեմ.
Հավի դոշով,
Փրփուր լոշով.
Ել, ել, մատաղ
Ըլլիմ քեզի.
Ել ատ թոնրեն,
Մէ՛մ՝ դուս արի:

Ուստի և նրանց մեջ սովորություն է դարձել՝ երբ պսակից հետո եկեղեցուց հարս ու փեսան տուն են վերադառնում, փեսան մտնում է թոնիր, իսկ հարսը պարում է թնդրափում, վերոհիշյալ խոսքերն երգելով, մինչև որ փեսան դուրս գա թոնրից:

Բ

Առաքյալներից մին ճաշի ժամանակ տալիս է Հիսուս Քրիստոսին մի կտոր հաց, որի վրա Տերը կեղտեր նկատելով՝ բարկանում և մի փունջ մաղ յուր գլխից պոկելով տալիս է հաց տվողին: Աշակերտը զարմացած նայում է տիրոջը: Այդ ժամանակ Հիսուս խաշակներում է մազը և աշակերտը իսկույն սովորում և սկսում է դործել մաղ: Եվ ահա այդ աշակերտը համարվում է մաղագործների նախահայր:

Գ

Բողաները իրենց լեզվով իրենք իրենց կոչում են լոմ, սակայն ոչ մի բացատրություն չեն կարողանում տալ: Մյուս ազգաբնակիցությունն-

16 Բնագրում հեղինակը սկսել է Բ-ից, առանց Ա-ի, այդ պատճառով հերթականորեն փոխել ենք համարները: Սանթոթյուն կազմողների:

րին նրանք հայտնի են բոլա անունով: Այս անվան ծագման մասին իրենք բողաները պատմում են հետևյալ բառախաղը.

Մի մեծ հրավերքի գնացել են բոլոր ազգությունները, երբ սրանք տեղավորվել պրծել են, նոր Ցկել են լոմերը, սակայն տեղ չէ եղել, և սրանց պատասխանել են, թե պոշ ա, պոշ ա (իզուր է, իզուր է) գնացեր: Այստեղից էլ, իբր, առաջացել է պոշա-իզուր անունը:

Դ

Իսկ առայժմ բողաների մասին մի ամփոփ գաղափար տալու համար ասենք, որ սրանք ևս պատկանում են հնդկաարիական ցեղին, որ ցրված հին և մասամբ նոր աշխարհի գրեթե բոլոր անկյունները, ապրում է անկրոն, անհայրենիք և անօրենք: Ամբողջ աշխարհում մի կտոր հող չունենալով, այս ցեղն ամեն տեղ իրեն հայրենիք է համարում: Անտարբեր քաղաքների հարստության և նրանց բնակիչների փարթամության և կյանքի հարմարություններին, նա միայն մի բան է խնդրում՝ թույլ տալ իրեն ազատ ապրելու բնության զրկում¹⁷:

Սրանք երևացել են Հայաստանում հավանականորեն է կամ Բ դարում¹⁸ և հետզհետե ընդունել հայերեն լեզուն, կրոնը և սովորությունները:

Բողաները միջահասակ են, մարմնի մասերը կանոնավոր, միայն չաճախ պատահում է կանանց ստինքների ոչ սովորական մեծություն: Սրանց մեջ շատ քիչ կան մեծ փորավորներ, կզավորներ և այլն:

Մորթին, ըստ Կոլոչի¹⁹, ավելի կամ պակաս մթնադույն է, մազերն ու աչքերը ազուպի սևության, երեսն երկարավուն է, ճակատը նեղ, քիթը փոքր ինչ առաջ ընկած և երբեք տափակ, աչքերի և կոպերի մեջտեղի տարածությունը նեղ. ունեն սպիտակ ատամներ:

Բողայի բնավորության հատկանիշ կողմերն են՝ աներեսությունը (անվերջ և անզգորում խնդրել), անհողությունը, երբեք նա չի հոգում ապագայի մասին, ապրում է օրից օր, և սաստիկ եսասիրությունը. նա ոչ մի զոհաբերության ընդունակ չէ, մինչև անգամ յուր հիվանդ կնոջը ոչ միայն չի խնամում, այլև ուղարկում է հորանց տուն, ուր եթե մեռնի, հայրն է հողալու թաղման ծախսերը, իսկ եթե առողջանա, նորից կվերադառնա ամուսնու մոտ: Կառավարչություն, օրենքներ, կանոններ,

17 Паганянъ К. П. Цыгане, СПб., 1887.

18 Վահեցյան Գ., Պատմական սկսարկ բողաների անցյալից, «Մուրճ», 1894, № 7 և 8:

19 «Մուրճ», 1890, № 9:

սկզբունք; պատվի զգացմունք անտանելի են նրանց համար, ասում է Կոլոշին. անսահման անկախութեան զգացումը ներշնչում է նրանց մեջ բնությունը, որին այնքան մոտ ապրում են նրանք: նրանց համար ամբողջ երկիրը հայրենիք է, միայն թե իրենք իրենց ազատ զգան: Ամեն կլիմա նրանց համար հարմար է: «Ուր լավ՝ անդ հայրենիք»: Ահա թե ում համար է ասված (Կոլոշի):

Ախալքալաքի գավառի բոշաները կիսանստակյաց են: Ժամանակ առ ժամանակ սրանք խմբերով դադթում են շրջակա Ախալցխայի, Աղեքսանդրապոլի, Արդահանի, Թիֆլիսի գավառները մի առ ժամանակ մնալու, իրենց մաղերը ծախելու և ողորմութուն խնդրելու նպատակով: Շատ հետաքրքիր տեսարան է ներկայացնում դրանց շուն: Փառավորապես բազմած իշու վրա՝ կին բոշան բուրթ է մանում կամ գուլպա գործում, իշու դավակին նստած է մի երեխա, իսկ երկու կողքից, բակեղաթի «աշքերից» դուրս են նայում մի կամ երկու մանկիկ, որոնց հավասարակշռելու համար կախված են մաղեր: Սրա ետևից ամուսինը երկար մահակը ձեռին առաջ է քշում էշը: Մի ուրիշ կին էլ, մեջքին կապած յուր մանկիկը և մի քանի մաղ, ձեռին երկար մահակը կամաց առաջ է շարժվում: Շատ անդամ պատահում է, որ կանայք ծննդաբերում են առանց մի որևէ օգնութեան, նորածնին պատահող առվակի մեջ լողացնելուց հետո կապում են իրենց մեջքին և շարունակում ճանապարհը:

Բոշաները նստակյաց կյանք չեն սիրում, երկրագործությամբ բուրոսվին չեն պարապում: Սրանց «Իմանաս սալի (սալի) զոզոց, չիմանաս իշու զոզոց» անեծքն արդեն ցույց է տալիս, թե որքան արհամարհում են երկրագործությունը:

Այլ բոշաները գլխավորապես պարապում են մաղագործությամբ, որի համար և հայերը նրանց կոչում են մաղագործ: Բացի սրանից մի քանիսն էլ պարապում են պալտարությունում, հասարակ դարբնությամբ և մանավանդ աշղուսթյամբ:

Մի բոշա օրական կարող է շինել 6—8 մաղ, որոնցից միջին թվով կարող է վաստակել 60—80 կոպեկ: Բայց որովհետև այնքան շատ չի ծախվում, ուստի և սրանք մեծ մասամբ անգործ են մնում և իրենց ժամանակն անց են կացնում առավելապես գինետներում, որպես օղու սիրահարներ և կամ ձմեռը՝ օղաներում, որպես աշղների և հեքիաթ ասողների ունկնդիրներ: Անհամեմատ ծանր է կին բոշայի աշխատանքը. մինչդեռ ամուսինը տանն է մնում, կին բոշան ամբողջ օրը և շատ անգամ ամբողջ շաբաթներով և ամիսներով շրջում է քաղաքում և շրջակա

գյուղերը մաղերը ծախելու և ողորմութուն խնդրելու: Նորահարս բոշաները հինգ տարի շարունակ մնում են տանը և խնամում տան երեխաներին, կերակուր պատրաստում, կար անում և այլն, իսկ մյուսները միշտ երկ-երկու ման են գալիս գյուղ ու քաղաք: Բոշա կանայք ձգում են մեջքներին մի մի կաշե պարկ, սուսցած նվերները մեջը դնելու, վրան ամրացնում են մի քանի սալա (տափարակ կողով), ձախ թևերից կախում մի քանի մաղ, որոնցից մի քանիսը երբեմն էլ ուղղակի գլուխներն են անց կացնում, զուլբեն կամ թեղիկը խրում են գոտու մեջ և առնելով հաստ և երկար մահակը՝ այս ու այն տունը մտնում: Փողոցներում երեխաները վազում կամթում են նրանց, որպեսզի իրենց գանակները սրանան, իսկ սրիկաները հազար ու մի անվայել խոսքեր են ուղղում նրանց: Բոշան յուր երկար մահակով «հասցնում է» երեխաներին և սուր պատասխաններ տալիս սրիկաներին: Պետք է ասել, որ սրանք շատ սրախոս են և սարսափելի հայհոյել գիտեն: Մտնելով մի տուն, սրանք առաջարկում են մի քանի բան դնել, և անմիջապես սկսում են դովել իրենց մաղն ու սալեն, կյուն ու ասեղը, որից հետո աննկատելի անցնում են գովալու տանտիկնոջ սիրունիկ աշերն ու բարոսթյունը, նրա վերին աստիճանի ողորմածասիրությունը: Մի բան ծախեն թե չծախեն, սկսում են խնդրել մի կտոր հաց, որն ստանալուց հետո մի կտոր պանիր են աղբրում ավելացնել, սրանից էլ հետո մի հին շոր, որովհետև երեխաները մերկ են, և այսպես շարունակ մինչև վերջնակա նապես մի բանում մերժեն նրանց: Ամբողջ օրը դուրսն անցկացնելով և շներից ազատ տեղերում գուլպա դործելով կամ բուրդ մանելով բոշան վերադառնում է տուն և ամբողջ վաստակը տալիս ծուլ ամուսնուն, որը շատ անգամ գործածում է այն յուր ծխախոտի կամ օղիի համար:

Բոշա կինը սաստիկ ստախոս, շատախոս, խաբեբա և փոքր ինչ գող է, սակայն և այնպես՝ նա սաստիկ բարոյական է:

Ախալքալաքի բոշաները կաղմում են մի փոքրիկ համայնք, որ ենթարկվում են իրենց աթոռակալին: Սա ընտրվում է բոշաներից և հաստատվում Ախալքալաքի գործակալ քահանայից «պահպանիչով»: Սա մեծ հեղինակություն և հարգանք է վայելում բոշաներից և սրա միջոցով են նրանք վերջացնում իրենց ներքին գործերը, խոսվությունները, և այս է պատճառը, որ նրանք երբեք չեն գանգատվում դատարաններում կամ հողևոր ատյաններում:

Ախալքալաքի բոշաները բուրոսվին զուրկ են ուսումից, նրանցից դեռ ոչ ոք կարդալ-գրել չգիտե, դպրոցներում ևս ոչ մի բոշա երեխա չի ուսանում:

Մտավոր սնանկութեան հետ բոշաները կրօնական սնանկութիւնն ևս ունին: Սրանք թեև լուսավորչական են և բավական ջերմեռանդութեամբ հաճախում են եկեղեցի, սակայն քրիստոնեութիւնից շատ քիչ բան է հայտնի նրանց:

Բոշաների բնակարանները բոլորովին նման են հայ գյուղացիների բնակարաններին: Հանդերձները ևս ոչինչով չեն տարբերվում:

Այստեղի բոշաները խոսում են հայերեն, տեղական բարբառով, սակայն մի առանձին արտասանութիւն ունին: Ընտանեկան լեզուն ևս այդ միևնույնն է, միայն երբեմն, երբ հայերից գաղտնի մի բան են ուզում միմյանց հայտնել, խոսում են իրենց, բոշերեն լեզվով: Այս լեզուն պատկանում է հնդկա-եվրոպական գերդաստանին և հետզհետե մոտացվելով՝ այժմ սաստիկ աղքատ է: Ենթարկվելով հայոց լեզվի ազդեցութեան, նա արդեն կորցրել է չուր հոլովման և խոնարհման ձևերը և ընդունել հայկականը: Բոշերեն երգերը այժմ սաստիկ սակավաթիվ են, և մենք կարողացանք հազիվ իրենց բոշաներից լսել հետևյալ երկուսը, որ առաջ ենք բերում այդ լեզվի մասին մի գաղափար տալու նպատակով:

ԱՌՇԱՅԵՐԵՆ ԵՐԳԵՐ

Ա.

Ավե հոսել, կըմրուկ խաթե ակմ՝ ա նեա պարիս պավիս,
(Արի մօտս, երդումն կեք, մեկ էլ չը ընկնիս օտքս)

Աթիս կու քվեմ մերավիթ դողդի կու խալավիթ,
(Ձեռքս կձգեմ քեզ, պատռի կը լեղիդ)

Նուի կայեն, շտար կայեն, յաթմը կայեն, ակ կայեն.
(Երկու անգամ (ժամանակ) չոքս անգամ, հինգ անգամ, մի անգամ)

Ավեր վեսեր էք դուգայիս, զե կու մանկեք տիրավես,
(Իկեր նստեք եմ մօտս, ինչ կուգեք ինձնից)

Մամել կամավտիք փանեցեք, սխալվես ջե խլավես.
(Կալ բաներ ասացեք, գլխես գնա խելքս)

Նուի կայեն, շտար կայեն, յաթմը կայեն, ակ կայեն.
(Երկու անգամ, չոքս անգամ, հինգ անգամ, մի անգամ)

Հանես օղիին պագրեց՝ լում էմ պուշավեցեք տլարիս
(Հովնանեսի որդին ասաց՝ բոշա եմ հարցրեմ անունս)

Կամ մը ջանես յակվին ավե, աթավես լե դմրավիս

(Բան մը գիտես՝ առաջ արի, ձեռքիցս առ սագս)
Նուի կայեն, շտար կայեն, յաթմը կայեն, ակ կայեն.
(Երկու անգամ, չոքս անգամ, հինգ անգամ, մեկ անգամ)

Բ.

Ավե իննավ հոսել, վես դուգայիս,
(Արի, տղա, այստեղ, նիստ մօտս)

Բիեմ մանուս ավե նեա լես տըլարիս.
(Վախենում եմ մարդ գա, շտաս անունս)

Ես բուհու կամ դանեմ նեա ֆենաս թայիս,
(Ես շատ բան գիտեմ շիճես ընկերս)

Հեվիս լորեցիր իսա՝ մանուս ես մանուս,
(Թե որ գտար՝ մարդ ես մարդ)

Ավեմ վեսեմ հոսել կե դարես պաշտաս
(Գամ նստեմ այդտեղ, ինչ ունիս հետս)

Մամլիկարեմ ճահրին բանթեմկու դաստասաս
(Շիճեմ մաղը կապիմ տասը-տասը)

Ճլավ կարե կուչեմ նեա կավես պաշտաս,
(Շատ արա, կէքքամ շես գա հետս)

Հեվիս լորեցիր իսա՝ մանուս ես մանուս.
(Թե որ գտար՝ մարդ ես մարդ)

Ուտտա վանոն պագրեց տիրավեն թանլիս,
(Վարպետ վանոն ասաց իրանից թանլիս—երգ)

Կամ նա ջանես իսա մա պեսիր մաճլիս,
(Բան չգիտես եք որ մի մտնիր կանառ)

Ճուճտովիմ կու պալտատ սընանես կու գիս.
(Կը կովիմ հետդ. կը նանաչես զիս)

Հեվիս լորեցիր իսա՝ մանուս ես մանուս
(Թե որ գտար՝ մարդ ես մարդ):

ՎԻՇԱԿԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԲԱՑԱՐՁԱԿ ԹԻՎ

Ախալքալաքի գավառի բնակիչների թիվը
ըստ 1886թ. աշխարհագրութեան (աղ. 1)

Քաղաքում	89,48
Գավառում	90,58

Ամբողջ գավառում 90,44

ՀԱՍ ՍԵՌԻ

Ախալքալաքի բնակիչների թիվը ըստ սեռի բաժանվում էր 1886 թ. աշխարհագրությամբ.

Քաղաքում	2283 ար.	2020 իգ.
Գավառում	31318 >	28278 >

Միասին 33601 > 30298 >

Ուրեմն՝ 100 բնակիչից

Քաղաքում	54,06 ար.	46,94 իգ.
Գավառում	52,47 >	47,53 >

Ամբողջ գավառում 52,51 > 47,49 >

Եվ հարյուր արական սեռի մարդկանց գալիս է իգական սեռից.

Քաղաքում	88,48
Գավառում	90,58

Ամբողջ գավառում 90,44

Այսպիսով, Ախալքալաքի գավառն այն սակավաթիվ գավառներից միսն է, ուր այդ մարդիկ կանանցից ավելի են:

ՀԱՍ ԱԶԳՈՒԹՅԱՆ

Գավառիս բնակիչները 1894 թ. էին

Ազ. 2

ԱԶԳՈՒԹՅՈՒՆՆԵՐ	Քաղաքում			Գավառում			Ի միասին		
	ար.	իգ.	երկու սեռը միաս.	ար.	իգ.	երկու սեռ միասին	ար.	իգ.	երկու սեռ միասին
1 Հայեր	2278	2012	4290	25196	20321	45312	27474	22333	49807
2 Ռուսներ	35	20	55	3651	3566	7217	3636	4589	7225
3 Վրացիներ	21	24	48	1921	1745	3666	1945	1769	3714
4 Հույներ	15	14	29	11	13	27	29	27	56
5 Իեհներ	4	2	6	—	—	—	4	2	6
6 Քուրդեր	8	14	22	2311	2029	4350	2329	2043	4372
7 Քրդեր	—	—	—	319	271	590	319	271	590
8 Հրեաներ	24	28	52	—	—	—	24	28	52
Բոլորը	2388	2114	4502	33422	27740	61162	35810	30059	65869

Այս աղյուսակից (աղ. 2) երևում է, որ այդ ազգերը կազմում են բոլոր ազգաբնակչության հետևյալ տոկոսը.

Հայեր՝ 71, ռուսներ՝ 11, վրացիներ՝ 5,6, թուրքեր՝ 6,6, մյուս ազգերը՝ 5,8:

Բոլոր ազգաբնակչության համեմատությամբ այս գավառությունների պատկանողները կազմում են (աղ. 4).

ՀԱՍ ԴԱՍԱԿԱՐԳԻ

Ազ. 3

Չափախի բնակիչները բաժանվում են.

ԴԱՍԱԿԱՐԳԵՐ	Քաղաքի			Գավառի			Ամբողջ գավառի		
	ար.	իգ.	երկու	ար.	իգ.	երկու	ար.	իգ.	երկու
Աղյուսակներ									
տոհմական	8	12	20	1	1	2	9	13	22
անձնական	5	4	9	—	—	—	5	4	9
Մահճապահայության բարձր դասակարգ	5	5	10	110	113	224	116	118	234
Հոգևորականությունը հայ լուսավորչական հունարարական	8	7	15	53	45	98	61	52	113
հունարարական	1	1	2	3	3	6	4	4	8
մյուս քրիստոնյաներ	—	—	—	10	6	16	10	6	16
մահճապահայության	—	—	—	9	9	18	9	9	18
Պատվավոր քաղաքացիներ տոհմական	130	106	236	120	105	225	250	202	452
անձնական	—	—	—	—	—	—	—	—	—
վաճառականներ	52	44	96	—	—	—	52	44	96
Բուրժուաներ (bourgeois)	1896	1748	3644	—	—	—	1896	1748	3644
Արքունի գյուղացիներ	—	—	—	31914	28636	60550	31914	28636	60550
Սեփականատեր գյուղացի-գաղթականներ	—	—	—	70	69	139	70	69	139
Պաշտոնավոր և պահեստի թողնված ստորին պաշտոնյաներ	26	14	40	12	11	23	38	25	63
Օտարահպատակներ	69	61	130	8	3	11	77	64	141
Վերաբնակվողներ	199	121	320	26	18	44	228	139	364
Ընդամենը	2392	2123	4522	32337	29019	61356	34736	31133	65869

ՀԱՏ ԴԱՎԱԿԱՆՈՒԹՅԱՆ

Քաղաքիս բնակիչները պատկանում են հետևյալ էկզեզիներին, 1884 թ.

Քաղաքի Քաղաքի Ավերու զավառի	I - Ժամհուրսի Լույ		II - Դոթի Լույ		III - Գործունույ		IV - Ժամհուրսի		V - Դոթի Կաթ		VI - Ժամհուրսի		VII - Գործունույ		VIII - Դոթի		Ընդամենը
	Ար.	Իգ.	Ար.	Իգ.	Ար.	Իգ.	Ար.	Իգ.	Ար.	Իգ.	Ար.	Իգ.	Ար.	Իգ.	Ար.	Իգ.	
	2259	2012	19	10	34	50	—	—	4	2	8	14	—	—	—	—	4454
	21363	16841	3833	3490	1815	3536	3569	—	—	—	2640	3300	—	—	—	—	4454
	23622	18843	3852	3490	2153	1849	3536	3560	4	2	2648	2314	—	—	—	—	61471
	424665		7342		4002		7056		6		4562		72		—		65925

Հայ լուսավորչականներ՝ 64,4, հայ կաթողիկոսներ՝ 11,2, հունադավաններ՝ 6,0, աղանդավորներ՝ 10,8, մահմեդականներ՝ 7,6:

Մյուս աղյուսակից (աղ. 3) երևում է, որ ըստ դասակարգերի ամբողջ ազգաբնակչությունը տալիս է հետևյալ տոկոսը.

Ազնվականներ՝ 0,4, հոգևորականներ՝ 0,2, պատվավոր քաղաքացիներ՝ 0,8, բուրժուաներ՝ 5,5, արքունի գյուղացիներ՝ 91,1, սեփականատեր գյուղացիներ, պաշտոնաթող և պահեստի թողնված ստորին պաշտոնյաներ, օտարահպատակներ և ժամանակավոր ապրողներ՝ 2,0:

ԱՆԱԼՔԱՍՔԻ ԳԱՎԱՐ

Աղ. 5

Առական սեռի բնակիչները ըստ հասակի, 1886 թ. աշխարհագրության համեմատ

Քաղաքում	0-1 տարեկան																
	1-2	2-3	3-4	4-5	5-6	6-7	7-8	8-9	9-10	10-11	11-12	12-13	13-14	14-15	15-16	16-17	
Տարեք	152	74	63	68	54	50	59	45	47	44	29	32	57	48	53	48	54
սուսներ	—	1	1	—	—	1	1	—	1	—	—	—	—	1	1	1	2
վրացիներ	1	1	1	2	—	—	—	—	—	—	1	1	—	—	—	—	1
հույներ	1	—	—	—	—	1	—	—	1	2	1	—	—	—	—	—	1
հրեաներ	2	3	3	1	1	—	—	—	2	—	—	—	—	—	—	—	—
թուրքեր	—	—	—	—	—	—	1	—	—	—	—	—	—	—	—	—	—
բոլոր	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—
Գաղառում	156	80	68	71	55	52	61	45	51	46	31	33	58	49	56	49	58
	3002	1130	976	871	845	846	791	852	596	729	535	396	817	684	772	802	743
Ընդամենը	3158	1210	1044	942	900	898	852	897	647	785	566	429	875	733	828	851	80

Այս աղյուսակը (Աղ. 5 և 5 ա) միջոց է տալիս բնակիչներին տնտեսական տեսակետից բաժանել հինգ խմբերի. ա) մինչև 15 տարեկաններ, այսինքն այնպիսիք, որոնք դեռ չեն հասնել այն հասակին, որ իրենց աշխատանքով փոխարինեին այն, ինչ հասարակությունը կծախսեր նրանց

պահպանության համար. բ) 15—20 տարեկաններ, այսինքն ինքնուրույն տնտեսական կյանքի համար պատրաստվածներ. գ) 20—60 տարեկաններ, այսինքն ուժերի զարգացման և գործունեության կատարյալ շրջանին պատկանողներ. դ) 60—70 տարեկաններ, այսինքն ուժերի սպառման շրջանում գտնվողներ և ե) 70 տարեկանից ավելիներ, որոնք արդեն դադարել են աշխատելուց:

Աղ. 5ա

17—18	18—19	19—20	21—30	31—40	41—50	51—60	61—70	71—80	81—90	91—100 տ. և ավելի	Ընդամենը արական սեռի	Ընդամենը իգական սեռի	Բոլորը երկու սեռի
60	49	45	390	287	202	101	38	6	5	—	2160	1919	4179
—	2	—	4	6	1	5	6	3	—	—	38	23	61
1	1	1	6	4	4	2	—	—	—	—	27	25	52
1	—	—	4	3	4	1	—	—	—	—	22	18	40
—	—	—	3	3	6	—	—	1	—	—	25	28	53
—	—	—	1	1	1	—	—	—	—	—	4	6	10
—	—	—	4	1	—	—	—	—	—	—	5	—	5
61	52	46	412	309	215	109	45	10	5	—	2283	2020	4303
790	675	707	5106	3728	2433	1463	625	138	52	6	31218	28278	59496
851	727	753	5518	4037	2648	1572	670	248	57	6	33501	30293	63799

Այսպես ուրեմն, մեր հետազոտած զավառում բնակիչներն այդ հինգ դասակարգերի վրա այսպես են բաժանվում.

Քաղաքում		Քաղաքում		
բացարձակ թիվ	%	բացարձակ թիվ	%	
0—15 տարեկ.	912	39,9	14742	46,9
16—20 »	266	11,7	2915	9,3
21—60 »	1045	45,8	12730	40,5
61—70 »	45	2,0	635	2,1
70 և ավելի »	15	0,6	196	0,7

ԱԶԳԱԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԾԱՌԹՈՒՄԸ

ԱՄՈՒՍՆՈՒԹՅՈՒՆ

Ախալքալաքի զավառում միջին թվով տարեկան ամուսնանում են 521 զույգ, որ հասակի համեմատ հետևյալ կերպով են դասավորվում.

	Արական	Իգական
12—15 տարեկան	—	15
15—20	124	343
20—25	176	111
25—30	155	20
30—35	43	15
35—40	10	7
40—45	7	6
45—50	3	3
50—55	3	1
	521	521

Մրանից հետևում է, որ ամուսնացողները ըստ հասակի կազմում են հետևյալ տոկոսը.

	Արական	Իգական
15—20 տարեկան	23,8	65,8
20—25	33,8	21,3
25—30	29,8	4

Ըստ ազգությունների ամուսնացողների թիվը դասակարգելու համար մենք գտանք միայն նադեժդինի հետևյալ, 1876—1880 թվականների ամուսնության աղյուսակը.

	Մինչև 20 տարեկ.	20—40	40—60	բոլորը
Հայեր	1274	310	23	1607
Վրացիներ	87	49	1	137
Սահմեղականներ	162	76	6	244
Ընդամենը	1523	435	30	1988

ԾՆՆՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Ախալքալաքի ամբողջ զավառում 1886—1890 թվականներին եղել են ծնունդներ՝

1888 թվին	3116
1887 »	3481
1888 »	3352
1889 »	3383
1890 »	3291
<hr/>	
Հնգամենը՝	16623
Ուրեմն՝	
Միջին թվով՝	3324

Հետևապես գավառի ընդհանուր ծննդաբերությունը հասնում է 4,63 կամ յուրաքանչյուր հազար բնակչին զալիս է 46,3 ծնունդ: Ուրեմն այս գավառի ծննդաբերությունը 8,8 բարձր է յուր, Թիֆլիսյան նահանգի ընդհանուր ծննդաբերությունից (37,5), ինչպես նաև նույն նահանգի մյուս գավառներից:

Հստ ազգության ծնունդների թիվը, նաղեծղինի 1875—80 թ. հետազոտության համաձայն այսպես է դասակարգվում:

	Բնակչության թիվը	Ծնվել է		Մի ծնունդ ընկնում է քանի բնակչ.	1000 բնակչից ծնվել է
		տարբուր	տարբուր		
Հայեր	29919	7382	1476	20,2	49,1
Վրացիներ	3532	683	136	26,3	38,1
Մանկղականներ	6267	1089	218	28,5	35,1
Հնգամենը՝	39718	9155	1831	21,7	46,1

Հայերից ծնվում են 49,1, վրացիներից հազար հոգուն՝ 10,6 և մանկղականներից՝ 13,8 ավելի և հազար հոգուն 6 ավելի ամբողջ նահանգում ծնված հայերից (42,8): Վրացիների և մանկղականների այս գավառի ծնունդների թիվը՝ 38,5 և 35,3, նույնպես բարձր է ամբողջ նահանգի միևնույն ազգերի ծննդաբերության թվից՝ 36,8—31,8 յուրաքանչյուր հազար բնակչին²⁰:

Կանանց թվի համեմատությամբ ընդհանուր արգասավորությունը երևում է հետևյալ աղյուսակից.

²⁰ Надежин, Описание Тифлисской губернии.

	Կանանց թիվը	Ծնունդների տարեկան միջին թիվը	Մի ծնունդ ընկնում է կանանց	1000 կանանցից ծնվել են
Հայեր	14036	1476	9,5	105
Վրացիներ	1666	136	12,3	81
Մանկղական.	3164	218	14,3	69
Հնգամենը՝	18866	1831	10,1	97

Այսպիսի զավառում արգասավորությունը՝ հազար հոգուն Ու ծնունդը, նրա նահանգի ընդհանուր արգասավորությունից (80) բարձր է:

Հայերի արգասավորությունը (105) բարձր է ինչպես գավառի մյուս բոլոր ազգությունների, այնպես և նրա ամբողջ նահանգի հայերի ընդհանուր արգասավորությունից (89՝ հազար կնոջ):

Ամիսների համեմատ ծնունդների թիվը 1875—1880 թվականներում այսպես է դասակարգվում²¹.

Ծնունդ	Հոգ.թ.	Հայեր		Վրացիներ		Մանկղական.		Բոլորը	
		ար.	իգ.	ար.	իգ.	ար.	իգ.	ար.	իգ.
Հունվ.	Ապրիլ	378	232	34	29	50	46	462	407
Փետրվ.	Մայիս	334	315	34	32	55	48	423	395
Մարտ	Հունիս	330	985	30	32	58	57	418	374
Ապրիլ	Հուլիս	279	239	27	29	56	54	362	322
Մայիս	Օգոստ.	295	251	36	26	54	44	385	321
Հունիս	Սեպտ.	301	259	21	23	44	43	866	325
Հուլիս	Հոկտ.	314	275	21	26	46	36	381	337
Օգոստ.	Նոյեմբ.	345	301	23	26	52	40	420	367
Սեպտ.	Դեկտ.	337	322	23	26	35	32	395	380
Հոկտ.	Հունվ.	344	323	32	22	51	38	521	383
Նոյեմբ.	Փետրվ.	354	311	29	22	48	41	431	399
Դեկտ.	Մարտ.	299	340	42	38	42	19	385	391
Բոլորը		3910	3473	352	331	591	498	4833	4302

²¹ Пантюхов Н. И., Ахалкалакский уезд, медико-антропологический очерк, Тифлис, 1892.

Այս աղյուսակից հետևում է, որ ծնունդների թիվը յուր մաքսիմումին հասնում է հունվարին (հղությունը պատահում է ապրիլին, երբ գյուղացիներն արդեն ցանած են լինում արտերը), իսկ մինիմումին իջնում է հունիսին (հղությունը պատահում է սեպտեմբերին, գյուղացիների աշխատանքի ամենասաստիկ ժամանակ):

Բացի սրանից, այս աղյուսակից հետևում է, որ հարյուր արու երեխաների համար. ծնվում են 89 աղջիկ. ամենաքիչը մահմեդական վրացիների՝ 84 և ամենաշատը՝ հունազավան վրացիների մեջ՝ 94:

ՆՆՁԵՑՑԱԼՆԵՐ

Ախալքալաքի զավառում հինգ տարիների ընթացքում եղել են հետևյալ թվով ննջեցյալներ.

	Արական	Իգ.	Միասին
1886 թվին	944	796	1637
1887 »	842	799	1641
1888 »	991	753	1744
1889 »	1300	1273	2573
1890 »	952	767	1719
Ընդամենը՝	5025	4388	9314
Ուրեմն			
Միջին թիվ.	1005	877	1883

Հետևապես և՛ յուրաքանչյուր հազար բնակիչից մեռնում է 25.3 մարդ: Հարյուր տղամարդի համար. մեռնում է 89 կին:

Վերահիշյալ թվերն են ստացել եմ տեղական ոստիկանատնից, իսկ աղտոթյունների, ամիսների և հասակի համեմատ ննջեցյալների թիվն այնտեղ շղտնելով, ես ստիպված քաղում եմ Պանտյուխովի հիշած նաղեժդինի հետազոտությունից²²:

Այսպես՝ հինգ, 1875—1879 թթ. ընթացքում ամիսների և աղտոթյունների համեմատ եղել են ննջեցյալներ (աղ. 6)

Ամենից շատ մահ պատահում է հունվարին—10,6% և մարտին—10,5%, իսկ ամենից քիչ՝ նոյեմբերին—7% և դեկտեմբերին—5,7% տարեկան միջին թվով: Ուշադրության արժանի է, որ մայիս, հունիս, հուլիս և օգոստոս ամիսներին, երբ կանանց տնային աշխատանքների

	Հայեր		Վրացիներ		Մահմեդական		Բոլորը	
	ար.	իգ.	ար.	իգ.	ար.	իգ.	ար.	իգ.
հունվար	267	234	17	11	77	73	361	318
փետրվար	108	180	9	11	67	44	284	235
Մարտ	262	217	12	15	93	59	367	291
Ապրիլ	233	231	9	8	38	38	310	277
Մայիս	232	231	15	10	26	32	273	274
հունիս	196	186	16	18	28	45	240	249
հուլիս	209	198	11	9	22	42	242	247
Օգոստոս	265	266	7	20	54	41	328	327
Սեպտեմբեր	217	202	7	4	31	32	255	238
հոկտեմբեր	225	151	6	11	34	31	265	223
նոյեմբեր	193	178	5	11	28	31	226	220
Դեկտեմբեր	160	135	11	9	19	31	190	175
Բոլորը	2699	2439	125	137	517	499	3341	3075
երկու սեռից	5138		262		1016		6416	

վրա ալելանում են և դաշտային աշխատանքները, կին ննջեցյալների թիվը կամ հավասարվում, կամ անցնում է տղամարդկանց թվից: Հայ և մահմեդական ննջեցյալների թվերն ըստ ամիսների համապատասխանում են, իսկ հունազավան վրացիների ննջեցյալների թիվը, գուցե, պակաս բարձրության և առողջարար տեղերում բնակվելու պատճառով, տարբերվում է բնդհանուրից և ամենաբարձրը լինում է հունիսին 13% տարեկան, միջին թվով:

Ըստ հասակի և ըստ աղտոթյունների հինգ տարվա ընթացքում եղել են ննջեցյալներ (աղ. 7):

Հասակը	Հայեր		Վրացիներ		Մահմեդ.		Բոլորը	
	ար.	իգ.	ար.	իգ.	ար.	իգ.	ար.	իգ.
1	2	3	4	5	6	7	8	9
մինչև 1 տարեկ.	518	433	7	6	63	56	588	495
1—2 տարեկան	525	467	23	18	67	73	615	658
2—3 »	375	336	18	22	46	42	439	400

²² Пантюхов И. И. Ахалкалакский уезд. медико-антропологический очерк, Тифлис, 1892.

1	2	3	4	5	6	7	8	9
3-4	190	195	9	12	27	32	226	230
4-5	150	124	2	5	20	25	172	154
5-10	252	194	16	13	46	53	324	260
10-15	84	66	8	9	26	25	118	100
15-20	50	47	5	5	19	8	74	60
20-25	41	44	4	2	15	25	68	71
25-30	48	70	7	5	20	17	75	92
30-35	41	74	3	7	12	25	64	106
35-40	41	58	1	3	17	22	59	83
40-45	41	62	4	5	27	12	72	79
45-50	36	37	3	3	15	9	54	49
50-55	46	37	—	8	19	10	63	55
55-60	20	17	3	2	8	15	31	34
60-65	43	35	4	4	15	16	62	55
65-70	32	17	3	3	14	9	49	29
70-75	51	47	4	4	16	8	71	59
75-80	29	20	1	—	7	8	37	28
80-85	27	30	—	1	14	4	41	35
85-90	10	9	—	—	1	3	11	12
90-95	14	8	—	—	1	—	14	—
95-100	4	8	—	—	1	—	6	8
100 և ավելի	5	4	—	—	1	2	6	6
Ընդամենը	2699	2439	125	137	517	499	3341	3075

Հայերից 25—50 տարեկան կանայք ավելի են մեռել, քան թե տղամարդիկ, այսպես՝ 100 տղամարդու հմմտ. մեռել են կանայք՝ 25—30 տ.—144, 35—40 տ.—140, իսկ բոլորը՝ մինչև 50 տար.—124: Վրացիների մեջ տղամարդկանց համեմատությամբ կանայք ամենից շատ մեռնում են 35—40 տարեկան հասակում, հարյուր տղամարդի հմմտ. 160 կին, իսկ մահճակալանների մեջ 35—40 տ. հասակում հարյուրին՝ 164 կին: Մենդաբերության հասակում կանայք անհամեմատ ավելի են մեռնում:

Ըստ հասակի և ազգությունների բոլոր ննջեցյալներից յուրաքանչյուր հազարին ընկնում է (աղ. 8):

	Հայեր	Վրացիներ	Մահճակալաններ
Մինչև 1 տար.	186	49	115
1-2 „	195	157	136
2-3 „	138	155	84
3-4 „	74	79	56
4-5 „	53	27	45
5-10 „	89	111	99
10-15 „	29	65	51
15-20 „	19	39	27
20-25 „	18	23	40
25-30 „	23	45	37
30-40 „	44	52	76
40-50 „	34	57	63
50-60 „	23	49	52
60-70 „	25	52	54
70-80 „	29	35	39
80-90 „	15	4	21
90-100 „	6	—	2
100 ավելի „	1	—	3

Մինչև մի տարեկան երեխաներ վրացիների մեջ մեռել են երկու անգամ ավելի քիչ, քան թե մահճակալանների մեջ և երեք անգամ ավելի քիչ, քան թե հայերի մեջ. իսկ մինչև հինգ տարեկան երեխաների մահվան տոկոսը հայերի մեջ է 64, վրացիների մեջ՝ 46, մահճակալանների մեջ՝ 44. իսկ ծննդից մինչև տաս տարեկան երեխաներինը հայերի մեջ՝ 73, վրացիների մեջ՝ 57, մահճակալանների մեջ՝ 53:

Ախալքալաքի գավառում մանուկների մահն ավելի սաստիկ է ոչ միայն Թիֆլիսյան նահանգի բոլոր գավառներից, այլև Ռուսաստանի մանուկների մահից: Այսպես՝ ըստ հասակի բոլոր ննջեցյալներից յուրաքանչյուր հարյուրին ընկնում է (աղ. 9):

	0-10 տ.	10-20 տ.	20-50 տ.	50-70 տ.	70-100 տ.
Ախալքալաքի բազաք	70	2	13	5	10
Ախալքալաքի գավառ	69	5	13	6	5
Ախալքալաքի գավառ	48	6	25	12	7
Տիոնեոու գավառ	27	9	33	17	12
Քիֆլիսի նահանգ	41	8	29	14	7
Ռուսաստան	62	4	15	12	6

Մնունդների թիվը համեմատելով ննջեցյալների թվի հետ, կտեսնանք ազգաբնակչության տարեկան միջին անը:

Աղ. 10

	Մոլորակ են	Մեռել են	Տարեկան ավելաց. են	1000 բնակչ. արեկանը. են
Հայեր	1476	1027	449	15
Վրացիներ	136	52	84	23
Մահմեդական.	218	293	515	2
Բոլորը	1831	1282	549	14

Ազգաբնակչության ընդհանուր անձամբ գավառում հասնում է հազարին 14, զրեթե հավասար նահանգի միջին անձան (15). բոլոր ազգությունների հայերի անձամբ հավասար է նույն նահանգի հայերի անձան, վրացիների անձամբ՝ 23, բարձր է նույն նահանգի վրացիների անձամբ (12), իսկ մահմեդականների անձամբ՝ 2, պակաս է նույն նահանգի նրանց անձամբ (4): Որովհետև վրացիների անձան թվերը շատ քիչ են, ուստի սրանք չեն կարող արտահայտել ամբողջ գավառի վրացիների անձամբ, բայց հայերի անձամբ, որ համարյա ութ անգամ ավելի է մահմեդականների անձամբ, ցույց է տալիս այս վերջիններիս կենսաբանական և առողջապահական պայմանների սաստիկ խղճալի դրությունը:

ՋԱՎԱԽՔԻ ԲՆԱԿԱՆ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՈՒԺԵՐԸ ԵՎ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Ա. ԳՅՈՒՂԱՑՎՈՑ

Ախալքալաքի գավառի բնակիչները դիտարկության պարապում են Լրկրագործությունը, այգեպանությունը և պարտիզպանությունը:

Ամբողջ գավառի հողը հաշվվում է 2650 քառ. վերստ, որից Լրկրագործության համար հարմար է միայն 81613 դեսյատինը: Այս հողից 42641 դեսյատինը արբունական է, իսկ 38972 դեսյատինը կալվածատերերի է պատկանում:

Պ. Վերմիշևի հետազոտության համաձայն, այս գավառի բնակիչներին բաշխված է հետևյալ քանակությամբ և տեսակի հող (աղ. 11):

Աղ. 11

	Բնակատեղի	Այգու	Վարելահող		Չայր	Բուրբ վարելահող, չարիք և այգու	Արտատեղի և անհարթություն	Ընդամենը
			Ձրարբի	Անջրգի				
Բացարձակ թիվ դեսյատինի	814,5	613,5	183	44163,7	11197,7	56162,9	33976,8	90954,20
Ամբողջ բաշխված հողի համեմատությունը %	0,89	0,67	0,2	48,56	12,30	62,62	37,38	

Այս աղյուսակից երևում է, նախ, որ թեև այս գավառում բավական տեղ են բռնում այգիները, բայց համեմատելով ամբողջ տարածության հետ մի տոկոս էլ չեն կազմում:

Երկրորդ, որ այս գավառում ջրարբի արտեր համարյա չկան: Երրորդ, որ անհարմար հողը բոլոր հողի 1/3-ից փոքր ինչ ավելի է: Չորրորդ, որ վարելահողը, պարտեզի, այգու և շայրի հողերը հարաբերում են արտատեղերին և անհարմար հողերին այնպես, ինչպես՝ 1:0,6 և

Հինգերորդ, որ շայրները համեմատաբար շատ են, և սրա պատճառն այն է, որ դուխորները շատ արտեր շայրներ են գարձրել:

Տեսնենք, թե յուրաքանչյուր տանը և յուրաքանչյուր հողուն որքան բաշխված հող է բնկնում (աղ. 12):

Վարելահող, շալիք և այլի			Բուրբ հողք		
Ծուխին	Մի հողուն երկու սեռից	Մի աշխա- տավորին	Ծուխին	Մի հողուն երկու սեռից	Մի աշխա- տավորին
12,91	1,43	4,27	20,90	2,32	6,92

Այս աղյուսակից (աղ. 12) երևում է, որ գյուղացիք շատ քիչ հող ունեն:

Այժմ տեսնենք, թե բաշխված հողն ինչպես է բաժանված դանա-
զան գյուղերում: Հետագա աղյուսակներում (աղ. 13, 14, 15) Պ. Վերմի-
շևը գյուղերը դանազան խմբերի է բաժանել, նայելով, թե յուրաքանչյուր
ծուխին, մի հողուն (երկու սեռից) և մի աշխատավորին որքան հող է
ընկնում:

Ախալքալաքի գավառում ամենից շատ են այն գյուղերը, որոնք
ունեն յուրաքանչյուր ծուխին 10—15 դեսյատին հարմար և 10—15 դ.
անհարմար հող, երկու սեռից յուրաքանչյուր հողուն 1—2 դ. հարմար,
այսինքն վարելահող, շալիք և այլու և այդչափ էլ բոլոր տեսակ հո-
ղերից: Յուրաքանչյուր աշխատավորին 3—5 դ. հարմար, և այդչափ էլ
բոլոր հողերից (աղ. 16, 17, 18):

Քացի հողի սակավութունից, երկրի կլիման և սաստիկ արգելք է
լինում երկրագործությամբ պարապելու:

Շատ տարիներ վաղահաս ցրտերը, երաշտը, հաճախ տեղացող
կարկուտը և դաշտերի մկներն ահագին վնասներ են տալիս ցանքսերին:
Ցրտերի պատճառով աշնանացան համարյա չեն անում, այլ շատանում
են միայն գարնանացանով:

Նվ բացի այն, որ մշակում են հողը բոլորովին նահապետական
ձևով, անասնոց ազբով էլ չեն սլարարտացնում, որովհետև գավառում
անտառներ չլինելու պատճառով անասունների ազբը վտելու համար
են գործածում:

Աղ. 13
Երկու սեռից յուսամեջուր հողուն ընկած բաշխված հողի ֆակտորները.

Վարելահող այլի և շալիք	Բուրբ հող	
	1/4 դոն	Գյուղերի թիվը
10—10,5	1	1
9,5—10	—	—
9—9,5	—	—
8,5—9	—	—
8—8,5	—	1
7,5—8	1	—
7—7,5	1	1
6,5—7	—	1
6—6,5	—	—
5,5—6	—	1
5—5,5	—	—
4,5—5	—	3
4—4,5	—	2
3,5—4	2	3
3—3,5	—	3
2,5—3	7	6
2—2,5	2	7
1,5—2	11	21
1—1,5	31	13
0,5—1	11	4
0,5	3	2
1/4 դոն	1	—

Այս աղյուսակներից մենք տեսնում ենք, նախ՝ այն գյուղերի թիվը, որոնց յուրաքանչյուր ծուխն ունի (աղ. 16): Երկրորդ՝ այն գյուղերի թիվը, որոնց երկու սեռի բնակիչներից յուրաքանչյուրին ընկնում է (աղ. 17):

Աղ. 16

		1-5 դ.	5-10	10-15	15-20	20-30	30-ավելի
Բուրք հող	Վարելանոց չափը և այգու.	4	17	28	10	7	3
		1	4	19	16	15	14

Աղ. 17

		Միսն և 1 դ.	1-2	2-3	3-4	4-5	5-ավելի
Բուրք հող	Վարելանոց չափը և այգու.	15	42	9	2	1	—
		6	34	13	6	10	—

Երրորդ, այն գյուղերի թիվը, որոնց յուրաքանչյուր աշխատավորին ընկնում է (աղ. 18):

Աղ. 18

		Միսն և 1 դ.	1-3	3-5	5-7	7-10	10-ավելի
Բուրք հող	Վարելանոց չափը և այգու.	2	15	35	11	4	2
		—	5	21	20	9	14

Բացի ցորենից, ցանում են գարի, որ լեռնոտ և դուխորունների գյուղերում աղում և հաց են թխում, կտավատ, որից ձեթ են հանում, և կարտոֆիլ: Թի որքան տեղ են բռնում սրանցից յուրաքանչյուրը, ցույց է տալիս հետևյալ աղյուսակը (աղ. 19):

Աղ. 19

	Յուրեն	Գարի	տարածուկ	Միջատածուկ
Բացարձակ թիվ՝ դեսյատինով հաշված	42730	36230	1863	790
% բոլոր հողի համեմատությամբ	52,35	44,43	2,37	0,85

Հինգ տարիների ընթացքում ստացված է ցորեն և գարի.

1885 թվին	507 826	չեռվերս
1886 »	355 700	»
1887 »	214 176	»
1888 »	230 787	»
1889 »	283 037	»

Ուրեմն	{ ընդամենը	1 591 526	չեռվերս
	{ միջին թ.	318 305	»

Գավառում օդու գործարաններ չկան, և օդի քաշելն ու երկրագործությունն այստեղ միմյանց հետ կապ չունին: Ավելացած ցորենն առավելապես կավում է արտաքին վաճառականության նյութը:

Այգեպանությունը պարապում են իջրթըզու ձորակում և իզարավրա ու Սարո գյուղերում: Ամբողջ գավառում ընդամենը 274 այգի կա, որ բռնում է 613,5 դեսյատին տեղ: Սրանից 36 դեսյատինը միայն բռնված է խաղողի որթերով, մնացած տարածության վրա աճում են կեռասի, հոնի, խնձորի, տանձի, սերկևիլի, դեղձի, ծիրանի, թթի, կաղինի և ընկուզի ծառեր:

Բացի այն, որ այս մրգերը թարմ-թարմ վաճառում են գավառում, Քիֆլիսում ու Աղեքսանդրապոլում, այլև պատրաստում են բաքմազ, պաստեզ, բյոմա և փարվարդա:

Խաղողից գինի են քաշում, սակայն սա թույլ և մինչև անգամ փոքր ինչ թթվաշ է լինում, որովհետև ամռան վերջին ցուրտը շուտ ընկնելու պատճառով խաղողը դեռ շնասած են քաղում, ուստի և չի արտահանվում և սպառվում է միայն զավառներում:

Հինգ տարիներին բաշված է հետևյալ քանակությամբ գինի.

1885 թվին	120 վեզրո՝
1886 »	81 »
1887 »	167 »
1888 »	143 »
1889 »	450 »
<hr/>	
Ուրեմն	{ ընդամենը՝ 961 վեզրո՝
	{ միջին թվով՝ 192,2 »

Այգու մրգերի վաճառումից հինգ տարվա ընթացքում ստացվել է.

	Փուխ	Արժեք	
		Ռուբլի	Կոպ.
1885 թվին	12000	6000	—
1886 »	10000	5000	—
1887 »	6500	3250	—
1888 »	14000	7000	—
1889 »	17000	8500	—
<hr/>			
Ուրեմն	{ ընդամենը 59500	29750	—
	{ միջին թ. 11900	5900	—

Խրրթըզ, Մարգաստան, Նաբալաբև, Մունդա և այլ մի բանի գյուղերում մշակվում է և ծխախոտ:

Այս տարի ծխախոտի արդյունաբերությունը թեև անցյալ տարվանից փոքր ինչ պակաս է, բայց նախորդ տարիներից անհամեմատ լավ է: Հինգ տարիների ընթացքում արդյունաբերված է ծխախոտ.

	Փուխ	Արժեք	
		Ռուբլի	Կոպ.
1885 թվին	45	225	—
1886 »	70	350	—
1887 »	19	76	—
1888 »	650	2480	—
1889 »	500	2000	—
<hr/>			
Ուրեմն	{ ընդամենը 1284	5131	—
	{ միջին թ. 257	1026	20

Առավելապես լեռնային և դուխոբուրների գյուղերում պարապում են պարտիզպանությամբ, ցանում են մեծ քանակությամբ կարտոֆիլ, կաղամբ, տակ, զագար, շագգամ, սոխ, համեմներ և այլն:

Հինգ տարիների ընթացքում բաղված է պարտիզի բույսերից հետևյալ քանակությամբ.

	Փուխ	Արժողու- թյուն	
		Ռուբլի	Կոպ.
1885 թվին	6035	1974	—
1886 »	5926	775	—
1887 »	4541	455	—
1888 »	3863	876	—
1889 »	3698	1939	—
<hr/>			
Ուրեմն	{ ընդամենը 24063	6019	—
	{ միջին թ. 4812	1204	—

Կլիմայի ցրտության և եղանակի արագ փոփոխվելու պատճառով գյուղատնտեսության այս ճյուղը մի առանձին օգուտ չի տալիս, որովհետև բույսերը հաճախ մրսում են:

Վերջապես խոտի արդյունաբերությունը հինգ տարիների ընթացքում Լղած է.

1885 թվին	950 500
1886 »	870 000
1887 »	619 880
1888 »	572 119
1889 »	391 308

Արևմտյան	Ընդամենը՝	3403 807
	Միջին թվով՝	680 761,4

Ախալքալարի զավառում կառավարության ջանքերով հիմնված են հասարակական շտեմարաններ: Տուրքանշյուր ծուխ չուր երկու սեռի անդամների թվի համեմատ յուրաքանչյուր տարի կալի ժամանակ տալիս է 0,5 կոտ ցորեն և 1/4 կոտ գարի: Այս ցորենն ու գարին պահում են հասարակության ընտրած շտեմարանապետները, և կամ կառավարությունը վաճառում ու գրամն սրբունի զանձարանում շահեցնում է, սովի կամ այլ հասարակական թշվառության ժամանակ տվողներին հաշվով վերադարձնելու նպատակով: Այժմ սրանից մոտ 180 000 ո. գումար է գոյացած:

ԱՆԱՆԱՊԱՀՈՒՓՅՈՒՆ

Երկրագործությունից հետո ժողովրդյան ղլխավոր սլարապմունքն է անասնապահությունը: Արքունի և աղայապատկան արոտատեղերը 39350, ձմեռանոցները 3725 և շալիքները 11090 դեպատին տարածություններ, նպաստում են անասնապահության զարգացմանը:

Քաղաքում և զավառում անցյալ 1889 թվին կար.

	Անասունների թիվը					
	Տավար	Խաչն ու անդեայթ	Ձիեր	Ղաթըններ	Եշեր	Խոզեր
Ախալքալար քաղաքում	440	—	96	1	130	20
Ախալքալարի զավառում	40978	100516	9468	3	960	—
Ընդամենը՝	41418	100516	9564	4	1090	20

Հետևյալ աղյուսակից երևում է, թե քանի անասուն է ընկնում գյուղացիներից յուրաքանչյուր ծուխին և երկու սեռի յուրաքանչյուր հոգուն.

Ծուխին			Երկու սեռի յուրաքանչ. հոգուն		
Տավար	Խաչն ու անդեայթ	Ձի և էշ	Տավար	Խաչն ու անդեայթ	Ձի և էշ
6	14,7	1,5	0,7	1,7	0,2

Այս աղյուսակը ցույց է տալիս, որ անասնապահությունն ևս այնքան զարդացած չէ, և սրա ղլխավոր պատճառն այն է, որ արքունի արոտատեղերը փոխանակ ժողովրդյան մատչելի գնով տալու՝ անուրդի են դնում, որ շատ անգամ, սաստիկ բարձրանալով, ձեռնտու չի լինում անասուններ պահել կամ ավելացնել:

Մեղվապահությունը թեև զավառում բավական տարածված է, բայց և այնպես ժողովրդյան բարօրության մի նշանավոր աղբյուր չէ: Համարյա բոլոր փոքր ի շատե ունեւոր գյուղացիները ունին մի քանի փեթակ. ստացած մեղրը ղլխավորապես իրենք տերերն են սպառում և միայն մի մասն են ծախում: Մի փեթակից ստացվում է մոտ 35 գրովանքա մեղր, թեև մինչև 2 փութ ևս տվողներ լինում են:

Մեղվապահության դրույթունը հինգ տարիների ընթացքում եղել է.

	Տերերի թիվը	Փեթակ թիվը	Մեղրը՝ փթով հանված
1885 թվին	208	966	220
1886 »	271	984	225
1887 »	235	1078	283
1888 »	243	1137	207
1889 »	246	1154	311
Ընդամենը՝	1203	5319	1246
Միջին թ.	241	1064	249

Մեղվապահության չզարգանալու պատճառը՝ դարնան ցուրտ եղանակը և հետո երաշտն է:

Թռչնապահութիւնը բավական մեծ դեր է խաղում գյուղական կյանքի մեջ և հետզհետե ավելի ու աւելի զարգանում է: Գյուղացիք պահում են հազ, հնդկահազ, սագ և բադ:

Թռչնապահության զարգացման պատճառն այն է, որ մեծ քանակութեամբ թռչուններ և ձկնի տարվում են Ախալցխա, Արասթուման և Թիֆլիս: Յուրաքանչյուր ընտանիք պահում է 15-ից ոչ պակաս հազ, մի քանիսը՝ մինչև 50:

Ջրառատ գոտիներում գյուղացիք պահում են սագեր: Առավելագին մեծ քանակութեամբ սագեր պահում են գոխորուները և հետևյալ հայաբնակ գյուղերը՝ էշտիա, Կարտիկամ, Կուլիկամ, Բավրա, Զակ, Կորիս, Օրճա, Մերիսիա և Վարևան:

Հնդկահազ պահում են միայն վրացիները:

Բադ շատ քիչ գյուղերում է պահվում, և այն էլ սակավաթիվ:

Ձկնորսութեամբ սլարապում են լճափնյա գյուղացիք և մանավանդ դուխորուները:

Բնակիչների ասելով, բռնած ձկների մեծ մասը իրենք են գործածում, միայն մի փոքր մասն է վաճառքի հանվում:

Վերջին հինգ տարիներս ձկնորսութեամբ սլարապել են.

1885 թվին	164 մարդ
1886 »	200 »
1887 »	153 »
1888 »	167 »
1889 »	197 »

Ուրեմն { ընդամենը՝ 881
միջ. թվով՝ 174

Որսորդութեամբ սլարապողների թիվը ևս մեծ չէ. վերջին հինգ տարիների ընթացքում սլարապել են.

1885 թվին	169 մարդ
1886 »	122 »
1887 »	113 »
1888 »	156 »
1889 »	173 »

Ուրեմն { ընդամենը՝ 733
միջ. թվով՝ 146

Գլխավորապես որսում են աղվես, երբեմն էլ գայլ և կզաքիս:

Ժողովուրդը սլարապում է նաև բեռնակրութեամբ. դուխորուները ձիաբարձ ֆուրգոններով, մյուս ազգերը սայլերով և բեռնակիր ձիերով

տեղափոխում են ամեն տեսակ ծանրութիւններ Թիֆլիս, Ալեքսանդրապոլ, Կարս, Արգահան, Ախալցխա և Սիխալովկա՝ Փոթի, Թիֆլիսյան երկաթուղու կայարանը:

Մանրութիւններ տեղափոխողների թիվը հինգ տարիների ընթացքում եղել է.

	Յիւրաքանչյուր տարի	Սպան թիւը	Բեռնակիր ձիերով
1885 թվին	278	1474	182
1886 .	313	1533	204
1887 .	448	1629	175
1888 .	460	1676	168
1889 .	479	1697	170

Ուրեմն { ընդամենը՝ 1977 | 8009 | 899
միջ. թիվը՝ 395 | 1602 | 179

Ախալքալաք բերում ծախում են՝ վառելիափայտ, քակոր և շինութեան փայտ: Սրանով սլարապողները եղել են.

1885 թվին	2195 մարդ
1886 »	2220 »
1887 »	2319 »
1888 »	2376 »
1889 »	2415 »

Ուրեմն { ընդամենը՝ 11320
միջին թիվը՝ 2264

Արթեհանգ: Դեռ քանի Ախալքալաքի գավառում նավթի գործածութիւնը չէր ընդհանրացել, և սրա փոխարեն գործ էր անվում ձեթ, ձիթեհանքերը բազմաթիվ, և նրանց արդյունքն էլ բավական մեծ էր. բայց այժմ հետզհետե ընկնում է:

Ամբողջ գավառում այժմ կա 43 ձիթեհանք, որոնցից յուրաքանչյուրը տարեկան մոտավորապես արդյունք է տալիս 800 ուրլի:

Հինգ տարիների ընթացքում այս ձիթեհանքերում աշխատել են.

1885 թվին	139 մարդ
1886 »	145 »
1887 »	116 »
1888 »	204 »
1889 »	195 »

Ուրեմն	լընդամենը՝	790
	միջին թիվը՝	159

Չրադաց: Ամբողջ գավառում ոչ մի շոգեշարժ չըրադաց չկա, բոլորն էլ դառնում են ջրով: Սրանց թիվն այժմ հասնում է 297-ի, և յուրաքանչյուր ջրադաց տարեկան արդյունք բերում է 200—300 ուրբ:

Հինգ տարիների ընթացքում ջրադաց պահողների թիվը եղել է.

1885 թվին	260
1886 »	265
1887 »	265
1888 »	295
1889 »	302

Ուրեմն	լընդամենը՝	1387
	միջին թիվը՝	277

Ոստայնանկութիւն: Մի քանի գյուղական հասարակութիւնների մեջ գլխավորապես կանաչը պարապում են ոստայնանկութիւնը. գործում են տեղական բրդից կտավ, շալ, գորգ և բակեղաթ:

Մինչև վերջին ուս-թուրքական պատերազմն այս արհեստը սաստիկ տարածված էր գյուղացիների մեջ, և շատերը միայն ման ու փոխանելով ամբողջ գերդաստանի հանդերձը լիովին հոգում էին: Պատերազմից հետո, երբ գյուղացիները հանկարծ հարստացան, հաշվեցին, որ ավելի ձեռնտու է գործարաններից եկամները գնել: Սակայն փողերը շուտով ծախսվեցան, և այսօր գյուղացին ոչ ինքն է գործում և ոչ էլ միջոց ունի առնելու:

Միայն գուխորներն ու քրդերը մինչև այսօր դեռ շարունակում են իրենք պատրաստել իրենց բոլոր հանդերձների կտորները:

Հինգ տարիների ընթացքում ոստայնանկութիւնը պարապողների թիվը հասնում է.

1885 թվին	787 մարդ
1886 »	909 »
1887 »	941 »
1888 »	924 »
1889 »	967 »

Ուրեմն	լընդամենը՝	4528
	միջին թիվը՝	906

Բ. ՔԱՂԱՔԱՅՎՈՑ

Քաղաքի բնակիչների ստորին դասակարգը գլխավորապես պարապում է արհեստներով:

Հետևյալ աղյուսակը (20) ցույց է տալիս, թե քաղաքում 1894 թ. ինչ տեսակ արհեստների և քանի արհեստավորներ և աշակերտներ կային:

Այս աղյուսակից երևում է, որ քաղաքի գրեթե բոլոր արհեստավորները հաշեր են: Արհեստներից ավելի տարածված են գարբնութիւնը, ճյուսնութիւնը, դերձակութիւնը, ոսկերչութիւնը և մաշկակարութիւնը: Սակայն սրանցից և ոչ մինն այնքան զարգացած չէ, որ կարողանա մրցել ներքերական ապրանքի հետ:

Կրեթե բոլոր արհեստներին վերաբերյալ գործիքները շատ հասարակ և կոպիտ են, արհեստավորներն էլ ուրիշ քաղաքներում չեն կատարելագործած իրենց արհեստը:

Այս բոլոր արհեստների արդյունաբերութիւնը սպառվում է քաղաքի և գավառի մեջ և համարյա ոչինչ չի արտահանվում:

Հինգ տարիների ընթացքում պատկերը այս է (աղ. 21):

Այժմ տեսնենք, թե ի՞նչ տոկոս են կազմում արհեստավորները և նրանց աշակերտները քաղաքի բոլոր բնակիչների համեմատութիւնը:

Քաղաքի 20—80 տարեկան այր մարդկանց թիվը հասնում է 1100-ի, ուրեմն վարպետները կազմում են 16,5%: 8—20 տարեկան երեխաների թիվն էլ հասնում է 530-ի, ուրեմն արհեստավորների աշակերտները կազմում են 24,7%:

ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՐԵՒՈՒԹՅՈՒՆԸ

Ախալքալաքի գավառում կան հետևյալ գործարանները (աղ. 22):

Այս աղյուսակից երևում է, որ Ախալքալաքի գավառում շատ քիչ և շատ հասարակ գործարաններ կան, որոնց արդյունաբերութիւնը մի շնչին դումար է կազմում, որովհետև մյուս գավառների գործարաններից ավելի ստոր վիճակի մեջ գտնվելով, արդյունաբերութիւնը չի արտաձանդում:

Վարդ.	աշակ.	վարդ.	աշակ.	վարդ.	աշակ.	վարդ.	աշակ.
Վարդապետներ	205	164	2		8		
Սրբազաններ	1						
Սրբազաններ	1						
Սրբազաններ	9	9					
Սրբազաններ	6	6					
Սրբազաններ	4	4					
Սրբազաններ	4	2					
Սրբազաններ	3						
Սրբազաններ	13						
Սրբազաններ	4	4	1				
Սրբազաններ	6						
Սրբազաններ	17	17					
Սրբազաններ	12				6		
Սրբազաններ	2						
Սրբազաններ	3	3					
Սրբազաններ	2						
Սրբազաններ	4	2					
Սրբազաններ	16	17					
Սրբազաններ	7	7			1		
Սրբազաններ	30	32			1		
Սրբազաններ	6	4					
(վճար) մտակարար	8	5					
Սրբազաններ	13	15					
Սրբազաններ	9	9	1				
Սրբազաններ	14	14					
Սրբազաններ	14						
Սրբազաններ	1						
Սրբազաններ	14						
Սրբազաններ	1						
Սրբազաններ	12	14					

	Արհեստագործներ	Վարպետներ	Ազատագրվածներ	Արհեստագործներ
1885 թվին	164	182	104	12400
1886 .	174	125	103	10500
1887 .	140	158	106	10000
1888 .	186	231	176	13000
1889 .	175	215	164	12600
Ռւբլի	8391	9111	653	58500
Տիգրիս թ.	167	182	131	11700

Հինգ տարիների ընթացքում այս գործարանների թիվն ու արդյունաբերությունը երևում է հետևյալ աղյուսակից (աղ. 23):

Գործարանների անունը	Քաղաքում			Գավառում			Ի միասին		
	Գործարանների թիվը	Արհեստագործների թիվը	Ազատագրվածների թիվը	Գործարանների թիվը	Արհեստագործների թիվը	Ազատագրվածների թիվը	Գործարանների թիվը	Արհեստագործների թիվը	Ազատագրվածների թիվը
Կաշվի	3	855	6	1	200	1	4	1055	7
Ոճառի	2	1481	4	.	.	.	2	1481	4
Աղյուսի	3	234	5	4	.	.	3	234	6
Կրի	2	308	4	.	.	.	2	308	4
Ընդամենը՝	10	2878	20	1	200	1	11	3078	21

Առևտուր: Ախալքալաքի գավառում առևտրի հաջողությունը կապված է երկրագործության արդյունաբերությունից:

	Գործարանների թ.				Վարչական կենտրոնների թ.	Աշխատողների թ.	Արդյունաբերական արտադրանքի արժեքը
	Կաշու	Սնուց	Վառելիք	Կահույք			
1885 թվին	4	2	2	1	12	11	10 410 ո.
1886 .	3	1	3	1	10	8	3 807 ո.
1887 .	4	1	3	1	8	7	3 595 ո.
1888 .	3	1	3	2	11	8	3 114 ո.
1889 .	3	2	3	2	13	8	3 078 ո.

Ուրեմն	Ընդամենը				Վարչական կենտրոնների թ.	Աշխատողների թ.	Արդյունաբերական արտադրանքի արժեքը
	Կաշու	Սնուց	Վառելիք	Կահույք			
Ուրեմն	17	7	14	7	51	42	24 004 ո.
	3	0	3	1	11	8	4 801 ո.

Եվ այս երևում է հետևյալ փաստից, որ երկրագործության նվազ տարիներում քիչ, իսկ առատ տարիներում շատ վկայականներ է առնրված առևտուրով պարապելու:

	Առևտրական վկայականներ
1885 թվին	182
1886 .	169
1887 .	172
1888 .	181
1889 .	196

Ուրեմն	Ընդամենը՝	
	Կաշու	Վարչական կենտրոնների թ.
Ուրեմն	900	180

Քաղաքում առևտրով պարապողների թիվը 1894 թվին էր՝

1. Կապալառուներ	2
2. Բ. կարգի վաճառականներ	78
3. Գործակատարներ	20
4. Մանրավաճառներ	113
5. Զարչիներ	11
6. Իջևան (խան) պահողներ	4
7. Գինեվաճառներ	12
Ընդամենը՝	240

Ամբողջ առևտուրը գտնվում է հայերի ձեռքում, և նրանք առևտուր են անում քաղաքի և գավառի մեջ, նաև Թիֆլիսի, Ալեքսանդրապոլի, Ախալցխայի և մինչև անգամ Քուբայի նահանգի հետ: Միայն 9 հրեաներ գավառում պարապում են շարչությունը:

Համեմատելով վաճառականների թիվը քաղաքի չափահաս աղ-դարնակության հետ, կտեսնենք, որ առևտրականները կազմում են 22%: Արտաբերական վաճառականության զխափոր նյութերը մոտավորապես հետևյալներն են.

	Թուրքի կողմից
Հացահատիկ	{ Յարեն, արժողութ. 130 000 ո.
	{ Գարի 35 000 ո.
	{ Ալյուր 7 000 ո.
Տավար մսացու, արժողությամբ	61 000 ո.
Բուրդ	4 000 ո.
Կաշի	2 000 ո.
Փարմ պտուղներ	3 500 ո.
Կտավատ և ձեթ	2 500 ո.
Յուղ, պանիր, հավկիթ	3 500 ո.
Ընդամենը՝	248 500 ո.

Ներբերական վաճառականության զխափոր նյութերն են.

Կտորեղեն	111 000 ուրլ.
Ջանազան ապրանքներ	63 625 ո.
Մետաղներ	9 000 ո.
Խմիչքներ	71 000 ո.
Մխախտ	8 500 ո.
Ուտելիղեն, աղ, պտուղներ	29 000 ո.
	292 125 ուրլի

Սրանից երևում է, որ ավելի արժողությամբ ապրանքներ ներբերում են, քան թե արտահանում, ուտաի և զավառը հետզհետե աղքատանում է: Տոնավաճառներ չկան, վաճառականության ընդարձակման արդեւը են լինում անհարմար ճանապարհները:

ԺՈՂՈՎՐԴԻ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Ա. ԴՊՐՈՑՆԵՐ

Ախալքալաքում կան հետևյալ դպրոցները.
 ա. Ս. Մեսրոպյան հայոց եկեղեցական-ժխական տղայոց երկդաս-յան ուսումնարան. հիմնված է 1836 թվին Կարապետ արքեպիսկոպոսի նախաձեռնությամբ և ծախսով: Այժմ ամփոփված է Ս. Խաչ եկեղեցու գավթի անհարմար և հին շինության մեջ: Յուրաքանչյուր տարի միջին թվով ունենում է 4—5 ուսուցիչ, 140—160 աշակերտ:

բ. Ս. Սանդխտյան Հայոց եկեղեցական-ծխական օրիորդաց երկ-
դասյան ուսումնարան. բացված է 1870 թ. Ախալցխայի Գեր. Սուքիաս
վարդապետի (այժմ եպիսկոպոս) հորդորմամբ և արժանապատիվ հարք
Հովհաննես Քաջազնունու և Խորեն Բարսեղյանի շնորհիվ, որոնք հանձն
են առել առաջին տարին ձրի դասեր ավանդել: Այժմ այդ դպրոցը գետեղ-
ված է Ս. Խաչ եկեղեցու գավթի բավական հարմարավոր շինություն մեջ
և տղայոց դպրոցից բաժանվում է միայն մի պատնեշով:

Յուրաքանչյուր տարի ունենում է միջին թվով երկու վարժուհի,
4 ուսուցիչ և 150—180 աշակերտուհի:

Այս երկու դպրոցների տարեկան մուտքն ու ելքը 3238 ուսուցիչ է:

գ. Ռուսաց բաղաբային շորս դասարանյան դպրոց. բացված է
1859 թվին: Սրա շինությունը բավական վայելուչ և առողջապահական
պահանջներին հարմարացրած է, որի վրա քաղաքը ծախսել է 15 200 ռ.
18 կոպեկ: Յուրաքանչյուր տարի ունենում է հինգ ուսուցիչ, 130—140
աշակերտ:

դ. Շուտով բացվելու է գյուղատնտեսական դպրոց, որի շինու-
թյանն արդեն ձեռնարկել են:

Քաղաքում կրթական ուրիշ հիմնարկություններ չկան:

Ամբողջ գավառում մինչև 1881 թվականը կային հայոց գյուղա-
կան-տարրական դպրոցներ, սակայն երբ կառավարությունը բացեց
արբունի դպրոցներ, դրանք հետզհետե փակվեցան, և այժմ ոչ մի հա-
յոց ուսումնարան չկա:

1881 թ. սկսած նախկին գավառապետ Գրոզդովի ջանքով գա-
վառումս բացված են ուսսաց ժողովրդական գյուղական միության
տան և հինգ դպրոց, որոնց պահպանության համար ժողովուրդը վճա-
րում է տարեկան 7726 ուսուցիչ 32 կոպեկ և տասը դպրոցական շինու-
թյունների համար ծախսել է մոտ 25 000 ուսուցիչ:

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս, թե այդ դպրոցները որ գյու-
ղերումն են գտնվում, երբ են հիմնված, տարեկան միջին թվով քանի
աշակերտ ունին, և տարեկան ծախսը որքան է (աղ. 24):

Այս աղյուսակից երևում է՝ ա. յուրաքանչյուր դպրոցին գալիս է
3696 մարդ, ի բաց առնելով զուխորուրները, որոնք ոչ փող են տալիս
և ոչ ուղտրվում երևխաներին ուսումնարան:

բ. Գավառիս բոլոր, բացի զուխորուրների, 8—18 տարեկան երե-
խաներից՝ 6128, միայն 16,8% է հաճախում դպրոց:

Համար ըստ կարգի	ԳՅՈՒՂԵՐ	Հիմնարկ- ության տարին	Սովորողներ			Մարդեր	
			Ար.	Իգ.	Երկու սեռի		
1	Ալաստան	1882	75	7	82	501	—
2	Արտզովա	.	69	14	83	525	—
3	Բարայեթ	1868	91	10	101	1043	—
4	Գանձա	1881	73	2	75	370	—
5	Գյոնդուբա	.	61	—	61	378	—
6	Դիլիսկա	.	37	—	37	395	—
7	Էշտիա	.	85	—	85	493	—
8	Խզարավրա	.	52	—	52	437	—
9	Խըրթեղ	1885	73	—	73	435	—
10	Կարծախ	1881	92	—	92	429	—
11	Կարտիկամ	.	76	—	76	405	—
12	Հոկամ	.	27	—	27	318	—
13	Սաթիա	1875	51	4	55	364	—
14	Վաչիան	1881	76	—	76	525	—
15	Քիլդա	1869	42	11	53	440	—
			980	48	1028	7059	—

1890 թվին էլ Քիլդա վիրաբնակ գյուղում բացված է ձեռագործի
արբունական դպրոց:

Իսկ գավառիս բոլոր արական կրթարաններում հետևյալ միճակն է
ըստ 1886 թվի աշխարհագրության (աղ. 25):

Այդ աղյուսակից երևում է, որ կրթություն ստացողները կազմում
են ամբողջ ազգաբնակչության հետևյալ տոկոսները՝ քաղաքի 44,9. գա-
վառի 4,8. ի միասին 7,5.

Իսկ իրական սեռի կրթությունը շատ աննախանձելի գրություն մեջ
է և հազիվ թե հասնի 1%:

Արական սեռի գրագետների թիվը ըստ ազգերի հետևյալն է²³,

23 Пантюхов Н. И. Ахалкалакский уезд... էջ 46.

	Ստացել կամ ստանում են կրթություն						
	I բարձրագույն դրուցողներում	II միջնակարգ դրուցողներում	III ստորին 3-րդ կարգի ուսումնարաններում	IV ստորին 4-րդ կարգի վարժարան.			
Քաղաք և գավառ	Համալսարաններում, մեմորանդներում, բարձրագույն, վերաբուժական, արվեստագիտական, անասաբան, երկրաչ. ևն.	Վիճակագրություն, նյութեր պարզներում, ստացչական ուսումնարաններում, գինեգորական և երկրագործական դպր.	Պրոպեդեագիգաններում, տնայական, քաղաքային, գավառական, երկրաչափական գյուղական ուսումնարաններում, արվեստագիտական, արվեստագիտական ուսումնարաններում:	Ճոզվողական տարրական և գյուղական վարժարաններում:	Առանի կրթություն		
Քաղաք.	17	37		20	854	96 1 95	— 2283
Գավառ.	1	37		67	1160	235 29715	3 31218
Ամբողջ գավառում	18	74		87	2014	331 30974	3 33501

	Ընդամենը	%
Հայեր	2160	9,0
Ռուսներ	68	2,1
Վրացիներ	165	8,6
Վրացի մահմեդականներ	83	2,5
Քրդեր	4	1,0

կարելի է ենթադրել, որ հայ գրագետների տոկոսը իննից էլ ավելի լինի:

Բ. ԳՐԱԿԱՐԱՆ-ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

Ախալքալարում 1880 թվի մայիսի 24-ին բացված է «Հայոց երկսեռ դպրոցներին կից» կոչվող մի գրադարան-ընթերցարան:

Գրադարան-ընթերցարանը գտնվում է Ս. Սանդիստյան դպրոցին կից մի շինություն մեջ. բաժանված է երկու մասի՝ տղամարդկանց և կանանց, սակայն կանայք գեոևս շատ քիչ են հաճախում:

Գրադարան-ընթերցարանն այժմ ունի 1440 օրինակ հայերեն և ռուսերեն գիրք: Բացի սրանից տարեկան ստանում է 21 հայերեն և ռուսերեն պարբերական թերթ:

Ամսական անդամավճարն է 40 կոպեկ: Գրադարանը կառավարում է հիմնադիր անդամների ժողովը, և կառավարության առաջ պատասխանատու է նրա նախագահը, որն ընտրվում է հիմնադիր անդամներից ձայների առավելությամբ:

Հիմնադիր անդամ կոչվում են նրանք, որոնք միշտ տարեկան անդամավճար՝ 4 ո. 80 կ. վճարելուց դատ. միանվագ նվիրում են գրադարանին 10 ուրլի: Այժմ գրադարան-ընթերցարանն ունի 23 հիմնադիր անդամ:

Չլուղական քահանաներից ու տիրացուներից մի քանիսն էլ անդամ են գրադարանին:

Գ. ԹԱՏՈՒՆ

Ախալքալաքը թեև շունի թատրոնական շինություն և դերասանական մշտական խումբ, բայց և այնպես զուրկ չէ ներկայացումներից: Ս. Սանդիստյան օրիորդաց դպրոցի ընդարձակ դահլիճում շինված է բեմ, և ուսուցչական խմբերը հաճախ քաղաքացիների մասնակցությամբ տալիս են տարեկան 3—5 ներկայացում: Յուրաքանչյուր ներկայացումից միշին թվով գոյանում է 80 ուրլի արդյունք, որը և հատկացվում է մի որևէ բարեգործական նպատակի:

ժողովուրդը շատ սիրով հաճախում է ներկայացումներին, և գրեթե միշտ դահլիճը լի է լինում:

ՀԱՅ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԸ

Գավառիս գյուղացիների բնակարանները շատ աննախանձելի գրուխյան մեջ են:

Գյուղի մեջ ոչ մի կանոնավոր լայն փողոց չկա, բոլորն էլ ծուռ ու մուռ և նեղ են: Մրանց համեմատ և տները խառնիխուսն, միմյանց կից և դռները դանազան կողմ ուղղված:

Հին շինությունները գրեթե գետնափոր են, մոտ 25 տարի առաջ շինվածները կես գետնափոր, իսկ այժմյանները համարյա թե դետնի վրա:

Ամբողջ թաղի կտուրները միմյանց կից են, ուստի և ծառայում են որպես ճանապարհ և որպես ժողովատեղի:

Բնակարանները շինում են իրենք՝ տան տերերը, երբեմն միայն մի որմնադիր կամ մի քարտաշ հրավիրելով, այնպես որ գրեթե բոլոր գյուղացիները գիտեն շինել բնակարաններ:

Բնակարանները շինում են հասարակ, անտաշ քարով, միայն հարուստները տան ճակատը և «յալլըղի» երևացող պատերը շարում են տաշած քարից:

Պատերի բարձրությունն առ առավելը լինում է 5 արշին, որից մոտ մի արշինը հիմք է կազմում: Հաստությունը մի արշին է, մեջը խիճ և ցեխ ածած:

ԲԱԿ ԿԱՍ ԵՎԱՔ

Բակը լինում է մոտավորապես 2,5 սաժեն երկարության, մեկ սաժեն լայնության և շորս արշին բարձրության:

Սաժեղ տափարակ (դյուզտապան) է և ունի մի հերթիկ 1/4 արշին մեծություն: Այս փոքրիկ հերթիկը հագիվ աղոտ լույսով լուսավորում է այդ՝ երբեմն շատ երկար բակը, ուր անձանոթն այցելուն խարխափելով է առաջ դնում:

Պատուհաններ չլինելու և հերթիկների փոքրության զխափոք պատճառն ապակի չգործածելն է. ցերեկը բաց են անում լուսամտախ տեղ թողնված այդ ծակերը և գիշերը խոտով ու շորով ծածկում:

Բակը դնում են լուծ, արոր, տաշտ, խուշկի, աթար և այլն: Բակից բացվում են դռներ դեպի տուն, դեպի գոմ և դեպի յազըղ:

Տունը բաղկացած է երկու բաժանմունքից՝ տուն և թնդրոճախ:

Տունը միշտ քառակուսի է լինում, պատերի երկարությունը 15—21, իսկ բարձրությունը 2,5—3 արշին է լինում: Պատերի մեջ ոչ մի պատուհան չունի, միայն մի դուռ բացվում է դեպի բակը:

Մածկը դառնաուն է, այսինքն միշտ անկյունների հանդեպ, միմյանց վրա ձգվում են քառանկյունի տաշված գերաններ, որոնք հետզհետե բարձրանալով և կարճանալով, վերջանում են մի քառակուսի արշին մեծություն բացվածք թողնելով, որ կոչվում է հերթիկ (պատուհան):

Տան մեջ, պատերին կից լինում են դարակներ, որոնց վրա շարվում են կավե և պղնձե ամաններ, փայտե դեր և սլյն: Գարակների տակ գրվում են կարասներ, որոնց փայլեցնում են շատ անգամ ձու քսելով, և որոնցից շատերը հաճախ դատարկ են լինում:

Տան մի անկյունում հաճախ դրված է լինում այլուրի ամբարը, վրան կամ կողքը հացի տաշտը:

Թնդրոճախը տան հասակից 0,5—1 արշին բարձր և հաճախ բոլորակաձև է լինում: Մրա ծածկը ևս տան ծածկի պես դառնաուն է, միայն փոքր ինչ ցածից դրած: Ուղիղ մեջտեղում թողնված է 1—1 1/4 քառակ. արշին մեծություն հերթիկ: Հերթիկի անմիջապես տակը, գետնի մեջ մինչև բերանը թաղված է թոնիրը, որի սնվածքը միշտ նայում է դեպի դուռը, որպեսզի այստեղից քամի խաղա: Թոնիրի շուրջը կոչվում է րնդրափ: Պատերի մեջ սովորաբար լինում են երկու փոքրիկ անդուռ պուհարան, որոնց մեջ դրվում են թխամորը, բաթաթը, զրզրակեր, թախակիշը, դասարակը և այլն: Մի անկյունում էլ դրված է լինում շիշն ու սկիշը:

ԳՈՄ

Գոմերը լինում են 2,5 մինչև 3 արշին լայնության և 3 մինչև 5 սաժեն երկարության: Պատերի բարձրությունը մի սաժեն է լինում, ծածկը դաշույալի:

Գոմի երկարությամբ, երկու պատերին կից, գետնից մի արշին բարձրության, 0,5 արշին լայնության և ըստորդ արշին խորության մուշք է շինված: Մրանց վրա, միմյանց բավական մոտ, կապված են 0,5 արշին երկարության բարակ շղթա կամ թոկ (կապ), որոնց ծայրին ամրացված է փայտե բարձր 0,5 արշնաչափ ծամ, փայտախ աղեղնաձև նյութ, որը անց են կացնում կենդանիների վիզը և ծամրղաթով (կաշեկապ) երկու ծայրերը բկի մոտ միացնում: Մուտքների առջև մի մի սա-

ծին լայնության տեղ հատկացված է կենդանիներ կապելու, որը և կոչվում է ղալղորմ: Սրանց առջևից ձգվում է քառորդ արշին լայնության արխ:

Երկու ղալղորմների միջի տարածությունը, որ մոտավորապես մի սաժեն է լինում և ղալղորմներից 3 վերջուկ ցածր է, քարված է և կոչվում է կոմիերես կամ սափներես:

ՕԴԱ

Գոմի մի ծայրում, սովորաբար դռան հանդեպ, գտնվում է օդան. սրա մեջտեղում, պատի մեջ գտնվում է մի բուխարի, որ գետնից 0,5 արշին բարձր է լինում: Բուխարու երկու կողմից, միևնույն բարձրությունից ձգվում են $1\frac{1}{4}$ արշին լայնության երկու թախտ, որ կոչվում է սաառ: Հարուստների օդաներում սատրնների կողքերին $\frac{1}{3}$ արշին բարձրությամբ և երկու արշինից ավելի լայնության ուրիշ երկու թախտեր էլ են ձգվում, որոնք ամուսիններին իբրև մահճակալ են ծառայում: Օդան գոմից ոչնչով չի բաժանվում և իսկապես կենդանիների տաքությունից է տաքանում: Կտուրը սատրնների միջի տարածության շափ և անմիջապես նրա վերև հետզհետե բարձրանալով, վառարանի հանդեպ կտուրի և այդ բարձրության միջև մի փոքրիկ պատուհան է բացվում, որ այժմս միայն սկսել են ապակի գցել:

Օդան հատկացված է գլխավորապես տղամարդկանց, իսկ տունը՝ կանանց: Հյուրերը միշտ ընդունվում են օդայում և հրավիրվում նստել օճախի ղուխը, երբ արդեն մի ներքնակ և մի բարձ ձգած են լինում սատրի վրա:

Միայն հարուստ տներում սատրները ծածկված են լինում քեշաներով և կամ կապերտներով:

ՅԱՋԱԼԸ

Միմիայն հարուստ տներն ունին յազլըղ՝ ամառվա սենյակ: Սա սովորաբար տաշած քարից, երբեմն բավական բարձր շինված մի սենյակ է լինում, որ երկու կամ երեք պատուհան է ունենում ոչ թե կտուրից, այլ պատի մեջ: Ամառն փոխարինելով օդային, յազլըղը ձմեռը բոլորովին փակ է մնում, որովհետև վառելիքը թանկ արժեքով՝ շեն տաքացնում:

ԿԱՆԱՆՑ

Ի նկատի առնելով, որ բնակիչների ամենամեծ մասը Կարնո գաղ-վականներ են, մենք կնկարագրենք միայն նրանց զգեստները: Գյուղացի և քաղաքացի կանանց զգեստները միայն կտորով և ճաշակով են տարբերվում, իսկ տարազը միևնույնն է:

Շապիկ. կարում են միտկալից, աղքատները՝ ամիրկալից, կտավից. իջնում է մինչև ծնկները, կուրծքը մինչև պորտը բացված է և բկի մոտ կոճկվում է. թևերը երկար են և դաստակի մոտ կոճկվում:

Իշիկ. հագնում են շապիկի վրա, կարում են անթիքմոոից, ատլասից, մատերիալից, գյազից: Կուրծքը եռանկյունաձև բացվում է, եզրերը դայթան և կլապիտոնն բյուքմա են կարում: Թևերի բերանները վերջանում են եռանկյունաձև, որ մի քիչ ծածկում են ձեռքերի երեսները, և որոնց շուրջը դայթան և կլապիտոնի բյուքմա է կարած:

Վարաիկ. ամիրկալից, փաթուխից. երկու կողքերը կապում են ձախ կողքում:

Գյուզլուկ. վարտիկ է, միայն փոխերը ֆանելից է, հագնում են ձմեռը:

Անքարի. կարում են անթիքմոոից, սավայիրից, ատլասից, գյազից և այլն: Հասնում է մինչև ոտները. թևերը շատ երկար չեն անում, այլ հասցնում են մինչև դաստակը:

Կրլը. ոմանք հագնում են անթարու վրայից. իշիկի նման է, կարում են անթիքմոոից, գյազից, սավայիրից, ատլասից:

Կրծկալ. մուգ կարմիր թավշից կամ լաստիկից 0,5 արշին երկարության և քառորդ արշին լայնության կտոր է, որ վերևում գրկում է վիզը, իսկ մեջքի մոտ շորե կապերով կողքի մոտ կապվում: Սրա օձիքը և երբեմն կուրծքը կլապիտոնով ասղնեգործած է:

Ջյուպյա. հագնում են կրլորի կամ անթարու վրա, հասնում է մինչև, ոտները, կարում են դատիֆից, անթիքմոոից, մահուդից կամ կապույտ ամիրկա կոշիկով կտորից:

Գոզնոց. կարում են միայն կարմիր մահուդից և տանը գործած կարմիր շալից: Գոտին գործում են առանձին խնամքով և վրան շատ անգամ գրում իրենց անունը՝ ավելացնելով «ի վայելումն» խոսքը: Գոզնոցի շուրջը կլապիտոնով և երբեմն արծաթի թելերով (թրաթրո) ասղնեգործում և ներքևի երկու անկյունում գեղեցիկ ծաղիկներ են շինում: Գոզնոցը գոտիով կապում են ջյուպյայի վրա:

Սրանից մի քանի տարի առաջ գրեթե բոլորը, իսկ այժմ շատ քչերը՝ փողոց դուրս գալիս վրաններն առնում էին էնրամ. սա բրդի սաստիկ բարակ թելից գործած մի քառանկյունի կտոր է, որի լայնությունը միշտ համապատասխանում է առնողի բարձրության: Էնրամը մի քիչ կտ ծալած ձգում են գլխին, ապա առջևից ոտքերից մեջքը հավասարեցնելով, ծայրերը մտցնում գոգնոցի գոտու մեջ, իսկ ավելին կախ ձգում. հետո իրենց ձեռքերը կրծքերին, բկի մոտ բռնում են էնրամի ծայրերը և այսպես բռնած ման գալիս:

Աղջիկների էնրամին լիմոն, բաղամ է կարած, այսինքն կիտրոնի և բաղամի նմանությամբ մանծե թելերով ասեղնագործած է: Միջահասակներինը սոսկ սպիտակ, իսկ հասակավորներինը՝ կապտախառն է: Այժմ քաղաքացիները գլխավորապես եվրոպական ձևով, թևերով, երկար վերարկու են հագնում, իսկ գյուղերում սովորաբար շալ են առնում:

Սովորաբար աղջիկներն ու հարսները հագնում են բաց և կուշտ կապույտ, կանաչ և մանիշակագույն, իսկ պառավները՝ մուգ շագանակագույն շորեր:

ԳԼՍԻ ՀԱՌԴԱՐԱՆՔ

Նախ և առաջ մազերը սանրում են, մեջտեղից մի հերագիծ (իվ) թողնում, առջևի մազերը ճակտի և ականջների վրայից տանում, և գլուղացիները մի քանի փոքրիկ, իսկ քաղաքացիները՝ երկու մեծ ծամ հյուսում: Գյուղացի աղջիկները ծամերի ծայրերին գույնզգույն հլուններ և մեխակ են անցկացնում:

Հետո ծածկում են կարմիր ֆաս՝ մոտ կես արշին երկարության փյուսկյուղով, որ իջնում է մեջքի վրա: Փյուսկյուղի գլուխը և ֆասի մեջտեղը նրբեմն էլ կլապիտսնով և արծաթադույն թելով ասեղնագործած է լինում:

Ֆասի վրա կապում են գլխիֆլըղ՝ երկու շարք մարգարիտներ, որ այտերի վրայից իջնում են մինչև կուրծքը: Յուրաքանչյուր շարքը բաղկացած է 4—6 առանձին թելերից, մարգարիտներ անցկացրած և ծայրը մի փոքր ոսկեղրամ (պանախի) կապած: Շարժվելիս այդ ոսկիները միմյանց են դիպում և ձայն հանում: Աղքատ գյուղացիները մարգարիտների և ոսկիների փոխարեն սուտ մարգարիտներ և փուլ (ոսկեգույն մետաղից) են անում:

Ձիլիֆլըղի վրայից կապում են շևրյալը. սա մի գեղին ժապավեն է, վրան մի կամ երկու շարք, 20 մինչև 200 փոքրիկ ոսկեղրամներ (ոտու-

պիտ) կարած, որ պսպղում են ճակտի վրա, տարածվելով մի ականջից մինչև մյուսը: Ոսկիների տակից, շերտի մեջտեղը կարած է լինում մի մեծ ոսկի (մահմուդիա), Պառավներն այս ոսկին շեն դնում:

Միևնույն շերտի վրա, ոսկիների վրայից կարած է լինում կաուցը՝ մարգարիտներ, որ երբեմն միայն, իսկ երբեմն մոտավորապես 8-ի ձև անցյալ փոքրիկ ոսկիների (շավշակ) շուրջը բոլորվելով՝ տարածվում է շերտի երկարությամբ:

Շերտի վրա անցնում են վարդը: Սա պատրաստում են հետևյալ ձևով. մի յազմա²⁴ խաշաձև 6—7 սանտիմետր լայնությունով ծալում են, ոսկու բռնելով կրողի ճակատին, քունքերի մոտ այդ միևնույն յազման ծալելով երկու վարդ են շինում ու մնացած ծայրերը կրողի գլխին շափելով՝ միմյանց հետ կարում: Հետո թե վարդերը և թե սրանց միջի տարածությունը զարդարում մետաքսի գույնզգույն թելերից շինած ծաղիկներով:

Աղջիկները վարդի վրայից այլևս ոչինչ չեն առնում, իսկ հարսերը սրտմ են տանը՝ յազմա, հրավեր գնալիս՝ չիքիլա, որ իջնում է մինչև սրունքները: Կանայք և պառավները փաթաթում են գլուխները շալե (լոյսփի) կամ մետաքսե (բաղդադիա) փաթթան, իսկ հրավեր դնալիս՝ սրտ վրա ավելացնում են և մի յազմա:

Աղջիկները և մատաղահաս կանայք պցում են կրծքերին մի կամ մի բանի շարք ոսկիներ, ականջներին անց են կացնում՝ օղեր, ձեռներին գիտմ սակե միապաղաղ ապարանջաններ (բյուլադուկ), մատներին՝ մասիկներ:

ԱԳԱՆԵՆԻՔ

Աղջիկներն ու հարսները հագնում են գեղին մյաս բապուձ, իսկ պառավները՝ գեղին մյաս, կարմիր բապուձ:

ՏՂԱՄԱՌԿԱՆՑ ԶԳԵՍՏՆԵՐԸ

Ա. Գյուղացիների

Շուպիկ. հասնում է մինչև ծնկները, կարում են կտավից կամ ամիրկոյից. կուրծքը մինչև պորտը բացված է և կոճկվում է բկի մոտ: Թևերը լիսոցիտե նեղանալով՝ հասնում են մինչև դաստակը, ուր և կոճկվում են:

Թումպակ կամ վարտիկ. հագնում են ոտներին, շապիկի տակից:

²⁴ Քիսիսի նման բամբակե, շատ բարակ, գույնզգույն, քառակուսի փաթաթոց:

Կարում են կտավից կամ ամիրկայից: Փողքերի լայնութիւնը քառորդ արշին է լինում. կապում են կողքից վարտեց կապով:



Ախալքալարցի հայ օրհորդ

Ելակ. հագնում են շապկի վրայից, թևեր չունի. նման է եվրոպական ժիլետկային, միայն ամբողջապես ծածկում է կուրծքը, գրպաններ չունի, կոճկվում է «դայթանն օղակ կոճկով»: Կրծքի մեջտեղն ելակի առաջի՝ երևացող մասը կարում են պոլսուկնոյից, լաստիկից, մահուգից և այլն. իսկ ետևի՝ չերևացող մասը հասարակ շփից:

Գոշլովս. հագնում են ելակի փոխարեն, նրան նման է, միայն աստառ չունի և ձախ կողմի երկու ծայրերը կողքից թևի տակ կապվում են իրար հետ: Սրա կուրծքը հաճախ ասեղնագործած է լինում:

Շալվար. հագնում են ոտներին, ելակի վրա, կարում են շալից, իջնում է մինչև ոտների երեսը և 3 քիլ լայնութիւն ունի: Վերի մասը մի քիլ լայնութեան կարում են կապույտ ամիրկայից կամ կարմիր կտորից. այս մասը կոչվում է փոխ. սրա միջից անցնում է ուշխուրը, որ ամուր կապում են կողքից: Շալվարի կողքերից գրպանի փոխարեն թողնում են բացվածքներ:

Արխալովս. հագնում են ելակի և շալվարի վրայից: Կարում են կապույտ ամիրկայից, պոլսուկնոյից, սև դադիֆից և այլն: Արխալովսը մեջքի վրա բյուզմայով սեղմվելով՝ մի թիղ վայր է իջնում, որը և կոչվում է փեշ: Սրա վրա կողքից բացած է մի գրպան: Արխալովսի կուրծքը և ոտնկոննաձև բացված է և պորտի մոտ երկու կամ երեք դայթանն կոճկով կոճկվում է:

Գոշով արխալովս. կուրծքը ձախ թևի անրակի մոտից կոճկվում է մինչև պորտը դայթանն կոճկով. այսպիսի կոճակների մի շարք ևս կարվում է աջ կողմում ներդաշնակութեան համար:

Քյամար. հասարակ կաշուց գոտի. կապում են արխալովսի վրայից, մեջքին:

Չուխա. հագնում են արխալովսի վրայից. մեջքի վրա բյուզմայով սեղմվելով և գրկելով մեջքը՝ լայն իջնում է մինչև ծնկներից քիչ ցած, այս մասը կոչվում է փեշ: Կուրծքը եռանկյունաձև բացված է և պորտի մոտ երեք դայթանն կոճկով կոճկվում է: Թևերը հետզհետե լայնանում են մինչև 9—12 վերշոկ և հասնում են մինչև ձեռքի կոճիկները. գործի ժամանակ թևերը ետ են ծալում, այնպես որ ամբողջ դաստակը մնում է բաց: Չուխի բոլոր եզրերին կարում են դայթան: Կարում են շալից:

Յափունեի՝ տառատոր:

Գլխներին ծածկում են փափախ, ոշխարի մորթուց կարած, կամ էյաշա, և քշերը ֆաս:

ԱԳԱՆԵԼԻՔ

Գուլպա²⁵. սովորաբար հաստ թելից գործած:

Պանին-բոզովս. հագնում են սրունքներին և շալվարի փոխքը մեջը դնում և դուրբաղիով (թելի կապը) կապում:

²⁵ Հալ կաթոլիկները առավելապես հագնում են «եշխուն գուլպա»:

Չարուխ՝ տրեխ, սրբըմ՝ կաշե թելով կարում են շարուխը. տրեխի ծայրը կոչում են քիթ:

Բ. Քաղաքացվոց

Շապիկ. քաթանից, ոչ այնքան երկար, որքան գյուղացիներինը, կուրծքը երբեմն ասղենգործած:

Վարաիկ. նույնպես քաթանից կամ ամիրկաչից, հագնում են շապկի վրա. վարտիկի փոխկը դնում են գուլպի մեջ. իսկ սրա վրայից ոմանք փաթաթում են «տալաղ», մի վերջով լայնություն և մի արշին երկարություն քաթան, մի ծայրը թել կապած:

Արխալուլս. կուրծքը շափուստով կոճկած, կարում են լաստիկից, մախմուրից և այլն:

Շալվար. սովորաբար մահուդից, քառորդ արշին լայնության:

Չուխա կամ շաբախի՛ մահուդից, բավական երկար, բոլոր եզրերը բյուրմա կարած:

Արծրե քամար. շարքասկու վրայից են կապում:

Վեարեկու կամ յափունեի (տառաստք), առնում են ձմեռը:

Գլխներին ծածկում են գաակ (չափխա) կամ գաբիրալդի:

Ոսնեքին հագնում են կոշիկ և կրկնակոշիկ:

ԸՆՏԱՆԵՎԱՆ ԲԱՐՔ

ԱՄՈՒՆՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՐՍԱՆՅԱՑ ՍՈՎՈՐՈՒՅԹՆԵՐ

Ախալքալարի գավառի հայ գյուղացի տղամարդու մեջ շատ քիչ է զարգացած սիրտ զգացմունքը դեպի կինը: Նրա աչքում կինը ոչ այլ ինչ է, եթե ոչ յուր կրքերին հագուրդ տվող մի ծախված «պուտուկ» և մի ստրուկ ազախին: «Հորդ... ալ ինչի՞ 100 մանեթ տվի օր աս բանը չըպըտի էնես»... ամուսնու սովորական խոսքերն են կնոջ մի օրեկ աշխատանքից հրաժարված միջոցին: Հայ գյուղացին շատ հեռու է կնոջը գզվելուց, նա օտարների և նույնիսկ տանեցիների ներկայությամբ թույլ չի տալիս կնոջն իրեն հետ խոսելու, հետք հաց չի ուտում և առանձին խոսակցություն համարյա երբեք տեղի չէ ունենում: Կնոջը հաչհոչելն ու երբեմն ծեծելը նրա համար «տղամարդություն», քաջություն է հա-

մարվում: Նա գրեթե երբեք չի խորհրդակցում կնոջ հետ. տոնեքին ստոթ է համարում շնորհավորելու և մի բան նվիրելու նրան: Կինը գերդաստանի մեջ ևս մի առանձին հարգանք չի վայելում: Նա մինչև անգամ պարտավորված է 10 տարեկան տեղեր հետ «հարսնություն» տնել՝ շխտել, նրա տրեխները հանել և ամեն հաճույքի բավականություն տալ: Նրան հրամայում են ոչ միայն կեսարքը, կեսուրը և ամուսինը, այլև մեծ տեղերկնիկներն ու տեղերը: Նա առանց կեսուրի խուլլավության ոտը մի քայլ անգամ դուրս դնելու և կամ մի բան վերցնել ուտելու իրավունք չունի: Նույնիսկ յուր հարազատ որդուն առաջին տարին նա ծիծ չի տալիս, մինչև կեսուրը չհրամայի:

Զրկված անձնական ազատությունից, դատապարտված մշտական լռության, նա ստիպված է կատարել սան բոլոր ծառայությունները, օգնել ամուսնուն տնային և դաշտային աշխատանքի մեջ:

Երկարատև ձմռան միջոցին, երբ ամուսինը բոլորովին անգործ ընկած է սրա նրա օղեն, նրա աշխատասեր կինը կատավարում է ամբողջ տունը և շալ, կտավ գործելով հոգում ծուլ ամուսնու հանդերձ:

Նրա սրբությունն անգամ շատ չի գնահատվում ամուսնու կողմից. սա բավականանում է շնացող կնոջը մի լավ թակելով, և բաժանում կամ մարդասպանություն այս պատճառով տեղի չի ունենում, չնայելով որ կան գյուղեր, ուր գրեթե բոլոր հարսները «սիրող» ունին:

Քեև գավառում բազմակնություն չկա, սակայն կան մարդիկ, որոնք ակնհայտնի պահում են միևնույն տան մեջ ինչպես օրինավոր կնոջը, այնպես էլ սիրունուն:

Այս գավառում դեռևս պահպանվում է աղջիկ փախցնելու սովորությունը, և սրա գլխավոր շարժառիթը համարվում է «հաղեմասին»:

Ամուսնությունը կատարվում է հետևյալ հանգիստներով. նշանդրեք, փեսատես, քաստոյիչտ, մաղժաժում, մաղարխում, հինա տնել, թագավոր կանգնեցնել, պսակ:

Նշանդրեքը աղջկա հայրը միշտ աշխատում է պսակն ձգել, որ ինքը բիշ ծախս ունենա և տղայի օղին շատ խմվի, այս պատճառով ամենից շատ մեծ պսակն է լինում: Հարսանիքն առավելագույն բարեկեցիկության ամառը շատ հալվել է պատանում, որովհետև գյուղացիք սաստիկ դրադված են լինում: Հարսանյաց պատարտությունը միշտ սկսվում է լինդարթի օրից և տևում մինչև մյուս հինգշաբթի, ամբողջ մի շաբաթ, օրիան օր, օխտը գիշեր»:

Հարսի կողմից շատ քիչ, իսկ միջակ հարուստ փեսայի կողմից մոտավորապես լինում է հետևյալ ծախսերը.

Նշանդրեքին

Հարձմասին	60—200	ա.
Երեստեսնանք	տնեցիք	10
	բարեկամներ ²⁷	60
Ոսկու	100	ա.
Յ թունդի օղու	12	ա.
Աշքի լուսի	1	ա.
Սալամաթ տանտիկնորը	1	ա.
Հարսն առաջ բերողին	1	ա.
Հարսին ընծա	3	ա.
Չարազ	1	ա.
Այլ և այլ մանր ծախսեր	10	ա.
Ընդամենը՝		259—400
Փայերին և դերիներին	150—200	ա.

Պաակին

Մի եզ	25	ա.
Մի գառ	2	ա.
Տասն թուղի օղի	20	ա.
Արուկ, բրինձ, լոբի, թեյ և շաքար	12	ա.
Երկու գույզ կոշիկ հարսնեղբայրներին	2	ա.
Արկղին	1	ա.
Սալամաթ	1	ա.
Եկեղեցուն	1	ա.
Քահանային	4	ա.
Աթոռահաս	6	ա.
Բեյի ոսկի հարսի մորը	50	կ.
Փողհարին	60	կ.
Փողհարին	3	ա.
Այլ և այլ ծախսեր	10	ա.
Ընդամենը՝		88
Հարսանկաց բուր ծախսը	10	կ.
497—688		ուրի՛

Մի պատկառելի դուամար, որ գյուղացին առանց պարտք անելու չի կարող հոգալ:

27 Մենք այս փեսի կողմից ծախս ենք հաշվում, որովհետև սա էլ պարտավոր է նրանց նշանդրեքին եթե ոչ ավելի. գրեթե նույն չափ տալ:

Երբ ծնողները վճռում են այսինչ աղջիկը ուզել, հայրը հրավիրում է քահանային, հյուրասիրում է նրան թեյով ու հացով և ապա խնդրում «պատգամ» գնալ այդ աղջկա հոր մոտ և խնդրել աղջկա ձեռքը յուր որդու համար: Քահանան նախ հաշվում է, թե կհասնի՞, և եթե չհասնի, լինի, աշխատում է համոզել նրանց ուրիշ աղջիկ ուզելու, իսկ եթե չկա, գնում է աղջկա հոր մոտ, գովում է տղի հորն ու գերդաստանը, թվում երիտասարդի արժանավորությունները և խնդրում աղջկա Անորը:

Աղջկա հայրը որոշ ոչինչ չի պատասխանում. «Ակա՛ր, դամաթ է, գլխի, տերտեր ջան,— ասում է նա,— առանց դամաթի բան չիլի, քանիմ օր ժամանակ տու, մեկ մերոնց հետ ա խոխուրդ էնենք»: Եթե նույնիսկ յուր ցանկությունը լինի աղջիկը այդ երիտասարդին տալու, այնուամենայնիվ նա մի քանի օր պիտի չլմճմե՛ս: Քահանան վերադառնում և պատմում է երիտասարդի հորը տեղի ունեցած խոսակցությունը, միանգամայն հայտնելով յուր կարծիքը՝ տալու են, թե ոչ:

Աղջկա հայրը երկրորդ օրը հրավիրում է աղջկաններից կամ գրկիցներից երեք մարդ, հյուրասիրում նրանց թեյով ու հացով, հարց ու փորձ անում ուզած աղջկա մոր, հոր և մասամբ աղջկա մասին և խնդրում գնալ հոր մոտ «պատգամ»:

Կրանք, որոնց ժողովուրդը «պատգամ» է կոչում, գնում են աղջկա հոր մոտ, գովում տղայի հորն ու գերդաստանը, թվում տղայի արժանավորությունները և խնդրում աղջկա ձեռքը:

«Գիրքուր ամի. բժր Աննիկը մարդարեից օրենքով, 318 հայրապետաց կանոնով տուր եաշոյննց մանչուն»:

Աղջկա հայրը պատասխանում է. «Ղըսմաթ է նե, ի՞նչ պրտի ըսեմ, յանլիմ օր միջոց տվեք մտածենք»:

Պատգամները ոչ մի բանով չհյուրասիրված վերադառնում են:

Մյուս, երբեմն երրորդ, չորրորդ օրն էլ գնում են աղջկա հոր մոտ և խնդրում, որ պատասխան տա: Իսկ աղջկա հայրը յուր կնոջ և մի քանի բարեկամների հետ խոսակցելուց հետո՝ արդեն որոշած է լինում, տալ. թե չտալ: Եվ եթե մտադիր է տալու, դիմամբ շմշմում է, այնինչ յուրու դեպքում միանգամից մերժում է:

Վերջապես աղջկա հայրը հայտնում է պատգամներին, թե կտա: Իրանք գալիս են տղի հոր մոտ, խորհրդակցում, թե որքան հաղեմասի ուտ. և աննելով այդ գումարը, գնում աղջկա տունը: Պետք է ասել, որ

պատգամները տղի տունը մտնելիս ամեն անգամ հշուրասիրվում են. իսկ աղջկա տանը մինչև հաղեմասին տալը ոչ մի քանով չեն հշուրասիրվում: Աղջկա հայրը կանչում է յուր ազգականներից մի քանիսին, պատգամների հետ նստում օդան: Պատգամները խնդրում են աղջկա հորը որոշել, թե ի՞նչ պիտի առնե հորից այցելիք տալու համար:

Այս գումարը կոչվում է «հաղեմասի», որ արարեբրին նշանակում է «այո սոսել», համաձայնել:

Աղջկա հայրը հրաժարվում է ինքն առաջարկելուց և ասում է. «Աղջիկը իմս չէ. Քերոք ասիրինն է (եղբայր), թող ան րսե»:

Սա էլ նախապես իմացած լինելով հոր միտքը, մի քիչ բարձրից է բռնեցնում. «Աղջիկն ա իմս է, խոսքն ա իմ քովս է. ձեզնից կառնեմ 110 մանեթ փող, ջուխում լապչին, դարարազի մարմուղներով, մեկ պինիչ շաքման շուխա, մորը՝ քիրմանի շալմ, մեծ հարսին մյաս բապուճ, արծթե սաչլի՛ւմ՝ լուլաներով, աղբորը՝ ջուխում ճըզմա» և այլն: Պատգամներն սկսում են սակարկել և գլխավորապես կանգ են առնում փողի վրա, որը տատանվում է 30—220 միջև: Որչափ տղան սիրահարված և աղքատ լինի, այնքան հաղեմասին բարձր կլինի, և այս է պատճառը, որ աղքատ երիտասարդն ստիպվում է կամ պարտքի տակ ընկնել, կամ փախցնել աղջկան:

Երկար սակարկությունից հետո, որ երբեմն մի քանի օր է տևում, փոխադարձ դիջողությունը համաձայնություն է կաշանում, և պատգամները իսկույն վճարում են դրամը աղջկա հորը:

Հիմա արդեն աղջկա հայրը օղի է բերում և սկսում են «աչքի լուսի թասը» խմել: Տան փոքրիկներից մին կամ երկուսին ուղարկում են տղի հոր մոտ՝ աչքի լույս: Սա համբուրում է տղի հոր ձեռքը և ասում. «Աչքդ լուս»: Մրան օղի են խմացնում, ջորապ տալիս և 20 կոպեկ փող նվիրում: Իսկույն տղի անից երկու երեխա ուղարկում են աղջկա տունը «հարսնցու անելու»: Մրանք դնում տեսնում են հարսին, մի մի ուրլի փող նվիրում, հշուրասիրվում և վերապանում: Մի քանի գյուղերում փեսան, սրա հայրը և մի քանի մտայիկ ազգականներ գնում են աղջկա տունը՝ տանելով իրենց հետ օղի: Այստեղ երկու խնամիկները համբուրվում են և բարեմաղթում սիրով և միաբանությունը ապրել: Տղի հայրը շնորհակալություն է հայտնում պատգամավորներին նրանց կրած նեղության համար: Փեսան դավուլ-զուռնի առաջնորդությամբ առաջ է բերում հարսնացուին: Մրանք կարգով համբուրում են բոլորի ձեռները, և ապա հարսնացուն կանգնում է յուր սկեսրարի մոտ «բարև բռնած»՝ ձեռները կրծքին և գլխին քող գցած. հետո մի համեստ ընթրիք են տալիս, որից

հետո տղատիրոջ կողմի եկողները մի մի կամ երկու երկու ուրլի նվեր են տալիս և ցրվում տները: Միայն տղի հայրը, որպես պատվավոր հշուր, այդ գիշեր մնում է խնամու տանը: Առավոտյան աղջկա տերը հրավիրում է երեկոյան խնջույքին ներկա եղող մարդկանց, ուսեցնում յուր կերակուրները և խմացնում փեսացուի օղին, կեսօրին հետևերն առած փեսացուի հորը՝ սրանք գալիս են փեսացուի տունը: Այստեղ էլ ավետման խնջույք են կազմում, փեսացուին առաջ բերում, և սրա աները նրան խոստանում է ընծաներ, առհասարակ հաղուստեղեն, երեկոյին ամենքը ցրվում են տները: Այս բոլորը կոչվում է «պզտիկ հարսնցու»:

ՆՇԱՆՈՒՆԵՔ ԿԱՄ ՄԵՇ ՀԱՐՍՆՑՈՒ

Պզտիկ հարսնցուից մի երկու օր հետո փեսի հայրը հրավիրում է յուր ազգականներին ու քավորին, հշուրասիրում նրանց թեյով ու հացով: Երեկոյան աղջկա տիրոջ անից մի հրավիրակ է գալիս, որ օղու շիշը ձեռին կանգնում է օղի մեջտեղն, ընդհանուր բարև տալիս, ապա լցնում բաժակը և ասում. «Կենդանություն, բարով ժողովիք». հետո դառնալով դեպի նոր խնամին, ավելացնում է. «Ենամի աղա, տացուս (կամ կատաշս, ապերս, ինչ պատվանունով որ նա սովոր է կոչել յուր տան մեծին) շատ կարոտով բարև էրավ, որ առնես քու ղոնաղներդ հրամմես էրթանք մեր տուն»: Այս խոսքի վրա նա խմում է օղին և նորից լցնելով տալիս է աղա խնամուն:

— Ձեռքեդ անհատ,— ասում է խնամին անելով բաժակը,— շատ շնորհակալ եմ աղա խնամուցս.— և դառնալով դեպի հրավիրյալները, ավելացնում է.— Մեր նոր խնամին կանչե կը մեզի մեր ծաղկին քովը՝ հրամեցեք էրթանք»: Հետո խմում է շնորհակալություն բաժակը և դավուլ-զուռնով գնում աղջկա տունը, տանելով յուր հետ 2—5 թունգի օղի, մեկ թոփ խաս մանուսա, մի սպիտակ չիթիլա յափուղ, երեք շորս գուլնի թել, մի արշին փաթուսթա՝ արախճիսի համար, սպիտակ կլասիտոն, մի զույգ մյաս-բապուճ, հինա և շարազ: Միմյանց ողջունելուց հետո տղամարդիկ նստում են օդան ավագության կարգով: Աղջկա տերը յուր օղուց մի մի բաժակ տալիս է բոլորին, որոնք «Աչվիք» լուս ըլի, աստված սուրբ պսակին արժանացնե՞ս ասելով խմում են: Օղուց հետո սովորաբար մի մի բաժակ թեյ են տալիս, որից հետո պատգամավորի խնդրանքը հարսն առաջ են բերում: Մի սկուտեղի մեջ շարում են թեյի փսխներով շարաղներ՝ կանֆետ, քաղզբազամ, քիշմիշ, լապլադու և այլն աղջկա տիրոջ մի շիշ օղի և բաժակներ. սկուտեղի շուրջը վառում են

տալիս է բերած շորերը, կամ եթե պատրաստ չէ, փող է տալիս կամ խոստանում է: Տալիս են և աղջկա կողմից եկած բոլոր բարեկամները, մի քանիսը դրամ, մի քանիսը գառն, մի քանիսն էլ հորթ և այլն: Այսպիսով գոյանում է.

Քաղաքորին, բացի հանդերձներից	5—20 ո.
Քահանային	50 կ.—1 ո.
Եկեղեցու օգտին	10—60 կ.

Մաշուից հետո քնթրիք են տալիս, ուտում խմում, մեյով կարգավում և շատ ուշ, հարբած ցրվում տները:

Փ Ա Յ Ե Ր

Հարս և փեսա նշանված մնում են 3—6 ամիս, երբեմն մի տարի. և այս երկար միջոցում նրանք միմյանց շատ հազիվ են տեսնում: Փեսան նշանածի ոչ միայն ղոնից, այլև փողոցից շատ հազիվ է անցնում, որովհետև այս ոչ միայն մեծ ամոթ է համարվում, այլև այդ փողոցի երիտասարդներն ու երեխաները բռնում ծեծում են փեսային և բաց չեն թողնում, մինչև որ մի բնծա շտանեն: Միմիայն բարեկենդանին թույլ են տալիս փեսին երեք օր, երեք զիշեր-ցերեկ մնալ նշանածի տանը:

Բոլոր տաղավարներին փեսի տնեցիք պարտավորված են հարսին նվերներ տանելու, որոնք փայ են կոչվում: Փայեր տանում են տղամարդիկ, և երեք թաղավորը չի մասնակցում այդ ուրախությանը: Փայ տանողները մնում են երեք օր, կյուրակեից մինչև շորեքշաբթի: Առաջի օրն առավոտյան հայրը կանչում է տղամարդ բարեկամներին էլ, ուտում, խմում, և կեսօրին ցրվում են. հետո կանչում են բարեկամ կանանց, ցույց են տալիս բերած փայը, բաժանում են նրանց մեկ մեկ դաթա և բերած քիշմիշը, հետո արդեն հաց են տալիս, սակայն փայ բերողներին տուն հրավիրել չուղղղները հացի չեն մնում: Մյուս օրերն այս ու այն բարեկամները, որոնք այդ օրն այդտեղ հացի էին մնացել, հրավիրում են աղջկա տնեցիներին, աղջկանը և փայ բերողներին իրենց տուն և հյուրասիրում նրանց բավական ճոխ սեղանով: Փայի ուրախություններին շատ հաճախ ձայնակցում է դավուլ-զոտնան, որ շուտով տաքացած գլխներին հանում է կալը. հավաքվում են գյուղի զրեթե բոլոր հարս ու աղջիկներն, և սկսվում է հասարակաց կլոր պարը:

Փայերը սովորաբար տանում են Զատկին, մայիսին, Վարդավառին, ս. Աստվածածնա վերափոխման, սեպտեմբերին և Վարագա սուրբ խաչին: Բայց սրանցից նշունավոր և պահանջելին երեքն են՝ Զատկինը,

Վարդավառինը և ս. Աստվածածնա վերափոխմանը: Եթե հարսանիքը շուտ լինելու պատճառով այս երեք փայը շտանեն, փոխարենը ուրիշ բանով պահանջում են: Աղջկա տերն էլ փային դարձվածք է ուղարկում երկու կամ երեք մարդու ձեռքով, որոնք երկու կամ երեք օր մնում են թաղավորի տանը, լավ հյուրասիրվում և վերադառնում:

Ահա փայերը և նրանց դարձվածքը.

Առաջին փայ

3 արշին մահող	9 ո.	
1 1/4 արշին ալ մահող գոգնոցի համար	4 ո.	
Շապիկացու կտոր	1 ո.	
Հարսին կիսակոշիկ	3 ո.	
Հարսնացուի մորը, էղբոր կնոջը, քրոջը և այլն մի մի զույգ մլաս-բապու՜՜՜ ժոտավորապես	3 ո.	
Մի մկրատ և մի դանակ	—80 կ.	
Մեկ հայելի	—20 կ.	
Ապրեշումի և Ռուսիո թել	2 ո.	
Շալ թել	1 ո.	
9 ֆ. քիշմիշ լապլապու	—90 կ.	
Հինա	—10 կ.	
Օղի	2 ո.	
Հարսին բնծա մի ոսկի կամ	3 ո.	
Ընդամենը		30 ո.

Բացի սրանից մինչև 60 զույգ դաթա, 2 սեր. մի թոփ հալվա: Փեսայի տանից ուղարկված դաթաների թիվը անշուշտ զույգ պիտի լինի, որ փեսացուն և հարսնացուն զույգ մնան:

Առաջին փայի դարձվածք

Հարսնացուի տանից ութ օր հետո ուղարկում են թաղավորի տունը երկու մարդու ձեռքով փային դարձվածք.

20 զույգ թողուխ և զուլպա: Փեսին մի զույգ զուլպա, կլապիտոնով նշխած և մի զույգ թողուխ. փեսին մի ելակ, 3 խաշ կուլուր, որպեսզի հարս և փեսան խաչի պես սուրբ մնան մինչև պսակը: Կերսարին մի ձեռք սպիտակեղեն, փայ բերողներին մի մի զույգ զուլպա, մի հայելի, մեջը զարանֆիլ ածած, որպեսզի հարսնացուն հայելու պես լույս տա և զարանֆիլի նման հետով լինի: Կենտ թվով դաթա, որպեսզի

Հարսը փեսի հետ զույգ մնաւ Մի խորոված հավ: Մի թոփ հալվա, մի աման ձվածեղ, մի աման սեր:

Փեսացուն հրավիրում է երիտասարդ ընկերներին և սրանց հետ ուտում անպատճառ գաթան ու հավը: Փայի դարձվածք բերողները ստանում են նվեր 40-ական կոպեկ, 2 օրից վերադառնում:

Երկրորդ փայ

Վարդավառին ուղարկում են պառավ կանանց ձեռքով երկրորդ փայը.

3 արշին մահուդ կամ երկու թոփ լավոտի շալ	9 ա.
Մի սպիտակ առլաղիա	3 ա.
Մի յազմա	-50 կ.
Մի թոփ կյազի	2 ա.
Մի զույգ ոտնաման	-40 կ.
Թել	1 ա.
Հինա	-10 կ.
Քիշմիշ լապլապու	1 ա.
<hr/> ընդամենը՝ 17 ա.	

Եվ եթե այս ամուսնութիւն մեջ մինը միջնորդի դեր է կատարած, նրան էլ ուղարկում են մի զույգ ոտնաման, շորս զույգ գաթա, մի թոփ հալվա:

Երկրորդ փայի դարձվածք

Երկու մարդու ձեռքով ուղարկում են փեսացուին մի շապիկ վարտիք, մի զույգ գուլբա, մի դրամի քսակ, երեք խաշ գաթա, որպեսզի փեսացուն և հարսնացուն խաշի պես մաքուր և սուրբ մնան մինչև պսակ. տասն և մեկ հատ գաթա և մի աման ձվածեղ:

Երրորդ փայ

Մի փութալի շալ	12 ա.
Մի զույգ ոտնաման	1 ա.
Մի մկրատ և մի աղաման	- 60 կ.
Թել	1 ա.
Հինա	- 10 կ.
Զարազ	- 50 կ.
Գաթա զույգ թվով, կաքժըցրած հավ և 0,5 թունդի ողի	1 ա.
<hr/> Ընդամենը 16-20	

Երրորդ փայի դարձվածք

Երեք մարդկանց ձեռքով ուղարկում են մի փաթուխա շապիկ, մի բամբակյա ֆութայիկա, մի կարմրցրած հավ, մի թոփ հալվա, 3 երկար կուլու և 21 հատ գաթա: Երեք օր մնում, ուտում, խմում և վերադառնում են:

Չարորդ՝ պաների կամ խավժի փայ

Մայիսի 15—20-ին փեսի կողմից մի տղա կամ մի աղջիկ տանում է հարսին.

Մի քաշ պանիր.

Թել պանրից սպիտակ մաղերի նման հուսակ են շինում և ծայրին մի ոսկի կապում, ուղարկում հարսնացուին, որ հարսի մազերն երկար լինի և մինչև սպիտակելը ամուսնու հետ միասին ոսկի օրեր անցնի:

Մի աման հում սեր, որ միշտ սիրով լինին.

Մի զույգ մյաս-բապուճ.

Մի հայելի.

10 կ. հինա և մի շալովի.

Փայ տանողը միայն մի երեկո մնում, լավ հյուրասիրվում և վերադառնում է: Այս փայը դարձվածք չունի:

Հինգերորդ՝ նզմի փայ

Սեպտեմբերին, հնձոցին (հունձի ժամանակ) փեսայի տնից հարսին մի նի ձեռքով ուղարկում են թարմ մրգեր և մի զույգ ճըզմա (կոշիկ): Տանողը միայն այդ երեկո հյուրասիրվում է, առավոտյան վերադառնում:

ԳԵՐԻ

Տղայի տանեցիք ամեն կերպ աշխատում են ուրախացնել իրենց հարսնացուին, ուտի և բացի փայ տանելուց և ամեն անգամ մի քանի օր ուրախութիւն անելուց, նրանք տանում են իրենց հարսին զբոսնելու, այս կամ այն ուխտատեղին ուխտ:

Նշանադրութիւնից հետո աղջիկը տանեցը դուրս չի գալիս մինչև որ տալը կամ տեղեկիներ չգա սրան չհանն դուրս, տանի գրոսնելու, ծաղիկ, կանաչ կոխել տալու, որպեսզի հարսնացուն կանաչի պես կանաչի և ծաղկի պես ծաղկի:

Կանաչ կյուրակեին դարձյալ կերսանքը տանում են հարսին դաշտը սնձի. ընկերուհիների հետ ուրախ զվարթ թափառելով, երգելով ու պարելով ծաղկալից դաշտերում, հարսնացուն սնձի փնջեր է կապում և ուզարկում կերսանքը նվեր:

Կարմիր կյուրակեին կերսանքը տանում են հարսին հանդերը բանջար հավաքելու. խաղը, ծիծաղը, երգը և պարը անպակաս են լինում այսպիսի դրոսանքի ժամանակ: Կերսանքը մի մեծ պարկ բանջար են լցնում և հարսնացուին շալակել տալիս, որ աշխատասեր և զործունյա լինի:

Գերիների ժամանակ, մանավանդ համբարձման, հարսի տեղը կամ կերսարը լծում է սայլը, ներքնակով ու բարձելով զարդարում. յուրաքիններից մի քանիսի հետ հարսնացուին էլ նստեցնում, տանում են սրբի դուռը՝ ուխտ: Այստեղ կերսարը նվիրում է հարսին մի շալովի, մի մեծ խաշկապ թաշկինակ տանձ ու խնձոր. տեղը նվիրում է մի թաշկինակ լապլապու քիշմիշ, մոտիկ ազգականներն ևս կամ մրգեղեն և կամ 50 կոպ.—մի ուրբի փող:

Սրբի առաջ վառում են նախշած մոմ, որ հարսնացուն ալ ու խաշխաշ մնա: Բայց այս բոլոր ուրախությունների ժամանակ փեսան բոլորովին հեռու է լինում հարսից և հաճախ երկար ժամանակ շտեմնելով նրան՝ սաստիկ կարոտում:

ՔԱՍԱՊԻՉԱ

Հարսանիքից մի շաբաթ առաջ փեսայի հայրը կնքահոր հետ գնում է միջնորդի տունը, տանելով յուր հետ մի թունգի օղի: Միջնորդը հրավիրում է աղջկա հորը, նրա և յուր մի քանի բարեկամներին, ծխական քահանային, երեցփոխին և տանտիրոջը: Ընթրիքի ժամանակ, երբ օղու առաջին բաժակը մատուցում են քահանային, սա դիմում է միջնորդին և հարցնում. «Մարկոս ամի, աս ի՞նչ հաց է, մեզի ինչի՞ ես հավաքե»: Միջնորդը պատասխանում է. «Աստված կամենա, առաջիկա շաբթուն Հարութեն ամին հարսնիք պիտի էնև»:

— Աստված աչողություն տա,— ընդմիջում է քահանան,— իրար տալիք-աննելիք ունի՞ք»:

— Ի՞նչ պիտի ունենանք, տերտեր ջան, խառնվում է աղջկա հայրը, խնամիս պիտի բերն հարսնացուին 20 ուտուպիա և երեք քսանօխթնոց օսկի:

Քահանան դառնում է դեպի փեսացուի հայրը և ասում. «Պարտքդ է, բերես պըտի»:

Փեսայի հայրը կամ համաձայնում է և կամ խոստանում է մաղարի հետ բիրել և կամ երկար սակարկում:

Եթե հարսնացուն օտար դուռից է, քահանան փեսայի հորից իմանալով, թե քանի հոգով պիտի գա հարսը տանելու, ասում է. «Հարություն ամին այսքան (10—25) հոգով պիտի գա մաղար՝ հարսը տանելու, ձեզնեն վե՛վ օր գուզե ձիավոր իջեցնե իրեն տունը, թող իմ ձեռքես ընդունե մի բաժակ բախի»:

Հրավիրյալներից շատերն ուրախությամբ ընդունում են քահանայի առաջարկը և ցրվում:

Քասապիչայից անմիջապես հետո, երբեմն էլ առաջ, փեսացուի հայրը մի շիշ օղի առած գնում է ծխատեր քահանային տեսնում, յուր օղիից մի բաժակ նախ ինքը խմում, հետո քահանային և ներկա եղողներին հրամցնում, մնացածն էլ տնեցիներին տալիս դատարկելու և քահանայից «հասության» վկայական առնում, գնում Ախալքալաք դործակալի մոտ և պսակի հրաման խնդրում: Այստեղ սաստիկ աղաչում են գործակալ հորը, իրենց աղքատ ձեացնում և պսակադրամը կարելվույն շափ քիշ տալիս:

Գյուղի տանուտիրոջն էլ տանում են մի ֆունտ շաբար կամ կես ֆունտ սուրճ. գլխին տալիս 10 կ., լուսարարին՝ 10—15 կոպեկ:

ՄԱՂԺԱԺՈՒՄ ԿԱՍ ԳԱԹԱԹՈՒՆ

Հարսանիքի պատրաստությունը միշտ սկսվում է հինգշաբթի օրը. երբ տները հոգում և մյուս օրվա համար կերակրներ են եփում՝ շաղկմե բանջար, շաշբանջար, լոբիաջուր՝ արուկով, լոբի, պաստեղ, կարտոֆիլ և թիթ խոշավ: Մյուս օրը առավոտյան խոհարարուհին (քեյվանին) մի ալրմաղի մեջ քիշմիշ է ածում, ալ փուշիով ծածկում, մի քանի զույգ էլ մեղրամոմ առնում, երբեմն էլ մի շիշ օղի, և պտտում գրեթե ամբողջ գյուղը: Մտնելով նախ քավորի, թաղավորի ազգականների և ապա մյուս գյուղացիների տները, նա ասում է. «Հրամեցեք էրթանք այսինչի տունը դաթաթուխ, տառոսը ձեղի ըլլի», և մի մի բաժակ օղի, մի բուռ քիշմիշ տալիս: Մոտիկ ազգականներին նա տալիս է և մի զույգ մոմ:

Հրավիրվածները մի աման կորկոտ կամ 2—10 կ. փող են տալիս քեյվանուն: Մի ուրիշ կին էլ մի ափսեի մեջ քիշմիշ ածած, վրան մի թաշկինակ և գոգնոցի կապ տանում է երեցկնկան նվեր և խնդրում գալ գաթայի ալյուրը մաղելու: Ճաշից հետո հրավիրվածներից շատերն անշուշտ վերցնում են 1—3 ֆունտ կարագ, կամ 5—12 հավկիթ, կամ յուղ,

կամ սեր, կամ պանիր, կամ էրիշտա և կամ 20 կոպեկ փող և դնում հարսնետունը, տալիս փեսի մորն ու ասում. «Աչքդ լուս, աստված սուրբ պսակին արժանացնե»: Նա էլ պատասխանում է. «Շնորհակալ եմ, որ դուք ինձի օգնեք կը, աստված ա ձեզի օգնե»:

Հետո վերցնում է նրանց բերածները, դատարկում և ամանները վերադարձնում: Գալիս է և երեցկինը:

Նախ բոլորին մի մի բաժակ սուրճ կամ թեյ են տալիս: Հետո տան մեջտեղը դնում են տաշտը, հաճախ դավուլ-զուռնան զալիս ամում է, երեցկինը շքում է տաշտի առաջ, յուր բերած երկու մամը խփում տաշտի ծայրերին վառում, որ հարսը զույգ մնա և պայծառ, յուսավոր լինի. մի կարմիր վալա (քող) ձգում երեսին, որ հարսը ամոթխած լինի և «Աստված սուրբ պսակին արժանացնե, բախտավոր ըլլին», ասում ու մազում է ալյուրը բոլորովին լուս, որ հարսը համավոր լինի, շատ շխտի:

Երբ փոքր ինչ մաղում է, վեց կանաչը 1—5 կոպեկ նվեր տալով երեցկեկանը, հերթով ձգում են կարմիր վալան իրենց ղլխներին և մազում ալյուրը:

Կնքակինը տալիս է իրիցկեկանը 10 կոպ. ալյուրը մաղելու վարձ, իսկ տղայի մայրը օղիով և մյազով հյուրասիրում է ինչպես իրիցկեկանը, այնպես և մյուս ալյուր մաղող վեց կանանց:

Եթե գաթաթուփի ալյուրը իրիցկինը չմաղե, ժողովրդյան կարծիքով հարսը կխեղագարվի:

Ալյուր մաղելուց հետո բոլորը ընթրիքի են նստում և ուտում նախորդ օրը պատրաստած կերակուրները:

Հարուստներն ընթրիքից առաջ մի մի բաժակ օղի են տալիս, որ խմում են երկար բարեմաղթություններով:

Ընթրիքից հետո շատերը գնում են, մնում են միայն կնքամերը և մտակ ազգականներից մի քանիսը: Սրանք 40—100 զույգ գաթա են թխում. հետո կրկին թեյ խմում, ընթրում և մի մի գաթա առած գնում տները: Մի քանի երիտասարդներ էլ երթիկից թոկ քաշ անելով՝ բզավում են. «Բախտավոր հարս ըլլի. ձեռքն ու ոտքը ուղուրով ըլլի»:

Թուկի ծայրը գաթա են կապում, որ քաշում հեռանում են²⁸:

²⁸ Մի քանի գյուղերում հարուստները մորթում են մի մի եղ, որից հարսանիքի ընթացքում պատրաստում են կերակուրները. դավուլ-զուռնի առաջնորդությամբ բերում են եղը, ձգում գետին, և մինչև մտադրված կտրում է վիշը, բավորը ձգում է արյան մեջ մի բաց կողպեք և առանց վերցնելու արև արշույնի միջից. կողպեք և ապա վերցնում այդպես կողպեք պահում է: Այս կողպեքը համարվում է ամուսնական կապերի ամրության և անբախտության նշան: Միևնույն ժամանակ թաղավորը պոկում է եղի պոչից մի քանի մազ, դնում յուր գաշունի պատյանի մեջ և պահում մինչև առագաստ մտնելը: Այս սովորությունը բացատրվում է նրանով, որ ելը համարվում է սեռական արիության նշան:

Նույն երեկոյան հարսնացուի տնից «շապիկ են բերում» փեսացուի տունը. հարսնացուն ընծա է ուղարկում նշանագրության կամ ուրիշ ժամանակ իրեն ընծա տվողներին, և այս ընծաները լինում են նրանց տված ընծաների համեմատ կամ մի զույգ գուլպա, կամ մի զույգ ձեռնոց, կամ սառնապան և այլն, իսկ մոտ երեք ութի տվողներին շապիկ ու վարտիք, որ «շամաշուր» է ասվում: Չամաշուր ուղարկում են նաև փեսացուին և սկեսրանց տան մի քանի անգամներին: Եթե նշանագրությունից հետո սկեսրանց տանը ծնունդներ են եղել, հարսնացուն ուղարկում է նրանց բալուղոց և երեխայի շորեր:

Շաբաթ օրը, եթե հարսը միևնույն գյուղումն է, թագվորի հայրը դավուլ-զուռնով գնում է քավորի տունը և ասում. «Հրամանեցեք էրթանք բարի ուրախության»: Քավորը, քավորկինը և սրանց քնտանիքը, ուր մի քանի մտակ ազգականների հետ օղի են խմում, ճաշում, կաքավում, երգում և ցրվում տները: Քավորին դարձյալ դավուլ-զուռնով ճանապարհ են ձգում մինչև տները:

Իսկ եթե հարսն ուրիշ գյուղ է, փեսայի հայրը հրավիրում է բարեկամներին ու գյուղացիներին, քավորին, ծխատեք բահսանային և երեցփոխին: Հյուրասիրում է սրանց թելով ու ճաշով: Սեղանի վերջը քահանան առաջարկում է. «Ձեզանից ով որ կամենում է մաղար էրթալ, թող իմ ձեռքեն ընդունե բաժակը»:

Հարսնացուի գյուղն երթալ և հարսին բերել կամեցողներն առնում են քահանայի մատուցած օղին և բարեմաղթություններով խմում: Հետո քահանան մի բաժակ ևս առաջարկում է նրան, ով կամենում է հարսին յուր տունն իջեցնել: Մինչև պսակը հարսը կերտանց տուն չի մանում: Փեսայի մոտ ազգականներից միևնույն ընդունում է բաժակը:

Հետո արդեն մի քիչ էլ սևում է ուրախությունն և բոլորը ցրվում են:

ՄԱՂԱՐ-ԽՈՒՄ

Նույն շաբաթ օրը ճաշից հետո մաղավորները հավաքվում են փեսացուի տունը, նախամաշիկ անում, ապա ցրվում և ձի հեծած նորից հավաքվում: Այս ժամանակ փեսացուի մայրը բերում է մի գաթա և բաժանում բոլորին: Փեսացուի հայրը և քավորն առնելով իրենց հետ հիլնան և «նարկը», ձխավորվում են և ահագին աղմուկով, երգով, խաղով ու դավուլ-զուռնի առաջնորդությամբ ուղղվում դեպի հարսնացուի գյուղը: Երիտասարդ մաղավորները ճանապարհին աշխատում են իրենց բոլոր շնորհները բանեցնել, արշավում են, չլիթ խաղում, երգում ու հազար

Աղջի հարսնառդ էկավ գեղի վերեւն,
Քեզի ալ քողք բերեց թղթի թերերին,
Մի՛ լա, մարիկ, մի՛ լա, էկեր կըտանին,
Օխտն ախպոր մէ քուրը ջոկեր կը տանին:

Մարիկներ խափեցին մե թոփմ շամով,

Քուրիկներ խափեցին մե ձեռքմ հինով,

Ախպորը խափեցին մե մահուդ շուխով,

Մի՛ լա, մարիկ, մի՛ լա, էկեր կըտանին,

Օխտն ախպոր մէ քուրը ջոկեր կըտանին:

Հոր խափեցին, մոր լացուցին,

Ախպոր լյուլեն կոտորեցին,

Քրոջ վալեն պատտեցին,

Մի՛ լա, մարիկ, մի՛ լա, էկեր կըտանին,

Օխտն ախպոր մի քուրը ջոկեր կըտանին:

էրթամ, էրթամ՝ հետու տեղեր հեռանամ,

էփոր մարիկս միտքս ըյնի, մեջքս բռնեմ կըռանամ,

Մի՛ լա, մարիկ, մի՛ լա, էկեր կըտանին,

Օխտն ախպոր մէ քուրը ջոկեր կըտանին:

Մի՛ լա, մարիկ, մի՛ լա, լալողը ես եմ,

Ղարիպ երկրները կորողը ես եմ:

Հարսնացուն այս երգից զգացված սաստիկ լալիս է, իսկ հայրը բռնկով սրա ձեռքը՝ հանձնում է սկեսրին, ասելով.

— Տիա՛, խնամի ջան, տիա քո ամանաթղ, տա՛ր: Փառք աստծու, որ էրիսի ջրով կրցա քեզի տա, ուղուրով ըլլի, ատոված սուրբ պսակին արժանացնե, մե բարձիմ ծերանան»: Հետո դառնալով յուր դստեր, համբուրում է երեսն և ասում. «Գնա՛, օղու, աստված հետդ ըլլի, էստից էսե աս է քու հարդ, պատվե ատոնց, մարդուդ հնազանդ էղի, տեսնեմ քեզի՛ էրեսս սե չենես»:

Իսկույն քավորը 20—40 կոպեկ տալիս է այն պատանուն, որ նստել է հարսնացուի ձին, սա իջնում է և առաջարկում ձին հարսնացուին, սկեսրայրը և հայրը վերցնում են հարսնացուին և նստեցնում ձիուն: Հետո սկեսրայրը տալիս է երկու ուրբի օժիտի սնտկի (արկղի) վրա նստող կնոջը, 12 շահանոց, օրինակ 12 առաքելոց, ոսկի՝ հարսի մորը, մի քանի կոպեկ վարպետավարձ այն կնոջ, որի մօտ հարսը ձեւել, կարել, գործել է սովորած լինում. և բոլոր մաղրավորներն ահագին աղաղակներով, հրացանի պայթյունով և ջիլիթ խաղալով, դավուլ-զուռնի առաջ-

նորգությամբ դիմում են դեպի փեսացուի գյուղը: Մաղրավորներից մի քանիսն աշխատում են հարսնացուի տանից գողանալ օղու բաժակ, որ հարսն ուրախ լինի, գրաւ, որ հարսը զամաթն յուր հետ բերե: Երբ մտտենում են իջևանատեղվույն, հարսի ձիու գավակին նստեցնում են մի տենում են երեխա, այն խորհրդով, որ հարսն արու գավակներ շատ ունենա: Այս ծամանակ հարսը հանում է գրպանից փոքրիկ հայելին և դարձնում նախ՝ դեպի եկեղեցին և ապա դեպի կերտանց տունը, որպեսզի եկեղեցին գութ տա կերսանցը, որ իրեն պայծառ պահեն: Գյուղի մօտ հարսին դեմ են բերում մի գառ, և հարսը պետք է ձեռով վերցնե անն ձիու վրա և կամ հարսնեղբայրը պետք է կծե գառի աղանջը և կտրե: Այս գառը համարվում է անմեղության օրինակ: Թագվորն էլ թագվորացուների հետ մի բարձր տեղ սպասում է, երբ հարսն անցնում է, թագվորացուները ուռա են բզավում, իսկ թագվորը քիշմիշ է լցնում հարսի գլխին, կամ խրնձորով խփում է, որ անուշ լինի: Հարսին իջեցնում են մի կաթսայի վրա, որ «ձենով»՝ «համբավավոր» լինի և դնալով հարս իջեցնողի տունը, բոլոր մաղրավորներն ուռում, խմում և քնթրում են: Հետո հարսին այնտեղից մեծ ուրախությունով բերում են սկեսրանց տուն: Դուռն առաջ հարսին ընդառաջ է ելնում սկեսուրը: Վերջինիս աչքալույսն են տալիս և հարսը հանձնում նրան: Նա համբուրում է հարսին և ձեռք բռնած տանում նրա համար պատրաստած տեղը: Հետզհետե հարևան հարսեր և օրիորդներ գալիս են նոր եկած հարսին տեսության, իսկ դրացիները գալիս են աչքալույս տալու փեսայի հորը: Հարսի հետ լինում են նրա երկու հարսնեղբայրները, որպես նրա թարգմաններն ու հավատարիմ պահապանները: Հենց որ նոր եկած հարսը փոքր ինչ հանգստանում է յուր հարսնեղբայրների հետ, երկու նշանավոր թագվորցի²⁹ մի շիշ օղի առած գալիս են հարսնեղբայրներին տեսության: Մարով էք էկե, հագար բարով, ասում են նրանք:— Հըլպտ մեր փեսի խանում զոնքանջը իմացած զըլլի, որ թագվորցիներս ընկերութեն կենենք իրեն ազիզ փեսին հետ, պահենք, պահպանենք ու ուրախացնենք կը, ու մեր փայն աղրկած զըլլի ձեզի հետ»:

— Ինչդ չէ, մենք շատ շնորհակալ ենք, որ դուք մեր փեսին ատպես պահեք պահպանեք կը, ահան, մեր քիշը շատի տեղ դրեք, առեք ձեր փայլը,— ասում են հարսնեղբայրները:

Ընծան լինում է մի խորոված հավ, մի քանի գույզ գաթա և հավա: Այդ գիշեր թագվորցիք և հարսնեղբայրները միմյանց վերաբերությամբ

²⁹ Թագվորցիներ լինում են մի քանի պատանիներ, որոնք շարաթ երեկոյից սկսած միևնուրեք շարթի, պսակի ավարտը, փեսային ընկերակցում և երա հետ ուրախանում են:

շատ զգուհշ են լինում, որովհետև առաջիններն աշխատում են մի որևէ բան գողանալ հարսի վրայից, որպեսզի հարսնեղբայրներին մի բանով տուգանքի ենթարկեն, իսկ վերջինները հնարում են փեսայի վրա մի բան, կամ աշխատում են թոնրի պարագաներից մին գողանալ, որ թագվորցիներից մի բան ստանան:

ԹԱԳՎՈՐ ԿԱՆԳՆԵՑՆԵԼ

Շաբաթ երեկոյից սկսած թագվորին շրջապատում են հասակակից շամուսնացած երիտասարդներ, որոնք թագվորցիներ են կոչվում: Սրանք ամեն շանք գործ են դնում թագվորին զբաղեցնելու և ուրախ ժամանակ անցկացնելու: Կիրակի օրը թագվորը գնում բարեկամներից մինի տան մեջ թագ է կենում: Այս ժամանակ թագվորի տնից մինը գալիս է և բերում է հինա և մոմեղեններ: Այստեղ նա իմանալով, որ թագվորը շկա, խրախուսում է թագվորցիներին՝ գնալ պտրել նրան: Մի քանի գյուղերում այս հանդեսը կատարում են շաբաթ երեկոյին, ուստի և քավորը բաժանում է թագվորցիներին մոմեր: Բոլոր թագվորցիները դավուլ-զուռնի առաջնորդությամբ այս ու այն տուն ընկած պտրում են, և հրք գտնում են, մի շիշ օղի են տալիս տանտիրոջն և թագվորին առնում: Տանտերը թագվորի բուկը մի ալ թաշկինակ է կապած լինում իբր նվեր: Թագվորցիք այստեղից թագվորին շարքյակու աչ թևը հանած և քավորը աչ կողմը կանգնած կաքավելով տանում են քավորի սունը, ուր նախ մի հորով-մորով շամուսնացած երիտասարդի, ապա թագվորի և հետո քավորի երեսները սափրում են: Սափրիչը թագվորի միտուքի կեսը սափրելուց հետո կանգ է առնում և ասում. «Ածըլին քոռ է, շի կտրե, ճերմակ լիսան կ'ուզե»: Քավորը մի քանի կոպեկ է տալիս:

Սափրելուց հետո թագվորցիք նախ մի հորով-մորով շամուսնացած երիտասարդի և ապա թագվորին լողացնում են գոմը տաշաի մեջ, որպեսզի նա ևս այդ երիտասարդի պես հորով-մորով մնա: Վերջը դիրի մազերը վեր ցցելով՝ օճառ են քսում վրան և ասում. «Տե՛, քանքյուր ծուռն է, դրզե, քավոր աղա»: Քավորը մի շիշ օղի է խոստանում: Թագվորին լողացնելուց հետո մինը շալակում բերում է օղան, ուր և հազցնում են հանդերձը: Այդ օրը հարսնացուի տանից դավուլ-զուռնի առաջնորդությամբ և տան փոքրիկներից մինի ձեռքով ուղարկված է լինում փեսացուին մի շապիկ, մի վարտիկ, մի լաստիկ արխալուզ, մի մահուզ շուխա, կլապիտոնով ելակ, զանգյալ, գուլպա և ապրեշում դյուզպաղի (ծնկի կապ): Բերողին պատվում և մի զույգ շուստիկ են նվիրում: Այս

ժամանակ հրավիրում են քահանային, օրհնել տալիս հարսնացուի տանից ուղարկված փեսացուի վերոհիշյալ հանդերձները և մի քանի կոպեկ աշհամբույր տալով նրան ճամպում ու իրենք հրգեր երգելով հազցնում, զարգարում թագվորին: Ամեն մի հագուստը հազցնելիս վեր են բարձրացնում, ցույց տալիս հավաքված կանանց և գուշում. «Աշեցե՛ք, մամտիք (մայրիկներ), շերթաք փուշա (խարդախ) մորերուզ հորերուզ գանգըտիք, մեր թագվորի զոնքանչն իր փեսին դրկեր է աս... ո՛ւր տեղաց բան է»: Հանդիսականները հեռավոր տեղերի անուն են տալիս՝ Ստամբուլու, Չինումաշինու, Պետեպոլու... բան է...

— Գինն ի՞նչ է:

Շատ բարձր են գնահատում: Մի ուրբու իրեղենին հարյուր ուրբու գին են դնում:

— Լավ գնահատեցիք, շե՛ն մնա զոնքանչը,— գուշում են թագվորցիները և հազցնում երգելով.

Հա՛յ հագուցեք, հագուցեք,
Տարեք խաս պաղշան թագուցեք,
Բմբուլ գողինք (անկողին) ձգեցեք,
Վարդ ծաղկանց մեջ քուն դրեք:

Քավորն այս ժամանակ մի զույգ յամանի է նվիրում թագվորին և մի ալ թաշկինակ կապում վիզը, ծայրերը բաց թողնելով: Իսկ հին շուստիկները ժամակուշը գալիս պահանջում տանում է իրեն: Հետո թագվորցիք նստում օղի են խմում, հաց ուտում, որ առնվազն երեք տեսակից է բաղկացած լինում. խաշ, յալնի և փլավ. կաքավում, շարունակ երգում և ուրախանում են: Հացից հետո թագվորցիք դավուլ-զուռնի առաջնորդությամբ տանում են փեսացուին իրենց տուն: Մայրն ընդառաջ է ելնում փեսացու որդուն և համբուրում է աչքերը: Թագվորցիք շնորհավորում են մորը, ասելով. «Աշըզ լուս, ասաված սուրբ պսակին արժանացնե՛»: Մայրը շնորհակալ է լինում և բուրբին հրավիրում է տուն, ուր մի բարձր տեղ կամ աթոռի վրա նստում է թագվորը: Գրսից եկողները հաճախ ասում են. «Թագվորը թառն է»: Իսկույն թագվորը ելնում կանգնում է: Մյուսները պատասխանում են. «Աստծու գառն է»: Եվ այս ժամանակ թագվորը նորից նստում է: Երեկոյին թագվորի և թագուհու ձեռքերը հինա են դնում:

Պսակի խորհուրդը կատարվում է երկուշաբթի առավոտյան: Առավոտ վաղ փեսայի տնեցիներից մինը մի շիշ օղի առած գնում հրավիրում է նախ քավորին և հետո քահանային ու հարսնետոհմերին կամ մաղրվորներին: Բոլորը գալիս հավաքվում են փեսի տուն, օղի խմում, նախաճաշում և գնում հարսնատ: Դավուլ-գուռնի առաջնորդությամբ տղամարդիկ և կանայք գնում են հարսի տունը, թագվորի կողքից սուրը ձեռքը գնում է քավորը: Թագվորը ու քավորը կանգնում են տան մեջտեղը: Թագվոր-ցիք բզազվում են. «Թագվորը թոփալ է»: Հարսի կողմի մարդիկն էլ բզազվում են. «Հարսը թոփալ է» և այս այն նպատակով, որ հարս ու փեսա շուտով միմյանց մոտ գան: Այս ժամանակ հարսը լալիս է, հայրը համբուրում է հարսին ու ասում. «Գնա, օղուլ, աստված հետդ ըլի, խելք ու շնորհք տա, խոնարհ ըլիս, մարթուդ հնազանդ ըլիս»: Հարսնացուն փաթաթվում է հորը և ձեռքն ու կուրծքը համբուրում, որպեսզի հոր ձեռքն ու գուլբը յուր վրայից անպակաս լինի: Հայրը հարսնացունին հանձնում է փեսի տորը և ասում. «Տար, մեկին հաշար խելը տես»: Սա բըռնում է խնամու ձեռքը, սեղմում է և ասում. «Շնորհակալ եմ, շեն ու պայծառ մնա տունդ, մեր բարեկամությունը էստից էտե պըտի ըլի»: Այս ժամանակ հարսը խոնարհում և համբուրում է կերասարը ոտքը, իսկ սա վեր բարձրացնելով նրան՝ ասում է. «Մի լա, օղուլ, ես սաղ ըլիմ»: Հարսն ու փեսին կանգնեցնում են միմյանց մոտ՝ հարսը փեսի աջ կողմը, փեսի մոտ քավորը, հարսի մոտ հարսնեղբայրը թեանցուկ: Այս ժամանակ հավաքված կանայք ասում են մորը. «Թնդրի խիին նստի, թնդրի խիին, որ աղջիկդ տունը մնա ու շատ ա շրջիկ ըլի»:

Քահանան կատարում է ձեռնադրությունն, և բոլորը շարժվում են դեպի եկեղեցի: Յուրաքանչյուր զոնից անցնելիս քավորը սուրը խփում է դռան «սուփին» ու հարս ու թագվոր անցնում են սրի տակով, որպեսզի շարը լիփի նրանց: Մրանց առաջնորդում է դավուլ-գուռնան: Թագվոր-ցիք կաքավում, գոտեմարտում, հրացան են արձակում և իրենց աղաղակներով օղը թնգացնում: Հանկարծ մինը վազում և թագվորի գլխարկն ատնում փախչում է: Թագվորցիք ընկնում են ետևից և եթե բռնեն, մի լավ թակում ու գոտակը բերում գնում են թագվորի գլուխը, իսկ եթե չեն կարողանում բռնել՝ փեսի տնից բերել են տալիս մի հավ, երկու գաթա, մի շիշ օղի, տալիս նրան և առնում գոտակը: Այս ստացածը պատկանում է բոլոր թագվորցիներին:

Երբ հասնում են եկեղեցու դուռը՝ ժամկույր կամ երեսփոխանը փա-

կած է լինում դուռը և բաց է անում միայն այն ժամանակ, երբ քավորից ստանում է 10—15 կոպեկ:

Պսակի խորհուրդը կատարելուց հետո քահանան տալիս է թագվորի ձեռքը ավետարան, իսկ քավորի ձեռքը խաչ և կանգնեցնում սեղանի առջև: Բոլոր հարսնետոհմերը նախ համբուրում են քահանայի ձեռի խաչը, հետո թագվորի կրծքին բռնած ավետարանը և քավորի ձեռի խաչը և խաչհամբույր ձգում մտաբ դրած ափսեի մեջ, որ պատկանում է քահանային:

Հետո շարականի և ձնձղակների հնչյունով դուրս են գալիս եկեղեցուց և ուղևորվում դեպի փեսայի տունը: Այժմ ուրախությունն առաջվանից կրկնապատկվում է, հրացանների պայթյուն, կեցցեներ, գոտեմարտ և կաքավ տեղի են ունենում գրեթե ամեն քայլում: Մի քանիսն էլ ուլխար, զառ, հավ են բերում գետին խփում թագվորի առաջ և գանակը քսում, սպասելով քավորի հրամանին: Եթե հրամայում է, մորթում են և արյունից քսում թագվորի ճակատին, իսկ եթե ոչ՝ մի քանի կոպեկ ստանում, գնում: Կես ճանապարհին հարս և փեսա կանգ են առնում, մինը կաքավում է, իսկ նշանած երիտասարդների հարսի կողմից ազգականները մի մի թաշկինակ են կապում իրենց փեսացուների բեկերն ու թեփերը, իսկ թագվորցիք բզազվում են. Շեն կենա այսինչը, կանչել է փեսին մե յայլըղմ:

Երբ մոտենում են թագվորի տունը, թագվորցիք բարձր կանչում են.

Թագվորամե՛ր, դուս արի,
Դսի դռան դեմ արի.
Քու խաչ որդիդ էկեր է,
Կաքվա դոխիկ բերեր է:

Մոռ հետ դուրս եկողներն էլ կանչում են.

Թագվորամե՛ր, դուս գնա,
Դսի դռան դեմ գնա,
Քու խաչ որդիդ էկեր է,
Գլուխդ դմփող բերեր է:

Թագվորցիք շարունակում են.

Թագվորամե՛ր, դուս արի,
Դսի դռան դեմ արի.

Քու խաշ որդիդ էկեր է,
Տներդ ավլող բերեր է:

Մտեր կողմինները.

Քաղվորամե՛ր, դուս գնա,
Դսի դուան դեմ գնա,
Քու խաշ որդիդ էկեր է,
Մազդ փետող բերեր է:

Քաղվորցիք.

Քաղվորամե՛ր, դուս արի,
Դսի դուան դեմ արի.
Քու խաշ որդիդ էկեր է,
Թնդիրդ վառող բերեր է:

Մտեր կողմինները.

Քաղվորամե՛ր, դուս գնա,
Դսի դուան դեմ գնա.
Քու խաշ որդիդ էկեր է,
Թնդիր կոխող բերեր է:

Վերջապես Քաղվորամայրը դուրս է գալիս, իսկույն Քաղվորցիք մի դարձրած փափախ (գդակ) գնում են դիտին, ավելը որպես ազի կապում հտեկից, սամինները գոտին խցկում: Քաղվորամայրը պարում է և Քաղվորի ու հարսի աչքերը համբուրում: Այս ժամանակ խոհարարուհին տալիս է Քաղվորցիներին մի հավ և ափսեի մեջ դրած հալվա ու մի քանի զույգ գաթա: Քաղվորցիներից մինը գաշույնի մի հարվածով կտրում է հավի գլուխը. եթե շհաջողացրեց, մի հավ տուգանք է տալիս, և այժմ մի ուրիշ Քաղվորցի է աշխատում թոցնել դրա գլուխը: Այս հավերը և գաթան ու հալվան տալիս են խոհարարուհուն պահելու, որ մյուս օրը վերադարձնեն: Մինն էլ մի կատու է բերում, և հարսնեղբայրն ամենայն պատրաստակամությամբ խածում է նրա ականջը, որ հարսի ոտքը «ուզուրով ըլլի»:

Հարս ու Քաղվոր մտնում են ներս, նրանց առաջ ձգում են թոնրի ակիշը, եթե հարսը վերցրեց՝ տնարար է, եթե չվերցրեց՝ տնավեր, հարսին տանում են առև, ուր նա փոքր ինչ ավլում է, որպեսզի խոտվու-

թյունը կերսանց տանից հեռանա, փոքր ինչ աղ առնում ցանում է կերակրներին, որ կերսանց հետ սիրով ապրի: Հետո տանում են օդի կամ տան մի անկյունում վարագույրով կտրած բաժնում նստացնում: Բայց խոհարարուհին նրանից առաջ քաղված է լինում հարսի տեղը, մի զույգ զուլպա պետք է տալ, որ վեր կենա:

Թուր հարսնեղբայրը գնում նստում են օդան, բերում դնում են խոնշուն և սկսվում է սաշու, նվիրատվություններ հօգուտ նորապսակների:

Սաշու կանչողը բարձր բղավում է.

— Ըսեք շեն մնա՛, շեն մնա՛:

— Ո՛վ,— հարցնում են այս ու այն կողմից:

— Ազա այսինչը. ձին վազուկ ըլլի, թուրը կտրուկ ըլլի, բարեկամը բարեկամ, շարակամը թոռ ըլլի, իրեք մանեթ թագավորին ընծա:

— Ենն մնա՛, շեն, գոշում են այս ու այն կողմից:

Սաշուից հավաքվում է մոտավորապես 20—30 ուրլի, նայելով թե հարսանիք անողը և նրա հարսնեղբայրը ինչ կարողության տեր մարդիկ են:

Սաշուից հետո դավույճիք են դնում դավույլը, որ «տեսնեն», այսինքն փող տան. ամեն մարդ 3—20 կ. փող է նվիրում:

Սրանից հետո էլ խոհարարուհին է գալիս և 2—20 կ. յուրաքանչյուրից առնում, որ խաշի բերանը բանա:

Վերջապես բոլորում են սեղանների շուրջը և ամենայն ախորժակով ուտում խաշ, յայնի, բյուֆթա, փլավ և պանիր: Իսկ օդին առատությամբ բաշխվում է տան երիտասարդներից մինի ձեռքով:

Ճաշից հետո հասարակաց պար է լինում կամ փեսի գոմում, եթե միայն այն ընդարձակ է, և կամ մի ուրիշի: Պարը տևում է մինչև կեսգիշեր, և դրան մասնակցում է ամբողջ գյուղը, առանց նույնիսկ հրավիրելու:

Գիշերը հարսը գնում քավորին հանվեցնում, պառկեցնում է, իսկ ինքը գալիս հարսնեղբոր հետ է պառկում. իսկ փեսան գնում մտնում է քավորի ծոցը:

Հետևյալ երեքշաբթի օրը Քաղվորի տնեցիք հրավիրում են սաշու տվողներին և քավորենց, թեյ, օդի խմացնում և ճաշ սալիս, որից հետո քահանան վայր է առնում պսակը և մի բաժակ օշարակ խմացնում հարս ու փեսին: Հետո քահանան առնում է քավորի սուրը և ասում. «Հարսի լեզուն պիտի կտրեմ»: Քաղվորամայրը ազաչում է շկտրել և մի զույգ զուլպա է նվիրում:

Քաղվորցիք էլ առնում են խոհարարուհուն պահ տված իրենց հավե-

րը, զաթան ու հալվան, միանում են հարսնեղբայրների հետ, առնելով նրանցից և նրանց բաժին մի քանի ղույզ գաթան, մեկ թոփ հալվան, մի խորոված հավը, հարսնատնից էլ մի շիշ օղի, փեսայի հետ միասին մի տեղ հավաքվում, խմում, ուրախանում:

Երեկոյին հասարակաց պար է լինում: Կեսգիշերին հարսն ու փեսան միմյանց ձեռք բռնած մտնում են պարը, բավոր փեսի, իսկ հարսնեղբայրը հարսի ձեռքն է բռնում, մի մի վառած մոմ էլ ցանկացողը առնում է ձեռքը և պարում են: Փողովորդյան բացատրությունը մոմը օրինակ է պսակին: Պարելիս թաղվորը այ ձեռքով հանում է այ գրպանից ցորեն և շաղ է տալիս, որպեսզի, իրենց բացատրությամբ, ցորենը առատ լինի: Մրանով նա իրավունք էլ է ստանում ցորեն ցանելու, որովհետև շամուսնացածներն իրավունք չունին ցորեն ցանելու:

Երեք պատույտ կատարելուց հետո հարս ու փեսան ղույս են գալիս պարից, որ փոքր ինչ էլ տևում է և վերջանում:

Չորեքշաբթի առավոտ հարսնաերը հրավիրում է կնքահայրերին, կնքակիներին և մոտիկ ազգականներին և թեյով ու նախաճաշիկով պատվում: Նախաճաշիկից հետո ուրիշ պուղերից եկած հարսնեղբայրներին և հարսնեղբորը ճանապարհ են ձգում դավուլ-գուռնով:

Գիշերը հարս ու փեսան առազաստ են մտնում: Խոհարարուհին ձգում է անկողինը, մոտը հալվա, մեղր ու շաքար դնում, որ նորապսակներն անուշ-սիրով լինին, ինքն էլ դրան ետև պահ է մտնում, սպասելով կուսությունն ապացուցանող «շարսավին»: Եվ եթե մի փոքր ինչ ուշանում է, նախատելով շտապեցնում է:

Եթե ազջիկը կուսությունը կորցրած է լինում, վախենալով այն մեծ նախատիներից, որ կրելու է անեցիկներից և սրանց ազգականներից, արտասվում և ներողություն է խնդրում ամուսնուց, որ կաշառում է խոհարարուհուն, և սա մի աղավնի մորթում ու արշունտում է «շարսավր»: Խոհարարուհին տանում շարսավը ցույց է տալիս նախ փեսի և ապա հարսի մորը, շնորհավորում նրանց և բնծաներ ստանում:

Հինգշաբթի առավոտ հրավիրվում են ազգական և զրկից կանայք. այդ օրը բացառապես միայն դրանց է պատկանում: Ծաշին մատուցանում են խավիժ և այս կերակրի անուռով՝ այս օրը կոչվում է խավիժի օր: Նախքան ճաշի նստելը հրավիրվածներին աչքի լույս են տալիս և հնումն ցույց էին տալիս «շարսավր», սակայն այժմ այդ սովորությունը վերացել է: Ծաշից հետո բերում են հարսի օծիաը, և մի կին նախապես մի ուրբի նվեր ստանալով կեսուրից, բաց է անում և մեկ մեկ ցույց տալիս հանդիսականներին:

Հարսի օծիաը պատրաստվում է հագեմասու, սաշուի և երեստե-տանրի փողերով: Հայրը ոչ միայն իրենից ոչինչ չի անում, այլև այդ փողերից գողանում է: Հարսի օծիաը զլխավորապես բաղկացած է լինում հետևյալ կտորներից.

Երկու շուխա ջուպպա.

Մեկ փութալի շալ.

Մեկ դատիֆա խրիսա.

Մեկ կապույտ խրիսա.

Երկու իշլիկ, մեկը ֆանել, մյուսը պուրսո.

Չորս անթարի.

Տասնեմեկ հատ շապիկ.

Նույնքան վարտիկ.

Տասնեերկու հատ կրծկալ.

Յոթն հատ գոգնոց, 5 շալից, 2 մահուդից.

Մի էհրամ.

Գլխի տասն և երկու շալովի.

Երկու վարդ.

Երկու յազմա.

Երկու շիքիլա.

Երեք թոռ կամ յափուլ.

Երեք ղույզ ոտնաման՝ մի ղույզ կիսակոշիկ, երկու ղույզ մյաս-բապուճ, երկու ղույզ գուլպա, մի արկղ, մի արկղիկ, մեջը թել, կոճ, ստեղ, ճաղ, թեշիկ, լուցկի, հայելի:

Ղիլա—նվերներ.

Կերասրոջը՝ մի շապիկ, վարտիկ:

Կեսուրոջը՝ մի վարտիկ:

Տաղրներին՝ մի մի ղույզ գուլպա և թուղուխ:

Կնքավորին՝ մի շապիկ, վարտիկ:

Կնքավորի տնեցիներից յուրաքանչյուրին՝ մի ղույզ գուլպա և սոնապան կամ կանանց գուլպա և գոգնոցի կապ:

Փեսի բարեկամներին, որոնք նվերներ են տվել հարսին, նայելով նրանց տվածին, շամաշուր կամ գուլպա, սոնապան և այլն:

Նորահարսը մի կարճ միջոցից հետո այս հանդերձներից մի քանիսը ծախում և յուր ոսկիները մանրում ու մի գոմար կազմելով, շալով է տալիս, որպեսզի յուր և յուր որդիների հանգեթը հոգա, որովհետև կերսանքը շատ հազիվ է պատահում, որ հարսերին կամ նրանց

որդիներին շոր անեն:

Այս դրամը հարսերը «արնգին» են կոչում:

Այսպես վերջանում է հարսանյաց հանդեսը, և այնուհետև սկսվում սովորական կյանքը:

ՏՂԱՔԵՐԻ ԵՎ ԿՆՈՒՆՔ

Ախալքալաքի պավառի հայ գյուղացի հզի կնոջ դրուձյունը շատ աննախանձելի է. նա մինչև ծննդաբերությունը կրում է տան բոլոր ծանրությունը: Այն միայն նպաստավոր է հզի կնոջ համար, որ այս ժամանակ եթե «մտափոխ» է լինում, այսինքն մի բան է ցանկանում ուտել, անշուշտ գոնում, տալիս են, ապա թե ոչ՝ նրանց կարծիքով, ապագա երեխայի աչքը ծուռ կլինի: Բայց եթե կինը ի շարն է գործածում դրանց հավատք, նրան «բարբոզ» են անվանում և մի խնձոր ծածուկ լվանում են լակամանի մեջ և տալիս նրան, որ ուտե և բարբոզությունն անցնի, կամ մի քարղանի մեջ դնում են ամուսնու տրեխը և ծածկած տալիս հզի կնոջը, ասում. «ել, ել, մարդտ բան է բերե», Կինը միամիտ վեր է կենում, առնում, բանում է քարազանը, տեսնում է տրեխը, ղզվում, և բարբոզությունն անցնում է: Թեև հավատում են, որ երեխան ում դեմը խաղա, նրա բնավորությունը կստանա, սակայն հանգամանքները թույլ չեն տալիս նրանց ընտրելու և լավ մարդկանցով շրջապատելու: Հաճախ պատահում է, որ, իրենց ասելով, երեխան շան, իշու դեմ է խաղում և զրանց բնավորությունն էլ ստանում:

Հզի ժամանակ զշուշանում են երկու այր մարդկանց միջից անցնելու, որ երեխան կոխ չլինի՝ ժամանակին ոտք ելնե, քայլե: Նաև մատաղ գառի միս չեն ուտում, որ երեխաները թիփի չլինին՝ դեռահաս չմեռնին:

Նրկունքի ժամանակ կինը ծուր է շորում ուր էլ որ պատահում է, միայն տղամարդկանցից հեռու, իսկույն կանչվում է ծննդականի մայրը, եթե միայն ծնունդն անդրանիկն է, և սա յուր հետ բերում է բալուղոցը: Գալիս է և դայեկը (մանկաբարձուհին), որ յուր հնարագիտությամբ աշխատում է թեթևացնել ծնունդը: Թեև կանայք ընդհանրապես հեշտածին են, բայց և պատահում է, որ երկար տանջվում են երկունքի ցավով: Այսպիսի դեպքերում կնոջը կապերտի մեջ դնում, օրորում են, մեջքից շալակելով թախլա են դարձնում, նստեցնում են մի ուրիշ նրստած կնոջ ծնկների վրա և հետեից առնում երեխան, բերանը շիշ են տալիս և ստիպում են փչել, սիրացու են կանչում և գլխին համայիլ կար-

դայնում: Միևնույն նպատակով փեշի մեջ ածած ջրից երեք անգամ խմեցնում են ծննդականին և մնացածը սրսկում երեսին, կամ ամուսինը և կամ նա, ով տեսել է օձը գորտին խայթելիս, բաժանել է նրանց և երեք անգամ անցել, դարձել նրանց միջով: Իսկ ինքը՝ ծննդականը, անիծելով յուր սև բախտը, Չորեքմուտքին, Ուրբաթմուտքին և Կիրակմուտքին օգնություն է կանչում: Ժողովրդյան կարծիքով երեխան աշխարհ գալիս (հոգեցեն հոգի բաժանվելիս) ծննդականն ասածուց ինչ խնդրե, կկատարվի:

Եթե երեխան անծայն է ծնվում, նրան պառկեցնում են սառը ջրի մեջ, գլխին ամանով՝ «թատով», սառը ջուր դնում, մեջքը ծծմբի լուցկի վառած, ընկերքի տակը կրակ են լցնում և պորտը դեպի երեխան քաշում, ականջի տակ ամաններ միմյանց խփելով հնչեցնում, մինչև որ հոգևորնա: Եթե ծնունդն առաջինն է, և մայրը դարձյալ տանջվում է սանձու ցավով, ամուսինը ջուրը մկրտում է, այսինքն մկրատով կտրում է, կամ ծննդականը յոթը հատ դայթնե կոճակ է կուլ տալիս, որ սանջուն կտրի: Դայակը երեխայի պորտը կտրում, «Օրհնյալ հայր սուրբ, աստված ճշմարիտ» ասում և բախտավոր լինելու համար աթրի վրա է դնում, դանակը քոտ է, շի կտրե», փող են տալիս, որ բերանն է առնում և կտրում. երբ ընկնում է՝ տանում թաղում է եկեղեցում, որ երեխան ժամասեր լինի, ուտեցնում են անասունի, որ անասնասեք լինի և կամ զցում շարշու պոխչան, որ շոր գտնող կամ շարշի լինի: Իսկ դանակը դնում են ծննդականի բարձի տակ, և երեխան մյուսոսնից հանելիս, մեռնջրում լվանում, որով և սրբվում է:

Դայակը, աղոթք շշնջալով, երեխային դնում է մաղի վրա, որովհետև դեռ անկնունք է և եթե գետնին կամ ուրիշ բանի վրա դնեն՝ «չարերը կզարնեն» կամ կոխ կլինի: Հետո ծննդականին կանգնեցնում է տաշտի մեջ և տերունական աղոթքն ասելով՝ կիսից վայր լվանում և պառկեցնում գոմի օդան:

Եթե ծննդականն ուրիշ սենյակ է ազատվել, նրա ձեռքը տալիս են ծայրին մի սոխ ցցած ափիշ, և սա տերունական աղոթքն ասելով և յուրաքանչյուր շեմքից անցնելիս երեսը խաշակակքելով՝ գնում պառկում է օդան:

Ծննդականի սնարի մոտ դնում են ափիշ, սանդերք և այլ երկաթե-դեն, բարձի տակ պահում են սուր, նարեկ, նշխարք կամ հաց, վերմակի վրա շուլալում են ասեղ, և այս բոլորը նրա համար, որ շարերը չմոտենան: Ծննդականին պառկեցնելուց հետո դայակը լողացնում է երեխային տաշտի մեջ, եթե առողջ է՝ զուլ, իսկ եթե վատառողջ՝ սառը ջրով,

վրան աղ ցանում, մոր անկողնու վրա բալուլում, վրան մի հաց դրած
և թևերին առած տան մեջ մի սյան բոլորն երեք անգամ պտրտում, որ
չարը չդիպչի, հետո ձեռքին ակիշը, ծայրին սոխ, ելնում է դուրս, դառ-
նում դեպի աղոթարան և երեք անգամ ասում. «Աստված, տղիս զամա-
թը բաց էրա», ապա գալիս է ներս և շնչում հետևյալ աղոթքը.

Էրնեկ, էրնեկ վարդակուսին,
Լուսաթաթախ թուրն էրեսին,
Վանքը մտավ նորսեսին,
Շուրջանն առավ Քրիստոսին,
Մնավ բերեց Աստվածորդին:
Անբան մտուրը դրվեցավ,
Խանձբալուլով բալուլեցավ,
Գետ Շորդանան մկրտեցավ.
Մարգարենե՛ր, գրքեր բերեք,
Ճգնավորենե՛ր, քավոր էղեք,
Անուն Հիսուս կատարեցեք:

Հետո թեթևությամբ նստում է ծննդկանի վրա և ասում. «Մայ-
րամ³⁰ ծանդո ես, թե թեթև»:

— Թեթևով անցնի, պատասխանում է ծննդկանը:

Դայակը դնում է բալուլը ծննդկանի աջ կողմը, մայրն էլ այդ
օրը շարունակ երեսն երեխայի երեսին դարձրած է մնում: Հետո դա-
յակը ձեռի ակիշով խաշակեցում է ծննդկանին ասելով.

Ավետոան էրթնկալ էղավ,
Սուրչառ դաան փակ էղավ,
Մեկը Հիսուս, մեկը Քրիստոս,
Սերոբեք, Քերոբեք,
Տղոցկնի էրթիկը գան:

Ակիշի ծայրի սոխը հանում ուտեցնում է ծննդկանին, որ լուշա-
թափի և կաթն ավելանա: Իսկ ակիշը տնկեցնում է ծննդկանի սնարի
մոտ, որ շար շմտենա:

Եթե երեխան առջինեկ է, մայրը ծիծ չի տալիս, մինչև որ մի ընծա
է ստանում կերսարից. շատ անգամ էլ առաջին օրը բոլորովին ծիծ չեն
տալիս, երեխային համբերող դարձնելու համար, բայց ինքը խմում է

բաղցր օշարակ և ուտում ձվածեղ կամ խավիթ և կամ հավկիթ, իսկ եթե
պաս է, սոխ ու հաց:

Ծննդկանին այսպես շահելուց հետո՝ դայակը վերցնում է ընկեր-
քը և տանում թաղում շոր հողի մեջ և տերունական աղոթքն ասելով՝
ձեռում, որ «չսաղնա», ապա թե ոչ՝ «կսաղնա» և ծննդկանի սիրտը
կրթոթոթի, կըմարեմքի, և անհրաժեշտ կլինի նորից գալ «հայր մեր»
ասելով ծեծել մեռցնել ընկերքը, որ ծննդկանը առողջանա:

Այս ժամանակ արգեն տան ծառան կամ փոքրերից մինը վազում է
ազգականներին և բարեկամներին աչքի լուս: «Աչքս լուս, Շաքար ապ-
չա, աղջիկդ պառկավ՝ մանչմ բերեց»:

— Աչից լսով մնաս, օտացդ մեռնիմ, բարի ազատում ըլլի, աստ-
ված հորով-մորով պահե է՞, ե՞՞փ ազատավ, փարի դոլա՞ ազատավ,—
հարցնում են ապլաները և մի քանի կոպեկ կամ մի, երկու հավկիթ
տալիս աչքի լուս տվողին, մի քանիսն էլ ներս հրավիրում և հյուրա-
սիրում են:

Մի քիչ հետո մոտիկ ազգականներն ու հարևանները գալիս են տե-
սության, «բարդան» են բերում ծննդկանին՝ բերում են խաշած հավ-
կիթ կամ ձվածեղ, կամ խավիթ, կամ մալեզ ապուր, կամ փալուզա,
կամ հասութա և կամ մի գյուզումի մեջ եփ տված թեյ: Առաջին բար-
դան բերողի բարդանը չեն վերադարձնում մինչև երեխայի պորտն
ընկնիլը: Տանեցիք հյուրասիրում են սրանց թելով կամ հացով:

Տղամարդիկ ևս համախմբվում գալիս են կտուրը և մի փայտ դեմ
տալով հերթիկին, «Նաչքը վերուցեք, տղաք, վերուցեք» րզավում:

— Չէ՛, չէ. ձեր պատիվը զլխուս վրա, նես հրամեցեք, պատիվ
տամ, մե դառմ ձեզի դուրպան է,— ասում է տան մեծը:

Նրանք իջնում են վայր և շնորհավորում. «Աչքերտ լուս ըլլի, շնոր-
հավոր դավակ ըլլի, հորով-մորով ըլլի»:

Տան տերը հրավիրում է նրանց նստել և հյուրասիրում է օղիով ու
թելով: Դայակը դնում է երեխան հյուրերի դիրկը և նրանցից ստանում
1—10 կոպեկ ընծա:

Այնուհետև դայակը օրը մի անգամ լողացնում է երեխային ասե-
լով.

Էրկան վզիկ
Թա՛փ սու ցավիկ
Շալկե մսիկ:

Եվ օրն երկու անգամ բալուլում ու լվանում է կեղտոտ շորեր:

³⁰ Ինչ էլ փնեք ծննդկանի անունը:

Հավատարմով, թե շարերն անկնունք երեխաներին փոխում են իրենց նիհար որդիներին հետ, որոնք մկրտությունից հետո շատ քիչ են ապրում, ինչպես Կարծախում, իբր, երկուսը պատահել էր, աշխատում են կնունքը կարելվույն շափ շատ կատարել:

Ամենից առաջ մի սյալալի կամ մաղի մեջ դնում են մի կարմրցրած հավ, գաթա, մի քանի գույզ գուլպա, մի քանի թաշկինակ, երբեմն էլ մի գույզ սոնապան (թողլուխ) և դայեկի ձեռքով ուղարկում քաղորին:

«Սանամերդ խոնշան զրկեց,— ասում է դայեկը քաղորին,— հրամմե էգուց տղան կնքե»:

Քաղորն ընդունում է «խոնշան», մի քանի կոպեկ տալիս դայեկին և երկու արշին չիթ ուղարկում սանիկին հանդերձի համար:

Հետո դայեկն յուր տնից բերում է եկեղեցապատկան բալուրցը, որով բալուրում է երեխային: Եթե երեխան առջինն է, մեռունլաթը տանից են անում և վերջն ընծայում եկեղեցուն:

Գալիս է քահանան և տան մեջ կատարում կնունքի խորհուրդը, հետո երեխան դայեկի գրկին, տան մի քանի տղամարդկանց հետ դնում են եկեղեցի, ուր եկած է լինում քաղորը: Երեխայի հայրը մկրտության խորհուրդը թե տանը և թե եկեղեցում կատարելիս իրավունք չունի ներկա գտնվելու:

Եկեղեցում երեխան դնում են քաղորի գիրկը և մկրտում: Մի քանի կնունք եղած միջոցին նախ մկրտում են արու երեխային, թեկուզ մինչև սրա բերելը աղջկա վրա ծիսակատարության կեսն էլ կատարած լինեին:

Մկրտելուց հետո՝ քահանան խաչը ձեռին, փորուրաբը գցած «լույս ի լուսոյ» շարական ասելով դնում է տուն: Քաղորն երեխան գրկած հետևում է նրան:

Սննդկանը խոնարհում պագնում է նախ՝ քաղորի ոտքը և ապա բալուրը, առնում է երեխան գիրկը և նստում: Քահանան «պահպանիչ» է կարդում և երբ վերջացնում է, շնորհավորում է հետևյալ խոսքերով, որ մյուսները փոքր ինչ փոփոխելով կրկնում են.

«Աչվներդ լուս, շնորհավոր մկրտություն ըլի, ապաված հորով-մորով պահե, խոր ծերության հասցնե, քուկ ա, քավոր տղա, դատումքդ կատար»:

Սննդկանը համբուրում է խաչը և 3—10 կոպեկ խաչամբուրյա տալիս քահանային: Մինչև այս ժամանակ բոլորը կանգնած են լինում. հիմա նստում են ավագության կարգով. օձխի մի կողմը նստում է

քահանան, մոտը կնքավորը, սրա մոտ աթոռակալը և ուրիշներ՝ հասակի համեմատ. օձխի մյուս կողմը նստում է տանուտերը, նրա օգնականը, գյուղական դատավորները և ուրիշներ՝ դարձյալ հասակի համեմատ:

Օձխի մեջ եփ է գալիս գյուգումով ջուրը՝ վերան թեյամանը: Կարողություն ունեցողները նախ երկերկու բաժակ օղի են հրամցնում ամենքին, որոնք հետևյալ բարեմաղթությամբ խմում են. «Ձեռքդ անհատ: Օրհնյա տեր, տերտեր ջան, կենդանություն, կնքահար, դատուքտ կատար, վարձքտ Երուսաղեմ, աթոռակալ, սաղ էղնիս. յուզբաշի՛, ջանքմ սան. ջամիաթա ոահամդ»:

Հետո երկերկու բաժակ թեյ են տալիս, մինչև իսկ եթե թեյի ծամանակ էլ չլիներ: Ապա խոնշան դնում են երկու սատրների միջև և հաց տալիս: Կնունքի հացը որոշված չէ, թե ինչ կերակրներից պիտի բաղկանա, միայն սովորաբար երեք տեսակից պակաս չէ լինում: Հացը վերջացնելուց հետո քահանան պահպանիչ է ասում, և այս ժամանակ քաղորը տալիս է քահանային 20 կոպեկ, աթոռակալին 10 կ., տիրացուին և ժամկոչին երբեմն միայն երեքից հնգական կոպեկ: Երեխայի հայրն էլ քահանային 10 կոպեկ է տալիս պահպանիչ ասելու համար: Հետո տղամարդիկ գնում են, և կանայք տանից օդան են հրավիրվում, ուր հաց են ուտում: Հարուստները հացից առաջ մի մի բաժակ օղի ևս են տալիս: Սովորաբար հրավիրում են իրիցկնկանը, և առաջին պատիվը, առաջին տեղը, սեղան օրհնելը նրան է պատկանում:

Արու երեխային մեռունից շուտ, երեք օրից հետո են հանում, որ «ճակտով ըյի շամնչե», իսկ աղջկան ? օր պահում են, որ ամաչկոտ և պարկեշտ լինի: Եթե երեխան մեռունի մեջ մեռնի, հավատում են, թե յոթը պորտին օգոտ է, և միայն քաղորը գրկած տանում է մինչև գերեզմանատուն:

Մեռունից հանելիս՝ դայակը հանվեցնում է տղան, մի մաքուր ամանի մեջ լվանում է նախ մոր ծծերը և ապա երեխայի այն մասերը, ուր մեռուն է քաված և մեռունլաթը: Հետո լողացնում է երեխային գոլ ջրով տաշտի մեջ, քաշում է երեխայի ձեռքերը և ասում. «Թևերտ օրն քստըղըր էրկննա», քաշում է ոտքերը և ասում. «Սովիրտ օրն քստըղըր էրկննա». հետո վիզը՝ «Պոյքտ քստըղըր էրկննա»: Տաշտի երկու ծայրերին մի մի փոքրիկ երեխա մի մի մոմ են բռնած լինում. երբ դայեկը երեխան տաշտից հանում է, սրանցից մինը դեպի դուրս, մյուսը դեպի օձխան է վազում և հանգցնում մոմերը: Եթե հարցնենք պատավ դայեկին դրա խորհուրդը, նա խոր համոզմունքով կասե. «Դուս փախ-

չին կ'որ տղան սրտոտ ըլլի, գիպան օճախն ա օր վաղնն կը, տղան բախտավոր ըլլելու համար է»:

Դայեկը երեխան բալուլում, տալիս է մորը և ասում. «Աստված մնացական էնն, հորով մորով պահե»: Նա էլ պատասխանում է. «Վարձքտ Երուսաղեմ, շնորհակալ եմ, սաղ ըլլիս»: Կեսուրը տալիս է դայեկին 20—50 կ. փող, մի քարդան ալյուր կամ աղ, մի դալիպ սապոն և ճամբու դնում: Այնուհետև մինչև քառասունը լրանալը կեսուրն է օրը մի անգամ լողացնում երեխային և երկու անգամ բալուլում, մին լողացնելիս, մյուսը երեկոյին:

Եթե ծննդկանն անթառական է (հարուստ, ծառա ունեցող) 15—20 օր է պառկած մնում, և մինչև այդ օրն էլ հետաձգվում է երեխային մեռունից հանելը, իսկ եթե չբավրան է (աղքատ) 3—7 օր: Երեխան մեռունից հանելուց հետո տնեցիք լողացնում են ծննդկանին և պառկեցնում: Մյուս օրն արդեն ծննդկանն ինքն իրեն վեր է կենում, աղոթք շշնջալով շորերը հաղնում: Տնեցիք շնորհավորում են, ասելով. «Քարով խերով խոտտ մոտտ ժողվեցիր էլար»: Ժողովում են նրա անկողինը և տեղը մի մեխ խփում ասելով. «Մըխը իստեղ ամբնա, տղան ա ֆոն ձիզ մնա»: Հետո խոտ են բերում ծննդկանի աղատված տեղում վառում «տերընտաղ անում»: Ծննդկանը երեխան գիրկը մի շիշ (երկաթյա ձող) և մոմեր ձեռին երեք անգամ անցնում է տերընտաղի վրայից, երեք անգամ էլ պատվում շուրշը և գնում նստում օրորոցի մոտ: Այդ տերընտաղի մոխրից դնում են երեխայի բարձի տակ, որ չվախենա և ցավ չգիպչի:

Մինչև քառասունը լրանալը մայրը առանձին խնամք է դարձնում երեխայի վրա: Երբ դայեկը ուրիշ ծննդկանի մոտից վերադառնում է, երբ գիշերով մարդ կամ անասուն է գալիս իրենց մոտ, երբ միս են բերում իրենց տուն, երբ մեռել են անց կացնում տան մոտով, երբ մի ծննդկան է գալիս իրենց մոտ՝ հոգատար մայրը իսկույն բարձրացնում է երեխան, որ կոխ լլինի, այսինքն ժամանակին ոտքի ելնն, քայլե:

Եվ եթե մի անհոգությամբ երեխան այդ հիվանդությունն ստանում է, մայրը բժշկելու համար երեք օր շարունակ օրը մի անգամ տանում երեխային մի նահատակի գերեզմանի վրա լողացնում է և ամանը կոտրում: Յոթը զանից փող մուրում, որով մեղրամոմ դնում հալում և իլիկի գլխի ծակով ածում ջրով լի թասի մեջ: Ստացված ձեռք գուշակում է, թե կոխն ումից է եղել, ապա այդ ձեռք պատանքում է, յոթը ճանապարհների միմյանց կտրող տեղում թաղում:

Եթե կոխը ծննդկանից է առաջացել, գողանում են այդ ծննդ-

կանի տղի հողշորը, ձգում թոնիրը և «մուխ տալիս» տղին, այդ շորի ծուխի վրա բռնում երեխային: Կամ գողանում են նրա թթխմորը, ձգում ջրի մեջ և այդ ջրով լողացնում երեխան: Լեմանք էլ խաչերկաթն են գցում տաշտի մեջ, երեխային լողացնում և կանգնեցնում վրան:

Իսկ ուրիշներ երեխային երեք օր շարունակ օրը մի անգամ միևնույն քակորի հետ կշտում են, եթե երրորդ անգամին երեխան ծանրանա՝ կմեռնի, իսկ եթե թեթևանա՝ կաողջանա, երբ քակորի հետ լողացնեն:

Երեխայի քառասունը չլրացած՝ հոր շորերից շեն ձգում վրան, որ խորշակ լլինի: Երբ քառասունը կատարվի, կամ տյառընդառաջը հասնի, մայրը երեխային լողացնում է, ինքն էլ լողանում, մաքրվում, ապա կանչում է դայեկին, տալիս երեխան գիրկը և նրա հետ դնում եկեղեցի, կանգնում ավազանի կողմը, քառասուն ծունր դնում և աղոթում:

Եկեղեցին արձակվելուց հետո դայակը խնդրում է քահանային երեխային «քառասունքից» հանել: Նա էլ կատարում է եկեղեցական խորհուրդը և ստանում երեխայի մորից 10 կոպեկ խաչհամբույր: Դայեկը կրկին բերում է երեխան տուն և 5 կոպեկ փող ստանում:

Քառասունքից հանելուց հա մայրն ազատ դուրս է գնում տանից և դբաղվում յուր գործերով: Այնուհետև մայրն ավելի քիչ է դբաղվում երեխայով: Նա օրորոցի մոտ դնում է ամանով ջուր, որ շարերը չմոտենան երեխային: Բարձի տակ դնում է օձի շապիկ, որ երեխան իմաստուն լինի, նույնպես և նշխարք, որ շարերը չմոտենան: Երեխային դուրս տանելիս կրծքին հաց են դնում, որ շարերը չմոտենան:

Նա գրկում է երեխան, ցույց տալիս լուսինը և ասում. «Քեռիտ, քեռիտ», որպեսզի երեխաների վրա իշխող լուսինը չվնասե երեխային: Չար երեխային խելոքացնելու համար նատեցնում են նրան բակի մեջ և շորս բուրից վրան ավելում:

Եթե երեխան վատառողջ է, գողանում են մի քաջատող մանուկի շորեր և նրանով բալուլում նրան, որ լավանա: Նույն նպատակով վատառողջ երեխայի շապիկը փարտում են հասակակից քաջատող երեխայի տան հերթիկից:

Եթե իշխող լուսինը (վերինը) վնասում է, բժշկելու համար երեխային կանգնեցնում են սյան մոտ և մեջքի մոտից երեք մեխ մխում սյանը: Նույն նպատակով լուսնի նորին, մի շորերշաբթի կամ ուրբաթ՝ նրեկո հայրն ու մայրը կենում են կտուրը: Հայրն երեխային դնում է թիու վրա, տալիս մորը ասելով. «Քուքտ է նե՝ քեզի, իմս է նե՝ լից տու»: Մայրն առնում է նախ երեխան թիու վրայից և ապա թին ու նույն կերպ վերադարձնում:

Երբեմն որդիները թփխի են լինում՝ մինչև մեկուկես տարեկան դառնալը մեռնում են: Այս ցավից աղատվելու համար մայրերը՝ հուսթյան, երեխան խաղալիս և ծննդաբերության օրերին երեք անգամ անցնում են հոգի իշու տակով՝ փորին մի մի անգամ խփելով և վզի կողմից դառնալով ասում են. «Իմ թփխիս քեզի, քու թփխիտ ինձի»:

Նույն նպատակով այդ ժամանակներում իշու կաթ են խմացնում հոգի կնոջը: Նորածնին փոկե մաղի մեջ են առնում: Երեխային մի ամբողջ տարի մուրալով են պահում:

Յոթը դուռ մուրում և տալիս են մի բախտավոր, ծնողը ունեցող աղջկա, որ մի շապիկ կարե, և այս հագցնում են երեխային:

Լուսավորչականություն ընդունած մի այլազգու են բավոր անում: Նոր ծնված ջորու շապիկը հագցնում են նորածնին և վեց օր այդպես պահում: Ապա մի կտորը համալիլ շինում, վզից կախում, իսկ մնացածն սպիտակ շորի մեջ փաթաթած աղոթելով թաղում:

Սև շուն, սև կատու և սև աքաղաղ են պահում, որովհետև սրանք խմաց են տալիս շարերի մոտենալը, որոնցից և առաջանում է թփխին:

Երեխայի վզից շատերը գալլի ատամ են բաշ անում, որ կրծելով լնտերքը շուտով մաշվի և ատամները շուտով ելնեն:

Երեխան առաջին ատամները հանելիս «առկահատիկ» են անում. հատիկի (խաշած և քամած ցորեն) հետ խառնում են մանր ընկույզ, շաքարի մանրուք և շաքարեղիններ, երեխային նստեցնում և այդ բոլորը զլխից ի վայր ածում տսելով. «Ինչը օր հատիկը զլխուտ թափավ, առկեթ ա ատպես դուս թափի»:

Երեխայի ձգած ատամը դնում են մի բարձր տեղ և ասում երեխային, թե՛ ալսշափ երկարիս:

Երբ երեխան «գուփ է լինում» (լեզուն չի բացվում), Լկեղեցու բանալին քսում են բերնին, որ սկսի խոսել:

Երեխային 0,5—3 տարի ծիծ են տալիս և կտրելիս՝ ծծին ցեխ կամ «սարի ավլա» են քսում, որ երեխան զարշի և այլևս ծիծ չուտի: Երեխային հին խեծախ շեն տալիս, որ բթամիտ չլինի:

Երեխային ուսման տալիս դիշերը նրա բարձի տակ կուտ գցած (թոնիք ընկած, վառած) հաց և աղ են դնում, որ առավոտ երեխան տալիս է շանը՝ սանելով. «Քու սուր իզանդ ինձի տու, իմ քոս իզանս քեզի առ»:

ՄԱՆԿԱՆՑ ԴԱՍՏԻԱՐԱՆՈՒԹՅՈՒՆ

Ախալքալաքի գավառի հայ գյուղացի ծնողի սերը դեպի յուր որդիներն այնքան դարգացած է, նա որդու վրա նայում է ավելի շահադի-

տական տեսակետով. նրա համար որդին մի մալ է, որին ծախելու և դինն ուտելու իրավունքն ինքն իրեն սեփականել է, իսկ աղջիկը՝ «անլի միս է՝ որ աղել, ճամփել գուզե»:

Շատ հազիվ է պատահում, որ մոր օրորը քնացներ երեխային կամ մոր «գանդանը» խաղացներ նրան յուր դրկի մեջ: Ամբողջ գավառը շրջելով ես հազիվ կարողացա մի երկու օրոր և մի քանի «դանդաններ» գտնել: Մոր խնամքն ու դաստիարակությունը՝ երեխային ծիծ տալուց և հագցնելուց այն կողմ չի անցնում, նա կրթվում է «ընկնել ելլելով», յուր անձնական փորձով: Միայնակ նստած էի օդի մի անկյունում, երբ մի մայր մի տարեկան երեխային բերեց նստեցրեց օձխի քարին և քնաց: Նայում եմ՝ խեղճ երեխայի առաջ վառվում է կրակը, իսկ հոտը մի արշինից ավելի ցածր է, բավական է մի շարժում, որ երեխան կամ ձեռքը, այրի և կամ գլխի վրա վայր ընկնի: Վախը տիրեց ինձ, սակայն երեխան քարե արձանի նման անշարժ նստած էր. անցավ 20 րոպե, եկավ մայրը և գրկեց: Երբ ես նկատեցի, թե չէ՞ վախենում վտանգից, նա ծիծաղելով պատասխանեց ինձ. «Գրող չի դիպնի, սորվեր է. երկու անգամ ձեռքը վառեց, իրեք անգամ ա կլմբողավ, հիմի ալ ժած չի գա»:

Երեխաների վրա առանձին խնամք շատելու համար հազիվ թե կարելի լինի մեղադրել մորը, որովհետև գերդաստանը վատ սկզբունքի վրա է դրված: Մայրը, մանավանդ եթե երեխան առջինեկ է, իրավունք չունի առանց կերսանց ասելու գնալ, երեխային ծիծ տալ, շնայելով, որ նա սաստիկ լալիս է: Նա պարտավոր է յուր գործին հետևել, մինչև կեսուրը կամ մեծ հարսերը շասեն նրան, թե սղան մեղք է, ծիծ տուր: Հակառակ դեպքում կխոսեն նրա վրա, կհայհոյեն թե. «տղի տեր է էղե՛ սահաթ գլուխ մահանա կէնե՛ կառնե նստի կը»:

Գերդաստանը բացի սնունդ մատակարարելուց՝ երեխաների վրա ոչ մի խնամք չի տանում, հանդերձն անգամ ինքը չէ անում, այդ հոգում է մայրը՝ յուր «արնքազնով»:

Այսպես՝ երեխան, թե աղջիկ և թե տղա, մինչև շորս տարեկան հասակը մեծանում է ազատ և անհոգ, առանց մի կրթիչ ձեռքի հպատակելու, սակայն ամեն օր ծեծվում է այս կամ այն դատարկ բանի համար: Մայրն էլ նրան երկյուղ պատճառելու համար հազար ու մի նախապաշարումով լցնում է նրա գլուխը: Չորս տարեկան հասակում արդեն նա հոտաղ է լինում, և աստիճանաբար մեծանալով՝ տղան հորը, աղջիկը՝ մորն է օգնում: Տղան հորը օգնելով, սովորում է հոտաղություն, սայլապանություն և գուժան քշել, իսկ աղջիկը մորից սովորում է զուլպա գործել և կար անել: Կերակուր եփել, յուղ հարել, պանիր շի-

Նել և այլն նա սովորում է հարս ժամանակ, կեսուրից:
Դպրոց հաճախող երեխաների թիվը շատ փոքր է, և ժողովուրդն էլ դեռ լավ չէ ըմբռնել ուսման կարևորությունը³¹:

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿՅԱՆՔ

Ընտանիքի մեջ ամենից ավելի հարգանք, սեր վայելում է մայրը, նրան կամ նրա միջնորդությանն են դիմում թե որդիները և թե հարսերը: Սակայն հայրն ավելի ակնածություն է ազդում, մորը սիրում են, հորից վախենում, քաշվում: Մայրը գլխավորապես հրամայում է յուր սիրով, իսկ հայրը՝ հեղինակությամբ, վախով: Նույնիսկ մայրը երկչու է տալիս որդիներին հոր անունով, երբ սրանք չեն ուզում իրեն լսել:

Հայրն ու մայրը ծերանալով հետզհետե կորցնում են իրենց թե իշխանությունը և թե ստացած հարգանքը:

Նույնիսկ որդիները սրտանց չեն սիրում իրենց ծերացած ծնողներին, սակայն հավատալով, թե ինչ որ անեն իրենք իրենց ծնողներին, նույնն ստանալու են իրենց որդիներից, այդ պատճառով պատվում և հարգանքով են վարվում նրանց հետ:

Ավանդությունն ասում է, թե մինը յուր ծերացած հորը քթոցի մեջ դրել տարել է ժայռի գլխից վայր գլորելու: Հայրն ասել է, թե քթոցից հանիր և այնպես գլորի: Եվ երբ որդին հարցրել է պատճառը՝ ծերունին պատասխանել է. «Որպեսզի քո որդիդ էլ քեզ այդ քթոցով գլորե, ինչպես և ես իմ հորս եմ գլորել»: Որդին զղջում և այնուհետև հարգանքով է վարվում յուր հոր հետ:

Բայց և այնպես՝ թե հանդեսներին, թե հասարակական ժողովներին, եթե նրանք մասնակցեն, թե հոգու հացին և թե եկեղեցում՝ առաջին տեղը, օձխի գլուխը և առաջին բաժինը նրանց է պատկանում:

Ազգակցության մեջ որոշում են հետևյալ աստիճանները.

Հորեղբայր, որին կոչում են պիճեամի, մեծեամի, էամի, փաշա, տացու (և՛ թե կարողալ գիտե):

Մորեղբայր, որին կոչում են քեռի:

Հորեղբոր կին, որին կոչում են հողորկին՝ օտարների հետ խոսելիս, իսկ իրեն անվանում են հարս ապլա, խանում ապլա, շաքար ապլա: Մորեղբոր կին—քեռեկին:

Հորաքույր—հորքույր:

Մորաքույր—մորքույր:

Հորեղբոր որդի.

Մորեղբոր որդի.

Հորաքրոջ որդի.

Մորաքրոջ որդի.

Եղբոր որդի.

Քեռորդի—կցյան.

Խնամոնք—հարսի կամ փեսայի ծնողները.

Անեք—կնոջ հայրը.

Չոնքանջ—կնոջ մայրը.

Կերսար—ամուսնու հայրը.

Կեսուր—ամուսնու մայրը.

Աներձագ—կնոջ եղբայրը.

Տապր—ամուսնու եղբայրը.

Քենի—կնոջ քույրը.

Տալ—ամուսնու քույրը.

Տագերկնիկ—ամուսնու եղբոր կինը.

Քենակալ—կնոջ քրոջ ամուսինը.

Հարսի համար ամուսնու ազգականները կոչվում են կերսանք, իսկ փեսի համար հարսի ազգականները՝ աներանք:

Ամուսիններին առհասարակ կոչում են մարդ ու կնիկ, կինը ամուսնու մասին խոսելիս կեսուրոջ առաջ կոչում է նրան՝ աղաղ, տեքերկնկանը՝ տագրդ, տալին՝ ախպարդ, օտարների՝ մարդս, գլխավորապես փեսադ, ախպարդ. ամուսնուն՝ ինչ որ յուր կամ տան տղան կոչում է՝ տղա, փաշա, ափար, էամի, կատաշ, բայց առավելապես՝ ծո՛:

Ամուսինը կնոջը կոչում է՝ յուր հոր, մոր, հորեղբոր, եղբոր և ուրիշների առաջ՝ հարսը, աներոջ և Չոնքանջի առաջ՝ աղջիկդ, օտարների առաջ՝ մեր Քյուլթյոքյանը³², նշանածս, կնոջ հետ՝ ըխշի:

Գերդաստանի անդամների հարաբերությունները շատ աննախանձելի են: Բավական է, կարծեմ, առաջ բերել՝ աշարս և կեսուր³³ պատկերի միջից այն տողերը, որով նկարագրում է հարսը յուր շրջապատողներին՝ նա ասում է.

32 Իսկապես Գյուլթոքյան, որ տունկերեն նշանակում է վարդափող, բառախաղ անելով դառել է Քյուլթոքյան, այսինքն՝ մոխիր թափող:

33 Տե՛ս աջավախքի բուրմունքը:

31 Տեղի սղության պատճառով հետաձգում ենք գավառիս մանկական և ժողովրդական բոլոր խաղերի մանրամասն նկարագրությունը:

Կերսար, կերսար,
էրկթե մամար,
Կեսուր, կեսուր,
Քարե մսուր,
Տաքեր կնիկ,
Օձի բնիկ:
Տալիկ, տալիկ,
Սև սև սալիկ:
Տաքրիկ, տաքրիկ,
Պաղ աղբորիկ:

Այսպես ուրեմն, ամբողջ գերդաստանի մեջ ամենասիրելին հարսի համար, ամուսնուց հետո, տեղըն է: Կերսարը երկաթե մամարի (մեխ) նման ամուր է յուր իշխանութիւն մեջ, կեսուրը՝ քարե մսուրի պես անգութ, ինչքան կուզե լիզե, ոչինչ չի տալ, տեղերկինը՝ օձի բնի պես որոգայթից բնակարան, որովհետև «տաղերկինիկը՝ տաղերկինկան ամեն զիշուփյունը կուզե, մի գեշ յարա հանելը չի ուզե, շտմբի հետը հաց կուտե»:

Սակայն հարսը դատապարտված է և լուսթյան, նա հարսնութիւն է անում (չի խոսում) կեսուրի հետ 3, կերսարի հետ 10—12, տեղերկինիկների հետ մինչև մի, տեղրի հետ 15, և կնքավորի հետ 25—30 տարի, մինչև անգամ մինչև մահ: Դեռ սրա դռնիցն անդամ չի անցնում՝ սաստիկ մեղք համարելով այդ: Ավանդութիւնն ասում է, թե մի հարս անցել է քավորի երթիկից, և նրա հետքը մնացել է երկնքում, որ այժմ կոչվում է «սանամուր քաշ»՝ հարդողի ճանապարհ:

Բարերախտաբար տան մշտական աշխատանքը սովորութիւն իրավունքով բաժանված է, ապա թե ոչ անտանելի կլինեն միմյանց հետ ապրել:

Այսպես. վաղեմի սովորութիւնով՝ կեսուրը հաց և կերակուր է եփում. Եե՞՞ հարսը գրանկում է հացը՝ «բանա կը հացը» և օգնում կեսուրին՝ կերակուր եփելու:

Երկրորդ հարսը կովերն է կթում, խնոցի հարում:

Երրորդ հարսն աման է լվանում և թոնիրը վառում:

Չորրորդ հարսը հաց շաղախում, տեղեր գցում, ժողովում, տուն ու տեղ ալիւում:

Տան աղջիկն էլ ջուր է բերում:

Մի փոքրիկ զանցառութիւն պարտականութիւն, և կեսուրը կսկսի խոսել, անիծել հարսին, ծաղրել, հայհոյել հարսի ծնողներին, իբր թե

նրանք վատ են կրթել աղջկան և այլն: Հարսը պարտավոր է լռելայն տանել կեսուրի խոսքերը և շատ շատ՝ լռելայն արտասովել յուր վիճակի վրա. բայց երբ տարիներ անցնելուց հետո հարսի համբերութիւնը հատում է և վստահանում է կեսուրին պատասխան տալ, այն ժամանակ վերջինս գանգատվում է յուր որդիներին, ամբաստանելով հարսերին ոչ միայն արածի, այլև հազար ու մեկ շարածի մեջ, որոնք հավատարմով մորը, միևնույն ժամանակ իրենց «տղամարդութիւնը» ցույց տալու համար ծեծում են կանանցը: Եվ հենց այս պատճառով «պարսկի զովասանք» երգի մեջ ասվում է.

Հին անկճով թեզ կը լսես,

Մատվնիտ իրար կը քսես,

Սուտ ու զարթ մանչերուտ կըսես.

Սեծել կուտաս, ա՛յ դու պառավ:

Սակայն երբեմն էլ հարսերը իրենք են կովում կեսուրի հետ. այսպես օրինակ.

Եթե կեսուրը հարսերից մինին ավելի սիրե և նրան քիչ աշխատեցնե, մյուսները իրենց ամուսինների «փորը լցնում»՝ ոխակալեցնում և առավելապես նրանց են կովեցնում կեսուրի հետ:

Եթե կեսուրը հարսի արածին հաճախ չի հավանում, և ինքը նորից է անում, հարսն այլևս չի համբերում և ասում է, թե եթե ամեն արածիս շպեռք է հավնիս՝ մի անիլ տար, վերցրու ինքդ արա: Մրանից և ծագում է կոխի:

Սակայն ամենից շատ կովում են տեղերկինիկները. և այդ առավելապես հետևյալ պատճառներով.

Երբ մինը զլանում է կատարել յուր պարտականութիւնը, մանավանդ եթե նկատելիս էլ՝ դիմադարձութիւն է անում:

Երբ քիչ որդիներ ունեցողը քիչ է աշխատում և դիմադարձութիւն է անում, թե այսքանն էլ հերիք է, «ինչս կուտե»:

Երբ մինը կամ երկուսը միայնակ մնալով տանը՝ ծածուկ տան բարիքներից ցորեն, յուղ, պանիր, հավկիթ և այլն տալիս են միրգ կամ շոր են առնում իրենց համար և հայտնվում է:

Երբ մինը մյուսի բրդից, կտորից, թելից, թաշկինակներից, ոսկիներից զողանում է և բռնվում է: Հաճախ գողացած իրը տեղերկինիկներն ուղարկում են իրենց մարանց, որոնք ձևը փոխելով՝ այսինքն եթե թել է՝ գուլպա գործում, եթե կտոր՝ հանդերձ կարում և ընծա բերում իրենց աղջկան:

Երբ մինին կամ նրա որդուն կերտանքը մի բան ավելի անեն։
Երբ մինի երեխային կերակուր են տալիս և մյուսներին չեն տալիս։
Երբ մինն յուր որդու հանգերծին կարկատան է ձգում, և այդ կար-
կատանից մյուսների որդիներին բաժին չի հասնում։

Երբ մինը տղա շունի, և հակառակ նրա պահանջի՝ ամեն բանի մեծ,
խաս բաժինը նրան չեն տալիս։ Մյուսների երեխաներին արած հանգեր-
ծի դեմ իրեն փող չեն սալիս։

Երբ ճաշի ժամանակ մինին, սովորաբար փոքրին, գործի են դնում,
և չսպասելով ուտում, պրծնում են կերակուրը։ Վերջինս խոտվում և կըռ-
վում է նրանց հետ։

Երբ մինը չի ուզում արտը գնալ, և պահանջում է, որ մյուսը գնալ
Այսպիսի դեպքերում ամուսինը ծեծում է սրան։

Երբ մինը գանգատվում է դրկիցներին տեղերկնիկներից, և իմաց-
վում է։

Սովորաբար տեղերկնիկները կովելիս հայհոյում են միմյանց.
«Շները... մորդ մաղին...» և այլն. և միմյանց զաղտնիք դուրսն ասում։
Երբեմն էլ ծեծկվում են, ճանկատում են միմյանց երես և քաշում միմ-
յանց մազեր։

Կինն ազատ չէ մինչև անգամ և ամուսնու բռնությունից։ Սա յուր
տղամարդությունը ցույց տալու համար ոչ միայն օտարների առաջ հայ-
հոյում է նրան, այլև ծեծում, և այս առավելագույն՝

Երբ կասկածում է, թե կինը «սիրող է անում», ուրիշին սիրում է, և
սրա համար միշտ ոսկիներ դնում, խաս է հագնում։

Երբ կնոջը մեղադրում է, թե պարտունը ինչի՞ աչքինչի ձեռքը բռնե-
ցիր, սխմեցիր, ինչու՞ դուրս ելար և այլն, և կինը սրա դեմ խոսում է։

Երբ պարտատերը պարտքը պահանջում է, և սա հանդիմանելով
կնոջը, մանավանդ եթե նա երկրորդն է, թե ինչի՞ աչքան փող պահան-
ջեցիր, որ պարտքի տակ ընկա, «արնքագնի» մի մասն ուզում է պարտքը
վճարելու, և սա ոչ միայն չի տալիս, այլև դիմազարծություն է անում։

Երբ ուրիշները բամբասում են կնոջը և այլն և այլն։

Նախնի բարոյականությունը դժբախտաբար այժմ անհետացել է, և
անբարոյականությունը հետզհետե տարածվում է. բայց և այնպես՝ այս
ժողովուրդը բարոյապես բարձր է կանգնած Ախալցխայի և Աղեքսանդ-
րապոլի ժողովուրդներից։

Սակայն զավառիս բնակիչների մեջ անբարոյականությունով ավե-
լի աչքի են ընկնում Արտահանի գաղթականները, որոնց մեջ մի ժամա-
նակ սաստիկ տարածված էր «կաթնախալերությունը»։ Հարս և երիտա-

սարդ կտրում են իրենց մատները և արյունը միմյանց խառնում կամ
Զատիկին միմյանց ողջուն են տալիս և գուլպա, պաշմախ միմյանց նվի-
րում, այսպիսով քուր ու ախպեր են լինում և ազատ մուտք ունենում
միմյանց տուն։ Կասկածանքից և հետևողությունից ազատ՝ սրանք շատ
շուտով դուրս են գալիս բարոյականության ճանապարհից։

Այսպես, օրինակ, Փոկա գյուղում Կուրդին անուն մեկը սիրում է
Գյուլֆերի «քրոջը», որի օրինավոր ամուսինն երեք տարուց հետո ան-
հայտ ձեռքերից խեղդվում է յուր սեփական տանը։ Կուրդինը տանում է
Գյուլֆերուն յուր տունը, յուր օրինավոր կնոջ մոտ, որը չհամբերելով՝
գնում է յուր հորանց տուն։ Գյուլֆերին սիրում է Կուրդինին ու յուր
մյուս «ախպորը», և գուցե ուրիշ շատ «ախպարներ» էլ, եթե Կուրդինի
օրինավոր կնոջ եղբայրները չսպանեն նրան։ Այժմ դրանք, Կուրդինի
աներծագերը, բանտարկված են։

Քուր-ախպերություն այժմ դրեթե վերջացել է։
Բարոյականության անկման պատճառները բացի տնտեսականից, պլա-
վորապես հետևյալներն են.

Վերջին պատերազմին գյուղերում և քաղաքում բնակող զորքը։
Քաղաքացիներն իրենց կիրքը հագեցնում են շրջակա մոտիկ գյու-
ղերում Զանդուրա, Վաշիան, Սաթիա, էշտիա և այլն, դիմելով պատավ
«միջնորդ» կանանց, որոնց տունը շատ անգամ ծառայում է ժամադրու-
թյան տեղի։

Քաղաքի սիրեկանները քավոր են լինում գյուղերում և շաբաթներով
բնակում այնտեղ։

Մանրավաճառներն (շարչի) ազատ մտնելով դրեթե ամենի տունը,
ոչ միայն մոլորեցնում են հարսերին, այլև նրանց գողանալ են տալիս
տան բարիքներից՝ կարագ, ցորեն, գարի, հավկիթ, ալյուր և այլն։

Սափրիչները պայմանավորված լինելով երկու շաբաթը մի անգամ
գնալ գյուղ և այլ մարդկանց միրուքները սափրել, մազերը խուզել, գրե-
թե համարձակ մտնում են բուլդոզի տները և մոլորեցնում հարսերին։

Գյուղերում մի տեսակ տղամարդություն է համարվում հարս սի-
րելը, և մի քանի գյուղերում, օր. Կարծախ, Սաթիա, դրեթե բուլդոզ միմ-
յանց հարս են սիրում։

Իրենք հարսերն էլ իրենց կողմից նպաստում են անբարոյականու-
թյան տարածման, և վրեժ սիրուհի պահող ամուսնուն, իրենք էլ ուրիշնե-
րին սիրելով, և կամ ամուսնու կոպտությունից զզված և կամ ուրիշների
մրգերից ու փողից շլացած՝ հետևում են «միջնորդ պատավների» խոր-
հրդին։

Երբ մի մարդ ուզում է մի հարսի ձեռք ձգել, մի առանձին տեղ մի խնձոր է ձգում նրան, եթե հարսը վերցնում է այն, մարդը մոտենում և ժամադիր է լինում, իսկ եթե չի վերցնում, նշանակում է կամք չունի: Պետք է նորից փորձել՝ պարտունը ձեռքը սեղմել, բուռը բերել, արտի նանապարհին սիրո խոսքեր «Քապել» և այլն:

Եթե հարսը մինի վրա աչք ունի, առանձին տեսնելիս արհամարհական ձևով ասում է. «Ինի՛ մունտառն (կինդ) ի՞նչ է, օր դուն առեր ես»: — է, ի՞նչ էնեմ,— պատասխանում է մարդը:

«Ի՞նչ պրտի էնես, վալլահա», ասում է հարսը և հեռանում: Մարդը հասկանում է և պատում է ետևից, մի առանձին տեղ մոտենում է նրան և ուղղակի ասում. «Նս քեզ գուզեմ, դուն ինձի գուզե՛ս»:

Եթե համաձայնություն կայանում է՝ որոշում են թե որ փոքրիկ աղջկա կամ մարդու միջոցով կարող են միմյանց կանչել, ուր դնեն մի քար, որի մի երեսը պիտի նշանակեր, թե սիրահարը կարող է գնալ հարսի տունը և մյուսը չի կարող, և թե հարսն արտը հաց տանելիս որ քուշում սպասե սիրահարին:

Ուխտագնացության օրերից մի քանի օր առաջ սիրողը սովորեցնում է սիրուհուն, խոստանալ գնալ այսինչ ուխտը, միայն առանց ամուսնու, միայնակ: Այնտեղ իջնել այսինչ անձանոթ մարդու տունը, ուր և իջած կլինի ինքը և կներկայանա որպես նրա ամուսինը:

Օտար գյուղից բերած հարսը երբ իջեցնում են ազգականներից մինի տունը, երիտասարդները տանեցիներից մինի միջնորդությունով ծանոթանում են հարսի հետ իրենց ազգական ցույց տալով, գրավում են սերը և՛ ամուսնությունից հետո սիրում:

Հարս դարձ սանելիս երբեմն հեռու ազգականն (կանադոփ) է տանում, որ ճանապարհին մուրեցնում է հարսին և ապա շարունակում:

Պետք է ասել, ընդհանրապես, որ աղջիկները սաստիկ բարոյական են, որովհետև ժողովրդը ահագին նշանակություն է տալիս դրան: Անբարոյականության մեջ բռնված աղջիկը, եթե չի կարողանում ստիպել իրեն մուրեցնողին ամուսնանալ յուր հետ, Էրբեք չի կարողանում մի արժանավոր ամուսին գտնել: Եվ մինչև անգամ եթե նորահարսի անմեղությունն յուր ապացույցը չէ ունենում, վերջինս սաստիկ և շարունակ նախաաժում է ոչ միայն ամուսնուց և ազգականներից, այլև ամբողջ գյուղից:

Փողովուրդը դատապարտում է և մուրեցնող երիտասարդին, և հազիվ է պատահում, որ պատվավոր տնից նրան աղջիկ տալին: Ուստի և սրանց սիրահարությունն սկսվում և վերջանում է «ղունդունալով»՝ սի-

րախոսությունով ու համբույրով: Եվ միայն այն դեպքում, երբ երիտասարդը կասկածում է, թե միգուցե աղջիկը շամուսնանա յուր հետ, և կամ ծնողները չտան, մեղանշում է նրա դեմ, որով կատարելապես ապահովվում է, որովհետև այսպիսի դեպքերում աղջիկներն ասում են. «Ում հետ օր անունս հելավ, անոր հետ ա թող հոգիս էլե»:

Շատ անգամ հիշեցնելով այդ տխուր ապագան, ծնողները բավական աղատություն են տալիս աղջիկներին գնալու ում տուն որ կամենան, համարձակ խոսելու, երգելու և պարելու երիտասարդների հետ, միայնակ գնալու աղբյուրը, արտը, սարերը դմի, ծաղիկ ժողովելու և այլն, մինչդեռ հարսերը բոլորովին զրկված են այդ ազատությունից, նրանք իրավունք չունին երիտասարդների հետ խոսելու, միայնակ այս կամ այն տունը գնալու և այլն:

Երիտասարդները աղջիկների սիրտը գրավելու համար աշխատում են կարելույն չափ վայելուչ հագնվել, «տնկող» ման գալ, լավ գոտեմարտել, «ճիլիթ խաղալ», պարի մեջ լավ շորորալ ու քաղցր երգել, լավ ընկերներ ունենալ և այլն:

Աղջիկները երիտասարդներին դուր գալու համար բացի այն որ հագնում, կոկվում, մազերը գեղեցիկ հլուսում և հլուններով դարդարում են, այլև գրպաններում դնում են մեխակ (ղարանֆիլ), սերկիկի, խնձոր, ընկույզ և այլն, բերններում պահում են զարանֆիլ, շապկի տակից վզի վրա կապում նույնպես զարանֆիլ, որ, իբր, անուշահոտություն բուրե: Պարտունն ինչքան կարելի է լավ են շորորում, երգում, խոսում և այլն:

Առհասարակ տղա և աղջիկ միմյանց տեսնում և «սեր են կապում»՝ սիրահարվում են հետևյալ տեղերում.

ա. Եկեղեցում. թե ժամերգության սկսվելիս և թե մանավանդ ավարտվելիս երիտասարդները խմբով կանգնում են եկեղեցու գավթում և նայում աղջիկներին:

բ. Պարտանը. հարսանիքներին և մեկ էլ բարեկենդանին հասարակաց «կլուր» պար է լինում, որին գրեթե բոլոր գյուղացիներն առանց հրավիրվելու աղատորեն մասնակցում են: Այստեղ մի լապտերի աղստ լուսի տակ մի քանի հարյուր հոգի համախմբված ասում, խոսում, պարում են: Երիտասարդներն աղջիկների ձեռքը բռնած պարում են, և եթե հավանում են միմյանց, սեղմում են իրար ձեռք, տղան մի րգ է տալիս աղջկան և այլն:

գ. Դեբինեում. երիտասարդները գոտեմարտի, ճիլիթի մեջ ցույց տալով իրենց բոլոր արժանավորությունները, բռնում են աղջիկների ձեռ-

քը և երգելով պարում: Ձեռների մի փոքր սեղմումն բավական է զգացմունքների փոխանցման համար:

դ. Աղբյուրի մոտ. շուր բերելու պարտականությունն աղջիկների, նորահարսերի և երիտասարդներին է: Մրանք վաղ արշալույսին և ուշ վերջալույսին, երբ բնութունն ինքն յուր գեղեցկությամբ սեր է ներշնչում, գնում են աղբյուրը կամ առվակը շուր տանելու: Թե ճանապարհին և թե մանավանդ աղբյուրի մոտ սրանք կանգնած երկար խոսում են, ծիծաղում, միմյանց մատանի, միրգ, թաշկինակ տալիս: Շատ անգամ, էրբ աղջիկը սափորը ձեռքին կանգնած է լինում աղբյուրի մոտ, երիտասարդ սիրահարը հանդիպակաց բլուրից հնչեցնում է յուր սիրո երգը, որին երբեմն պատասխանում է աղջիկը³⁴:

ե. Աղջիկն աւտը գնալիս և գալիս. երիտասարդները գնում են առջևից քաշքաշվելով, իրար խփելով, գոտեմարտելով, ինչ է՝ իրենց շնորհքը, ույժը ցույց տան նրան և նրա սերը գրավեն: Եթե հասել են նպատակին, սղա ու աղջիկ նստում են մի փոսի մեջ և երիտասարդի բերած միրգը ուտում, «ղունդունում»: Ղունդունում, որովհետև «սիրվելը ղունդունացող աղավնուց է մնացել»:

գ. Էրիշտու տունը. էրիշտա անողը հավաքում է 8—10 աղջիկ էրիշտան կոխելու և շարգելու: Մրանք բոքիկանում են, իրար ձեռքից ամուր բռնում, երգում և երգի տակետով էրիշտան կոխկրտում: Երիտասարդները

³⁴ Ասաց բերն՝ ք ըջւրպօր զհայրերից մինը. Գանձա Տեփան-Ստեփան անունով մի երիտասարդ առավոտ վաղ որսի է գնացել. երբ պատրաստվել է խփել մի թռչուն, հանկարծ սա թռչում է, Ստեփանը նայում է ետև, տեսնում աղբյուրի առաջ մի աղջիկ կանգնած, որ և թոցրկ էր թռչունը: Հանկարծ զրա սփրուն է դարձվում, հրացանը սազ անում և երգում, զժրխտարար թուրքերեն լեզվով, որի հետևողությամբ երգիչ Ջիվանին հյուսել է «Պաղ աղբյուրի մոտ կանգնած մի աղջիկ» երգը: Ապա գնում է մոտը, միմյանց բացատրում են իրենց սերը, փոխում են մատանիները և ժամադիր լինում միշտ այդտեղ տեսնվելու:

Տեփանը էրեք տարի սիրահարված է մնում և միշտ՝ ցերեկը աղբյուրի մոտ, գիշերը նրանց զոներն ու կրգիկը շրջելով՝ երգում: Քանի քանի անգամ ուղում է աղջկանը, բայց որովհետև ինքը մի աղքատ ժամանրի որդի է ևզել, չեն տալիս: Երկու անգամ փորձում են փախցնել, սակայն չեն կարողանում. որովհետև աղջկան գիշերները շղթայով կապում են սլանը: Կերջուպես աղջկանը նշանում են Գազելի բանանայի որդու հետ: Այս որ իմանում է Տեփանը, չի հավատում և գնում նրանց հերթիկից նայում է: Երբ տեսնում է յուր ախտյանին հաղթանակով կանգնած Իսկունու մոտ, «վա՛յ» է անում և ուշաթափվում: Նրա ամբողջ մարմինը սև սևանում է: Մտողները տանում են տուն, ուր սաստիկ հիվանդանում է: Մահամերձ՝ աղաչում է կանչել Իսկունուն, մնաս բարե անելու, և երբ այդ ևս թույլ չեն տալիս աղջկա ծնողները, կանչել է տալիս Իսկունու աչերի նման աչեր ունեցող մի աղջիկ, համբուրում աչերը և հոգին ավանդում:

հավաքվում են հերթիկը և այդտեղից նայում նրանց և լսում նրանց երգը: Երբեմն էլ թողնում են նրանց մասնակցելու էրիշտան կոխկրտելուն և մանավանդ կտրելուն: Գնում են խոնջաներ և շուրջը բուլբուրում և կտրում:

Երիտասարդը խոնջի տակից տալիս է յուր ուղածին բերած միրգը: Սա առնում և ծածուկ տալիս է միջնորդ ընկերուհուն, որ ցույց է տալիս իրեն և ստում, թե մայրն է տվել: Ապա հայտնի կերպով միասին ուտում են:

է. Մաղկոցին. աղջիկները հավաքվում են և հարսին տնետուն ման ածում, երիտասարդներն էլ խմբով հետևում են նրանց:

ը. Համբարձման. երբ գնում են սարերը ծաղիկ քաղելու և երբ վիճակ են հանում:

թ. Չայիրները. զմի, ժախ և այլն հավաքելու գնալիս:

ժ. Ջրապացում. ուր գնում են աղջիկները կորկոտ աղալու:

ժբ. Նոր և կանանչ կիրակիներին, երբ գնում են «կանանչ կոխելու»՝ դրոսնելու և այլն:

Սիրահարը միջնորդ է գտնում աղջկա ազգականներից կամ ընկերուհիներից մինին և նրա միջոցով գրավում աղջկա սիրտը, մատանի, թաշկինակ ուղարկում և այլն: Միրգ է տալիս միջնորդին, որ կեսն ինքը ուտե, կեսն էլ նրան տանի: Երբ սրանք սիրում են միմյանց, իրենք միջնորդ են լինում միջնորդ աղջկա համար, և երբ գտնում են նրա համար ևս սիրեկան, շորսը միասին գնում են արտերը սիրվելու:

Բայց ավելի նրանք սիրվում են եղաօրիկին: Աղջիկներն, յուրաքանչյուրն յուր տնից առնելով յուղ, պանիր, հավիկթ, հաց և այլն, միասին գնում են գյուղից դուրս մի բլուր կամ ժայռ: Այստեղ, խաղալով ու երգելով եփում են կերակրներ և տանում քարերի տակն իրենց հրավերով եկած՝ թաք կացած սիրեկանների հետ ուտում ու «ղունդունում»:

ԳԵՐԴԱՍՏԱՆԻ ԱՆՂԱՄՆՆՈՒ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՌԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Գյուղական գերդաստանները կազմում են պապն ու տատը, որդիները, հարսները, թոռները և թոռնորդիները, բուլբուրը 2—40 հոգի, որ միասին ապրում են միևնույն հարկի տակ և կառավարվում միևնույն շահերով:

Գերդաստանի անդամներին միմյանց հետ կապողն է.

ա. Պարապմունքը. երկրագործությունը պահանջում է շատ աշխատող ձեռքեր, ուստի և գերդաստանից բաժանվելիս էլ ուրիշ ընտանիքների հետ միացած են գործում, բ. սովորությունն ու հասարակաց կարծի-

քր. «լավ օր ըլիք՝ չէր բաժնվի», նախատելով ասում են բաժանվածների համար, դ. ազգակցությունը, սերը. դ. կալվածքի միությունը և այլն:

Գերդաստանի իշխանությունը պատկանում է տան ամենամեծերին՝ հորը (պապ) և մորը (աստ): Հայրը քանի խելահաս է, անսահման իրավունք ունի կառավարելու գերդաստանի արտաքին գործերը, առանց մեծ որդու հոծարությունն առնելու կամ խորհուրդ հարցնելու, նա անսահման իշխանություն ունի որդիներին «ծախելու և դինն ուտելու», հետևապես և նրանց վաստակը լիովին իրեն է պատկանում: Փողը և աշխատանքի բաժանումը յուր ձեռքն է: Որդիներն իրավունք չունին իրենց վաստակը իրենց մոտ պահելու, իրենց վաստակով իրենց մի բան գնելու, կամ առանց հորից իրավունք խնդրելու՝ մի գործ կատարելու:

Այս անսահման իշխանությունն այժմ հետզհետե պակասում է, և որդիներն այժմ այնպես հլու հպատակ չեն հորը, ինչպես առաջ: Ուստի ժողովուրդը գանդատվում է. «Հիմիկվա տղաքը թոխմախը իրենց մարերուն, հարերուն ճակտին զարնեն կը»:

Գերդաստանի ներքին կառավարումը կենտրոնանում է մոր ձեռքում: Մայրն անսահման իշխանությամբ կառավարում է տան գործերը և հրամայում հարսներին: Նրա ձեռին են տան բոլոր բարիքների բանալիները, նա է հարսներին հրամայողը և աշխատանք բաժանողը: Առանց նրա թույլատվության ոչ մի հարս չի կարող բանալին վերցնել և մի պատռո հաց անգամ հանել, առանց նրա թույլատվության հարսն իրավունք չունի ուրիշի տուն գնալու:

Հոր և մոր անձնափոխանորդներ համարվում են ավագ որդին և նրա կինը՝ ավագ հարսը, որոնք և առաջիններիս մահից հետո լիովին ժառանգում են այդ իրավունքները: Նույն իրավունքներից օգտվում են սրանք և այն ժամանակ, երբ հայրը և մայրը ծերանում կամ հոգեկան հիվանդություն են ստանում: Հայրն իշխանությունն ավագ որդուն հանձնելիս կանչում է բոլորին յուր շուրջը, օրհնում և շնորհակալ լինելով, որ այդքան ժամանակ իրեն հնազանդ են եղել, հայտնում է, որ յուր իշխանությունը հանձնում է մեծ որդուն և պատվիրում է բոլորին հնազանդվել նրան, ինչպես իրեն: Ապա լվանում է ձեռքերը հաջորդի ձեռքերի վրա, որով և յուր ձեռքերի «բարաքյաթը» անցնում է նրա ձեռքերին, հետո հանձնում է նրան փողի քսակը և համբուրում:

Եթե ավագ որդին հոգեկան հիվանդություն ունենա, հայրը զրկում է նրան հաջորդության իրավունքից, և հաջորդությունն անցնում է մյուս եղբորը, հակառակ դեպքում հայրը չի կարող զրկել նրան:

Որդու հաջորդության ժամանակ «տան մեծի» իրավունքը փոքր ինչ

սահմանափակվում է, նա ծանր գործերում պետք է խորհրդակցե շափահաս եղբայրների հետ և ստանա նրանց համաձայնությունը: Նա պետք է զգուշանա յուր անձնականին վերաբերյալ ծախսերից, որովհետև սրանից ոչ միայն կոփվենք են ծագում, այլև մյուս եղբայրներից յուրաքանչյուրը պահանջում է նույնպիսի ծախս և յուր համար անել: Սակայն սրա իրավունքը ևս տարածվում է բոլոր անդամների, բացի հարսներից, թե անշարժ և թե շարժական կաշքերի վրա: Օրինակ, եթե անդամներից մինը, տան մեծի եղբայրը թե որդին՝ միևնույն է, սրանից մի հաց առել գնացել է օտար երկիր և հազար մանեթ վաստակել, այդ գերդաստանին է, և նա պարտավոր է հանձնել տան մեծին: Իսկ եթե հազար մանեթ պարտք է արել, այդ պարտքն էլ պիտի վճարե գերդաստանը՝ տան մեծի ձեռքով:

Տան մեծի անձնափոխանորդը և նրա մահից հետո նրա հաջորդը է ոչ թե նրա ավագ որդին, այլ իրենից փոքր եղբայրը, այսինքն տան միջի տարիքով մեծը, հետո փոքր եղբայրը: Բոլոր եղբայրներից հետո հաջորդությունն անցնում է ավագ եղբոր երեց որդուն: Այսպես ուրեմն՝ հաջորդությունը կատարվում է երեցության կարգով, և այս ինչպես արական, այնպես էլ իգական սեռի մեջ:

Միակ բանը, ինչպես ասացինք, որի վրա չի տարածվում տան մեծի իշխանությունը, դա հարսների փողն է: Թեև հարսները իրենց հետ փող չեն բերում, սակայն վաճառում են իրենց զարդերը, հագուստները և խնամոնց տված ոսկիները մանրելով՝ մի գումար են գոյացնում և իրենց անունով շահով տալիս: Այս գումարն իրենք կոչում են «արնքագին»՝ արյան գին, և այդ փողով հոգում իրենց և իրենց որդիների հագուստները, որովհետև կերսանքը շոր չեն անում ոչ իրեն և ոչ յուր որդիներին: Եթե պատահի, որ կերսանքը շոր անեն մի հարսին, անպատճառ մյուսներից էլ պետք է անեն, շնայելով որ նրանք բոլորովին պետք չունին: Եվ եթե չանեն, ամուսինները կկռվեն և կբաժանվեն: Եվ եթե մի քանի արշին կտոր գա տուն, անպատճառ հավասար բաժին պիտի անեն հարսների մեջ, առանց նայելու, թե այս հարսը շատ, իսկ այն ոչ մի որդի չունի, և կամ սրան շատ հարկավոր, իսկ նրան բոլորովին անպետք է: Այս է պատճառը, որ միևնույն գերդաստանի երեխաներից մի քանիսը շատ լավ են հագնված, իսկ մյուսները գրեթե մերկ են:

Կնոջ փողի վրա իրավունք չունի և նրա ամուսինը, եթե բաժան չէ եղբայրներից: Բաժանվելիս միայն նա ստանում է կնոջ փողը և վարվում ինչպես յուր վաստակի հետ:

Կնոջ մահից հետո արնդինը մնում է մարդուն որպես մի առանձին սեփականություն, որի վրա իրավունք չունի տան ոչ մի անդամը: Այս

փողով նա կարող է հողալ յուր անձնական և յուր որդիների կարիքը: Սրա մահից հետո արնգինը որպես ժառանգություն բաժանվում է որդիներին՝ երկուս տղաներին և մեկ աղջիկներին, որպես առանձին սեփականություն:

Համամայր որդիները միևնույն իրավունքն ունին այնպիսի ժառանգության, իսկ համահայր որդիներից յուրաքանչյուրը միևնույն իրավունքն ունի միայն յուր հարազատ մոր արնգին վրա:

Կնոջ հետը բերած տղան ստանում է մոր ունեցած արնգինը, իրեն է պահում յուր վաստակը, և միայն կերակրվում խորթ հոր սեղանից: Ապօրինի, պասկից առաջ ծնված երեխաները անպատճառ կամ սպանվում են, և կամ եկեղեցու դուռը ձգվում: Մինչև անգամ ամուսնությունից մի քանի ամիս հետո ծնվածներն ենթարկվում են այդ դժբախտ վիճակին: Օրինակ, Սաթխա գյուղում ամուսնությունից չորս ամիս հետո ծնվում է տղա, որ հակառակ մոր սրտակեղ աղաչանքին և հոր թույլ ընդդիմության, խեղդում են տան «ամօթի համար մեռած» մեծերը:

Սակայն հասարակությունն անխնամ չի թողնում եկեղեցու դուռը ձգվածներին. որքան արհամարհում է ապօրինի երեխայի թաքնված ծնողներին, այնքան գուժ ունի երեխայի վրա: Անշուշտ մի գերդաստան, տան երկու մեծերի, մանավանդ կերսարի թույլսփությունով որդեգրում է և հարազատ որդիների հետ համահավասար խնամում:

Որդեգիր որդին ժառանգության իրավունք ունի միայն որդեգրողի շարժական կայքի վրա, իսկ եթե որդեգրողը կտակ անե, կարող է հարազատ որդիների հավասար, մինչև անգամ ավելի, մասն ստանալ:

Տնփեսայություն շատ քիչ է պատահում, և այն միայն այն դեպքում, երբ աղջկա հայրը ոչ միայն արու զավակ չունի, այլև բաժանված է գերդաստանից: Տնփեսան վայելում է հարազատ որդու իրավունքներն և աներոջ մահից հետո ժառանգում է նրա թե անշարժ և թե շարժական կայքն:

Բացահայտ նկատվում է, որ բաժանվելը հետզհետե ավելանում է, և այս կատարվում է հետևյալ ձևով.

Ա. Որդին բաժանվում է հորից:

Երբ որդին է բաժանվում հորից, վերցնում է ինչ որ հայրը տալիս է և հեռանում: Հաճախ պատահում է, որ որդու վրա բարկացած հայրը ոչինչ չի տալիս նրան՝ «կնիկը կու տա ձեռքը դուս կէնե»: Սակայն սա հոր մահից հետո դատ է բաց անում եղբայրների դեմ և հավասար մասն ստանում, և ժողովուրդը բոլորովին չի դատապարտում նրան:

Բ. Եղբայրներն են բաժանվում:

Եղբայրները բաժանվելիս նախ և առաջ ընտրում են 3—4 բաժանող, որոնք մաքրում են հաշիվները, և ինչպես առձեռն փողը, այնպես էլ պարտքը բաժանում եղբայրների վրա: Եթե եղբայրների որդիներից մինը կամ մի քանիսը ամուսնացած են, ծախսերը հաշվում և այդքան փող ընդհանուր գումարից տալիս են այն եղբորը, որի որդին դեռ չէ ամուսնացել: Ապա ցորենն ու հարող գերդաստանի բոլոր անդամների, իսկ շարժական և անշարժ կալվածները միայն եղբայրների թվին հավասար մասն են անում, առանց նայելու թե մի եղբայրը տասն որդի ունի, իսկ մյուսը ոչ մինը, կամ մեծ եղբոր 25—30 տարեկան որդու 15—20 տարիների վաստակը խառնված է այդ բաժանվող սեփականության մեջ: Բաժանումից ազատ են մնում միայն կանանց «սնդուկները»՝ հանդերձները, դարդերը և արնգները: Հավասար մասեր անելուց հետո բաժանողները վիճակ (չոփ) են ձգում, և որ մասը ումն ընկավ, տալիս նրան: Բաժանվածները սովորաբար մոտ մի տարի խոռով են մնում, հետո հաշտվում և առաջվանից ավելի սիրով լինում:

Բաժանման ամենազիսավոր պատճառներն են.

ա. Սովորությունների ղեղձումը. 40—50 հոգի միասին կարող են միայն այն ժամանակ խաղաղ ապրել, երբ բոլորն էլ ճանաչում են իրենց պարտքն ու իրավունքը, և բոլորն էլ ենթարկվում են որոշ օրենքների: Նախկին հայ գերդաստանն արդեն լավ թե վատ որոշել է յուրաքանչյուր անդամի իրավունքն ու պարտականությունը և սահմանել է որոշ սովորություններ, որոնք իբրև օրենք կատարվում էին: Արդի սերունդն անարգելով նախնի իրավունքն ու սովորությունները, մի նոր իրավունքի կամ սովորության չի ենթարկվում, որից և ծագում է խռովություն, անբավականություն, վերջը՝ բաժանումն: Այսպես, օրինակ, նախնի սովորությունը բաժանել է հարսների աշխատանքը. աղջիկը դեռ հարս չլինացած դիտե յուր անելիքը, և երբ ամուսնանում է, արդեն հաշտված յուր բախտի հետ, լռելյայն կատարում է յուր գործը, իսկ այժմ, երբ հարսները չեն ուզում վարվել նախնի սովորությունով, գործը երեսի վրա է մնում, մեծն ստիպվում է ասել, հրամայել անելու, սա դիմադարձություն է անում, որից և ծագում է կոփվ, վերջը՝ բաժանում:

բ. Գլխավոր պատճառը հողի սակավությունն է, այնպես որ յուրաքանչյուր եղբայր առանձնապես կարող է մշակել յուր բաժին հողը, հետևապես և եղբոր ընկերությանը պետք չունի:

գ. Հող քիչ ունենալով՝ եղբայրներից մի քանիսը մշակություն են անում, կամ ուրիշ գործով պարապում և չեն ուզում իրենց վաստակը տուն բերել:

դ. Եղբոր չափահաս որդիների աշխատանքն ընդհանուրին է պատկանում և անհասպաղ հանձնվում է տան մեծին, սակայն սա զրկված է ժառանգութեան իրավունքից. 20—30 տարի աշխատող որդու հորեղբայրը հավասար բաժին է ստանում գուցե 15 տարեկան եղբոր հետ:

ե. Փողը մեծ եղբոր ձեռին լինելով՝ սա երբեմն վատնում է յուր անձնակաւի համար, երբեմն գողանում, ծածուկ պահում (ինչպես Գիլիֆում պատահել է): Հաճախ էլ դիր շփոտնեալու պատճառով՝ ելեմտից հաշիվ չկարողանալով ճիշտ ցույց տալ, կասկածանքի տեղիք է տալիս, որից և ծագում են խռովութուններ, և վերջը՝ բաժանումն:

զ. Եղբայրներից մի քանիսը շատ որդիներ են ունենում, և մյուսներից չեն հոժարում հավասար աշխատել, քանի որ մյուս եղբոր որդիները շատ են ուտում:

է. Եղբայրներից մի քանիսը փոքր կամ բոլորովին որդի չունենալով՝ չեն կամենում մասնակցել մյուս եղբայրների որդիների հարսանիքի ծախքերին և մի պատճառ բռնելով՝ բաժանվում են:

ը. Եթե եղբայրներից միևի ազդիկը փախցնեն, սա մյուս եղբայրներից պահանջում է նրանց ազդիկների ամուսնութեան համար ծախսած գումարի չափ գումար, կամ յուր ազդիկ համար շորեր առնել տալու և կամ ուղղակի նրա անվամբ շահով տալու, և երբ եղբայրները չեն համաձայնում՝ կովում և բաժանվում են:

թ. Երբ եղբայրները իրենց վաստակից փող են գողանում և տալիս իրենց կանանց, որոնք արնզնի հետ խառնելով շահեցնում են:

ժ. Ամուսինն երբեք իրավունք չունի յուր կնոջ կամ որդիների համար բան առնելու, եթե մի արշին շիթ անգամ գա տուն՝ հավասար բաժին պիտի լինի հարսերի մեջ. այս պատճառով և շատ որդիներ ունեցողի ընտանիքը գրեթե մերկ և խեղճ է ապրում, մինչդեռ դրա աշխատանքի գուցե մեծ մասով եղբոր որդիները զարդարվում են: Տանկանալով յուր որդիներին պահել ինչպես յուր միջոցները ներում են, բաժանվում է:

ժա. Եթե եղբայրները հոժար չեն ամուսնացնելու եղբոր որդուն այսինչ ազդիկ հետ՝ բաժանվում են:

ժբ. Եթե հարսները միմյանցից ոսկիներ են գողանում:

ժգ. Եթե տեգերկնիկները միմյանց հետ սիրով չեն և շարունակ կրավում են: Ժողովուրդը բաժանման գլխավոր պատճառը տեգերկնիկների անհամաձայնութունն է համարում:

ժդ. Եթե կեսուրը խորթ է և նեղում է խորթ որդիներին և հարսներին:

ժե. Եթե մի եղբոր կնոջ արնագինը մեծ է, սա վստահելով առանձին գործ սկսել կնոջ փողով, բաժնվում է:

ժզ. Եթե եղբորորդիներից միին անառակ է և գողանում է տան իրերը:

ժէ. Եթե եղբայրներից միեր ծուլ և անառակ է:

Ընդհանրապես ժողովուրդը բաժանվելը ավերիչ է համարում: «Մեքեղիքը էրկուս գրլի, մե խարճը էրկուս կղանա»,—ասում է նա: Բաժանվելիս ազապ քրոջը մաս չեն հանում, նա ապրում է եղբայրներից մեկի մոտ և ամուսնանում նշանածից առած հաղեմասով, «իրեն մուրը իրեն ճակատը»,—ասում է ժողովուրդն այսպիսի դեպքերում: Բաժանվելիս եթե ծնողները կամ միայն հայրը կենդանի է, սա իրեն բաժին վերցնում է՝ որքան կամենում է, որը սրա մահից հետո դարձյալ բաժանվում է եղբայրների միջև, եթե իհարկե առանձին է ապրել, իսկ եթե մի որդու մոտ է ապրում, մնում է նրան: Եթե կենդանի է միայն մայրը՝ նրան մաս չեն հանում, շատ շատ մի կով, երկու ոչխար տալիս են այն եղբորը, որի մոտ մնալու է մայրը:

ՀՆՎԱՆԿՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԾԿՈՒԹՅՈՒՆ

Ախլթալաքի գավառը Կովկասի ամենաառողջարար գավառներից մի է համարվում: Մաքուր և փոշուց ազատ օդն և արագ շնչելու կարևորությունը շատ լավ է ազդում թե առողջների և թե հիվանդների վրա: Շատ օրինակներ ցույց են տվել, որ ժանտաչերմ (малария), ջրբուկ, թոքային և սակավարյուն հիվանդություններից տանջվողներն այստեղ արագութեամբ լավանում են:

Բնակիչների մեջ տարածված հիվանդությունների մեծ մասը առաջանում է զլխավորապես ապրելու եղանակից և տգիտությունից: Եվ միայն շատ փոքր մասը կարելի է վերագրել կլիմայի ազդեցության, աշխատության պայմաններին, ժառանգության և պատահական դեպքերին:

Գյուղացիների բնակարանները, որ գրեթե բոլորովին զրկված են լույսից և պարունակում են անասունների դեքից շոգիացած գազեր ու մեծ քանակությամբ ածխաթթու, ահագին ազդեցություն ունին բնակիչների առողջության վրա: Բացի թթվածնի պակասությունից առաջացած վնասները, այդ խոնավ, գետնափոր բնակարանները սաստիկ նպաստում են հազար ու մեկ մանր օրգանիզմների առաջացման:

Վերջին խոլերայի ժամանակ այս գավառում անհամեմատ քիչ զոհեր եղան, իսկ հինգ տարիների ընթացքում սովորական ծաղիկ, կարմրուկ և կոկորդային հիվանդություններից մեռել են:

	Յարկ	Կարմիր	Կոզոզի հիման	Բուրձ	% բուրձ մեծագույնի համար
1885 թ.	22	412	362	790	48
1886 »	12	27	165	204	22
1887 »	601	9	116	726	42
1888 »	171	6	112	289	25
1889 »	18	4	195	217	21
Հնդամենը՝	624	458	950	2232	35

Հետևապես՝ վերոհիշյալ հիվանդություններից մեծնողների տոկոսը, տատանվելով բառ տարիների 21 և 48 մեջ, հինգ տարիների ընթացքում միջին թվով տալիս է 35%, այսինքն բոլոր ննջեցյալների հրորդ մասից ավելի:

Առավելապես հասակավորներին բռնող վարակիչ հիվանդություններից ուշադրության արժանի է գլխավորապես ձմեռը և գարնան տարածվող թոքերի կրուպոզ (крупозное) բորբոքումը և որովայնի վարակիչ տիֆ: Առաջինի մասին ճիշտ տեղեկություններ չկան, իսկ տիֆով հիվանդացել են 1889 թ. 13 և մեռել 2, իսկ 1890 թվին 18 և մեռել երեքը: Մյուս հիվանդություններից ավելի տարածված է բորբ:

Ամբողջ գավառի հիվանդների մասին պաշտոնական տեղեկություններ չկան, իսկ քաղաքում 1889 թվին եղել են 411, որոնցից մեռել են 27, իսկ 1890 թվին 491, որոնցից մեռել են 59^{3/5}:

Թե՛ քաղաքում, և թե՛ գավառում ոչ մի հիվանդանոց չկա, քաղաքում կա միայն մի գավառական և մի գինվորական բժիշկ: Գյուղացիները գլխավորապես բժշկվում են սփրիչների և պառավ հեքիմների մոտ: Միևնույն ժամանակ, հավատարով ճակատագրին, բժիշկներին այնքան նշանակություն չեն տալիս: Եթե հիվանդությունը երկար է տևում, ուրախանում և այդ համարում են լիովին առողջանալու միջոց, իսկ եթե կարճ միջոցից լավանում են, վախենում են, թե միգրացի հիվանդությունը մարմնից դուրս եկած շիների և սաստկությունը նորոգվելով՝ մահ պատճառե:

Ամենամեծ խնամքը կայանում է նրանում, որ երբ հիվանդը մի քան է ցանկանում ուտել, անշուշտ գտնում տալիս են: Հիվանդի ուտելու վերաբերությամբ ունեցած այս ցանկությունները կոչում են կամակ:

35 Пантюхова И. И., Ахалкал. уезд., Тифлис, 1892 г.

Ժողովուրդը երևակայում է հիվանդությունները որպես փոքրիկ էակներ, գլխներին եռանկյունաձև «սըրբլիկ» գլխարկ ծածկած, ձեռներին երեք՝ կանաչ, կարմիր և սև ճիպոտ բռնած: Առաջնորդն ստանում է աստծուց մի տետրակ, ուր նշանակված է լինում հիվանդացողների և մեռնողների անունները, և սրանք նայելով այդ տետրակին՝ կանաչ ճիպոտով խփում են նրան, ով դատապարտված է կարճատև հիվանդության, կարմրով՝ նրան, ով պիտի երկար ծառայե անկողնին, և սևով՝ նրան, ով պիտի մնաս բարով ասե այս աշխարհին:

Մրանց մասին բազմաթիվ պատմություններ կան, որոնցից հիշենք գոնե միսն այնպես, ինչպես պատմել են.

Ցավիք

Ցավերը թոփ գրլին կերթան մե քաղաքմ՝, օր մարդիկը վերին հիվանդանոցն են, վերին սաղցրեն են, վերին ա մեռցրեն են: Աստված աստուց մե դավթարմ՝ կուտա ու կրսե թը. ասոր աշեցեք, վերն օր մեռնելու է՝ մեռուցեք, վերն օր հիվանդանալու է՝ հիվանդուցեք ու սաղցուցեք:

Ասոնք գելլեն գրլին ճամփա, գուգան մե դյուզ օվամ: Վախտ անցած գլլի, անոթենան կը: Անոթենան կը՝ կրսեն իրարու թը՝ ի՛նչ էնենք, անոթցանք: Ջերմը կրսե կը թը՝ դուք խտեղ կեցիք, ես էրթամ ինի շոպենն մելխարմ՝ բերեմ, ուտենք:

- Կերթա շոպինն քովը, կրսե. «Բարև, շոպան»:
- Ան ա կրսե. «Ասու բարին, ախպար»:
- Կրսե. «Ինձի մե օլխարմ՝ տու»:
- Չոպանը կրսե. «Ինչի՞, դուն վե՞վ ես օր»:
- Կրսե. «Ես չերմն եմ, օր մարդու բռնեմ՝ օխտը տարի խելքը գլոխը չի գա»:

- է, կրսե, ես ասոր դեղը գիտեմ:
- Ի՛նչ է:
- Կը կըթեմ,— կրսե,— օլխրին կաթը, կղնեմ գիշերը աստղը, աստվոտ խմեմ օաղնամ կը. էլ քեզենն վախ չունիմ, ինչի՞ տամ:
- Ջերմը տեսնի կ'օր հնարը գիտե, թողն գուկա ընկերտանցը քովը: Կրսեն. «Ինչի՞ չեքիթ օլխարը»:
- Ջերմն ա կրսե կը թը. «Հնարը գտավ՝ շոպեց»:
- Ետև վարձավքը կրսե. «Կեցիք, ես էրթամ բերեմ»:
- Գելլե կերթա շոպինն քովը, կրսե. «Բարև, շոպան»:
- Ասու բարին, ախպար,— կրսե շոպանը:

Կրսե. «Չոպան, օշխարհ՝ տու մեզի»:

Կրսե. «Ինչի՞, դուն վե՞՞վ ես օր»:

Կրսե. «Ծն վարձավքն եմ, մարդու օր բռնեմ անքան սալըխլամիչ (զառանցել) կէնեմ, օր տեղեն կը փախցընեմ»:

Չոպանը կրսե. «Ատ հեշ, ես դեղը գիտեմ»:

— Ի՞նչն է, կրսե վարձավքը բերանը ծռելով:

«Ծղունկներս բոքեն հետ կը կտռեմ, օտվիս տաք շուրը դնեմ կը, վրաս ա բան կ'առնեմ, կսկուծ՝ քրտնիմ կը, գլլիմ բողկ, տեսնիմ աշ Ի՞նչ պըտի էնես»:

Վարձավքը ոսպիլի պես ետ դառնա գուգա ընկերտոցը բովը: Ընկերտանքը հարցընեն կը թը՞ ո՞ւր է բերածու:

— Է Ի՞նչ էնեմ, կրսե, քոփակ օղլին անմեն բանին դեղը գիտե:

— Կեցի՞ք, կեցի՞ք,— կրսե յանիզարան (ժանտախտ), ձեր ձեռքեն բան չտ գա, տեսեք ես ինչ կը բերեմ:

— Քիչմ՝ իջի,— կրսեն էն էրկուսը:

Ասիկ գելե կերթա. «Բարե, շոպան», կրսե:

— Ասու բարին, Ի՞նչ դուզես:

— Մե օշխարհ՝:

— Ինչո՞ւն ինչն էր, քեզի օշխարհ, դուն վե՞՞վ ե՞ս օր:

— Ես յանիզարան եմ, առավոտ բռնեմ՝ իրիկուն տանիմ կը, իրիկուն բռնեմ, առվոտուն տանիմ կը:

— Է՞, էտ լավ չէ՞ղավ, կրսե շոպանը, ա՛ռ, առ տար, շարեն Ի՞նչ: Չոկե մե դրպըր օշխարհ՝ կուտա կը:

— Շալկե, շալկե, առաջ ընկի,— կրսե յանիզարան:

Չոպանը շարասըզ շալկե գըջնի կը առաջ, տըրտըրալին տանի կը:

— Տեսեք, ինչդ բերի, վերստմ՝ հեռվեն ճվա կը յանիզարան:

Ցավերը ուրախան կը, վազղեն կը դեմ:

Չոպանը բերե օշխարը վար կը դնե, կրսե. «Է՞, ախարտիք, օշխարը առաք՝ առաք, հեշ չէ բսեք թը՞՞ դորթմե վո՞՞վ եք»:

Անոնք ա կրսեն թը՞՞ մենք ցավերն ենք, պիտի էրթանք այնի քաղաքը, աստված այսի դավթարը տվեր է մեզի, օր աշենք, վեր մարդն օր մեռցնելու է՝ մեռցընենք, վերն օր հիվնդցնելու է՝ հիվնդցընենք:

— Հորերուտ հոգուն, հըլը մեմ՝ աշեք, ես ա կա՞մ իտի դավթրին մեչը:

Ցավերը կատնեն դավթարը շորտեն, շորտեն, կաշեն օր՝ նյա մեռնողներուն սրին մեջ կա, նյա հիվնդցողներուն, կրսեն. «Չոպան, դու չկաս իսի դավթրին մեչը, նյա հիվնդնաս պտի, նյա մեռնիս»:

— Օր ատպես է, ես ա իմ օշխարս չեմ տա ձեզի՝ տեսնիմ Ի՞նչ պըտի էնեք,— կրսե շոպանն ու վերցնե օշխարը փախի կը³⁵:

ԺՈՂՈՎՐԴԱՆԱՆ ԴԵՂԵՐ

Հարիեզ

Ժողովրդի նախապաշարմամբ հարիեզ (խարբուխ, սալում) են ընկնում, երբ ապօրինի զավակ է ծնվում, ուստի և ընկնելիս անիծում են անհայտ, գուցե և գոյություն շունեցող ապօրինի զավակին:

Առողջանալու համար խնշում են մի կտոր շորի մեջ, վրան աղ ցանում, մի քանի կոպեկ կամ մի ուրիշ բան դնում մեջը և ձգում փողոց: Ով որ վերցնե աչ՞՞ նա կստանա հարիեզ, իսկ առաջինը կլավանա:

Հարիեզ ընկած երեխաներն ասում են ընկերներին. «Ըսա հող, չող»: Եվ եթե մինն ասե՞՞ սա կպատասխանե. «Մալումս քեզի փոխ»: Եվ սրանով, իբր, հարիեզը կփոխվի մյուսին, և ինքը կառողջանա:

Հարիեզը իրենց շփոխվելու համար հարիեզ ընկածին պատահելիս ասում են. «Չաղչեն գուգամ, գլխս ալըրոտ է»:

Դիխացավ

Թաց քաթանի վրա քաշում են ղզլճուղի (հուն) կամ ճանճուլի պասուեղ և կամ աղով սոխ կապում ճակատին:

Ճակատից արյուն են առնում:

Քիթը քացախ քաշում:

Գլխին օղի են ածում և տրորում:

Փոռացավ

Նուփը տաքացնում և շորի մեջ փաթաթած դնում են փորին: Ինվելուկը խաշում փորին են քաշում:

Ամուսլյան դեմ

Ձիթապտղի կուտը և մի քիչ բովված սո՞ւրճ եփում, շորի վրա քաշում և կապում են փորին:

Լումելու (խալ) դեմ

Կիտորը մանրում, եփած հավկթի վրա ցանում, երկու տառվոտ գեղ բան չկերած, անոթի փորուն ուտում են:

³⁵ Սրա թարգմանությունը տպվել է «La revue des Traditions Populaires»-ի 1903 թ. № 2-ի մեջ:

Կամ զզլճուղի կուտը փոշիացնում, ջրի մեջ եփում և մի քանի անգամ խմում են:

Թղենու տերևները շորացնում, ծեծում և սուրճի պես եփում ուտում են:

Դեղձի դախը եփում են ջրով և ուտում:
Հունի (զզլճուղի) կուտը բովվում, սուրճի պես եփում և խմում են:

Փսխելու պեմ

Համեմի հունդն եփում են, մինչև որ մնում է ջրի կեսը, ապա քիչ քիչ խմում:

Մառնաշունչ

Արջառի կամ ոչխարի ողնաշարի ուղեղը շորի վրա բաշում դնում են վրան և առավոտ երեկո փոխում:

Բիզնառ

Կապույտ պտկի նման դուրս է գալիս և սաստիկ քոր գալիս. դրում կամ սրա ծաղիկը կամ սրա լուղը սառը շաբարի հետ ծեծում դնում են վրան և օրը մի քանի անգամ փոխում:

Փաթաթում են շրդանով:

Շան լակոտը սպանում, չնջխում և դնում են վրան, հետո օձի շապիկը ձիթով զաղում կապում վրան:

Հավկուր

Հավկուր ընկնողը երեկոներն այլևս չի տեսնում: Սրանից ազատվելու համար կեմը ձուցում են վիզը և քաշելով երեք անգամ պտտեցնում եկեղեցու շուրջը:

Հավերի հետ կուտ են տալիս:

Հանկարծ տնից դուրս են կանչում և կտուրից դռան շեմքին մի կճուճ գցում, կոտրում: Պատահում է, որ կճուճը սխալմամբ դիպչում է հավկուրի զլխին և ավելի կուրացնում նրան:

Լուանի նոսից

Հիվանդացողներին բժշկելու համար ուռի և սխտորի մոխիրը քսում են ճակտին, պնչերին, քմքին, դաստակներին, բռեղը և կրծքին:

Այսբասի են կտրել տալիս. մինը հաց և պանիր տանում լոբլյայն

դնում է թամբագործի առաջ: Թամբագործը հասկանում է, և դարձյալ լուռ մի կտոր կաշի լուանածե կտրում դնում է հացի տեղը: Բերողը վերցնում է այդ այսբասին և տանում երեխայի դասկին կտրում:

Հազ

Ընելվա ամերիքան նրագու մոմով օծում և դնում են կրծքին:

Բամբակը բռնում են կրակը ձգված խնկի վրա և տաք-տաք դնում կրծքին և երբեմն էլ մեջքին:

Երբ մրսելուց հազում են, առավոտները հում կաթ են խմում:

Թուզը կամ ունարը կաթի մեջ եփում ուտում և կաթը խմում են:

Պաղ շաքար են ուտում:

Ալֆինջան կոշված արմատը թեյի պես եփում, օրը երկու անգամ խմում են:

Ատամնացավ

Ատամնացավի դեմ զործ են ածում հեանյալ դեղերը. մեխակի յուզն օղու հետ խառնելով՝ ողողում են բերանը. այս դեղը առնվազն կես տարի կտրում է ցավը:

Վարդապետի ժախը (խելառ ժախ) ծեծում դնում են ցաված ատամին:

Ընկուզի միջուկը դնում են կրակին, որ յուզը դուրս տա, այս ժամանակ առնում են ատամների մեջ և սեղմում:

Մամուխ թուփ արմատը մանր ջարդում, եփ են տալիս ջրի մեջ մինչև ջրի $\frac{3}{4}$ մասը շոգիանալը և ապա քիչ հովացնելուց հետո մի երկու բուպե պահում բերանում՝ ցավող ատամի վրա:

Տարի ֆիլֆիլը ծեծում, օղիով շաղվում և դնում են ցաված ատամին:

Եթե ատամը փտել է և ցավում է՝ դաջը (купарос) լավ ծեծում և ցանում են մեղրի վրա, ապա մեղրը զգալով լավ խառնում, քսում ցաված ատամի կողմի ալտին երեսից և շորով փաթաթում: Այսը ուտում, բաշում է իրեն ատամի ցավը և առողջանում:

Ճաղը սաստիկ տաքացնում կամ բամբակը սպիրտի մեջ թաթախում և դնում են վերան. այսպիսով ցավը մի քանի օր կտրում է:

Ոմանք էլ մարխը մանր ծեծում լցնում են օղու մեջ, լավ եռացնում, շատ պաղեցնում և ողողում բերանը:

Ուսուցիչ

Դրոժով հացը բրդում են լավ դինու մեջ, եռացնում և կապում ուսուցքին:

Գարի ալյուրն ու օշինդրը (յավշան) միասին եփում, շորի վրա քաշում և դնում են ուսուցքին:

Թևի կամ ոտի ուսուցիչ

Կտանմի սերմը ծեծում, օղիով շաղվում և շորի վրա քաշած դնում են ուսուցքին:

Միևնույն ուսուցքի համար գազարի բերվածքը շորի վրա քաշում դնում են վրան:

Անուկի ուսուցիչ

Չորացրած թուփը լավ ծեծում են, որ կտեներն անգամ փշրվին և հավկիթի դեղնուցի հետ լավ խառնելով՝ շորի վրա քաշում և դնում ուսուցքին: Դեղն առավուտ երեկո փոխում են: Այս միևնույն դեղը դնում են և բկի ուսուցքին: Եվ եթե ուսուցքը սպիտակ է՝ կցրվե, իսկ եթե կարմիր՝ կծակե:

Կտան տակի ուսուցիչ

Ուլսարի կամ արջառի ողնաշտրի ուղեզը փշատի փոշու հետ խառնում և շորի վրա քաշած դնում են վրան: Առավուտ և երեկո փոխում:

Ամորձիկի ուսուցիչ

Ամորձիքների ուսուցքը իջեցնելու համար՝ անալի ձիթապտուղը կտի հետ ծեծում և շորի վրա քաշած դնում են վրան: Օրը երկու անգամ դեղը փոխում:

Միևնույնի համար բաթաթուկ բույս և հում դմակ հավասարաչափ խառնում, ծեծում և շորի վրա քաշած դնում են ուսուցքին. օրն էլ 2—3 անգամ կրկնում:

Կանաչ օձի ուսուցիչ

Օձառի (ռախի սապոն) փոշին հավկիթի դեղնուցի հետ խառնում և շորի վրա քաշած դնում են օձին և օրը երկու անգամ կրկնում:

Բարի բակ—ժանտախտ

Տղայոց բուկը կամ ականջի տակը սաստիկ ուռչում է: Ուսուցքը

հավկիթից մեծ է լինում և փայլում է: Բժշկելու համար՝ ցորեն ալյուրը շաղվում են կոփի յուղով և տաք ջրով, խմորը բանում են, երեսին մեղր քսում և դնում ուսուցքի վրա:

Մազուլ

Բաղանիսից դուրս գալիս մազդակի ձյուփը դնում են մազուլի վրա և կապում, քաշում արմատախիլ է անում:

Սև ձյուփի հետ խառնում են 16% մեղրամոմ, շաղախում և դնում մազուլի վրա, օրական մի անգամ փոխելով:

Կտրվածի առյուծը կտրելու

Վերքից քիչ բարձր կապում են զմբութակ մատանի: Գիլու փատիկի փոշի են ածում վերքի վրա:

Կապույտ կտավը խառնում և դնում են վերքի վրա:

Կարտոֆիլի քերուցքը դնում են շորի վրա և կապում վերքին:

Պայա յափրաղի կոշված բույսի տերեղը թքոտում կամ ջրոտում և դնում են կտրածին, շարավը քաշում առողջացնում է:

Մրավ կտրած

Անլվա բուրդը ձյուփի մեջ այնքան եփում են, որ բուրդը հալվի, ապա սա քսում են սրով կտրած վերքի վրա և շորերով փաթաթում:

Ղիճոթին յուղի հետ ծեծում դնում են կտրվածի վրա, կամ ղիճոթին շորացնում, մանրում, կարագ յուղի մեջ շաղվում և դնում կտրածի վրա:

Կտրած ոսկոր

Կտրած ոսկորը նախ զգուշությամբ ուղղում են, ապա շրեշտը կամ յուղ մանրած շիպը շարմրդում, հավկիթի սպիտակուցով շաղվում, քաշում կտավի վրա և փաթաթում կտրած ոսկորին, որ շուտ ամբանում է:

Լավ օղի ցնցում են շաքրի թղթի վրա, խունկի մանրուք ցանում վրան և փաթաթում կտրած ոսկորը՝ նախապես լավ ուղղելով այն և հետո շորս տախտակներով կապում:

Կտրած ոսկորը նախ զգուշությամբ ուղղում են, ապա կտավի վրա քաշված սև ձուփը, վրան սև պղպեղ և մեխակ (բահար) ցանած, փաթաթում են կտրած ոսկորին և շորս տախտակներով ամուր կապում: 10—15 օր այսպես մնալուց հետո եթե շրունեց, շի լավանա:

Յրտի տարած

Ան ձուլը հալում լցնում են գետին և ցրտի տարած, այսինքն սաստիկ մրսած ձեռքը կամ ոտը դնում մեջը: Այս գործողությունը պիտի կրկնել, մինչև որ մրսածը զգա:

Վառած

Կրակով կամ ջրով վառվածը բժշկելու համար կովի անլի կարագի մեջ հալում են փոքր ինչ մեղրամոմ, նրան կաշունություն տալու համար, ապա պաստառի վրա քաշելով, փաթաթում վառվածքը:

Նույն միջոցով բժշկում են և կայծակի վառածը:

Ականջի շարավը

Կտրելու համար կաննփի կանաչ տերևը ծեծում են, և հյութը քամում են ականջի մեջ: Բարձմենակ ծաղիկը, որ դեղին թուփ-թուփ գլուխ ունի, մի փոքր կտոր շափ հետ ծեծում և հյութը կաթեցնում են ականջը:

Ուղնոսած ականջ

Անալի լոռ կամ դմակ դնում են ականջին և կապում, ականջի որդունքը քաշվում են դրանց վրա, ապա կաթով լվանում, ձեթ կաթեցնում և լվի ծաղիկը փշում մեջը, որ սատկեցնե:

Ականջի սրդունք

Գազարի տերևները ծեծում, ջուրը քամում լցնում են ականջը և ծածած տերևը դնում ականջին: Ասում են, թե այս դեղը որդունքը շարդում հանում է դուրս:

Միևնույն դեղը անում են նաև որդնոսած վերքի համար:

Խլություն

Նոր խլացածին առողջացնելու համար դանակի կողքը կրակի մեջ սաստիկ տաքացնում են, ապա խլացած ականջի մոտ բռնում և վրան ձիթապտղի յուղ (գեյթաղի) ածում այնպես, որ վազելով ականջի մեջ թափվի:

Խնձորի կողքից քիչ կտրում, մեջը մի կտոր խունկ կոխում, խնձորով նորից ծածկում և դնում են թոնի խորովում: Հետո խնձորը վերցնում դնում են ականջին այնպես, որ խնկի շոգին գնում է ականջը և առողջացնում:

Դոդ

Իշու կաթնուկ կոշված բույսը քաղում, մի բաժակ իծու կաթի մեջ 5-8 կաթիլ կաթացնում, անոթի փորին խմում են և մոտ կես ժամ վաղվում: Փոխում են և առողջանում: Միևնույն դեղը անում են ջերմի ա հազի դեմ:

Ողնու մորթից մի կտոր գցում են կրակի մեջ և զլխին սավան առած շնչում են ծուխը:

Հավկթի դեղնուցը լավ դարնում, մի բաժակ օղու հետ խառնում և խմում են: Այս դեղը երեք առավոտ կրկնում են:

Երեք քնկույզ երկերկու կտոր են անում և վրաները գրում. Ա. ս. տ. ու. ա. ծ: Ապա սրանք շարում են թաշկինակի վրա այնպես, որ ստոված բառը կարգացվի: Երբ դողը բռնե՝ օրը մի անգամ մտնում են սառը ջրի մեջ և կարգով քնկույզներից մինը ծամում: Վեց օրից, ստում են, թե առողջանում են:

Ջեմ

Մանրած սոխը ածում են քացախի մեջ, եռացնում, փոքր ինչ հոփացնում և քսում մարմնին:

Բուր

Մծումբը և վառողը լավ ծեծում, շարմաղում, կարագ յուղի մեջ քաղվում և օրը մի անգամ քսում են բորին. մի քանի օրից լավանում է:

Մծումբը, վառողը և յուղը հավասարաչափ պիտի լինեն և քսելուց հետո տաք պիտի մնան, այս նպատակով թոնիր են մտնում:

Կարմիր Լամի

Այս հիվանդության ժամանակ մարմինը կարմրում, հետզհետե ուռում և տաքանում է:

Առողջացնելու համար՝ հավկթի դեղնուցը քյաֆիրի մեջ տրորում և թեպուրով քսում են մարմնին:

Տեճատեսություն (մայապիլ)

Եթե նստատեղին «դուս է սվել, պտուկ — պտուկ» է եղել, կովի թթու մածուկի մեջ կապույտ քարը այնքան զարնում են, որ մածուկը կապուտկում է: Ապա սաստիկ տաքացնում են մի աղյուս, դնում քուղայի մեջ, մածուկը լցնում վրան և նստատեղին բաց՝ նստում քուղի բերնին: Մածուկի գուրորչին կտրում է այդ պտուկները, սակայն երկու օրից կրկին դուրս են գալիս, և նորից են կրկնում այս դեղը:

Մայապիլի եռը կտրելու համար կթավատի լավ ձեթ են քսում և վրան մանրած քիրիչան ցանում: Սակայն մի քանի օրից եռը նորից է սկսվում, և դեղը նորից կրկնում են:

Կանկառ, թուրքերեն «գլավաթիջա» կոչված բույսի սերմը կամ փուշը ջրով եփում ուտում են, կամ միայն ջուրն են խմում:

Չախալ փշի (կանկառ) հունար ուտում են, որ տեճատեսությունն անցնի:

Ոլլոտելու դեմ

«Ղոխայադի»՝ քառասնտանյա կոչված ոչիլներ տարածվում են մարմնի առավելապես մազոտ տեղերում և կիսով շափ մտնում մարմնի մեջ: Սրանք առաջանում են, երբ սեռական հարաբերությունից հետո շեն լվացվում: Բժշկելու համար թուրքերեն զինճիֆ կամ զինճիֆիրա կոչված մուգ շիկագույն քարը փոշիացնում են մի քիչ հինայի հետ և թքով շաղվում: Ապա այս բաղադրությունը լցնում են բնկուղի կամ կաղնի կճեպի մեջ և դնում մարմանը կրակի վրա, սովորաբար մանղալի մեջ: Հետո բոլորովին մերկացած՝ լավ փաթաթվում են սավանի մեջ, բերանը ջուր անում և ականջը բամբակ կոխում ու կանգնում մանղալը ոտների միջև առած: Բաղադրության ծուխը դիպչելով մարմնին, սատկեցնում է զոխայաղ ոչիլներին: Եթե բերանը ջուր չառնեն, և ծուխը ատամներին դիպչի, ատամները կթափին: Եթե առաջին անգամով բոլորը չեն ջարդվում, կրկնում են:

Կատաղածի դեմ

Բժշկելու համար գործ են ածում ձիթուկ կոչված ճիճուն, որ մի վերջոկալափ է լինում, սև, վիզը սաստիկ բարակ, գլուխը փոքր՝ մազանման երկու եղջյուրներով, հետույքը հաստ և կլոր: Սա պատրաստում է ձեթ: Առավելապես ապրիլ ամսին, երբ կանաչները քիչ են, ծողովում

են ձիթուկները այսպես՝ առանց ձեռք տալու ձիթուկին, որպեսզի ձեթը վիժի, մի թել ձգում են վիզը և քաշ տալիս: Ձիթուկն այսպես կախված 40 օր կենդանի է մնում, հետո ստակում է և երկու օրում շորանում: Այս ժամանակ վերցնում լավ ծեծում են և ստանում սպիտակ փոշի: Այս փոշուց մի մսխալ կամ ավելի քիչ լցնում են մի ֆինջան ջրի կամ, ավելի լավ, կաթի մեջ և խմցնում կատաղածին: Հիվանդն իսկույն ծննդկանի պես ցավ է բռնում, և նախ արյուն և ապա ճիճուների վիժում ու ազատվում:

Այս դեղը օգնում է միայն նրանց, որոնք ընդունում են այդ շան խածած օրից 40 օր դեռ չանցած: Իսկ իմանալու համար, թե խածվածը կատաղելու է, ուղարկում են գետից անցնելու. եթե կատաղելու է՝ չի կարող անցնել, որովհետև ջուրը արյան նման կերևի նրան:

Օձի կծած

Օձի կծած տեղից քիչ բարձր եղնիկի կաշով ամուր կապում են, որ լույսը շտարածվի:

Թույնը բաշելու և ուռուցքն իջեցնելու համար թարխունը ծեծում և փաթաթում են կծածի վրա:

Փուլնի դեմ

Ածուխի փոշին, ցորենի ալյուրի թեփի հետ խառնած, լցնում են ջրի մեջ. եփ տալիս, քամում և ջուրը քիչ քիչ խմացնում:

Փալուտի կամ բնկուզենու ածուխի փոշին, փոքր ինչ հալած անլի կարտոֆի հետ խառնում, խմացնում են թունավորվածին և վազեցնում: Փոքր ինչ հետո փղձկում և ազատվում է:

ՄԱՀ, ԹԱՂՈՒՄՆ ԵՎ ՄԵՌՆԵԼՈՑ

Մոզովրոյան կարծիքով ամեն մարդ մի աստղ ունի երկնքում, երբ նրա «տնալը»՝ վախճանը, որ նախախնամությունից որոշված է, գա՝ այդ աստղը կրնկնի, և մարդը 40 օրից հետո կմեռնի:

Նաև յուրաքանչյուր մարդ երկնքում կյանքի պուտուկ³⁷ ունի, որի մեջը թեփ է ածած, երբ «թեփը պարպի»՝ մարդը կմեռնի: Եվ հենց այս պատճառով էլ «չլը թեփը չէ պարպե» ոճը նշանակում է՝ դեռ վախճանը չէ հասել:

³⁷ Տե՛ս «Տեսիլք», Հավատքի բաժնում:

Առաջ բերենք մահվան վերաբերյալ մի քանի նախապաշարմունք: Եթե բաթաթը թոնիրն ընկնի՝ տանտիկինը կմեռնի: Բու թուշունն ում կտրին որ կանչն՝ տան մեծը կմեռնի: Եթե թին կամ բահը ուսին տանից դուրս ելնեն, մինը կմեռնի: Եթե մեռելատունը փոշտան, միննույն տնից շուտով մի ուրիշն էլ կմեռնի: Եթե ավելով մինի զլխին խփեն, երկար չի ապրիլ: Եթե սենյակից սենյակ անցնելիս ձեռքերին երկու մոմ բռնեն, մահ կպատահի: Եթե հաց եփելիս առաջին եփած հացն ուտեն, կինը կմեռնի, պետք է յոթը լրանա, որ նոր ուտեն: Եթե ականջը կանչն՝ «մեռելի ձայն կիմանան», կլսեն, թե բարեկամներից մինը վախճանել է: Եթե ժամկոչը գերեզման փորելուց անմիջապես հետո մինի անունը արտասանելով փետատի կոթը դնե ջուրը, սա կմեռնի:

Փողովուրդը հավատում է և փոքրիկ, սուր գտակ ունեցող ոգիների, որոնց «Ցավեր» է կոչում: Ծավերը ձեռքներիս ունին սև, սպիտակ և կարմիր սլալուխներ: Նախ նայում են Աստվածությունից իրենց հանձնված սղավթարին» և ում որ սև շլխով խփեն՝ նա կմեռնի, իսկ ում կարմիրով կամ սպիտակով՝ միայն կհիվանդանա:

Երբ մարդու «աճալը» գա, որին ոչ մի կերպ ընդդիմադրել չի կարող, եթե մարդը բարի է եղել, բարի հրեշտակը գալիս և ձեռի խնձորով խաբելով մարդուն, հոգին աղավանակերպ առնում է բերնից, իսկ եթե շար է եղել, գալիս է շար հրեշտակը, մի ոտքը դնում կողքին, մյուսը վզին և ձեռի մզրախով սեղմում կրծքին, ու առնում հոգին սև գործելու նմանությամբ:

Հենց որ հոգին ավանդում է, տնեցիք թափվում են վրան և կողկողազին լալիս, բարձրաձայն գոչելով նրան. «Վա՛յ, անուշ պալա՛ս, մեր տան դիրակը, տղաքտ անտեր թողիր, ո՞ւր կերթաս» և այլն: Ոմանք էլ սեղմում են ննջեցյալի ոտները, որ թե այդ և թե ուրիշ մեռելներից լվախենան, նայում աչքերին, եթե բաց մնացած լինի, ասում են, աշխարհից դեռ չէ կշտացել, եթե մատը խաղա կամ մարմինը փափուկ լինի, դա նշան է, որ նույն տանից ուրիշն էլ պիտի մեռնի:

Հետո մեռելը լողացնում են սառը ջրով տաշտի մեջ կամ կամի և կամ տախտակի վրա, եթե տղամարդ է ժամակոչը, իսկ եթե կնիկմարդ՝ քնյվանին: Մեռելի ազգականները, մանավանդ երախտապարտները գնում, մեռելի վրա մի մի «թաս» ջուր են անում, որպեսզի վերջինս յուր էամյակը՝ երախտիքը հալալ անե: Եթե ննջեցյալը կին է՝ մազերը կտրում են, այստեղից և ծագել է «մազտ մկրատը» անեծքը: Լողացնելուց հետո ավելացած ջուրը թափում են, տաշտը, կամը, կամ տախտակը բերնքսը-

վայր կորզում են և «մուշուրպան» (չրի ամանը) կտարում, որ նույն տնից ուրիշն էլ չմեռնի:

Ապա միայն մի քանի գյուղերում պատանքի կտորից քահանային կարել են տալիս խաշաձև վարշամակ, որ դնում են ննջեցյալի երեսին, պնչերը բամբակով խունկ կոխում, բերանին նշխարք դնում, հասարակ կտավից շապիկ, վարտիք կարում հագցնում, ձեռքերը կրծքի վրա «բարև» բռնեցնում, երբեմն ձեռին մոմ տալիս և ապա պատանքում են, ամբողջապես փաթաթում են կտավի մեջ և կարում: Պատանքի ավելացած կտորը փաթաթում են սյանը, որ նույն տնից ուրիշ շուտով չմեռնի: Մի բարակ թուկ էլ անց կացնելով ուտի, ոտների և կրծքի վրայով, խաշաձև կապում են, բայց սա ոչ բոլոր գյուղերում: Հետո փաթաթում են մի կապերտի մեջ և եկեղեցուց բերելով հասարակաց կապին կամ ջախալը՝ գնում մեջը, տանում տան մեշտեղը դնում: Եվ այս բոլորը նրանք անում են ընդամենը երկու ժամվա ընթացքում: Արտւ գյուղում երբ մինին պատանքում են, շարժվում է և ուշքի գալիս, իսկույն պատանքը պահում են և ասում, թե՛ սիրտդ գնաց, օդից տուն բերինք: Այժմ այդ մարդը կենդանի է:

Քառորդ ժամից գալիս է քահանան, գալիս են և մեռելի ազգականները, բարեկամները, զրկիցները և առհասարակ գյուղացիք, ինչքան հարուստ լինի մեռելը, այնքան շատ մարդ: Ամեն «թող ապրիս» եկող համբուրում է ննջեցյալի ամենամոտիկ անձնավորության՝ մոր, կնոջ, դստեր և այլն ձեռքը, կամ համբուրվում է սսելով. «Դու ողջ ըլլիս, սուրբ հոգին մխիթարե»: Գրեթե բոլոր եկողները նոր եկողի հետ լալիս են, և նրանցից մոտիկները լալով հիշում են ննջեցյալի վերջին խոսքերը, ցանկությունները կամ մտադրությունները: Կատարում են եկեղեցական ծեսը, իսկ մոտիկ ազգականները՝ մայրը, կինը և աղջիկն, առհասարակ կանայք, շոքած դազադի շուրջը լալիս են. մայրը, մամը և այլ պառավներ լալիս և բարձրաձայն երգի եղանակով բաներ են ասում: Եկեղեցական խորհուրդը կատարելուց հետո կանայք և մոտիկ ազգականները ընկնում են դազադի վրա և բարձրաձայն լալով, կանչելով համբուրում ննջեցյալին, ապա շորս այր մարդիկ բռնում են դազադը և տանում եկեղեցի: Դազադի տեղը տնեցիներից մին մի քար է դնում, որ ննջեցյալի հիշատակը հաստատ մնա: Առաջից գնում է քահանան տիրացուի և խաչ խաչվառի հետ, զգուշանալով ետ նայել, որովհետև եթե ետ նայե, կասեն թե նույն տանից շուտով ուրիշն էլ է մեռնելու, և մտքերում կհայհոյեն քահանային, ետևից տանում են դազադը՝ շրջապատված այր մարդկանցով, որոնք շուտ շուտ փոխվում և տանում են

դազազը: Ամենից վերջը գնում են կանայք, նորահարսեր և աղջիկներ: Եթե մահը պատահել է շաբաթ օրը, ննջեցյալը մի օր պահում են եկեղեցու մեջ, որովհետև դրա համար հատուկ սենյակ գրեթե ոչ մի գյուղ չունի, և կյուրակի օրը՝ «պատարագով» թաղում, իսկ եթե ուրիշ օր է մեռել, հենց եկեղեցի դնելն ու վերցնելը մեկ են անում:

Գազազը դնում են եկեղեցու մեջտեղը, դեմնին, ննջեցյալի մայրը շոքում է գլխի վերևը, մյուս մոտիկ ազգական կանայք շուրջը, և մինչդեռ քահանան կատարում է կարգը, սրանք բարձրաձայն լալիս են. մայրն էլ եղանակով բաներ է ասում և խանգարում քահանային:

Կարգը կատարելուց ետ հաճախ մեռելատերը խնդրում է գանձ ասել: Թեև եկեղեցական օրենքով արգելված է գանձ ասելը, սակայն հազիվ է պատահում, որ քահանան մերժե ննջեցյալի տիրոջ խնդիրը, որովհետև շահ ունի: Տիրացուները քահանայի ձայնակցությամբ ասում են մի տխուր գանձ, որ շուտ շուտ ընդհատվում է րազմության մեծ մասի, մանավանդ կանանց լալչունով: Երբ գանձը վերջացնում են աթոռակալը դնում է ննջեցյալի կրծքին մի «յարբալա» (ափսե) գրեթե բոլորը համբուրում են ննջեցյալին և մի քանի կուպեկ ձգում թաբախի մեջ, որն (50 կ.—1 ու.) աթոռակալը (երեսփոխանը) վերցնում և հետո քահանային է աալիս: Տղամարդիկ ննջեցյալին տանում են գերեզմանատուն, իսկ կանայք վերագառնում ննջեցյալի տունը: Գերեզմանը ննջեցյալի ազգականների գերեզմանների մոտ մեկ արշին լայնության և երկու արշին խորության փորած պատրաստած է լինում գյուղացիներից ով էլ որ պատահել էր: Գերեզման փորողին պատահողը ասում է. «Քրիստոս հարյավ ի մեռելոց», իսկ գերեզման փորողը պատասխանում է. «Օրհնյալ է հարությունն Քրիստոսի»: Մի քանի գյուղերում էլ ասում են. «Օղորմի աստված».— Օղորմի բարի ծնողացյ հոգուն: Ապա սա դուրս է գալիս գերեզմանից և պատահողը փորում: Երբ վերջացնում են՝ թին ու փետատը խաշաձև դնում են գերեզմանի բերանին:

Ննջեցյալը բերում, գնում են գերեզմանի աջ կողմը, կատարում են թաղման կարգը, մինը իջնում է գերեզմանի մեջ, կապերտից հանում են մեռելը. և սա գրկում պառկեցնում է գերեզմանի մեջ, նախապես գլխի տակ մի երկու քար դնելով, որպեսզի գլուխը բարձր լինի: Եթե ննջեցյալը կին է, կապերտը բռնում են գերեզմանի վրա, թե նրան գերեզման իջեցնելիս և թե գերեզմանը հողով լցնելիս, որպեսզի պահպանվի ամոթխածությունը: Երբ քահանան ննջեցյալի մոտիկ ազգականի բոի մեջ օրհնում է հողը և ձգում գերեզմանի մեջ, շրջապատողները լցնում են գերեզմանը հողով: Ամեն մարդ գոնե մի բուռ հող պիտի ձգե ննջեցյալի վրա, որպես

հատուցումն նրա երախտիքի: Գերեզմանից հանած բոլոր հողը լցնում են վրան և մի բուռ անգամ հետո շին թողնում, մեղք համարելով այդ:

Թաղման կարգը կատարելուց հետո բոլորը համբուրում են քահանայի ձեռքի խալը: Քահանան էլ ասում է. «Աստված վարձահատույց արասցե»: Հետո ձեռք են տալիս ննջեցյալի մոտիկ ազգականներին ասելով. «Հոգին սուրբ մխիթարե», «Դուք ողջ ըլլիք»: Այստեղից քահանան, աթոռակալը, տիրացուները, մոտիկ ազգականներից շատերը և անշուշտ գերեզման փորողները միասին գնում են ննջեցյալի տունը, ուր ճաշ են անում, ընայելով որ մինչև անգամ ճաշի ժամանակ չէ: Այս ճաշը կոչվում է «փետատի հաց» և հատկապես արվում է գերեզման փորողներին: Երկրորդ օրը մոտիկ ազգականներն ու զրկից կանայք մի կտոր սապոն բերում, ննջեցյալի բոլոր շորերը լվանում են և հետո գնում, ննջեցյալի գերեզմանը օրհնել են տալիս: Այնուհետև յոթն օր շարունակ «օխթն օրենքի» հաց են տալիս, գյուղացիներից 10—15 հոգու, որոնց մեջ հաճախ լինում են քահանան և երեցփոխանը: Յոթը լրանալիս ազգականները հավաքվում և գնում ննջեցյալի գերեզմանը օրհնել են տալիս ապա կամ այդ օրը, կամ մի ուրիշ օր պատարագ անում, ու «օխթի», հոգու հաց տալիս:

Նախապես անհելով քահանայի հաճությունը պատարագն իրենց հին ու նոր ննջեցյալների հիշատակին մատուցանելու, նրանք ուղարկում են նրան գինի՝ բաժակի, ալյուր՝ նշխարի, մոմ՝ գիշերը վառելու, փայտ՝ նշխարն եփելու համար: Ապա մորթում են մի երկնջ կամ մի քանի ոչխար, կամ մի կով, որից քեյվանին պատրաստում է յայնի, մսով ապուր, էրիշտով և բըղրով փրավ: Իսկ եթե պաս է՝ էրիշտով ապուր, լոթիշուր, կորկտե շիլա, արյուկե սիրքալի և հատ լոբի:

Առավոտ շատ վաղ, լուսը դեռ չբացված սկսվում է ժամերգությունը, և ժամը վեցին վերջանում պատարագը: Պատարագին տիրացուն «պատարագ անողին» տանում ավետարանը համբուրել է տալիս: Եկեղեցու դուռը պատարագ անողը հրավիրում է ժամվորներին հոգու հացի. «Հրամանեցիք էրթանք մերը, հոգու հաց ունինք»: Սակայն հրավիրելիս կես բերան ասում է աղքատին, իսկ ստիպում, քաշքշում հարստին: Այսպես լցվում են պատարագ անողի տունը քահանան յուր երեցփոխի և տիրացուների հետ, գլավան, տանուտերը յուր զգիրի ու գրագրի հետ, գյուղի իշխանները և մի քանի ծերունի աղքատներ: Ավագության կարգով նստում են օդան. օճխի մեկ գլուխը քահանան, մյուսը՝ գլավան կամ տանուտերը և անհամբեր սպասում հացին: Այստեղ մի առանձին խոսակցություն չի լինում, ոմանք պատմում են ննջեցյալի բարի

գործերը և ցավակցութիւն հայտնում նրա վաղահայ մահվան, ուրիշներ իրենց առօրյա գործերն են առաջ բերում և կամ սրա նրա գոմեշն ու եզր գովում: Շատ շուտով դրվում են մի քանի խոնշաներ սատրների միջև, և հրավիրվածները բոլորովում են խոնշաների շուրջը: Մի քարզանի մեջ մի քիչ մատաղ ածած, բերում դնում են մեշտեղ, և քահանան օրհնում է թե հացը և թե մատաղը, որ մի կտոր վերցնելով ուտում են, մի քանի կտոր էլ ձգում են կաթսայի մեջ: Հետո արդեն մատուցանում են տան երիտասարդների ձեռքով կերակուրները և հրավիրված 30—70 հոգին բոլորովին լուռ, ախորժակով ճաշում է, միայն «իստեղ կերակուր բե» է լսվում: Պեսք է ասել, որ կերակուրները մատուցվում են մեծ քարզանների մեջ ածած, և 5—6 հոգի միևնույն քարզանից են ուտում, հաճախ յուր տանից գրպանը դրած բերած գդալով: Շատ գլուղերի եկեղեցիներում նվիրված գդալներ են պահում, որ տանում են հոգու հաց տվողները:

Երբ ուտում, պրծնում են, հավաքում են հացը, մնում է միայն քահանայի առջև դրված խոնշան՝ վրան մի լավաշ հաց: Տան տերը խնկամանի նման կավն թասի մեջ աթրի կրակ է ածում և դնում հացի մոտ: Քահանան մի նշխար է դնում հացի վրա և կանգնում «հոգոց» է ասում: Կանգնում են և բոլորը: Տանտերը առնում է խնկամանը և փշելով մոտեցնում հրավիրվածներին, որոնք ձեռքով ծուխը դեպի իրենց քաշելով՝ խաշակնքվում են: Անպիտան տիրացուները ծուլութան պատճառով չեն ուզում բուրվառք եկեղեցուց այդտեղ բերել: Աղոթքը վերջանալուց՝ հետո ննջեցյալի տերը տալիս է քահանային 20 կոպեկ ժամուց, 20 կոպեկ էլ երեցփոխին՝ հօգուտ եկեղեցու: Հետո բոլորը մի վայրկյանում՝ «Աստված ընդունելի էնե, Հոգին սուրբ կամար կապե հին ու նոր ննջեցյալներիդ վրան» ասում և հեռանում են: Տան երեխաներից մինը խնկամանը ձեռին կանգնում է դսան մոտ, և ամեն անցնող խնկի ծուխը իրեն քաշում, խաշ հանում և «Բարի հիշատակ ըլլիս, աստված օղորմի մեռելնուտ հոգուն» ասում և գնում:

Եթե ննջեցյալը բւան տարեկանից ցածր է, փետատի և յոթնեից հաց չեն տալիս:

Ննջեցյալի թաղման համար մոտավորապես հետևյալ ծախսն է լինում.

Պատանքի	1 ու, 60 կ.
Քահանային՝	— 20 կ.
ա. մինչև 19 տարեկանը	— 20 կ.
բ. 20 տար. բարձր { շամուսնացածին 2 ու. —	
{ ամուսնացածին 4 ու. —	

Գ. Ամուրիին { առանց կողոպուտի. — 8 ու. —
 { կողոպուտով 5 ու. —
 Փետատի, յոթնեից և հոգու հացի. 20—30 ու. —

Եթե ամուսինը կենդանի է՝ կողոպուտ առնում են միայն հանդերձը, իսկ եթե ոչ՝ հանդերձը և անկողինը:

Գերեզմանատունը սովորաբար գտնվում է գլուղի մի կողմը, բլրակի կամ մի դաշտակի վրա, մի քանի գլուղներում էլ եկեղեցու շուրջը: Գերեզմանի վրա ձգում են քառանկյունի կամ օրոցաձև տաշված քար կամ դարսում կտոր քարեր:

Միմիայն քահանաների և նշանավոր մարդկանց գերեզմաններն ունենում են արձանագրութիւն: Մի քանիսի վրա էլ փորված են լինում ննջեցյալի պարագման հատկանիշ մի գործի:

Քաղաքի գերեզմանատունը գտնվում է քաղաքից դուրս դեպի արեւիկը: Գերեզմանները միմյանց շատ մոտ են և անկանոն դասավորված: Մի շարքով, միմյանց մոտ թաղված են միայն մի գերդաստանի կամ ընտանիքի անդամները:

Գերեզմանաբարերը երեք տեսակ են. երեխաներինը՝ սովորաբար օրոցաձև է, հասակավորներինն՝ առավելապես դաշաղաձև, թեև օրոցաձևեր էլ կան, կարմիր սրբատաշ քարերից շինված և քարե պատվանդանների վրա ամրացրած:

Հողետրականներինը քառանկյունի քար 1, ոտների կողմը 1,5 արշին բարձրության, 0,5 արշին լայնության և 2 վերջով հաստության քար կանգնեցրած, որի վերի ծայրը բուրակաձև է: Սրանց դեպի արևմուտք նայող երեսի վրա եթե քահանայի է՝ բանդակված է միայն խաշ, իսկ եթե վարդապետի՝ խաշ, աջ կողմում գավաղան, ձախում Ավետարան, իսկ գլխին վեղար: Երկուսի տակն էլ ավետարանից հարմարվող խոսքեր են փորագրված:

Աղքատների գերեզմանաբարերը, եթե կան էլ, քառանկյունի տաշած կամ անտաշ քարեր են, հաճախ առանց տապանագրի:

Տապանագրեր

Տապան նաղելի Յուզաբերի՝ դստեր Կարապետ աղայի, ի հասակը 18 ամաց:

Մի՛ դիս լացցե երգիչ Գողթան
 Մի՛ սոխակին աչք սիրաշան
 Այլ ծնողացս իմ յարածամ
 Եվ ազգակցացս ամենայն:

Մի՛ր և Կարապն ողբաձայն,
Մի՛ր և տատրակն քաղցրաձայն
Այլ սիրողին իմ սիրեկան,
Եւ օրորոցս անխնամ,
Յորոց անգուժ սուրն մահուան
Ձիս որոշյալ արկ յայս տապան,
Հանկիր ոսկերք իմ տխրական
Յ՛ յարութին մարդկան համայն:
Ձէ նա վատաբաղդ, որ վաղ մեռանի,
Այլ որ յես մահուան սիրելույն՝ ապրի:

«Տիեզերաց յայն ծագաց զՏողեղէնդ յայդ ափանց ածէք առ իս».

Ամպրոպայինն որոտաց:
Յահեղ վճռէդ Տէր իմ Տէր
Դող մահացուս հարկաներ
Ընկալ զՏոգիս:
Յազդել ձայնիդ օ՛ն զարթիր:

Հովհաննէս քահանայ Իգիտիանեանց, իւր կենաց տարեկան շրջանների 63 բոլորելով երկարատև հիւանդութիւնից յետոյ մահկանացուն կնքեց 10 փետր. 1863 ամի:

ՀՈԳՈՒ ԵՎ ՀԱՆՂԵՐԶՅԱԼ ԿՅԱՆՔԻ ՄԱՍԻՆ

Ժողովրդի կարծիքով Տոգին «արևի շաֆիսի պես է, զընի օրա՝ լուսանա կը, զնաց թըշը՝ մթնն կը»: Թե այր և թե կին մարդկանց, թե ծերերու և թե երեխայի Տոգին միատեսակ և միաշափ է. և հենց այդ է պատճառը, որ երեխայի մարմինը փոքր լինելով՝ Տոգին նեղութիւն է տալիս, և երեխան հաճախ լաց է լինում:

Կենդանութիւն ժամանակ Տոգին գտնվում է կրծքի ձախ կողմը:

Մեռնելիս Տոգին դուրս է գալիս բերանից, եթե բարի մարդու է՝ աղավանկերպ, իսկ եթե շար՝ սև ածուխի նման:

Ոչ միայն հայ քրիստոնյաները ունին Տոգի, այլև բոլոր մարդիկ, մինչև իսկ անհավատները: Միայն կենդանիները և թռչունները չունին Տոգի, այլ շունչ, որ փչե թե չէ՝ ամեն ինչ վերջանում է: Այնինչ Տոգին շարունակում է յուր գոյութիւնը և մարդու մահից հետո՝ նա սավառնում է դիակի շուրջը մինչև մարմինը Տոգին հանձնելը, և երբ «Փառք

ի բարձունս» ասում են, թռչում է Սրուսաղիմ, երեք անգամ համբուրում ս. գերեզմանը և այստեղ 40 օր մնում, մինչև ննչեցյալի քառասունքը լրանալը: Հետո արդեն վերանում է երկինք, յոթն օր ճանապարհ՝ զնալով: Եթե արդար է՝ ընդունվում է Սերովբեից և Քերովբեից, զնում երկրպագում աստծուն և անցնում արդարների կայանը, որ երկնքում լուսեղեն մի տեղ է: Այստեղ արդար, աղավանկերպ Տոգիները փառաբանում են աստծուն և խնդրում, որ շուտով անե դատաստանը, որպեսզի ազատվին մեղավոր Տոգինների դրկցութիւնից, սրտնց վատ հոտն ու ամբարտավանութիւնը չի կարում իրենցից: Իսկ եթե Տոգին մեղավոր է՝ Սերովբեն և Քերովբեն վանում են նրան, և Պեղծեվոնը կամ շար հրեշտակները տանում են մեղավորների կայանը, որ արդարների կայանից ցածր, մութ և խավար է: Այստեղ սրանք աղաչում են, որ վերջին դատաստանն ուշ լինի, որպեսզի երկար մնան երկնքում, արդարների մոտ:

Այս կայաններից Տոգիները հիշանէ իրիկունները (շաբաթ երեկոները) գալիս են տնեցիներին այցելութիւն, ուստի և այդ երեկոները ճրագը մինչև լույս վառ են թողնում և խունկ ծխում:

Հիշտեկ իրիկունները մութ տեղում մարդիկ չուր չեն խմում, որպեսզի իրենց ազգականների Տոգիները ծարավ չմնան, նրանք խմում են բոլի մատի մատնարմատի մոտ երկու ջղերի մեջտեղում ձեացող փոսով:

Տոգիները հիշած կայաններում պիտի մնան մինչև վերջին դատաստանը, որ լինելու է երբ 3000 տարին բոլորի, երբ արեւը արևմուտքից ծագե, երբ լեկեոն ձկան³⁸ զլուխն ու պոչը իրար հասնին, և երբ գա նեոը: Նեոը եկած ժամանակ եղիան, ննուլքը, Ս. Մարիամ կուլօը և Հովհաննէս ավետարանիչը, որ այժմ կենդանի մարմնով մնում են երկնքում, պիտի իջնեն երկիր և նահատակվին, որ նորից վերջին դատաստանին հարութիւն առնեն:

Վերջին դատաստանի ժամանակ Գաբրիել հրեշտակապետը պիտի փչե փողը. մարմինները հարութիւն պիտի առնեն և հագնին Տոգինները. այն ժամանակ այժմյանի հակառակ, Տոգին զուրպը պիտի լինի, մարմինը ներսը, Տոգու աչքը կսկսի տեսնել: Բոլորը կերթան Օռնաու կալը:

Այս կալի մասին պատմում են, թե ժամանակով երկու եղբայր բաժանվել են: Սրանցից յուրաքանչյուրը մտածելով, թե մյուսն իրենից ավելի կարիք ունի, դիշերով յուր օրանից տարել լցրել է մյուսի օրնի

38 Տե՛ս «Ջամխիթի բուրմունք»:

վրա, և այս եղբայրասիրութիւնը Քրիստոսին այնքան դուր է եկել, որ նշանակել է այդ կալը վերջին դատաստանի տեղը Դատաստանի օրը Քրիստոսը կշիռը կկախե, մարդու աչ ուսի բարի հրեշտակը բարի բաներ գրից կհանն և կդնն կշիռի մի նժարը, իսկ ձախ ուսի շար հրեշտակը շար բաները կդնն մյուս նժարը: Եթե բարութիւնը կշռեց, մարդը կանցնի Քրիստոսի աչ կողմը, ուր կխմբվին արդարները, իսկ եթե շարութիւն կողմը կշռեց, կանցնի ձախ կողմը, ուր կհամարվին մեղավորները: Այսպես մեղավորներն ու արդարները գտավելուց ետ՝ արդարները կերթան արքայութիւն, իսկ մեղավորները՝ դժոխքը:

Ժողովրդի համոզմամբ դրախտը կամ արքայութիւնը երկնքումն է, լուսավոր, անուշահոտ, ծառերով, ծաղիկներով զարդարված: Սա բազմակցած է երեք հարկից՝ զաթի՝ Վերին հարկում պիտի բնակին մարտիրոսները, երկրորդում՝ ճգնավորները, իսկ երրորդում՝ ստորին հարկում՝ առհասարակ արդարները: Սրանք բոլորը միահասակ մարմնով պիտի լինին և պիտի բռնեն վայր թափված երկու դաս հրեշտակների տեղը և միշտ պիտի փառաբանեն աստծուն:

Դժոխքը գտնվում է գետնի «օխթը զաթը», ուր իշխում է Լեկեոնը: Այստեղ դրված են կարասներ սև նավթով (զիֆթ) լի, որ եռ են գալիս, և որոնց մեջ պիտի տանջվին, կուշ գան մեղավորները:

Ժողովուրդը հավատում է և «մազե կարմնջին»: Նա կարծում է, թե ընդհանուր հարութիւն ժամանակ, բոլոր ժողովուրդները պիտի անցնին մազե կամուրջով, որ ձգված է դժոխքի վրայով: Արդարները անվտանգ պիտի անցնին կամուրջով և գնան արքայութիւն, իսկ մեղավորները կամուրջից պիտի գլորվին վայր՝ դժոխքի մեջ:

ՀԱՎԱՏՔ

ԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ, ՍՐԵԵՐ ԵՎ ԿՐՈՆԱԿԱՆ ԳՐՎԱԾՆԵՐ

Ախալքալաքի հայ ժողովուրդը հավատում է, թե երկնքի յոթերորդ աղաթի վրա մե օսկե աթոռ՝ է դրած», որի վրա նստած է սպիտակահեր հայր Աստվածը, աչ կողմը Հիսուս Քրիստոսը, զլիսի վերև՝ Սուրբ Հոգին: Սրանց առջև կանգնած է մարմնով Ս. Կրիգոր Լուսավորիչը:

Ժողովուրդը հավատում է, որ տիեզերքը ամբողջապես կառավարվում է Երրորդութիւն անհասանելի կամբով և որ առանց նրա նախորոշման մի տերև անգամ վայր չի ընկնում:

Տալով Երրորդութիւնը գերազույն կատարելութիւն և իշխանութիւն տիպար, նա նրա էութիւն մասին բնավ չի մտածում. և երբ մինը խի-

դախում է հարցնել նրան այդ մասին, նա պատմելով հետևյալ դեպքը, համոզում է երբեք չմտածել Երրորդութիւն էութիւն մասին:

Ասում են, թե Հակովբ պատրիարքի ժամանակ տասներկու հայրապետներ հավաքվեցան և խորհուրդ արին, թե Երրորդութիւնն ի՞նչ է ու ի՞նչով եղավ: Երկար մտածեցին, վիճեցին, վերջապես լիարողացան մի եզրակացութիւն հասնել: Հակովբ պատրիարքը տեսնելով, որ դրանք ոչ մի հետևանքի չեկան, ցանկացաւ ինքը միայնակ քննել և իմանալ: Այս պատճառով կղզիացաւ մի ծովի ափ, խիտ եղեղնուտի մեջ և 12 օր նստած առանց ջրի ու հացի՝ մտածում էր: Հանկարծ սթափվեց և տեսավ, որ մի թռչուն ծովից կոցով ջուրն առնում, բերում եղի ոտից առաջացած փոսի մեջն է ածում. զարմացաւ և չգիտեր, թե ի՞նչ է անում՝ խմո՞ւմ է, թե՞ խաղում:

Այդ ժամանակ թռչունը աստծու հրամանով լեզու ելաւ ու ասաց նրան. «Ի՞նչ ես զարմանում, ես կարող եմ այս ծովի ջուրը հավքեցնել այս փոսի մեջ, բայց դու շեւ կարող Երրորդութիւն էութիւնը զլիսի մեջ հավքեցնել, լավ է այլևս շմտածես»:

Նա էլ վերջ տվեց ու Երրորդութիւն մասին այլևս չմտածեց, այլ մաքուր սրտով հավատաց ու պաշտեց:

Ընդհանրապես կանանց դասը սիրում է Ս. Աստվածածնին, որին և աղոթում է ծննդաբերութիւն, հիվանդութիւն և վշտի ժամանակ. ամենից ավելի սրան են խոստանում մատաղներ և սրա տոնին բազմաթիւ ուխտավորներ գնում են Վարձիա՝ Վերափոխման տաճարը, Ալեքսանդրապոլ՝ «Յոթվիրաց» պատկերը ուխտ անելու:

Սա Ենովբ և Եղիա մարգարեների հետ բնակում է մարմնով երկնքում, բոլորովին զատ մյուս սրբերից, որոնք մնում են արդարների կայանի վերին հարկում:

Ս. Աստվածածնա մասին պատմում են, թե քառասուն կույսերի հետ սարերում ծաղիկ քաղում և ճգնում էր: Երբ թեղիկ էին մանում, միայն սրա մանած սև թելի միջից զանազան դույնի թելեր էին դուրս գալիս, որից գուշակում էին, թե սա է լինելու Աստվածամայրը: Երբ ամառն անցկացաւ, կույսերն իջան սարից և զանազան դրավականներով պահարկեցան առաքինի մարդկանց: Հովսեփն էլ յուր ուրազը բերեց դրեց ու տարաւ Մարիամ Ս. Կույսին ձմեռը պահելու:

Մի անգամ, երբ Մարիամ Ս. Կույսը գնում էր աղբյուր ջուր բերելու՝ հրեշտակը երևեցաւ նրան և ավետիք տվեց, թե նրանից ծնվելու է աշխարհի Փրկիչը: Մարիամ Ս. Կույսը յուր հնազանդութիւնը ցույց

տալու համար՝ հենց վերագարծին բաթաթը վերցրեց դրեց փորին, որ հղի երևա:

Մյուս սրբերից ամենից ավելի ժողովրդականություն ունի Ս. Կարապետը, որի պատը մինչև 7 տարի պահողներ կան, և որի «գուռը», Գլակա վանքը, ամեն տարի ուխտ են գնում:

Քե որչափ մեծ նշանակություն է տալիս ժողովուրդը Ս. Կարապետի պատին, երևում է հետևյալ ավանդությունից:

Մարիամ ս. կույսը 7 տարի շարունակ պահում է Ս. Կարապետի ծոմն ու պատը: Հրեշտակը գալիս սրա հոգին առնում, գնում է Ծանապարհին սա տեսնում է յուր մորը, որի ծծերը երկու օձ ծծում են. անցնում է. պատահում է հորը, մինչև կոկորդը ավաղի մեջ թաղված: Ս. Կույսը հարցնում է հրեշտակին յուր ծնողների շարշարանքի պատճառը, և նա պատասխանում է, թե մայրը երկու երեխա է խնդդել, իսկ հայրը կնոջը շատ նեղություն է տվել: Ս. Կույսը խնդրում է հրեշտակին՝ աղատել գոնև մորը: Հրեշտակը սյանում է երկինք և Հայր Աստուծոց պատասխան բերում, թե Ս. Կարապետի պատը պահե՛՛ մայրը տանջանքից կաղատի: Ս. Կույսը համաձայնում է, նորից կենդանանում, գալիս աշխարհ և 3 տարի էլ պաս պահելով ազատում մորը տանջանքից:

Առաքյալներից Մատթեոսի մասին պատմում են, թե գնաց մարդակերների մեջ քարոզելով բռնեցին բանտարկեցին: Աստուծու հրամանով Փիլիպպոս առաքյալն էլ ուզարկվեցավ միևնույն երկիրը: Երբ սա ևս ծաղրեց նրանց կուրքը, թե այս խրավիլակն ի՞նչ է, ոսկիները շարել եք գլխին, երկրպագություն եք տալիս, սրան էլ բանտարկեցին: Սակայն դուրը վազելուց հետո սա գերբնական զորությունք դուրս ելավ և զոանը կանգնեց: Բուրբը զարմացան. տեսավ բավական աղքատներ շարվել են կուտան շուրքը, հարցրեց թե ի՞նչի են սպասում: Աղքատները պատասխանեցին, թե քաղցած են. թե սուրբ ես, կշտացրու, գնանք: Փիլիպպոս առաքյալը դավազանը տնկեց, թղենի դառավ. թուղ հասավ և այդ աղքատները կերան, կշտացան: Քագավորը երբ լսեց այդ հրաշքն, եկավ տեսնելու թղենին: Փիլիպպոսը հանդիմանեց սրան և ասաց թե՛ հրամայիր ջախջախել այդ կուրքը, ապա թե ոչ կհրամայեմ բերանից ջուր բղխել և խնդդել բուրբիդ: Քագավորը շնամտաց և Փիլիպպոս առաքյալը ցույց տվեց յուր հրաշքը. կուրքի բերանից ջուր բղխաց և ծածկեց ամբողջ քաղաքը մինչև մարդկանց կոկորդը, այս ժամանակ բուրբը աղաչեցին Փիլիպպոս առաքյալին՝ աղատել իրենց և մկրտել: Փիլիպպոսը ջուրը դադարեցրեց, կործանեց կուրքը և մկրտեց բուրբ բնակիչներին «հայ-քրիստոնյա»: Առաքյալներից միայն սա շնահատակվեց,

ուստի և շկարողացավ մտնել արքայություն, և կանգնած մնաց զոանը, մինչև որ 11 առաքյալները 32 պատարագ մատուցին և ընդունեցին նրան ներս:

Ս. Ստեփանոս Նախավկայի համար ևս պատմում են. Տյառնդառաչին, երբ բազմաթիվ կանայք երեխաները գրկերը շտապում էին դիմավորելու Աստվածամորը և աղջիկները իրավունք չունեին մասնակցելու, մի օրիորդ դնում է մի քար գոգնոցի մեջ և վազում դեպի Ս. Կույսը: Սրան մոտենալիս հանկարծ լացի ձայն է լսում և նայում, տեսնում է գրկում քարը երեխա դարձած:

Ժողովրդի շատ քիչ մասին է ծանոթ հին և նոր կտակարանի բովանդակությունը, այն էլ փոփոխված և ավանդության կերպարանք ստացած:

Կրոնական գրվածներից ամենից սիրելին, Ավետարանից հետո, Նարեկացու աղոթագիրքն է. հիվանդը խնդրում է գլխին Նարեկ կարգալ բժշկվելու համար. ծննդկանը բարձի տակ Նարեկ է դնում՝ շարերին հալածելու համար. գրագետ ծերունիները Նարեկ են կարդում՝ հոգիները փրկելու համար. իմաստություն սենչացողները 90 անգամ կարդում են նրա Ղ զուխը, իմաստություն ստանալու համար. երկնային կյանքով հափշտակվողները քառասուն անգամ կարդում են նրա «Բարեբանեալը», երկինք համբառնալու համար. բայց եթե շկարողանան անընդհատ 40 անգամ կարդալ՝ կխելագարվին:

ՀՐԵՏԱԿՆԵՐ ԵՎ ՈԳԻՆԵՐ, ԲԱՐԻ ԵՎ ՉԱՐ.

Զավախքի հալ ժողովուրդը հավատում է, թե աստված ստեղծել է ինը դաս հրեշտակ՝ մարդակերպ, թևավոր, աներևույթ, բարի էակներ, որոնց պաշտամունքն էր փառաբանել Երրորդությունը և կատարել նրա հրամանները: Սակայն այս ինը դասից երկուսն ամբարտաճանացել են և ցանկացել աստված դառնալ: Տերը անիծել է նրանց և սրանք երեք օր շարունակ կարկտի պես երկնքից վայր են թափվել: Յոթը դաս հրեշտակները խնդրել են ողորմիլ և «Տեր ողորմեա» են ասել, իսկ մարդիկ զարհուրած «Կեցո՛, Տէր» աղաղակել:

Այս երկու դասը վայր թափվելիս երեք դասի են բաժանվել, մին՝ Պեղծեոն, որ մնացել է երկնքի և երկրի միջև, մյուսը Սաթայել, որ իշել է երկրիս վրա և երրորդը՝ Լեկեոն, որ անցել է անդունդը: Աստված տնօրինել է, որ այս վայր թափված հրեշտակների տեղը լցնեն բարի մարդկանց հոգիները, ուստի և այս հալածված հրեշտակների երեք դասերն էլ բարի մարդկանց սաստիկ թշնամացրել են և ամեն կերպ աշխա-

տում են մուրեցնել նրանց: Մաթայելը «բաց աչքով»՝ ակնհայտնի է խաբում մարդկանց ու գրում գործած մեղքերը: Լեկեոնը շար երազներով ու տեսիլքներով է մուրեցնում, իսկ Պեղծեոնը ուղղակի կտրում է հոգիների ճանապարհը և եթէ «բարութեան ձեռագիր» չունին, բաշում տանում է դժոխք, սատանաների և մեղավորների կայանը, ուր ոսկի աթոռի վրա նստած թագավորում է Լեկեոնը:

Փողովորդն այս վայր թափված երեք դաս հրեշտակներին կոչում է սատանա և պատկերացնում է նրանց մարդակերպ, թևավոր, բուրբուկին սև, մազով ծածկված, երկար ազիով և կրունկները դեպի առաջ ուղղված, ոմանք էլ մի կամ երկու եղջյուրով:

Սրանք երկու սեռի են և որդեծնությունը աճում ու բազմանում են, միայն երբեք չեն մեռնում: Տղայաբերության ժամանակ հաճախ մարդ դայակ են խաբում տանում, որին և վարձատրում են սոխի կամ սխտորի կպեճով ու հալվալով: Սոխի կամ սխտորի կպեճները մյուս օրը ոսկի դրամներ են դառնում, Եթե միայն սաացողն անարգելով վայր չի թափել:

Նրկու սեռի սատանաները ևս մերկ են, միայն կանայք սիրում են հագնել կապել, ուստի և հաճախ ծածկաբար տանում հագնում են նոքահարսերի շխաշակներով կամ մեջը նշխարք չդրած հանդերձներն և նորից բերում տեղը դնում:

Սատանաներն առավելապես բնակվում են ջրաղացներում, ձիթեհանքերում, դոմերում, այրերում և անմարդաբնակ տներում:

Սրանք կերակրվում են գլխավորապես հալվալով, խավիժով և ծնրնդկանների փայծաղով:

Խավիժ Լեկեոն համար դնում են կրակին մի կաթսա և շուրջը պտրտվելով ասում. «Ձրին եղև ու ալուրը մեջը, շքին եղև ու ալուրը մեջը»: Կաթսան լցվում է ունեցող, բայց չունիմ ասողների յուղով ու ալյուրով, որը և եփում ուտում են: Բայց նրանք ավելի մարդկանց եփածին են վազում և ուր էլ որ խավիժ եփեն, սրանք գլխին կանգնած են: Եվ որպեսզի համեղ մասն իրենց մնա՝ նրանք տակն են պահում յուղը և թուլլ չեն տալիս «դուս տալու», այսինքն երեսը տարածվելու, սպասելով որ դժբալը վայր դնեն, իրենք վերցնեն ուտեն: Մարդիկ էլ այդ իմանալով՝ առանց դրգալը վայր դնելու՝ մի սուտ են խոսում, օր. դուրսը սաստիկ կոխվ կա, սատանաները խաբվում, վազում են դուրս, այս ժամանակ յուղը դուրս է տալիս և մարդիկ վերցնում ուտում են:

Սատանաները սաստիկ սիրում են պարել և շատ անգամ «ղավլադուռնա» ածողներին խաբում տանում են մի ընդարձակ այր կամ ջրաղաց և կամ մի այլ տեղ. աճել են տալիս և մինչև աքաղաղի առավոտյան

կանչը պարում: Սիրում են նաև ձի հեծնել և շատ անգամ հեծնում են ու գոմի մի ծայրից մյուսը քշում, մինչև որ ձին արյուն քրտինք մտած նվազում կանգնում է: Նրանք շփում են ձիերը և բաշը դեղեցիկ հյուսում:

Մարդկանց խաբելու և մուրեցնելու համար սատանաները շատ անգամ կերպարանափոխվում են և երևում են մարդու, մազի, սև շան և այլ կերպարանքով:

Մարդիկ էլ երբեմն հաշողացնում են սրանց բռնել՝ ձիու վրա կուպըր են քսում և սատանան հեծած միջոցին կալում մնում է վրան, կամ երևացած միջոցին հանկարծ վրա են վազում և բռնում: Եվ երբ մի ասեղ շուլուում են նրա կրծքին, նա այլևս չի կարողանում հեռանալ այդ տնից: Բռնողները երկար ծառայեցնում են նրանց, միայն ինչ որ հրամայում են, նրա հակառակն են կատարում, դրա համար էլ ծառայեցնողները ցանկացածի հակառակն են ասում:

Բռնված սատանան ծառայում է մինչև այն ժամանակ, երբ մի երեխայի կամ մի չգիտեցող անձի հանել է տալիս կրծքից ասեղը: Այս ժամանակ սա անիծում է այդ տան ամբողջ ազգատոհմը և անհետանում:

Սատանաների մասին շատ նախապաշարմունքներ կան, այսպես՝ հորանչևիս բերանը խաշակնքում են, որ սատանան փորը չմտնի: Անոխթին (գիշերը) ջուր չեն թափում, որովհետև այդ ժամանակ սատանաները դոսնում են, կարող է նրանց վրա թափվիլ: Գիշերը փայտով գետնին չեն խփում, որ միգուցե շարերի ձագերին դիպչի և նրանց մայրը անիծեն: Գիշերը գլխաբաց դուրս չեն գնում, որ շարերը շփվեն:

Մութ տեղը ջուր չեն խմում, որ սատանաները մեջը չմտնեն: Գիշերը հոսող ջրից չեն խմում, որ սատանաները շփվեն: Թոնրի շուրթը ջուր չեն թափում, որ սատանաների ոտներին լլցվի: Կորցրած իրը պտրելիս կարծում են, թե սատանան վրան նստել թաքցրել է, ուզում են խաբել, վեր կացնել, ուստի և ասում են.

Սատանա, սատանա,
Պոչիտ տակը բանմ՝ կա,
Կեսն ինձի՞,
Կեսը քեզի՞:

Սատանաների մասին բազմաթիվ պատմություններ կան, որոնցից մի քանիսն առաջ ենք բերում այնպես, ինչպես պատմել են.

Ս.

Մե գիշերմ՝ սատանաները գուգան դայեկիմ՝ ձեն կուտան, թը ֆի-

լան սղի կնիկը ցավե, քալե տղան առ: Ասիկ գելլե կերթա: Կերթան մե մաղարամ՝ մտնին կը: Մե կնիկմ՝ պառկած գրլլի, դայիկը տղան կաննե, կըսե՝ ջուր բերեք լողացնեմ: Ան սհաթին տաք ջուր բերեն կը, լըլե կը տաշտը, լողացնե կը, փաթթե դնե կը տղոցկնին կուշտը: Աս վախթը բիրտան պարկապզուկի ձնե գիմնա, կաշե օր Աթոն պարկապզուկը բերնին թրեք, շալե կը, սատաներն ա, հարս, թաքվոր հետները, պար բոներ խաղան կը: Աս օր տեսնի կը, գողը բոնե կը, կըսե. «Ալ բան չունիմ, թողեք էրթամ»: Բերեն յազմ սոխի կճեպ կու տան ճամփեն կը: Գայեկը տուն օր հասնի կը, ինքն իրեն կըսե կը թը՝ ֆողը գլխներուն, սոխի կպեճն ա բան է, օր տվին, կըսե ու թափե կը, կերթա գրչի քնի կը:

Ուստա Աթոն շալե ու շալե կը: Մեմ՝ ա կաշե օր սատանոց հագած հալվները իրեն դրկցներուն հալվներուն շատ լման է, ուսուլով մեմե կտոր կտոնե դնե կը ջերը: Խորոզխոսուն սատանեքը ասոր թապախմ՝ հալվա, էրկու օսկի կուտան ճամփեն կը. գուգա քնի կը: Գայիկը առավոտուն գելլե, հալվներն օր հազնի կը, գոտկին միջեն էրկու օսկի վար գըչնի կը. հասկընա կոր սոխի կպեճներեն է, վազե կը գուռ, կպեճները փնտոն կը՝ չի գանի, սատանեքը էկած տարած գրլլին: Քոռ փոշման կերթա օր հաց էնե, իրիկվա դրած ջուրը հանե կը, տեսնի կօր գունտ-գունտ արուն կա մեքը: Վայ, կըսե, իրիկունն օր սատանեքը ջուր բերին տղան լողացնելու, աս ջուրն է էղե:

Աթոն ա գարթնի կաշե օր՝ հալալն կողքը դրած է, հըմը օսկիքը չկան: Կոռած կտորտանքը կտոնե կերթա դրկցներուն տները, կըսե. Մեմ՝ ձեր հալվները բերեք: Բերեն կը, կաշե օր կշտներեն կտոռած է: Կտորները դնե կը քովերը, լավ բոնեն կը: Կըսե, իրիկունս սատանեքը ձեր հալվները տարեր հագեր հարսնիք էին գնացե, ինչի՞ հանելուս Հիսուս ու Քրիստոս չեք ըսե, օր սատանեքը շտանին:

Բ

Մե գիշերմ՝ ոանջպրին մեկը շու տեղմ՝ պառկի կը: Կես գիշերին դարթի կաշե օր՝ սատանեքը թոփ էղած մե մենձ դաղանմ՝ դրին ու «Չքին եղն ու ալուրը մեքը, շքին եղն ու ալուրը մեկը» ըսին ու հալվա էփեցին: էփեցին պրծան, նստան օր ուտեն, մեմ՝ ա մեկը ատ ոանջպրին տեսավ, ընկերներուն ըսաց թը՝ ինի ոանջպարը կաշե, մեղը է, քիշմ՝ հալվա ա անոր տանը: էրկու մենձ աման լըլեն, բերեն ոանջպրին առաջը դնեն կը: Ռանջպարը կուտե կու ամենները խաշակնքե՝ կըսե Քրիստոսու խաշը վրադ ըլի: Սատանեքը հալվան կուտեն պրծնին, գելլեն գավուլ-գուռնով պար խաղան կը: Խորոզխոսուն ամենները ժողվին կ'օր էրթան, էրկուսը

218

գուգան օր ոանջպրին տարած ամենները տանին: Գուգան տեսնին կ'օր ամեններու շորս բուրը փուշը պատեր է, լեն մոտենա, թողնեն քաշվին կը: Հիմի ատ ամենները դնեն կը տղոցկնի բարձի տակ, օր շարը շրկալի:

Գ

Մե օրմ՝ մե մարդմ՝ ինչը գըլլի, գիշերը շուր մնա կը, կերթա մե մաղարիմ՝ բերան պառկի, շպուխը լըլե քաշե կը: Չպուխը լըլե՝ դարդե կը, մեմ ա մե ձենմ՝ գուգա, անկան կէնե, տեսնի կ'օր սատանի քանիմ՝ տղա գուգան ու կըսեն կը թը՝ անոթի ենք: Ատոնց մարն ա քովերը նստեր՝ գուգե օր քնցընե:

— Քիշմ ա կեցիք,— կըսե մարը,— քեհու կնիկը տղոցկան է, ցավն օր բոնե, կերթամ շիգյարը բերեմ, քյապապ կէնեմ, կուտեք:

Տղաքը քիշմ՝ վախտ ձեները կտրեն կը, ետե կենա գոռոցը դնեն կը:

— Միք լա, միք լա,— կըսե կը մարը,— էլեք դուք կրակ էրեք, քեհու կնկան ցավը բոներ է, էրթամ շիգյարը բերեմ, քյապապ էնենք:

— Ջիգյարն օր բերես, խեղճը չի՞ մեռնի,— կըսեն տղաքը:

— Ի՞նչ,— կըսե կը մարը, ետե քյապապի մոխիրը տանիմ քթին դեմ կուտամ, սաղնա կը:

Մարը գելլե կերթա, տղաքն ա բերեն կրակ կէնեն: Քիշմ՝ կանցնի, մարը գուգա կը, մե շիգյարմ՝ ա ձեռը, բերե քյապապ կէնե, տղոցը կուտեցնե, կեցնե կը: Ինքն ա քովերը էրկննա կը: Տղաքն օր տեսնին կը մարը կնքվարտե կը, կըսեն. «Ան կնիկը հիմի մեռավ, մոխիրը շպիտի՞ տանիս օր լավնա»:

— Գլոխքար մեռավ,— կըսե մարը,— մեմ՝ ա վեղ պիտի տեղեն վեր էլլե:

Աս մարթն օր աս բիտտուն բաները իմանա կը, սիրտը կտրտի կը, ալ սատանի-մատանի կաշե, բիրտան ներս մտնի կ'ու, մե բուռմ՝ մոխիր բոն փախի կը: Գուգա քեհենց տուն, կաշե օր խեղճ տղոցկնին պատնեքը, գլխուն վերևը նստեր շիվան կէնեն կը: «Կեցի՞ք»,— կըսե ու բոով մոխիրը քթին դեմ կուտա: Մեռելն օ սահաթ էլլե նստի կը:

Ալ ի՞նչ ուրախութեն:

Գ

Մե օրմ՝ իշի լուսենց Մոսիկը մնա կը, քոշիմ բերան նստի հանգլի կը: Մեմ ա կաշե օր էրկու սատանա կայներ իրար հետ խոսին կը: Ասոր շունը կտոփ կը, անկճները կախե, անկան կէնե, օր մեկը մեկային կըսե թը՝ Վարթե Գլուանկենց հարսը տղոցկան է, գընը շիգյարը բե, ուտենք:

219

— Թրո՛ւ, դու շրսացտան էրկու անգամ գնացի, հըմը ինչ էնեմ, օր առչի անգամը խորոզը խոսաց, մեկալին ա անտեր կատուն տղոցկնին վրա պառկեր էր:

«Ատպես է օրա՝ գընը մազ էդի, բնկի խավիծին մեչ՝ կուլ գընը, կտոն փեւ:

— Ատլ լավ ըսիր,— կրսե մեկալն ու դայպ կանցնի:

Աս Մոսիկը սրտոս մարդ գըլլի.— Վա՛յ,— կըսե,— դուք խեղճ հարսին սպանելու միտք ունիք, կեցեք տեսեք ձեզի ինչ օրի կըցկեմ,— կըսե ինքն իրեն ու գելլե դուզ կերթա Վարդե Գյուլանկենց տունը: Կաշե օր հարսը տղոցկան պառկեր է, կեսուրն ա խավիծ է էրե, օր տղոցկնին ուտացնե: Մոտենա կը կեսուրին, կըսե. «Քաջան, քիչմ՝ դու էնթին կեցի, խավիծը ես էփեմ»:

Կեսուրը թը՝ ինչի՞, իմ էփածիս չե՞ս հավնի:

— Հավնիմ, շհավնիմ, աս խավիծը ես պիտի էփեմ,— կըսե կուքալե թավան կառնե կեսուրի ձեռքեն, լավմ՝ կէփե, գտալով կ՛առնե, լավմ՝ կաշե՝ կուտա տղոցկընին: Քանիմ՝ գդալ կուտա, մե՛մ ա դոճա մազմ՝ կը գանի, կառնե ու քյոզ կրակին մեչը կը ցկե: Յկելը կիմանա, մեմ՝ ա անպես ճվճվոցն գըյնի, օր աս խեղճ մարդը էրկու անկճով խնա կը:

Ե

Մե կուզ շաղչպանմ՝, օրվանմ՝ մեկը մեննակ մնա կը շաղացկըր Քնելու օր գըլլի, կաշե օր սատանեքը դավուլ-զուռնեն առաջ խառներ գուզան կը: Գուզան ու ասոր շաղչին օրթան պար բռնեն թռչին կը: Քիչմ կանցնի, ատոնցեն մեկը գուզա աս շախչըպանին ձեռքեն քաշե պարը տանի կը: Ադ խեղճը շարասըզ մտնի կը պարն ու տորտոզա կը: Սատանեքը կաշեն օր ասիկ կուզ ունի, խնդան կը վրան ու ձենեքը ցկեն կանչեն կը:

Կուզը կըզին,
Կուզմ՝ ա կըզին,
Կուզե-կուզ:

Ասիկա միամտութենով անոնց հետ կանչի կը:

Կուզը կըզին,
Կուզմ՝ ա կըզին,
Կուզե-կուզ:

Խորոզխոսուն պարեն օր գելլեն, կըսեն. «Աս լավ մարդ է, իրեն արատը վրան շառավ, էկեք ասոր կուզը վերցնենք»: Կըսեն ու կուզը վերցնեն, գելլեն կերթան կը:

Առավոտյուն ասիկ մութեմութ գէլլե վազգե կը դրկից շախչպանին քովը, նախ կէնե, թը իրիկունը սատանեքը էկան կուզը վերուցին:

«Ատ լավ քախտի ես տիրացե,— կըսե մեկալ շախչըպանը, օր ինքն ա քիչըմ կուզյան է էդի,— հըմը ափսոս օր կուզտ քոքեն շեն հանե, աստվածա սիրես, թող իրիկունս ա ես պառկիմ շաղացքա, բյալքիմ՝ իմ կուզս ա վերցնեն:

— Լավ, կըսե, պառկի:

Իրիկվընն աս շախչըպանը գուզա ասոր շաղացքը բյաբլայե կը: Բյաբլայե, բյաբլայե, հոգին գելլե: Գեջտան գեջ սատանեքը գուզան. շաղչին օրթան պարը դուռմիշ կէնեն: Քիչմ՝ ետև ասոր ա կառնեն պարը թռչին ու կանչեն կը:

Կուզը կըզին,
Կուզմ՝ ա կըզին,
Կուզե-կուզ:

Աս շախչըպանս ա միտքը թրեր է օր կուզը քոքեն հետ վերցնել տա, ճվա կը:

Կուզը կըզին,
Կուզմ՝ ա կըզին,
Կուզմ՝ ա ավելի
Կուզե-կուզ:

Սատանաների փոթկունը պրծնի կը, «կուզմ՝ ա ավելի գուզե» կսեն ու բերեն առաջի վերցուցած կուզը ասոր մեջքին գնեն կը: Ասիկ գըլլի էրկուզաթ: Մափ դարնեն, խնդան կը վրեն ու թողնեն կերթան:

Առավոտուն ասիկ քիթը կախ գելլե կէրթա առաջի շախչպանին զանգատ կէնե գլխուն էկածը:

— Ի՛նչ էնեմ, կըսե առչի շախչպանը, ինծի ասպես ըրին քեզի ա ատպես:

Զ

Կուռնաշետ Մոսիկենք տեսնին կ'օր գիշերները իրենց ձիուն յալը դայիմ հուսեն կը. դիմանան օր սատանեքը գուզան հեծնին, գոմին մեչը քշեն կը: Բերեն սև ձութ քաշեն կը ձիուն վրան: Սատանան գուզա հեծնի՝ կպնի կը ձիուն: Սապախտան գուզան օր ձին արուն քրտինք է մտեր:

սատանամ՝ ա վրան նստեր է: Մահաթմ՝ բերեն շուշուկն կը միսը, տաք շուրը լըլեն կը ձիուն վրան, սատանան վրայեն պրծըցընեն կը: Օխթը տարի իշու պես դատեցնեն կը: Օխթը տարին օր թըմըմի կը, սատանան մե պղտի աղջկանմ՝ աղաչե կը. թը՝ մեմ՝ իսի մախաթը գլոքսես հանե, ան ալ շգիտութենեն հանե կը: Օսահաթ սատանան գուգա կայնի կը օդին գլոխն ու կանիծե, թը ձեր տունը դեքը պակաս շըլի, ու դայպ կանցնի: Տեյմ օր հիմի անոնց տենե դեքը անպակաս է, ինչքան իստըկեն, շի իստըկի:

է

Պապիս հարը ինչըղ գլի, մե օրմ՝ սատանամ՝ բունե կը, ասեղը դոշը շուշուկ բերե կը տուն: Բերե կը տուն, օխթը տարի բանեցընե կը, հըմը ինչ օր կըսեն, անիկ թյարսը կէնե, կըսեն՝ գընը թեզմ՝ շուր բե, կերթա յազմ ուշանա, դարտակ գուգա կը, կըսեն՝ մի էրթա հաց բերե, կերթա թեզմ՝ բերե կը: Օխթը տարին օր թըմըմի կը, ա սատանան պղտի աղջկանմ՝ կըսե կը թը՝ ինչ գըլի, իսի ասեղը հանես: Աս ա շգիտութե- նե հանե կը: Օսահաթ կըսե կը թը՝ ձեր ամենեկուն մե կուշտը խոռ (պա- կաս) ըլի, ես ա ձեր թորամին (սերունդ) թաթուլա ըլիմ, կըսե ու կ'ու պաթմիշ գըլի. տեյմ օր հիմի ա մեր ամենեկուն մե պտունկը կոտոի կը:

— Հաղը մեր տունը հեշ կճուճ սաղ շի մնա: Իմ պապս ա մե սա- տանամ՝ է բունե, կենա օխտը տարի դատեցըրեր է, եփ օր աղատվեր է՝ անիծեր է թը՝ ձեր տունը սաղ կճուճ շմնա: Ու տեյմ օր հիմի մե պու- տուկմ սաղ շի մնացե:

ը

Մե օրմ՝ շախըրպանը շաղացը մեննակ կը մնա, մեմ ա տեսնի կ'օր մե սատանամ՝ էկավ, դյուճ դյուճ առաջը կայնավ: Զախըրպանը վա- խեցավ ետ փախավ, սատանան ա ետ փախավ ու տնազն էկավ: Ետև հարցուց թը՝ անունդ ի՞նչ է:

— Ես ընծի,— ըսաց շախըրպանը,— քու անունդ ի՞նչ է:

— Ես ընծի,— ըսաց սատանան:

Զախըրպանը տեսավ օր սատանան իրեն տնազը կէնե, վերուց ձեթն ու վրան գլոխը ձեթոտեց: Սատանան ա վերուց՝ ձեթն ու խելադամա շոշեց իրեն գլխուն: Փարա շեր տվեր, օր սիրտը ջավեր: Ետև շախըրպա- նը վերուց կրակն ու մոտեցուց օտվներուն: Սատանան ա օսահաթ խլեց կրակն ու օտվներուն շմոտեցուց, կրակն առավ ու բոցը տվեց ջանը:

Սատանան հիմի վեր-վեր կը թռչի ու ի՞նչ կը ճվա, ձենը աշխարք բունեք է: Ատոր ձենեն սատանեքը թափան ու հարցնեն կը թը՝ վե՛վ էրավ:— Ես ընծի, ես ընծի,— կըսե սատանան ու պատեպատ կը գարնվի:

— Դու քեզի օրա, տե գընը քաշե,— կըսեն սատանեքը ու թողնե քաշվեն կը:

թ

Զաղացն օր հնարեն կը, շախըրպա շեն գինա կախե, բոռվ-բոռվ ցո- բեն պիտի լըլեն հըլուլիկե, օր աղա: Մե օրմ՝ ինչը գըլի, շախըրպանը կըսե կը թը՝ տղեք, էսօր շաղացը անպես լավ ալուր աղաց օր: Աս վախթն ա սատանան դուռը գըլի, ոտքը տնկե կըսե. «Մըկըր շախըրպա կախեցիք»: Օսահաթ սատանի ոտքը լման շախըրպամ՝ շինեն կախեն կը, շաղացը ֆոբլ, ֆոբլ դառնա կը:

ժ

Ինչը գլի փուխարայիմ մեկը սատանայիմ՝ յաջը մտնի կը: Ասիկ վերցնե աս ախըրտին օսկիմ կուտա կը, ու կըսե կը թը՝ առ տար մանտը- տե, քեզի հմար խարչե, հըմը մե փարամ՝ քեսիտ տակը թող, ան ալի կը լցվի: Ախըրտը կառնե կը օսկին, տանի սառաֆին բողմիշ կէնե, մե փա- րեմ ցկե կը քեսին տակը, մնացածը խարճե կը: Քիւճ կանցնի, կաշե օր քիսան օսկով լիքն է: Ալ ատոր քեֆին քեֆ շի հասնի, դոնախանեք կը շինե, կուտե, իմե, քեֆին կաշե: Սատանան գուգա ատոր կըսե կը թը՝ ատ քու փարաներետ գրկցներուտ ա տու, թող անոնք ա քեզի պես հարստանան, ուտեն-խմեն, քեֆ էնեն, սալթ քուր ու ախպար ջոկեն: Ատոր ա ջանին միննաթ, իրենեն ինչ կերթա, կանչե կը գրկցներուն, լավամարթի գլի, ամենքին մե մե օսկի կուտա ու սորվեցնե կը, թը՝ մե մե փարա քիսանե- րուտ մեջ թողեք, օր կենա լցվի: Անոնք ա կուրախանան, ասոր հետ ախ- պար գլին, կուտեն-խմեն, քեֆերուն կաշեն, ալ պասն ինչ է, ժամն ինչ է:

Ըշտը իսի ֆարմասոններն ա օր կան, ինչ է, ասոնց ջնսեն էն, վար անցնին բիլաքիմ, աշխարհք մոնալըռեցին:

ՅԱ՝

Ֆուխարայութենը քիւճ՝ սիմեր էր, տունը քանիմ՝ ջվալ կորկոտ ունի, բարձա ձիուն, տարա Ախալցխա, օր ծախեմ: Տարա Ախալցխա, ձին քաշեցի խանը, կորկոտը տարա մեյտանը, կամաց-կամաց ծախե-

* Պատմողը սաթխացի Մաղկար Մկո ձերուին էր:

ցի, կոտմ՝ էրկուս մնաց: Աս էրկու կոտի հմար տնյ իրիկուն բյաքլայն-
ցի, մյուշտարի չէկավ, օր ծախելի, սապախտան մուժումութ էլլիի գալի:
Աշեցի օր մյուշտարի չի գա, նստա կորկոտին վրան ու ձեռքս դրի
չլանկիս, քիշմ՝ կնքվարտեցի: Գաղթած հարթած մարդ, թեղմ՝ բունս
տանի՝ քնիմ: Մեմ՝ ա մե սև մարդմ՝ ձեն տվեց ինծի, ըսաց. «Ի՞նչ ես
իտեղ քնե»: Զարթնա աշեցի օր էփեի գիշեր է անցե, աստղերն էլեր
են, մարդ-մուրդ քաշվեր է իրեն տունը:

— Իտիկ ի՞նչ է,— հարցուց առաջս կայնած մարդը:

— Հեշ,— ըսի,— կորկոտ էի բերե ծախելու, քիշմ՝ մնացեր է, չծախ-
վավ, օր էլլիի էրթայի:

— Է՞, ի՞նչ գուգես, շեղավ, շեղավ, ատ ա ես առնեմ խըրքիս,— ըսեց:

— Ինչ կուտաս տու, ըսի,— աստծուն հայտնի է, օր կոտը մանե-
թիմ՝ էմ ծախե:

— Լավ,— ըսաց մարթը.— շալկե էրթանը, տունը մոտիկ է, դար-
տըկե, փարեքն առ գրեր:

Էլա կորկոտը շալկեցի, ընկա ատոր էտըթին գնացի: գնացինք էլանք
ուպատը, զայըստըննորուն մեջ մե մաղարամ՝ մտանք, աշեմ՝ իրեք հատ
արծըթն մուշալլաներ վառին կ՛ու արևի պես լուս կուտան: Մաղարին
մեջ մարդ չկար: «Իտեղ քիշմ՝ նստե,— ըսաց մարդը.— այմի աղան
գուգա փարեքս կուտա»: Կորկոտը դրի վար, քարիմ՝ վրա նստա: Քիշմ
անցավ՝ մեմ ա դառուլ-զուռնի ձեն էկավ. «Էս լավ է,— ըսի,— ըլլի օր
հարսնիք ըլլի, զաթի անոթի եմ, լավմ՝ կշտանամ կը»: Մեմ՝ ա հարս,
աղչիկ, տղա խաղլեն խաղլեն եկան, «բարով, կորկոտ ախպեր» ըսին ու
մե մե բուս առան բերնները ցկին: Նոր օր, ըսի, խերը գտա, մե մե բուս
առնելեն բիտուուն պտի նաղդեն: Ղորթ ա օր, ասոնք կորկոտս իտակ
իտակեցին, էլան ձեռք ձեռքի բոնեցին ու թոան: Ետև նստան օր հաց
ուտեն, ինծի հետ էկող մարդը մե մենծ լանգլառիմ՝ փլավ լցեց բերեց
ինծի, օր ուտեմ: Անոթի փորս վեց-վեց կէնե, վյա ընկա, օր ուտեմ:
Չանչս կշարնեմ տանիմ կը բերանս, կաշեմ՝ բան չկա, փորս բան չի էր-
թա, ըլլի օր, ըսի, բունս գոխս է, չեմ կրնը ուտե, աշքերս սրբեցի, գյառ-
գյուլամիշ էղա, աշեցի օր փլաֆը պի անպես դիտած առաջս է: Ավուճմ՝
զարկի տարա բերանս, ծամեմ կը, կենա բերանս բան չկա: Աշեմ՝ անոնք
հավար-հավար կուտեն: Այ ամոթուս ձեն չհանեցի: Մի քիշմ՝ անցավ,
ան մարթը լյանգառովմ՝ թրիթ բերեց: Ըսի՝ աս լավ է, մտերը կտոր կտոր
կառնեմ, կոծեմ կը, բյալթի բերանս բանմ՝ մտնի: Առա մսի կտորը, տա-
րա բերանս, ծամեմ կը, ակոքս իրար կը դիպչի, ցորեն հատիմ՝ շափ
բան ա փորս չի էրթա: Չարասըզ բերանս սրբեցի, անոթի ծառավ ես

բաշվա, անոնք կերան խմեցին, էլան քիշմ ա թոան ու քաշվան գնացին:
Մարդը կենա էկավ, ըսաց. «Գիշերս ֆոս հանգստի, սապախտան ել,
փարաներտ առ գրեր»: «Լավ,— ըսի»: Բերեց մե բմբլե միտարմ՝ ցկեց,
օր մեջքես հետ, յորդանն ա իտակ, փափո՛ւկ: «Ի՞նչ,— ըսի,— ասպես
դողնքի մեջ հեշ չեմ պառկե»: Թեղմ՝ շորերս հանեցի, չիփ չպլխցա, ընկա
դողնքը: Գողինք ընկնելիս իմացա, կողքս էկավ քարին, տեյմ՝ օր հիմի
ա ցավի կը: էլա աշքերս սրբեցի, հալվըներս հագա, քարին վրան կուշ
էկա ու տեյմ օր լուս նյա քուն, նյա արթուն մնացի:

Սապախտան աշեմ ան մարդը կեն էկավ: «Քալե, ախպար,— ըսաց,—
քալե փարաներտ առ գրեր»: էլա հաղրվորա, օր էրթամ, ըսեց. «Ասպես
գրեր. դասապխանի առաջը մի սև շունմ՝ կա, քեզի օր տեսնի քուշուկլյա-
միշ գլլի, գըլնի առաջտ կէրթա, անոր էտըթիեն գնա, ան քեզի աղային
քովը տանի կը, աղան քու փարեքտ կուտա»:

Գլուխտ ուտե փարաներտ,— ըսի մտքիս մեջը,— ձեզնեն վեվ է
խեր տեսե, օր ես տեսնիմ, լավ է օր հոգին առնեմ աստեց ճանկեն փախ-
չիմ աղատիմ: «Լավ, ըսի ատոր, կերթամ»: էլա դուր, ճամփաս դասապ-
խանի կողմն էր, ըսի՝ առամ հիմի, անցնիք դասապխանի առջին աշենք
ի՞նչ գլլի: էկա դասապխանի քովը, աշեմ՝ մե սև զաղարմ՝ վազդեց ոտ-
վիցս փաթթելավ: Թուով վրես, քուշուկլյամիշ էլավ, ետև ա առաջս
ընկավ ու գնաց: Միտքս փոխվավ, ըսի՝ տեսնիք վերջը ի՞նչ պիտի ըլլի,
ընկա ատոր ետևն ու գնացի: Գնացի, գնացի, մեմ ա տեսնիմ մաղարե-
յեմ՝ մե մաղոտ մարդմ՝ կրունկները առաջը, դուս էլավ, ըսաց. «Ինչքան
պտի հասնի քեզի»: Ըսի. «Երկու մանեթ»: Հանեց էրկու մանեթս տվեց:
Փարաներտ առա, դարձա հարցուցի թը՝ աս շունը ի՞նչ շուն է:

— Աս շունը, ըսաց, հարամ ու շառ բերող է, կայնի կը դասապխանի
առաջը, իյակար դասապը խափեց, ավել փարա առավ, ատ փարան
վերջընե փերե կը ինծի, թյակար միս առնողը խափեց, ավել միս առավ,
ան հավել առածը կառնե գուգա կը:

ԺԲ

Դամուրչուն մեկը սահաթ գլոխ «նալլաթ քեզի սատանա, նալլաթ
քեզի սատանա» կըսե կը: Սատանի հերսը գելլե, մարդու ղպալով գուգա
ասոր դուրբանը, կըսե.

— Ամի ջան, ինծի աշկերտ չե՞ս վերցնե:

— Ինչի՞ չէ, դուրբան, արի,— կըսե ուստան:

Ասիկ ատոր քովը աշկերտ կմտնի, նստի կը մե քոշամ, կառնե շաք-
յուճը ձեռքը, թրխկ-թրխկ բան շինե կը: Օրմ՝ էրկուս կանցնի, ապիկ իրեն

ընկերին խրատ կուտա կ'որ դա, էրկուսով մե դյաքմ՝ խաղան աս ուստին գլխուն: Աս սատանան փիր էխտիարի դպալով գուգա մտնի կը ասոր խանութը, կըսե:

— Աստե՞ղ շահիցնեն կը մարդու:

— Ի՞նչ,— կըսե ուստան,— մարդն ա շահիցնեն. նոսրըցուցե՞ր ես, ինչ է:

— Ինչի՞, ինչի՞,— կըսե աշկերտը,— ես ֆոս չե՞մ. ես շահիցնեմ կը: Ուստի խելքը հեշ տեղ չի էնե, հըմը շատ օր կը դոսեն, կըսե. «Ինչ կէնես, էրէ»: Ասիկ դովիքն ախել կուտա, կրակը թեղցնե կը, բերե էխտիարին ձեռքը-նոսրը կապե դնե կը օձախը. քթոցմ՝ գործիլի ա լըլի կը գլխուն, կըսե ուստին. «Անցի փքսին էտեը փշե»: Ուստան փուքսը փշն կը ու էրկնցած կաշե թը խելուտուկը Ի՞նչ կէնե: Կաշե օր էխտիարը վառով մոխիր կոռավ, մեմ՝ ա քյոզին միշեն մե շահիլ տղամ՝ թռավ կայնավ օձխին գրխը: Ուստան դարզնդի կը: Սաղ աշխարհ ձենձընվի կը թը ֆիլան դամյուրչուն խանութը փիր էխտիարներուն շահիցընեն կը: Աս օր ձենձենվի կը, մե թուզարմ (մեծ վաճառական) բառնա կը ձիանը օսկիարծաթ, դուզա ատոր խանթին առաչը գրչնի, կըսե. «Ուստա իմացեր եմ օր դուն էխտիարներուն գյանջըցընես կը, տիա աշխարբի օսկին էմ փերե քեզի, օր ինծի ա գյանջընես»:

— Լավ,— կըսե ուստան,— մարդիկտ թող էրթան, էգուց զան քեզի առնեն էրթան:

Աս թուզարը օսկու բեռները վար թափել կուտա, մարդոցը ճամփե կ'ու նես գուգա: Նես գուգա, աշկերտը կըսե ուստին, թը՝ սաղ աշխարհքը խոսի կը թը՝ մարիֆյաթը աշկերտինն է, ասոր ա դուն գյանջըցու, թող տեսնին, օր քու ձեռքետ ա բանմ՝ գուգա:

— Լավ, հըմը,— կըսե ուստան,— ձեռքես զորթ չի գա:

— Ի՞նչ է օր, ոտքը-ձեռքը կապե դիր օձախը, քթոցմ՝ գործելի ա լից գլխուն, ես ա փուքսը կը փշեմ, քիշմ՝ պիտի ճվա, բոսա, գյանջընա էրթա:

Ատոր խելքը պառկի կը, բերե թուզարին ոտքն ու ձեռքը ամուր կապե ցկե կը օձախը, քթոցմ գործելի ա լըլի կը գլխուն, ինքն ա կայնի կը գլխուն վերի թին: Աշկերտը կանցնի փքսին հտըթին ու Ի՞նչ կը փշե. բոցը էրկինք գելնե: Խեխձ էխտիարը ճվա, բոսա, շատ շապալամիշ գըլի, խյուլասա վառի մոխիր կը կտոնի:

Ուստան կաշե օր էխտիարը մոխիր կոռավ, շվարի մնա կը:

— Մո՞, աս Ի՞նչ էղավ,— կըսե ու ծնկներուն կը զարնե:

Աշկերտը խրնուրչեն գուգա առաջ, կըսե. «էղավ, էղավ, դուն ինչ էնես, շատ էխտիար էր, կրակին չգիմացավ»:

Ուստան օր շատ տրորվի կը, աշկերտն անոր ումուտ կտա թը՝ դարդ մի էնե, ես քեզի պրծըցնեմ կը, մեմ՝ ա բիրտան զայս կանցնի: Ուստան մուլըրի մնա կը: Մութեմութանց մարդիկը գուգան կըսեն. «Ո՞ր է մեր ազան, գյանջըցուցի՞ր»:

Ուստան կարկըմելեն կըսե կը, թը՝ ձեր աղան փիր էխտիար էր, կրակին չգիմացավ, վառավ:

— Վա՞յ,— կըսեն,— մեր աղային գյանջըցնելու տեղ սըպանեցի՞ր:

Ատոր բռնեն տանին կը թաքավորին, գանգատ: Թագավորը սլեստի կ'էնե գիմնա, հրամայե կ'օր ատոր տանին կախեն:

Տանին կ'օր կախեն, շվանը ցկեն կը բուկը, էն է օր պիտի խեղցեն, սատանա աշկերտը քառսուն ջուխտ շարուխ ումուղին ցկած բիրտան տնկվի կը առաչը: Ուստան օր ատոր տեսնի կը.— Պրծցնեի՞ր պիտի, աստժո՞ւ խաթեր, օզնե,— կըսե:

— Իստեղ աշե, իստեղ,— կըսե սատանան,— քառսուն ջուխտ շարուխ եմ մաշե, օր քեզի իստեղ եմ հանե, ալ Ի՞նչ պրծըցընել:

* * *

Ամեն մի երեխա ունի մի պահապան հրեշտակ, որ թեքը պարզած կանգնում է մանկան սնարին և ձեռի կարմիր խնձորով զբաղեցնում նրան: Սա պահպանում է նրան շարից, կտրում է նրա եղունգները, երբ երկարում են: Իսկ երբ երեխան փոքր-ինչ մեծանում է, այնպես որ կարողանում է մորը լավ ճանաչել, պահապան հրեշտակը խաղում է նրա հետ, մնա բարով ասում և սավառնում երկինք:

Յուրաքանչյուր մարդու երկու ուտերի վրա ևս կանգնած են մի-մի հրեշտակ: Նրանցից մինը, որ կանգնած է աջ ուտին, բարի է և գրում է ձեռի մատյանում այդ մարդու գործած բարի գործերը, իսկ ձախ ուտին կանգնածը շար է և գրում է նրա շար գործերը: Վերջին դատաստանին այս երկու մատյանները միմյանց հետ համեմատելու են, և որը որ գերակշռեց, այն կողմին պատկանելու է մարդը:

Ժողովուրդը հավատում է և տաև պահապան հրեշտակի, որ բնակվում է յուրաքանչյուրի ամբարի վրա:

Կան և տա՛հ հացի բարի հրեշտակներ, որոնք հաց թխած միջոցին սավառնում են թոնրի շուրջը, և եթե մեկը նեղացնի հացթուխին, սրանք խփում են նրան:

Կա և քթխմորի ոզի, որ թթխմորը վերցրած և խաշակնքած միջոցին յոթ անգամ Նրուսաղեմ է գնում, լույս գերեզմանը համբուրում և վերադառնում դուրը և ընդունում նրան: Սրա մասին մի կին պատմում էր-

«Քաժա հարս եմ, կերսանցս տունը խմոր կը շաղվեմ. շաղվեցի, շաղվեցի, ձունն իմ գլխուս, ի՞նչ գիտեմ թը թթխմորը գլխանց պիտի վերցվի Մեմ՝ ա աշեմ՝ կեսուրս էկավ քովս, ըսաց. Ըխշի, թթխմորը խաշակնքեցի՞ր»։ Գլխով էրի թը՝ հըլը չեմ վերուցեի— Վո՛ւյ, ֆողը գըլխուս, էրավ կեսուրս ու կարմիր կարմրավ. «Ըխշի, ըսաց, քու մերս» ձունս գլխուն, քեզի հեշ բան չէ սորվեցուցեի: Զիտե՞ս օր թթխմորը գըլխանց պիտի վերնա, խաշակնքի, վար գրվի, օր էրթա քյարվընին հասնի, մեկալ թթխմորներուն հետ օխթը ծուս Երուսաղեմ էրթա, լուս գերեզմանը համբուրեի: Ախր ասքան օր ուշացուցիր, չէ՞ օր հիմի կերթա, ետ գալողներուն մեզնեն գանգատ կէնե թը՝ անքան թաթակիչ եմ կերեի, օր թեկերս կոռոներ է: Իրիկվան ա օր պահապան հրեշտակը դա դուռը ծեծե, թը՝ թթխմոր, դուռը բաց, չպիտի բանա, ըսե պիտի թը՝ անքան թաթակիչ եմ կերեի, օր թեկերս կոռոներ է, չեմ կրնը տեղես էլլեա:

Բացի հրեշտակներից ժողովուրդը հավատում է և այլ ուղիների, որոնցից գլխավորն է ջրային սղին, ջրի աղբիկ կամ փերի յղիլն³⁹: Թե որպիսի կերպարանքով է ներկայացնում նրան ժողովուրդը, հետևում է հետևյալ պատմությունից:

«Գարունքին մ'ալ կարծեի, մեմ ա աշեմ՝ մե պոչով պուսով, ըղընտիկ աղջիկմ՝ էկեր մալի քովը կայնի է: «Ըխշի, ի՞նչ գուզես» ըսի, ձեն շհանեց, Գաշեմ, լուսն էրեսեն կաթե կը: «Մատո՞, ճվացի քնկերիս,—արի իսի աղջկան բռնենք»: Աղջիկն օր աս իմացավ, թողեց ու փախավ: Ես քնկա ետևը, ան կերթա, ես ետևեն, աստից անտեղ հեռու շի ըլի ինծեն, գիտես, տիրացու քան, իսպես կէնեմ թե բռնեմ (վրա է քնկնում), չեմ կրնա, կենա առաջ կանցնի: Յազմ տեղ ատոր ետևեն վազեցի. մեր Ալեքն ա մալը գուզար, տեսավ օր մե աղջկանմ՝ ետևեն վազեցի կը, ճվաց. «Ատիկ փերի ղզի գըլլի, Հիսուս Քրիստոս ըսե»: Աս ըսելուն պես աղջիկը դայակն անցավ: Հըմը ատ թերմշի աղջիկը անպես սիրուն էր օր՝ բռնեի, ալ հացն քնշուս էր պեաք, ջուրն քնշուս: Պոչով, պուսով, շեկ-շեկ մազերը տեղ օտվիցը, ուսերու վրայով բաց ցկած: Գիտե՞ս, տիրացու, հալավ լուսիր, գլխուն մազերը ծածկեր էին սազ գոլվաան: Պիճիի թուփիկ օտվիցը օր գետին չէ՞ր դնե, գիտես թը կանանչ կը բուսնիր տեղը: Թշերը կարմիր՝ մեկ-մեկ խնձոր, ունքերը կամար, աշքերը խոշոր, բերանը պըզտիկ, պոկները վարդի թեր, գիտես թը աստված բան չէր ունեցե, դալամ առեր ատոր նշխեր էր»:

Երևակայելով փերու ղզուն որպես զեղեցկության կատարելատիպ, ժողովուրդը նրան մարդկանցից սերած և աստվածությունից անիծված է համարում:

Ահա այն պատմությունները, որոնցով ժողովուրդը բացատրում է նրանց ծաղումը:

Ա

Քրիստոս օր տասներդ ժողվեր կը, շատերը լավ տղոցն ու աղջիկներին պահեին կը, օր ատոնցեն տասներդ շտան: Ծր ժողվեց սրծավ, տեսավ օր բիտտուն դարձրվորածներ են, հասկեցավ թը բանը չուր տեղն է, լավերը պահեի են, դարձավ ըսաց թը՝ ալ չկա՞: Ըսին թը՝ չէ, չիք: «Թը կա, չիք դառնա» ըսաց Քրիստոսը: Օտահաթ ատ պահվորածները չիք դառան, աներևութացան: Տեյմ՝ օր հիմի ա ատոնը կան, կուտեն խմեն, աճին բաղմանան կը. եփ օր ա սրտերն ուղե, մարդոց էրեկն կը:

Բ

Ասու հրամանով օր նոյը տապանը մտավ, աստված հրամայեց, օր տապանի մեջը սուրբ մնան: Եղավ օր նոյի Քամ տղան սուրբ շմնաց, ատորեն եղան մե տղամ՝ ու աղջիկմ: Եփ օր ջուրը քաշվավ, աստված տապանի դուռը բացեց, բիտտուն մեկ-մեկ դուս էլան, հըմը ատ էրկու աղին ամոթներուն նեսը թողին: Աստված դուռը կայնած էր, հարցուց թը՝ ալ մարդ չմնա՞ց:— Զիք, ըսին:— Թե կան, չիք դառնան,— ըսաց աստված:

Ան սհաթին ատ ախպարն ու բուրը աներևութացան: Աս փերի ղզիներն, օր կան հիմի ատոնց տղաքն են: Ատոնք իսկ մարդու պես են, հըմը ուզենան՝ կէրենան, ուզենան՝ չեն էրենա:

Փերի ղզիները բնակվում են գետերի մեջ, որտեղից շատ անգամ դուրս են գալիս նստում գետի ափին, ժայռերի կամ մոտակա մի աղբյուրի քարի վրա և ոսկե սանրով սանրում իրենց շեկիկ, մինչև ոտները հասնող մազերը: Սրանք շատ անգամ երևում են երիտասարդների և նրանց հետ սիրվում: Մի քանիսն էլ կանացի հանդերձով գնում են գյուղ և առանց հայտնելու, թե փերի ղզի են, ապրում են մի երիտասարդի հետ, որից և ունենում են որդիներ:

Այս կետերի մասին պատմում են հետևյալ գեպերը:

Ա

Օվա թավթա զեղեն մե տղամ՝ մե օրմ՝ Գիմգիմու ձորով էրթցած

³⁹ Այս հոդվածը տպվել է «La revue des traditions populaires»-ի 1895 № 1, հրեա 1—9:

վախտը էրկու լսի կտոր աղչիկ գուգան, ձեռեն բռնեն կ'ու քաշեն տանին կը ջրին տակը մե լավ օդամ' : Տանին կը ազ զարդըրուն օդան, նստեցնեն կը, հալվա, գաթա, թյուրլի թյուրլի եմակներ հրամցընեն կը, հետը յա-
րանութեն կէնեն : Տղան հասկա կ' օր ատոնք փերի զդի են, զոզը բռնե կը : Նստի գուգա, աղաչե կ' օր իրեն թուզնեն էրթա տուն : Ատոնք շեն թող-
նե, մե սաղ շաբաթմ' գուրգուրանքով, զոտով ատոր պահեն կը ատեղ : Վերջը տեսնին կ' օր տղան զաֆթ շիլի, գուգե օր էրթա, կըսեն. «էրթաս օրա, փարի ետ գուգա'ս» : Անիկ խոսք կուտա, օր րանիմ' օրեն գառնա
գա : Ատ փերի գ'իները շերեն յազմ' արծթի կոճկներ, ջափահիր, օսկի
կուտան կը ատոր. ջրեն դուս կը հանեն ու ճամբու կղենն : Տղան ափա-
թափալ տուն զըյնի, պատմե կը թը փերի զղիները Գիմգիմու ձորը իրեն
բռնեցին տարան իրենց օդան, շաբաթմ' պահեցին, վերջն օր ինքը շատ
լացեց, աղաչեց, թողին օր էրթա, րանիմ օրեն ալի գա : Քովի արծթի
կոճկները, ջափահիրն ու օսկիներն ա ջըցընե կը ու կըսե կը իր անոնք
տղին : Սաղ զեզը ձենձենլի կը առ րանք. ամենքն ա գուգան փերի զղի-
ներուն տվածները տեսնին կը : Տղին ա լավմ' մուգաթ կենան կ'օր փերի
զղիները կենա շտանին : Ամիսմ' էրկուս կանցնի չի անցնի, աս տղան
խելըրի կը : Սաղ էրկու տարի խելառ պտըտի, ջրերու զրազը նստի կանչե
կը : Մե օրմ' ա բիրտան զըյնի ջուրը խեղդի կը :

Թ

Մե ըսունա տղամ' պսակվի կը. սաղ տարիմ' կնկանը հետ սիրով
ապրին կը : Ընձի վախթը կերթան իրար հետ հնձեն կը արտը : Շօգն օր
կը զոռե, դիշնին գյուր իրար հետ լողնան կը : Քիշմ' լողնան կը շեն լող-
նա, բիրտան կնիկը ջրի միջեն դայայ կ'անցնի : Կնիկ ասթին, կնիկ ան-
թին՝ կնիկ շրկա : Մարզը գուգա Քյոսա տերտերին քովը : Վեցհազարչանը
աշել կուտա : Քյոսա տերտերը կըսե կը թը՝ տարիմ' քովս բաղիհամա ծա-
ռայե՝ կնիկս գտնիմ : Ատիկ կնկանը սիրուն սաղ տարիմ' տոանց մե քոռ
կապեկիմ' ծառայե կը : Տարին օր թըմըմի կը, տերտերը ատոր գիրմ'
կուտա ու կըսե կը թը՝ առ աս գիրը մուխումութ գընը Չոպնի կարմնչին
վրա կայնի. գիրը էրկու մատիտ արան բռնե. փերի զղիքը գուգան կ'
անցնին, ան վերջինը քուկա է, գիրկը տղամ' կա, լալի տղան ջուրը ցկե
ու իրեն առ զընը : Ատպես ա կէնե : Մուխումութ կերթա Չոպնի կարմնչին
վրա գիրը էրկու մատի արան բռնե կայնի կը : Փերի զղիքը գուգան կանց-
նին : Ան վերջը մեկմ' գուգա, գիրկն ա տղամ' : Ատ մարթը ճանչե կը
ատոր, վազգե տղան խել ջուրը ցկե կ'ու իրեն կանե կերթա :

«Գյուրմուրզա զեզը վարթան անունով մե աղքատ մարդմ' գլխի
Ատոնք մե պղտի արտմ' կուենան, անմեն օր կերթա արտը պառկի
կ' օր մուգաթ րլի : Մե օրմ' ա պառկեր է, կաշե օր էրկու փերի զղի էկան
րովը պըպըզան : Մենձը վերուց քսաց թե՛ աչսի աղչիկս բեզի կուտամ,
ինչ ա օր պակսութեն ունիս բերեմ կը, իրար հետ ապրեք, հըմը մարդու
լրես, թյակար քեսա՝ ոչ հողին աստծուն տաս, ոչ մարմինա հողին,
տեշմ' օր ես ձեռքս կըծքիտ դնեմ : Ատիկ ասպի գըլլի, փերու զղուն սիրե
կը ինչ ա օր սիրտը գուգե, ատոր մարր բերե կը : Յազմ' վախտ ատոնք
սիրով ապրին կը, իրեք աղա ա կուենան : Մե օրմ' ա վարթանին կնիկը
էրթիկը աղուն կը փռե, տերերկնկանն ա կանչե կ' օր թնդրին ջուրը հա-
նե : Ատ վախթը վարթանն ու փերի զղին նետ սիրվին էդե : Տեքերկնիկը
նեա չի էրթա թը՝ մարդ ու կնիկ են նետը, կնիկն ա էրթեցեն ձեները դի-
մանա՝ գիտնա կը թը մարցը տերերկնկանը սիրե կը : Գուգա մարդուն
կառնե ձեռք անպես թուր ու մրե կ' օր՝ շունն ասե՝ կը կատգի : Մարդու
հոգուն կը հասնի, կըսե կը թը՝ «չէ, չէ, գլխես բաներ դուս մի տա, տե-
քերկնիկա չէր քովինս, փերի զղի էր» : Թը՝ ի՞նչը : «Ատպես, ասպես քան.
արտը պառկած էի, մարը բերեց տվեց ընձի, խոսք ա տվեց օր սրտես
սնցածը բերե» : Կնիկը հանդրտի կը, հըմը աշե օր խեղճ մարդը մրեն
էլավ մըջունը բնկավ : Փերի զղին ալ հեշ քովը շեկավ, ինքն սկսեց բարակ
մանել, զողինը ընկավ, հիմի նյա կը մեռնի, նյա կը լավնա : Մարզը
հասկըցամ, օր փերու անեձը բռնեք է, աղաչանք պաղատանք կէնե, օր
փերուն սիրտը կակզնա, պա քովը : Խյուլասա փերու զղին բնկերտանը
զոռեն կը թը՝ մեզը է, զընը քովը : Ատիկ կառնե իրեն իրեք տղաքը, գու-
գա ատոր քովը նստի, ձեռքը դնե կը սրտին : Մարդը օ սահաթ հանգե կը» :

Փողովուրդը երեսակալում է և տղամարդ փերիներ, որոնք սովորա-
բար ամուսնանում են փերի զղինների հետ : Սակայն որոնցից մի րանիսը
բացառություն կազմելով, մարդկանց հանդերձներով գալիս են գյուղ,
ամուսնանում մի զեղեցիկ տղեկա հետ և միասին սպրում : Կանայք հա-
վատարիմ են լինում նրանց, քանի որ շղիտեն, թե նրանք փերի են, բայց
երբ իմանում են, ամեն կերպ աշխատում են սպանել նրանց, այբելով
թոնրի մեջ :

Այս մասին ես կա հետևյալ պատմությունը :
«Վախտովմ' մե լուսի կտոր աղչիկմ' ջուրը էրթցած վախտը ամեն
անգամ տեսնի կը մե ընտրիկ տղամ' աղբրի քարին նստած : Մեմ' էրկուս,
ատոնք իրար վրա սեր կապեն կը : Իրեք տարի սեր քաշելեն ետև պսակվին

կր: Գիշերը եփ օր տղան ձեռքը աղչկա վրա կը դնե, աղչկա ջանը դող գեղե. գիտես թը փշերը ծակծկեն կը: Մե օրմ՝ ա տղան լողանալու գլխի, աղչիկը դռան ծակեն կաշե: Կաշե, մեմ՝ ա տեսնի կ'օր տղան բիրտան օձ դառավ, օլըվավ, բաթաթ կտռավ: Լողացավ, լողացավ, կենա նորեն մարդ դառավ: Աղչիկը վախենա, վազգե դրկցի կնկանը պատմե կը: Ան ա կըսե կը թը՝ կա շկա՝ ասիկ փերի է, կրնաս նե՝ ցկե թնդիր վառե, թըլը՝ քեզի ազատում շկա: Աղչիկը զոսգա տուն, մեկալ օրը հաց էփած տեղը յարանութենով մարդուն կանչե կը քովը: Մեմ՝ ա մե հացմ՝ կուտ ցկե կ'ու մարդուն կըսե թը՝ կախովի հանե: Ան միամիտ կախովի կը թնդիր թը լը՝ ասիկ օտվներեն բոնե շրջե կը թնդիր ու խոնշան կորգե կը բեր- նին, ինքն ա թողնե փախշի կը: Քիշմ՝ էտե զուգան կաշեն օր փերին վա- ոնը մոխիր է կոռե:

Փերի զգիների մասին պատմվում է նաև հեքիաթների մեջ, ուր ասվում է, թե նրանք երևում են որպես մի անպիտան գորտ, հաստ գա- վազան (կոպալ), ափսե և այլն: Մի առ ժամանակ սրանք այս կերպա- րանքով մնում են և փորձում, թե նախազգալով հարգում են իրենց և այդ դրության մեջ: Եվ երբ փոքր ինչ հարգանք են վայելում, ծածկաբար մարդու կերպարանք են ընդունում, տունը ավելում, մաքրում, կերա- կուրն եփում և ապա նորից կերպարանափոխվում ու պահ մտնում: Այս- պես նրանք շարունակում են, մինչև որ մարդիկ զարմացած դարան են մտնում և նրանց բռնում:

* * *

Ջավախքի⁴⁰ հայ հարսներն ու կանայք երեքշաբթի լույս շորեքշաբ- թի, հինգշաբթի լույս ուրբաթ և շաբաթ լույս կիրակի երեկոյան ժամասացությունից հետո այլևս չեն աշխատում և առադաստ չեն մտնում ի պատիվ Չորեքմուտք, Ուրբաթմուտք և Կիրակմուտք ոգիների, որոնց նրանք ծննդաբերության պաշտպան են համարում: Սրանցից երկուք՝ Չորեքմուտքն ու Ուրբաթմուտքը կույս քույրեր են, իսկ Կի- րակմուտք կամ Հիշտեկը սրանց երիտասարդ եղբայրը:

Ծննդաբերության ժամանակ սրանք գնում են ծննդկանի մոտ, Կիրակմուտքը նստում է դռան հետևը և կատարում քույրերի պատվեր- ները՝ դուռը փակ պահել, ջուր, հավկիթ բերել և այլն, իսկ երկու քույ- րերը կատարում են մանկաբարձուհու պաշտոն՝ լողացնում, բալուլում

են երեխային, ձվածեղ են եփում ծննդականի համար և այլն: Երբեմն էլ զանազան շնորհքներ են պարգևում նորածնին: Իսկ եթե նորահարսե- րը չեն պատվում նրանց՝ այդ երեկունքը սուրբ պահելով, նրանք ոչ միայն ծննդաբերության միջոցին չեն օգնում, այլև վրեժխնդիր են լի- նում, երբեմն սպանելով, երբեմն էլ արատավորելով նորածնին:

Սրանց մասին պատմում են հետևյալները:

Ա.

Հարսին մեկը վիրա (միշտ) Չորեքմուտք, Ուրբաթմուտք, Կիրակ- մուտք պահե կեղնե: Ասոր կեսուրը հեշ ռազի շի քլլի ու վիրա վրան տոտրա կը. հըմը ինչ կէնես օր՝ հարսը հավտին զայիմ գըլլի, կի- սուրին անկամ շի էնե: Պառկելու օրերն օր գուգա, կեսուրը միտքը դնե կ'օր ատ հարսեն վրեժն առնե: Հարսին ցավն օր բոնե կը, դուռը կախե վրուն, կըսե. «Տիա, ես կերթամ, թող քու Չորեքմուտքտ, Ուրբաթմուտքտ ապատե քեզի»: Պառավը դուռը կախե, գելլի հերթկեն կաշե: Կաշե տեսնի կ'օր հարսը ձեռքերը վեր վերուց. «Ա՛խ, Չորեքմուտք, Ուրբաթմուտք, Կիրակմուտք, դուք իմաքտիս հասնիք, թըլը ատ պառվեն խեր շկա» քսաց: Մեմ՝ ա էրկու հարս, մե աղամարդմ՝ ներս կը մտնին: Տղամարդը կայնի կը դռան առաջ խզմաթ կէնե, էրկու հարսը ասոր տղան կառնեն, լողացնեն, բալուլեն, պառկեցընեն կը: Պառկեցընեն կ'օրա, կուղեն օր էրթան, հարսը էրկնուց գետին շնորհակալ գլլի ատոնցեն ու կաղաչի կը թը ամեն ջաֆան քաշեցիք, անունն ա դրեր:

Չորեքմուտքը կըսե.

- Ասոր անունը թող քլլի Ասասուր:
 - Աստվածատուր,— կըսե Ուրբաթմուտքը:
 - Ինչ օր ուզե՝ աստված կատարե,— վրա կըբե Կիրակմուտքը:
- Ատոնք գելլեն կերթան: Կեսուրն օր ատոնք տեսնի կը, ինքը իրան կուտե: Ուրիշները տարով մեծնան կը, ասիկ օրով մեծնա կը, խոյույսա- սա աս պառավը ալ շի համբերե, մե դիշերմ՝ գելլե, ատ տղին զողնա կ' ու տանի մեշան ցկե կը վար, օր գիլանը դան ուտեն: Չորեքմուտքը, Ուրբաթմուտքը ու Կիրակմուտքը ատ տեսնին կը, կերթան շուպնին սյու- րուն քշեն կը դիպա ատ տղան: Տղան օր տեսնի կը օշխրենքը՝ կերթա մեկին բոնե ծծե կը: Չուպանը գուգա տեսնի կը ատ տղին, հարցնե կը թը՝ վե՞՞վ ես, վե՞՞վ չես, հարս մարտ վե՞՞վ ես: Անիկ բանմ՝ շի կընը քսե, խեղճը մասմ՝ անասուն, ի՞նչ գիտե՞՞ հարը վե՞՞վ է: Խոյույսասա ատ շո- պանը կառնե ատ տղան քովը, իրեն տղա կնե:
- Անունա ի՞նչ է, — հարցնե կը մե օրմ:

⁴⁰ Տպվել է «La revue des traditions populaires»-ի 1895 թ. № 1.

Ասատուր,
Աստվածատուր,
Ինչ օր ուզե,
Աստված կատարե, — կրսե տղան:

— Լավ, կրսե շոպանը, ատպես է օրա՝ սյուրում օլխար ուզե՝
Տղան գուզե, մեմ՝ ա կաշեն՝ զորթ օր սյուրում օլխար գիպա իրանց
գուգա: Զոպանը ուրախութենեն քիչ մնա կը, թը խելըթը թոցնե: Օլխարը
նես շերածտան մեմ՝ ա կրսե տղին:

Ասատուր,
Աստվածատուր,
Ինչ օր ուզե՝
Աստված կատարե,
Պուտուկմ՝ ա օսկի ուզե:

Տղան գուզե, Մեմ՝ ա դոան առաջը պուտուկով օսկին դրվի կը: Աս
շոպանը արթիղ դոլվլաթ կըկապե: Մե օրմ՝ ա ստղան ինքն իրեն մտոր-
վի կը, թը աս ինչ օր գուզեմ՝ աստված կատարե կը, արի խնդրեմ
աստծմեն օր մորս ու հորս գտնիմ: Խոսքը հըլը բերնեն շելած՝ աշքը բա-
նա կ'օր հորն ու մոր օրթան նստեր է: Հարն ու մարը փաթթվին կը ատոր,
ուրախութենեն շեն գիտա, թը ինչ էնեն:

Ասատուր,
Աստվածատուր,
Ինչ օր ուզե՝
Աստված կատարե,—

կրսե մարը, խնդրե աստծմեն, օր ա ս պատեն ջավահիր շոռա, ա ս պա-
տեն օսկի վազե, քեզի գողցող-կորցնողն ա՝ վեվ է օրա, տրաքի, կտոր-
կտոր ըլլի: Տղան խնդրե կը: Խնդրե կը շի խնդրե, մեմ՝ ա կաշեն, օր մե
պատեն ջավահիր շոռաց, մեկալեն օսկի վազեց, կեսուրն ա մեկալ օտան
բիրտան տրաքով ու կտոր-կտոր էզավ ընկավ վար:

Բ

Մե ծանդոտը հարսմ՝ գլլի, մե օրմ՝ տունը մենակ օր մնա կը, բիր-
տան ցավը բոնե կը: Կնիկը գուլա, աստծուն աղաչե կը թը՝ հըճըպ ինչըդ
պիտի ըլլի հալս, մարդմ՝ բիլա շկա քովս: Մեմ՝ ա կաշե, օր քովը էրկու

կնիկմարդ էն կաշե, մե տղամարդմ՝ ա դոանը ետեր նստեր է: Աս էրկու
կնիկմարդը հարցնեն կը ասոր թը՝ ինչի՞ գուլաս, ի՞նչ է էղե: Հարսն ա
կսե կը թը՝ ըշտը տեսիք կը, ցավս բոնե է, քովս ա մարդ շկա:— Գարդ
մի էնե, ձաղո ջան, աստծու օղորմութենը մեծ է, կրսեն, բարով ազատ-
վիս կը: Ետե տղան աշխարհ գուգա, ասոնք տղան կառնեն, լողացնեն,
կապեն, բալուլեն, դնեն կը տղոցկնի կուշտը, վրան խաշակնքեն, մե
խաշ նշխարքմ՝ ա դնեն կը բարձին քովը: Ետե կերթան եղով հավկիթ
կեփեն կ'օր ուտեցնեն տղոցկնին, ասիկ կրսե կը թը՝ քուրս, ձեր օտացը
մեռնիմ, աստված ձեզի զրկեց, դուք վե՞վ եք:

— Ես,— կրսե աստնցմեն մեկը,— Զորեքմուտքն եմ, ասիկ Ուր-
բըթմուտքն է, ինի դոան ետե նստողն ա Կիրակմուտքն է, դուն օր մեր
իրիկվնեքը գործ չէիր էնե ու սուրբ մնայիր կը (առագաստ չէիր մտնում)
մենք ա քու իմտըտիտ հասանք:

Գ

Հարսին մեկն ա Զորեքմուտք, Ուրբթմուտք ու Հիշտեք հեշ շի պահե
էղե: Գլլի օր ասիկ տղոցկան պատկի կը և չէ՞ օր շարը տղոցկնին հա-
կատակ է, գուգա կը դուսը թը չը՝ վախթե դուրս խորոզը կանչե կը:
Ատոնք ա ինծի պես խելացի՝ բոնեն խորոզը մորթեն կը: Զարը ներս
կը մտնի, մազ գլլի, զբջնի հարսին շարթթին մեջը: Հարսը խմե կը ատ
շարթթաթը թը չը՝ խելքը կանցնի՝ սահաթմ՝ ետե հանգե կը: Մյակար իսա
թերմաշ շարը օր մադի դայալ կուլ կերթա, փորին մեջ կենա սատանա
կը գառնա, հարսին ջիդյարը կուտե:

Դ

Մե հարսմ՝ ա ալի ատոր պես Զորեքմուտք, Ուրբթմուտք ու Կիրակ-
մուտք շի պահե էղե: Տղոցկան օր պուտի կը, տղան բալուլեն օրոցկը
դնեն կը, քիչմ՝ ետե կերթան կաշեն օր՝ տղան մորթած է, արունը օլուդի
պես վազեց կը: Տղոցկանը ծնկին կը դարնե, մաղեբը կը փետե, թը՝
վա՞յ ձունը գլխուս, աս ի՞նչ էղավ, աս վե՞վ անուշ պալաս արունվիկ
էրավ:

Աս վախթը էրկու կնիկմարդ ու մե տղամարդմ՝ էրկան կը աշիցը,
երսեն կը թը՝ մենք Զորեքմուտք, Ուրբթմուտք ու Կիրակմուտքն ենք,
դուն օր մեր պատիվը չէիր պահե, մենք ալ քու տղստ ատ օրը ցկիկք:

ժողովուրդը հավատում է և միականի հրեղեն ոգիներին, որոնց Ալ է կոչում:

Կանայք պատմում են.

«Աստված օր Աթամին ստեղծեց, անոր ընկեր ա Ալին ստեղծեց: Ասիկ հրեղեն էր, միաշքանի: Աթամ մարմնեղեն, Ալը հրեղեն, հեշ իրար չէին սաղև, ատոր համար ա Աթամը հեշ չէր սիրե Ալին: Աստված տեսավ, օր Ալ շկրցավ ընկերութեն էնե Աթամին հետ, Եվային ստեղծեց: Աս վախտվանից Ալը դուշման ընկավ Եվային ու անոր ջնսին»:

Ալքերը կանանց վնասում են գլխավորապես տղայաբերության ժամանակ, երբ մտնում են նրանց փորը և նրանց ու նրանց որդիների փայծաղներն ուտում, որով և սպանում են նրանց: Կանայք հալածում են սրանց Հիսուս-Քրիստոս անունը տալով:

Այս մասին պատմում են.

«Քրիստոս էրթցած վախտը մե ճվճվոցմ՝ կիմանա, մոտենա կանչի օր՝ Ալ է, բանե կրսե կը թը՝ դուր ինչի՞՝ մտնիք կը ծննդկանների փորը, անոնց ու տղոց ջիզարը կուտե՞ք: Ալը ոտքը գըջնի, կաղաչե կը թը՝ խնայե, մեմ՝ ա չեմ էնե: Քրիստոսը չի օղորմանա: Ասոր մարը գուգա աղաչե կը թը՝ իմ մենե տղիս բաց թող, ուր օր քու անունա տան, մենք ոտքը չը դնենք: Շատ օր կաղաչե, Քրիստոս ա թողնե կը:



Գլխավորապես հեքիաթների մեջ ժողովուրդը պատմում է դևերի՝ մասին, որոնք վիթխարի արարածներ են, մինչև յոթ գլխանի: Սրանք վերին աստիճանի ուժեղ են, այնպես որ ահագին ծայրեր վերցնում և շատ հեռու են ձգում: Սրանց միմյանց հետ կովիլը ժողովուրդը նկարագրում է իբր ահագին սարեր միմյանցից հեռանում և վրա վազելով իրար են բախվում:

Կին դևին պատկերացնում է նա որպես մի ահագին բլուր, աշ ծիծը ձախ ուսին ձգած, ձախը աշին, մի փթից ավելի արճիճ բերանը ձգած այնպես ընթացնելով ծամում է, որ ձայնը «օխտը սարի ետև լսվում է»: Ձեռին էլ բռնած մանում է մի թեշիկ, որի գունդը ջրաղացի մի ահագին քար է, իսկ պոչը մի մեծ գերան:

Չնայելով իրենց սարսափելի ուժին և հասակին, նրանք շատ միամիտ, պարծենկոտ և հիմար են: Միայն բնությամբ հակված են շարության և աշխատում են մարդկանց վնաս հասցնել:

Նրանք բնակվում են գետնափոր մեծ և ընդարձակ այրերում, սաղարթախտ անտառների քարանձավներում, անամհուսթյան ջրի ավազանի մոտ, ոսկե խնձորների այգիների մեջ և այլն:

Նրանց բնակարանները չի են ոսկով, արծաթով, անբավ հարստությամբ, թանկագին քարերով: Նրանց գոմերում կապված են հրեղեն ձիեր, որոնք մի ակնթարթում կանցնեն ամբողջ աշխարհը:

Գեները թեև թշնամի են մարդկային սեռին, ուտում են նրանց միսը, սակայն սիրում են գեղեցիկ աղջիկներին և շատ անգամ փախցնում են նրանց և տանում իրենց այրերը, միասին ապրում: Կնության առած աղջկա սիրտը զրավելու համար նրանք ամեն ջանք թափում են. գտնում բերում են նրանց ոչ միայն ամեն բարիք, զարդեր, հարստություն, այլև ոսկե կատու և մուկ, որոնք միմյանց հետ խաղում են, ոսկե առյուծ և վագր, որ միմյանց հետ կովում են՝ նրանց զբաղեցնելու համար:

Մարդիկ շատ անգամ ընդհարվում են նրանց հետ: Քաջ երիտասարդներն աներկյուղ մտնում են նրանց բնակարանները և զրավելով նրանց կանանց սիրտը, ճարպկությամբ և իմաստությամբ խփում, մի հարվածով սպանում են դևին, որ կիսամեռ ձայն է տալիս. «Եթե քաջ ես՝ մի անգամ էլ խփիր»: Իսկ իմաստուն երիտասարդը պատասխանում է. «Մորիցս մի անգամ եմ եղել, մեկն էլ հերիք է»: Բայց եթև սխալվի և հարվածը կրկնի՝ դեռ կկենդանանա և նորից կկովի հետը:

Մի քանի դևեր էլ, մարդկանցից վախենալով՝ իրենց հոգին ճնճուկի նմանությամբ դնում են մի արկղի մեջ և տանում սև ու ճերմակ ծովերի մեջ պահում, իրենք անհոգի ման դալիս, որ շսպանվին:

Թողնելով հեքիաթների մեջ պատմելու դևերի մասին, այստեղ առաջ եմ բերում մի կնոջ կոիվը դևի հետ՝ յուր ամուսնու մահվան վրեժխրնդրության համար:

«Օխթը գլխանի դևին մեկը ինչդ գլի մե տղիմ՝ հետըթին գըջնի, ուպանե կը: Ասոր նշանածը շատ գուլա, էրերա կը, կաշե կ'օր ատով բան չի բլի, ղըլըղը փոխե՝ տղամարդու ղըլըղ կը մտնի, հեծնի կը քյահլան ձիմ՝ ու մզրախը կառնե ձեռքը, կերթա օր դևին գտնի վրեժը ստնե: Յազմ կերթա, ճամփան էրկու հարամի ոաստ գուգան: Ատոնք գուգեն, օր ատոր վրա տան, հըմը ասիկ օր մզրախը չի խաղցնե, ու ատոնցեն մեկին ճակատին դնե, տեղն ու սեղը կը մնա: Մեկալը ձեռք ու ոտք գըջնի, տե հոգին վեր ծակը դնե, օր փրկե: Ասիկ կառնե ատոր

⁴¹ Տպվել է «La revue des traditions populaires»-ի 1893, № 3, էրես 1-6.

հետք, կերթաւ Կերթան օխթը գլխանի դէի ղոնախանիմ՝ հասնին կըստ կնիկը կըսե հարամուն թը՝ ձիանը աստեղ բուն կեցի, ես կերթամ անոր հետ կովիմ, թյակյար անոր ալթ էրի, ինթիխամս (վրեժ) առա, մե օֆմ՝ կէնեմ, կեցի, թըլը՝ թող ու փախի, գլոխաւ պրծու: Կաշեն օր ատ դէին ղոնախանան հե: մե կողմեմ՝ դուռ շունի, մենակ վերը մե փանձիրամ՝ կա: Թաժա հարսը կըսե հարամուն թը՝ առ իսի մխերը զարկ պատին, օր բունեմ վեր էլլեմ: Ան ա ղոնա քարմ՝ կառնե զարնե՝ մե մըիմ՝ բիլա շի կրնա զարնե: Հարսը կառնե մխերը, ձեռքովը զարնե ու վեր գելլե: Վեր գելլե՝ փանձիրեցեն մտնի կը նես. կաշե՝ դեր նստեր է, քաշե կը թուրն ու ատոր օրթալի գլխուն օր շի զարնե, արունը շալի պես շոռա կը, գլոխը գլորի, փանձիրեցեն վար գընի կը: Հարսը կայնի անպես մե օֆմ՝ քաշե կ'օր, սաղ աշխարհըք ձեն կուտա: Գիշի վար, կըսե հարամուն թը՝ առ գլոխն էրթանը: Հարամին կաշխատի, կաշխատի՝ տեղեն բիլա շի կրնա վերցընե: Հարսը դէին անկճները կը կտռե, ցկե կը հապիկան, կերթան: Կերթան ատոր մարթուն գերեզմնին բովը, գերեզմանը բանան կը: Հարսը կըսե հարամուն թը՝ ալուր դատաստընին պարտեկան մնաս՝ թյակյար ինձի աստեղ շիաղես: Տիտ ձիս, դէին խաղանան, իմ դյովլաթս բեզի փեշքաշ, կըսե ու թուրը տնկե կը գերեզմնին մեջը՝ ղըլնի վրան, փաթթվի կը մարդուն ու մեռնի կը: Հարամին հողը վրաները կուտա»:

ԱՅԹԱՆՈՂԱԾՆՈՒԹՅՈՒՆ, ՀԱՎԱՏԱԼԻՔ՝ ՏԱՐԵՐԻ,
ՃԻՋԿԱՅԱՆ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ԵՎ ԲՆՈՒԹՅԱՆ
ԹԱԳԱՎՈՒՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Աշխարհի, նախամարդոց, ազգերի, լիզունների ծագման մասին Ախալքալարի հայ ժողովուրդը գիտե միայն Ս. դրքի պատմածը: Միայն սրա վերա վախեցնում է, թե երբ աստված բաժանեց երկինքն ու երկիրը՝ ջրի մի մասը երկնքում մնաց, մնացածը կաղմեցին հետևյալ շորս գետերը՝ Մուրատ շալ (Նփրատ), Քուս (Կուր), Արազ (Արաքս), և Սև ջուր:

Երկինքը յոթ «լաթ»՝ շերտ է. առաջին շերտն ամպ է, մյուսները ջուր: Երկնքի ծայրը և վերջը օվկիանի վրա է դրված:

Երկնային մարմիններից արևն ու լուսինը բույր և եղբայր են: Մի անգամ քույրը՝ արեւը ասել է եղբորը. «Ես գիշերը կվախենամ ման դալուց, իսկ ցերեկը կամաշեմ, երբ ինձ նայեն»: Այն ժամանակ եղբայրը տվել է քոջը մի թոփ ասեղ և ասել, «Դու ցերեկը ման եկ, և եթե քեզ նայեն՝ ասեղները ցցիր նայողի աչքերը, իսկ ես գիշերը ման կգամ»:

Մի ուրիշ ավանդություն ասում է, թե արևն աղչեկ, լուսինը մանչ է, երբ իրար պատահում են, լուսնի խելքը անցնում, խավարում է: Լուսնի ճիտն էլ մի արյունոտ տիկ կա, սա էլ երբեմն տիկը ձգում է արևի վզին, որից նա է խավարում:

Արևն ամեն օր ծագում և երեկոյան մայր է մտնում, գնում մոր՝ օվկիանի մեջ հանգստանում է, առավոտ նորից ծագելու և պտտվելու աշխարհի շուրջը:

Արևը մայր մտնելուց հետո գետինը խաշված են համարում, դրա համար էլ շեն փորում:

Երկնքի անհամար աստղերից յուրաքանչյուրը պատկանում է մի մարդու և երբ սրա վախճանը հասնում է՝ աստղը վայր է բնկնում: Սրանց մեջ կան և պոչով (գիսավոր) աստղեր, որոնց երևալը պատերազմ լինելու կամ թագավոր մեռնելու նշան է համարվում:

Բոլոր աստղերն երկու տեսակ են լինում, բարի և շար: Բարի աստղի տակ ծնածը՝ երջանիկ, շարինը դժբախտ է լինում:

Աստղերը կարող են զորություն, իմաստություն տալ մարդկանց: Գյումյուրդեցի մի հովիվ մրտում է, տանում են տուն. ճանապարհին մի քարի փոսի մեջ հավաքված ջրից խմում է: Գիշերը երազում հայտնում են թե դու սրբացար, որովհետև խմեցիր այն ջուրը, որի մեջ զարկել էր աստղը: Միևնույն ժամանակ արգելում են նրան ամուսնանալ: Սա ժամկոչ է դառնում և ամեն ինչ գուշակում է: Միեչև իսկ պառկում է գերեզմանների մոտ և իմանում, թե ննչեցյալները քրիստոնյա՞ են եղած թե կուսպաշտ:

Աստղերի մեջ երևում է Սանամոր իզը. ժամանակով սանամերը կնքավորի մարագից հարզ է գողացել, բայց գոգնոցը ծակ լինելով, թափվել է և «իզը» (հետքը) մնացել է երկնքում:

Մի այլ ավանդություն ասում է, թե սանամերը լոկ անցել է կնքավորի երգիկից և որովհետև սա մեծ մեղք է համարվում, ադ պատճառով նրա հետքը դրոշմվել է երկնքում:

Մի ուրիշ ավանդություն էլ Հարդագողի ճանապարհին երկնքի պատառք կամ կար է անվանում: Իբր Ջրհեղեղի ժամանակ պատուվել և աղտեղից ջուրը թափվել է երկիր:

Միաժանի մասին էլ պատմում են, թե դա աստծու դուստրն է: Գարբիկ և Միքայել հրեշտակապետները տանում աստծու մեջքը կապում, ցույց են տալիս մեզ, թե տեսեք, «Աստու ողորմությունը ձեզնեն չէ պարսե», հետո դարձյալ քանդում պահում են: Այս պատճառով և ձիա-

ծանր տեսնելիս խաշակնքում են, շնորհակալ լինելով՝ աստվածանից նրա ողորմության համար:

Բայց այդ գեղեցիկ լուսալիք երկնքից երբեմն ցայտում է «ասու կրակը» (կայծակ) շար մարդկանց խփելու:

Այդ գեղեցիկ երկնքի վրայով քառածի կառքը նստած ճեմում է Եզրիա մարգարեն, որի կառքի անիվներից առաջանում է (ամպի) գոռոց և մտրակի զարկից՝ կայծակ: Այդ ընդարձակ երկնքի վրա հրեշտակները «շիլիթ» են խաղում և ձեռքերի շիլիթներով խփում սատանաներին: Սրանք էլ ազատվելու նպատակով մարդկանց մոտ են վազում, նրանց թևի տակ մտնում: Եվ եթե մարդը խաշ չհանն երեսին, որ սատանաները հեռանան իրենից, հրեշտակները կխփեն թե սատանային և թե մարդուն:

Այս պատճառով էլ կայծակի ժամանակ շարունակ խաշակնքելով ծառի, դեզի, սայլի, քարի տակ են մտնում, իբր պաշտպանվելու:

Կայծակից, ժողովրդական խոսքով՝ կեծակից, ասու կրակից, առաջացած հրդեհը մեղաց պատուհաս և ուժից բարձր համարելով, շեն աշխատում հանգցնել:

Կայծակը մի կիզացյալ երկաթ է, հրեշտակների ձեռքի շիլիթը, որ երկնքից ընկնում, մտնում է գետնի մեջ: Եթե այս երկաթը գտնեն՝ և դրանից թուր շինեն, այս ժամանակ այդ կայծակի թուրը ոչ միայն մի փարտեղով հազար մարդ կսպանն, ամեն ինչ, քար, երկաթ, մետաղ կկտրեն, այլև խփած միջոցին ինքն իրեն կերկարի և կհասնի նպատակին: Եթե նրան հոգևարք հիվանդի մոտ դնեն, նրա զորութունով կառողջանա նա: Կայծակի կարապետող փայլակն էլ օվկիանի միջի կեկեռն ձկան կրծքի փայլն է:

Հողագունդը, ժողովրդի կարծիքով, մի կլոր բան է, մի կարմիր եզր եղջյուրին անշարժ կանգնած: Եզրի մոտ կա և մի ճանճ, երբ սա աստուծո հրամանով մեր մեղաց համար կանգնում է եզան պնչին, եզը շարժում է գլուխը, որից և երկրաշարժ է լինում: Երբեմն էլ երկիրը ծակվում է և քամին մտնում մեջը, որից և ժած է գալիս:

Գյուղացու կյանքը սերտ կապված է հողի հետ, որովհետև նրանից է ստանում յուր անունը ու ապրուստը: Ուստի և սաստիկ սիրում են հողը: «Արգրում, հողիս ու ջրիս մեռնիմ, ասում են նրանք, պիտի ըլի՞ մե օրս՝ դամ հողըս լիզեմ»: «Քոռ աշիմ այդի գետնին», երգվում են նրանք:

Շատ հիվանդներ պանդխտության մեջ իրենց գյուղի ջրից բերել են տալիս և խմում:

Ժողովրդի կարծիքով Եզրիայի շորս կողմը շորս օգնական են նստած, որոնք սրա հրամանով ամպերը ուռեցնում են «թուլուխների» նման, վայր իջեցնում, որ ծովից ջուր խմեն, հետո բարձրացնում, որ անձրևե: Հովիվ Մարտիրոսն ուզում էր հավատացնել, թե ինքը տեսել է, որ ամպն իջել Փարվանա լճի վրա ջուր խմել, բարձրացել Ս. Հովհաննես վանքի վրա անձրևել է:

Քամին ժողովրդի կարծիքով առաջացել է Նոյ նահապետի աղջիկների սրնգից: Ոմանք էլ ասում են, թե շորս հրեշտակ, կանգնած աշխարհիս շորս կողմը, փչում են, որից և առաջանում է քամի:

Քամին գյուղացիների համար անհրաժեշտ մի բան է: Ավանդութունն ասում է, թե մինը թագավորից գնել է քամին, թեղի ժամանակ բոլոր գյուղացիները հավաքվել են թագավորի մոտ և մեծ դին տալով, աղաչելով ետ են գնել, որովհետև առանց քամու նրանք շեն կարող թեղ անել՝ ցորենը հարգից մաքրել:

Եթե երկու քամի միմյանց հակառակ փչելով ուղրապուռյտ վեր են բարձրացնում թեթև իրեր, կոչում են սառանի քամի:

Փոքրիկ թաթաներ, որ երբեմն գոյանում են Ախալքալաքի լճերի վրա, կոչվում են ուշապ: Ժողովրդի կարծիքով ուշապը մի սարսափելի վիշապ է, որ շղթաներով կապված է երկնքից, գլուխը վեր, պոչը վար: Սա գոյանում է եղնիկից: Երբ եղնիկը ծնում է, մայրը թողնում է մի ժամվա ճանապարհ փախչում է: Ուշապները իջնում, սրան երկինք են քաշում, ուր մեծանալով նա էլ է դառնում ուշապ, իսկ եթե շիջան, երեք ժամից հետո սա վեր է ելնում, կանգնում, այս ժամանակ մայրը տեսնում, գալիս պահում է:

«Անցյալ տարի ետանալուի լճի վրա իջավ. նախ ամպերի միջից ցույց տվեց զարհուրելի գլուխը, ապա պոչը վայր պարզեց և ցեխը ջրին խառնեց»:

Եթե սրա շղթաները արձակվին, սա կկործանն աշխարհը, իսկ եթե գլուխը վայր կախվի՝ կկործանվի աշխարհը:

Արձագանքի մասին ժողովուրդը հետևյալ կարծիքն ունի. կան սարեր, որոնց մեջը ջրով լիքն է, ահա դրանք են ձայն հանում:

ԿԵՐՊԱՐԱՆԱՓՈՍՈՒԹՅՈՒՆ, ԿԱՍԱՐԳՆԵՐ ԵՎ ԿԱՍԱՐԳՈՒԹՅՈՒՆ

Ժողովուրդը հավատում է, թե եթե մինը կարողնա «ասու-գոտու» (ծիածանի) տակից անցնել՝ մանչ է՝ աղջիկ, աղջիկ է՝ մանչ կղառնա: Իսկ եթե իր արմունկը համբուրի՝ ծիտ կղառնա, կթուշի:

Բայց կան կախարդներ, որոնք ձեռքի գավազանով խփում են

մարդկանց և նրանց զանազան կենդանիների, օրինակ՝ էշ, գալլ, թռչուն և այլ կերպարանափոխում: Նույն գավազանի հարվածով էլ կերպարանափոխվածներին մարդ են դարձնում:

Կախարդությունը առավելապես վերագրում են կանանց և սրանց մեջ մասնավորապես՝ պառավներին:

«Պռչավոր պառվերները» թեև ի ծնե պոչ են ունենում, սակայն մեծանալիս միայն դարգանում է սրանց պոչը, որով և ստանում են կախարդական շնորհք: Սրանք հեծնում են խնոցին, օձը մտրակ անում և երկնքի «օխտը դաթից» թռչում, գնում՝ ուր որ կուզեն: Սրանք գործում են առավելապես սիրային հարաբերությունների մեջ, գրավել միևի սերը դեպի մյուսը, փախցնել անմատչելի սիրուհուն և այլն:

Փողովորդը համակրություն մը չի վերաբերվում դեպի պոչավոր պառավները, և երբ մի կին մյուսին ուզում է նախատել, «պռչավոր» է անվանում նրան: Որպեսզի կինն այլևս կախարդություն՝ պոչավորություն չանի, բռնում նրա պոչը կտրում են: Սրանց մի շնորհքն էլ այն է, որ կարող են աներևութապես շրջել:

Սրանց մասին բացի հեքիաթների մեջ պատմածը, պատմում են և հետևյալ ավանդությունները:

«Փանձացի Սպերցոնց Աննան ապում էր. Սպեր էինք օրա՝ ձմրան մե գիշերմ՝ վախտե դուս դուս էլա, տեսնիմ, մեր էրթիկը մե կարասմ՝ է դրած: Աս ի՞նչ պիտի ըլլը, ըսի ու դողողալեն մոտեցա՝ օր աշեմ մեջը ինչ կա: Մեջն աշեցի թը չը՝ ոտաց ձենմ՝ էկավ, ան սհաթին վախես մտա կարասն ու կզկթա. մեմ՝ ա աշեմ, մե պառավմ՝ էկավ ու հեծավ կարասը: Կարասը հեծավ թը չը՝ թռավ: Կերթա, ես ա մեջն եմ, քիչ կը մնա թը լեղիս պատոփ: Գնացինք, գնացինք, մեմ՝ ա մե շայիր-չիման տեղմ՝ կայնավ կարասը: Պառավը կարսեն իշավ, աշեմ՝ մե օձմ՝ դամշի է էրե: Ասիկ իշավ գնաց: Ան օր գնաց, ես ա կարսեն էլա, աս-թին-անթին աշեցի, տեսնիմ՝ պաղ, պաղչա, հեռուն դոճա քաղաքմ: էլա գնացի պախչան, քիչմ՝ կանանչ քաղեցի, պախպընչուն ա հարցուցի թը տս քաղքին անունն ի՞նչ է. ըսաց՝ Մըսըր: Կանանչն առա կենա, գնացի մտա կարասը: Քիչմ՝ անցավ, պառավն էկավ, սխլամիշ էրի, տեսա օր՝ իսի մեր Շողեր անան է: էկավ հեծավ կարասը, օձը կենա դամշիլյամիշ էրավ, կարասը թռավ, դյաղիբվանմ՝ մեջ մեզի բերեց իջուց մեր էրթիկը: Շողեր անան թեզմ՝ իջավ ու վազեց տուն: Ես ա կաննըններս դաստյալյամիշ էրի, գնացի տուն: էրկանս կանչեցի քոշեմ, պատմեցի թը՝ ասպես, ասպես բան էղավ, Շողեր ապլան պոչվոր է: Ատ օրն ա Շողերին մարդը մերն էր. մարթս մեկ-մեկ ըսաց անոր թը՝ Շողեր ապլան

կարասը հեծեր, օձը դամշի էրեր տեյմ՝ օր Մըսըրը գնացեր էկեր է: Անիկ հեշ շհավտաց: Ատ վախթը ես կաննըները ցուցուցի ու ըսի թը՝ ահան, տեսեք, ձմեռ հատազա իսի կաննըները ինծի վե՞՞՞վ կուտա, ես կարասը մտա անոր հետ գնացի փերի: Աս օր տեսավ՝ մարդուս հետ գնացին բանեցին Շողեր ապլային, օլի տվին (չվանով ուրեկ), տաք-տաք ջուրը գլխեն վար լցին: Լըլեն իմացան, օսահաթ պոչը դուս էլավ, թեզմ՝ դանկով կտրեցին: Ան էղավ, աս էղավ, այ հեշ չը հեծավ կարասն ու աշխարհք շափեց»¹²:

Մի ուրիշ հարս էլ պատմում էր. «Մայիսի վեցն օր գըլլիք, կեսուրս վիրա տղոցը, բազի ա ինծի զրկեր կը մերին օր էրթանք խորոզ չը իոսած մասրենի գտնինք բերինք: Հոգիքս դուրս գուքար կը սաղ օրը ժուռ դալեն, կրնայի՞նք չբերե: Ռխան օր գըլլիք՝ սապախտան մութը-մութ կեսուրս գըլլիք ախիշը կապեր կը էտեը, գըլլիք էրթիկը, հերթոց բուրբ ախիշով իրեք ճիզ կը քաշեր, օխտը հատ ա քար նշան կէներ թը՝ իսիկ ինծի, իսիկ ինի հարսիս, ու ատ ճպերու բուրբը շարեր կը: Մասրենի-նիրն ա կառներ հերթոց, դուսն ծակերու առաջը դարկեր կը, օր պոչվոր պառվները չգան նես մտնին, եզի ու պանրի ախրին քար քկեն: Մե տարիմ՝ ա ինծի էին զրկն մասրի, գնացի՞ չդուս: Ատ տարին պոչվոր պատավը աներևութապես նախրին կարմիր կոլիմ՝ վրա նստած, էկեր հերթեցեն մտեր, եղեն-պանրեն գողցեր էր: Ապիերն ա կթեր, լքեր կարասը, տարեր էր: Հարսի. հըլը մասրենին անոր հմար է. օր պոչվոր պատավն օր գա՝ միսը խրի, հրոլը ատ ձիզն ու քարե՞րն ինչի հմար են: Ճիզը, տիրացու ջան, թըլըսումն է, ան ճոյ միշեն չի կրնը անցնի, ան բարերն ա՝ բախա փորձուկ է, մեկալ օրը կերթայինք վերցնեինք կը, վերիս բարի տիկն օր մըջմուկ էլլեր, անիկ ան տարին բախտավոր գլլիր»:

Թեև այժմ ամբողջ գավառիս մեջ «պոչվոր» մականունով պատավ չկա, սակայն բաղմամբիվ են դրանց մասին պատմվող ավանդություններն ու առասպելները, մասնավորապես հեքիաթների մեջ:

Փողովորդան կարծիքով պոչվոր պառավները դորձում են շարերի թեղադրություն մը, դրա համար էլ համակրություն չեն վայելում: Այնինչ կան ուրիշ կախարդներ, ինչպիսիք են օրինակ, եղնդի աշող, նեա դնող, գարի ցկող, փիլթա թափող, թիղ շափող և այլն, որոնք ալը շնորհքը սրբերից են առել և գործում են սրբերի ներշնչամբ, այս պատճառով էլ բավական հարգանք են վայելում: Այսպիսիներ գրեթե տարածված են ամեն դյուղ և միշտ գործ ունին:

Սրանցից նշանավորներն հետևյալներն են:

Ախալքալաքի ամբողջ գավառի հայ գյուղացիները Ս. Նարուժյան երեկոյնն ծնած երեխային եղնգի աշելով կորուստը գտնելու շնորհք են վերագրում:

Երբ ծնվում է երեխան, ծնողներն իսկույն մի գառ են մատողում և նրա աջ թիակը շորերի մեջ փաթաթած պահում են: Երբ երեխան 10—11 տարեկան է լինում, մայրը և բարեկամները պատմում են նրան ինչ շնորհքի տեր լինելը, և հավատացնում, թե այսինչ երազի հիման վրա այդ շնորհքը տվել է Մայր Աստվածածինը կամ Ս. Կարապետը և կամ մի ուրիշ սուրբ: Ապա տալիս են նրան մատողած գառի թիակը, ցույց տալիս երեխայի աջ բութի եղունգը և ասում. «Նայիր մեջը բա՛կ կերևա, այսինչ բանը կորեր է, տեղը ըսա» և այլն: Երեխան նայում և մի բան է ասում, բոլորը որպես պատգամ ընդունում են նրա խոսքը: Այսպիսով նա դառնում է եղնգի աշող: Կորուստ ունեցողները դալիս են մոտը և ասում. «Կորուստմ՝ ունիմ, գտի»: Սա նայում է եղնգին: Ժողովրդի կարծիքով պանազան իրեր գալիս անցնում են եղնգի միջով, վերջապես կորուստն է երևում և կանգնում եղնգի մեջտեղը: Ապա գալիս է գողը, գողացածը ձեռին, նաև այն տեղը, ուր որ դրված է եղել կամ այժմ պահված է կորուստը: Եղնգի աշողը նայելով եղնգին՝ կենտրոնացնում է յուր միտքը և կորուստի տիրոջը կորուստին վերաբերյալ մթին հարցեր տալուց հետո, մի ելրակացության դալիս և կամ նախազգում և մի բան է ասում: Եթե մի բան չի կարողանում ասել, պատճառ է բանում, թե երեկո է, կամ օրն ամպ է, չի երևում. այսինչ օրը արի, և մինչև աղ օրը, հարցուփորձ անում, մի բան ասում է: Աշելուց հետո կամ առաջ ստանում է մի քանի կուպեկ կամ մի քանի ձու:

Առհասարակ բոլոր եղնգի աշողները վախենում են դողերից, որոնցով լինելը իբր իրենք հայտնում են ժողովրդին: Հաճախ, մանավանդ անշափահաս ժամանակ, գիշերները երազում տեսնում են նրանց՝ սրբով իրենց վրա հարձակվելիս: Երկյուղը պատում է դրանց, ուստի և անկողնուց վեր թռչելով վազում, «մորերու ծոցն» են մտնում:

Բայց քանի գնում երկյուղը նվազում և միայն խիղճն է սկսում տանջել, որ շատ անգամ սրան կամ նրան իզուր տեղը դող են բռնել: Եվ շատերը շափահաս ժամանակ դադարում են եղնգի աշելուց, ուստի հինա են դնում եղնգին, պատճառելով թե հինան այլևս ցույց չի տալիս:

Գարի ցկեկում հռչակ է ստացած սուլդացի Հեղնար պառավը: Սրանով նա գտնում է կորուստը:

Ցկեկիս վերցնում է 7 զույգ գարի և մի ցորեն: Գարիներից մինի ծայրը կտրում է և նշանակում թե սա շեմքն է, մի ուրիշի ծայրը ցեխտում, դա էլ կորուստը. մյուս հատիկները մարդիկ են նշանակում, իսկ ցորենը՝ բախտ, դյուվար: Ապա դաստակը պատում է շորով, մի «հայր մեր» շշնջում, հատիկները բուռն ածում, մյուս դաստակով ծածկում և երեք անգամ շարժելուց հետո, վրայի դաստակը վերցնում է և հատիկների դիրքից զուշակութուններ անում:

Եթե կորուստը բախտի, ցորենի մոտ լինի, կգտնվի, եթե շեմքի մոտ լինի, տան մեջ է, դարձյալ կգտնվի: Իսկ եթե մի կամ մի քանի դարու մոտ լինի՝ մի կամ մի քանի մարդկանց մոտ է, և այլն:

Այս շնորհքը ևս մի որևէ սուրբ պիտի տա: Սուլդացի Հեղնարին տվել է Ս. Աստվածածինն ու Ս. Կարապետը «էրածով», այդ պատճառով էլ ամեն անգամ ցկեկիս՝ հիշում է դրանց անունը:

ՆԵՏ ԴՆԵԼ

Ախալքալաքի գավառում բավական նեւո դնողներ կան, որոնք բուրդ են իրենց աստվածք, մի որևէ սրբից են ստացել այդ շնորհքը: Սրանց դործիքներն են՝ մի մեծ մեխ, որ քահանային օրհնել են տվել և մի ալրմաղ: Ալրմաղի շրջանակի (ղասնաղ) պոկին մեխի հաստության ծակ է արած:

Երբ նեւո դնել տվողներ են լինում, սա վերցնում է մեխը, «հայր մեր» ասելով անցկացնում մաղի շրջանակի ծակի մեջ, ապա երկու ցուցամատով բռնում մեխից և ալրմաղը վեր բարձրացնում («գետնից կտրում») և «Ս. Սարգիս կամ Ս. Գէորգ (շնորհք տվող սրբի անունը), դու սուտ չ'անես» ասում: Հետո արդեն նեւո դնել տվողին ցուցամատը դնել է տալիս մաղի շրջանակի վրա և բարձր ձայնով կամ մտքում ասում. «Ս. Հակոբ, անընանտ մեռնիմ, քեզնե՞ն է Ս. Կարապետ, օխտն անվանտ զուրբան, քեզնե՞ն է», այսպես զանազան սրբերի անուններ է տալիս, մինչև որ մաղը պտտվում է: Մաղը պտտվելիս, որ սրբի անունը որ տվել էր՝ այն սրբիցն է հիվանդությունը, ուստի և նեւո դնողն ապաշխարանք է դնում. «գնը դուրը, մատաղ էրե», կամ «Օխտը գեղ մուրա մոմ վառե՛ պրծնիս կը»:

Ընդունելով նեւո դնողի խոսքը որպես պատգամ, առանց այլևայլության կատարում են:

ժողովրդյան կարծիքով շատ հիվանդություններ առաջանում են դանազան սրբերից, նայելով, թե որի՞ պասը շեն պահել կամ որի՞ն բարկացրել են, իրենց խոսքերով՝ բոլոր հիվանդությունները «մեղաց պատուհաս» են, որ շեն վերջանա մինչև շապաշխարեն, այսինքն այդ պատուհասը տվող սրբի «սիրտը շանենն», մատաղով, բոկոտն ուխտագնացությունը, մոմ վառելով և այլն:

Բայց նախ և առաջ պիտի գտնել թե հիվանդությունը ո՞ր սրբիցն է, որովհետև եթե նա «չողորմանա, մյուս սրբերը իրենց ընկերի խաթեր՝ տերը շեն քլի»:

Իմանալու համար թե հիվանդությունը որ սրբից է՝ «Փիլթա են թափել տալիս»:

Այս բանում հռչակ է ստացել գիլիսկացի Բաղալի կինը, որ այժմ բնակվում է Գանձա. սա բնիկ և ոչ գաղթականներից է և սովորել է փիլթա թափել յուր մորից:

Սա իմ ներկայությունը բամբակից երեք հատ փիլթա շինեց՝ մի մատի հաստությունը և մի թիզ երկարություն ուղորած պատրույզ և փաթաթեց ջահրի իլիկին (բարակ երկաթե ճաղ), ապա խաշակնքելով փիլթան՝ երկուս ծալեց, իլիկը կոխեց ծալի մեջ և երկու ծալը միասին իլիկի վրա փաթաթեց: Հետո նշանակեց թե Աստվածածնից, սա Ս. Կարապետից, սա էլ Ս. Գեորգիցն է և դրեց կիսով չափ ջուր լցրած քարդանի վրա, այնպես որ ջուրը չհասավ փիլթաներին: Մի ուրիշ քարդան էլ զլխիվայր ծածկեց փիլթաների վրա: Քառորդ ժամից վերջերեց քարդանը և փիլթաները բացեց: Ս. Աստվածածնի փիլթան երկու ծալից բռնած արձակելիս իլիկը միջից դուրս եկավ, մյուսներինը մնաց մեջը: Կինը բացատրեց, թե հիվանդությունը Ս. Աստվածածնից է և առողջանալու համար պետք է գնաս Գյումրի՝ Յոթըվերբին ուխտ:

Եթե առաջին անգամ երեք փիլթաներից ոչ մինը չարձակվի, կրկնում է դորժողությունը, ուրիշ սրբերի անուններ նշանակելով:

Ես շատ խնդրեցի, որ ծածուկ բացատրի ինձ դրա գաղտնիքը, սակայն նա ինձ անհավատ կոչեց և պնդեց, թե սրբերի դորությունը է իլիկը փիլթի միջից դուրս գալիս:

Ես առաջ փիլթան և երկար փորձեցի, մինչև որ դառա գաղտնիքը՝ երկու ծալելիս՝ փիլթայի մի ծալը կարճ է անում, այնպես որ իլիկի վրա փաթաթելիս՝ իլիկը կարճ ծալից դուրս է գալիս:

Բոյսեր

ժողովուրդը հավատում է, թե, եթե շաղգամը այնպես կպճեն, որ կպհեր մի ամբողջ կտոր լինի և դնեն բարձի տակ, մյուս օրը ոսկի կդառնա:

Շաղի համար ջուր տաքացնելիս խաշակնքում են, որ սատանան վրան չվացվի:

Շաղը գետին գցելը մեղք է, որովհետև թոնիր ընկել, մաքրվել, մկրտվել է:

Մաղած ալյուրի վրա խաշ են քաշում, որ չարը չմտնեա: Սոխի կպեճները կրակի մեջ շեն ձգում, որ սխրլմտները շանիծեն:

Կենդանիներ

Եթե կատուն հիվանդի վրա պառկի, կասեն հոգեառ հրեշտակը եկել է, հիվանդը պիտի մեռնի: Բայց որովհետև կատուն արգելում է հոգեառ հրեշտակին հիվանդի հոգին աննելու՝ մահը հեշտացնելու համար կատուն հեռացնում են հիվանդի մոտից:

Սև աղվեսին հրացանով խփելիս ականջները բուրդ են կոխում, որպեսզի աղվեսի ձայնը չլսեն, ապա թե ոչ՝ կմեռնին:

Սև կատու շեն պահում, սատանի եղբայր համարելով նրան:

Կովի գլխին ջուր են ածում, որ կանաչի կապած կաթը բացվի:

Կնքահայր շեղողը հավ շի մորթում, որ թուրքի մորթ չլինի:

Կիրակի օրը հավը թուխս շեն դնում, որ ձագերը կաղ չլինին:

Մորթած հավի քունիթները (փորում եղած փոքրիկ հավկիթները) անպսակները շեն ուտում, որ հարսանիքի գիշերը շեղվին:

Եթե շունը ոռնա, տնեցիներից մինը կմեռնի, ուստի ոռնալիս ծեծում են, որ այլևս չոռնա:

Եթե մալը (եղջյուրավոր կենդանիներ) փոշտա՝ թիփի կլինի:

Եթե եզները վերև նայեն և հոտմտան՝ անձրև կգա:

Արևով անձրև գալիս, ասում են, եղնիկները կծնին:

Կենդանիները ծնելիս սանդերքը բերանքսիվայր են դնում, որ կենդանու դուր վայր թափի:

Կովի կաթը չնվազելու համար սկզբներում կթած կաթը դուրս շեն տալիս:

Քոչումներ

Եթե արագազը կամ հավը անժամանակ կանչե՝ կասեն հոգեառ հրեշտակն են տեսել, անեցինեկոց մինը պիտի մեռնի, ուստի և մորթում են դրանց:

Մարտի 9-ին արագիլը (լակլակը) վերադառնում է յուր համար պատրաստված բույնը: Եթե նրա կտցում մի կտոր լինի, դա նշանակում է, որ պատերազմ, կոտորած է լինելու, իսկ եթե հացաբույս՝ հացահատիկների և պտուղների առատություն:

Հավը թուխս դնելիս թուխս դնողը յափուղի ծայրը յուր գլխին է ձգում, որ ձագը «փումփուլլի» լինի, իսկ եթե հանդերձի փեշը վեր ցկե, «կուտուզ» կլինի:

Եթե հավն անժամանակ կանչե՝ հանում նրան, տան երդիկից վայր են ցկում, եթե դեպի թոնիրը գնա՝ վատ նշան է, մորթում են, իսկ եթե դեպի դուռը գնա՝ լավ է, կուտ են տալիս:

Դեղ

Մուլտրոից¹ առողջանալու համար, մերկանում, փաթաթվում են մեզարի (այժի մազերից հյուսվածք) մեջ և երեք անգամ զնում գլորվում 4—7 անգամ ամուսնացող մարդու կամ կնոջ տան կտրում:

Եթե երեխայի բերանը փրփրում է, կնքահայրը յուր թաշկինակը կամ կոշիկի ծայրը քսում է երեխայի բերանին, որ փրփուրը անցնի, առողջանա:

Երաշտ ժամանակ իրիցկնկա բաթաթը (հացառ) զողանում, ջրհորն են ձգում, որ անձրև գա, և կամ իրիցկնկանը ձգում են ջուրը և ջուր ածում վրան:

Նույն նպատակով կանայք տղամարդկանց գլխարկ ծածկում, արորի են լծվում և գետը՝ ընթացքին հակառակ վարում: Սրանց քշում է իրիցկինը:

Երաշտ ժամանակ երեխաները մի ձողի վրա անց են կացնում մի ցախավիլ, վրան ցկում են յափուղ և այդ շամշխաթունը երկու հողի դռնեզուռ ման ածելով՝ երգում են.

¹ Մարմնի վրա բշտիկներ են գոյանում և սաստիկ քոր գալիս, և մի տեղ քորելիս, քշում է մյուս տեղը:

Պուրսատիկն էկեր է,
Շալե շապիկը հագեր է,
Կեմե գոտիկ կապեր է,
Կարմիր կոպեն եղ կուզե,
Սև հավեն հավկիթ կուզե:

Տնեցիք ամաններով ջուր պատրաստելով հարցնում են.

«Էրթըզկեն կուզե՞ք, թե դոնեն»: Եթե՝ «դոնեն» ասացին՝ երդիկից են ջուր ածում պուրպատիկի և տղոց վրա, իսկ եթե՝ «էրթըզկեն»՝ դոնից: Միևնույն ժամանակ մի հավկիթ են տալիս:

Անասունները եթե սանձու լինին, Մառգարգարի ճյուղով զարնում են, անցնում է:

Կատաղած մարդու գլխին, եթե 40 օրում չկարողացան բժշկել, մայրը մոխիր է մազում, որ մեռնի:

Օձի շապիկը «փափախի» (գտակի) մեջ կարում են, որ գլխացավ չպատահի:

Արևը մայր մտնելուց հետո մակարթ դուրս չեն տալիս, որ մածունը մակրթվի:

Յանքի ժամանակ կրակ դուրս չեն տալիս, որ ցանքը լավ լինի:

Գորտնուկից առողջանալու համար գորտնուկի համարով զարի կամ ազոթում ցանում են, կամ մեռելի պատանքի մեջ լցնում: Գարու չորանալու հետ չորանում է և գորտնուկը:

«Մայխոցին» (մայխսին) սանդերը դուրս չեն տալիս, որ գառները չքամոտին, նույնպես և խնոցին, որ կարագը քիչ չլինի:

Մայխսի յոթին, գիշերը, խորոզխոսուն (հավախոսուն) լողանում են, որ ջուրը տանի ցավ ու շոռը:

Կարկուտ գալիս՝ աղ են վերև ցցում, որ կարկուտը անձրևի փոխվի:

Տան բարախաք

Տան բարաքաթը պահելու համար՝

Թթխմորը դուրս չեն տալիս:

Մի բան ծախելիս կամ փոխ տալիս, նրա մի մասը կտրում պահում են:

Աղքատին ամբողջ հաց չեն տալիս:

Երեկոյին տունը չեն ավելում: Եվ եթե ստիպված լինին ավելելու՝ ավելի ծայրը ճրագի վրա մի քիչ վառում են:

Գիշերը հացի սփռոցը դուրսը թափ չեն տալիս:

Աղբը գիշերը դուրս չեն ածում:

Նույն նպատակով անձրևի ջրով լվանում են ոտները թոնրի մեջ կախած:

Կրակի վրա ջուր չեն ածում, որ օջախը չմարի՝ առանց շափրվի:

Մայիսին 10 օր քար են շինում և պատերին կպցնում, որ օթրի բարաքաթը ավերանա:

Տան բարաքաթը շափափանալու համար ինչ որ վերցնում են, ասում են. «աստծու խաչը վրադ»:

Պատի երեսին ջուր չեն սրսկում, որ շաղբատանան:

Տան մեծը մեռնելիս ոտը լվանում, ջուրն ածում են սնվածքը, որ տան բարաքաթը մնա:

Հացը շթանկանալու համար կացինը ուտը դուրս չեն գնում:

Հյուր

Հյուր կգա՝

Երբ քիթ ու բերանը քոր գա:

Երբ հաց եփելիս գունդը, կամ հաց ուտելիս պատառը ձեռքից վայր ընկնի:

Երբ կատուն լվացվի:

Երբ երեխան ոտներին միջով նայի:

Երբ աղբը պաղի:

Երբ ուտը խաղա:

Երբ գոգնոցի կապը քանդվի:

Երբ վառած մոմի ծայրին բարակ շյուղեր մնան:

Երբ դրգալը ձեռքից վայր ընկնի՝ տղամարդ հյուր կգա:

Երբ բապուճը ոտքից ելնե՝ կնիկմարդ հյուր կգա:

Երբ «թերթերունքը բեռ վերցնեն» (թերթեանունքը ճպոտտին) հյուր կգա, յուր հեռ բեռներ բերելով:

Երբ դունչը կեռա՝ միրքավոր հյուր կգա:

Երբ երգիկից շունը ներս նայե՝ թուրք հյուր կգա, և այն էլ այն կողմից՝ դեպի որ կողմը որ դառնա շունը:

Հյուրին շուտ հեռացնելու համար նրա ոտնամանների վրա աղ են ցանում, կամ ծածուկ ալյուր են ցանում գլխին:

Հյուրը սեղանի վրա անձեռոցիկը չի ծալում, որ ուշ-ուշ չգա:

Ճանապարհորդ

Եթե մինի ոտքը քոր գա, ճանապարհ կերթա:

Ճանապարհորդը շուտով վերադառնալու համար՝

Ճամփու պաշարից հաց են գողանում:

Յուկից ջուր են սրսկում:

Բաղանիս են գնում:

Տուն չեն ավրում՝ մինչև նրա մի գետ անցնիլը:

Գուշակելու համար թե ճանապարհորդը ուշ թե շուտ կգա՝ երեխային քորել են տալիս յուր գլուխը, եթե հեռու քորեց, ուշ կգա, իսկ եթե մոտիկ՝ շուտ կգա:

Որպեսզի ճանապարհորդը չվերադառնա՝ հետևից պուտուկ են ջարդում:

Ճանապարհորդի բարձը կամ շորերը վերցնում են իրենց սեղից, որ դժգոհ չհեռանա:

Մազ

Մազը երկարելու համար մայիսի 7-ին եթե անձրև գա՝ հերարձակ կանգնում են անձրևի տակ:

Նույն նպատակով բաղանիսում գողանում են երկար մազեր ունեցողի ջրից և իրենց գլխին ածում:

Եվ կամ՝ երկար մազեր ունեցողի մազերն անզգալի կերպով աշ ձեռով բռնում են և երեք անգամ տակից անցնում են:

Եթե երեխաներն աղչիկներին մազերին ձեռք տան՝ մազերը կթափին:

Մազերը երկարելու համար ուտում են ճիւ պսնիք կամ մսի ճիւ:

Աղչիկներն ու կանայք այր մարդկանց գլխարկ չեն ծածկում, որպեսզի մազերը չթափին:

Կտրած մազերը վայր չեն թափում, որ գլխները չցավի:

Ատամ

Գոշտ տեսնելիս պուտուկները սեղմում են, որպեսզի գորտերը ատմները չհամրեն, ապա թե ոչ՝ շուտով կթափին:

Եղունգ

Կտրած եղունգը թոնրի շուրթը թաղում են և ասում.
«Եղունկ, դու ֆոս կեցի,
Ազամ, դու վկա կեցի.
որպեսզի վերջին դատաստանի օրը գան իրենց գտնին»:

Եթե ահանջը կանչե, այդ նշանակում է, որ իբրև բամբասում են՝
Եթե թոնրի մեջ հացը ծակի, «չար բերան կբացվի»՝ նոր բամբասող
կերևա:

Հաջողություն և անհաջողություն

Եթե աջ աչքը խաղա՝ գործը կհաջողի, իսկ եթե ձախը խաղա՝ չի
հաջողի:

Եթե «չուխտ (զույգ) սապո գա», խեր (հաջող) է, եթե «թաք»
(կենտ)՝ ձախ, անհաջող:

Եթե աջ բուռը քոր գա, փող կմսխե, իսկ եթե ձախ բուռը քոր գա՝
կստանա:

Եթե մեջքը կեռա՝ գործը կհաջողի:
Փոնչտալիս խաչակնքում են երեսը՝ որ գործը հաջող գնա:

ԲԱՍՏԻ ԵՎ ՃԱԿԱՏԱԳՐԻ ՄԱՍԻՆ. ԵՐԱՋ, ՏԵՄԻԼԻ ԵՎ ԹՈՎՉՈՒԹՅՈՒՆ.

Ախալքայաքի գյուղացի հայ ժողովուրդը սաստիկ հավատում է
բախտին և ճակատագրին: «Թյակչար ղամյաթ է (բախտ) զլլի ու զլլի՝
ճակտի գիրն էտ է, ինչ գուղես՝ էրե», ասում է նա խորին համոզմամբ,
և այս երկու գաղափարն անշարժության մեջ է պահում նրան: Ամեն
մարդ ունի յուր ղամաթը, բախտը, որովհետև նախքան ստեղծվիր, նրա
ղամաթն է ստեղծվում:

Պատմում են, թե Մովսես մարդարեն խնդրել է աստծուց մի բան էլ
ինքն ստեղծել, և ստեղծել է օթիզը անասունների գեթից: Իսկույն սրանք
թափվել են Մովսեսի վրա, որը վախենալով բացականշել է. թե՛ սա ինչ
բան է, ես ստեղծեցի, ինձ վրա թափան:

«Թող առաջ ղամաթն ստեղծեիր և ապա իրենց, խրատում է աստ-
ված, որ իրենց ղամաթով ապրենին»:

Միևնույն ժամանակ լիովին հավատում են, թե, եթե ղամաթ է՝ ուր
է ուր չէ՝ հազար էլ հետևն ընկնի, ոչինչ չի կարող շահել:

Ժողովրդի կարծիքով ղամաթը կամ զովյաթը մի երիտասարդ է,
ղո՞ւ ձիավոր:

Մի անգամ սա գնում ծեծում է Գոմ գյուղի Մկրտիչ Սարգսյանի
գուռը: Սա հարցնում է թե՛ ո՞վ է:

— Քու ղամյաթդ եմ,— պատասխանում է ղամյաթը:
— Հրաման ես,— հրավիրում է Մկրտիչը:

— Օր գամ, ինձի ինչդ պիտի պահես,— հարցնում է ղամյաթը:
— Կուտեմ, իմեմ, քեֆիս կաշեմ,— պատասխանում է Մկրտիչը:
— Չէ, ասում է, ես քու բովդ չեմ կրնը կենա:
Քշում, գնում է սրա մյուս եղբայր Կարապետի մոտ, ծեծում է դու-
ւր, և երբ միևնույն հարցը սրան ես առաջարկում է, սա պատասխա-
նում է.— Դեեմ կը սնտուկս, դայիմ կողպեմ կը, նյա կուտեմ, նյա կը
իմեմ, սալթ երեսիտ սելը կենեմ:

— Հա,— ասում է ղամյաթը,— ես քու բովդ կը բնակվիմ:
Այնուհետև նա սկսում է հարստություն գիղել:
Շատերը պատմում էին.

«Մարթուն մեկը շոպնուլենն կէնե էղե, սաղ տարին արուն-քրտինք
կը մտնի, իրեք սոմաո հաց անճախ կաշխատի, իրեն ընտանին կը պա-
հե: Կնիկը վիրա կըսե կը անոր, թը՝ իրեք սոմաո հացով ի՞նչ ապրուստ
զլլի, անք ժամ, ասսու փեշը բունե, բյալըի մե դուում՝ բանա: Ասիկ
մոթմոթա կը կնկա վրա թը՝ տեյմ՝ օր հիմի էլի ցամաք հաց կար ուտե-
լու, հէմի գործս թողնեմ ժամերն ընկնիմ՝ տեսնիմ ի՞նչ պիտի ուտես:
Չարասըղ ղելլե կերթա ժամ: Ժամեն օր գեչնեն, մե մարթմ՝ ասոր կըսե
կը թը՝ արի գնը ոչխարներու աշե, համրե տես թամամ է՝ քելի մե
սոմամ՝ ցորեն կուտամ: Ասիկ վաղպե կը տուն կնկանը հարցնե կը թը՝
էրթամ: Կնիկը կըսե՝ ինչի՞ շես էրթա, ատտից հավել պիտի տան,
աշխրքին բանն է: Աս շոպանը գուգա օր էրթա, մարդը կըսե. «Չէ, ախ-
պար, ութը կոտ կուտամ, ավել շածե»: Ասիկ կենա գուգա տուն, կնկանը
հարցնե կը թը՝ էրթա՞: Կնիկը կըսե. «Սոմամ՝ օր չի տա՝ թող ութը
կոտ ըլլի, ատ ա քիչ բան չէ»: Ասիկ ետ կը դառնա օր էրթա, մարդը
կըսե կը. «Ջուխտըմ շարուխեն ավելի շեմ տա, գուղես գընը՝ գուղես մի
էրթա»: Ասիկ կենա գուգա կնկանը կը հարցնե: Կնիկը կըսե կը թը.
«Գլխարար, թող ջուխտըմ շարուխ ըլլի, ոտվիթտ էլ է կը ծածկե»: Ասիկ
գելլե կերթա: Կերթա կաշե կը օր սյուրուն մե շարի-չիման տեղմ՝
կարծե՝ ջահիլ տղամ՝ ալ մուղաթ կենա կը:

— Ախար, դուն վո՞վ ես, օր աս մարդուն ոչխրտանրը մուղաթ
կենաս կը,— կըսե,— անիկ ինձի ղրկեց, օր գամ ես մուղաթ կենամ:

— Ես անոր գյովյաթն եմ,— կըսե տղան:
— Դու օր անոր գյովյաթն ես, իմ գովյաթս ո՞ր է,— հարցնե կը
ատ շոպանը:

— Տիա անտեղ ծառին տակը քներ է,— կըսե կը գովյաթը:
Ասիկ գելլե կերթա, տեսնի կը օր ղորթ ծառիմ՝ տակ ջահիլ տղամ՝
քնած է: Կըսե՝ կա-չկա ասիկ իմ գովյաթս է: Չորի կը առաջը գուլա,
քնած է:

աղաչն կը թը՝ նթխերս կտրեր է, ո՞ւր ես անտեր անտիրական թողն, ընկեր քնն: Դովլյաթը կը զարթնի, կըսե. «Ի՞նչ գուզես»: Թը՝ ամուր հացի կարոտ ենք մնացե, մե ճարքմ էրե: Դովլյաթը մե ձեռքը մե փարամ՝ կը բռնե, մեկալին տասսը փարա, կըսե. «Աստնցեն մեկն առ գնը»: Զուպանը մտածե կը թը՝ տասն օր առնե, մեկալ անգամ էրես շափ ունե- նա բան ուզելու, մե փարան կառնե:— Ագահութեն օր չէրիր, մե փարան առար, հետդ գուզամ,— կըսե դովլյաթը: Զուպանը գելլե գուզա, գուզա տեսնի կը օր էրկու: տղա ճամփին օրթան ծեծկըվին կը: Կերթա քովերը գիմանա, օր մե քարմ՝ էն գտե, անոր հմար զարկվին կը՝ թե վերն առնե: Հանե ան մե փարան, կուտա ատոնց կառնե քարը, ցկե կը ջեպը: Գուզա գտնի ոչխարի տիրոջը կըսե կը թը՝ գնացի տեսնեմ մե ջահել տղաս՝ մուղաթ կենա կը, հարցուցի իմացա, օր քու դովլյաթդ էտ է էղած էղե, ալ ինչի՞ ինծի զրկեցիր, անիկ մուղաթ կենա կը: Ասիկ շափե մեկեն երեք սոմա ցորեն կուտա կը ատոր: Աս մարդը ուրախ- ուրախ կերթա տուն, ցորենը լըլի կը ամբարը, քարն ա հանե թնե կը թյարաքը: Գիշեր օր գըլլի, կաշին օր քարը լուս կուտա կը:

Մե գիշերմ՝ ա բաղրկյանի մեկը բեռները թափե, գուզե օր կրակ էնե: Կաշե՝ հետուն մե լուսմ՝ կէրեա, գուքա օր մե անթեղմ՝ ուզե: Գուզա դուզ աս շոպնին տունը, նես կը մտնի, կաշե օր մե քարմ՝ թյարաքը լսի մեջ կը վառի, օսահաթ հասկընա կը, օր անգին քար է: Մեկեն ի մեկ կըսե կը թը՝ տասսը հաղար օսկի կուտամ ատ քարին, կուտա՞ք:

Անոնք ա լեզվին կը կապեն: Ասիկ օսկիքը կը համրի, կառնե քարը կերթա: Հըմր շոպնին կնկանը աչքը կը խմե, թեղմ՝ քաղաքը ծախե կը ատ անգին քարը, օսկիքը կը բառնա, դառնա գուզա կը կենա աս շոպ- նին տունն, օր մե հնարքովմ՝ կնկանը փախցնե, փարոցն ա, թը կընը, տեր բլլի: Գուքա գիշնի, նըստին դոնուշմիշ գլլին, աս բաղրկյանը գուզի օր շոպնին վարամ բերել տա, վերցնե կըսե կը թը՝ անխելը, տասսը հաղար օսկու առած քարտ տասնհինգ հաղարի ծախեցի:

— Անխելքը դու ես,— կըսե կը շոպանը, — ես մի փարիմ՝ էի առե, տասսը հաղարի ծախեցի:

Բյաղրկյանը աս օր գիմանա՝ օսահաթ վարամ կը բերե, մեռնի կը: Ասոր աշխրթին մալը, դովլյաթը մնա կը շոպնին: Արթը ատոնք անտից էտե իրենց դովլյաթեն ձեռք շեն վերցնե վիրա, ժամ կերթան ու անոր հմար աղոթք կիսենն:

Ղամյաթը տուն հրավիրելու համար դեկտեմբերի 31-ին աղջիկները հեծնում են ախիշը և այսուայնկողմ վազում ասելով. «Բախտ, սարն ես, ձորն ես՝ էկե»:

Նոր տարու օրն էլ տան պառավը դնում է սալի մեջ «տարին» (մի

մեծ խմորեղեն), վրան մեղր լցնում և դավազանը քոթքոթացնելով դուրս գնում, դառնում դեպի արևելք և ասում. «Դովլյաթ, սարն ես, ձորն ես՝ արի տուն»:

Երեկոյին զանգերը խփելիս ծալքի դռները բաց են անում, որպեսզի դովլյաթի դռներն էլ բաց լինի:

Վառած հաց են ուտում, որ դովլյաթավոր լինին:

Ինչպես ասացի, ժողովուրդը սաստիկ հավատում է ճակատագրին, իբր աստվածությունը մարդը դեռ չծնած, դրել է նրա ճակատին նրա ամբողջ կյանքը, որից խստորելու ոչ մի հնար չկա: Ըակատի վրա երևացող կարերը նա համարում է ճակտի գիր և լուելյայն հպատակվում յուր վիճակին. «Ծակտիս աս էր գրած, ի՞նչ էնեմ»:

Պատում են, թե մի վարժապետ մայիսի 7-ին յուր աշակերտնե- րին զբոսնելու է տարել: Հանկարծ զլորած քարը դիպել է մի երեխայի և սպանել: Երբ սրա ծնողները պահանջել են վարժապետից իրենց որդուն, սա աղաչել է աստծուն, որի հրամանով, սպանված երեխան կեն- դանացել է և ասել ծնողներին, թե ի՞նչ եք ուզում ուսուցչից, որ կողմը փախա, քարը ետևիցս եկավ, իմ ճակատագիրն էլ այդ էր:

Ժողովուրդը սաստիկ հավատում է և երազներին: Նրա կարծիքով աստվածությունը, սրբերը իրենց կամքը հայտնում են մարդկանց երազների մեջ, երբեմն իրենք իսկական և երբեմն սպիտակամորուս ծերունիների միջոցով:

Երազների միջոցով մինչև անգամ սիրահարվում են: Ոչ միայն հավատում, և սպասում են, որ Ս. Սարգսին աղի կլիկ ուտելուց հետո, «ղոմյաթ էղած» աղջիկը կամ տղան գա ջուր տա, այլև ուրիշ ժամանակ աղջիկ և տղա երազներում տեսնում են միմյանց և «փութա» են տալիս. փոխարինում են մատանիները, երգվում միմյանց գտնել և ամուս- նանալ:

Այնուհետև երիտասարդը երգելով, օրինակ ասում է.

Կանչենք, Օխտն ախպար, ինծի իմտատ գա,

Աստվածածնա շնորհքով յարս ինծի տա:

Շրջում է գյուղից գյուղ, դավառից դավառ, ամեն տեղ ազատ մտնում, աղջիկներին տեսնում, որ փութա տվող աղջկան գտնի, իսկ աղ- ջիկը հայտնելով իրեն ծնողներին իրեն փութա տալը՝ հրաժարվում է ամուսնանալ, մինչև «ղոմյաթ» եղած նշանածը չգա իրեն չգտնի: Ժո- ղովուրդը շատ համակրանքով է վերաբերվում դեպի փութա տված- ները, և միջոց է տալիս նրանց միմյանց գտնելու: Այսպես աղջկան շեն

ստիպում ամուսնանալ և թույլ են տալիս գնալ տեսնելու օտարական ճամփորդին և կամ ում նա կցանկանա, իսկ սիրուհուն փնտրող երիտասարդին ամեն տեղ ընդունում և հյուրասիրում են:

Երազների միջոցով ստանում են և իմաստութուն, շնորհք, և օտար լեզվով խոսելու ընդունակություն:

Պատմում են, թե Հակոբը պատրիարքը շատ բթամիտ և անուս մարդ է եղել, մի օր մնացել է մայր եկեղեցու մեջ և աղոթելուց հետո քնել: Մայր Աստվածածինը երազում տվել է նրան բաժակը ըմպելու, սրով և նա իմաստութուն է ստացել:

Բույր նետ դնողները, զարի ցկողները, փիլթա թափողները և այլն, հավատացնում են, թե երազում երևացել է իրենց այսինչ սուրբը կամ Մայր Աստվածածինը և իրավունք է տվել իրենց այսինչ թովչությամբ պարտպելու:

Գանձայի Աթոյենց Մինասը երեխայության ժամանակ, երբ վրաց մի գյուղում ծառայում էր, վրացերեն չէր հասկանում, ուստի և սխալմունքներ էր գործում և թակվում: Մի օր ևս այդպիսի պատճառով թողել էր ծառայությունը, փախել, մտել եկեղեցին, որ այնտեղ ծածուկ գիշերի և առավոտ փախչի գա տուն: Գիշերը երազում տեսնում է Ա. Կարապետին, որ ասում է իրեն. «Մի վախենա, օղո՛ւլ, մի վախենա, առ իսի կորեկը կէ, լեզուն սորվիս կը»: Սա առնում երեք բուռ կորեկ է ուտում, առավոտ զարթնում է տեսնում, որ կարող է վրացերեն վարժ խոսել և հասկանալ: Գնում է գյուղ և շարունակում յուր ծառայությունը:

Թեև գյուղերում երազահանությամբ պարապողներ այժմ չկան, բայց զանազան պառավներ հռչակ են ստացած երազներ բացատրելում և շատերը, մանավանդ հարսները, դիմում են նրանց իրենց տեսած երազները բացատրելու:

Պետք է ասել և այն, որ այս զավառի թե տղամարդիկ և թե կանայք, մանավանդ պառավները, հաճախ երազ են տեսնում և առավոտ զարթնելիս առաջին բանը երազը պատմել ու բացատրելն է լինում: Ոմանք էլ հպարտանում են թե իրենց երազը «չատալ» է, նույն օրը կկատարվի:

Երազահաններ ժողովրդի ձեռքերին չկան, սրովհետև շատերը կարգալ շփտեն, միայն տիրացուներից և քահանաներից ոմանք գործ են անում «Հավախօս» կոչված երազացույցը: Իսկ ինքը ժողովուրդը բացատրում է երազը յուր փորձերի վրա հիմնված: Այսպես, օրինակ, եթե երազում հաց տեսնեն՝ դա «դովլյաթ», հարստություն է նշանակում, շուր՝ բարություն, ատամ քաշել՝ ազգականի մահը, մահը՝ երկար կյանք, փող՝ ցավ և այլն:

Ժողովրդի, մանավանդ կանանց նախազգացումն էլ բավական զարգացած է, և մեծ հավատ են ընծայում դրան. «Հոգիս վկայե կը», «Հոգին Սուրբ տուն տվեց» ասում են նրանք:

Ժողովուրդը հավատում է և տեսիլքի. իբր մարմինն անշարժ մնում է, իսկ հոգին գնում, թափառում դրախտ, դժոխք և այլ տեղեր, ապա նորից վերադառնում յուր տեղը:

Այս մասին մի բզավետցի պատմում էր.

«Սղորմած հոգի դամյուրջի Դիվինն ինչ է, այսի մեր Պողոսին հարը, ատոր հետ վախտովմ ալի (որս) կերթայինք կը. օրմ՝ ա, ինչը էղավ Ապուլու դշոշին բռնտիկ էղնիկմ՝ զարկինք: Գնացինք թց բունենք, աշեցինք օր զայսն անցավ, իսթին-ինթին ընկանք, հոգիքս էլավ ժուռ զալեն, բանմ ա շգտանք: էլանք քոռ փոշման էկանք տուն: Քանիմ՝ օր անցավ, մեմ՝ ա մե օրմ՝ յարքնա առ Դիվինը հիվնացավ, քսանը շորս սհաթ մեռածի պես ընկավ, սալթ սիրտը տըքտըքար կը: Վախեցանք թը մեռնի կը: Մեկալ օրը բիրտան-բիրա էլավ նստավ, արթը խնդլներուս եղանք: Հարցուցինք՝ ախպար, առ ի՞նչ էղավ քեզի, քիչ մնաց թե տամյա էնեինք, հակիաի իսկ տղաքը քյուլլի շուր կոռեցան:

Անա թը՝ ախպար, հեչ մեմ չեք հարցնե, թե ի՞նչ էղավ: «Ի՞նչ»:

— Ը՛, մեղա քեզի աստված, (խաշակներում է):

— է, ախպար, ի՞նչ է, մեմ՝ պատմե տեսնինք:

— Ի՞նչ պատմեմ, պատմըլի՞ կը օր պատմեմ:

— Ախր ի՞նչ է էղե, հոգինեքս մի հանե, է՛:

— էրեկ չէ առջի օրն օր մառալը կպուցինք ի՞նչ է, ըշտը ինձի տարան անտեղ, շորս բուրս աշեմ տեսնիմ, օր մե դոճա բաղմ՝, շայիր-չիման Դիպա արեւլք աշեմ օր մե-մե մարթմ՝ օսկի աթոռքին վրա նրստեր է, ձերմակ միրուր: Ինձի տեսավ թը չը՝ դարձավ ըսաց թը՝ իմ մարալս զարնող ավճին դո՛ւն ես: Սա ա զվախեցա, շիմ-շիտակ ըսի թը՝ ես եմ: Անիկ աշեքը խուրտեց, ըսաց թը՝ այտի կճուճները տեսնիս կը՝, ձեքտ մեմ՝ մեչը կոխե, աշե ի՞նչ կա: Աշեցի յազմ՝ կճուճմ՝ իսպես սրով շարած էր. ձեքս մեջերը կոխեցի, աշեմ մի քանիսը լիքն են թեփով, մե քանիսը կիսատ. մեկին ա տակը բուռ է մնացե. գիտե՞ս, — ըսաց, — ատոնք օր կան՝ մարթուս յոմրն (կյանք) են, ում թեփն օր պարպի, ան մեռնի կը, այտի մի բուռ մնացածը քուկըս է, տարիմ էտե պարպի կը, ինչի քիչմ ա հոգիտ միտքտ չես բերե, ու կերթաս ուրիշին թյովանք կը նետես: Աս օր ըսաց, սարսմբեցա, բիրտան ետ զարթնա: Հեչ մեկս ա չհավտըցինք, հըմը ինչ էնես օր, տարին պտըտեց էկավ, ան օրը մարդն ա ավանդեց: Ատով հավտըցինք, օր մարալին

ընկած տեղը սուրբ է: Հիմի մենք տերտերին հարսն ա օր քանի քյատյակ ընկնի, անտեղ լուս տեսնի կը: Մենք ա անմեն տարի գարունը ուխտ կերթանք կը ֆոն, մեռնիմ սուրբ զորութանը, շատ զորավոր է»:

Կան և այնպիսի մարդիկ և առավելապես կանայք, որոնք հաճախակի են տեսիլք տեսնում, այսպիսիներին կոչում են քյաղյակ ընկնողներ: Սրանք իրենց համարում են մի սրբի «ղու» և միայն նրա (իրենց ազալի) կամքն են իմանում և հայտնում ժողովրդին: Այսպես Բզավետ գյուղի քահանայի հարսը իրենց տան սրբի «Օխան ախպօր» զույն է: Շարաթը մի կամ մի քանի անգամ, առավելապես շաբաթ երեկոներին, սրբի առջև աղոթելիս, սկսում է զողողողալ, հանկարծակի ընկնում է սրբի առաջ, ուսներն ու ձեռքերը խփում գետնին, բերանից փրփուր արձակում, գոչում և անզգայացած մնում: Գյուղացիները, որ երկյուզած ու զգացված կանգնում են մոտը, հանում 10 կոպեկից մինչև մի ռուբլի ձգում են նրա ախտի մեջ և ձեռք դնելով այդ կնոջ վրա հարցնում, թե՞ ազաղ այսինչ հիվանդի, գործի և այլն մասին ինչ կհրամայել: Սա էլ մի որևէ բան, հաճախ բոլորովին անկապ ու անիմաստ, ասում է: Մի քանի գյուղերում էլ քաղաքի սրիկաները սաստիկ ծեծել են սրանց քյաղյակ ընկած միջոցին, որոնք ծեծին շփմանալով վեր կացել փախել են:

Ժողովուրդը հավատում է և «խորթլախներին», իբր անհավատների նչեցյալները գիշերները գերեզմանից մարմնով դուրս են գալիս և ընդունելով առավելապես շան և այլ կենդանիների կերպարանք շրջում են:

Սրանք հաճախ հետևում են գերեզմանների մոտով անցնողներին և թեպետ վնաս չեն հասցնում նրանց, սակայն երբ հետևիցը գնում են տուն, առավոտյան դիակ են դառնում և ձգվում տան մեջ: Այսպիսի դեպքերում բաճով կտրում են «խորթլախի» գլուխը և բանալով տան մեջ մի նոր անցք, այդտեղից են հանում դիակը ու տանում թաղում, որ այլևս «խորթլամիշ» չլինի:

Երբեմն էլ աստված պատժում է կանանց՝ նրանց մարդագալ զարձնելով: Երբ դրանք գիշերը իրենց երեխաներին քնեցնելուց հետո դուրս են գալիս, երկնից գալի մորթի է ընկնում նրանց վրա և նրանք գալ են դառնում, գնում նախ իրենց, և ապա հարևանների երեխաներին ուտում: Նրանց առաջ, ասում են, ամեն փակված դուռ բացվում է և նրանք ամենայն ճարպկությամբ անցնելով ամեն մի դժվարանցանելի տեղից, քանդում են երեխաների բալուղոցները և տանում երեխաներին ուտելու, և կամ բաց են անում նոր գերեզմանները և մեռելներն ուտում: Ոչ մի զենքով չի կարելի նրանց սպանել կամ վիրավորել:

Այսպես՝ միայն գիշերները մարդագալ, իսկ ցերեկներ՝ նախկին

կիրը դառնալով, սրանք յոթ տարի տանջվում են և երբ յոթերորդ տարին լրանում է, գալի մորթին թռչում է նրանց վրայից և նրանք այլևս մարդագալ չեն դառնում: Ասում են, թե եթե կարողանան դրանց մորթին գտնել և վառել, նրանք այլևս մարդագալ չեն դառնա, սակայն նրանք այդ չեն ցանկանում և լուսադեմին տանում մորթիները մի ապահով տեղ պահում են:

ՊԱՍԵՐԸ, ՈՒՆՏ, ՈՒՆՏԱԳՆԱՅՈՒԹՅՈՒՆ

Ժողովուրդը համարյա հավատի էական մասը պաս պահելն է համարում. նրա համոզմամբ պաս շպահողը հայ քրիստոնյա չէ, ֆառմասն է (բողոքական): Ամենամեծ մեղքը նրանց կարծիքով, պաս ուտելն է. ավանդությունը ասում է, թե մի հարս քահանային յուր արած գողությունները, շնությունը, այլ շատ մեղքեր հեշտությամբ խոստովանելուց հետո՝ դժվարացել է մի մեղքը խոստովանելու: Վերջը քահանայի հորդորով ստիպմամբ միայն խոստովանել է, թե մի շորեքշաբթի օր սխալմամբ յուղի բերանին դրած հացից մի կտոր կերել է: Սակայն հետզհետե այս հավատը թուլանում է, որովհետև քաղաքացիները գյուղերում բացարձակ լուծում են պասը և ծիծաղում գյուղացիների վրա, որ պաս են պահում: Միևնույն ժամանակ շատերն էլ վիճում են գյուղացիների հետ և աշխատում ապացուցանել, թե պաս ուտելը մեղք չէ:

Ոչ միայն պասերը ատանց այլևայլության պահում են, այլև շատ պաս օրեր ծով էլ են պահում: Օրինակ, Սուրբ Սարգսին, մինչև ճաշու ժամասացությունը և այլն: Գեռ շատերն էլ կամավոր պաս են պահում և այս առավելապես հիվանդի առողջության կամ մի նպատակի հասնելու հույսով: Կամավոր պասերը «ոտք» են կոչում, օրինակ, Սուրբ Աստվածածնա «ոտքն եմ» բռնե, նշանակում է Սուրբ Աստվածածնա պասից դատ մի շաբաթ առաջ էլ կամավոր պաս եմ բռնել: Առավելապես պահում են հետևյալ կամավոր պասերը. ա. 9 դաս հրեշտակաց, բ. Խորթրթողի, Ս. Գեորգի ոտքը, գ. Ս. Հակոբա ոտքը (Սրբակոր), դ. Հրեշտակապետաց ոտք, Համբարձուժի ուրբաթ օրից մինչև վարդավառի կիրակին, բացի շաբաթ և կիրակի օրերը: Կամավոր պասերը պահելուց հետո նույն սրբին ուխտ են գնում:

Ուխտն անելն ու ուխտագնացությունը սաստիկ զարգացած է Ախալքալաքի գավառում:

Հիվանդի ամենազորավոր դեղը, սիրահարի ամենազորավոր միջնորդը, թշվառների մխիթարիչն ու հույսը ուխտն ու ուխտագնացությունն է: Մի հիվանդ կամ առավելապես նրա մայրն ուխտում է բոբիկ գնալ

սրբի դուռը, մի գառ կամ մի ոչխար մատաղ անել, մոմ վառել, մյուսն ուխտում է բողոտն կամ շոքած յոթ գյուղ կամ մի գյուղի յոթ դուռ մուրալ խունկ, մոմ և այլ իրեր և տանել այսինչ սրբի դուռը, մի ուրիշն էլ ուխտում է ճակատի ոսկիներից կտրել մի կամ մի քանիսը և սրբի դանձանակը ձգել և այլն:

Ախալքալաքի գավառում ուխտատեղիները շափից դուրս շատ են, գրեթե ամեն մի գեղնցիկ լեռան գազաթ, ամեն մի շրառատ, սիզավետ դաշտ, ուխտատեղի է, որոնց դերին գայիս է գարունը, ամառը կամ աշունը՝ գրոսնելու ամենալավ միջոցներին: Հիշենք ամենագլխավոր ուխտատեղիները:

Հայոց ուխտատեղիները

Ուխտատեղիների անունները	Ուր գտնվին ու ինչ լինելը	Ուխտագնացութան օրը և արդյանց ում պատկանելը
1. Ս. Գրեգոր Ավետոան	Կուննաշեթ գյուղի եկեղեցում, մի ձեռագիր հին ավետարան:	Աստվածածնին. արդյունքը պատկանում է Ախալքալաքի հայոց զպրոցին:
2. Ս. Հովհաննես	Գանձայի մոտ մի լեռան գազաթին:	Համբարձման:
3. Ս. Գեորգ	Սուղայում, Սրբի սարի վրա, հասարակ մի խաչարձան է:	Աշխարհամատրան կիրակին:
4. Ս. Գեորգ կամ Օզլան-վերան	Կարծախում, Գյոզգաղի լանջին, ժայռերի միջև. ուխտ են գնում ամուլ կանայք:	Աստվածածնա և Վարդա-վառի երկուշաբթի օրերը:
5. Ճգնավորի վանքը	Ախալքալաքի ձորում, գետի ափին, փոքրիկ մատուռ է:	Մայիսի 7-ին:
6. Տավշան թափի սուրբը	Ախալքալաք, Տավշան-թափա բլրի գազաթին:	Ս. Գեորգի տոներն:
7. Լուսավորիչ	Վաշխանի մոտ՝ Լուսավորիչ կոչված լեռան լանջին:	Կիրակի օրեր:
8. Խոսպիտ սուրբը	Խոսպիտի լեռան վրա:	Խուլզումա գնալիս:
9. Ս. Թեոդորոս	Թաքչայի ձորակում, ավերակ մատուռ:	Գարնան կիրակի օրեր:

10. Ս. Խաչատուր	Ապուլու լանջին:	Կիրակի օրեր:
11. Ս. Հակովբ	Գաղեշում, Խաչարձան:	Կիրակի օրեր:
12. Ս. Գեորգ	Գոմ գյուղում, խաչի սարի վրա խաչարձան:	Կիրակի օրեր:
13. Ս. Մինաս	Արագոձայում, քլրակի վրա մի խաչարձան:	Ձատիկն:
14. Ս. Սարգիս	Արագոձայում, բերդի պարսպի մեջ:	Կիրակի օրեր:
15. Աղքատ սուրբ	Փոքր Արագայում	Կիրակի օրեր:
16. Օխան ախպար	Բղավետ, քահանայի տանը յոթ ավետարան. քահանայի հարսը քյաղյակ է ընկնում:	Կիրակի օրեր, շահվում է քահանան:
17. Փոքրիկ Ավետոան	Գիլիֆ, քահանայի տանը, մի տպած փոքրադիր ավետարան:	Կիրակի օրեր, շահվում է քահանան:
18. Ս. Ավետոան	Ճանեղա, մի գյուղացու տանը:	Կիրակի օրեր, շահվում է տանտերը:
19. Ավետարաններ	Օյակերտ, քահանայի տանը. Մեծ Արագայ, մի գյուղացու տանը:	
20. Խաչարձաններ	Բղավետում, մինը գյուղի արևելյան կողմը, արտերի մեջ, մյուսը Արուլի ճահապարհին:	Կիրակի օրեր և Աբուլ գնալիս:
21. Ս. Հովհաննես. Մմինդա Իոաննես	Բարալեթից արևելահյուսիս, երկու վերստ հեռավորությամբ. Աբաուլ թափի հանգեպ. 6 վերջի հաստության, 4 արունակյունի քարե ճարե ճրկու պատվանդանի վրա զրված, ծայրին քարե խաչ: Պարսպուպատ է:	Համբարձման. թեև վրացոց ձեռն է և օգտվում է Բարալեթու վրաց կեղեցի, սակայն հայերի խունն բազմութուն թե Բարալեթից և թե շրջակա գյուղերից ուխտ են գալիս:
22. Սիրկ ավերակի մատուռ	Սիրկ ավերակ գյուղում գետի ափին փոքրիկ մատուռ է, դռան մոտ զրված է մի խաչքար, որի վրա քանդակված է 2 մարդ՝ ձեռներին մի խաչ բռնած:	Կիրակի օրեր:
23. Ս. Ստեփաննոս	Բարալեթ գյուղում:	Կիրակի օրեր:

Այս բոլոր ուխտատեղիներից ամենից հռչակավորն է Կոտնաշեթու Ս. Գրիգոր Ավետարանը, Վարդիու Ս. Աստվածածինը, Գանձաշի Ս. Հովհաննեսը: Սրանց տոներին գրեթե բոլոր գյուղերից, հեռուները նախընթաց, մոտիկները նույն օրը սալերով, ձիով, ֆուրգոնով և հեաիտան թափվում են ուխտատեղի: Առաջին բանը, մի ասն մեջ տեղավորվելուց կամ մի վրան խփելուց և կամ մի սալ վրան դարձնելուց հետո, լինում է գնալ սուրբը համբուրելու և եթե իրենց հետ բերել են թիթեղյա սիրտ, ձևոք, օրորոց և այլն, կախել խաչից կամ Ավետարանից: Հետո արդեն զբոսնում, խումբ-խումբ երգում, պարում են: Այս ու այն կալի միջից, առվակի ափից հնչում է դավուլ-գուռնի ձայնը, աղջիկների երգը, տղամարդկանց հոհոցն ու բարձր-բարձր խոսակցությունը, երեխաների խաղի աղմուկը:

Ուշ, գիշեր անցած, քնում և առավոտ շատ վաղ վեր են կենում բոլոր ուխտավորները, մեծերը զանները մատաղում, իսկ մյուսները եկեղեցի են գնում: Այստեղ եկեղեցու շուրջը, մանավանդ առաջն ու ճանապարհի երկու կողմը քաղաքի մրդավաճառները դարսել են ամենայն տեսակ մըրգեր՝ կաղին, քիշմիշ, լյապլյապու, արուկ, իվազ, խուրմա, արևածաղիկ, դդմի կուտ և ժամանակի թաց մրգեր՝ տանձ, խնձոր, ղեղձ և այլն: Մյուս կողմից դարսված են զլիսու յաղմաններ, թաշկինակներ, հասարակ սանրեր. կամ մատանիներ, փոփոլներ, բոշեր և այլն:

Այն կողմը հեռվում մի շինություն մեջ մի գինեվաճառ էլ գինի, օդի է բերել ու դարսել:

Սրանցից յուրաքանչյուրը ժամերգությունից դեռ առաջ ձայնը ձգել և փառարանում է:

- Ա՛յ լավ քիշմիշը, շատը դնաց, քիշը մնաց, հա՛:
- Իվազի լավը, իվազի՛...
- Իստեղ, իստեղ էկեր, Լուսավորչի դառներ (աղջիկներ):
- Պա՛րպավ, պա՛րպավ, խնձորի լավը պարպավ:

Սրանց միջից աչքերը մրգերին հառած անցնում են ուխտավորները, այս ու այն բանը առնելով: Եկեղեցու կամ սրբի դռան առջև մատաղ կտրողները մատաղներն են կտրում, այդ գյուղի երիտասարդներն էլ դոխեր են ծախում, որ առնեն մատաղ անեն: Շատ արժան, ղույզը 5—10 կուպեկ: Մի քանիսն առնում են աղավնիները և եկեղեցու դռան առաջ մորթում, ուրիշներ էլ, բայց շատ քչեր, բաց թողնում, որ թռչեն:

Ժողովուրդը լցվում եկեղեցին կամ եթե եկեղեցի չկա, հավաքվում սրբի շուրջը, ուր քահանան պատարագում է կամ ժամ ասում: Եկեղեցում քիչ աղոթելուց և մոմեր վառելուց հետո դուրս են գալիս և բեֆին, ուրա-

խաթյանը նայում: Եկեղեցում մնում են ծերերն ու պատավները, մեկ էլ նրանք, որոնք մի առանձին սպասելիք ունին սրբից և ուզում են իրենց աղոթքով և լացով նրա սիրտը դուր ձգել: Այս ու այն կողմ վառվում են կրակներ և մատաղի կաթսաները վրան դրվում. ժամկոչն էլ այս մատաղից այն մատաղն է վաղում և գառի ասն ու գլուխը, մորթին առնում, որ հողում սրբի վաճառեն: Պասահում է, ինչպես օրինակ Կոտնաշեթում, որ մատաղներից սրբի հասանելիքը նախապես վաճառում են գտակ կարողներին: Սրանք գալիս իրենք հավարում են և այն ոչ թե խնդրելով, այլ պահանջելով, սրովհետև նախապես ղնել են: Շատ անգամ մատաղ անողը տեսնելով գնողի կոպտությունը, չի ուզում տալ մորթին, որից և կոխվ, անբավակասություն է առաջանում:

Երբ ժամերգությունը վերջանում է և ժողովուրդը համբուրում է սուրբը և խաչհամբույր ձգում, որի զլխին քահանան կամ ում որ պիտի նսանի, օրինակ, գյուրոցի հոպարածությունը, կանգնած հսկում է, ցըրվում է մատաղ ուտելու:

Քահանան շտապում է մի մատաղից մյուսը հասնել և օրհնել ու լավ պատահներից ճաշակել:

Հաց ուտելուց հետո արդեն ուխտավորները մի քանի խմբի են բաժանվում. բզլատները, աղջիկ թե մանչ, կին թե սղամարդ, գնում շրջապատում են մրգերի սեղանները, մի քիչ բան առնում, և հետեն օտտում, հետևն ծակ-ծակ նայում բախտավոր գնորդների գնած մրգերին: Մի ուրիշ խումբ էլ շրջապատում է փիանկոն. սա մի կլորակ սեղան է, շուրջը միմյանցից մի վերջով հեռավորությամբ, երկու վերջովաչափ ձողեր ցցած և սրանց միջև զանազան Լժանագին իրեր դրած, օրինակ՝ մի քանի կոնֆետ, մի փոքրիկ հայելի, ծխախոտ, դանակ, գյուղացու մատանիներ, քթախոտ, թաշկինակ և այլն: Սեղանի տակ պտտվում է մի ձող սլաքով, որի ծայրը քսվում է սեղանի ձողերին: Հանողը վճարում է երկու կուպեկ, մի շարժումով պտտեցնում է ձողը, որտեղ որ կանգնի սլաքը՝ այնտեղ դրվածը ստանում է, բայց հաճախ պատահում է, որ սլաքը դատարկ տեղի վրա է կանգնում: Հարկավոր է կանգնել և դիտել, թե ինչ է արտահայտում նրանց երեսը, երբ տարվում կամ տանում են:

Մի քիչ հեռու փչում է տիկը և մի մասնավոր խումբ քեֆ է անում ու պարում:

Մի ընդարձակ տեղ էլ հնչում է դավուլ-գուռնան և տղամարդիկ ու կանայք: Երիտասարդներ և աղջիկներ միմյանց ձևոք բռնած աշխուժով պարում են: Պարի շուրջը և մեջը հավաքվել է երեխաների, ծերերի, պա-

ռավենքի խումբը և կանգնած նայում և այս այնքան մոտից, որ շատ անգամ դիպչում են պարողներին:

Երիտասարդների և աղջիկների խմբեր բաժանվելով ընդհանուր պարից, կամ առավելապես ընդհանուր պարի ընդհատման ժամանակ պար են բռնում և երգելով պարում. նախ մինը միայնակ երգում է երգի մի տողը, հետո մյուսները խմբովին կրկնում են այդ «կ'առնեն»: Երբ ձանձրանում են պարից, որ այնուամենայնիվ շատ երկար է տևում, ընդհատում են և սկսում գոտեմարտ: Գյուղական տանուտերը, գատավորները, զլավան, որոնք եկած են իբր կարգ պահելու, բաց են անում մի ընդարձակ ասպարեզ և երկու հայտնի ճարպիկ երիտասարդներ բերում գոտեմարտելու: Սրանք մինչի մեջքը մերկանում են և ոտաբորիկ մի երկու շրջան անում միմյանց հանդեպ և ապա կալում: Ժողովուրդը քանի գնում, մոտենում է սրանց և գրեթե տեղ չի տալիս ազատ շարժվելու, գյուղական պաշտոնական անձինք էլ մտրակներով խփում են հանդիսականներին, գոտեմարտողներին ասպարեզ տալու, որոնք ահագին աղմուկով և միմյանց հրհրելով հետ են փախչում ու նորից գալիս գոտեմարտողների բերանը մտնում և այս գլխավորությես այն նպաստակով, որ եթե անհնձն, թե իրենց գոտեմարտիկը թուլանում է և պիտի ընկնի, վրա թափին բաժանեն և հաղթությունը անորոշ թողնելով՝ թե իրենց և թե իրենց գոտեմարտիկի անունը չկտրեն: Պատահում է, որ երբ հաղթվողի կուսակիցները վրա են թափվում նրանց ետ մղելու, որ իրենց գոտեմարտիկը հաղթանակով դուրս գա ասպարեզից այստեղ ընդհարվում են երկու կուսակցությունները և ծագում է կռիվ, պաշտոնական անձինք շահվելով դեպքից՝ մտրակի տակ են առնում ատած անձերին և տուր թե կտաս, ընկնում են ժողովրդի հետևից և ոտներին խփելով հեռացնում, ցրում, սակայն սրանով մի սարսափելի իրարանցում են գցում, ժողովուրդը միմյանց հրհրելով, ճվալով, բոբբոռալով այս ու այն կողմն է վազում:

Վերջապես գոտեմարտը մի քանի անգամ կրկնելուց հետո վերջանում է: Քիչ հանգստից հետո սկսվում է ձիարշավը՝ շիլիթ: Երիտասարդներ, տղամարդիկ ձի նստած շրջան են անում ընդարձակ ասպարեզի վրա, որի շուրջը խոնավել կանգնել է ժողովուրդը: Քշում, շափ են ընկնում միմյանց հետևից և ձևորի շիլիթը գցում խփում մինին և հետ դառնում փախչում ասպարեզի ծայրը: Վերջինս շիլիթը ձգած միջոցին յուր շիլիթը դեմ է բռնում և եթե կարող է խփում, ետ մղում, հետո ինքն էլ նրա հետևից ընկնում և խփում նրան յուր շիլիթով մինչև առաջնի ասպարեզի ծայր հասնելը: Այս տեղիս շիլիթավորները պաշտպանում են իրենց սիրելիներին և ընկնում շիրաժների ետևից: Ժողովուրդը կանգ-

նած գտնում է ճարպիկներին և ծիծաղում անշնորհների վրա: Գյուղական պաշտոնական անձինք էլ մտրակներով խփում են ժողովրդին և ասպարեզից հեռացնում:

Հեռաբերի է այս ժամանակ մտնել աղջիկների, հարսերի խմբի մեջ և լսել, թե նրանք ինչպիսի գովասանք են թափում շիլիթում, գոտեմարտում հաղթությունը դուրս եկողի վրա:

«Այդիկ իմ սիրեկանս է», պարծենում է մեկը:

— Ա՛յ ֆողը, դուն ա ի՞նչ ես օր անիկ քեզի առնե,— խշտում է մյուսը սրան:

«Գուն շա՛տ լավմ՝ էս, մարաի շարլիպա»:

Բայց դուք նայեցեք, թե ինչ հպարտություն անցնում է հաղթություն տանողը աղջիկների և հարսների մոտով: Շատերի սերը գրավում է նա հենց այդ օրը:

Տանուտերը, գյուղական դատավորը հազիվ շիլիթի և գոտեմարտի աղմուկներից ազատված՝ ուզում են քիչ նստել հանգստանալ, մեկ էլ գալիս են գյուղացիները և հին գանգատների մասին խոսում կամ մի նոր գանգատ անում:

Գլավան հրամայում է զրազրին գրեյ մի հրաման, անում է մի տնօրինություն և վերջացնում:

Մինչ այս, մինչ այն, արևն արդեն խոնարհվում է և ուխտավորները կամաց-կամաց քաշվում են իրենց տեղերը:

ՆՇԱՆԱՎՈՐ ՏՈՆԵՐ

Նոր տարի կամ կաղինը

Նոր տարին մոտենալիս կանայք իրենց շահով տված փողից վերցնում են և իրենց երեխաների համար նոր հանդերձներ են պատրաստում, որովհետև գերդաստանը շատ հազիվ է պատահում, որ կանանց կամ երեխաների համար հանդերձներ անեն:

Նոր տարու նախընթաց օրը առավոտ վաղ տուն ու դուռ մաքրում, խտակում են: Փոքր հարսը սովորականից ավելի խմոր է հունցում, և թոնիրը վառում: Անմիջապես գալիս է ապլան և մախոխապուր գնում վրան, նույն և ձիթով տալմա, սիրբալի ու լոբի մյուս օրվա համար: Երբ կերակուրը եփվում է, ապլան սկսում է մեծ հարսի հետ հաց թխել և երբ ավարտում է սկսում է նոր տարվա համար պատրաստություն տեսնել: Նախ բավականաչափ անհստոնով բաղան է թխում և հետո վերցնելով մի մեծ գունտ խմոր, ազոթում է. «Երկնավոր թագավոր, դու բարով խերով տարի էնես, դու հալեորիս ու տղոցս, հարսներուս ու թոռներուս հետ շատ տարիներու նշասպ էնես, մեկուճար աղջկանս ա մէ բարի դուռմ' բանաս»: Հետո մի հատ մի կոպեկանոց խրում է խմորի մեջ, մի լավ գնտում, և ապա բանում, երեսը ձեռքով նշխեր անում, ու քիշմիշով ու ընկուզով զարդարում: Հետո «Հիսուս Քրիստոս» ասելով գնում է այդ «տարին» հացառի վրա և խփում թոնրի շուրջը:

Մինչդեռ ապլան «տարին» է պատրաստում, ամեն մի հարսը մի-մի վապիլ (տիկնիկ) և մի-մի Բիսա (քսակ) է շինում խմորից և ընկուզով ու քիշմիշով զարդարում: Հետո նշաններ են անում, թե այսինչ վասիլը այսինչ հարսի, և այսինչ քսակը այսինչ ամուսնունն է: Ապա մինը եզների համար շորս պտուկ, երրորդը՝ հավերի համար կրիչ (չրի աման), չորրորդը՝ ցորենի համար հոր՝ մեջը ցորեն, գարու համար դարձյալ հոր, մեջը գարի, հինգերորդն էլ մի խնոցի յուղի համար: Հետո ապլան այս բոլորը խփում է թոնրի շուրջը և փայտերով ծածկում թոնիրը, որովհետև արդեն հովացած է լինում:

Մի քիչ հետո գրեթե ամբողջ գերդաստանը հավաքվում է այդ թոնրի շուրջը և անհամբերությամբ սպասում, թե ի՞նչ պատգամ պիտի լին այդ Պյուսթյան հորից: Վերջապես ապլան բաց է անում թոնրի բերանը և բոլորի հայացքները ուղղվում են թոնրի մեջ և ուրախության աղաղակները հնչում են ամեն կողմից: Ապլան նախ հանում է «տարին» և ապա՝ քսակներն ու վասիլները. բայց այստեղ էլ պահվում է ավագության կարգը, նախ հանվում է գերդաստանի հոր, ապա մեծ որդու և այլ քիսաները, հետո մեծ հարսինը և այլն: Եթե քսակները ուռած լինին, այդ նշան է, որ նրա տերը այդ տարի պիտի հարստանա, իսկ եթե, ընդհակառակը, կուշ եկած լինին, աղքատանալու է: Եվ եթե վասիլներն ուռչին, նրանց տեր հարսերը որդի են ունենալու: Մինչև անգամ գնում են ուռուցքը և եթե ուռուցքը գեպի վեր է ուղղված, ասում են արու երեխա է լինելու, իսկ եթե դեպի վայր՝ աղջիկ: Յորենի, գարու հորերի, լծի, խնոցու և կրիչի ուռչիլն էլ առատություն, իսկ կուշ գալը սակավության նշան է: Իսկ եթե սրանցից մինը «կուտ է գնում», այսինքն թոնիրն է ընկնում, ասում են, թե նրա տերը մեռնելու կամ կորչելու է:

Նույն օրը երեխա ունեցող կանայք ծաղկամոր կիրակին են պահում, որպեսզի երեխաները ծաղիկ շահեն:

Երբ մթնում է, ապլաները մոխիր են ածում դրսի դռան շեմքի վրա, որպեսզի շար մտքով ներս մտնողները էլ կտրեն: Մի մեխ էլ խփում են տան խաշերկաթին, որպեսզի շարը (քաջք) չկարողանա ներս մտնել, ալլուրով էլ մի-մի խաշ են նկարում դրսի դռան վրա: Տան ծերունիներն էլ իրենց պարապման մի հատկանիշ գործիք են նկարում դրսի պատի վրա:

Գիշերը մեծերը շուտով քնում են, իսկ երիտասարդները սպասում են, որ կեսգիշերին գնան գետից ջուր բերին, որովհետև հավատում են, թե այդ գիշեր գետը մի ժամ ոսկի է վազում: Պատմում են, թե մի խուշ հարս մի անգամ կաղանդի մի գիշեր գնացել է գետից ջուր է բերել յուր կերսարի ձեռին ածելու, վերջինս նեղացել է վրան, թե ինչու սառույցի կտորներ է բերել, բայց հետո լուսին բռնել տեսել է, որ ոսկիներ են: Մի ուրիշն էլ դարձյալ ոսկի ածել վերցրել է, որ բերի տուն, սատանաները ահագին աղմուկ են բարձրացրել, թե՛ տարա՛վ, բանեցեր: Վասիլներով հետ է նայել, իսկույն ամանը բնկել է ձեռքից, իսկ ինքն էլ տուն ընկնելով ուշաթափվել է:

Անհամբերությամբ սպասելով կեսգիշերին, երիտասարդները նայում են կատվի աչքին. երբ բերը բոլորովին կորացած և մեծացած են

լինում, ասում են, թե արդեն կեսգիշեր է և պատրաստվում են գետը գնալու: Մինը հեծնում է ակիշը, մյուսը շիշը, երրորդը՝ խաշերկաթը: Սրանցից ավագը վերցնում է մի գյուզում՝ լի ցորենով, գարիով. մյուսներն էլ մի քիչ խոտ են վերցնում: Ահագին աղճուկով գնում են գետի ափը, խոտը տակերը ցկում, վրան նստում և սպասում, թե երբ պետք է գետը ոսկի վազե: Երկար սպասելուց հետո ավագը ասում է.

«Քեզի կուտամ ցորեն, գարի,
Գուն ա ինձի տու բարի,
Շնորհավոր նոր տարի»:

Եվ գյուզումի ցորենն ու գարին ածում են գետը, լցնում գյուզումը չրով ու «սողաք քաշք», ոսկի լցված» ասում ու վազում տուն: Բոլորը վազում են տուն, աշխատելով հետ շնայել. նրանց թվում է, թե սատանաները նրանց հետևից բնկած են, թե նրանք «բռնեցե՞ք» են բղավում և այլն: Տան մեջ սրանց դիմավորում են սան մեծերը և շատպով չուրը դատարկում մի ամանի մեջ, որ տեսնեն, թե ոսկի չէ՞ կտրել:

* * *

Երբ արշալույսը սկսում է բացվել, ապլանները վեր են կենում, արթնացնում հարսներին, «տարի»-ները դնում սալանների մեջ, վրան մեղր ածում և ձեռքերին բռնած՝ հաստ գավազանը քոթքոթացնելով դուրս են ելնում, գտնում գեպի արևելք, երև անգամ ասում. «Դուլ-բաթ, սարն էս, ձորն էս, արի տուն», և նորից քոթքոթացնելով մտնում ներս: Պահում են «տարի»-ները, իսկ վրայի մեղրը տանում բոլորին բաժանում, որպեսզի այդ տարին միմյանց հետ անուշությունով անցկացնեն:

Մեծ որդին յուր բաժին մեղրը ուտելով՝ տանում է երեք «բաղաճ» (յուզով պատրաստված հաց) գետում թրջում և բերում, մաս-մաս անում, տալիս կենդանիներին, ավելացնելով դրանց վրա և լուծն ու պտուկները: Այսպիսով նա շնորհավորում է կենդանիների նոր տարին և հարգի փոխարեն խոտ տալիս:

Ապա հայրն ու մայրը նստում են օջախի գլուխը և որդիներն ու հարսները ավագության կարգով զալիս համբուրում են սրանց ձեռքերը և նոր տարին շնորհավորում: Հետո ապլան նորահարսին մի ուտուպիա (ոսկի) է ընծայում, իսկ մյուսներին միրգ և քիսաներն ու վասիլները բաժանում: Բոլորը ուրախությունով ընդունում են ապլայի տվածները և միմյանց նույն մրգերով կաղնդում: Տեղերը ևս իրենց նորահարսե-

րին միրգ կամ ուրիշ բաներ են ընծայում, իսկ ամուսինները ամոթ համարելով ոչինչ չեն նվիրում իրենց կանանց, ոչ էլ շնորհավորում:

Հայրը պատրաստվելով դուրս գնալ տանից, բերում ձին կանգնեցնում է գոմի մեջտեղը, իսկույն մյուս տնեցիներն էլ խմբվում են շուրջը և ուշադրությամբ նայում, թե ձին ինքնուրույնաբար որ ոտը կբարձրացնի: Եթե այդ բարձրացնի, այդ նշան է, որ այդ տարին հաջողությամբ, իսկ եթե ձախը՝ ձախությամբ պիտի անցնի: Այդ բարձրացնելիս հայրը յուր շափահաս որդկերանց հետ մի-մի բաժակ օղի են խմում, վրայից էլ մի-մի հատ դմի ուտում և դուրս ելնում: Մեծ մարդիկ նախ գնում են իրենց սգալիոր ազգականների և կամ զրկիցների տուն, մխիթարում նրանց, ապա մտտիկ ազգականներին հանդիպում և հետո մի-մի շիշ օղի առած գնում են քահանային «տեսնելու»:

«Օրհնյա տեր», ասում են նրանք, ներս մտնելով քահանայի տունը:

— Աստված օրհնե,— պատասխանում է քահանան: Եկողը անմիջապես մտնում է և համբուրելով քահանայի աչքը, ասում. «Շնորհավոր նոր տարի, ամեն տարի ուրախութենով աս օրս հասնինք»:

— Քուկդ ա շնորհավոր,— պատասխանում է քահանան, բարով-խելով շատ տարիներ աս օրս հասնինք. հրաման վեր նստի:

Բոլոր եկողները դարձյալ ավագության կարգով նստում են և մի քիչ հետո քահանան նրանց մի-մի բաժակ օղի է հրամայում: Քահանայի օղի խմելուց հետո եկողները հանում են իրենց բերած շշով օղին, մի-մի բաժակ իրենք խմում, մի-մի բաժակ էլ բոլորին հրամայում և մնացածը (եթե միայն մնա) տալիս են քահանայի տնեցիներին, որ դատարկեն և հետո շշերն առնեն և գնում են տները, որ լցնեն ու գնան նույն կարգով տանուտերին «տեսնեն»:

Պատահում է, որ շատերը հարբում են և անախորժ գեպքեր են տեղի ունենում:

Մյուս օրը «բաղդ-փորձուկ» է, այսինքն բախտը փորձելու օր է: Երիտասարդներն ու աղջիկները նախընթաց օրը պատրաստած «ղառողի կլիկները»՝ կլոր, փոքրիկ հացեր դնում են կտուրները և կամ դեզերի վրա և դիտում, թե ազոավները վերցնում ո՞ր կողմն են տանում. որովհետև հավատում են, որ այն կողմից պիտի գա սպասելի փեսան կամ հարսնացուն:

Հետո գնում են իրենց բարեկամների տները և նայելով, թե ինչով կհյուրասիրեն իրենց, գուշակում իրենց բախտը: Ուրիշները թաք են կենում զրկիցների տներում և լսածից գուշակություններ անում: Մի քանիսն էլ բանալին դնելով գրպանները՝ լուռ կանգնում են փողոցներում

և անցուղարձ անողներն խոսակցութիւններն զուշակութիւններ անում: Երկու օր հետո, հունվարի 4-ին, երեկոյան ապրանքը կտրում են տարին, բաժանելով տան բոլոր անդամներին և նույնիսկ կենդանիների մէջ: Ամ բաժնի միջից որ դուրս գա դրամը, այդ տարին նա է բախտավոր լինելու և կամ նրանից է բախտավորութիւնը գալու:

Քրիստոսի ծննդյան և մկրտութեան տոներին զուտ եկեղեցական ծիսակատարութիւններից զատ մի առանձին, ուշադրութեան արժանի բան չի կատարվում:

Սուրբ Սարգիս

Առաջավորաց պատին ժողովուրդը Ս. Սարգսի պատ է կոչում և շաբաթ օրը հանդեսով տոնում նրա տոնը: Այս հինգ օրվա ընթացքում լինում են մարդիկ, որ օրական միմիայն մի քիշմիշ են ուտում և կամ անավաղ ծոմ են պահում. ուրիշներն էլ օրական միայն մի անեկ հացով են բավականանում, իսկ ընդհանրապես ժողովուրդը միայն պատ է պահում, ոտելով ավելուկ, դմի, բանջար, բողկ և մախոխ ապուր: միայն թե մինչև ճաշ պետք է ծոմ պահեն:

Ժողովուրդը բավական ջերմեռանդութեամբ եկեղեցի է գնում, մանավանդ ուրբաթ երեկոյին և շաբաթ առավոտյան: Ծանապարհին ժամվորներից շատերը պրծեցնում են իրենց մազերից և քամուն տալիս, որպեսզի Ս. Սարգիսը իրենց շուն ու ցավն էլ այդ մազերի հետ տանի:

Այդ հինգ օրվա ինթացքում կանայք, մանավանդ աղջիկները, գլուխ չեն լվանում, որպեսզի Ս. Սարգսի ձիու ոտները թնշուկ չփաթաթվի: Թոնրի վրա էլ խաչերկաթը չեն գնում, որպեսզի գառները չգժվեն:

Ուրբաթ երեկոյան տանտիկիները աների գլխավոր գոնների հետևը մի-մի սկուտեղ են դնում և վրան շարմաղով փոխինդ շարմաղում, շորս կողմն էլ շորս մոմ վառում, հուսալով, որ Ս. Սարգիսը յուր ձիով կգա այցելելու և իրենց տունը և նրա ձիու ոտների հետքերը կմնան փոխինդի վրա:

Երբ լուսանում է, պառավներն իսկույն վեր են կենում և նայում, թե դռան հետև դրված փոխինդի վրա պայտի հետքեր չկան: Անսահման է լինում նրանց ուրախութիւնը, երբ այդպիսի մի հետք նկատում են: Գանձա, մի անգամ շարահանի տղաները մի պայտ էին խցկել Սեյրանենց փոխինդի վրա և քիչ էլ ձիու թրիք գրել: Սեյրանենք մեծ հպարտութեամբ այդ փոխինդից խաշիլ են պատրաստել ձիու թրիքն էլ մանրել հետը խառնել և գլուղի իշխաններին, ամենաթանկագին հյուրերին հրավիրել ուտեցրել էին:

Այդ օրը միմիայն խաշիլ են պատրաստում և այն էլ առավելապես դռան հետ դրած փոխինդից:

Նույն երեկոյին աղջիկներն ու երիտասարդները աղի կլիկներ (սաստիկ աղի հացեր) են ուտում և մի քանի աղոթքների շնչալով պառկում: Գիշերը Ս. Սարգիսը «ղրո» ձին հեծած, «ալ դափուրը» վրան, «մզրախը» (նիզակ) ձեռին շափ է ընկնում Ախալթալաքի դաշտավայրով, մի վայրկյանում անցնելով մի ծայրից մյուսը: Նրա ձիու պնչերից ամպեր են ցայտում և փաթիլ-փաթիլ ձյուն անում, ոտների տրոփչուներից աշխարհք թնդում, նիզակի խաղացնելուց սաստիկ բուք բարձրանում: Նա այցելում է մի քանի արժանավորների տները և տնօրինում, թե որ երիտասարդը որ աղջկան փոխադարձաբար ջուր տա:

Երիտասարդների ու աղջիկների այդ օրվա ամբողջ խոսակցութիւնը լինում է գիշերը տեսած երազները: Ամեն միևնը պատմում է, թե ո՞վ և կամ ինչպիսի ոք եկավ և իրեն ջուր տվեց, ջրի ամանը ինչի՞ց էր և թե որքան ջուր կար մեզը: Գրեթե բոլորն էլ հավատում են, որ այդ ջուր տվողն է իրենց վիճակված և որ անշուշտ, ինչպես և լինի, սրա հետ են ամուսնանալու: Եթե ջրի ամանը ոսկուց է լինում, ասում են թե ամուսինը սաստիկ հարուստ է լինելու, եթե արծաթից, միջակ հարուստ, իսկ եթե պղնձից և կամ կավից՝ աղքատ: Զրի քանակութիւնն էլ որոշում է, թե որքան ժամանակ են միմյանց հետ պարելու. եթե լիքն է՝ շատ երկար, եթե կիսատ՝ կյանքի կեսը, իսկ եթե քիչ՝ միայն մի քանի տարի:

Այդ օրը առավոտյան սովորաբար պատարագ է մատուցվում և գրեթե բոլորը գնում են եկեղեցի: Երիտասարդներից և աղջիկներից շատերը հաղորդվում են, ջերմեռանդութեամբ աղոթում Ս. Սարգսի պատկերի առաջ:

Պատարագ սովորաբար մատուցում է մի որևէ գերդաստան հին և նոր ննջեցյալների հոգու փրկութեան համար և այդ գերդաստանը հրավիրում է գրեթե բոլոր շափահաս և ծեր մարդկանց հոգու հաց ուտելու, որ և Ս. Սարգսի մատին ավանդութիւններ են պատմում: Այսպես՝ մինը կամենալով ցույց տալ, թե ինչպես Ս. Սարգիսը օգնութեան է հասնում յուր ծոմը պահողին, պատմում էր.

«Մի մարդ Ս. Սարգսի ծոմը անավաղ բռնում է: Պատահում է, որ նրա եղբայրը սաստիկ հիվանդանում է և ինքը ստիպված է լինում կեսգիշերին գնալ մոտակա գյուղից քահանա կանչել, որ նրան հաղորդութիւն տա: Ծանապարհին սրան շրջապատում են գայլերը, իսկ ինքը ոչ մի գինք չի ունենում պաշտպանվելու: Բայց սա հավատով դիմում է Ս. Սարգսին և նրան օգնութեան կանչում: Մեկ էլ տեսնում է, որ մի

«դրո» ձիավոր եկավ և յուր նիզակով բուր գալլերին հարածեց: Սրանք փախան և հեռուն պազեցան: Փահանային առած վերջապահալիս այս մարդը նկատում է, նույն գալլերը միևնույն տեղում պազած, միայն այս անգամ ոչ մի շարժում չեն անում: Վախենալով կամաց-կամաց մոտենում են նրանց և տեսնում, որ բուրն էլ թնր են դարձած: Մինչև այժմս էլ ասում են, թե կան այդ քարերը»:

Մի ուրիշն էլ հավատացնում է, թե նաքալաքն դուրդից մի բուրդ բքից բռնվելով Ս. Սարգսին օգնության է կանչում և խոստանում է մի զույգ մոմ վառել: Ազատվելով նա ուրանում է յուր խոստումը, սակայն հաջորդ տարին, Ս. Սարգսի շարթին նույնպիսի բքից խեղդվում է:

Բայց Ս. Սարգսը ամեն տարի մի հույն է խեղդում, կամենալով ընկճել այդ ազգի կամակորությունը: Պատմում են, թե մի անգամ մի թագավոր ստիպել է մի հույնի Ս. Սարգսի պատը պահելու և երբ սա չէ հանձն առել, հրամայել է բանտ ձգել և միմիայն ցամաք հաց տալ:

Շաբաթ օրը հանել են նրան բանտից և ասել. «Տեսա՞ր, չէ՞իր պահում, ինչպես պահել տվի»:

— Բայց տրեխներին նայիր, պատասխանում է հույնը, որ պատը լուծելու նպատակով տրեխներն էր կրծել:

Մինչ այս, մինչ այն, օրը փոքր-ինչ բացվում է և արևը դուրս գալիս: Այս ժամանակ երիտասարդներն ու աղջիկները կառույններին կանգնած իրենց բուլունները (փոքրիկ հաց), որ գիշերը իրենց բարձրի տակ էին դրել, դնում են դեղերի վրա և դիտում, թե թռչունները կվերցնեն և որ կողմը կտանեն, ում կտրան վրա կիջնեն, որովհետև հավատում են, թե այն կողմից, այն կտրան տակից գալու է սպասելի հարսնացուն կամ փեսացուն: Բայց վայ նրան, որի բուլունը գերեզմանի քարի վրա դրվեցավ. նա հուսահատվում է, հավատացած լինելով՝ որ «գերեզմանի հետ պիտի պսակվի»:

Բարեկենդան

«Բարեկենդան, փարեկենդան.

Բարեկենդան օրեր է.

Խելքս գլխես կարե է»:

Քաղաքում սովորություն է բարեկենդան անվանել միմիայն մեծ պատից առաջ եղած մի ուտիս շաբաթը, բայց դյուղերում այդպես չէ: Նրանց բարեկենդանը ուղիղ երկու շաբաթ է տևում, որ սկսվում է Առաջավորաց պատից անմիջապես հետո:

Առաջին շաբթվա երկուշաբթի օրվանից Լեյվանիք (տանտիկին-խոհարար) սկսում են իրենց պատրաստությունը տեսնել. բաց են անում իրենց պահած յուղի կեռուճների բերանները և բավականաչափ գաթաթխում, հավվա եփում:

Նույն օրերը, տան մեծի կարգադրությունով, եթե հարուստ են՝ մի կով, եթե միջակ՝ մի քանի ոչխար, իսկ եթե աղքատ՝ գոնե մի դառ և մի քանի հավ են մորթում, միսը քաշ տալիս սառը մառաններում և մասմաս դործածում, ուտում-խմում:

Բնականաբար ուտել-խմելուն միշտ միանում են խաղեր, երգ և հրավեր:

Եվ ահա սկսում են գյուղի մի քանի տներում հավաքվել մի քանի ընտանիքներ: Մեջ են բերում խոնջան, տղամարդիկ բաժանվում են երկու կարգի և նստում են խոնջայի երկու կողմը: Մինու կամ մատուցարանի վրա գալիս են 9 կամ 7 զանգակի ձևով փոքրիկ պոզեր, որոնք կոչվում են զառֆ, սկսվում է «մատնի» խաղը: Խաղացողներից մի կողմը տալիս է յուր անդամներից մեկին մատանին պահելու (որի անունից խաղը կոչվում է «մատնի խաղալ») զառֆերից մեկի մեջ: Մատանին պահելուց հետո շարված զառֆերը մատուցարանի վրա բերում, դնում են խոնջայի վրա. հակառակ կողմը աշխատում է իշկելով (բնագրումով) երկու զառֆ զուլի ասել և նրանց միջից գտնել մատանին: Եթե գտնում է՝ խաղը 1 հաշվվում է նրա, իսկ եթե ոչ 1 հաշվվում պահող կողմի հաշվին: Այդպես շարունակվում է մինչև 10 կարգ լրանալը. 10-ին տարվող կողմի անդամներից մեկի ճակատին կամ ձեռքին զառֆի ժրոտ բյուսիով դաղմա (նշան) են խփում. իսկ 20 լրանալիս՝ 2 դաղմա են խփում և տանող կողմը հրամայում է տարած գառը կամ հավերը 1—2 շիջ օղու հետ բերել ընթրիքի պատրաստության համար: Հրամանն իսկույն կատարվում է: Բայց մինչև ընթրիքի պատրաստվելը տանող կողմը սկսում է զանազան խաղերով տանջել տարվող կողմի անդամներին: Կան զանազան խաղեր, օրինակ, սաթուհի, դավա-օյին, քարվան և այլն: Եթե օրինակ, քարվան է, տարվող բուրդ անդամների վզերն իրար հետ կապում են մի պարանով և տանողները վրանները նստում՝ գոմի, բակի, տան մեջ մի քանի անգամ ման ածում: Նստողները խփում են ուղտ շիխած տանողներին. վերջիններս չեն լսում, վայր են ձգում, բարձրանում է աղմուկ, աղաղակ, ծիծաղ: Վերջապես տանտիկինը ավետում է կերակրի պատրաստ լինելը՝ խաղը վերջանում է: Բացվում է սեղան, տանտերը բերում է մատանից յուր ունեցածը, ինչ որ աստված տվել է: Խոնջաների շուրջը բոլորվում են ամենքը, թե մեծ, թե փոքր:

սուտ ասացվածքներով, ծանր զավեշտներով ուտում, խմում, զվարճանում մինչև կեսգիշեր և ապա ցրվում իրենց տները:

Մատնի խաղը շարունակվում է մինչև բարեկենդանի վերջանալը. նա քանի մոտենում է մեծ պատին՝ այնքան կենդանանում, ոգևորող է դառնում: Առաջ, որ մեծի մի ակնարկը քավական էր անշափահասին տեղնուտեղը ստուշելու, քարի պես մնալու՝ այժմս նախատինքն ու սպանալիքն էլ չի ազդում: Պատիկը կեծ հանաքով համարձակ ասում է ծերին ինչ որ ունի իր սրտում և շատ անգամ ծաղրում երգելով.

«Արի, պառավ, քեզի գովեմ. շաղցեն ելած դե կլմանիս.

Աչքդ փոս է, քիթդ դուս է. թեպիսին փոխված հավ կլմանիս.

Հաճախ պառկեցնում և ոտքերին մի քանի անգամ ճիպոտով խփում են. ով ինչ կարող է ասել. «վարդապետաթող է, բարեկենդան օրեր է, խելքս գլխես կորեր է»: Մեծը ծիծաղելով, կամա թե ակամա ընկերանում է ընդհանուր ուրախության և տանում այդ բոլորը:

Բայց այդ մի տեսակ զվարճությունը չէ հայի տանը. կան և շատ ուրիշ զվարճություններ:

Շատ անգամ առաջուց հայտարարվում է, որ աշուղն այսինչ գիշեր մեկի տանը հեքիաթ է ասելու էլ մարդ չի մնում գլուղում՝ բոլորը հավաքվում են այնտեղ: Օղան ու գոմը լցվում են. շարժվելու, ասեղ պցելու տեղ չկա: Սիրելի հեքիաթներն են «Շահ-Իսմայիլը», «Աղարան Բյուլբյուլը», «Քյարմն ու Ասիին», «Քորոզլին» և այլն: Հեքիաթն սկսվում է նրազ դնելու հետ: Աշուղը սաղը պցած թեք, պաշմակաները (մաշիկ) հագած, նոր շորերով ման է գալիս օղայի մեջտեղը՝ տափում, բարձր ձայնով թուրքերեն ասում է հեքիաթը, շրխկացնում է մաշիկով գետնին, ոգևորվում, ոգևորում հանդիսականներին և քարձր ու զիլ ձայնով կանչում սիրահար գույգերի երգը: Նա մերթընդմերթ մոտենալով մեկ կամ մյուս ծխողին, ազահութայմբ թանձր ծուխը կուլ է տալիս մի քանի անգամ, նրա քուլաները քթածակերից ամպի նման դուրս թողնելով՝ շարունակում հեքիաթը: Կամ հաճախ կամենալով հանգստանալ՝ առնում է ձեռք արագի բաժակը, իրանով հրճվող, ոգևորվող հանդիսականներին մի քանի խոսք ասում և արաղը խմում, բուկը թրջում ու նորից շարունակում: Ոգևորությունը սաստկանում է, հանդիսականները մտքով թռչել են անում դեպի այդ կախարդական-դուրացազնական աշխարհը, և այդ ոգևորության տակ մոռանում ամեն տեսակ աշխարհային բան: «Հե՛յ աղալար» կանչելով, և կրակով լցված աչքերով ոգևորությանը նայում է աշուղը ամենքի երեսին և ամուր խփում սազի թելերին: Հառաչներն ու «ջաները» ան-

ընդհատ լսվում են հանդիսականների բերանից. և ահա աշուղին օգնության հասնելով լավ ձայն ունեցող երիտասարդներից մի քանիսը՝ խաղի մեջ հարցնող կամ պատասխանող տները նրանք են երգում:

Գոմի թանձր, գոլորշիախիտ և ծխով լցված օդի մեջ բոլորը աֆիում ընդունածի նման թմրած՝ անձնատուր են լինում երկար ժամանակ լող և այժմ գրգռված զգացմունքներին. նրանց հետ խոսում, հառաչում, ախրում, ուրախանում և սրտերն ու աչքերը քամելով՝ կեսգիշերն անց ցրվում իրենց տները:

Բայց նրանց զվարճությունները միայն գիշերները չեն տեղի ունենում. ցերեկներն էլ ունին իրենց հրապուրիչ խաղերը, որոնցից մեկն է և չիլիթը (մական): Կտրիճ երիտասարդները ձի հեծած ցույց են տալիս հանդիսատեսների ահագին խմբին իրենց շնորհներն ու ճարպկությունը:

Երբեմն էլ նույն կտրիճները դավուլ-գուռնան առաջ խառնած և կամ առանց դավուլ-գուռնայի հավաքվում են մի որևէ հարմար տեղ, մեծ մասամբ «պամայի» (քաքորի շերտ) վրա և գոտեմարտում:

Փոքրիկ խմբեր էլ առանձնացած թուղթ, նարդի, դամա և այլ խաղեր են խաղում:

Երեկոները, ուրախության թունդ ժամանակին հանկարծ դրսից լքվում են կենդանական զանազան անձուռնի ձայներ: Գոմի դուռը բացվում է և հանկարծ ներս է ընկնում այլանդակ մեկը, երեսը ալյուրի կամ մրի մեջ կորած, այժի մորթուց մեծ մորուք շինած, խայտատակ ձևով մորթիներից շորեր հագած, ձեռին երկար ձող կամ ակիշ բռնած, զանազան թռիչքներ անելով հարձակում է գործում ուրախություն անողների վրա. բոլորը թե ծիծաղում են, թե վախենում այդ այլանդակ մեյմունից: Երեխաները սաստիկ երկյուղից սրտաճաք լինելով՝ լալիս են, ամուր կաշում մայրերի կրծքին և գլուխները թաքկացնում նրանց թևերի տակ: Կանայք վախեցած, կես-ծիծաղ պահում են երեխաներին և հայհոյանքով ետ մղում հարձակում գործող մեյմունին: Բոլորը տեղերից վեր են թռչում, իրար են խառնվում... Եվ վերջապես մեյմունը տանտիրոջից չուր նվերը առնելով չուր բաղձաթիվ ընկերներով գնում է ուրիշ տեղ: Մահայն նրա գնալուց հետո էլ չի իմացվում, թե ով էր այդ շարաճճին: Մեյմունները ներկայացնում են կամ պառավ սատանա, կամ անձուռնի հրեշ, կամ տգեղ ուղտ, կամ սարսափեցնող շվոս կամ դև և կամ մի ուրիշ բան:

Այդ մեյմունները այդպես ավելի անբովանդակ են, բայց կա մի առանձին տեսակը, որ կուլվում է զաղի և ունի չուր լուրջ բովանդակու-

Յյունը: Մեկը հագնում է հաստ մուշտակ, երեսին կապում/ահագին մո-
րուք, գլխին դնում թենչերե, շալե երկար դոտին իրեն ծապավեն գցում
ուսը և տերոզորմյայի հատերը քաշելով մեծափամ նստում է բարձր
սարի վրա, պահանջում ընտանիքի անդամներին՝ փոռաջը շոքել, ձեռքերը
կրծքերին դնել և ստիպում է յուր ամբողջ կյանքում անմեղ ու հանգիստ
հային, որ ասե չեղած տեղից յուր մեղքերը: Այդ դատին, որ ներկայաց-
նում է կամ թաթար բռնակալը, կամ արաբական խալիֆան, կամ կրոնա-
մուլ տաճիկը, կամ կատաղի ենիշարին և կամ մի ուրիշ բռնակալ արյու-
նարու ավերող իշխան՝ յուր քննությունը վերջացնելուց հետո կամ հրա-
մայում է, որ յուր հրամանատարները այդ ածօրեն հային տանեն կա-
խեն, ողջ ունեցվածքը թալանեն, կամ բաշխելով նրանց անպետք կյան-
քը՝ մեծ փրկանքներ առնում, հեռանում է:

Վա՛յ այն մարդուն, որ հանձն կառնի դատի դառնալ. էլ ինչ հայ-
հոյանք, էլ ինչ հարվածներ ասես, որ շորս բոլորից չեն տեղում:

Իսկ նորահաս սիրահարված ջահիլ աղջիկներն ու տղերքը, կամ
մանկամարդ հարսներն ու երիտասարդները երկար ժամանակ սպասե-
լով բարեկենդանի ազատ, արձակ, վարդապետաթող օրերին՝ հավաքված
մի տան մեջ սկսում են պարը: Պարն առաջ սկսվում է խաղի եղանակով,
որ երիտասարդներից մեկը կամ երկուսը ասում են, իսկ մյուս մեկը կամ
երկուսը առնում: Խաղացողների թիվը շատանում է, գալիս է տիկ կամ
տկզար յուր ղոզացող ձայնով: Իսկույն իմացվում է պարի մասին. էլ
ջահել մարդ չի մնում գյուղում, թափվում են այդտեղ, բերել են տալիս
դավուլ-դուռնա, ամբողջ տունը լցվում է, կանգնելու ու նայելու տեղ
չկա. ուրախություն աղաղակներին մեջ գուռնայի ձայնը հազիվ է լսվում:
Արեղաթող օրերին ազատ իրավունք է սիրահարված ջահել զույգերին
իրար ձեռք բռնել պար խաղալ: Զրագները դնում են, ամեն մի տան մեծ
փնտրում է յուր ջահելներին, բայց ո՞վ է նրանց խոսքը բանի տեղ դնողը,
հիմա էլ խո հասարակ օր չէ, բարեկենդան է. առանց ուշադրություն
դարձնելու խաղում են: Առաջ, որ մի հասակն առած մարդ ճիպտոր կառ-
ներ՝ ինչպես որ այժմ ոչխարից, այնպես էլ տղամարդկանց կանանցից
կշռկեր՝ այժմս անկարող է. շսելուց գատ հըռըը կենին վրեն կը խնդան,
պարիցը դուրս կանեն:

Պարի մեջ կարգը պահպանելու համար որոշվում է մեկը, որ երկար
ճիպտոր ձեռին ման գալով քոթ տալիս է կանգնողի կամ ման եկողի զը-
խին: Անկարգը ցաված գլուխը բորելով տփկում է տեղը:

Համարյա կեսգիշերն արդեն մոտենում է. պարը վաշտառստ անելու

համար հազիվ փախցնում են զուռնաշուն, և սրտերը բարախող սիրա-
հարված ջահելները ցրվում են իրենց տները:

Եթե բարեկենդանի առաջին շաբաթին օրական մի քանի անգամ է
տեղան դրվում, երկրորդ շաբաթին, մանավանդ վերջին օրերը, սուփրեն
բոլորովին տեղից վեր չի քաղվում: Բաց են անում սերի կարագի և այլ
պատվական ուտելիքներին պուտուկների բերանը: Քեյվանին «Տոգե-
պահուտ» ինչ որ ունի՝ բերում է մեյդան. «էլ էստեղից ետև պահեմ,
ի՛նչ պիտի էնեմ, մկներուն փա՛յ պիտի դարձնեմ»:

Այդ օրերը շատերը սկսում են բարեկամներին ցերեկով այցելել և
վայելել նրանց ճոխ սեղանը: Անկարելի է, որ փողոցով անց կենաս և մի
քանի հարբած, ձյունի մեջ զնդալ տվաղ մարդ շտեսես. ամեն ոք չիմած
էլ մի տեսակ թմրած դրուֆյան մեջ է զգում իրեն և շատ արդարացի է
այն խոսքը, թե «բարեկենդան օրեր է, խելքս գլխես կորեր է»:

Հարս գնացած աղջիկներն այդ օրերը «տուն են բերած» լինում հե-
րանցը, և սկեսրանց տան մեջ կրած նեղությունից, կորցրած ազատու-
թյունից մի քանի օր հազիվ շունչ են քաշում իրենց սիրելիների և ծնող-
ների մոտ, մխիթարվում և ուրախանում: Հստ մեծի մասին փեսաներն
իրենց նշանածների (ամուսինների) հետ բարեկենդանի ցերեկները իրենց
աներանց տանն են անցկացնում:

Առաջները հոկտեմբեր ամսից առավոտ-երեկո մութ, խոնավ և տաղ-
տրկացուցիչ գոմի կամ գոմի-օդի մեջ սովորող վարժառան տղերքը հազիվ
սկսում էին երկու շաբաթ ազատ շունչ քաշել: Մինչդեռ վարժասուն
գնալու ժամանակ գրպաններում վեզի կտոր անգամ պահելու իրավունք
չունեին՝ այս օրերում պզի (սառույցի) վրա վեզն ու կակալը շարած,
անարեստանքը (սախկա) ձեռներն առած՝ ազատ կերպով լրիսկացնում
էին. խաղում էին խաղում և մի հարմար ժամանակ ընտրելով՝ իրենց
խալֆաների առաջնորդությունը մի-մի նվեր, մի ճիպտո և մի շիշ արաղ
ձեռքներն առած գնում էին վարժապետին տեսություն: Նվերները տա-
լուց հետո նրանցից ամենահամարձակը առնում էր ձեռքը ճիպտոր և
ասում. «է՛, դու մեզի շատ ես ծեծե, հիմի սրեն քուկդ է, պառկի»: Վար-
ժապետը կես ծիծաղով, կես նեղացած չէ լսում. այստեղ մյուսները վրա
էին թափվում, զոռով պառկեցնում և ոտքերին ճիպտո մի քանի հար-
ված հասցնելով, ասում «էլ չես ծեծե մեզի, ասա՛»: «Զէ՛, չէ՛» խոստա-
նում է վարժապետը: «Ի՛է, մեր փեշկաշը»: Ուսուցիչը նվեր տալով մի
քանի կոպեկ, ազատվում է:

Իսկ մյուս փոքրահասակ, քերեկան, պզտի սաղմոս կարդացող աշա-
կերտները, որ ոչ թե վարժապետի, այլև մինչև անգամ խալֆաների հետ

չէին համարձակվիլ այդպես վարվելու, մի զույգ գուլպա, մի զույգ պա-
ճիճ (թոզլուկ), մի թաշկինակ, գաթա, սեր առած գալիս էին իրենց վար-
ժապետին տեսու՞թյան:

Վարժապետը նրանց բուրբին, թե մեծին և թե փոքրին հրամայում
էր հերթով կանգնել և երգել էր տալիս՝ հանդիսականներին զվարճացնե-
լու համար, ապա արձակում խաղալու:

Վերջին օրերը, որ իրենց ասելով միմիայն փոքի օրեր են կամ բա-
րեկենդան՝ փոքի կենդան է, ոչ թե ժամ ու պատարագ չեն հիշում, այլև
պաս պահելն անգամ մտքներով չի անցնում: Պառավներն ու ծերերը,
որ մեծ երկյուղածությամբ օրենք երկու անգամ եկեղեցի են գնում,
աղոթք անում՝ այսօր պասն ուտիսից չեն էլ ջոկում: Ժամում ո՞վ կա. մի
տերտեր ու մի ժամկոչ, շատ-շատ մի հատ էլ տիրացու: Տերտերն ինքն
ասում է, ինքն էլ լսում, և դուրս գալով եկեղեցուց՝ պատահողի վրա նե-
ղանում, հանդիմանում, բայց միևնույն ժամանակ ինքն էլ քթի տակին
ծրծաղում:

— Է՛, բան շունիս, տերտեր, բարեկենդանք է, ժամս որն է. էսօր
էզվան մեծ պաս է, ժամի օրերը կուզան, ասեղ ցքելու տեղ չի մնա.
էրթա՛նք, էրթանք նես, մե հրախիմ՝ անուշ էրա, ես գիտեմ ցրտեն ու մե-
նակութենեն մոսած կլինիս,— ձեռաններով՝ քահանային տուն է հրավի-
րում պատահող գյուղացին:

Նշանած աղջիկների զբուխտ աչքը լուսա՛. սկեսրունց տանից էլ ինչ
փեշկյաշներ ասես, որ շտեղան նրանց գլխներին. էլ փող, էլ ոսկի, էլ
չիկիլա, էլ թոռ, էլ վալա, էլ ինչ թանկագին կտորներ: Նշանված տղան
էլ աներանց կողմից է ստանում: Զոքանչը բաց է անում յուր սնդուկը,
իսկ աները քիսեն: Նոր խնամիները (նոր փափա) շարունակ իրար տանն
են լինում, ուտում, խմում, հարսնացուն առաջ բերում, գլխների վերև
կանգնեցնում, ուրախանում: Շատերն էլ խնամախոսությունն ու նշանա-
դրությունը բարեկենդանին են անում: Հաճախ լինում են և հարսանիքներ:

Վերջապես հասնում է բուն բարեկենդանը: Կիրակի գիշերը մոտիկ
բարեկամները իրար մոտ հավաքված, ինչ որ ունին, ինչ որ մնացել է
բերում են մեյշան. սուֆրեն ասագին դեզ է ներկայացնում, աման զնե-
լու տեղ չկա, այնքան որ ուտելիքներն իրար վրա են շարած: Իրար հետ
սեղան են նստած ծերունի սկեսրարը ու մանկամարդ հարսը, տղամարդ,
կնիկմարդ, բոլոր միասին վայելում են գաթա, հավվա, լոխում, հավկիթ,
հասութա, սեր, կարագ, մատակի մածուն, նոր ծնած կովի դալ, հավ,
սագ, գառ, ոչխարի կամ կովի դավուրմա, քյուֆթա, տոլմա, փլավ,
յայնի... էլ որ մեկը հիշես, որ մեկն ասես: Սեղան նստողների կողքերն

ուռչում են. վերջապես կեսգիշերն անց հավաքում են ամեն բան, իրար
աճարահատյալ՝ սրտով «շնորհավոր պաս» ասելով ցրվում տները:

Տեանընդատաչ

Տեանընդատաչին ասում են «տերնդագ»: Այս երեկոյին, ժամասա-
ցությունից առաջ գրեթե բոլոր տներում խեծախ են պատրաստում: Բոր-
ֆում են կորեկ, սիսեռ ու սոպ և հետը քիշմիշ խառնում: Խեծախ պատ-
րաստում են գլխավորապես այն նպատակով, որ ատամնացավ շտա-
նան: Նշանած աղջկա ծնողները ածում են խեծախը սկուտեղի վրա, մեջ-
տեղը մեղր լցնում և շուրջը շաքարեղեն շարում, ապա վրան փեսայի
համար մի ելակ, կամ մի գդակ, կամ մի գոտի և կամ մի թաշկինակ
դնում և տան փոքրիկի ձեռքով ուղարկում փեսացուին: Խնամուճք պատ-
վում են փոքրիկին միրգ և թեյ տալով, իսկ ուղարկված խեծախը փեսա-
ցուն բաժանում է տնեցիներին և յուր ընկերներին:

Շենց որ երեկոյան ժամերգության ղանգակները հնչում են, գրեթե
բոլորը, տղամարդիկ և կանայք, աղջիկներն ու հարսները զնում են եկե-
ղեցի: Սրանցից մի քանիսը բուժ մատարմատի մոտ, երկու ջղերի միջև
գոյացած փոսում ջուր են ածում և աշխատում առանց թափելու տնից
մինչև եկեղեցի տանել: Եվ եթե հաջողացնում են, կարծում են, թե իրենց
ամբողջ կյանքում բախտավոր են լինելու: Եկեղեցում նորապսակ երի-
տասարդները խաչհամբույր են տալիս և վառում ջահը: Գրեթե ամեն
ընտանիք մոմ է դնում և երբ ժամասացությունը վերջանում է, միմյանց
հրհրելով, խոսելով և կովելով աշխատում են վառել մոմը ջահից և առանց
հանգցնելու տանել տուն: Այստեղ, բակերում և հերթիկներում արդեն
դիզված են լինում խոտի կուլտեր, որ վառվում են եկեղեցուց բերված
մոմերով: Մակայն ամբողջ մոմը շեն վառում, նրանից մի քանի կաթիլ
կաթեցնում են գլխարկի մեջ, որպեսզի կայծակը իրենց չիփի, պահում
են և կարկուտ եկած միջոցին վառում, որ կարկուտը կաշի, ինչպես և
երաշտ ժամանակ, որ անձրև գա:

Այդ ժամանակ ամեն կողմից տերնդագի ծուխը քուլա-քուլա վեր է
բարձրանում: Մերերն ու պառավները ուշի-ուշով նայում են, թե ծուխը
որ կողմն է գնում, որովհետև այն կողմից է գալու սպասելի փեսացուն
կամ հարսնացուն: Իսկ ավելի խորագետները պնդում են՝ եթե ծուխը
հարավ կամ արևելք երթա՝ հասկը լավ է լինելու, իսկ եթե հյուսիս կամ
արևմուտք՝ վատ: Երեխաներից սկսած մինչև ծերերը թռչկոտում են

տերնդազի վրայով, իսկ աղջիկներն ու կանայք պատում շուրջը՝ բոլորեքյան «Ոչ քորտաիմ, ոչ բորեաիմ» ասելով: Իսկ մի քանի սրիկա երիտասարդներ էլ բղավում են.

«Տերնդազ, քուրդ ինձի տաս,
Շս պահենեմ, դուն դուրանաս»:

Մանր տղաներն ու աղջիկներն էլ հատուկ այս նպատակի համար գործված գուլպաներ կամ արախչիներ են ձգում կրակը, որպեսզի շնորհք ստանան: Բայց սրանք բոլորը դադարում են՝ երբ նորապսակ ամուսինները գալիս են տերնդազի շուրջը պտտելու: Հարս ու փեսա միմյանց բռնած, ձեռներին զույգ մոմեր, հարսի կողքին սանամայրը, փեսինը՝ կնքահայրը կանգնած, ձեռներին մի-մի մոմ, երեք անգամ պտտում են:

Տերնդազի շուրջը պտտեցնում են նորածին երեխային, որ քառասունքը լցվի: Իսկ ամուլ կանայք իրենց ուշխուրի ծայրն են վառում, որ երեխա ունենան:

Երբ տերնդազը հանգչում է, կանայք մոխրից տանում կճուճների վրա են ածում, որ բարաքայիք ավելանա, տան հերթիկից ներս են շաղ տալիս՝ ասելով.

«Կատուն նեսը՝
Մուկը դուսը»:

որպեսզի մկները չտրդվեն: Բանիմաց տանտիկիներն էլ նույն մոխրից ածում են հավանոցի հերթիկից ներս, որ հավերը շատ հավկիթ ածեն:

Գիշերը ճննդուկները գալիս տերնդազի մոխրի մեջ թավալվում են:

ՄԵՃ ԱԿԱ

Բարեկենդանի կերուխումից գրեթե հոգնած, երեկոյան մի անգամ ևս կուշտ ուտում և հավկիթով փակում են բերանները, ապա լվանում ձեռքերը, ողողում բերանը և պառկում երազներ տեսնելու: Որկրամուկները գիշերը մի քանի անգամ վեր են կենում, ընթրիքի մնացորդներից ուտում և նորից պառկում քնում:

Առավոտը շատ վաղ վեր է կենում տատը, ճիպոտ վերցնում, ոլորում, մի ուրիշ կարճ միպոտ մեջը կապում, ծայրին մի սոխի գլուխ ամրացնում, վրան ախիլպապ (իժու մաղից պեխ և միրուք ունեցող տի-

կին) կապում, յոթ գույնզգույն թեպուր կոխում սոխի մեջ և կախում տան հերթիկ խաշերկաթից: Երբ երեխաները զարթնում են, տատը ցույց է տալիս նրանց այդ և զոզոդալով ասում. «Տեսեք, տղաք, ախալուը էկեր է, ըլի թը պասերտ ուտեք, թը լը քար կը ցկե զխներուդ»: Մակայն նույն այս տատը նստելով տան շեմքին, մեջքը դրսի դռանն արած, ուտում է բարեկենդանից մնացածները: Այդ օրը «վլացարուք սրբեցարուք»-ի օր է ասվում. պետք է բոլոր ամանները լվալ, մաքրել, տուն-տեղ դուրս ձգել, թափ տալ, բունը ու պուճախ ավելել, խտտակել: Եվ ահա կտեսնեք մի հարս ամաններն է լվանում, յուղի, պանրի պուտուկները բերանքսիվայր կործում: Պետք է ասել, որ մեծ պասին ուտիսվա ոչ մի բան մնացած չի լինում. գեղի համար ամբողջ գյուղում մի ֆունտ յուղ անգամ չի գանվի, որովհետև ուտելունը ուտում են, մնացածը ծախում: Մյուս հարսը տներն է հոգում, փոքր թոնիրը վառում, տատը պոչով ապուր եփում և տղամարդկանց կիրակրելուց հետո հարեվաններին հրավիրում և պոչով ապուր ուտեցնում:

Այդ օրը «բաղդ փորձուկ»-ի օր էլ է, ուստի գնում են միմյանց տուն երկու նպատակով, նախ՝ շնորհավորելու մեծ պասը և երկրորդ՝ փորձելու իրենց բախուրը, նայելով թե ինչպես կ'չլուրասիրեն իրենց և կամ ի՞նչ կ'խոսեն: Սովորաբար հետևյալ խոսքերով են շնորհավորում. «Շնորհավոր պաս ըլի, բարով-խերով, դոով-դոկցով, բարեկամներով հասնեք սուրբ հարության»: Բայց երբ փոքր-ինչ զխները տաքանում է, այնուհետև շնորհավորությունը հետևյալ բանաձևն է ստանում.

«Շնորհավոր պաս»:

— Եփօր մերը գաս:

«Թասմ րախի տաս»:

— Թը խելք մնաս:

Ապա հավաքվում են մինի տանը և «տիկի» ներդաշնակությամբ պարում ու մախտիք զովում:

Բաղաքում նշանած աղջկա կերսանքը կաղին և շաղանակ առած դնում են աղջկա տունը «կաղին խաղալու»: Երկար զջուխտ թե վարդ» (կենս) և այլ խաղեր խաղալուց հետո, ընթրում են և վերադառնում:

Այնուհետև գրեթե ամեն օր միատեսակ բոլոր գյուղացիները, մեծից մինչև փոքրը, տղամարդ և կին, մինչև ժամը տասնմեկը, այսինքն մինչև ճաշվա ժամերգության ավարտը ծոմ են պահում: Զանգակները խփելուն պես բոլորը եկեղեցի են թափում, անհամբերությամբ սպասելով ավարտին և սաստիկ արագությամբ տուն վերադառնալով՝ վա-

յելում են պոչով ապուր, կամ մախոխ, ավելուկ, բողկ և այլն: Ավելի ջերմեռանդները միաժամ են բռնում, այսինքն օրը միայն մի անգամ են հաց ուտում և ջուր խմում:

Երեկոյին դարձյալ եկեղեցի են գնում, վերադառնում, իրենց համեստ ընթրիքն անում և հավաքվում միմյանց մօտ, հայտնի հասարակաց օգանները խոսելու, հեքիաթ ասելու: Ժամը դեռ ութը շեղած ցրվում են տները քնում: Առավոտ վաղ ժամը հինգին վեր են կենում, կենդանիներին դարմանում (հարդ տալիս) և նորից հավաքվում օգանները, ուր խոսակցելով մնում են մինչև ճաշու ժամերգությունը:

Կիրակի օրը տան բոլոր երեխաները մի-մի ձիպոտ առած, ուրախ-ուրախ բարձրանում են կտուրը և հերթիկից այնքան խփում ախալոշին, որ նրա թեպուրներից մինը վայր է ընկնում: Երբ թեպուրները վայր են թափվում, գալիս է ցանկալի դատիկը: Այսպիսով ախալոշը ծառայում է և որպես մեծ պասի օրացույց:

Առաջ սովորություն է եղել, որ մեծ պասից սկսած մինչև սերմը գետին ընկնելը ամեն կիրակի խեծախ անեն, իսկ այժմ այդ սովորությունը վերացել է: Միայն դեռ մինչև հիմա էլ ցանքից մինչև հունձի ժամանակը ամեն կիրակի հատիկ են անում, որ ցորենը շորանա:

Գրեթե առանց բացառության մեծ պասին, կիրակի օրերը պատարազը առավոտյան ժամերգության կից է լինում և անշուշտ մինը «առնում է», այսինքն մինը խնդրում է, որ յուր հին ու նոր ննջեցյալների հոգու համար մատուցվի: «Անողը» ուղարկում է քահանային գինի՝ բաժակի, և ալյուր՝ նշխարքի համար: Հետո էլ, որպես ժամոց՝ տալիս են նրան քսան-երեսուն կոպեկ: Նույն օրն էլ գյուղացիներին հոգու հաց է տալիս:

Միջունք

Միջունքի ուրբաթ Երեկոն կոչվում է «Քառսուն մանկունք»: Այդ երեկո շափահաս աղջիկները հալվա, գաթա, խեծախ են անում և սկուտեղի վրա դրած տաս-քսան կոպեկ էլ փող տանում նշանած ընկերուհու տուն: Այստեղ բոլորը միասին՝

Քառսուն մանուկը լճին,
Թագն ու պսակը ճախին,
Ինչ օր տվիր բաղնեցպանին,
Անոր կեսն ա ինձի տու:

կամ

Քառսուն մանուկ, քառսուն կուս,
Քառսուն մանկանց մեղա ես,
Ինչ օր տվիր բաղնեցպանին
Անոր կեսն ա ինձի տու:

և կամ՝

Լիճը լճին՝
Քառսուն մանուկը ճախին

ասելով՝ ծունր են դնում և յուրաքանչյուր անգամին քառասուն հատ ունեցող համրիչից մինը ձգում: Երբ 40 անգամ ծունր են դնում, այսինքն երբ համրիչը մի անգամ ամբողջովին քաշած են լինում, նախապես պատրաստած քառասուն քարից մինը մի կողմն են դնում: Եվ այսպես, երբ կես են լինում, այսինքն $20 \times 40 = 800$ ծունր դրած են լինում, սաստիկ խոնջած, նստում իրենց բերած հացը ուտում են և ապա կրկին շարունակում:

Երբ 20×40 ծունրն էլ դնում են, այսինքն $40 \times 40 = 1600$ ծունր դրած են լինում, սաստիկ հոգնած, մատների կոճերը ուռած, նորից նստում տանտիրոջ հացը ուտում և ընկնում քնում են:

Առավոտ այս աղջիկները միմյանց գլուխ են լվանում ի հիշատակ 40 մանկանց խեղդվելուն, հաց ուտում և յուրաքանչյուրն ստանալով տանտիրոջից մի գույզ գույպա եվեր, գնում են եկեղեցի, որտեղից և ցրվում են: Այդ ամբողջ օրը կիրակի են բռնում:

Մաղկազարդ

Ախալքալաքցիները ծաղկազարդին «Մաղկազար» են կոչում: Այդ օրը եկեղեցում օրհնում են ուռնու ճյուղեր, որ գլխավորապես բերում են նոր պսակվողները և բաժանում դրեթե բոլոր ժամավորներին:

Երեխաները խումբ-խումբ օրհնված ուռի ճյուղերը ձեռներին շրջում են տները և ասում.

Մաղկազարդար, ծառին զարդար,
Խունգ առեք, խունգ ծխեցեք,
Սև հավեն հավկիթ գուզեմ,
Կարմիր կովեն եղ գուզեմ,
Վե՛վ օր տա՛ շեն մնա,
Վե՛վ օր շտա՛ շորշորնա:

Մի քանիսն էլ օրհնված ուրի ճյուղով խփում են սրան-նրան և ասում.

Քամու տեղ,
Սրտի դեղ.

որպեսզի հիվանդությունները փարատվին:

Քաղաքում երեխաները գնում են հյուսններից «կարկաշաներ»: Սա փայտյա փոքրիկ ատամնավոր գլան է, երկար կոթով: Գլանի երկու ծայրին անց են կացված մի-մի գլանի մարծրության, երկու-երեք վերջուկ երկարության տախտակներ, միացած երկու ուրիշ տախտակով, գոտիներով: Մի ուրիշ բարակ տախտակ էլ, մի ծայրով հենվում է գլանի ատամների վրա, իսկ մյուս ծայրով անցնելով երկրորդ գոտով՝ միանում առաջին գոտուն: Երեխաները պտտեցնելով «կարկաշաները», ազմուկ են բարձրացնում և միևնույն ժամանակ երգում.

Կարկաշա, կարին կաշա
Սև օձին սև սոմաթա (ճիպոտ)
Խունդ առեք, մոմ առեք,

Տասերկու պատարագ էրեք:
Իմ կարմիր հավկիթս դուրս բերեք,
Ճերմակ հավկիթս նես տարեք:

Կամ՝

Ճը՛ն, ճը՛ն, ճճեռեակ,
Աստու հալալ պիպեռնակ,
Ընկերս ընկավ ծովը,
Մովեն էլավ ծիրանը.

Խունդ առեք, մոմ առեք,
Տասվերկու պատարագ էրեք,
Իմ կարմիր հավկիթս դուրս բերեք:

Տնեցիները սովորաբար հավկիթ կամ հատիկ են տալիս: Հատիկը, որ այդ օրը ամեն տուն պատրաստում է, խաշած մաքուր ցորեն է, հետը քիչմիշ, շաքարի մանրուք և ընկույզ խառնած:

Օրհնված ուղբ խնոցու, կաթի մեջ են ձգում, որ առատ լինի:

Այդ օրը նշանած աղջկա փոքրիկ տեղերները մի կամ երկու ապասի (20 կոպ.) առած գնում են հարսի տունը: Հարսը լվանում է այս տեղերի կամ ոտները և նոր գուլպա հագնում և կամ գլուխը և նոր

արախչին ծածկում: Տեղերները դնում են իրենց բերած դրամը տաշտի ափին, որ հարսը վերցնի:

Երեկոյան, դռնարացուկից հետո քահանան քարոզ է խոսում բարեգործության մասին, որ հետո տիրացուները գրակալը դնում և գրում են ժողովրդի խոստացած նվերները եկեղեցուն, որից գոյանում է 10—12 կոտ գարի և ցորեն, մի քանի ֆունտ ձեթ, խունկ և մոմ:

Չարչարանաց շարաք

Չարչարանաց շարաթում ժողովրդի շեմեռանդությունը ավելի ևս զարգանում է և եկեղեցին գրեթե միշտ լի է լինում:

Իմաստուն և հիմար կուսանաց տոնին ավագ տիրացուն տասը տոմսակ է պատրաստում, որոնցից հնգի վրա իմաստուն, իսկ մնացածի վրա հիմար խոսքերն է գրում: Տասը կուսանաց առակը կարգալիս, տասը երեխա, առավելապես երգիչներից, շապիկ հագած կանգնում են դասը, գրակալի շուրջը, մի-մի վառած մոմ ձեռներին: Դեռ ավետարանը չավարտած՝ ավագ տիրացուն մի ափսեի մեջ լցրած այդ տոմսերը՝ առաջարկում է այդ տասը երեխաներին առնելու: Իմաստության տոմսը վերցնողը սաստիկ ուրախանում է և յուր ձեռի մոմը մինչև ժամերգության ավարտը վառ պահում: Ուրախանում են նրա ծնողներն ու ազգականները, որովհետև հավատում են, որ գուշակությունը ճիշտ է: Բայց վայ նրան, ում հիմար է դուրս եկել. իսկույն նրա ձեռի մոմը մարում են և հենց եկեղեցում ամեն կողմից նախատում նրան:

Չորեքշաբթի կեսգիշերին «ցավիս վերջ» են ասում և մինչև մյուս օրվա ճաշի ժամերգության ավարտը լուռ մնում, որպեսզի այլևս ցավ չունենան: Ավագ հինգշաբթի օրը գլուխ չեն լվանում, որ չգժվեն, սապոն չեն գործածում, որ կսկիծ չտեսնեն, յոթ հավկիթ են խաշում և պահում զատիկ կիրակի օրը ուտում, որ ատամները չցավեն:

Երեկոյին, Ոսնլվայի ժամասացության ժամանակ գրեթե ամեն մի տնվոր մի կամ երկու «խիար» (վարունգ), կտոր կարագ, մի քանի հավկիթ տանում է եկեղեցի և տալիս քահանային:

Քահանան այդ կարագի մի մասը օրհնում և բաժանում է ժամավորներին, իսկ մյուս, մեծ մասը և հավկիթները, որ մի քանի հարյուր է լինում, տանում տուն:

Ոսնլվայի ժամանակ քահանան շորում է սեղանի վանդակի առջև, ունենալով յուր երկու կողքին մի-մի տիրացու, որոնցից մինը ավետարան, իսկ մյուսը խաչ է բռնած լինում: Քահանայի առջև դրվում է կոնքը, իսկ տիրացուները՝ մի-մի ափսե՝ խաչամբույր ձգելու համար:

Նախ գյուղի առաջավոր և հարուստ մարդը, որ ամենից էլ առաջ է կանգնած լինում, մերկացնում է աչ ոտը և մեկնում քահանային: Վերջինս լվանում է ոտը և մի քիչ օրհնված յուղ դնում վրան: Հետո սա համբուրում է իրան ու ավետարանը և ամենաշատը հինգ կուպեկ խաչհամբուրյա ձգում: Այսպես՝ քահանան լվանում է բոլոր ծերունիների ոտները, և երիտասարդների, կանանց ու երեխաների ձեռները և յուղ քսում, ստանալով մեծամասնությունից 1—2 կուպեկ խաչհամբուրյա, որով և զոյանում է մոտ մի ուրբի հիսուն կուպեկ:

Օրհնված յուղը քսում են աչքերին և ճակատին, իրենց կամ անասունների ցաված տեղին, որ լավանա, մի կտոր էլ յուղի կարասի մեջ են ձգում, որ «բյարյաքյաթով» լինի:

Գիշերային ժամերգության ժամանակ, մանավանդ մոմերը հանգցրած միջոցին ահագին անկարգություններ են տեղի ունենում: Քաղաքում շատ անգամ երիտասարդները բռնում համբուրում են աղջիկներին, հանդերձները միմյանց հետ կարում, կռվում, ծիծաղում և այլն:

Միևնույն գիշերը դարբինները մի ոտի վրա կանգնած, բոլորովին լուռ՝ յոթ ամրոցի դռներից հավաքած երկաթից շինում են ապարանջաններ, փոքրիկ մատանիներ, որ անծմիր են կոչվում: Մյուս օրը այդ բոլորը եկեղեցու դռանը անխոս կանգնած վաճառում են: Անժրմին քաշ են անում երեխաների օրորոցից, իսկ ապարանջանները դնում աղջիկների և կանանց թևերը, որպեսզի շարից սպասովին:

Ավագ ուրբաթին կոչում են սուգ ուրբաթ: Այդ օրը մինչև ճաշ տոն են պահում, իսկ ճաշից հետո կանայք կար անում, տղամարդիկ արոր թշում, դարբինները մեխ ծեծում, Հուգայի աչքը փորելու նպատակով:

Մակայն այդ օրը ոստայնանկները շեն գործում, որովհետև եղեգն են տվել Քրիստոսի ձեռքը, դարբինները շեն աշխատում, որովհետև մուրճով են բեռեկ Տիրոջը: Հյուսնները շեն տաշում, որովհետև Քրիստոսի խաչափայտը տաշել են: Եկեղեցում երեսներին շեն խաչանում, որովհետև ինքը Քրիստոսը խաչված է: Ծուներ շեն դնում, որովհետև Քրիստոսը խաչին, իսկ Հուգան գետնին է, համբուրողը Հուգային է համբուրում:

Չատիկ

Շաբաթ օրը ժողովրդի մեծ մասը ծոմ է պահում և անհամբուրյամբ սպասում ժամերգության: Շատերն էլ գնում են քահանայի մոտ և ստիպում նրան շուտով սկսել ժամերգությունը, այնպես որ շատ գյուղերում ժամը 4-ին արդեն պասերը լուծած, պրծած են լինում:

Այդ երեկոյի պատարագն էլ մինը «առած» է լինում, և քահանան, երեցփոխը, տանուտերը և ուրիշներ գնում են դրա տունը՝ ընթրելու: Պասերը բանում են հավկիթով և ելնում, նայում արևին, որ «արևով ուտեն»:

Ս. Հարությունի գիշերը ծնվողին եղունկ-աշելու շնորհքով օժտված են համարում: Նրա հայրը իսկույն մի գառ է մատուցում և նրա թիակները պահում, մինչև որ նորածինը մեծանալով՝ կարողանում է աչ թիակի վրա նայել և տեսնել կորած կամ գողացած տեղերը:

Կիրակի վաղ առավոտյան, երբ ժողովրդյան կարծիքով նահատակների վրա լույս է իջնում, գնում գերեզմանների վրա մոմեր են վառում: Պատարագի ժամանակ նշանված աղջիկների ձեռքը տալիս են «չաթալ» մոմ: Սա մի ձվի վրա խփած մոմ է, սրի վրա ուրիշ շորս մոմեր էլ են ամրացրած:

Կիրակի օրվա պատարագը ևս մինի հին և նոր ննջեցյալների հոգու փրկության համար է մատուցված լինում, և գրեթե գյուղի մեծ մասը նրա տանն են կատարում զատիկը:

Հացից հետո քահանան շտապում է օրհնելու տները: Այստեղ «տուն» բաժնում, խոնջի վրա դրված է լինում թթիմոր, աղ, խունկ, հացահատիկներ, շուր և այլն, իսկ խոնջի տակ՝ քակոր, հավկիթ և այլն, որպեսզի սրանք ևս օրհնվին և շտաանան:

Այնուհետև գնում են միմյանց տուն զատիկը շնորհավորելու՝ «Քրիստոս յարեա ի մեռելոց», «օրհնեալ է յարութիւնն Քրիստոսի» ասում, ձեռք տալիս և համբուրվում: Կանայք էլ նույն կերպ շնորհավորում են, իրենցից տարիքավորների ձեռքը համբուրում, սրանք էլ նրա ճակատն են համբուրում. իսկ հասակակիցների հետ համբուրվում են:

Չատիկը շնորհավորելուց հետո խումբ-խումբ հավաքվում են կտուրները և հավկիթ կովեցնում, մանավանդ երիտասարդներն ու երեխաները:

Նշանած աղջիկներին փայ են բերած լինում և սրանց տանը կերուխումը, խոսքն ու ծաղրը անպակաս է լինում: Շոտով գալիս է և գուռնան, ու ամբողջ գյուղը կրոր պար է բռնում սրանց կալերում:

Մյուս օրը մեռելոց է. բոլորը, բացի աղջիկներից ու հարսներից, գնում են դերեզմանատուն, որ սովորաբար գյուղի մի կողմն է լինում, մեկուսի ընկած, և օրհնել տալիս գերեզմանները: Շատերը իրր ննջեցյալների բաժին տանում են իրենց հետ փլավ, տապկած կարտոֆիլ,

հավկիթ, մեղր և քահանայի ու աղքատների հետ ուսում գերեզմանի մաս:

Ջատիկից մինչև համբարձում, երեկոյան ժամերգությունից հետո այլևս չեն գործում, որ «հավկուր» շինեն, այսինքն շրկվին արևը մայր մտնելուց հետո տեսնելու կարողությունից:

Մայիսի 7-ը

Այս օրը ամբողջ գավառի համար ուրախության և «սեյրանի» օր է: Գեռ սրա նախորդ օրը տանտիկիները շինում են յոթական քակոր և դնում կտուրը, որպեսզի այդ օրը, մայիսի 7-ին, նայեն, թե զրանց տակից որդեր պիտի դուրս գան, թե ոչ, որովհետև հավատում են, որ եթե դուրս գան, տարին «գովըթվոր» կլինի:

Ուրիշներն էլ մի գդալ են ձգում երգիկից ներս, եթե բերնի վրա է ընկնում, ասում են, թե թանկություն է լինելու, իսկ եթե մեջքին՝ էժանություն:

Եթե այդ օրը անձրև է գալիս, աղջիկներն ու հարսները հերարձակ կանգնում են անձրևի տակ, որպեսզի մազերը երկարին: Մի քանիսն էլ այդ անձրևի ջուրը կաթի մեջ են ածում, հուսալով, որ կմակարգվի: Այդ օրվա անձրևը շատ առողջարար է, և ծովերի վրա թափվելով՝ մարգարիտ է դառնում, որովհետև Եդիա մարգարեի արցունքներն է: Այդ օրը թե տղամարդիկ և թե կանայք աշխատում են լողանալ, որովհետև բոլոր ջրերը այդ օրը սաստիկ առողջարար են համարվում և կարող են ամեն տեսակ հիվանդություններից բժշկել: Այդ օրը լողանում են նաև փերիները, լողանում է և նրանց պահապան ծերունին: Սակայն սա ջուրը մտնելուց առաջ, վերցնում է յուր գլխարկը (սրբյուլահ), որի շնորհիվ նա աներևույթ է դառնում և գնում ջուր խմելու եկած կովերից մինի զխին, երկու պոզերի միջև, որովհետև եթե գետնին դնի՝ «թըլըսումը» կկորցնե: Եվ որովհետև փերիները և սրանց հետ նրանց պահապանը երկար լողանում են, ուստի կովերը վերադառնում են, տանելով իրենց հետ գտակը: Եվ եթե մեկը, նախիրը վերադառնալիս մի ոտի վրա յոթ անգամ պտույտ տա, կարող է տեսնել ամենից առաջ եկող կովի պոզերի միջև դրված այդ սյուրբուլահը: Կտրիճ տղան կարող է խել այդ զխարկը ու փախչել, միայն կովը կընկնի նրա ետևից և եթե հասնի, կխփե նրան յուր պոզերով: Անմիջապես սրբյուլահը ձեռքից կերթա և կովի խփած տեղն էլ միշտ ծակ կմնա, ինչքան էլ որ նոր շոր հագնի: Բայց եթե կովը չհասնի տղային, սրբյուլահը կմնա իրեն և այնուհետև միշտ կարող է ծածկել այն և աներևույթանալ:

Բավական մեծ դեր խաղում են այդ օրը և պոչվոր պառավները: Այդ օրը Ախալքալաքի և շրջակա գյուղերի բնակիչները ուխտ են գալիս Ախալքալաքի արևելյան ձորում, գետի ափին գտնվող «Ճգնավորի վանքը»:

Համբարձում

Ամբողջ գավառը համբարձման «կաթնապրի օր» է կոչում և ամեն տուն այդ օրը կաթնապուր եփում:

Դրա նախորդ, չորեքշաբթի օրը շատ վաղ, դեռ արշալույսը չժապած՝ աղջիկները գնում են սարերը և վիճակի երգեր երգելով ծաղիկներ հավաքում: Հետո մի կճուճի մեջ յոթ աղբյուրից ջուր և յոթական քար ու մի քիչ էլ ծաղիկի թերթեր են լցնում: Ապա ծաղիկները գովելով մի մեծ փունջ են կապում, գնում կճուճի բերնին, փոքրիկ փնջերով էլ շուրջը զարդարում: Երեկոյան, երբ աստղերը ելնում են, այդ կճուճը դնում են «աստղերի տակ», բացօթյա մի տեղ:

Նույն օրը կանայք պասմայի (քակորի շերտ) մեջ կողպած կողպեք են ձգում կամ շափում և նշնում են մի որևէ խոտի բարձրություն: Մյուս օրը, հինգշաբթի, հանում են կողպեքը և նայում, եթե ինքն իրեն բացված է լինում, այդ նշան է, որ այդ տարին հաջողությամբ պիտի անցկացնեն, իսկ եթե փակ է մնացել՝ անհաջողությունը և հիվանդությունը պատելու են իրենց: Մյուսներն էլ շափած խոտն են գննում, որ եթե երկարացած լինի՝ բախտավորության, իսկ եթե նույնը մնացած՝ անբախտության նշան է: Այդ օրը նորահարսերն ու նորատի կանայք ծաղկամոր կիրակի են պահում, որպեսզի ծաղկամարը, որ մի քանիսի ասելով Վառվառե կույսն է, պահպանե երեխաներին ծաղիկ և կարմրուկ հիվանդություններից:

Վիճկվոր (վիճակ հանող) աղջիկները խմբովին վիճակը (նախընթաց երեկոյին պատրաստած կճուճը) ինչսիս և ապի մեջ դրված ծաղիկի փնջեր ձեռքերին պտտում են տները և ջուր, ափազ ու ծաղիկ փնջեր բաժանում: Ծնեցիներն այդ ջուրն ու ափազը լցնում են խնոցին, որ կարող շատ լինի և հետո մի որևէ նշան, օրինակ, բանալի, կոճակ, մատանի և այլն, ձգում վիճակի մեջ, որ իրենց համար էլ վիճակ հանեն: Սրանից հետո աղջիկներին էլ տալիս են պանիր, հավկիթ, կաթ: Վիճկվորները երբ այսպիսով բավական բան են հավաքում, գնում են իրենցից մինի տունը, այդ պաշարեղենով կերակուր եփում, ուտում, խաղում, հրգում և պարում:

Վիճակը մնում է այս տանը մինչև մյուս՝ «դեմի» հինգշաբթին,

երբ հավաքվում են մի ծաղկալից դաշտ և կամ մի կալ. աղջիկներին մինը դառնում է հարս, այսինքն բոլորովին լուռ նստում է, առնում վիճակը գիրկը և երեսը ծածկում մի քողով: Մյուս աղջիկները նստում են նրա շուրջը և խմբով վիճակի երգեր երգում: Յուրաքանչյուր երգից հետո հարսը վիճակի միջից մի նշան է հանում, որը և տալիս են տիրոջը, միանգամայն երգված կտորից գուշակությաններ սնելով: Երբեմն էլ երիտասարդների խմբեր գալիս են երգով մրցելու աղջիկների խմբի հետ և փոփոխակի երգելով ավելի շուք տալիս հանդեսին, որ սովորաբար սլարով է ավարտվում:

Ժողովուրդը հավատում է, թե լույս հինգշաբթի, կեսդիշերին, բոլոր ծաղիկներն ու խոտերը սկսում են միմյանց հետ խոսիլ և ասել, թե իրենք ինչ ցավի դեղ են կամ իրենց արմատի մոտ ինչ կա: Եվ ով Շահմար օձին խփում, երկու հավասար մաս անում ու սրչի կողմինը ուտում է՝ նա շնորհ է ստանում այլ ծաղիկների լեզուն հասկանալու: Այսպես՝ Լոխմանին, որ կերել էր Շահմար օձի մոտ մասը, շատ լավ հասկանում էր ծաղիկների լեզուն: Սա մի անգամ յուր աշակերտների հետ այդ երեկո ծաղիկներ է ժողովելիս եղել: Աշակերտներից մինը, որ ցույց էր տալիս, թե ոչինչ չի հասկանում, մինչդեռ ամեն ինչ հասկանում էր, վերցնում է մի ծաղիկ: Իսկույն Լոխմանին, որ չէր կամենում աշակերտներին բան սովորեցնել՝ միակ դիտումը մնալու տենչով, հասկանում է, որ նա արդեն բավական բան է սովորել, խփում, սպանում է նրան:

Վարդավառ

Վարդավառին, ժողովրդի բարբառով՝ վարդերին, միմյանց վրա շուր են սրսկում, «վարդեր անում»: Ուրիշներն ազավիններ են թուցնում և կամ զոհում: Քաղաքում վարդի մեծ փնջեր կապած տանում են եկեղեցի և դնում սեղանի առաջ:

Պատահում է, որ հասարակութունը մի կամ երկու եղ է մատողում, սակայն այս զավառում այս առիթով մի առանձին ծես չի կատարվում:

Ս. Գևորգ

Այս տոնը ժողովրդի բարբառով կոչվում է ծուառն: Այդ օրը ոչ ոք բան չի անում, վախենալով, որ կծոփի: Պատմում են, թե շատերը բան են արել և անմիջապես ձեռքերը, ստները և այլն ծովել են: Եթե

ստիպված են մի բան անելու, պատժից ազատվելու նպատակով դործից անմիջապես հետո մի քիչ գարի են ցանում: Հավատացնում են, թե այդ ցանված գարին ծուռ է դուրս գալիս, կրելով յուր վրա Ս. Գևորգի պատիժը:

ՀԱՅ ԳՐԶԱԳԻՐՆԵՐ

Ախալքալաքի գավառի հայոց գրեթե բոլոր եկեղեցիներում կան մի քանի ձեռագիր ավետարան, այսմավուրբ, մաշտոց և այլ կրոնական բովանդակությամբ գրքեր, որոնք բավական լավ են պահվում: Այս ավետարաններից մի քանիսը հայտնի են իրենց հրաշագործութուններով և բազմաթիվ ուխտավորներ ունին: Այսպես, օրինակ, Կուռնաշեթու «Սուրբ Գրիգոր Ավետարանը» տարին երկու «դերի» ունի, իսկ Դիլիսկայի, Սուրդայի, Ճանճղայի ավետարանները յուրաքանչյուր կիրակի բազմաթիվ ուխտավորներ ունին: Բոլոր ձեռագրերը, ինչպես և շատ եկեղեցական սպասներ և իրեր, օրինակ Կուլիկամի և Պալխոյի գեղանկար վարպետները, սրբոց պատկերներ, սկիզներ բերված են էրզրումից և բավական զգուշությամբ պահվում են: Ցավալին այն է, որ ավետարաններից մի քանիսն ընկել են մասնավոր անձերի ձեռքը, որոնք իրենց տունը ուխտատեղի են դարձրել և օգտվում են առատ խաչամբույրներով: Նույնիսկ իրենք քահանաները, փոխանակ ուրիշներին այդ արդելելու, իրենք են անում: Բյավեա գյուղի քահանան յուր տան մի անկյունում դարսել է մի երկու ձեռագիր, մի քանիսն էլ սպած ավետարաններ և «Օխթե յայպեր» անվամբ նշակել, այնպես որ թե յուր, և թե շրջակա գյուղերից բազմաթիվ ուխտավորներ գալիս են ուխտ անելու և բավական խաչամբույր ձգում, որը քահանան յուր պետքերի համար է գործածում, մինչդեռ գյուղի եկեղեցին մի հին, վրաց եկեղեցու ավերակ է և կարճ ժամանակից կքանդվի: Փող էլ չկա, որ նորից շինեն: Այսպես և Օլալերտի, Սաթխայի և այլ տեղերի քահանաները: Մի քանիսն էլ, ինչպես Դիլիֆի Տեր Բարդուղիմեոսը՝ ձեռագիր ավետարան չգտնելով, վեներտիկում սպած մի հին, կեսը թափած ավետարան է բազմացնում և շահվում: Այսօր ամբողջ Դիլիֆը տերտերանց «Փոքրիկ Ավետարան»-ով է ևրդվում:

Բացի կրոնական բովանդակության գրքերից, որոնք սակայն հեպտակոտ անհետանում են, որովհետև սովորութուն է դարձած ննջեցյալ քահանայի կրծքին դնել և հետը թաղել, կան և բժշկարաններ, Սոլոմոնի, Ռամ ձգելու գիրք և այլն:

Գրչագիրների կազմը

Առավելագույն կեղծեցիներում գտնված ձեռագիր ավետարանները գեղեցիկ և ամուր կազմ ունին, որոնց երեսները դարգարված են արծաթե քանակներով: Այսպես, Վաչիանու եկեղեցում կա բամբակյա թղթի վրա բոլորագիր և ութնամյա մի Ավետարան, որ գրված է ԶնԸ (1499) թվին «ի դուռս սբբոյն Գէորգայ»: Սրա կազմը, որ նորոգված է հայոց ՌՅԱ (1612) թվին Ս. Կարապետու դասը, ընկուպենու բարակ տախտակներից է, ամբողջովին կաշիով պատած: Առաջին երեսում արծաթի վրա քանդակված է Քրիստոսի խաչելութունը, զլխի աջ կողմում արև, ձախում՝ լուսին, կողքերին Մայր Աստվածածին և Մարիամ Մագթաղինացին:

Մյուս երեսում քանդակված է Սուրբ Աստվածածինը՝ Քրիստոսը գիրկը, երկու հրեշտակներ թագ բռնած շխին, կողքերում մի-մի կերոն: Գրքի բերանին մի վերջոկ լախուսիյան արծաթյա փականք է, վրան շորս ավետարանիչների անդրիններ քանդակված: Մեջքը պատած է ութ կարգ միմյանց հետ միացած արծաթե հասերի շարքերը:

Սուրբայի եկեղեցումն էլ կա մի ավետարան, բամբակե թղթի վրա, 16 ծալ բոլորագիր, Պետրոս դպրի գրած: Թվականը անհայտ է: Նշանավոր է կազմը. բարակ կաշեպատ տախտակներ, երեսը արծաթե քանդակներ: Առաջին երեսում քանդակված է դուրս ցցված 2 խորանաձև կամար՝ մոտերը մի-մի հրեշտակ, կամարի ներքև սկիհ, վրան Քրիստոսը՝ խաչված, աջ կողմը լուսին, ձախը արև: Լուսնից ներքև Աստվածածինը, իսկ արևից ներքև Հովհաննես առաքյալը՝ ձեռքերը կրծքին: Այս քանդակի տակ փորագրված է «յշտակ է արծաթապատ սբ. աւետարանս հնգսլ մհի մրտոսին և կողակցոյն»:

Մյուս երեսը նույնպիսի երկու կամարների տակ մի-մի կերոն, մեջտեղը՝ սուրբ Աստվածածինը՝ Քրիստոսը գիրկը, աջ ձեռին պսակ, զլխին թագ, որի կողմը մի-մի հրեշտակ են կանգնած: Սրանից բարձր՝ ամպեր, միջից Հայր Աստված, ձեռքերը զեպի Ս. Աստվածածին պարզած:

Քանդակի տակ փորագրված է. «Եղիսաբեթին որդուցն մհի Անտոնին և Յարութիւնին ՌՄԸԸ. Մարտի ԺԹ-ին»:

Հիշենք մի քանի նշանավոր գրչագիրներ ժամանակագրական կարգով:

ԺԳ դար

Դիլիսկա գյուղի եկեղեցում կա քառածալ, բամբակի թղթի վրա

երկշար, բոլորագիր տառերով գրված մի Ավետարան, որ դարգարված է Քրիստոսի մարգեղության 14 և շորս ավետարանիչների յոթ պատկերներով: Սա կոչվում է Ամենափրկիչ, և ամեն կիրակի բաղամթիվ ուխտավորներ ունի: Ավետարանի վերջը գրված է. «Ընքն գիտէ ակերն կայուն. որ ի յայքէն մինչև ի նուն՝ ոչ է կտրած զրիչս ՚ի բուն: Փառք քեզ անսահման անուն և անստղակյան անձնատրութիւն հայր և որդի և սուրբ Նոյի: Որ ետուր կարողութիւն մեղսակարգ զծողի Գրիգորի բանի խնցրողի հասանել յաւարս այսմ տատաւածախոս տալի: Որ շարագրեցաւ ի խնդրոյ աստուածաէր և երկիրած քահանայի յովհաննիսի՝ բարեպաշտի Զի որբ տատաւածային սիրոյն փափազեալ հեռեին միշտ յարազուարճարեր կրանաւք խորհին յարէնս տեան ի տուէ և ի զիշերի: Ըստ նմին արինակի և սրբաակր քահանային յովհաննէս միշտ և հանապաղ բորբոքէր սուրբ և տիեզերաբարոզ աշխարհակեցոյց քառավտակ սուրբ աւետարանիս և ըստ բնաւոր բարուց բարույն ախորժական մտաւք մեծաւ տենչմամբ ստացաւ դստ՝ անջնջելի արձան: Ի մխիթարութիւն անձին և ի յոյս փրկութեան: Ոչ ունելով մանկունս ըստ մարմնոյ՝ ստացաւ բարի յերուսաղէմ: Որով մարթասցէ ժառանգել զերանութիւնն անվախճան: Եւ ես յորնամեղս և փծունս ի գրչաց Գրիգոր պիտականուն վարդապետ՝ տեսեալ յիսափազ և ղուր սորա առ նա՝ յանձն առի և յանկ հանեալ կատարեցի ըստ իմում կտրի զխնդիր սորա. շնորհաւք և ողորմութեամբն Աստուծոյ: Ի թուականիս հայոց՝ ի ՊԽԹ՝ ամի, յամսեանն արեղի: Արդ՝ եղև սկիզբն սորա՝ ի վանս սուհարայ՝ որ այժմ կոչի խառաբաւտայ՝ ընդ հովանեաւ հոյակաւս և հրշակաւոր բարձրաբերձ և պայծառաշէն սուրբ եկեղեցոյ՝ որ յանուն սբ. տիրամարն լուսոյ կառուցեալ կայ և աւարտեցաւ ի վանս ցիպնայ ընդ հավանեաւ Սուրբ Ստեփանոսի և Վասիլ թաղաւորի Սուրբ նշանի՝ որոց խնամաւքն աւարտեցի: Արդ աղաշեմ դամենեսեան, որք պատահէք սմա՝ տեսութեամբ կամ աւղտութեամբ յիշման արժանի արարէք զվերոյ ասացեալ պատուական քահանայն զՅոհաննէս: Որ ստացաւ զսուրբ աւետարանս՝ ի հալալ արդեանց և յարդար մաստակոց իւրոց յիշատակ բարի իւրն և ծնողաց իւրոց: Ստեփանոս քահանայի և ամուսնոյն յովանիսի սուրբ: Որոց՝ ողորմեցի ՔԱ Աձ՝ այժմ և յաւուրն աներեկի: Նաև թարմատար զրչիս Գրիգորիս և իմոցն ամենայնի: Ամէն: Նաև զբարեմիտ հեղահոգի և զսրբաէր արեղայն զընդասակէս կոկաւղ քարտիս՝ յիշեցէր՝ և ած ողորմի ասացէք նմա:

Եւ արդ՝ զնեղութիւն ժամանակիս՝ ո՞վ կարէ ասել՝ կամ ընդ գրով արկանել: Զմահ և գերութիւն, զսով և զսասունութիւն: Զոր կրեմք ազգս

քրիստոնէից ի յայլասեռ անարինաց և անհաւատից: Զի շարժեցաւ տուն խորագմին առ հասարակ ցեղ թաթարին, գալ աւերել և ապակահել վաշխարհս ամենայն: Եւ մենք ի յահէ նոցին սասանիմք, և ար ըստ արէ մահու ակն ունիմք: Եվ հավատալով հայցեմք յայ. փրկել զմեզ յայնմ ահագին սպառնակեացն: Այլ և զդառնազին վիշտս, զոր կրեմք ի մերոց իշխանաց. ի թուրքէ և ի քրդէ. յընտանեաց և յաւտարաց ի ներքուստ և արտաքուստ անասելի և անպատմելի:

Այլ զի և կաթողիկոսքն մեր՝ զերկոսին սպանին՝ ի միում ամի: Հերու զաւեր Քէրդորոսն՝ ի Սիս սպանին և մինչդեռ տարին շէր վճարել՝ զտէր զԱքարիայն ի յոստան քարկոծ արարին. թող զայլ նեղութիւնս զոր ընդ մեզ անցուցանեն:

Ողբ ի գծողէս քան

Նկայք ողբացուք եղբարք զչարութիւն ազգին նետողաց,
Բամք հայաստանեայց, գառնացեալք ի յանարինաց,
Գանձն վնասակա՛ր բուսեալ՝ յանդաստանս մեր հայաստանեայց.
Սիղաշոր⁴³ առնեն րամեզ զրկելով ի մեր հայրենեաց:
Արամ և Եփրեմ լրծեալ հալածեն ըզ տունս յուրայեանց
Յայսմ արինակի սոքա, թորդոմեանք և ազգն մարաց.
Սաստիւ տագնապեն ըզմեզ՝ նեղութեամբ ի յամէն կողմանց:
Գլուխ ոչ գոլով հայոց, վշտացեալ յամենայն ալլաղզեաց:
Ի թիւ ութ հարիւր հային՝ քատասուն և երկու ամին:
Գառնին աստուծոյ վկայ զհայրապետն մեր արարին.
Որդիք հագարու զարմին շարաշար զմեզ խոցոտեցին.
Բամեալ ժողովոյս հայոց ըզ գլուխն ի մեզնէ բարձին:
Ի հնգետասան արին մեհակի շորեքշարաթին,
էկին պատեցին զմեր տէրն և յատեան մահու մատնեցին,
Վասն Քաի սպանին, զի գլխաւորքն քրիստոնէին
Առին բաղանիսն ածին, առաջի պիղծ ամիրային,
Սաստիկ շարախաւէին, թէ հարեալ է սա զմեր զադին.
Նա պիղծ ամիրայն ասէր ուրացիք զՔս կենդանին:
Զխաշեալ թաղուորն անմահ ըզկապաւղն երկնից կամարին.
Արդ սք հայրապետըն մեր՝ դաւանէր զորդին միածին:
Քրիստոս է ԱՄ հարիս արարիչն յախտենին,

Ահա հաւատամ ըզ նա փառակից հոգոյ ճըշմարտին.
Բամիցն հրաման տրին ամենայն, և մոլնայ զադին
Իսկայն խոցեցին ըզ տէրն և ընծան պէս զոչեցուցին
Առին բաղանեացն ելին և քարիւ ըզգլուխն հարին.
Կապած էր շուանն ի վիզն, զոր առեալ ի քարշ տանէին
Այնչափ զնա հարին սրով և քարիւ մինչ կատարեցին,
Թաւալ ի փողոցն արկին. զմարմին մեր պատրիարգին
Ուղեղըն ցրուեալ զըլխին՝ ըզղազաթն վերացուցին,
Ղամպար վառել կամէին ի յայրել ըզնըշարս մեր տիրին.
Իսկ ամիրապետն ասաց զնա տանել ի յիւր հայրենին
Կական յայնժամ ըտամին հառաշմամբ յերկիր հնչեցին
Որ ի քարկոծման ժամին փախուցեալ զաւղեալ թաքչէին
Սաստիկ էր լալին նոցին. կոծ և աշխարհն ի վերայ տիրին
Իրր ըզտէրունեան արին դատերացն եեմին:
Նման նախալկային վրկայեալ մեր տէրն յոստանին
Աւաղ ըզմեզ ասեմ եղբարք, որ հասաք յաւուրս ահագին:
Խոց վիրաց առաք ուժգին յայլասեռ ազգէ հրամանին:
Թող մեզ խաւարի այսաւր. լոյս լուսնին և ակն արեւին
Աստանար և մեք եղբարք կոծեցուք զազլտս ահագին,
Մեծահանդէս աթոռին սիս անուն վիճակ մեր վեհին
Այլ և զհայրապետ նորին զտեղապահ սուրբ լուսաւորչին
Բամից բոլորից հեկին զտէր Քորոսն անդէն սպաննեցին
Այն էր հերունի ամին և զմեր տէրն ի տարելցին
Յայսմ ի ահագին վըշտին՝ մեք վիրաւք հարաք դառնազին.
Տէր Զաքարիա, բարի, նահատակ եղեր Քսի:
Տէր Զաքարիա արի խաշակից եղեր Յիսուսի:
Տէր Զաքարիա ընտրեալ քաջ հովիւ նման Քսի.
Վասն մեր բարեխօսեա առ Քրիստոս տէրն ամենայնի.
Շնորհել մեզ հովիւ բարի զհարազատն ըս սիրելի:
Զտէր Գալիթ հոգովն արի, լի շնորհաւք յաջորդ աթոռի:
Պահել անսասան յերկրի յամեր ամս ժամանակի:
Այլ և երգաւղիս տաղ Գրիգորի անձին եղկելի:
Մասն ընդ քեզ պարգևեցի, յաննախանձ մեր տեառնէն ճըրի:
Ամէն և այս եղիցի անյաջաւզ դրանս ընդունողի:
Սուրբն Յովհաննէս արծրան լման թոեալ մտաւք անհասական:
Առ ի պատմել բանին մարդկան զանճառն էիցըս հանրական:

⁴³ Բարձրում կարմիր թանաքով՝ խիլ :

Վաշխան գյուղի եկեղեցում կա ութածալ, մագաղաթե Ավետարան, երկէջ և բոլորագիր. գրել է Հովհաննես քահանան «ի յտոյց աւրինակէ, կենաւք տառապանաւք և բազում պանդխտութեամբ: Ի մեծ թուիս ի յեղանական շրջագայութեան. արեգական ստոր իջիւք երկնաշու ճանապարհաւ յերկնից յերկիր հայելով ըստ արարչութեանցն. չափեալ յելանելոյն ադամայ ի դրախտէն զու և զճոա ամ ըստ եօթանասնիցն որում մեք վարիմք, և է ի մարգեղութենէ բանին այ անժամանակ էին և փրկչի յի քի ամս ուլթ»: Իսկ ըստ թուոյ խոսորովային յարկթեանս տոմարի շձգ: Եւ էր մեծ շրջանին մխե: Ի յառաջնորդութեան տր զաքարիայի: Եւ ի յաշխարհակալութեան մեծ ինքնակալին Մահմուտ խանին որ տիրէ բազում աղպաց ունելով ի ծովէն Պոնտոսի մինչև ի ծովն Կազբից և մինչև ի գետն Զահուն կոչեցեալ: Ի կաթողիկոսութեան հայկազանց սեոփց Տո յակոբայ. և ի թագաւորութեան լեւոնի: Նստեալ ի գահն Կիլիկեցոց զոր տէր ած պահեսցէ անսասանելի պթոռ հայրապետական և ղթագաւորական զի յիշել զանուանս նոցա սասանել աւերին և ոչ ևս երկին թշնամիք ճշմարտութեան: Այլ և զրեցաւ սուրբ աւետարանս ի գաւառիս բրզնունեաց. ի գեղս առ ափն ծովու, որ կոչի աղէթ ընդ հովանեաւ սրբոյ Կարապետին, ի վայելումն եղբար որդոյն իմոյ Պետրոս քահանայի»:

Ապա խնդրում է հիշել իրեն ու իրաններին, որից հետո սրա եղբայր Սարգիսը գրում է.

«Ի յայսմ ամի թուաբերութեանս հայոց շղր ի դառնացեալ և ի վշտացեալ ժամանակիս՝ յորում զաւրացեալ է ազգն Իսմայէլի և բազում նախատանաւք և արհամարհանաւք տանջեն և նեղեն զազգս քրիստոնէից. մինչև դոմանց ինչս յափշտակեն և զոմանս տուզանեն և զոմանց տունս բուխտանաւք և հերձաւք և զուր բանիւք աւերել ջանան. զոր և սմա իսկ դանիէլ տանուտիրոջս բազում անգամ արարին. որ ի սուտ և՛ ի զուր մատնեցին և հազար դահեկան առին. և սա սրտի մտաւք և յաւժար կամաւք վասն քի սիրոյն ետ զայն ոտ, և ոչ տրտմեցաւ. զի զփոխարէնն առցէ հարիւրապատիկ և հազարապատիկ և քիւրապատիկ այս և ի ս. դատաստանին ամէն: Բայց գրեալ իսկ է ի սուրբ աւետարանիս թէ ընդ ոտ. դատարկ բանից զորս խաւսեցին մարդիկ տացեն համար յաւուրն դատաստանի զոր արժանի է կրել հերձասացն և բուխտանասացն և զուր մատնաւղն, զպատիժ պատուհասի յարգար դատաւորէն քս և ընդ յուզայի և ընդ յաշահանուացն մատնեցին ի հուրն անշէջ և որդն անքուն և ի տարտարոսն ներքին և թողութիւն մի լիցի նոցա: Ամէն:

Եւ արդ սա՛ դանիէլ տանուտէրս ստացաւ զսուրբ աւետարանս յիշատակ հոգոյ իւրոյ և ծնողաց իւրոց խաղութնի և շնոհմորի և կենակցիին իւրոյ Քաճին և զաւակացն Խաղութնի և Խեթնի և առիծուն տարածամ հանգուցելոցն ի քս և այլ զաւակացն մեծի և փոքու և ոտ. յարևան մերձաւորաց և ետ զսա անշինջ յիշատակ ի գեղեցիկ և յաստուածաբնակ տաճարս ցղնոյ մեծի այն սուրբ Աստուածածնին, որ հանապաղ մանկունք սորա հրճուին սովաւ յրեթեոնուլն զսուրբ աւետարանս»:

Ժն դար

Արագովա գյուղում արժ. Կարապետ քահանա Ռայիսյանի մոտ կա ութածալ, բամբակայ թղթի վրա մի շար բոլորագրով գրված «Մատեան աստուածային, որ կոչի Հարցմունք»: Գրել է Հովհաննես «տկար և փծուն գրիչ պիտակ անուն աշակերտը» մի ոմն Երեմիայի համար «ի թուականութեան հայկազան տոմարի պ. հրրգի. 4. երրգի Գ. երրգի (1415) յերկիրն Արժրունեաց ի վանքս որ կոչի սքանչելագործ, ընդ հովանեաւ սր խաշիս սքանչելագործի, Օծեալ ձեռամբ առաքելոյն Քաղէոսի»:

Աբուլ գյուղի եկեղեցում կա քառածալ, բամբակայ թղթի վրա երկար բոլորագրերով գրած մի ավետարան «Սուրբ Մինաս» անվամբ:

Սկզբում կան յուղանկար 11 պատկերներ, որոնցից մեկը ավետարանն արտագրող թումայի, մեկը ստացող Կիրակոս կրոնավորինն է, իսկ մյուսները սրբերի են:

Գրված է «Թումայ մեղուցեալ գրչի մեղսամած մատամբ ՚ի յաւժարնակ և յանառիկ կղզիս Աղթամար, ընդ հովանեաւ սր խաշիս և աստուածամուխս սուրբ գեղարդեան ՚ի հայրապետութեան առ Գաւթի հայոց ՚ի ՊԿէ (1418)»:

Գրչագրի վերջը ավելացրած է.

«Կամաւ ամենակալին այ հար և որդույ սրբոյ: Ի դարս վերջին և ՚ի ժամանակս շար և անբարի և թուականութեան հայկազեան տումարի պձա յանիշխանութեան արարաղեան գաւառիս: Յիր և ցան եղեալ՝ տարաշխարհիկ ՚ի մէջ անազորույն և անգութ աղգին վրաց: Արդ ի յայս և ի սոյն ժամանակի, յեպիսկոպոսութեան արհիական աթոռոյս Բրզնուոյ տէր Յովհանէսի: Ես Մատուր ծառայ ծառայիցն Աստուծոյ, նախարար՝ վերակացու և առաջնորդ քաղաքիս Բզնուոյ և ամուսին իմ Սարիբէկ հասեալ ՚ի ժամ ծերութեան, ակն ունելով ելից ՚ի կենցաղոյս շիրմնուանդ սիրով ստացաք զսուրբ աւետարանս՝ մեղ և նախնեաց մերոց

յիշատակ յափտենական կտակ անվախճան կենացն, պաշար և առաջ-նորդ՝ երկնաշու ճանապարհին: Ի հալալ արդեանց մերոց՝ զաւակ ՚ի սի-րովն, և գանձ անկողոպտելի ի վերինն երուսաղէմ: Եւ ընծայեցաք զսա մեծ սիրով արհեական աթոռոյս Բշնոյ և երկնահանդէտ մարս լուսոյ սբ Աստուածածնիս: Յիշատակ հոգւոց մերոց»:

Փե դար

Սաթիս պլուզի եկեղեցում կա «Ամենափրկիչ» անվանված քանա-ծալ, բամբակյա թղթի վրա երկաթագրով՝ երկշար շարված մի ավետա-րան, զարդարված ավետարանիչների շորս պատկերներով: Դրել է Հովհաննես գրչիկը պիթ թուի (1420) «Ի հայրապետութեան հայոց տեանն Յակովբա և յսպիսկոպոստութեան անանն Խաչատրի արհեպիսկոպոսի վերադիտող հացունեաց զավագի»:

Վերջում ասված է.

«Զվերջի ստացող սուրբ աւետարանիս Յովհաննէս և իւր կողակցին Նինիֆարին և որդւոց նորա... որ ստացաւ սուրբ աւետարանս իւր հա-լալ ընչիւք գառն և դժուար ժամանակին սով էր և սաստիկ էր, որ մարդն ըզմարդն կերաւ Աստուած դիւր գործեցեալ մեղսն ոչ չիշէ յավուր դա-տաստանին. և զարձեալ յիշեցեք ի մարտիրոս աղօթիս ձեր զպարոնն որ դնեաց դայս սուրբ աւետարանս յերկիր որ կոչի Արգրում, ի գուղն, որ կոչի երկննիստ ի թվ. հայոց 114»...

Ճանճղա կամ Բեժանո գլուղում Կ—ի տան մի սենյակում դրված է մի ձեռագիր Ավետարան և մի Մաշտոց, բազմաթիվ թաշկինակներով փաթաթված: Սրանց առջև դրված է մի երկու մոմակալ և մի ափսն՝ խաշամբույր ձգելու համար: Գրեթե ամբողջ գլուղը կիրակի և տոն օրերը գալիս է աշտեղ ուխտ, մոմ է վառում և խաշամբույր ձգում, որը, իհարկե, տանտիրոջ գրպանն է մտնում: Ավետարանը ութածալ, բամբակյա թղթի վրա բոլորագրով գրել է Հովսէս «Յեափնն ի պրաց և անարժանն արուեստարաց սուտ անուն քահանան յերկիրս քաշ-բերունեաց ի գիւղաքաղաքս Ականց կոչեցեալ ընդ հովանեալ գեղեցկա-շէն տաճարիս Թագէտի առաքելի Սուրբ Յակովբի հայրապետի և սուրբ Սարգսի զօրավարի և ծիրանաւոր սուրբ Աստուածածնի, ի յառաջնոր-դութեան երկրիս և մերս գաւառի քաջ և արի Բաբունապետի և ուղա-փառ քաջ և արի Բաբունապետի Յովհաննէս եպիսկոպոսի ի հայրա-պետութեան Հայոց Տէր Ընտանկէսի ի թուին Հայոց ԶԺՅ ամին և ի խա-նութեան Զհանշախին, որ այս երկու ամէ զբարեւունի յոտի արար

ի վերայ խանին և նմա ոչինչ կարացան առնել»: Ապա հիշատակելով ավետարանի գնողին շարունակում է.—

«Արդ՝ շնորհիւ տեառն սկսայ և նորեն կատարեսցի զպատգամս Տեառն Աստուծոյ ի մոյ թագաւորին յի քի որ է արհնեալ յափտեանս: Իսկ ի բառնալ թագաւորին Հայոց մեծաց և տիրել աշխարհին վրաց թա-գաւորին անզար գտեալ յարարչէն և յազգն նետողաց որոյ անուն կոչի զաղար, մարդազէմ գաղան, շաղակեր, որ ուտէին զմիս մարդոյ իրրե զանանոյ, խուժարում ազգ, եկն աշխարհն Հայոց և առ բազում բեր-պերս և բազում քաղքանիս և յանխնայ կոտորեց զայրս և զկանայս և զանմեղ մանկունս, և տարածեցաւ աստուածասաստ բարկութիւնն ընդ ամենայն աշխարհս. այս ամենայն եկն ի վերայ մեր վասն մեղաց մերոց, իսկ Աստուած զթացաւ իւր ծառայքս թէպէտ և մեղաւորք էաք բոլոյ իւր ստեղծած էաք և դադարեցուց զբարկութիւնն. միթէ դառնա-ցաք ի մեղաց և ոչ զարձաք այլ առաւել յորդորեցան ի դործ պոռնկու-թեան ի շնութիւն, ի ապահութիւն, ի սպանութիւն, ի անուտութիւն, յըն-շտաբութիւն, ի արծաթսիրութիւն. իսկ առաջինք զարարածս ձեռաց իրոց պաշտէին իսկ սորա զնիւթն, որ է արծաթ ամենայն շարեաց մայրն, անէին վաշխս և սուկոսս, զորքս զրկէին, զաղքատս լացնէին. եղև քահանայն իբրև զմի ի ժողովրդենէն և առաջնորդն խոցոտող և ոչ բժշկող և հարկս տային անաւրէն ազգին և ծառայ զրվէին և յաստու-ծոյ ոչ վախէին և ի մեղաց ոչ դադարէին այլ հարկին պատճառանալք զիտէին թէ սպրել կամէին և ես առաւել մեղանչեցայ այնքան զամենե-սեան և եղև մերովս զճանն (?) շար բան զառաջինն. իսկ աստուծոյ ոչ շանդորժեղ այլ ամենայնի այլ յարոյց զանաւրէն դաւանն ընդ ամե-նայն տիեզերս յանխնայ կոտորեցին զքահանայս և զկրանաւորս և զան-մեղ մանկունս և լայր մայր առ որդիս իւր, որդիս առ հայրս իւր և ոչ որ է որ թաղէր զնոսա. անդ էր ողբոց և լալոց արժանի մարդարէին երեմիային լերանց թէ ընկերուք ի վերայ մեր և բլրոց թէ ծածկեցէք զմեզ. իսկ ի թուականիս եղև սով սաստիկ ի մելիտինէ հայոց մեծաց բաղաքի, որ մայրն զտղայն կուտեր, ու զխոտն ու զամենայն ժժմանք, իրրե զհաց կուտէին: Ծշմարտապէս պատմեցին թէ երեք ընկեր ի ճա-նապարհի միով երթային երկու ի մի խորհուրդ եղեն և զընկերն իւրեանց կերին և ետ մեզ ածասաստ բարկութիւն որ եղև, իսկ ես տրուպս և ան-արժանս Մարդիս ամենայն մեղաւք լի զէրժեալ ի դառն տանջանաց եկի յերկիրս կիլիկեցոց ի յաստուածասեր և բարեպաշտ թագաւորին հեթ-մոյ և... գրեցի ... զսուրբ աւետարանս... Ապա խնդրում է հիշել իրեն և յուր ծնողներին»:

ԺԶ դար

Փոկա գլուզում արժանապատիվ Տեր Ստեփան Տեր Մելքոնյանի մոտ կա մի քառածալ, մագաղաթյա, բոլորագիր Մայր Մաշտոց՝ Իգնատիոս քահանայի ձեռամբ գրված «ի մեծ թուականիս հայոց ի Ռ և ի Թ, ի գեօղս որ կոչի Ղարասու, ընդ հովանեա սուրբ տաճարիս որ անուն սրբուն Գեորգայս զօրավարին կառուցեալ կայ ի պարոնութիւն երկրիս հեղնայ սուլթան Ահմատ բէկի և ի թագաւորութեան աշխարհակալ արքային սուլթան Սուլէյման Խոնդ քարին, որ ի յայսմ ամի եղև հակառակութիւն ի մէջ սրդոց նորա, զի հայրն ձերացեալ էր և անկեալ ի տանն և որդիքն հակառակէին: Զի փոքր որդին սուլթան Բայազիտն զնաց ի վրջ մեծ եղքօրն սուլթան Սէլիմին: Եւ նա ժողովեաց զհեծեալ հօրն իւրոյ անթիւ դօրս և ել ընդ առաջ նորա և նա փախեալ ի նմանէ զէպի յարեւելս և զնացեալ Էհաս ի մեծ քաղաքն Շահաստան, որ է Թաւրէզ: Եւ թագաւորն Թաւրիզու Դահմազ շահն սիրով մեծարեաց զնայ և սուլթան Սէլիմն պարծալ ի տեղի իւր. և այլ ոչ զիտեմք թէ զինչ լինելոց է: Յորոց փորձանաց փրկեսցէ զմեզ Քրիստոս Աստուած մեր. ամէն»:

ԺԷ դար

Դադեշ գլուզի քահանա արժ. Տեր-Կարապետ Տեր-Գաբրիելյանի մոտ կա մի ութածալ, բամբակյա թղթի վրա բոլորագրով գրված Մաշտոց, հասարակ կազմով:

Հիշատակարանում ասված է.

«Կատարեցաւ սուրբ մատենաս, որ կոչի Մաշտոց ձեռամբ յօգնամեղ և կրկնամեռ Աթանաս սեբեկեթ քաւչի: Որ անուամբ միայն քահանայ և ոչ գործով: Ի քաղաքիս Ղարս կոչեցելոյ: Ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս ի թուականիս Հայոց ՌՃԻԳ. ի հոկտեմբերի ի. թ.: Յիշատակ ի վայելումն մանկանց եկեղեցւոյ... քանզի ես Աթանաս երէց որոշեալ էի բազում ազգականաց և միայնացեալ թշվառութեամբ ի մենաստանի յանկիւնս տան մերոյ, և պակասութիւն ամենայն կողմանց եկեալ հասեալ ի վերայ իմ բազում կերպիւ. երբեմն ստացուածոց, և երբեմն արդեանց պակասութենէ:

Եւ ի մէջ այլասեռ և շարագէմ այլազգ տաճկաց սասանելով զրեցի զսա և թողի յիշատակ վայելողացդ. որք ընթեանուք սիրով զգիրքս սիրով սրտի և եթէ հաճոյսացի կամաց ձերոց տեսուն շնորհք: Եւ թէ ոչ՝ ներեցէք մեզ. զի մեզէն ոչ է առաջ եկեալ այլ ի սրբոց հայրապետաց առաջնոց: Աւարտեցաւ գիրքս. որ... (պատուած է) ի ժամանակս իշխա-

նութեան... Սուլթան Մուհամմատին... հանապաղ ընդէմ ֆռանգ... ի հայրապետութեան հայոց տուն Յակովբ սրբազան կաթողիկոսի: Սուրբ իջման տեղւոյն, Որ և նա ի ժամանակի իւրում բազում վիշտս կրեաց. երկու այլազգ թագաւորաց միջի: Վասն զի բազումք օցտողք արարին նենգութիւն վասն սուրբ աթոռոյն լուսատուին մերոյ: Եւ նա որպէս զբաշ հովիւ ման յանձն էաւ. և կարի նեղութիւնս կրեաց մինչև ի բռնաւորէ ևս փախ առեալ զնաց ի դրունս պարսից արքայի. զեռ մինչև ցարդ աշխատի և վերջ զինչ լինելոց է Աստուած գիտէ: Դարձեալ յիշեցեք զիս և այլն»:

Ճանճղա գիւղում մի այրի կնոջ ուխտատեղի դարձրած սենյակում գրված է ձեռագիր, բամբակյա ութածալ և բոլորագիր Մաշտոց, որի հիշատակարանում ասված է.

«Արդ՝ գրեցաւ սա ի դառն և ի դժուար ժամանակիս, որ իբրև զնաւ մրդկեալ և ալեկոծեալ կայաք ի ձեռս անօրինացն և զազանաբարոյ բռնաւորաց: Զի ազգի ազգի և պէսպէս պատրանօք և անխտիր թալանէին և կողոպտէին զազգս քրիստոնէից անողորմաբար: Եւ կայեաք ի մէջ այլազգեացն անտերոյ: Ոչ ունելով զառաջակայ և ոչ զլուս ժողովրդեան այլ մնացեալ աքի բերան և շալք ի մէջ օձից թունաւորաց, զի որում ոչ կարեաք յաջ զնալ և ոչ ահեակ վասն անառակ գործոց մերոց որ կու կողոպտիմք ի ձեռս այլազգեաց: Եւ զի առաջին ժամանակն հաստատեալ կայր ի միջի մերում հարկս որ այժմ ասեն խարաճ և սայն ևս հաստատեալ էր հայրենեաց մերում ի վերայ նաֆարի և մեք կուտայեաք անխտիր, և այս Գ. ամ է որ ուրիշ ուրիշ սահմանք արժարծելով վերուցին զնաֆարին խարաճն և արարին խարաճն թխդի երեք բաժին, առաջին ալա որ էր դ. ոսկի շարիֆի: Եւ երկրորդն յաւաթ որ էր բ. ոսկի և երրորդն յայտնալ, որ էր ա. ոսկի, դ. ոսկին կանէր բ. դոշ, և էր խք. դրամ արծաթ և բ. ոսկին դ. դոշ, որ կանէր խգ. դրամ արծաթ և ա. ոսկին կանէր բ. դոշ, յուպ, որ էր ժք. դրամ արծաթ, և էր ալայն ծանտր խօճա մարդոյն, և աւաթն միջնասահման մարդոյն և յայտնան էր յետնացեալ մարդուն, որ է վերջին աղբատն: Եւ նորա յարեան ի վերայ քրիստոնէից և եկեալ թալանեցին անողորմաբար մեծատունք, և միջնասահմանքն և ազքառքն հաւասար իւրեանց գիտութեան և վերջն Այ է զիտեղի զինչ լինելոցն: Այս ամենայն եկն ի վերայ վասն անառակ գործոց մերոց, և մեծ անառակ գործքն մեր այս ի որ ազգապղծութիւն բազում կու լինի ի միջի մերում: Ոչ ունին զնելով առաջնորդաց և ոչ երկնչելով ահէն Այ, այլ մերում կամապաշտութեանս: Եւ վասն անգր բարձեալ կա նախախնամութիւն Այ ի մենչ: Զի ոչ ունիմք մաս մի բարի

և ոչ կասեմք ողորմութիւն բարեբարէն Քսէ: Եւ եղև կատարումն սուրբ տառիս ի Թվաբերութեանս հայոց ՌՃԽԳ, ունիս ամսոյ իդ, օրն զՀԲԹ ի գաւառս Խախթեաց որ այժմ կոչի Բարերգ ընդ հովանեամ սուրբ Աստուածածնի որ է մեզի եկեղեցի ձեռամբ մեղսասէր և անարհեստ Փանաքի սուտ անուն Գրիգորի և զործովն շէ արժանի, խոցեալ նեպիւք սատանայի»:

Այա խնդրում է յիշել իրեն ու իրայիններին:

ԺԸ դար

Ղուլալիս գլուղի եկեղեցում կա բամբակյա թղթի վրա գրված մի քառածալ Մաշտոց, որ գրել է Մելքոն երեցը «ի գաւառն Խորձիւն որ Կեղի յորչորջի, ի դուռն սուրբ Յակոբի և սուրբ Աստուածածնի թուին ՌՃԿԷ մայիսի ԺԳ»: Մաղժոսնեբը նոտր, իսկ շարականները բոլորագիր են: Սրա մեջ կա «Ողբ Մելքոն երիցու Կեղեցոյ ասացեալ ի թոռին վրա Մամելայ» գանձը, որ կրում է ԺԸ դարի առաջին բաւորգի աշխարհաբարի կնիքը:

«Ողբս Մելքոն երիցու Կեղեցոյ ասացեալ իւր թոռին վրայ Սամելայ:

Մա՛ն ու գրողը էկաւ աշխարհիս տիրեց,
Առաւ գիւթի զալամ ղկատարին գրեց,
Կարմիր գրէն հանեց սև գիրն գրեց
Աւա՛ղ, ափսո՛ս կանանշ արեղ Սամէլ:

Երեսդ դրմդկուն քան զթերթ վարդի,
Լեզուդ անուշ խօսէր բուլբուլի ձագի,
Իմ քաղցր անուշ ձագուկ, իմ սրբուս որդի,
Աւա՛ղ և ալլն:

Լանջ քո յոյժ ղեղեցիկ շողշողիւ փայլէր,
Աչերդ ծով ծովէ ուներդ պահէ,
Որ հայր որ մայր ձագն իւր ծոցուն վառէ
Աւա՛ղ, ափսո՛ս կանանշ արեղ Սամէլ:

Քօրփայ էիր Սամէլ դու գարնան դառնիկ
Դեռարոյս սիւմպուլ էիր նոնանայ ծաղիկ,
Կարկտահար եղար թալփեցար գետնի
Աւա՛ղ, ափսո՛ս կանանշ արեղ Սամէլ:

Ոսկի ծաղկի նման շողիւ փայլէիր,
Թէ հին թէ շոր հագնէիր պոչիդ վայելէիր
Սիրամարգի նման շուրջ ինձ քայլէիր,
Աւա՛ղ, ափսո՛ս և ալլն:

Իրևսեալ վարսեր ունէիր դու ծիրան քանքուլ
Լեզուդ արագ խօսէր քան զգարնան պիւլպուլ
Առին ձագս ի ծոցէս մէկ ժամ մէկ պահու,
Աւա՛ղ, ափսո՛ս և ալլն:

Նանիր ծաղկի նման բուսար ծաղկեցար,
Խորշակահար եղեր տերևաթափ եղար,
Շարաֆ⁴⁴ քամին հնշեաց շուտով թառամեցար,
Աւա՛ղ, ափսո՛ս և ալլն:

Եկեր են կու բաժնեն ձագուկն ի մօրէն,
Կապեկն կու հանեն Սամէլին թեկն,
Մատանին ի մատէն զօղերն ականջէն,
Աւա՛ղ, ափսո՛ս և ալլն:

Սամէլ թալան եկաւ գրեղ թալնեցին
Կապեկդ ի վրայէդ շապկեքդ հանեցին
Քո թանգ արևն որդի աժան գնեցին
Աւա՛ղ, ափսո՛ս և ալլն:

Շուտով քեզ թալնեցին հանեցին կապան,
Չորնայ քոյ փայ էգին թող դառնայ խոպան,
Որ հայր որ մայր դրէր գերկուսն մէկ տապան,
Աւա՛ղ, ափսո՛ս և ալլն:

Ուտտի ժամանեց քեզ այս կրակ բոցն.
Սրտիկդ խառնած սրով փլեր քո խոցն,
Մե հողով կու ծածկեն քո ձերմակ ծոցն,
Աւա՛ղ, ափսո՛ս և ալլն:

Հայրդ մնաց քեզնէ օխով կարօտով,
Դու սլալասան ծաղիկ՝ անուշիկ հոտով,
Գիշերն յերաղն էկէ պագնէ կարօտով,
Աւա՛ղ, ափսո՛ս և ալլն:

⁴⁴ Արտերին վնասող:

Լալ ես, Սամէլ որդի, մէկ հետս խօսա,
Քոյրդ նոր հարս հանած դքեզ նոր փեսայ,
Աչերս թող խաւարի, խակամեռ տեսայ,
Աւա՛ղ, ափսո՛ս և այլն:

Ջարդեցիր ոսկերքս մարմինս քթելայ,
Քու կսկծուն, որդի, հալայ ու մաշայ,
Աղիքս գալարի սրտիկս խշխշայ,
Աւա՛ղ, ափսո՛ս և այլն:

Մայրիկդ աղէխորով կսկծայ կուլայ,
Աչերն արտասուաթաց արինն թափէ նա,
Կհարդս աղէխորով ջիգեարս մոմոայ,
Աւա՛ղ, ափսո՛ս և այլն:

Արտիկդ դիպեր է հրեղէն նետեր,
Արտասուս շի ցամքեր գարձեր է գետեր,
Սամէլս եմ կորուսեր սև հողն է գտեր,
Աւա՛ղ, ափսո՛ս և այլն:

Միրանի ծամերդ լանջդ ի վայր իջեր,
Կամար ունէր որդի քու ծովան աչեր,
Խոստացայ սրբունանց խունկ ու մոմ խաշեր
Աւա՛ղ, ափսո՛ս և այլն:

Քո կսկծուն Սամէլ շուարայ լացի,
Յոյժ դեղեցիկ պատկերդ սակաւ գովեցի,
Ես մեղաւոր Մելքոնս փանաք Կեղեցի,
Թուական հայկական հաղար հարիւրի
Մին յոբելեան վերայ ժԱ. տարի,
Յունիս ԻԳ ի յօր կիրակի, աւաղ:

Քո կսկծուն որդի խելաթափ եղայ,
Քո հասրաթէղ որդի անձն իմ սարսափի դողայ,
Լսողդ աղաշանաց աղերսանաց ասէք հայր մեղայ
Աւա՛ղ, ափսո՛ս կանանչ արեղ Սամէլ»:

Ախալքալարի արժանապատիվ Խորեն քահանա Բաղդասարյան ունի մի ձեռագիր, բամբակե թղթե մատյան, որ գրել է Հայոց ՌՃԿԸ (1719)

Քվին Քեոզոս գրիչը էրգրումում հաշատուր վարդապետի համար: Սա պարունակում է յուր մեջ:

I

Հազեպայծառ սուրբ հօրն Վարդանայ լուսաւոր արաբեալ համառօտ
մեկնութիւն երդոյ երգոցն՝ պարզ և դիրահաս:

II

Տէր Առաքելի Սիւնեաց եպիսկոպոսի հոգեւորոգ վարդապետի Քա-
րոզ ծննդեան ի բանն որ ասէ սիրելին ի սննեակ մեր երգեսցուք դէր:

III

Մատթէոս Ուռհայեցու պատմութիւնը:

IV

Ջենոբ Գլակայ պատմութիւնը, որ գրել է հայոց ՌՃԿԸ. թուին, հա-
շատուր վարդապետի համար Արղրումում թէոզոս գրիչը:

V

Յաղագս պիղծ ժողովոյն Քաղբեղոնի և անիծեալ շառափառի
լէօնի:

Նույն քահանայի մոտ կա և մի «ոսամ ձգելու» դիրք:

ՋԱՎԱՆՔԻ ԲԱՆԱՎՈՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ

Վիճակի երգեր

Ալ ձիուն նալն ի՞նչ էնե,
Ըռունտը խալն ի՞նչ էնե,
Սիրունը սրտովս ըլլիր,
Աշխրբի մալն ինչ էնե:

Ա՛խ էնեմ արուն գուդա,
Սև սրտիս գարուն գուգա,
Ի՞նչ էնեմ անպես յարը
Պըտըտվի տարուն դուգա:

Ախո՛վ սիրտս վառեցա՛վ,
Ալ արունս սառեցա՛վ,
Անխի՛ղճ մի ըլլի, իմ յար,
Սաղ աշքերս պաղեցա՛վ:

Ախպեր հանաքի՞ց մեռնիմ,
Օսկե դանակի՞ց մեռնիմ
Ճամփա էրթող շեկ աղբար,
Դյուքան բազարի՞ց մեռնիմ:

Ախշի մաղերդ երկանի՛
Քամին թեկ-թեկ կը տանի.
Միք մեխթրե սիրելիք,
Սերը՝ յաման կը տանի:

Ախշի մազերդ հյուսերի,
Թուշդ էրեսիս քսերի,
Էլլերի վարդի ծառին,
Բյուլբյուլի պես խոսերի:

Աղշի դու մորեդ ուշ էլար,
Մեծըցար կարմիր թուշ էղար,
Տունմ՝ շունիմ՝ օր տուն էրթանք
Քեզի առնեմ ո՞ւր էրթանք:

Արծթի բանձր տեղ է,
Զուրը հիվընդի գեղ է.
Ուղած ուղածի շեն տար,
Աս ի՞նչ անօրեն գեղ է:

Ա՛յ ձի հեծնիմ կը քիզի,
Յորդա քշեմ կը քեզի,
Գընը յարես խապար բեր,
Զարպաղ շույ կէնեմ քեզի:

Արևը կամար կամար,
Կապել ես օսկի քամար,
Հիթսուն օր պաս եմ պահե
Յարիս ճամփի համար:

Արևն առա՛վ դերանին,
Մեռնիմ Ավետարանին,
Մե ջուխտ էղվընեք թոա՛վ՝
Կանաչ խոտը բերանին:

Ախպիր բաղըդ անուշ է,
Բաղիդ միջին եմիշ է,
Ախպեր խաթրըդ շմա՛
Յարս քիզնեն անուշ է,

Ալ արախշին դրեր ես,
Ինչի՞ ճիտդ ծոեր ես,
Բարե կուտամ շես առնի՛
Մյակամ ինձեն ջորեր ես:

Արևը սարին վրա,
Մամուռը քարին վրա,
Օխթը գյուղում քյահրեպար,
Իմ սիրած յարին վրա:

Աղշիկն էկեր պար կուզե,
Մարգրիտներ շար կուզե,
Հըլը պաղմ շաված՝
Ինձեն անդին քար կուզե:

Ասօր նորը նորեր է,
Իմ յարի եզ կորեր է,
Վով օր դտնի թող ետ տա,
Ճակախս օսկին մյուծդան է:

Աղշի բոյըդ դյուրմալի,
Աչվըներըս սյուրմալի,
Միք մեխթրե մարիկներ,
Սավղան (սեր) կրակ դմանի:

Աղշի կրսեմ քեզ յաս ա,
Շապիկդ շիթ ու խաս ա,
Քընը քու մորդ ըսա,
Ինձ բունե իրեն փեսա:

Բարակ ճամփա մտեր ես
Կորուցածդ գտեր ես,
Ինծի մտքեդ ցկեր ես,
Նոր առածդ շփալլես:

Աղչի ի՞նչ էր պիլակդ
Օխով կոշկով պիլակդ,
Մի բանա ճերմակ գոկսդ
Ինծի կէփե կրակդ:

Բանցր սլափին կայներ ես,
Բանցր լեյլադ բռներ ես,
Բարև կուտամ՝ չես առնե,
Մյակար ինծեն շորեր ես:

Գնացի շուրջ ջրի,
Օտքս ընկավ օձի լեղի,
Ի՞նչ քսեմ հորս ու մորս,
Ինձ տվին դարիպ տղի:

Գեղեն էլլես գեղ մտնիս,
Իմ քրցած տեղը մտնիս՝
Ինծեն դայրի յար բռնես՝
Բեմուրատ հողը մտնիս:

Գութանը վարի փոսին,
Շողն է գարկե ակոսին,
Կարմիր խնձոր դոշ կէնեմ՝
Ղրկեմ իմ նանի փեսին:

Գութանը վարած տեսա,
Հերկերը վարած տեսա
Ապուրտ գետինը մտնի,
Սիրածդ տարած տեսա:

Դյուշակ ցկի փոթ էկավ,
Բարցիդ մեջեն ֆոտ էկավ,
Մեռնիմ դյաստա քյանքուլիդ
Քու խապարդ ե՞փ էկավ:

Դու նստեր ես դյուշակին,
Ուշկդ ու միաքդ փեշակին՝
Խմեր ես նոան գինին՝
Հոտ քաշես մանուշակին:

Դու նստեր ես գերանին,
Ապրեշում է բերանին,
Օսկե դայթան տու գործեմ
Կարեմ ճեպիդ բերանին:

Գեմեն ձիավոր գնաց,
Նալը պըլպըլաց գնաց,
Ամենքին բարև տվեց՝
Ինծի վառեց ու գնաց:

Դյուշակ ցկի փոթ կուգար,
Բարձիդ տկեն ֆոթ կուգար,
Մեռնիմ դաստա քյանքուլիդ՝
Միջեն խնկա ֆոթ կուգար:

Դամբուրիս կոթը քերեմ,
Կայնի քեզ գինի բերեմ,
Ձեռքս ճտովդ տանեմ,
Գնացած խելքդ բերեմ:

Դուն կայներ ես կարմնեին,
Փաթըթվեր ես յափունջին,
Քեզ կըսեն գեղի փեսա
Մոցդ կա դեղին քիսա:

Ես Կարծաղու փոսեն եմ,
Գոգտաշ սարի փսեն եմ,
Մուծտա տարեք զո մորը՝
Ես զու նանու փեսեն եմ:

Ես աս գեղին ցորենն եմ,
Խաս բաղու խնձորեն եմ,
Խնձոր էղե հասեր եմ,
Բյուլբյուլի պես խոսեր եմ:

Ես էս գեղի ձորեն եմ,
Խասս պաղչի խնձորեն եմ,
Կարմիր խնձոր ճեպրտ եմ,
Ուր օր կերթաս հետդ եմ:

Նրկընուց մատնիմ իջավ,
Մատիս վրա խաշվեցավ,
Ես իմ յարը քիամ գիտեի,
Ճեվահիր քար բացվեցավ:

էս գիշեր լուսը տեսա,
Իմ յարըս դուսը տեսա,
էլեր էր մերին կերթար՝
Կացինն ումուզը տեսա:

էս բակը բակ գըլմանիր,
Գլխունը թադ գլմանիր,
Իմ յարը դունեն անցավ՝
Իրմովը բյակ գըլմանիր:

էլեր ես փատ կը տաշես,
Ալամ աշխարթին կաշես,
Ինձի սեր էրիր շառար,
Ալ ալխալուղդ շմաշես:

Թավեն բերեք ձուկ խաշենք,
էլլենք կտուրը աշենք,
Տեսնենք յարս եփ կուզա՝
Չորենք ճգմեքը քաշենք:

Ժամա դունեն դուս կուզաս,
Ճրագի պես լուս կուտաս,
Ես իմ մեյլը տվեր եմ,
Դու քու մեյլը ե՞փ կուտաս:

Իմ յարը դուռ քներ էր,
Փափաղը ծուռ դրեր էր,
Հաղլին յարը տուն տառցավ,
Իմ յարը ձորեն անցավ:

Ինի մանչուն ֆասը ալ է,
Դաունա դաունա ինձի կաշի,
Ինձեն քեզի ֆայդա շկա,
Գնա՛, գնա՛ ճամփատ աշե:

Իմ յարս դունն է դրած՝
Ալ գոտին նուսն է դրած.
Իմ յարիս պոյին մեռնիմ՝
Ալ ֆասը ծուռըն է դրած:

Իմ յարըս էլավ գնաց,
Սարին դեմ առավ մնաց,
Սրտով թողութեն շառա,
Սրտիս դյարդ էլավ մնաց:

Լուսնիակը էրգան գիշեր,
Գեր օնքվի կարմիր թշեր,
Աղչի, ախպորդ արևը սիրես՝
Դաստուր տուր գամ աս գիշեր:

Լուսնիակ կամար կամար,
Ես մեռնիմ քեզի համար,
Սիրականս ինձի շեն տար,
Աստուծո խաթերն համար:

Լուսնիակը բուլբուր է,
Ամպի մեջ կլորեր է,
Աղչի քու ծոցիդ մեջը՝
Սըծերդ կլորեր է:

Լուսնիակ կամաց գնա,
Կանգ տու ու ցածանց դնա,
Հեռավորը յարմ, ունիմ,
Բարև տու անցի գնա:

Լուսնիակն էլի լուսն լուս՝
Ախպեր բուրոջ կանչեց դուս,
Ախպեր պեաք է քուր շահե՝
Քուրոջ դարդեր հտ պահե:

Հաշակը պուկս եմ ցկե,
Իմ յարը միտքս եմ ցկե,
Իրեք օր է չեմ տեսի՝
Կրակը սիրտս եմ լըցի:

Հուսնիակ երկար գիշեր,
Կեռ ունքվի կարմիր թըշեր,
Խապար էրեք իմ յարին,
Չկենա գա աս գիշեր:

Մառին տակը հել ունիմ,
Հում ապրեշում թել ունիմ,
Մո՛ մանչ, տափարը վար բե՛
Ես քու վրատ սեր ունիմ:

Մառավ եմ՝ հել ջուր չկա,
Գետերուն կարմունջ չկա,
Վախենամ դարիս մեռնիմ՝
Քո՞վս հար ու մար չկա:

Կայներ ես բաղի միջին,
Օտվիբբտ շաղի միջին,
Կանչի յար, ձենիդ մեռնիմ,
Ես եմ քու խաղիդ միջին:

Կայներ ես կանչել ա շես,
Պոյեդ ամնչել ա շես,
Ցարդ օր կուգա կանցնի՝
Չենեն ա ճանչել ա շես:

Կայներ եմ գալ շեմ կրնա,
Լցվեր եմ լալ շեմ կրնա,
Ինչըդ օր գնացել ես՝
Անունըդ տալ շեմ կրնա:

Կայներ ես կաթ զլմանիս՝
Բացվեր ես վարդ զլմանիս՝
Առ հայլին էրեստ աշե՝
Ալամին խախք զլմանիս:

Կուտիկմ ունիմ ալա է,
Ալա չէ՛ ալվալա է,
Ցար բունելը դուա է,
Բաց թողնելը բալա է:

Կայնա քեզի խրատի,
Աղչի գնա կրակի՝
Կայնի բոյիդ սելը էնեմ
Ուրբաթ շաբաթ կիրակի:

Կաքավը կայներ է քարին,
Կտուցը չիքը արին,
Մե յայլուփս վարդ եմ քաղե՝
Տարեք իմ անուշ յարին:

Կայներ եմ՝ շեմ կրնա գա,
Լցվեր եմ՝ ջեմ կրնա լա.
Ատ ճամփովը մի էրթա,
Անունտ էլ չի կրնը տա:

Կարմիր վարդը դամով է,
Սիրած յարը համով է,
Ատ տեղ դոռի բան չկա՝
Սերն ու սյափտան կամով է:

Հանդիտ հարտսին մեռնիմ՝
Գինուդ կարասին մեռնիմ՝
Ճամփա էրթող շեկ տղա,
Մրտիդ հաժախն մեռնիմ:

Հաց եմ թխե դարի է,
Իմ յարը սաֆալի է,
Մեռնիմ Սաֆար գնալուդ,
Խոսքերտ շաքարի է:

Չեւթդ առիր ես էսան,
Թափ տու թութունիդ քիսան,
Կանչե, կանչելուդ դուրպան,
Իմ նանի ազիդ փեսան:

Ղուշը թռավ մեր արտեն,
Կտրավ իմ սազիս ֆարտեն,
Աշըղ շեմ, աշըղ դառա՝
Բեմուրատ յարիս դարդեն:

Ճրտդ դնեմ լուսաղու,
Կանանչ ատլաս քիսացու,
Ես քու նանին փեսացու՝
Գուն իմ նանին հարսնացու:

Ճտիս հըլունը հազեղ է,
Ջանրս ջանիդ լայեղ է,
էլար դուռը աշեցիր,
Ջիվանի ումրըղ մաշեցիր:

Մյանի քսեմ մե բերան,
Մե աունեմ ջուխասի գերան,
Ռունգը⁴⁶ ոունգին կուտան,
Չիրգինն աշխրբի բերան:

Մազերդ սե, Ռուշդ կարմիր,
Շարար լեզուդ բերանրս դիր,
Ձենուլդ ինծի հսիր էրիր,
Փարե⁴⁷ զլուխս ծիծիկիդ դիր:

Մամառ քարը տաշած է,
Յարըս դալմով քաշած է,
Աչքին ունքին հավան եմ,
Քիշըմ որանգը թաած է:

Մուղնվա ջուրը սառն է՝
Մուղնի էրթուզն իմ յարն է՝
Թող էրթա մուրաղն առնե՝
Ետ դառնա սիրածն առնե:

Նախըրը կայներ է դյուղը,
Կանչեկը դարագյուղը,
Ղրկե մահրամաղ լվամ՝
Առնեմ քյանքյուլիդ թողը:

Պյուլպյուլը տալին վրա,
Խնծորը ծառին վրա.
Սիրած սիրածին տային՝
Չոր գետնին քարին վրա:

Պիլակդ ունիս ջուխտ զուլպաղի,
Մառչան խառնած, սոլի սաղի,
Մեռնիմ ա սերըս չի պաղի՝
Յախուի պես կպար ինծի:

Ջախճիս դուռը տաշած է,
Մահրամաս գյուլ քաշած է,
Իրեք օր է շեմ տեսե,
Սիրտս փորես քաշած է:

Ջաղաշս կաղա ձավար,
Դուշմընիս աշըր խավար,
Յարեն օր կառնենք խապար,
Թող տանին օխթը տավար:

Ջուրը առնեմ էլնեմ սարը,
Չտեսնիմ ֆիտան յարը,
Ինծ տվեք էն ֆիտանին,
Չըբաշեմ ահ ու դարը:

Սոմ սրմալի ալ փուշի,
Աղջի սիրտս կը մաշի,
Քու տված անուշ պաղիկդ
Չեմ տա հաղար դուռուշի:

Սարին տակը մնացի,
Բկիս կապը վլացի,
Խապար էրեք իմ յարիս՝
Ես հոս դարիպ մնացի:

46 Սիրունը:

47 Գոնե:

Սարերը հեշտացեր են՝
Ջրերը շատըցեր են,
Խապար էրեք իմ յարիս՝
Մուշտարիքս շատըցեր են:

Սարերը նունուշ գըլլի՛,
Վարդին մեջը փուշ գըլլի՛.
Գլուփս յարիս ծընկին՝
Քունըս շատ անուշ գըլլի՛:

Սերն ի՞նչ է, սավտան ի՞նչ է,
էս խաղի դալդան ի՞նչ է,
Բանցր ծառ անուշ պտուղ,
Չեմ հասնի ֆայտան ի՞նչ է:

Միա փուշին փռած էր,
Ղութնի բարձը դրած էր,
Քյաթյամ էրեք⁴⁸ աղաներ,
Յարըս ինծեն ջորած էր:

Պատին էտեք ամպեր էր,
Թոփով օսկին բնդեր էր,
Մեռնիմ ազապ ղըլրդիղ՝
Ղըլըղըղ կեղտոտեր էր:

Վարդ եմ քաղե ջամով է՝
Սիրած յարը համով է.
Ախպեր խաթրըղ շմնա,
Յարըս քեղնեն համով է:

Քաղեցի արամ՝ գարի,
Կանչեցի «արի, արի»,
Ձեն տվի ձենս շառավ՝
Ինծ լացուց տարի տարի:

Քոչ գուբա, քոչ կանցնի,
Քոչ քոչի մեջ կանցնի,

Սիրտս կրակն ընկեր կէրի՝
Ոչ կէրի ոչ կանցնի:

Քարիս տակը քարոտ է,
Բանցր ձիանց արոտ է՝
Ուղիղ օխթը տարի է՝
Քուրն ախպորեն կարոտ է:

Օշխարըն էրեր եմ դոշը՝
Պիճիկի լեզուն խոշ է,
Ես մեռնիմ պըզտի յարին՝
Ամանաթ յարը բոշ է:

II

Արեզակ ցածանց գնա,
Ցած տուր ու ցածանց գնա.
Հեռու տեղ յարմ ունիմ,
Բարև տուր անցի գնա:

էրևան բաղ եմ արեւ,
Ջիկյարս դաղ եմ արեւ,
Տոստ ու դուշմանի միջին՝
Լացս ծիծաղ եմ արեւ:

Սարիցը քոջըմ անցավ,
Քոջը մեջ տվավ անցավ.
Սիրտս մե կրակ լցվավ՝
Ոչ էրեցավ, ոչ անցավ:

Մեր շարդաղը բանցո է,
Սիրած յարը քաղցր է,
Քելեք հորը հարցնենք,
Թե չը տվեց՝ փախցնենք:

Սարերուն սինձը ի՞նչ է,
Կաթն ու բրինձը ինչ է,
Ես եմ սիրել, ես կառնեմ,
Ձեր կոփվ տալն ի՞նչ է:

⁴⁸ Պատմեցեր:

Լուսնիակը նորեր է,
Յարիս եզը կորեր է,
Վով օր դտեր է՝ թող տա,
Հիսուն մանեթ միժտա կա:

Խախալը ման եմ ածել,
Բոյիդ նման եմ ածել,
Դու գիտես յա՞ր եմ ասել,
Խաբել ու ման եմ ածել:

Նանես ինձի բերել է,
Բալուզ էրել, տիրել է,
Քյաշքա բալուզ մեռնեի,
Յար, քո մտքեդ շելնեի:

էրևանու բերին նուս,
Բերին թափին ժամին դուս,
Ժամի դոնեն դուս կուզա,
Շանդանի պես լուս կուտա:

Լամբի շիշան կը ճնկա,
Կլորա, ծոցդ ընկա,
Սիպեղը զոխ է դառել,
Իմ յարը դոխ է դառել:

Յարս խոռված գնաց,
Սարերեն սոռաց գնաց,
Նյա դուշ էղավ, նյա կարավ,
Ափես թռավ ու գնաց:

Նանես ինձի տփել է,
Դուռը վրես խփել է,
Ես նանեսս ջորեր եմ,
Դիար, դիար կորեր եմ:

Ջաղացիս դուռը տարթ է,
Կտուրը լիքը մարթ է,
Աստված սիրող բան շասե,
Ուզածս տղամարդ է:

Խոշա վանքի թվանքը,
Կըլմանի կարմիր վանքը,
Կարմիր վանքի զըշերը,
Սիրուն յարիս թըշերը:

Խնամի խոշ ես էկել,
Դարդակ ու բոշ ես էկել
Երկու բուլուճ ես քերել,
էն էլ ճանբան ես կերել:

Աղջի, աղջի, ինչ ըլիս,
Կատուներին պոշ ըլիս,
Աղամանի թաս ըլիս,
Քաշքա հորս հարս ըլիս:

Ջուրն էլավ երես, երես,
Բաղրկան աստված սիրես՝
Եփ օր դառնաս Շերակալ
Սոնայիս հետդ բերես:

Փոցիս ծիրանի կոթ է,
Սիրտս յարալու խոց է,
Սքտինս սիրող ընկնի՝
Իմանաս սափտեն ինչ է:

Մանի ըսեմ ու շարեմ,
Տոպրակը լցնեմ ու կարեմ,
Առնեմ ընկնիմ գեղոց գեղ,
Քեզնեն լավը կը ճարեմ:

Երկնից կամար օնքերդ,
Ինձնեն մի կտրե սերդ,
Համ տուտին եմ համ լաշին,
Ես կարոտ եմ քո պաշին:

Ստանալու բոլոր մերի,
Բոլորը կըլի գերի,
Ես իմ յարը կը ճանչեմ
Օակի մազերը կ'երերի:

Ղարանֆիլը դեղին է,
Իմ ուզածը գեղին է,
Կուզեք հարցրեք իմացեք,
Մեր դրկցանց տղեն է:

Լուսինն էլավ կամարից,
Բռնեք յարիս քամակից,
Լեզվովս արշուն աննեմ,
էն բուխախի դամարից:

Կապույտ քիրանած տներ,
Մեջը կա օսկի սներ,
Սարեն թափան աղջկներ,
Կլմանին կատղած շներ:

Տան ետև տուն եմ շինե,
Հավերուն բուն եմ շինե,
Միք վախենա իմ դյոստեր,
Դուժմանը շուն եմ շինե:

Այ նանի քու մերութեն,
Ինձ տվիր զարիբութեն,
Ղարիբութենը փուշ է,
Գեղի մեջը անուշ է:

Նշի ծառին նուշ կըւի,
Վարդի ծառին փուշ կըւի,
Երանի էն աղջկան,
Սիրած յարին դյուշ կըւի:

Քնեցա էրած տեսա,
Սև հերկը վարած տեսա,
Տղա, թասիպտ մեռնի,
Քու յարը տարած տեսա:

էս գիշեր լուսմ տեսա,
Իմ յարը դուսը տեսա,
Ըսի թե հետը խոսիմ,
Աղբերը քովը տեսա:

Հերանցս դուռը դուզ է,
Հերըս պաշլըղ շատ կուզե,
Հարուր մանեթին աշե,
Պալտոնը թեղ քաշե:

Սարիցը մատնիմ իշավ,
Մատիս վրա խաշվեցավ,
Ես իմ յարը քյամ գիտեի,
Ջաֆայիր քար բացվեցավ:

Դարդլի եմ լալ շեմ կրնա,
Դիմաց դեմ գալ շեմ կրնա,
Դու էկար ինձեն անցար,
Ես էլի գալ շեմ կրնա:

Այ տղա էդ ես մետ ես,
Խանչալը մեջքդ նետես,
Դու գիտես տղամարդ ես,
Սմակի փթուկ փետ ես:

Միթկալ շասիկ կարեր եմ,
Դոշին կոճակ շարեր եմ,
Հինը մտքես հաներ եմ,
Քեղի թաժա ճարեր եմ:

Ձին դուռը կապած տեսա,
Կրակը վառած տեսա,
Յարս դոնիցը անցավ,
Չաքմանը պատռած տեսա:

Կաղզման ձորին մեջը,
Պաղ աղբուր հորին մեջը,
Աղջի քու շամամ ծծեր
Անուշ խնձորի մեջը:

Թավան ծակ է, եղ չը կա,
Փեսան էկավ՝ տեղ չը կա,
Փեսին շատ երես միք տա,
Փեսին էյթիպար չը կա:

Մարը ճերմակ վարդ կըլի,
Ցալտա տեղը մարդ կըլի,
Ես իմ ուզածը շահեմ՝
Սրտիս մեջը դարդ կըլի:

Քուրդը քոչեց՝ սուն շունի,
Սիրտս բլավ՝ սուն շունի,
Սիրտ ըսածդ շիշա է,
Որ կոտոավ՝ էլ խեր շունի:

էրեքնու ալերը,
Կոունկն իջավ կալերը,
Կանչե կոունկ, գարուն է,
Սիրտս գունդ-գունդ արուն է:

Մառին տակը էլ ունիմ,
Ալ աբրեշում թել ունիմ,
Չոպան, տավարըդ քաշե,
Ես քու վրադ սեր ունիմ:

Յար կայնել ես կարմնջին,
Մենկիլ օղերն հանկըճիտ,
Քեզ կըսեն գեղի փեսա,
Մոցինդ է գեղին քիսա:

Պատին մեջը պատ շիլի,
Գեղին մեջը սար շիլի,
Աղշի, խելքդ քեզ ժողվե,
Քու ըսածդ լավ շիլի:

Մարին տակը մեծ գեղ է,
Ջրեր խառնած մեկ տեղ է,
Իմ յարս ինձ չի ճանչնա
Խելքը միտքը ո՞րտեղ է:

Լավ աղշիկ ես քուր շունիս,
Հաքիտ կուտուռչկա շունիս,
Գնա կորի սևերես,
Հերեսիդ ապուռ շունիս:

Մառ եմ տնկե շաֆթալու
Յարս կուգա ման գալու,
Շեկիկ մազավոր աղջիկ,
Դու ինձ էրիբ սավդալու:

Մարերը ուշ է, մուշ է,
Իմ յարը բանգլի դուշ է,
Ջոկեցի լավը առա,
Մեղրից, շաքարից անուշ է:

Գնացի սարը սնձի,
Ոտս առավ մեկ սնձի,
Տեփան, միրուքդ խանձի,
Չը տվիր Սոֆոն ինձի:

էրեան գյուքյան-գյուքյան
Ճերմակ շիշա ստաքան,
Ես իմ յարը սիրեցի,
Դյուշմեններս տրաքան:

Յարս յաղլըզս վլաց,
Ախ էրի խելքս գնաց,
Խելքս միտքս քեզի հետ,
Փողս շեքիցս գնաց:

Ճամփա էրթաս էշքտ ըլիմ,
Արժըթե իյարտ ըլիմ,
Ուրտեղ որ յար դու իջնես,
Ղոնաղճիտ ալ ես ըլիմ:

Մառին տակը տալտա է,
Քանի կայնիմ՝ ֆաշտա է,
Միք մեխտըրե դըրկցենբ,
էս ինչ շաթին սավտա է:

Ալ տղա վերա պաշի,
Չաքմանիդ կուտը մաշի,
Քամ կշտովդ անց կենամ,
Թուխ գառը փեշքաշ քաշի:

Աղչի տունը լվացիր,
Յարդ մեռավ չը լացիր,
Թաժա յարդ տուն էկավ,
Ճերմակ գյոքսդ դու բացիր:

Չաչիրնին կըլի դամուշ,
Մեջն էր լիքը եմիշ,
Միք մեխթրե մարիկներ,
Սրտով սիրածն էր անուշ:

Այ տղա փետ կը տաշես,
Մայլա-մայլա դու կաշես,
Ինձեն ղայրի յար բունես,
Հաքիդ շուխան շմաշես:

Թեղ կենես թեղիդ մեռնիմ,
Նոր դալած պեխիդ մեռնիմ,
Իրեք օր է շեմ տեսե,
Ման գալած տեղիդ մեռնիմ:

Մեր բակը բակ կըլմանի,
Գլխունը թագ կըլմանի,
էն տղան էկավ անցավ,
Իրմոքը բեկ կըլմանի:

Սարեն կելեր էրկու մուխ,
Մեկը հնկավ, մեկը ծուխ,
էրկու գիզալ եմ սիրե,
Մեկը շեկլիկ, մեկը՝ թուխ:

Ջաղացս ալուր կանե,
Դիշմանս մըլուլ կանե,
Թող իմ սիրածս ինձի տան,
Թող հետը բալուլ բերե:

Կայներ ես կաթ կըլմանիս,
Բացվեր ես վարդ կըլմանիս,
Հայլին առ երեսդ աշե,
Աշխըրթին զարդ կըլմանիս:

Կայնել ես պատին տակը,
Յուլա կը մատնուդ ակը,
Իմ կարած արախչինս,
Գրել ես ֆասիգ տակը:

Արտեն էկար դեղ մտար,
Իմ ցկած տեղս մտար,
Ինձեն ղայրի յար բունես՝
Բեմուրադ հողը մտնես:

Իմ յարը միտս եմ ցրկե,
Լաշակս ճիտս եմ ցրկե,
Իրեք օր է շեմ տեսե,
Կրակը սիրաս եմ ցրկե:

Սարեն ես գամ, ձորեն դու,
Հարան ես սիրեմ, կեսուրը՝ դու,
Տունն ես քնիմ, կտուրը՝ դու,
Մերն ես ուտեմ, մածունը՝ դու:

Մեր տանը ես վար կանեմ,
Չար ազուսվին քար կանեմ,
Թե իմ սիրածն ինձի տան,
Դժութենես թարգ կանեմ:

Օաղկեվանքի դըշերը,
Մեր քարափի շըշերը,
Երբ կենա գա գիշերը,
Պագնեմ խանլուկ թշերը:

Կողբա սարը ղոշա է,
Միջի մարդը բոշա է,
Մաշիկ տվեք դուս հենեմ,
Ինձ էլ շասեն բոշա է:

Պուճուր աղչի, մի թոնի,
Բարով քու մարդը մեռնի,
Չեմ դըմըշի բան ըսեմ,
Քամին ձեռներդ քաշի:

Գեղին բուր շիման ա,
Զորս բուրբ տուման ա,
Աղչի արի փախցնեմ,
Հերդ ու մերդ շիմանա:

Չատքրի տակը հով է,
Աղչիկ դու ինձի գովե,
Ճգնավորին հավուզը՝
Հաքել ես դանավուզը:

Ջուխտ սարին հովին մեռնիմ,
Շեկ գյազի պոչին մեռնիմ,
Վեց օր, օխան օր չեմ տեսե,
Տեսնողի աչին մեռնիմ:

Ոչխարն հիշել է դյուզը,
Ջոկել եմ դարագյուզը,
Մանչ, տու մայրամատ վըլամ,
Առնեմ քյաքիլիդ թողը:

Էս սարին սար չեմ ըսե,
Շեկ գյազին յար չեմ ըսե,
Ալուր մաղեմ թեփ կուզա,
Հըճըփ յարս ե՛փ կուզա:

Հոտի ճակատ ավել եմ,
Ես էն գյազին հավնել եմ,
Գյազի նոր ծլած բեխեր՝
Կլմանին օսկի թելեր:

Միթկալ շապիկ կարել եմ,
Դոռչին կոճակ շարել եմ,
Հինը մտքես հանել եմ,
Քեզի թածա ճարել եմ:

Սարերը ձուն է առե,
Արունը սիրտս է առե.
Հեռու ճամփա յար ունիմ,
Աչքերս շորս է դառե:

Սարեն կաղնի կը կտրեն,
Մեր արքեն կը ծըծեն,
Հեռու շիրթաս, հոգի ջան,
Ինձի քեզնեն կը ջոկեն:

Այ տղա կտրեր ես,
Սրտիս տիրապտեր ես,
Բլբուլի պես խոսելա
Ջիզարս վառեց, էրեց:

Աղջի անունտ Շուշան,
Ճերմակ բուխաղ թուխ նշան,
Ես քու յարտ տեսեր եմ,
Ձեռքը ծոցին փոշիման:

Աղջի անունտ Քազուն,
Նստեր ես հորտ սաքուն.
Ինչ շինարի բոյ ունիս,
Երանի յարիտ հոգուն:

Կանաչ-կանաչ կանչեցեք,
Կանաչ մեյդան բացեցեք,
Քազա շորեր հագուցեք,
Ինձ իմ յարին հասուցեք:

Ջուխտ գութան սար կըբանի,
Շեկ աղջիկ հաց կը տանի.
Մեկ կը քելե, մեկ կայնի,
Տեսնողի խելք կը տանի:

Ալուր մաղեմ թեփ գուզա,
Իմ յարըս հըճըփ եփ գուզա,
Ամեն ծառին մեկ փշատ,
Յարիս օմրը ըլ՛ի շատ:

Արեգակ արա տակին,
Լուս կոտտա քարա տակին,
Յար քեզի ո՞ւրտեղ տեսնիմ
Միրանի ծառի տակին:

Զուրն առա ելա սարբ,
Զբտեսա Ֆիտան յարբ,
Ֆիտան յարբս ինձ ավեք,
Միք քաշե ահ ու զարբ:

ԾԱԾԿԱԼԵՉՈՒՆԵՐ

Զավախքի, Ախալցխայի և Աղեքսանդրապոլի թե քաղաքացի և թե գյուղացի երեխաները, ինչպես և երբեմն չափահասները միմյանց հետ խոսում են ծածկալեզուներով: Ով չէ բմբունել այդ ծածկալեզուների գաղտնիքը և չէ վարժվել, չի կարող ոչ հասկանալ և ոչ խոսել:

Այս ծածկալեզուները նայելով իրենց բաղադրիչ մասնիկին կոչվում են. բծեվար (բծերեն), բվեվար, բլբեվար, բխեվար:

Մրանց բոլորի գաղտնիքը նրանում է, որ բառի ամեն մի ձայնավորի առաջ ավելացնում են ծածկալեզուն կազմող մասնիկը, եթե բծեվար է՝ բծ, բվեվար՝ բվ, բլբեվար՝ բլբ, բխեվար՝ բխ:

Օրինակ՝ Արի էրթանք կալը խաղանք.

բծեվար. բծարբծի բծերթրծանք կրծալբծք խրծաղրծանք:

Բվեվար. Բվարբվի բվերթրվանք կրվալբվք խրվաղրվանք:

Բլբեվար. Բլբարբլբի բլբերթրլբանք կրլբալբլբք խրլբաղրլբանք:

Բխեվար. Բխարբխի բխերթրխանք կրխալբխիք խրխաղրխանք:

Կան նաև այնպիսիները, որ բառերը երկու մասի են բաժանում և երկրորդ մասը առաջ դնում.

Օրինակ՝ նույն նախադասությունը կլինի՝

Բի-ա, թանք-էր լը-կա դանք-խա:

Ոմանք էլ բառերի տառերն են արտասանում իրենց ամբողջ հնչյունով.

Օրինակ՝ նույն նախադասությունը կլինի՝

Ալբ, բե, ինի. է, բե, թո, այբ, նու, քեն. կեն, այբ, լլոն, եթ, խե. այբ, դատ, այբ, նու, քեն:

ԶԱՎԱԽՔԻ ԲՈՒՐՄՈՒՆՔ

ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ

Մենդկանի

Ա

էրնեկ, էրնեկ վարդակուտին,
 Լուսըթաթախ թուրն էրեսին,
 Վանքը մտավ նորսեսին,
 Սուրջառն առավ Քրիստոսին,
 Մնավ բերեց աստվածորդին,
 Անբան մտուրը դրվեցավ,
 Խանձ բալուլով բալուլվեցավ,
 Գիտ Հորդանան մկրտեցավ,
 Մարգարեններ զրքեր բերեք,
 Ճգնավորներ քավոր եղեք,
 Անուն Հիսուս կատարեցեք:

Բ

Թաղա հացի ֆուտ էկավ,
 Ելեք աշեցեք վով էկավ,
 Իրեք իրեք պող ձիավոր,
 Իրեքն ա կանանչ կապավոր,
 Մեկը Հիսուս, մեկը Քրիստոս,
 Մեկը տղա մանուկ՝ սուրբ Կիրակոս,
 էկավ սարով, իջավ ձորով,
 Հրեշտակին դեմը բարով:
 — Տեր, ո՞ւր կերթաս քու երամով.
 «Կերթամ տունը հիվընդին,
 էրթիկը ծննդկանին,
 Ժնճիլ ցկեմ վրա պատին,
 Բալնիք ցկեմ վրա բարձին,

Օր շմարի սիրտը փորի,
Օր չ'կլորի լեզուն բերնին:

Գ

Ալալոց, թալալոց՝,
Մանազկերտու սուրբ Տեփաննոս,
Ծնկեն հետ խըլմ էղավ,
Արմենկեն հետ փետ էղավ,
Լեզուն բերանը թաղիք էղավ,
Աչքն էրեսին կուր (կույր) էղավ.
Էլանք դարով, շրջանք ձորով:
Մեր տերն էկավ հազար բարով,
Ըսինք. «Տե՛ր, ո՛ւր կերթաս».
— Կերթամ դուր հիվընդին,
Էլլեմ էրթիկ տղացկնին,
Ժնճիլ քաշեմ բոլոր սլատին,
Զվախենա սիրտն ի փորին:

Դ

— Պողոս, Պետրոս ու՛ր կերթաս.
«Դուր կերթամ հիվընդի,
էրթիկ կերթամ ծննդկանի,
Նեա սիրտը փորին վախենա,
Նեա օսկոտը անղը թնցա:

Ե

Եղիցի էլիա,
էրկըթե բալիա,
Գանահատիկ,
Սուրբ Մարգրիտ:
էլա սարով,
Իշա դարով,
Հինգ հարուր հրեշտակով,
Մեր տերը ո՛ւր բարով:
«Կերթամ տունը հիվընդին

էրթիկը ծննդկանին,
Բալիք ցըկի վրա բարձին,
Զվախենա սիրտը փորին,
Ամեն, ալելույա, ալելույա»:

Աչից հատի

Ա

Մեր դոան առաջը ծով կա,
Մովի վրա հալ կա,
Հալին վրա հասկի կա,
Հասկին վրա հատ կա,
Հատը կլորի, ընկնի ծովը
Ութը կանոն սաղմոս,
Դու բարեխոս ըլլիս:

Բ

Նստեր է սուրբ Երանեկին,
Կուլար իրեն բերանովը,
Ըսաց Տեր մեր Հիսուս Քրիստոսը
է՛ր կուլաս, է՛ր կը ողբաս.
Ըսաց. «Աչից հատ է ընկեր.
Արուն է կաթեր»:
Ըսաց. «Առ ըստակը,
Քեց ջուրը,
Քաշե հատը
Հրամանով աստուծո,
(Այս անուն) մարդու
Շինողքը շինեցիր,
Գնալը գնացիր,
Անդանակ մորթեցիր,
Անկրակ խորվեցիր,
Անասակ ձգրտեցիր
Ինքը սիպտակ,
Չազը սիպտակ,
Զգեստը սպիտակ.
Անցավ գետը

Կորով հատը,
Հրամանով աստուծո
(Այս անուն) մարդու:

Մահանգուտի

Ա.

Հիսուս Քրիստոս բերթ շինեցին,
Պողոս, Պետրոս քար կրեցին,
Կուս Մայրամ պատ շարեցին,
Կուշ կեցա հանգստվեցա,
Վեր կեցա արձրկվեցա,
Օսկոնն օսկոին,
Թուք մունտառ մսին:

Բ.

Վար կեցա՝ միսս հանգուստվալ,
Վեր կեցա՝ զուր կտուվալ,
Մար ու ձորով կտուվալ,
Մովին մեջ ծառմ՝ կար,
Մառին վրա հավքմ՝ կար,
Անձեռք բռնեցի,
Անդանակ մորթեցի,
Անբերան կերա,
Քրիստոս տեսավ բազմեցավ,
Վրան թքեց՝ առողջացավ:

Գ.

Էրկնուց մատաղմ՝ եղավ,
Միսը՝ մսին, պոզը՝ պոզին:
Կուշ կեցա՝ հանգուստվեցավ,
Վեր ելա, արձրկվեցավ:

Դ.

Քրիստոս Տերս պատ կշարե
Պողոս, Պետրոս քար կը կրե,
Մարթա-Մառա ջուր կը կրե,
Կուշ կենամ՝ ծոի կը,
Վեր կենամ՝ շիտկի կը:

Թիբի

Գնացի ծառով ախպուրը.
Մառավ ախպրի վրեն ծառմ՝ կար,
Մառի վրեն բունմ՝ կար,
Բուն վարը առա՝ մեջը ծիտմ՝ կար,
Միտը վար առա
Անդանակ մորթեցի,
Անկրակ էփեցի,
Աստուծու հրամանքով,
Մայր աստվածածնա քաղցր կաթով
Թիբի հանգույցն արձրկեցի:

Մոզրմուկի

Մոզրմուկը բուսեր է,
Չորս բուրբը հուսեր է,
Աստվածածին տեսեր է,
Դեղ էրեր լավցուցեր է,
Սուրբ սննդովը սրբեր է:

Հիվանդի վրա

(Կաթուղի կաջ)

Հոգի Մարիամու լուսավորյա զիս,
Մարմին Մարիամու մաքրյա զիս,
Քաղցր կաթն Մարիամու դարձո զիս,
Արտասուք Մարիամու մաքրյա զիս,
Փոխումն Մարիամու հաստատյա զիս:
Մարիամ մայր շնորհոք, բարեխոսյա,
Վասն մեր քավության, թողության մեղաց մերոց:

ԱՌՈՐՅԱ ԿՅԱՆՔ

Քնից զարթնելիս

Ա.

Լուսը լուսացավ,
Խաչը պարզեցավ,

Աստված քաղցրեցավ,
Գրախտին դովիքը բացվան,
Գժոխքինը ավերվեցան,
Կապած հոգիս արձրկվեցավ,
Հիսուս մեզի ողորմեցավ:

Բ

Աստվածածին դուն կուս ես,
Հոգով մարմնովդ լուս ես,
Լուսեղեն կապեր ես կամար,
Հոգիս պահեմ քեզի համար,
Դուն տու ինձի իշխանութեն,
էրթամ գործեմ շատ բարութեն,
Հոգիս տանիս արքայութեն:

Գ

Լուսացավ, լուսն է բարին,
Ես հավատամ Տեր կենդանին,
Ուսին, ուսին Սուրբ կուսին,
Իրեք բեւռ Քրիստոսին:
Մարիամ նստեր սուրբ սեղանին՝
Գիրզն է առե աստվածօրդին,
Խաչմ՝ սրտին, խաչմ՝ լերդին.
Խաչ գավազան միջի նստին,
Աղոթք կէնե լուս տաճարին:

Անկողին մտնելիս

Ա

Կրակը մարեցավ,
Չարը՝ խափանավ.
Քրիստոս բողն էրեսին,
Հրեշտակները շորսդին
էրկնուց իջավ,
Խաչապաշտից տները մտավ:
— Տեր իմ, ո՞ր կերթաս.
Ձուր ունիմ հրեղեն,

Բուրվառ ունիմ բոցեղեն,
Ամեն թելն է լուսեղեն.
Գնացի խանձարուրքիս,
էրթամ հասնիմ պատարագիս:

Բ

Ով տիրամար, պահե զիս,
Խաչ գավազանը գրկիս,
Չդա պատեն շարը հիս,
Շրթան հազորդը պրովիս.
Ահա մտա մարս-գերեզմանս,
Դու քնեցնես, դու զարթեցնես,
Աղբատ հոգիս խավար գիշեր լուս հանես:

Դ

Հիսուս ուսիս,
Աստու տունը սրտիս,
Ավետարանը բարձիս.
Մայր աստվածածին դիմացս՝
Ահա մտա գերեզմանս,
Հոքիս ու մարմինս քեզի ամանաթ,
Մարմինս գողնքին ամանաթ,
Հոգիս Գաբելի հրեշտակին,
Տերն մեր Հիսուս Քրիստոս:

Դ

էս գիշեր դուս էլա,
Մե անարատ լուսմ՝ տեսա,
Եփոր տեսա զարհուրեցա,
Մահվան բալուպ բալուվեցա,
Երկինքը պարզ է, ծիրանի,
Մայրամ նստեր սուրբ սեղանի,
Աղոթք կէնե սուրբ տաճարի,
Հրեղեն օրթին է գրկե,
Վե՛վ օր հիշե կամբով հիշե,
Դատաստանին մեղքը չըհիշե:
Հալուս էսան տառեկան պառավից

Ե

էրանիկ էր էն տարին,
էրուսաղեմ զուքեցին,
Օսկի կամար կայնեցուցին,
Հիսուս ի քուն դեռ տաճարին,
Գիշեր ուզեր Հիսուս որդին,
Շորորեր իաչը շենքին,
Տեղ բուսներ ծառ խնկենին:

Զ

Տեր, մեղքս շատ է քրնց սարը, քրնց ձորը,
Քրնց քարը, քրնց գլխուս մազերը,
Երկնուց սուն է, սատանուց բուն է,
Տեր, դու ազատ էնես աղքատ հոգիս,
Զեռքդ վրայես շքաշես:

Է

Ճրաք, ճրաք, ճշմարիտ,
Ճշմի՞ խաղար Մարտիրոս,
Աղա վկա Քրիստոս,
էրնեկ էրնեկ ան տարին,
Երուսաղեմ շինեցին
Պաղով ծառը տնկեցին.
Մարիկիս ըսեք դու գա,
Բոով աշվին լուս գա,
Մե դուռմ՝ կար Հիսուս,
Հիսուսի մեջ Քրիստոս,
Շուրջառը վրեն ծածկոց,
Բուրվառը վրեն կախոց,
Գավազանը վրեն փակոց,
Դուս գալողը քար կտրի,
էրթիկս գալողը փատ կտրի,
Պողոս Պետրոս,
Անթառական Սուրբ Կիրակոս.
Հուրն ընկնիմ՝ շվառիմ,

Հուրն ընկնիմ՝ շտանի,
Մինչ ի գալուստն Քրիստոսի:

Ը

Ահա մտա զանկողին փերեզման,
Մեղա-մեղա, հազար-հազար,
Կաթնիկ աղպուր, քարե տաճար,
Ես եմ աստուս լիլի պաճառ,
Աստված էնե խաչ ու տաճար:
Տարին կորթ-կորթը խաչեցին,
Ես ան խաչին մասեն գուզեմ,⁷
Զօր ու գիշեր դատումս կտտեր է,
Տարածս երկու կանգուն շալ պիտենով,
Ամանաթը տալ պիտենով:

Թ

Կրակը մարեցավ,
Զարը խափանավ,
Պողոս Պետրոս արդարացավ,
էրկընու իրեք հրեշտակ իջավ,
Մեկը հոգուս,
Մեկն արևուս,
Մեկն ա գալըստական,
Զարերը խափանական:

Ժ

Գլխս դրի բարձին,
Հոգիս տվի պահապան հրեշտակին.
Կես գիշերին
Մեջ գիշերին,
Հավախոսուն
Դիմալուսուն,
էրկնավոր թաքավորին
Թաալլում էրի իմ հոգին.
Ես մտա մահին դերեզմանը,
Թե քնիմ, թե մեռնիմ, թե նախախեմ
Հոգիս գիրկդ ավանդեմ, Աստվածածին:

Տղան լողացնելիս

Էրկան վզիկ,
Թափ տու ցավիկ,
Շալկե մսիկ

Հաց ելիելիս

Գառնենի գառը,
Խնկանի ծառը,
Անթառական պսակը.
Գետին ճաշակի,
Օրհնած հողի,
Խաշած գերեզմանի
Նասիպ էնես ինձի:

Խնոցի հաբելիս

Նղ ծաղիկ,
Դեղին ծաղիկ,
Հափնե առե,
Հափնե բուսե,
Հերն նստեր,
Օրթին փնջե:

Գելկապ

Ա

Ութ ութեն,
Էրկու բթեն.
Աստվածամոր քաղցր կաթեն,
Սուրբ Սարգսի ձիուն ձարեն,
Կապե գելը, կապե գազանը,
Կապե գիճն ու գիճավորը,
Կապե օձն ու թրավորը,
Կապե մեջ գիշերվա ծովը,
Օր սինոռը մտավ՝ բերանը գոցվի,
Սինոռեն էլավ՝ բացվի:

Բ

Գալը սարը կապեցի,
Սատանան անժած քարին կապեցի.
Քրիստոսին միով մոմրոճը մխեցի:

Գ

Ութը մատով, երկու բթով,
Սուրբ Սարգսին ձիուն ձարով,
Տեր Մովսիսին գավազանով,
Սուրբ Գեորգա սուր գեղարգով,
Լուսավորչա լուս հավատով
Աստվածածնա քաղցր կաթով
Կալեցեք, կապեցեք,
Աչքը զեմքին խավրեցուցեք,
Լեզուն բերնին պապանձեցրեք.
Սուր ճանկերը բթացուցեք,
Ցերեկով աչք մթացուցեք:
Անվամբ Հիսուսի, Քրիստոսի թափեսցի,
Պատուհաս մեր ի վերա շար դազանին. ամեն:

Դ

Աղամ, Աղամ, հայր Աղամ,
Դուգար գելի պես,
Կայներ գառի պես,
Սուրբ Սարգսա ձիուն ձարովը՝
Մայր աստվածածնա քաղցր կաթովը,
Ութը մատով ու երկու բթովը
Կալիս ու կապ մնաս:

Դուռը փակելիս

Ա

Մեր տուն հրամատուն է,
Քրիստոս իշխանատուն է.
Պատե պատ՝ երկթե սուն է.
Փիլոնն՝ էրթըկոց ծածկոց է,
Խաչ գավազան՝ դռան գոց է:

— Աքա Մարիամ հոտ ինչ կէնես,
«էրեցնէրուն շուրջառ կարեմ,
Հագնին, կային պատարագեն.
Պատարագն ա Քրիստոսու:
Իրեք պուռ³ դանակն ունիմ,
Մեկը՝ սուտ սատանին,
Մեկը՝ գել գազանին.
Մեկն ա՝ շար խափանին:

Բ

Տունմ ունիմ էրկաթե,
Պատերը սուրբ պողպատե,
Քրիստոս մեջն օթևան է,
Դուռ դռան գոց է,
Խալխան էրթկին ամբոց է,
Դռան գալող ետ դառնա,
Երթիկ գալող՝ քար դառնա:

Գ

Ճրաք, ճրաք, ճշմարիտ Մարտիրոս,
Դուռը բաց, Քրիստոս:
Քրիստոս հեծավ իրեն ձին,
Գնաց անգին քաղաքին,
Կտրվեց անթառամ ծաղիկը,
Քնի՝ քունն անուշ,
Չարթնի՝ էրածն բարի:
Մեր տունն լիքը էրկաթ է,
Պատերը լիքը փողպատ է,
Սուրբ կուսը դուռն է.
Սուրբ Գրիգոր էրթիքն է.
Փիլոնը էրթոց ծածկոց է,
Խաչ գավազան դռան փակ է:
Դուռը քալողը քար կտրի,
էրթիկ քալողը էրկաթ կտրի:

3 Քերան:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Չար աշխի

Ա⁴

Աստվածամար, կուտաս կամար,
Մեկիկ օրթուտ խաթեր համար
Իմ գիտեցածս տար կորու,
Քու գիտեցածտ ինծի տու:
Աստվածամար, լուսին կամար,
Հրեղեն ծով՝ ինծի հրմար,
Տար գրախտին գուռը ցըցու
Իմ հոգին հոն հանգստացու,
Լուս մտացեա ինծի լուսու,
Չար մեղացես ինծի դարցու:
Դրախտին գովիքը բացին,
Արդրնեքը ճտվքտացին,
Մեղավորները շոքան լացին,
Պաշար շունեմ հետս տանելու,
Մազե կամուրջ անցընելու,
Քրիստոսիտ չուհապ տալու,
Ալ ճար չկա ետ դառնալու:
Տիրամար, աստվածամար,
Լուսես կապե կամար-կամար,
Ես կը մեռնեմ քեզի հրմար,
Դուն տու ինծի իշխանութեն,
Հոգիս տանիս արքայութեն:
Ճրագն ընկավ լիացավ,
Դեն ու դավան հալածեցավ,
Քրիստոս մեզի համար շուք շինեց,
Անմարեմար Մոսեսին,
Երթալին գան Քրիստոսին:
Գիրը գրի վրա,
Ավետարանը սրտիս վրա:

4 Ասում են և շար վախ բռնելիս:

Ճրարք, էրարք ճշմարիտ,
Ճշմարտապես, Եղիա մարգարապես.
Բաց պղնձե դուռը բանամ,
Մտնեմ անմահական դրախտ,
Ժողովեմ անթառական ծաղիկ,
Փնջեմ դնեմ գլխուս տակ,
Քուն ըլլիմ քունս անուշ,
Չարթիմ էրածս բարի.
Ինչ խնդրեմ, աստված կատարեւ,
Հասուս մասուս քաղքեն կուգամ,
Շատ պիտվական քաղաք կէրթամ
Հուր ունեմ հրեղեն,
Բուրվառ ունեմ լուսեղեն,
Հիսուս բերդ, Քրիստոս պարիսպ,
Մենք մեջը պարսպինք,
Հարը փակե՛ օրթին բանս
Բախիքը վրան Քրիստոսու:
Սուրբ կաթը կուսին,
Անգին արունն Հիսուսին,
Մեր մեղքը ջնջեցին.
Տունմ ունիմ էրկըթե,
Բուրրը պողպատե,
Սուրբ Գեորգ քուն է,
Սուրբ Հակոբ վարթուն է:
Ահա եկավ երեք ձիավոր,
Կանաչ կապավոր,
Մեկը Հիսուս,
Մեկը Քրիստոս,
Մեկը Հայր Աբրահամ
Չար աշ, շար կրակ,
Չար փալը փշակեցին,
Դրին դրախտին դուռը,
Կտրիչ եղը պատռի,
Չար աշքը կոտորի:
Մտա Քրիստոսու պախշան
Կտրեցի երեք մարմարե սուն,
Երկուսը երթիցս պահապան,

Մեկը դռանս:
Չար աշ, շար խափանի,
Չար սիրտ, շար խափանի:

Հավը թառը
Սիրտտ տեղը

Բ

Սև եզը սև սարը,
Սև սամոտա վրա ուսին,
Օխիք հանդույց վրա մեջքը:
Չար աշքը շար փուշ,
Չար նիաթ, շար խրատ:
Մտա եմ ասուս նախախնամությանը,
Առ ծառայիս աշք տվողին
Աշքը խավրի, արևը մարի,
Չար աշքը շար փուշը,
Չար նիաթ, շար խրատ.
Սև սարը շրջեցին,
Սև կթոցը կթեցին,
Վե՛վ տեսավ զարմացավ,
Վե՛վ կերավ տրաքավ,
Սև օձին գանգին վրա
Չար աշքը շար փուշ,
Չար նիաթ շար խրատ:
Տաճարն Սողոմոնի
Գավազանն Դավիթ մարգարեի,
Խոսքն Ահարոնի,
Բախիքն Ունանու:
Չար աշքը շար փուշ,
Չար նիաթ շար խրատ,
Չարը դռնեն ցկեմ,
էրթեցեն էլե,
էրթեցեն ցկեմ,
Դռնեն էլե.
Չար աշքը շար փուշ,
Չար նիաթ շար խրատ:
Չար պահ ս՛ւր կերթաս.
«Անխաշ խմորին,

Բաց օրորանին,
Բաց կամարին,
Լավ էզին հսին⁵,
Լավ գոմշին հսին.
Լավ ձիուն ձարին⁶
Լավ ոչխարին ջոկին,
Լավ ջախջին քարին,
Լավ արտին գարուն,
Եվ ամեն բարուն»:
Չար աչքը շար փուշ,
Չար նիաթ շար խրատ.

Գ

Կուս Մայրամ կերթա դրախաը
Հետ գուլա հետ կաղաղե,
Մեր տեր Հիսուն գեմ ելավ ըսաց.
«Մայր Մարիամ, է՞ր գուլաս, է՞ր կաղաղես»,
— Իմ տեր, է՞ր շամ, է՞ր շաղաղեմ.
Ոչ գիտեմ շար նիաթ է,
Իրեք հարուր վաթսունվեց պիղծ ցավ է:
«Մայր Մայրամ, մուս Սողոմոնի տաճարը,
Բոնե առաքելոց դանակը,
Կտոն շար աչքը, շար նիաթը, շար խոխուրդը,
Իրեք հարուր վաթսունըվեց պիղծ ցավը,
Լից պղնձե կուժը,
Քապլե անհասակ ծովը:
«Ի՞նչ ուտե».— քար ուտե,
Քացախ ուտե,
Բոնչի տերև ուտե:
Չար աչքը կերթար, Քրիստոս գեմ դիպավ,
Ըսաց. «Պիղծ անօրեն հո՞ր կերթաս:
Ըսաց. կեո կոտոշ կարմիր կովին,
Մեծակոտոշ սև գոմշին
Կացինն ու յուր կոթին,

Սողոմոնն ու յուր թաղկին,
Մանուկն օրոցքին.
էրիկմարդու աչքե,
Գլխուն արևուն
Կնիկմարդու աչքե
Մծին ու ծամին:

Դ

«Տիրամար աստվածամար,
Նստեր ես ծովին քանյար,
Ի՞նչ կուլաս, ի՞նչ կողբաս»:
— Ինչդ շամ, ինչդ շողբամ.
Տրաքեցավ շար նազարեն⁷,
Քառասուն ձիս, քառասուն ջորիս:
Առ ֆրանկի դանակը,
Մտի Քրիստոսու պախլան,
Կտոն իրեք մասսրեն,
Մեկը տու սև սատանին,
Մեկը տու դեղ գազանին,
Մեկը տու ամենայն շարը խափանին,
Չար մասուրեն, շար նիաթին,
Չար նիաթը շար կրակին:

Ե

Աստվածամար նստեր ցողա .
«Ով մարդ ի՞նչ կաղաս»:
— Ի՞նչ աղամ, քառսուն բեո, քառսուն ջորի.
Բոնե իյա⁸, բեոն ի կապան:
Սև ձին սև սարն էլավ,
Ազոավը ծառին թռավ.
Իրեք դուռ կտոնցին,
Մայս⁹ էրին սուրբ առաքյալսն:
Շեկը շեկին, սեք՝ սեկն,
Չար աչք շար փուշ,
Չար կրակը շար կրակին:

⁵ Ուտին:

⁶ Պուշ:

⁷ Նշանակութունը հայտնի չէ:

⁸ և ⁹ Նշանակութունը հայտնի չէ:

Ձ

Մարիամ մայր աստվածածին,
 Նստեր է հետ Գայիանեին,
 Կուլա ու արուն կը հեղաս.
 Ո՞ր կուլաս, ո՞ր արուն կը հեղաս.
 Որ չըլամ, որ արուն չհեղամ,
 Ով որ Քրիստոսի ծառային աչք կուտամ,
 (Այս անուն) ոչ վարին, ոչ վաստըկին,
 Ոչ իրարու բանին հասնին,
 Ակնահարին, գլխացավին, բլաթ նյաֆասին,
 Չար աչք, շար փուշ, շար կրակը շար կրակին:

Է

Խաշափայտն Քրիստոսին,
 Հայրն ընկավ, սրբուն կապեց,
 Աչք բթոկ, աչք չբթոկ,
 Աստվածային հրամանով,
 Կանանչ ու կարմիր նարոտով,
 Չար աչքը, շար լեղուն,
 Չար սիրտը շար փուշերի:

Ը

Ալերս, պալերս,
 Քաշեցի սև պաներս,
 Աստվածամար,
 Քառասուն կամար,
 Չար աչքը, շար փուշը
 Քրիստոսու բթովը
 Արճիճի պես հալի
 Ան օձի բերան:

Թ

Վեվ օր աչք է տվե,
 Աչքի աչքով հարվե,
 Մոմի պես ծալվի,
 Առի պես հալվի:
 Վեվ օր աչք է տվե,

Գորտի պես ճղվի,
 Օձի պես բղավե,
 Օշխրի պես ձեն հաճե:
 Աստին ջուր, անդին ջուր,
 Մեջը փուշ գուշկուր դուրս գա:

Ժ

Ան օձը բռնեցի,
 Ան պուտկի մեջ ձգեցի,
 Վեվ օր տեսավ արմացավ,
 Վեվ օր կերավ զարմացավ,
 Չար աչքը շար փուշը,
 Չար նաֆասը բարի ազոթը:

ԺԱ

Կապեցի թևն ու արմունկը,
 Կապեցի շեկ մարդուն ու սև մարդը,
 Կապեցի իրեք ճեղ կաննեփը:
 Մեկը կապեցի,
 Մեկը կախեցի,
 Մեկը ցկի անհատակ ծովի տակը,
 Ան օձեն պանիր քաշեցի,
 Տեսողը զարմացավ,
 Ուտողը պատոեցավ,
 Չար աչքը շար փուշը:

Վ ա խ ի

Ա

Մարչամ մայր, քուն ես, թե զարթուն,
 Ոչ քուն եմ, ոչ զարթուն,
 Պառկեցա, էրազ տեսա,
 Ետ զարթա սարսըփեցա.
 Փշե պսակ էր շինած,
 Գլխիվեր ոտքտ եմ ընկե,
 Անունդ ի՞նչ է.—Մուրը Մարգիս:
 Որդուտ անունն ի՞նչ է:

— Սուրբ Կարապետ:
Առնեմ ընկնիմ դռնն դուռ,
Գաս էնես օգնութեն,
Քու ձիուդ կարողութեն,
Քու ձիուդ կամկի վրա,
Անարատ ծովի վրա,
Շատ մարդ ընկի դերութեն
էրթաս էնես ընկերութեն,
Թուրտ քաշես էնես փրկութեն:

Բ

Քրիստոս ո՞ր է¹⁰,
Տակը մսուր է,
Գլխատակը տաշեղ է,
Այրն բարի է,
Վախեցածը սուր է,
Կնիկը շար է,
Քարդանը խոռ է,
Միջինը մարխոշ է,
Գտալը սյուշիկ է,
Երկնավոր թագավորս փրկութենը կուտա.
Այս տղայիս սիրտը տեղը, լերդը փորը:

Չար դրկցից ազատվելու

Մարիկ մայր Աստվածածին,
Ինչի՞ գուցաս, ինչի՞ կերերաս,
Քառասուն ձի, քառասուն ջորի,

Չար աչքը շար կրակին,
Առ ֆրանկի դանակը,
Մտի Քրիստոսի պախշան,
Կտռե իրեք մարսենի.
Չար աչքը շար տարի,
Չարդրկիցն ա վերջանա:

Ահօրեն մարդկանցից ազատվելու

Ուսին ուսին Սուրբ կուսին,
Փողե կոճակ Հարութենին,
Հոռոմսիմեն հարսնեցուցին,
Մայրամ քուն ևս թե գարթուն,
Ոչ ի քուն, ոչ ի արթուն.
Իմ Տեր Եկավ ամպու խաշաց,
Եկավ նստավ հաթոս գալոց,
Չեն էտու աշակերտաց,
Գնա, գնա, պիղծ թշնամի,
Բան ևս գործե անօրինաց:

¹⁰ Քրիստոս ծերունի ազգատի կերպարանքով ողորմություն է խնդրում, մի մարդ երեկոյան տանում է նրան լուր տունը գիշերելու, սակայն կինը չի հոժարում: Ամուսինը անձարացած առաջարկում է ծերունուն պանկել մսուրում և բարձի տեղ տաշեղ դնել գլխի տակ: Ընթրիքին մարդը կամենում է ծերունուն իրենց սեղանակից առնել, սակայն կինը ոչ միայն թույլ չի տալիս, այլև իրենց համար պատրաստած կերակրներից էլ նրան բուժին չի հանում. մի կտորած քարդանի մեջ (կավի աման) լցնում է թթու թան, սյուշիկ (սուշի կեսը կտորված) զգալը ձուլում է մեջը և տալիս նրան ուտելու: Բայց հենց որ պառկում են, երեխան սաստիկ վախից մինչև լույս գոչում և լալիս է: Նոր ոչ մի հնարքով չեն կարողանում երեխայի լացը կտրել, հայրը հարցնում է ծերունի ազգատին, թե մի աղոթքով չի՞ կարող լավացնել երեխային: Նա էլ այս աղոթքն է ասում և լավացնում:

ՍԵՐՈՒ ԵՐԳԵՐ

* * *

Հալիներ ու ջուր դառանինք,
 Խառնվինք էլման¹¹ դետերուն,
 Քաշվինք աղբրի ակտիք,
 Յարս ի գետ ջուր տաներ,
 Գլզիներ մեջ կժներուն,
 Վերցուցեր փինին¹² դներ
 Կաթկթենք մեջ ծծերուն:

* * *

Լուսնիակը ոստի ոլոր
 Համ խորոտիկ, համ բոլոր:
 Լուսնիակը սարի տաշտեն,
 Ես էրեցա բու դարդեն.
 Ես կերթամ դարիբուսեն
 Մնաս դու քո վատութեն:
 Զուր կիբեր բանձր սարեն,
 Կը կաթեր մարմառ քարեն,
 Յար դառցեր է իլխարեն,
 Զսաղնա սրտիս լարեն:

* * *

Էլեր ես, կայներ ես դուքը,
 Մազերըդ ցկեր ես հուսը,
 Էրեսեդ կաթե կը լուսը.
 Կայնե, ֆիտան, պոլիդ դուրպան:

11 Հորդ:

12 Ուս:

Էլեր ես, կերթաս կը մարագ,
 Քեներդ էրկան, մեջքդ բարակ,
 Կերածդ է միշտ մեղրով կարագ.
 Կայնե, ֆիտան, պոլիդ դուրպան:

Էլեր ես, կերթաս կը կալը,
 Բարով մաշես գլխուդ շալը,
 Էրեսեդ կը կաթե խալը.
 Կայնե, ֆիտան պոլիդ դուրպան:

Էլեր ես, կերթաս կը դերի,
 Կրակն ընկեր՝ սիրտս կէրի,
 Քեզի տանողի տունն ավերի.
 Կայնե, ֆիտան պոլիդ դուրպան:

Էլեր ես, կերթաս կը սեյրան,
 Մնացեր և՛մ պոլիդ հեյրան,
 Դու գլմանիս շոլի ջեյրան.
 Կայնե, ֆիտան պոլիդ դուրբան:

Էլեր ես, կերթաս կը հանդը,
 Էկար ընկար մեր էլ ճանկը,
 Կայներ կէնես մանու ֆանդը.
 Կայնե, ֆիտան պոլիդ դուրպան:

Դուն կայներ ես յանա-յանա՛,
 Քամին դարնե փեշդ բանա,
 Քոոդ էրեսիդ դանա դանա.
 Կայնե, ֆիտան պոլիդ դուրպան:

Դու հույեր ես ալվան խուսը,
 Բարով մաշես գլխիդ ֆասը,
 Քու ստներիդ դեղին մասը.
 Կայնե, ֆիտան պոլիդ դուրպան:

Շատ քուտնա ես, շատ մերմակ ես,
 Քուկտ լալ է, կարմիր բուկ ես,
 Աչքով ունքով մարդ կխաբես,
 Կայնե, ֆիտան պոլիդ դուրպան:

Բարակ մեջքիդ քիրմա շալը,
Կամես կը գու դյունի մալը,
Չես հարցնես յարիդ հալը,
Կայնե, ֆիտան պոյիդ զուրպան:

Հարաֆ քամին կը շընգշնգա,
Մազ ու քամանին կը ճնգա,
Ես բու սիրուդ հիվանդ քնկա,
Կայնե, ֆիտան պոյիդ զուրպան:

Ուրազը փետին կը տաշե,
Սերս իմ սիրտը կը մաշե,
Բարակ սրտով ինձի ալ է,
Կայնե, ֆիտան պոյիդ զուրպան:

Էրևընու գուգա նուշը,
Քու ձեռքը կա ոսկե գուշը,
Արի պագնեմ կարմիր թուշը,
Կայնե, ֆիտան պոյիդ զուրպան:

Էրևընու կուգար աղը,
Քեզի տարան Գյուլլի թաղը,
Քաղեցիր շամամն ու բաղը
Կայնե, ֆիտան պոյիդ զուրպան:

Էրևընու գուգար գերան,
Բուտը էրես, պղտի բերան,
Քու տանողիդ տունը վերան,
Կայնե, ֆիտան պոյիդ զուրպան:

Էրևընու գուգա նուռը,
Ինձի տարան քեհուն դուռը,
Հարուր մանեթ տվի շուռը,
Կայնե, ֆիտան պոյիդ զուրպան:

Վեմ գնաց յարիս օթախը,
Վեմ պրծուց կանաչ պութաղը,
Վեմ կանչեց իմ յարիս խաղը,
Կայնե, ֆիտան պոյիդ զուրպան:

Պոստընները գլխի բազուկ,
Քեներդ լինի պիլյազուկ,
Պոյտ էրկար, մեջքդ նազուկ:
Կայնե, սեյր անեմ, սեյր անեմ,
Մառալ պոյիտ ես հեյրան եմ:
Պոստընները գլխի համեմ,
Լեզուդ դի բերանս՝ ծամեմ,
Սերս սրտիդ մեջք քամեմ:
Կայնի սեյր անեմ, սեյր անեմ,
Մառալ պոյիտ ես հեյրան եմ:
Էրևընու գուգա նուռը,
Գու կայներ ես դեմի դուռը,
Հարուր մանեթ կուտամ շուռը:
Կայնե սեյր անեմ, սեյր անեմ,
Մառալ պոյիտ ես հեյրան եմ:

* * *

Լուսնիակը կամար, կամար
Քեզի կուզեմ ինձի համար,
Բարակ մեջքիդ օսկի քամար,
Քելե՛, քելե՛, պոյիտ մատաղ:

Չոմրվա բանձը դալեն,
Կապուտ խրխան, կարմիր վալեն,
Գուն էլ ինձի թողեր լալեն,
Քելե՛, քելե՛, պոյիտ մատաղ:

Աշնանը բուննի կը ուռը,
Քեզի տեսա ծամին դուռը,
Գլոխտ կախ, ճիտտ ծուռը,
Քելե՛, քելե՛, պոյիտ մատաղ:

Քոչեր Եկավ անցավ ճալա,
Ճերմակ ճակատ, կարմիր վալա,
Քու սեր քաշեմ, հալա, մաշա,
Քելե՛, քելե՛, պոյիտ մատաղ:

Ուրախց գուգաս ուշիկ-ուշիկ,
Օտվիտ խրի մանդո փուշիկ,
Դու ըննտիկ, պագտ անուշիկ,
Քելե՛, քելե՛, պոլիտ մատաղ:

* * *

Առավոտուն թևարմուխ,
Ճերմակ լաշիկ, գլխուն թուխ,
Ելա գացի շայ լվացք,
Տաշտ պրծավ՝ ջուրը գնաց,
Շան գլատի շորեր մնաց:
Ա՛խ լոր իմ, լոր իմ, լոր իմ,
Սապոնն էր օսկեզրած,

Շեզ մանչն էր ճակտիս գրած:
Կանանչ ջուրը սառեր էր,
Չեռքս դաման տարեր էր,
Պարին միջի շեկ տղան
Խեչքս գլխես տարեր էր:
Ա՛խ լոր իմ, լոր իմ, լոր իմ,

Ալվալան քիթս ցկի,
Շեկ մանչը միտքս ցկի:
— Մո՛, մանչ տու շուխատ վլամ.
Վլամ, վլամ լիստրկի,
Վարդի ջրով խտկի,
Վլամ ու քարին ցկեմ,
Թափ տամ ու ծառին ըցեմ,
Ժալեմ ու ծոցս դնեմ:

* * *

Կանչե՛, կոունկ, կանչե՛ ձենդ քարակ է,
Ցարս կորուցեր՝ հալս լաման է,
Կոունկ, եղած տեղդ շալիր շիման է,
Աշխարհք արեգակ, ինծի տուման է:

* * *

Ինծի տարեք յարիս դոնեն անցուցեք,
Ցարաներս բացեք՝ քաֆիր յարիս ցցուցեք,

Մասվընեքս կրտրեցեք մո՛ն էրեք վառեցեք,
Ավազը խունկ էրեք՝ վրասս ծխեցեք,
Ինծի տարեք յարիս դուռը թաղեցեք:

* * *

Ես վարեն գուգայի, դուն դուռը բացիր,
Ձեռքս ծոցս տարար՝ ախ էրիր լացիր,
Թե օր չէիր առնեիր՝ ինչի՞ սիրեցիր,
Գնը՛ դապլի խային յար շեղար մեզի:

Ես սարեն գուգայի, շալակս բուրդ էր,
Աս տունը մի մտնիր, շատ դուլում մուխ էր,
Պոյն էր դառու դումաշ, աշքերը թուխ էր,
Գնը՛ դապլի խային, յար շեղար մեզի:

Երկինքը ամպեր էր, ինչ անուշ թոն էր,
Եկա դոնեն անցա, ջանանս հոն էր,
էրեցա, խորվեցա աս ինչդ բան էր,
Գնը՛ դապլի խային, յար շեղար մեզի:

* * *

Դոնեն անցա թնդիրն էր ծուխ,
Աչքեր բալակ ունքերը թուխ,
Մեռնիմ քեզի Սուրբ Պուլանուխ,
Քիփ լուրիկ, լուրիկ, լուրիկ,
Գարնան քարեր վարդ էրիր, լուրիկ:

Իրկրվորի ճրագն էր վառ,
Դու գլմաներ զոզանի գառ,
Օրբեկերցի արի գիս առ:
Քիփ լուրիկ. և այլն:

Արիք տեսեք աղջկա կեսուր,
Խալաթ կարեք հարուր իթսուն,
Կրակ թափի քրվորոջ քուրսուն: Քիփ լուրիկ. և այլն:
էլա էրթիք թափ քելեցի,
Ոսս զարկի՛ էրթիք բացի,
Ցարս տուն շեր՝ նստա լացի: Քիփ լուրիկ. և այլն:

Ալաշկերտու թոփրազ դալեն
Սավզուզ զարկեց սրտիս յարեն,
Բյուլբյուլ խոսամզ սրտիս միջեն: Քիփ լուրիկ, և այլն:
Անձրեն էկե ջուր է շքխե,
Իմ յար զյուր ամալն է փոխե,
էրթմցեք է, շեմ շի կոխե: Քիփ լուրիկ և այլն:

* * *

Առավոտ գարի պոկիկնք,
Հայլի թե զլոխ կոկիկնք,
Միրուններու լավը շոկիկնք.
Ա՛խ լուրիկ, լուրիկ, լուրիկ.
Կանանչ ու կարմիր լուրիկ:
Առավոտուն թնդրին մոխ,
Աշվին բալակ, ունքվին թուխ,
Չեմ ետա Մուշ, Պուլանուխ.
Ա՛խ լուրիկ, լուրիկ, լուրիկ,
Կանանչ ու կարմիր լուրիկ:
Առավոտուն թունդիր վառ,
Լաշակ թալե խառ ու մառ,
Գլմանիս զոզանի գառ.
Ա՛խ լուրիկ, լուրիկ, լուրիկ,
Կանանչ ու կարմիր լուրիկ:
Առավոտ թնդիր փոշին,
Իմ գյոշ թալեմ քու դյոշին,
Ինչօր հալվեն մըջրին.
Ա՛խ լուրիկ, լուրիկ, լուրիկ,
Կանանչ ու կարմիր լուրիկ:
Առավոտուն թնդրին բոց,
Արի էղնիմք գիրկ ու ծոց,
Օր գա խմրի դարառ ու խոց.
Ա՛խ լուրիկ, լուրիկ, լուրիկ,
Կանանչ ու կարմիր լուրիկ:

* * *

Գեղին վերև հերկեր մերկեր,
Շապիքտ սուրմայով ներկեր,
Սիրեր եմ, շեմ կրնա թյարկեր,
Արի խոսինք ջորած նազլու,
Քընց բյուլբյուլն էլ ձենով նազլու:
էկար անցար ու յատ էրիր,
Չեքտ էրեսիտ պատ էրիր,
Դուն սիրեցիր, դուն յատ էրիր,
Արի խոսինք ջորած նազլու,
Քընց բյուլբյուլն էլ ձենով նազլու:
Քյոսա երիցն եմ քահանա,
Աշվնուտ շկա մահանա,
Դու ինծի ըրիր դիվանա,
Արի խոսինք ջորած նազլու,
Քընց բյուլբյուլն էլ ձենով նազլու:

Պ Ա Ր Ե Ր Գ Ե Ր

* * *

Ծա Արշակն եմ Գուլալերացի
Գնացի Գուլ, օխտն օր մացի,
Չարա շեզավ նստա լացի,
Շորորա, Սալլատ, շորորա,
Ղայեզն Արշակիդ կորորա:
Վերև կաշեմ՝ բանձր սար է,
Ներքև կաշեմ՝ մանտրո քար է,
Արշակը մոր մեկու հատ է: Շորորա և այլն.
Կես գիշերին աստղեր փիլահ,
Գուլի քանար բաթլաղ տիլ ա,
Արշակ նստեք դալբղ, գուլա: Շորորա և այլն.
Գուլի բուրբ շոքմ շամուռ,
Արշակի մոր սիրտն էր մրմուռ: Շորորա և այլն.
Գուլի քանար մանրու թուփ է,
Արշակի տեղ քիշմ գուփ է: Շորորա և այլն.
Գուլի բուրբ ատում, ատում,

Ուրտից գտնեմ հայալ զատում: Շորորա և այլն:

Գոլի դրազ շայիր շիմեն,
Արշակի մոր սրտի տուման,
Մալականին շկար իման: Շորորա և այլն:

Գոլի բոլոր մանդո ուռ էր,
Արշակի մեր ջիգրեն ծուռ էր,
Հորման զնաց առաջ դուռ էր: Շորորա և այլն:

Գոլի բոլոր կանաչ արտ էր,
Արշակը մոր սրտին դարտ էր: Շորորա և այլն:

Գոլի բոլոր մանդո ծաղիկ,
Արշակի փոր լցվավ աղիկ: Շորորա և այլն:

Երկինք ամպեց, քամին առավ,
Գոլի երես շուրջ սառավ,
Ինչ էրեցին, լուսը (լոտկեն) շգառավ: Շորորա և այլն:

էտ Արշակի բկի վալեն,
Կանանչ բաղի կարմիր վալեն,
Սալլատ, դու լավ պահե բալեն: Շորորա և այլն:

Վեր աշեցի՝ բանձր սար էր,
Երկնուց ընկավ մանդո քարեր: Շորորա և այլն:

Քաղավորներ նստած թախտին,
Միք հավատա կնկա բախտին,
Հոգի տվեց լուսո վախտին: Շորորա և այլն:

Արշակ զնաց ծովի բերան,
Ձկներ թափան, աշքեր կերան: Շորորա և այլն:

ԻՖրան, Մանլիս, Իլան տաղի,
Քերմշի գոլ եփ կը պաղի,
Ձկներն էլան սրտիս յաղի (եղին): Շորորա և այլն:

Լողվոր բերեք Արշակ հանե,
Խապար տվեք մորքուր տանե,
Շորեր տվեք հորքուր տանե: Շորորա և այլն:

Ղառղառ կայնավ գոլի քարին,
Խապար տարեք Արշակ յարին: Շորորա և այլն:

Ես Արշակն եմ կարմիր ապով,
Չեմ խեղտվի դակմա կապով՝
Ես ինձ խեղդի ձկնմ՝ ապով:

Շորորա, Սալլատ, շորորա,
Ղայեղն Արշակիդ կորորա¹³:

* * *

Երկու դիլպար Սիմոնի գեղեն
Նստած են աշքեր կեղեղեն,
Ասմար (սև) մազերով, նազերով

Գիլպար նազերով, նազերով:
Երկու դիլպար Խարաղրու,
Նստած են, կը շարեն հլու,

Ասմար նազերով, նազերով,
Գիլպար նազերով, նազերով:
Երկու դիլպար Խարաղրու,

Մեկն ազապ էր, մեկն Նշանլու,
Ասմար նազերով, նազերով,
Գիլպար նազերով, նազերով:

Երկու դիլպար հաց կըտանին,
Աչքով կենեն՝ մարդ կսպանին,
Ասմար նազերով, նազերով,
Գիլպար նազերով, նազերով:

* * *

Ես կը խաղամ բերդենի,
Չալոխ շկա բերդենի,
Տարա տիկո բերդենի:

Խնամի Գրիգոր բերդենի,
Ակոն շի շալի բերդենի,
Տարա տիկո բերդենի:

Նութբարը կը խաղա բերդենի,
Չալոխ շկա բերդենի,
Տարա տիկո բերդենի:

Չանկալ Ակոն զնաց կալը,
Հոռոմի էրտի խալը,
Սև Ակոն ինչ կէնե մալը:

¹³ Նորապսակ Արշակը ձուկ որսալիս խեղդվում է լճում, և նրա հարևանները տեղեկացնում են այդ մասին նրա կնոջը՝ Սալլատին, որ բոլորովին անտեղյակ՝ պարելիս է կղել:

Տարա տիկո բերզենի
Ղազարենց դռան դազերը,
Աննայի սրմա մազերը,
Տարա տիկո բերզենի:
Համ գուլա, համ ժուս գուլա,
Ղուլոի սրտին գուր գուգա,
Տարա տիկո բերզենի:
Ավետիսի դռան հորը,
Համբարն պատուհեց Եփրեմի փորը,
Տարա տիկո բերզենի:
Քոփկը շի շալե բերզենի,
Բերզենի պես պար շկա,
Աղջկա պես յար շկա,
Տարա տիկո բերզենի:
Բերզենի անուշ պար է,
Խաղացողը մեկու ճար է:
Բերզենի ա՛յ բերզենի,
Չքնք կրնը խաղա բերզենի,
Կապուտհընդնոց բերզենի,
Կարմիր տասնոց բերզենի,
Քսանըհնգնոց բերզենի,
Գրախտի դութիկ բերզենի:
Բերզենի ա՛յ բերզենի,
Արի խաղանք պրծնի:

Մեր մշկին ջոխտմ գուլպա,

էրթա կենա, էրթա կենա,
Չարոխը գլխուտ խոռվ կենա,
Ես չեմ կենա, ես չեմ կենա:
Մեր մշկին ջոխտմ գուլպա
էրթա կենա, էրթա կենա,
Գուլպան գլխուտ թերմաշ մնա,
Ես չեմ մնա, ես չեմ մնա:
Մեր մշկին ջոխտմ թողլուխ,
էրթա կենա, էրթա կենա,
Թողլուխը գլխուտ խոռվ կենա,
Ես չեմ կենա, ես չեմ կենա:

Մեր մշկին մե թումպանմ,
էրթա մնա, էրթա մնա,
Թումպանը գլխուտ թերմաշ մնա,
Ես չեմ մնա, ես չեմ մնա:
Մեր մշկին մե արխալուղմ,
էրթա կենա, էրթա կենա,
Արխալուղը գլխուտ խոռվ կենա,
Ես չեմ կենա, ես չեմ կենա:
Մեր մշկին մահութ չուխեմ,
էրթա մնա, էրթա մնա,
Չուխան գլխուտ թերմաշ մնա,
Ես չեմ մնա, ես չեմ մնա:
Մեր մշկին մե քամարմ,
էրթա կենա, էրթա կենա,
Քամարը գլխուտ խոռվ կենա,
Ես չեմ կենա, ես չեմ կենա:
Մեր մշկին մե փափախմ,
էրթա մնա, էրթա մնա,
Փափախը գլխուտ խոռվ մնա,
Ես չեմ մնա, ես չեմ մնա:
Մեր մշկին մենծ աղջիկը,
էրթա կենա, էրթա կենա,
Մենծը գլխուտ խոռվ կենա,
Ես չեմ կենա, ես չեմ կենա:
Մեր մշկին պզտի աղջիկը,
էրթա մնա, էրթա մնա,
Հոգուտ մեռնիմ, մեմ ալ ըսա,
էլ չեմ էրթա, էլ չեմ էրթա:

Քաք տանեին, տանեին,
Ցախավելը թաքվոր կնեին.
Քաք տանեին, տանեին,
Գոմեշը կերսար էնեին.
Քաք տանեին, տանեին,
Մատակը կեսուր էնեին.
Քաք տանեին, տանեին,
Օսկու տեղ՝ փուլ դնեին.

Թաք տանեին, տանեին,
Իշու պոչը փյուսկյուլ էնեին.
Թաք տանեին, տանեին,
Թնդրին շուլը քոյք էնեին.
Թաք տանեին, տանեին,
Նալերը պողմախ էնեին.
Թաք տանեին, տանեին,
Ղազբէլ շապիք հագցնեին.
Թաք տանեին, տանեին,
Իշու կտշին դուպա էնեին.
Թաք տանեին, տանեին,
Ջեշմը խրխա էնեին.
Թաք տանեին, տանեին,
Ճլուպը զոզնոց էնեին.
Թաք տանեին, տանեին,
Փատե պալմաղ հագցնեին.
Թաք տանեին, տանեին,
Թնարին խուփը բարձ էնեին,
Թաք տանեին, տանեին,
Իշուն շուլը դոշակ էնեին.
Թաք տանեին, տանեին,
Խրսիքը յորդան էնեին.
Թաք տանեին, տանեին,
Գոմշին կոտոշը զտունա էնեին.
Թաք տանեին, տանեին,
Ալըրմազը դրմուլէկ էնեին.
Թաք տանեին, տանեին,
Էշը զավուզնի էնեին.
Թաք տանեին, տանեին,
Նախորը հասնառ էնեին,
Թաք տանեին, տանեին,
Էծը տերտեր էնեին.
Թաք տանեին, տանեին,
Կատուն սարկավադ էնեին.
Թաք տանեին, տանեին,
Խորոզը ժամկոշ էնեին.
Թաք տանեին, տանեին,
Քուղան կուտա էնեին.

Թաք տանեին, տանեին,
Խաշերկաթը խաշ էնեին.
Թաք տանեին, տանեին,
Խոտե խալի փոեին.
Թաք տանեին, տանեին,
Խըսրի տեղը զնեին.
Թաք տանեին, տանեին,
Մեյմունի պես խաղցնեին.
Թաք տանեին, տանեին,
Վեց օխտն օր ծում պահեին.
Թաք տանեին, տանեին,
Օրը տասը ծում ծեծեին:

ՀԱՐԱՆՅԱՑ ԵՐԳԵՐ

* * *

Թաղվոր բարով, հաղար բարով,
Գուն վարդ ևս կանանչ տերևով.
Աստված էն քու արևն օրհնե
էջմիածնա դորուխնով.
Գացեք բերեք թաղվորա պապ,
Որ գա նստի դարպաս էնե,
Մնդիկ գարնե սուրբ սեղանին
Բարե հրամմե մեր թագավորին.
Գացեք բերեք թագավորա մամ,
Որ գա նստի դարպաս էնե,
Մնդիկ գարնե սուրբ սեղանին,
Բարե հրամմե մեր թագավորին:

Մեր թագավորն է * * * խաչքառ խաչումաշ,
Բինիշն էր կարմիր, արևն էր կանանչ,
Ջիուկն էր հրեղեն, թամբիկն օձեղեն,
Մեր թագավորն էր վրեն.
էն զոհալ աստղնի երկինք՝ տեսեք թէն ո՞րն է,
էն զոհալ աստղնի երկինք՝ էն թագուհինն է,
էն քուլա բամբակն ի ծառ՝ տեսեք թէն ո՞րն է,
էն քուլա բամբակն ի ծառն՝ թագվորամերն է,
էն միջի հաստագերանն՝ տեսեք թէն ո՞րն է,

էն միջի հաստագերանն՝ էն թագվորահերն է:
Առուծներ մրմնջալեն՝ տեսեք թ'էն ո՞րն է,
Առուծներ մրմնջալեն՝ էն վարդապետներն է:
Շատ ուտող, քիչ վճարող՝ տեսեք թ'էն ո՞րն է,
Շատ ուտող, քիչ վճարող՝ էն տերտերն է:
Կաքվրներ կրկրալեն՝ տեսեք թ'էն ո՞րն է,
Կաքվրներ կրկրալեն՝ էն սարկավագներն է:
Ճնճղներ ճլվլալեն՝ տեսեք թ'էն ո՞րն է,
Ճնճղներ ճլվլալեն՝ էն տիրացուքս տանն է,
Հինգ գաթա վեց խաչ գաթա՝ տեսեք թ'էն ո՞րն է
Հինգ գաթա, վեց խաչ գաթա՝ էն ծառ գովողներն է:
էն ավել դռան էտն՝ տեսեք թ'էն ո՞րն է,
էն ավել դռան էտն՝ էնի ժամակոչն է,
Մուկն էկավ պոչն ալբրոտ՝ տեսեք թ'էն ո՞րն է,
Մուկն էկավ պոչն ալբրոտ՝ էնի շաղջըպանն է:
Շունն էկավ պարկն ի բերան՝ տեսեք թ'էն ո՞րն է,
Շունն էկավ պարկն ի բերան՝ էնի գզիրն է:
էն դիզան բեթ, բեթ դիզան՝ տեսեք թ'էն ո՞րն է,
էն դիզան բեթ, բեթ դիզան՝ էնի ըռեսներն է:

* * *

Հարսը տանելիս
էլեր է իրիկվա բամին
Բազրգան լցվեր է գամին,
ես դուրպան քու դարիպ շանին:
Արձկեցին դրամի հանգուց.
Աղջիկ քակեցին ուր մամուց:
էլեր է Գիլիֆու հուսին,
կը տանի մեր բզրի լուսին,
Իրիկվա վանդեր գարգեցին,
Օտքն զանգուն գրեցին,
Մերիկ ևտեեն լացուցին:
«Չեմ էրթա, մերիկ, չեմ էրթա,
էկած են զոռով կտանին,
Դուն հալալ, մերիկ, դուն հալալ,
Քու տված կաթիկն ինձ հալալ.

Դուն հալալ, հերիկ, դուն հալալ,
Քու դատած հացն ինձ հալալ:
Մի՛ թնդա շեմքուկ, մի՛ թնդա,
Թնդալու ես եմ, կը թնդամ,
Մի՛ սողա հողեր, մի՛ սողա,
Սողալու ես եմ, կը սողամ:
Մի՛ ժածա ծառնուկ, մի՛ ժածա,
Ժածալու ես եմ, կը ժածամ:
Մի՛ թափի, տերն մի՛ թափի,
Թափելու ես եմ, կթափեմ:
Մի՛ ցոլա, աստղուկ, մի՛ ցոլա,
Ցոլալու ես եմ, կը ցոլամ:
Մի՛ ելնի, լուսին, մի՛ ելնի,
Ելնելու ես եմ, կելնեմ:
Մի՛ լա, մերիկ, մի՛ լա,
Լալու ես եմ, կուլամ:
Ղարիպ եղու էրկիր
Կորելու ես եմ, կը կորիմ:

* * *

Աղջի, հարսնավոր էկավ դեղի վերենն,
Քեզի ալ քողբ բերեց թղթի թերերեն,
Մի լա՛, մարիկ, մի լա՛, էկեր կը տանին,
Օխթն ախպոր մե քուրը ջոկեր, կը տանին:
Մարիկներ խափեցին մե թոփըմ շամով,
Քուրիկներ խափեցին մե ձեռքմ հիսով,
Ախքորը խափեցին մե մահուա լուխով,
Մի լա՛, մարիկ, մի լա, էկեր կը տանին,
Օխթն ախպոր մե քուրը ջոկեր, կը տանին:
Հոր խափեցին, մոր լացուցին,
Ախպոր շյուշեն կոտրտեցին,
Քրոջ վալեն պատուեցին,
Մի՛ լա, մարիկ, մի՛ լա էկեր կը տանին,
Օխթն ախպոր մի քուրը ջոկեր, կը տանին:
էրթամ, էրթամ, հեռու տեղեր հեռանամ,
էփոր մարիկ միտքս բնկնի մեջքս բռնեմ կոտանամ.
Մի՛ լա, մարիկ, մի՛ լա, էկեր կը տանին,

Օխթն ախարո մե քուրը շոկեր, կըտանին:
Մի՛ լա, մարիկ, մի՛ լա, լալողը ես եմ,
Ղարիպ էրկիրները կորողը ես եմ:

Մի՛ լա, լալվո՛ր աղջիկ, հարս էղար մեզի,
Յաղութ գմբուխտ, անգին քար եղար մեզի:
Գովիքը բացին շշերով,

Հարսը կը տանեն գիշերով.

«Ձեմ էրթա, մարիկ, շեմ էրթա,

էկեր են զոռով կը տանին»:

— Գնա՛, օղուլ, դնա՛ ձագս,

Ջատկին քեզի տուն կը բերենք.

Վեց օսկի ա գեմ կը բերենք:

ԸՆՏԱՆՆԻԱՆ ԵՐԳԵՐ

* * *

Ավետիքս թեալորա,

Միրականիս հետորա.

Յափունճին պատեն կախ է,

Հոլոն Ավոյիս հախ է:

Ավոն Հոլոյի ուխտ են էրե,

Զիլիֆները շուխտ են էրե,

Հոլոն կայներ աթար կէներ,

Ավետիքս սիրտը կէրեր:

Հոլոն նստեր ախ կը քաշեր,

Ավետիքն էրթիցեն կաշեր,

Հոլոն նստեր թեղ կը մաներ,

Ավետիքիս սիրտը կը հալեր:

Ալոյին պարկած աշերը

Հոլոյին էրկան մազերը,

Ավոյին տարած պոնները,

Հոլոյին դարկած խարճերը:

Հոլոյին տարած սնճերը,

Ավոյին տված տանճերը,

Ավոյին տարած նալերը,

Հոլոյին տված թուլերը:

Մեր գոմին սե սե զոխերը,

Յարս ինձի, վա՛խ, փոխեր է,

Հոլոն ինձեն զատ են էրե,

Յարս ինձեն յար են էրե:

Միրտս պատուեր կես են էրե,

Խնդրեմ աստված ըլլիս տիրական

Յարս է իմ անուշ սիրական:

Ես Ավետիքն եմ գոմանցի,

Հոլոն տալիս հարս ճամփեցի,

Նորեն մե յարմ ճարեցի,

Հորս տարածեն հուս կարեցի:

Չկար Տիրունիս հատը,

Հաճապ վեզ տվեց խրատը.

Օսկի մտանին ճերմակ մատը,

էլեր ես սեյր անես, սեյր անես:

էլեր ես կերթաս կը մալին,

Աստվածը տար քեզի բարին,

Մեռնեմ ես քու անուշ շանին,

էլեր ես սեյր անես, սեյր անես:

Յայլա էլնինք էնենք սեյրան,

Մեշքտ բարակ, ինքտ ջեյրան,

Քեղ տեսնողնին ըլլին հեյրան,

էլեր ես սեյր անես, սեյր անես:

Կովեր ունինք սե ու կարմիր,

Քեզ կթելո՞ւ մեկ մասն ընտրիր,

Սեր ու կարադ շատ պատրաստիր,

էլեր ես սեյր անես, սեյր անես:

Աշունք գուգա, քաղինք գարին,

Կանչե Տիրուն, կայնեմ կամին,

Չ՛ստա հս Տիրունին համին,

էլեր ես սեյր անեմ, սեր անիմ:

Ես Պողոսն եմ վայ դանձացի,

Տիրունս տարան, ես շատ լացի,

Սերս գնաց, ես խեղճ մընացի

էլեր ես, սեյր անես, սեյր անես:

Ինձի առավ տունան փուսը,
 Կովի մի նախուփին (չար) խուսը,
 Ինձի թողեց անճար դուսը,
 Քոռանա Կորխեցուն լուսը:
 Ծա դուզեի սիրով հուսով,
 Դատաստանին պայծառ լուսով,
 Ինձի թողեց թերի հուսով,
 Դատաստանին հուս շունենաս:
 Մայրամ արի տունդ կեցիր,
 Մեր օրենքը խանգարեցիր,
 Ուրանալը հաստատեցիր,
 Դատաստանին հուս շունենաս:
 Արուքն եմ անճար մնացի,
 Բավական կրակ ճարեցի,
 Արի տուն գնա, կորխեցի,
 Դատաստանին տեղ շունենաս,
 Աչք ունենաս, լուս շունենաս,
 Խիման օրը եղ շունենաս,
 Արտ ունենաս՝ բուս շունենաս:
 Ակ ունենաս, խուս շունենաս¹⁴:

Չալտիկ—Վառիկ

էլի, կնիկ, էլի, ճամփներ աշե,
 Չախալ վառեկտ սուրուի բաշ է,
 Գնա հավկիթները ջրնտե փե խաշե.
 Մեռավ խազնատարս, ավերավ տունս:
 էլի, կնիկ, էլի, մալերը ծախե,
 Հատից էտե մեզի օլու մը հախ է,
 Թւերը ծոտոտ է, կատարը կախ է,
 Մեռավ խազնատարս ավերավ տունս:

14 Արուքը (Հարությունը) հրավիրում է լուր Մարիամ կնոջը թողնել կորխեցի քի-
 բականին և վերադառնալ, լուր հետ միասին ապրել, և երբ նա չի համաձայնում՝ անի-
 ծում է:

էլի, կնիկ, էլի, գնա մարագը,
 Մեզի համար բե մեղրով կարագը,
 Գոմեշը ծախենք տանք պատարագը,
 Մեռավ խազնատարս, ավերավ տունս:
 էլի, կնիկ, էլի, ծամերտ սանրե.
 Հավ գրինք կշեռք, գոմշից էլ ծանդո է,
 Գնա կացին բե, ոտք, դուխ մանդոե,
 Մեռավ խազնատարս, ավերավ տունս:
 էլի, կնիկ, էլի, խմորը շազե,
 Գնա, մարդ թոփ էրե, թող պաթա կողե,
 Գնա, տերտերը բե հավը թազե,
 Մեռավ խազնատարս, ավերավ տունս:
 էլի, կնիկ, էլի, ոտներս թաց է,
 Թւղ էրե աշե, դովիքը բաց է,
 Եղ, մատակ մորթենք, տանք հոգու հացը.
 Մեռավ խազնատարս, ավերավ տունս:
 էլի, կնիկ, էլի տուն արի դեսը,
 Հեշ չկար քու նշխուն վառեկի պեսը,
 էս քանի բան կապեց ուստա Սհաննեսը,
 Մեռավ խազնատարս, ավերավ տունս:

Ճուլուկ

Իրիցկնկա գլխուն ալը,
 Կուսկուտը ճուկան բոնեց կալը,
 Կերավ խեղճ տերտերի մալը,
 Կերան ճուլուկս, ճուլուկս:
 Աբուլու գլխու փուսը,
 Ճուկան կերավ փուշ կուսկուտը,
 Քոռանա Աղանիկին լուսը,
 Կերան ճուլուկը, ճուլուկը:
 Գլավան պարպեց գոխտուրի դեղը,
 Կուսկուտը կերավ կճուճի եղը,
 Չանալն առավ ընկավ գեղը,
 Կերան ճուլուկը, ճուլուկը:
 Գլավան տունը ցամաք շորնար,
 Փուշ կուսկուտը դուրը օննար,

Աղանիկն էլ աստված մոռնար,
Կերան ճուլուկը, ճուլուկը:

Կուսկուսը յորտա կը բելեր,
Հաքի հալավը կը վեղեր,
Ճուկայի միսը կը հալեր,
Կերան ճուլուկս, ճուլուկս:

Համբան էլավ դուրը աշեց,
Փուշ Կուկուսը ճուկան խաշեց,
Գլավան նեւը սիրտը մաշեց,
Կերան ճուլուկը, ճուլուկը:

Աղանիկը թեզը կէրներ,
Փուշ կուսկուսը անեօք կտաներ,
Գլավան տունը կը մեռներ,
Կերան ճուլուկը, ճուլուկը:

Աղանիկը գնաց մերին,
Կուսկուսը նստավ դովնի սերին,
Ճուլուկը խաշած առաջ բերին,
Կերան ճուլուկը, ճուլուկը:

Մեծ տերտերը ամեն կասեր,
Գլավայի սիրտը փաս էր,
Ճուլուկս կերած օրը պաս էր,
Կերան ճուլուկս, ճուլուկս:

Դավիթը խոսիր խոսրի սազը,
Կուսկուսին բոներ սե ցավը,
Մարդը գլավա էր շէր քաշե աճը,
Կերան ճուլուկը, ճուլուկը:

Կուսիկս տարեր է քուրդը,
Նա՛ մորթին բերեց, նա՛ բուրդը,
էկավ խափեց կերավ շուրդը,
Ա՛խ, կուտիկս, վա՛խ կուտիկս:
Գիտեմ, կուտիկս դուրշիլ էր,
Քիթը էրկան՝ էրկու թիզ էր,
Հաշելու վախտը բյուրբյուլ էր,
Ախ կուտիկս, վախ կուտիկս,
Քուրդը կերավ շաղ կուտիկս:

Կուտիկս գիլու ասնգի էր,
Պահեցի, դարին շատ թանգ էր,
Անոթնար դուրը կճանկեր,
Ա՛խ, կուտիկս, վա՛խ կուտիկս,
Քուրդ տարավ շաղ կուտիկս:

Կուտիկս ճիլայինց ազդեն էր,
Ռտացեն շուստ էր՝ վազ կէներ,
Հաց ուտելու խիստ նազ կէներ,
Ա՛խ կուտիկս, վա՛խ կուտիկս,
Քուրդը տարավ շաղ կուտիկս:

Խապարն էկավ վերի յայլեն,
Քանդ ու քարափ ներքի մահլեն,
Ետենն զրկեցինք քահլեն,
Ա՛խ, կուտիկս, վա՛խ կուտիկս,
Քուրդը տարավ շաղ կուտիկս:

Հետը տարեր էր ոշխարը,
Քրտի զլխին ընկնի քարը,
Չտեսանք կուտիկիս պարը.
Ա՛խ կուտիկս և այլն:

Օհաննես, դու շալե սազը,
Պատճառն եղավ քու Այվազը,
Չքաշեց կուտիկիս նազը.
Ա՛խ կուտիկս, վախ կուտիկս,
Քուրդը տարավ շաղ կուտիկս:

Իմ աննման էշս պոզ էր,
Տարան նազերով նազերով,
Ինծի ամենեն լավ գովեր,
Տարան նազերով, նազերով:
Մնացին ախին կապեցին,
Պաքմազը թանք-թանք ծախեցին,
Փալանն առան, էշս փախուցին,
Տարան նազերով, նազերով:
Պաքմազիս գինը կտրեցին,
Մե օնպաշիմ ալ ընտրեցին,
էշս շատ ուշ փնտրեցին,

Տարան նազերով, նազերով:
Տեղն ու տեղը ընկա թալան,
Գեւ ախոռն էր ալան-թալան,
էշս կորավ, տվեք փալանն,
Տարան նազերով, նազերով:
Իշխս ահանջներն է ընրկան,
Զին շղիտե անոր յորդան,
Մնացի պեխերը դացքան,
Տարան նազերով, նազերով:
Մինասն էշս լծեր էր կամ,
Հայվան անասունս էր խամ,
Ինծի պիտի ծեծեն պապս ու մամ,
Տարան նազերով, նազերով:
էշս փախավ, էրթամ ծուռ գամ,
Թե չպիտեմ՝ մե կուշում լամ,
Ես հորս ինչ պատասխան տամ,
Տարան նազերով, նազերով:
Իմ էշս քա՛լընի ցեղ էր,
Մե էշմ էր ու զսճա գեղ էր,
Բտատունին դարտերուն գեղ էր,
Տարան նազերով, նազերով:
Իմ իշուս տղաքն էին ջորի,
Վեզ գուզե օր էշս կորի,
Գեղացիւր կուտային դարի,
Տարան նազերով, նազերով:
Իշուս ումուզը կամար էր,
Ինքն էլ պող ու դամար էր,
Բոլոր գեղացոց համար էր,
Տարան նազերով, նազերով:
Իշուս անկճները կախ էր,
Գտնողն ինչդ պիտի ծախեր,
Չլերն ալ վրային կախ էր,
Տարան նազերով, նազերով:
Իմ էշս կորավ ու կորավ,
Ախպարս փալանը բերավ,
Աստված տվեց հարս մեռավ,
Տարան նազերով, նազերով:

Դրկիցներս սիրտս բացին,
էկեր էին հորս հացին,
Համ հորս, համ իշուս լացին,
Տարան նազերով, նազերով:
Ախ, եփ որ փախավ՝ զուգաց,
Սիրտս փորիս մեջ կոկաց,
Քթիս փնչերը մոմաց,
Տարան նազերով, նազերով:

Թարաքամեն զուրը բացեց,
Թուժ կրակ սիրտս լցեց,
Դշխունն ինծի համար լացեց,
Տարան Դշխունս, Դշխունս.
Թարաքամեն մտավ զեղը,
Կերավ մեր աալույին եղը,
Սորվեցավ Դշխունին տեղը,
Տարան Դշխունս, Դշխունս:
Ալեքսան դարաստուն յորթան,
Զօրս գլուխ ավետարան կարդան,
Դշխունն առեր էին կերթան,
Տարան Դշխունս, Նաշխունս:

ԱՆՉՆՐՁԵՄ

Երալու ուրիւն երգը

Լացե՛ք ինձ հեա սարեր, ձորեր,
էլ միք ծաղկիւր կանանչ դաշտեր,
Մնացի ես ուր ու անտեր,
Բանձր սարեն վար են ցկեր,
Բոլոր կողքերս ին կուտտեր:
Լացեք ինձ հեա սարեր, ձորեր,
Որ լսեցիք դուք իմ ցավեր,
Ա՛խ, թշնամիքս ինձ են մատներ,
Կողքս ու գլուխս քարով ջարդեր,
Հաղար տեսակ շարշարանքներ
Ինձ են տվեր աչդ քար սրտեր:

Լացեք ինձ հետ սարեր, ձորեր:
Խեղճ Տիգրանն է ըսպանվեր,
Չունի մայրիկ՝ ցավերն հայտներ,
Որք մնալը շատ դժվար էր,
Օտարութեան մեջը ընկած,
Անուշ հայրիկես դրկված,
Լացեք ինձ հետ սարեր, ձորեր:
Դուք ինձ եղաք աղգականներ,
Վերջին օրը դերուն օրն էր,
Վանքը լիքք ըխտավոր էր,
Ամեն ծաղիկ մորը մոտ էր,
Ես եմ աստեղ զարիպ անտեր:
Լացե՛ք, մայրիկ, անուշ բույրեր,
Եկա աշխարհ, բան չգիտցա,
Անուշ հորմես կարտաս շառա,
Սիրականես լուս շտեսա,
Գիրմ էնեմ իմ Փեթոնին,
Մուղաթ կենա իմ ձաղուկին,
Հիմի լացեք սարեր, ձորեր,
Ես մայրիկես չեմ կշտացեր,
Գիշերից լուս աղերսեր եմ,
Սարեր-ձորեր լացուցեր եմ,
Արունիս մեջ շաղվելիք եմ,
Խեղճացեք ինձ սարեր, ձորեր:
Իմ ցավերս դուք չեք տարեր,
Երանի էր ան քարերուն,
Օր չէր տեսեր խեղճ յարալուն,
Կեղուս կպեր՝ քար էր դարձեր,
Աչվիս լուսը խավարեր էր,
Մեկը չունիմ, օր աղատեր:
Արշալույսը որ բացվեցավ,
Մահվան հրեշտակս ինձ մոտեցավ
Ասաց. «Ես եմ որբի տերը,
Դե՛հ, շուտ արտ, մի շարշարվիր»:
Մե խոսքովմ՝ ես հայտնեցի,
Փուշ աշխարհես ձեռք քաշեցի:
Մնաք բարով սարեր, ձորեր,

Սարեր, ձորեր, ջրեր, քարեր,
Գիշերս ինձ հետ չեք դադարեր,
Մորս տեղը դուք եք էղեր,
Բուրը ցավերս եք իմացեր,
Որքի տերը մեկ աստված էր:

էս գիշեր էրածս Քերոփը տեսա,
Էկավ կայնավ քովս, հետն էլ խոսա,
Իրան սաղ կարծելով ցավես խլըսա,
Ցավես խլսելու մե ճար չունիմ ես:
Ափար, ըսավ ինձի, փաթթվավ, լացեց,
Իրեն շարշարանքի առարկեն բացեց,
Ըսավ մորս մի՛սե, լացեց, աղաչեց,
Ինձ համար թող չըլա, էլ խեր չունիմ ես:
Ըսի՛ մերս քեզի հըմար քուն չունի,
Գիշեր ցերեկ դուլա՛ դադարում չունի,
Պըտըտվի նե չիգա, մրկըմ տուն չունի,
Ըսավ՝ առ տան մեջ ես ախպիր չունիմ:
Յարաններս ինձ քաշեցին դյաքի,
Մրկըր կռապաշաները հեշ չունին հոգի,
Լացի, աղաչեցի, աստձուն ցկի,
Ըսավ՝ Շմավոն, ես աստված չունիմ:
Իսրայելը շատ միտք չունիր դարկելու,
Սեդրակը հեշ հոգի չունիր փրկելու,
Մարգիսը շատ մյուշտարի էր շեկելու,
Շալակը հեծնելու մյաճալ չունիմ ես:
Հավատ չի գտնվի խիլճ շեղած տեղը,
Տարան սրպանեցին սուճ չեղած տեղը,
Կանանչ չը բուսնի շարշրած տեղը,
Ճվա աշխրթին մեջ ես արդունք չունիմ:
Սարգիս¹⁵ ապավան է, Տերը Տյառնի,

¹⁵ Հորինել է Գուտի-դատելից անգրագետ Սարգիս Գյուլպանկյանը յուր եղորք՝ Քերոփ վրա Սա 1887 թ. մի դաշույն է գողացել Շմավոն անունով մի երիտասարդից. գողութունը բացվում է, և Շմավոնը գաշույնը ետ է ստանում, սակայն ուս պահելով՝ հունիս ամսին հարսանյաց տանից Քերոփին խաբելով տանում է դաշտ և յուր ընկերների օգնությամբ սպանում է: Չարագործները բանտարկված են:

Աստղերը թռթոփի, լուսինը դառի,
Աստված կրակ թափե՛ տները վառի.
Կաղաչեմ տիրոջը՝ հեշ քուն շունիմ ես:

Ի՞նչով զարկեց անօրենը,
Զօքար ճվճվացիր, Զըմո,
Զէր կայնի գլխուտ արունը,
Պաղ ջրով լվացիր, Զըմո:
Տարածվավ քաղցր համերդ
Մարդ շտեց քու ցավերու,
Գնտեցիր շեկիկ ծամերդ,
Յարաներդ բացիր, Զըմո:
Քաղցր փեսեդ դիվըհան էղավ,
Կապուտ յարաներտ սյաղավ,
Քու հալետ հասկցող չէղավ,
Ինչ դարդով զնացիր, Զըմո:
Ճերշիլ բերին սիրտտ բացին,
Յաղութ, Սյանամ հստան լացին,
Կտրտած թողին գնացին,
Մեյտանը մնացիր, Զմո:
Իմ յարբ ինծի յար շերիբ,
Կրակն ընկար՝ վյարամ բերիբ,
Ֆիրաղուն¹⁶ դյարբեղար էրիբ,
Գուն էլ ոչ խնդացիր, Զըմո:

ՊԱՆԴԻՍՏՈՒԹՅԱՆ ԵՐԳԵՐ

Ղարիպ

Ղարիպը պառկեր է՝ անճար կը տքա,
Չունի հարիկ, մարիկ, օր իրեն հոգա,
Քարերը յորդանն էր, հոգերը դյոշակ.
Չունի գլխուն տակը բարձ՝ ինչդ էներ:
Մայմ ա շունիր՝ տեղը ցկեր, վերցներ,
Քուրմ ա շունիր՝ բարձին ղպլան դարձներ,

Յարմ ա շունիր՝ հալը, խաթրը հարցըներ,
Մեմ մեռնի՛լ, մեմ բաժնիլ, մեմ ղարիպ էրկիր:

Վարդ կը բացվի վարդևորի կիրակին,
Ես շեմ դիմանա իմ յարիս կրակին,
Հալըը վարդ կը ծողվե, ես հորսա-մորստ,
Հալըը յար կը գտնի, ես յարես կարոտ:

Կռնկին

Կանչե՛, կռունկ, կանչե, քանի գարուն է,
Ղարիպներու սիրտը գունտ-գունտ արուն է,
Քու իջած տեղտ շայիր շիման է,
Աշխարհին արեգակ, ինծի տուման է:
Կանչե՛, կռունկ, կանչե բանձր սարերն,
Գնացեր եմ ղարիպ էրկիր, վախեմ մեռնելին,
Մի՛ լա, մարիկ, մի՛ լա, ես ղարիպ տեղ եմ,
Վաթանիս հողն, ջրին ես կարոտցեր եմ:

Ղարիպն ու կեիկը

Ղարիպ

Էլիբ եմ, կերթամ կը, վե՛՛վ գիտե հալս,
Մեմ՛ա աստված գիտե դառնալս ու գալս.
Մարիկ ձեռքտ պագնեմ, յար, մնաս բարով,
Արղահիլ կամոքտ սյարմ սուլո սիրով:

Կեիկը

Գուլամ ու կերեբամ, իմ անուշ յարս,
Առավոտուն գելնեմ՝ գըյնիս իմ միտս,
Օլմազ ճամբեքտ աշեմ՝ ծոփ կը ճիտս,
Գու գայիր անցնեիր՝ դաֆ քլիր ղարդս:

Արի, իմ էորդակս, արի ղաղս:
Ես մեռնիմ օրա քաշե նազս,
Ինչափ շմեռնեի, օր քեզի տեսնեի,
Վարդ, ըռեհանի պես քովտ բուսնեի:

¹⁶ Մարգար Պապյան, դատելիցի անգրագետ հյուան:

Մանի ըսեմ ու շարեմ,
 Տոպրակ լեմ ու կարեմ,
 Քաղքից քաղաք ժուռ ածեմ
 Սրտիս ուզածը ճարեմ:
 Հաց եմ թխե, դարի էր,
 Իմ յարը սաֆարի էր,
 Մեռնիմ սաֆար զնալուս,
 Խոսքերըս շաքարի էր:
 Ֆինս ֆասը լվացի,
 Սարին տակը մնացի,
 Խապար էրեք իմ յարին,
 Ծս շուկշու մնացի:

Ստամպուլու խորունկ-խորունկ ձորերը,
 Տասը տարվան վաստակս ընկեր կորեր է,
 Վայ ան մարիկին, օր ինձի բերեր է,
 Գիշերը ծիծ ալեր, զօրը օրեր է:
 Հարիկ շունիմ՝ խաթր ու հալս հարցնե,
 Մարիկ շունիմ՝ յարաներս լալցնե,
 Քուրիկ շունիմ՝ տեղս ցկե վերցնե,
 Ախպար շունիմ՝ շուխս կտոռ հազցնե:

Պյուլպյուլ, ինչ ես պառկե շոխուռ օվայում,
 Խեղճ ընկերտ քեզ փնտոռե կ'ու վայում.
 Ծս եմ զարիպ երկրում, սիրտս է տանջվում,
 Խղճա, զարիպ պյուլպյուլ, սիրտս վառած է:
 Պյուլպյուլ, ի՞նչ ես պառկե, պահար յազ էկավ,
 Մեր գեղին մեջ շատ էորդակ ու զազ էկավ,
 Տանը մեջը յարս լսեց, ինձեն վա՛զ էկավ,
 Մի ընե, զարիպ պյուլպյուլ, սիրտս վառած է:
 Պյուլպյուլ, ո՛ւր ես պառկե, գարունը հասավ,
 Կարմիր վարդը պաղշաներուն մեջ բուսավ,
 Տանը մեջ սիրելիս իմ միտքս ընկավ,
 Մի՛ ընե, զարիպ պյուլպյուլ, սիրտս վառած է,

Մի՛ էրթա, զարիպ, մի՛ էրթա, ճամփան շամուռ է,
 Յար, քու սերտ ապառաժեն ամուր է,
 Օխթը տարի քսածտ սաստիկ մեծ դուռ է,
 Մի՛ էրթա, իմ զարիպ, սիրտս վառած է:

ԵՐԿՐԱԳՈՐԾԻ ԵՐԳԵՐ

Լուսը լուսացավ,
 Բարին շատացավ,
 Հոռովել հո՛ւ:
 Էլա՛վ, հորիկը էլա՛վ,
 Արտը կերավ,
 Հորիկի հոտաղ,
 Հոռովել հո՛ւ:
 Եմիշտ մանդո է,
 Շալակտ ծանդո է,
 Շեկան գոմեշ.
 Հոռովել հո՛ւ:
 Ցերիկ մոտել է,
 Հոտաղը բանճար
 Կերեր, հոտեր է:
 Հոռովել հո՛ւ:
 Մաճկալը մաճին է,
 Գտալն անկրճին է,
 Քրնալը լալիս է,
 Տերը խնդալիս է,
 Հոռովել հո՛ւ:
 Իրիկվա հովին է,
 Գութանը թեին է,
 Կանչե, հորիկի հոտաղ,
 Հո՛ւ...
 Գործը բարի է,
 Անմեն տարի է,
 Հոռովել հո՛ւ...

Եզը եզ էր, կարմիր եզ էր,
 Լուծը ճտին, շոքը գետին,

Օրհնած գութանն է էտըթին,
Զորանաս հոտաղ, հո՛ւ:
Գոմեշն էլավ խամին,
Կոռակց երկթե սամին,
Անիծեմ քու խնամին,
Հոռովել հո՛ւ:
Գութանն ընկավ փոսը,
Շաղը ընկավ ակոսը,
Կարմիր կապավոր հարսը,
Հոռովել հո՛ւ:
Քնել է, քրանել է,
Ղարագյող թեւի հարսը,
Կանչե, հոտաղ, հո՛ւ:
Գիմացը դոճա գեղ է,
էն ինչ գնալիկ տեղ է,
Մուրշուպով բերածը եղ է,
Հոտղնուն հոգա դեղ է,
Կանչե հոտաղ, հո՛ւ:
Հարս է՛,
Շապիկը թարս է,
էկավ խաւարը կը շերե,
Թեւի զարագյող՝ հարսներեն,
Սիրուն աղջրկներեն:
Հարսը մաճկալին,
Աղջիկն հոտաղին հարկաւոր է,
Քեֆ էրո՛, հոտաղ հո՛ւ:
Կերանք լիացանք,
Աստված՝ զոհացանք,
Օրհնյալ է աստված,
Հիշենք սրբանանք,
Հոռովել հո՛ւ:
Ա՛յ, նաղարե, նաղարե,
Զբշոզս զաղար է,
Քշող հոտղին խավիծ, թան,
Զբշողին անժուր թան,
Հոռովել հո՛ւ...

Արևը գնա՛ց,
Միջունքը մնաց,
Զորանաս, հոտա՛ղ, զորանաս,
Շոգը շալույ է,
Շեկ գոմեշը,
Ակոսը մալու է,
Զորանաս, հոտա՛ղ, զորանաս:
Շեկ գոմեշը նազ կէնե,
Գութանը փարփաղ կէնե,
Քեֆ սիրող սե հարսները
Քանի քրֆես՝ հազ կէնե,
Զորանաս, հոտա՛ղ, զորանաս:
Թնկիր մուխ է,
Աշվին թուխ է,
Հոտաղ հո՛ւ...

Վարինք վարելով,
Սե ակոսներ շարելով,
Հոռովել հո՛ւ...
Հովեց՝ հովն էր անուշ,
Կարմիր թուշ՝ պագն էր անուշ,
Հոռովել հո՛ւ...
Եղներ, եզներ, կարմիր եզներ,
Մուլիկ գոմեշ ուր գին գուզեր,
Գութնի բուղեն կոխվ գուզեր,
Հոռովել հո՛ւ...
Հաց կերանք կըշտացանք,
Մալը նստավ դինճացավ,
Մուսլիկն առավ զորացավ,
Հոռովել հո՛ւ...
Վարենք, վարենք վար էնենք,
Գյուշմնի սրտին դարտ էնենք,
Հոռովել հո՛ւ...

Աղջիկները ծալած պոխլա,
Հարսները պաղ ու պախճա,
Պառվները հոտած խոճա:

Արի՛, պառավ, քեզի գովեմ,
Ջախջեն էլած դև գլմանիս,
Բաղնեց հրեշտակ գլմանիս,
Մատանի սրպանք գլմանիս:

Արի՛, պառավ, քեզի գովեմ,
Դժոխքի քյութուկ գլմանիս,
Վրատ-գլոխտ քրքրեր է,
Թեպուր փոխած հավ գլմանիս:

Գլոխրտ կապեր ես փուլի,
Դու եղեր ես համամ ղուլի,
Ինքտ տուռնա, քիթտ զուռնա,
Աղվներտ բաղնոց ղուռնա:

էրեսիտ միսն է գնացի,
Մե օսկոնիտ է մնացի,
Բերնիդ առկա չէ մնացի,
Դուն լողողած կավ գլմանիս:

Նստեր ես՝ շահրա կմանես,
Հաստ ու բարակ թել կը հանես,
Խոլթթես՝ հարս կը սպանես,
Գրող ու մահ՝ ցավ պառավ ես:

Նստիս կը պատերուն հովը,
Միջեցետ հասնես կը գովը,
Ախ մեմ՝ ընկէիս խորունկ ծովը,
Մենք օր տեսնինք, ա՛յ դու պառավ:

Հին անկճով թեզ կը լսես,
Մատվնիտ իրար կը քսես,
Սուտ ու դորդ մանչերուտ կը քսես,
Մեծել կուտասս, ա՛յ դու պառավ:

Ամեն օր հարսնուն հետ կովիս,
Խալին գոմշի պես կը կովիս,

Վառված կրակի մեջ էրվիս,
Դուն շորացած, ա՛յ դու պառավ:
Փետատ բերեք, մանչեր, փորենք,
Պառվներուն զլոխը հորենք:

Անուշավան,
Յաղլի յավան,
Մանչերն էկան,
Կնիկտ տարան:

Ա՛յ, պալա Գարան,
Զուռնով քեզ էկան,
Գավուլով տարան
Քեզ, Գարան ջան:

Աղջի, անունդ էր Գարան,
Քեզ տեսնող մանչերն մարան,
Ափսոս, Լկան քեզի տարան,
Սապապն էղավ մերոնց Սոնան:

Ա՛յ, պալա Սվա,
Աչքերտ սե ա,
Դեռտ կերեա,
Գլուլ Սվա ջան:

Աղջի, անունդ էր Յաղութ,
Շաքար կուտեիր տղութ:

Ա՛յ, պալա Թագուն,
Նստեր ես սաքուն,
Աչտ է մանչերուն,
Գլուլ Թագուն ջան:

Ա՛յ, պալա Թանքա,
Նստեր ես սանքա,
Չեռքտ շուշան կա,
Գլուլ Թանքա ջան:

Կիրակոս աղա,
Զին տակտ խաղա,
Կնիկտ սիրուն,
Դուն մասխարա:

Պալա Հայկանուշ,
Դուն բատամ ու նուշ,
Անուշ ու քնքուշ,
Գյուլ Հայկանուշ:

Ա՛յ պալա Հեղնար,
Շատ կերար՝ զեղնար,
Ինծանից լեղվար,
Գյուլ Հեղնար ջան:

Հեղնարը զնաց ջուրը,
Տասվերկու խուրման բուրը,
Թապլեց Հովակին դուրը,
Ընկավ Յուզաբին բուրը:

Ա՛յ պալա Մաքիտ,
Խրխատ է հաքիտ,
Կարոտ եմ պաքիտ,
Գյուլ Մաքիտ ջան:

Հնտի մնտի լավ թելինկո,
Ճոռաֆրտել լավ թելինկո,
Արաճի Մուրատ, մուրսի վրատ,
Կարգվեցար՝ ո՛ւր է հինատ,
Գերեզմնի քարը վրատ:

Աղջի, անունտ էր Նուրին,
Յուզաբը գլմանի Հոյին,
Զեզի կը հանե հոյհոյին,
Դու մեռնիս Շողոյի պոյին:

Ա՛յ պալա Շողեր,
Անկճվիտ օղեր,

Ինծի ես թաղեր,
Գյուլ Շողեր ջան:

Ա՛յ պալա Շողեր,
Կառնեմ քեզ օղեր,
Կանչեմ կը տաղեր,
Գյուլ Շողեր ջան:

Աղջի, անունդ է Շողան,
Քեզ տեսնող մանչերն դողան,
Ղմեքը ձեռնեստ կըսողան,
Աչքերդ սե, ունկվիտ թուխան:

Աղջի, անունտ էր Շուշան,
Օսկե մատնիս տամ նշան,
Արի, էրթանք Սուրբ Նշան:
Ինծի շենես փերուշան:

Աղջի, անունդ էր Շուշան,
Շապիթ՝ մ ունիս խշխշան,
Հինգ հալապի վեց նշան,
Արի էրթանք Սուրբ Նշան:

Ա՛յ պալա Սառա,
Քեզ գերի դառա,
Ինչաղ օր շառա,
Գյուլ Սառա ջան:

Աղջի, անունտ էր Սլանամ,
Պագձ տու պասս բանամ:

Ա՛յ պալա Տիրուն,
Լուսնյակ գիշերուն,
Մե պաշ տու թաքուն,
Գյուլ Տիրուն ջան:

Պալա Փառանձեմ,
Քեզ Օսկի կանչեմ,

Սիրտս կը մաշեմ,
Գլուլ Փառանձեմ:
Արի մեզի, մեռնիմ քեզի,
Պաղատածն թասըմ գինի:

Ղութնի զուպուր (հագուստ) մանդու քար,
Եկե սիրե՛ գողցի տար:

Կարմիր մզարով աղջիկ,
Գինդ է հագարով աղջիկ,
Կարմիր մտար զրմզի, դարկզի նշանածիս,
Պատճիս չըմ առնի քեզի:

Ստամբուլ՝ ստակը բու,
Արզրում՝ վաստակը բու,
Գլումբրվա անցածն է բու,
Ախլցու դեղնածն է բու,
Ախալքալաք՝ շարխուֆալակ,
Միշի մարդը հյուրի մալակ
Ոչ ժամ գիտեն, ոչ պատարագ,
Կուտեն խմեն կերթան տավար,
Հագնին կապեն՝ կըլան թավար:

Ցուանկները թուրքի մատեն,
Միշտ անդանակ մսեր կուտեն,
Մտերը ծուռ՝ բոռ բուրի ևուտ են,
Ալի իրենց միշտ կգովեն:
Ցուանկները անհամ բան են,
Տեսնողներն ա միշտ կը ցանեն,
Ոչ մածուն են, ոչ ալ թան են:
Ես շիտեմ թը ինչդ բան են,
Պատվելին միշտ քթին տալեն,
Քարոզ կուտա մոմալեն,
Իշի լման զրոզբուլեն,

Ալի կըսեն. «Մենք շատ լավ ենք»:
Հոտած ֆուանկներուն պուսը,
Քոռանա աչքերուն լուսը,
Պասլի վրա դրած հուսը,
Ալի կըսեն. «Մենք շատ լավ ենք»:
Ցուանկին տեկած գել ծառը,
Վրան փլավ բանձր յառը,
Պատվելուն մըթմոթած ճառը,
Ալի կըսեն. «Մենք շատ լավ ենք»:
Ցուանկներուն նեղ տները,
Պուլը կտրած՝ առ շները,
Ալի կըսեն. «Մենք շատ լավ ենք»:
Ցուանկները նրանց կը գովեն,
Մուտառ ջրով կազմած ծով են,
Ոչ բուղա են, ոչ ա կով են,
Ալի կըսեն. «Մենք շատ լավ ենք»:
Հաստ պոռնկ են ֆուանկները,
Խառնված են բուանկները,
Անիծեր է ատոնց տերը,
Ալի կըսեն. «Մենք շատ լավ ենք»:
Ցուանկները ուղուզ էլ են,
Կրոնամուլ ֆենե գել են,
Ոչ դաթր են, ոչ ա էջ են,
Ալի կըսեն. «Մենք շատ լավ ենք»:
Թղթի պատկեր ժամեն կախ է,
Բրինձ փլաֆն ուտելը հախ է,
Տերտերը կըսե դուռը ախ է,
Ալի կըսեն. «Մենք շատ լավ ենք»:

Ցուանկները ելան յազին,
Տապկեցին բորոտ թազին.
Ցուանկների տոտի տուլման,
Քոռ Մարկոսին դուռը շորնան,
Ցուանկներին վերի օտան,
Մկները մեջը կորոտան,
Ես ա՛ գիտեմ քարոզ կուտան,
Մեկզմեկու նեմնեմ կուտան:

ԿՐՈՆԱԿԱՆ

Նդիա մարգարեի արցունքը

Ժամանկոց՝ կոապաշաները բռնեն նդիա մարգարեին լավ՝ ծեծեն կը ու կրսեն կը, թե. «Ըսա մեզի՛ իմ աստվածս չկա»:

Նդիան ծեծը կուտե, կուլա կը ու հեշ օրալի շի ըլլի ատպես բան ըսելու: Մեմ՝ ա տեսնես՝ Քրիստոս կուգա կրսե կը նդիային.

«Քու արցունքտ ջավահիր ըլլի,

Նրկրաց երկիր ծավալի»:

Իշտե ատ ջավահիրն օր հիմի կա, նդիայի արցունքներն են:

Նդիան դաճաֆչի

Նդիա մարգարեն վախթով դաճաֆչի էր, առաջը մոխիր էր ցանե, գալող մյուշտարին ոտքը կոխեր կը մոխրին մեջը, կերթար, օր նդիան ետև անոր աշե իրեն հմար օտըման կարե: Նդիան անքան բարեպաշտ էր, օր օղլուշաղին օտացը բիւա շէր աշե: Մն օրմ՝ շարը կնկա դաբալով բորչիկ օտվիքը հլուն շարած գուգա նդիային օտըման կարել տալու: Անքան կը լակվոթի, ասթին անթին գըլնի, օր նդիան գուգա վերցընե կաշե ատոր ձերմակ թաթուլիկ ոտներուն: Չարը կերթա օրա՝ նդիան նոր գըլա կը, գարկե կը հերոնը աշքը, երկու լուսն կը հանե, բունե կը նդիսե աշկերտին ձեռքեն գելլե քաղքեն դուս: Մեմ՝ ա բիրդան բիրա էրկինքը կըբացվի ու հրեղեն կառքմ գելնի: Նդիան նստի, համբառնա կը երկինք:

Քրիստոսը պոյանու աշկերտ

Քրիստոսը պոյանու ըով աշկերտ կը մտնի, ուստան դաստմ թել կուտա կոր ոանգ ոանգ ներկե: Ասիկ վերցնե կը ու քիտտուն մե կարասմ լըլե կը: Ուստան որ տեսնի կը՝ կառնե փատմ գըլնի ետևը: Քրիստոս փախչի կը, ասիկ փատը հետևեն ցկե կը, օսահաթ փատը ընկած տեղը ծառ կը կտոր: Ուստան գուգա հանե կը թելը, կաշե օր ամենքը մե ոանգմ ներկըվեր է, գարմանա մնա կը:

Վախտովը, մե ըռանջպարմ իշտեք իրիկունմ ցորեն բարձած սելը քշե կը էկե գեղ: Գեղին օր մոտենա կը՝ դանկերուն ձենը առնելուն պես կայնեցնե կը սելը, գոմշեստանն ա շի քակե, վազդե կը ժամ: Սապախտան մութ ու մութ կելլե կուգա կոր սելը քշե տուն, տեսնի կոր բիտտուն ցորենը արծաթ է կտոե, հատիկները ջավահիր են դառե: Գոմշեստանն ա քակվեր ըովը կայնեք արծեն կը:

Սողոմոն իմաստունն ու քոս քուֆը

Սողոմոն իմաստունին կնիկը սուա հիվանդ գլլի, հեքիմին սիրե կը: Իրեն մարթուն յախան ա կպչի կը, թը հավքերու օսկոտներեն ինծի մե զոնախանամ պիտի շինես, թեպուլներեն ա՛ յորդան-գոշակմ՝ սարքես:

Սողոմոն իմաստունը կանչե կը հավքերուն, մորթե կը ու օսկոտանքն ու թեպուլները թոփ կենե, օր կնկանը ուզածը հազըրե: Աշխարք ինչքան հավք կա՝ գուգա կը, սալթ քոս բուֆը շի պա: Սողոմոնը անդա գմբութին (արծիվ) դրկե կոր գտնի բերե: Անդա գմբութը ազմ ման գուգա, անճաղ-անճաղ գտնի կը բնիմ մեջ, ինչքան կանչե, ճվա կը՝ շի դուս գա, աճ կուտա՝ շի ըլլի, խոստում կենե՝ շի ըլլի: Խյուլասա բնին առաջը կայնի սիրուն քարոզմ խոսի կը, ասիկ գելլե դուս, ասիք անտեր քարոզը քար կը ծակե: Բուֆն օր դուս գելլե, ասիկ քարոզը ծալե՝ գըրկե կուտանի կը Սողոմոն իմաստունին:

Սողոմոն իմաստունը հերստտի կը, թը՝ կանչեի կը, ինչի՞ շէր գա: Բուբբուն կըսե կը. «Չոթք ցկեի կը՝ թը աշխրբիս մեջ տղամարդն է շատ, թե կնիկմարդը, անտի ուշացա»:

— Է՛,— կըսե Սողոմոն իմաստունը,— իմացա՞ր վերն է շատ:

Թը՝ կնիկ մարդը շատ է:

— Ինչը,— կըսե Սողոմոն իմաստունը,— տղամարդը շատ պիտի ըլլի:

— Չորթ է,— կըսե բուբբուն,— հըմը ես կնկանը խոսքին անկաճ Լնողին ա կնիկմարդ ցկի. կնիկմարդ չէ՞՞ անիկ, օր կնկանը ձեռքը խաղալիք է դառե, կնիկը միտորին տակը յուխա լցեր սուա հիվանդ է ձեացե ու հեքիմին սիրե կը, մարդուն ա շարչըրելու հըմար հավքերուն օսկոտանքեն զոնախանա գուգա: Ի՞նչքան հավք պիտի գտնես շարդես օր, անոնց օսկոտանքեն զոնախանա կայնեցընես:

— Խելացի ըսաց,— կըսե Սողոմոն իմաստունը ինքն իրեն,— ես

Նոյ նահապետի աղջկները

Նոյ նահապետն օր տապանը պիտի շիներ, կանչեց ուստի մեկիմ ուրոսց թը՝ արի տապանս շինե, աղջիկս քեզի տամ: Ասիկ էկավ՝ օր-գիշեր սկսավ դատել:

Նոյ նահապետը տեսավ, օր բանը շատ յավաշ կէրթա, կանչեց ուրիշ էրկու դյուրկրի ա ու ըսաց թը՝ էկեք իմ ստապանս շինեցեք, աղջիկներս կուտամ ձեզի: Նոյ նահապետը ալայը մե աղջիկմ ուներ, հիմի իրեք մարդու խոստացավ, շյունքի վան կեներ թը՝ շրհեղեղին իրեքն ա խեղտին կը: էղավ օր առ ուստեքը տապանին գլոխը իրենց հըմար ա տեղ շինեցին ու ապատան: Աղասան օրա՝ էկան Նոյ նահապետին քովը՝ աղջկները ուղեցին: Նոյը մոլըրավ մնաց, ունիր շունիր մե աղջիկմ ունիր՝ իրեք հոգու խոստըցեք էր, հիմի շիտեք վերին տար:

Մոլըրած օր պտըտիր կը՝ բիրտան տեսավ օր իրեն սփան ու շունը աղջիկ դառան, ի՛սկ աղջկանը պես: Վերուց ամեն մեկը մեկին տվեց: Վախթմ անցավ՝ մե օրմ էլավ գնաց իրեն աղջիկներուն տես: Գնաց մեկին քովը, հարցուց մարթուն թը՝ ի՞նչը է աղջիկս: Մարթը ըսաց. «է՛վ՛վ է, հըմը մե բանն է գեշ, ինչ օր խոսիմ կը՝ իշու պես կողը դեմ կուտա (չի լսե)»: Նոյը հասկըցավ, օր ասիկ էշն է: Գնաց մեկալին, անոր մարթն ա գանգտավ թը՝ շատ է, հըմը ինչ օր կըսեմ՝ շան պես շամշյուրմիշ կենե (կը հակառակի)»: Նոյը հասկըցավ, օր ասիկա շունն է: Գնաց մեկալին քովը՝ մարթը ոտքեն գլոխ շնորհակալ էղավ: Այդ իրեքին ջինս ա բաղմայան, հըմը սփինն ու շանը դհա շատացան: Հիմի շիտեմ՝ կարգվիմ, թե ալապ մնամ, կարգվիմ՝ վայ թե իշու յա շան ջնսեն ոսստ գա:

Փերակ

Հոբենալին (Հոր երանելին) շատ հարուստ մարդ էր, օխթը տղա, աշխրքի դյովլաթն ունիր: Ասաված ուղեց, օր ատոր հավատը փորձե, ատոր հմար դյովլաթը, տղաքը ձեռքեն խլեց, իրան ա հիվնդուց: Ատիկ անպես հիվնդցավ օր՝ օրթունքը էլավ, ջանը կհրավ: Առ վախթը ատիկ մեկ-մեկ կառներ օրթունքն ու դներ կը յարոցը վրան՝ կերե՛ք, կըսեր, կերե՛ք: Ասաված աս փուճ մարմինս ձեզի հմար է ստեղծե: Առ օրթունք-

ա կնիկմարդ եմ, օր կնկանս խոսքովը աշխրքի հավքերուն արունքը մտա:

Արթը բխտուն հավքերուն բաց թողնե կը, օրը իրեք դուշա բուրբուին կապե կը: Տեյմ՝ օր հիմի ա՝ օրը իրեք դուշ իրենք-իրենք դուզան բուբբուին առաջը կայնին կը: Բուբբուն էրկուսը կուտե, մեկը աստժու սիրուն աղատե կը:

Վայլան հավ

Ջրհեղեղեն էտն ասաված հրամայեց, օր հավքերը փոսեր փորեն, ջրերը անտեղանք լցվին: Բխտուն հավքերը թափան փոսեր փորեցին, սալթ վայլան հավքը շեկավ շաշխատավ, ըսաց. «Ինչո՞ւն է պետք ջուրն, օր Վարդևորի շոքին փոս փորեմ: Ասաված հրամայեց, օր իրեք ամիս ատ հավքը ջուր լիմե:

Տեյմ՝ օր հիմի ա՝ Վարդևորի ամսեն տե դոշի ամիսը ատ վայլան հավքը հեշ ջուր չի խմե, շայի վրա օր գիշի, շայը արուն-թարաի կուտի կը, սալթ քարերի մեշ մնացած անձրեի ջրեն խմե կու գելլե երկվերի երեսը, վա՛-վա՛՛ էնելով պաշտի կը:

Լեկեռն ձուկ

Օվկիանու մեշ ձուկմ կա՝ անունը Լեկեռն է: Առ ձուկը անքան էրկան է, օր ինքն իրեն պոշը չի ճանչե, գիտե թը ուրիշինն է, միշտ կենե թը բռնե: Ատոր գլոքսն ա գառ վարաղ է, եփօր կենե թը պոշը բռնե՝ գլոքսը դառնա կը գեպի էրկինք, փայլխտե կը: Սփօր ատիկ պոշը բռնե, աշխարհս վար պիտի անցնի: Աս ձուկը դաֆատ դոճա սարին բոլրտիրը պաշտի կը: Վեց ամիսը ծումմ՝ մե պտուտմ կենե:

Սփօր պաշտի պրծնի կը, անոթնա կը, բանա կը բերանն ու աղմ ջուր կու կուտա, ետե դունշը դնե կը սարին, ջուրը թապլե կը սարի գլոխը: Թապլե կը սարի գլոխը թը չը՝ սարի գլխեն սելաֆմ պրծնի, ծառ, քար, գալ, արշ, սալան, ինչ օր ոսստ գուգա՝ քշե բերե ատ ձկան բերանը լըլե կը: Ձուկը ուտելուն կուտե, մնացածը առկները խփե ու ֆնշալեն դում ֆշե կը: Սամի քամին ի՞նչ է, օր Մեռած ծովի դրաղեն փշե կը, ըշտը ատ ձկան շունչն է:

Թյուրյուն

Տերն մեր Քրիստոս սաղ աշխարհքն օր ման էկավ, բխտուն խոտերը գլոխ իջեցրին անոր, սալթ թյուրյունը գլոխ լիցուց: Քրիստոս ա անոր անիծեց ու ըսաց, թը՝ վե՛վ օր իմ հոտիցս է՝ քեզի քաշե:

Վախժովմ՝ երեք ընկեր գըյնին համփա, օր էրթան զարիպ էրկիր՝ փարա վաստկեն: Կէրթան, կէրթան, մեմ համփա մե ֆորմ՝ ոսստ գուգա, կաշեն օր մեջը լիբը անուշ մեդր է: Մես լավ բարտերս բերեց. աստից ա խերով բան,— կըսեն,— արեք էրթանք ձի, թուլուխ բերենք մեդրը կոնքը քաղաք, ծախենք»: Կէրթան էրկու ձի, քանիմ՝ հատ ա թուլուխ կանեն զուգան կը: Ատոնցեն պղտիկը մտնի կը ֆորը, թուլուխները լեն կը, մեկալ էրկուսն ա ձիանքը բանած, տանին քաղաք ծախեն կը: Ատոնք օրը էրկու ժամ զտոնան կը. աշխարքին մեդրը տանին ծախեն, էրկու ձիաբեռ փարա թուփ կէնեն կը: Մեդրի վերջն օր աննելով գըլլին՝ աս էրկու ընկերները մյուշափարա կէնեն կը թը՝ աս լզորն ի՞նչ է, օր մեզի բարարար փաշ տանը, արի ատոր թողնենք ֆորի մեջն ու աս մե ձիաբեռը ես աննեմ, մեկալը դուն: Եփ օր մեդրը պարպի կը, ասոնք ֆորի միջի ընկերոջը կըսեն կը թը՝ պոխ շարեն սես, մենք քեզի նա փաշ կուտանք, նա ֆորեն հանենք կը: Աս տղան գուլա, աղաշ կը թը՝ ինձի ֆորեն հանեցեք, ձեր փաշը ձեզի ըլլի, պետքը չէ, հըմը ընկերները օրալի շեն ըլլի, դոճա քարմ՝ գլորեն գնեն կը ֆորին բերանն ու ձիանքը քշեն կէրթան կը տուն, բաղրկանութեն կէնեն: Յորին մեջը մնացողի սեֆիլ ընտանին գիմանա, օր իրեն մարդուն արխատաշները էկիր են, պլլե կէրթա կը քոզերն ու իրեն մարդեն խապարմ՝ կը հարցնե: Անոնք ա կըսեն կը թը՝ հարամիք վրա թափան, մարդուտ սըպանեցին: Աս կնիկը շատ կուլա, էրերա կը, հըմը ի՞նչ պիտի էնե:

Հիմի խապարը ֆորին մեջը մնացողին տանք: Աս մարդը ֆորին մեջը օրմ էրկուս մնա կը, մեմ՝ ա մե գուտմ՝ կը նշմարե, բանա նե կը մտնի: Նե կը մտնի, ամըթծելով մե ուրիշ դուտմ ա դտնի կը աս ու բանա նե մտնի կը, կաշե օր մե լուսմ՝ կերիա, կէրթա ատ դուտն ա օր բանա կը՝ տեսնի կօր ի՞նչ տեսնի, մե շալիբ շիման սեղմ օձերը վժըրտան կը: Մե հալևորմ ա կեսը օձ, կեսը մարդ, ատոնց մեջը նստեր է: Ասիկ ատոնց տեսնի կօրա՝ զարդնտի կը, հալևորը կըսե կը թը. «Մի վախենա. ատաշ արի, ինձեն քեզի վնաս չի հասնի»: Տղան չի կրնա տեղեն շարժի: Ատաշ արի՛,— կըսե ատ հալևորը,— օր միսե օձերուն թագավորն Շահմար օձն է էղած էղե: Ատաշ արի, օձերուն գլխեկը կոխե արի, բան չեն էնե քեզի»: Տղան սիրտ կէնե՝ քիշմ ատաշ կէրթա՝ հալևորը ձեռքեն քաշե՝ քովը նստեցնե կը: Հիմի ինչը օր քու հրամանըդ ինձեն խապար չե՞ս առնե մեր բաներեն՝ անպես ա ատ հալևորը ատորեն խապար կանեն կը, թը իրենց աշխարքը ինչ գըլլի, շիլի: Օխթը տարի ատ տղան ատ հալևորին քովը մնա կը: Ատոր սիրտն օր ինչ ուզե՝ օձերուն կըսե՝ կէրթան օսահաթ

բերեն կը: Օխտը տարին օր թըմըմի կը՝ աս տղան յալվար գըյնի թագավորին թը՝ ինձի լուս աշխար հանե: «Հանեմ հըմը, կըսե թագավորը, ընձեն քեզի վնաս չըհասավ՝ վայ թե քեզնեն ընձի վնաս հասնի»:

— Չէ՛,— կըսե կը տղան,— հեշ ատպես մտքի մի էրթա, աղաթ չէ օր քեզի մե վնամ՝ հասնի ինձեն:

«Լավ,— կըսե կը թագավորը,— քեզի լուս աշխարք հանեմ կը, հըմը իմ հուտաթա աս ըլլի՛ նա զայֆախանա մտնիս, նա բաղնիք էրթաս: Տղան խոսք կուտա կը: Թագավորը կանչե կը մե աժդարե օձմ՝ ու կըսե կը թը՝ ասոր լուս աշխարք պիտի հանես, թակար սաղասալամաթ չհանեցիր՝ քեզի լիմա լիմա կտրտեմ կը: Տղան գելլե նստի կը օձի վրան, օձը հավալամիշ գլլի, մեջը կուտա ֆորի բերնի քարին, օր ետ շըջե՝ տղան գլորի կը վար, օձը օսհաթ պոշը փաթթե կը տղի մեջըն ու թապլե կը ֆորեն գուտ: Տղան գելլե գուտ՝ էստին էնթին կաշե, գալած համփան գտնի, բունե կէրթա: Կէրթա՝ համփեն մարդիկ ոսստ գուգան կը, կաշեն ատոր, զարմանան մնան կը. ատիկ ատանց հալավ, մազերը բղղկած, ըտանգը սկ էր:

Մտտենան հարցնեն կը, թը՝ վու է, վու է, կըսե՝ հեշ, խեղճ մարդմ՝ եմ, հարամիքը թագիան սոյմիշ էրին (կողոպտել) ինձի: Ատոնք մեխքընան, հալավ, հաց կուտան կը: Ատիկ կէրթա քաղաք, աստին անթին ման գուգա, մեմա իրեն արխատաշներեն մեքանիսը ոսստ գուգան կը:

— Մո, դու մեռած պիտի ըլլեիր, աս ինչը ֆոս,— կըսեն: Ասիկ քանիմ սուտ մոզոնե՝ ատոնց խափե կը: Աս ընկերները ուրախութենենբերեն ասոր քաշքշեն տանին դայֆան շաշկամ էրկուս դայֆան խմցնեն կը, կտե ա կանեն օր բաղնիք տանեն, լողացընեն: Ասիկ շատ յալվար գըյնի (կաղաշե), որ իրեն բաղնիք շտանին, շի ըլլի, քաշեն, դոտով նես ցկեն կը:

Աս տղան օր հանվի կը, համամշին ատոր կոնկի վրա մե նշանմ անանի կը, գուգա ատոր յախեցին բունե կը թը՝ դուն օձերուն թագավորին տեղը գիտես, յա ինձի տանիս պտի քովը, յա գլոխտ զարնել կուտամ, շյունքի օր ես թագավոր եմ ու աս քաստուն տարի է աստեղ համամշյութեն կանեմ, քեզի գտնելու համար: Տղան երթմնա, կրակը գըյնի թը՝ ես տա՝ օձեն խապար չեմ, հըմը թագավորի ձեռքեն շի խըլըսի: Կաշե օր շարա շկա, գլոխը պիտի զարնեն, հոգու կսկծուն ատաշ գըյնի, կէրթա հորի գլոխը կը կայնի: Թագավորը հանե կը գիրքը կարդա կը, կարթա կարթա, մեմ՝ ա օձը ֆշշալին դուս գելլի, տեսնի կ՛օր տղան բերնկավար ընկած գուլա կը, կըսե. «Գու ինձի գեշութեն էրիր, ըմը ես քեզի ալի լավութեն կէնեմ, մեջտեղի ստաքանը լիմես»: Թագավորը օձը բունե իրեք

կտոր կէնս, լըն կը իրեք ստաքանի մեշ, փրփրի կը: Թաքալոր հըսի կը թը՝ արի խմե: Տղան դաքութենովմ ստաքանները փոխե կը, դրադինը մեշտեղը գնե կը: Ետն մեշտեղինը վերցնե խմե կը: Թաքալորն ա դրադինը խմե կը, տեղն ու տեղը հոգին կուտա շորնա կը: Տղան գեյլե գուգա կը տուն: Ճամփան կաշե օր բխտուն ծառները, խոտերը խոտին կը ու կըսեն թը իրենք ինչ ցավի դեղ են: Արթը ատիկ գլի լոխմանի հեքիմ:

Լոխմանու աշկերտներ

Լոխմանին երկու աշկերտ ուներ, մեկի անունն էր Ֆայլատի, մեկալինը՝ Ալֆատին: Ատոնց մե բանմ շէր սորվցնե, հըմը ատոնք շատ սատանա էին, մե պղտի ծակմ՝ էին էրե, ու անտից կաշեին, թը ինչը դեղ կենե հիվընդներուն:

Մե օրմ ա մե հիվանդմ բերեն կը. Լոխմանին ասոր գլխուն խուփը վերցնե կաշե օր մե գյանա ճիճում կպեր է ուղեղին: Լոխմանին մուլըրի կը թը ինչը վերցնե ճիճուն, թե քաշե հտնե, ան ա ուղեղը կը քաշե՝ մարդը մեռնի կը: Աշկերտներն օր ծակեն կաշեն ալ շեն համբերե, ճվան կը թը՝ ճաղմ տաքցու մեշքին դի, ճանկերը բանա կը, ու իրենք թողնեն փախչին կը: Մեկը կերթա Պրանգստան, մեկալը՝ Ինկիլը: Ըշտը ասոր հմար է օր հիմի ատ էրկու կլիկը ատպես խելացի են:

Լոխմանու մանր

Լոխմանին այրվ ծերացեր էր, գիտեր օր թեղմ պիտի մեռնի, գնաց սարերն ընկավ, ծաղիկներ, խոտեր քաղեց բերեց դեղ շինեց, տվեց իրեն աշկերտին ու ըսաց թը՝ եփ օր ես հոգու հետ գլիմ, լից բերանս, օր գյանճընամ: Էղավ օր Լոխմանին հիվընդցավ, գողինք ընկավ: Աշկերտը քովը կայներ էր՝ դեղը ձեռքը: Եփ օր Լոխմանին հոգու հետ էղավ՝ աշկերտը էրավ թը դեղը բերանը լին՝ սատանան դարկեց ձեռքին՝ թափեց դեղը: Աշկերտը շատ կսկծաց, հըմը ի՞նչ էնե, տատան բան շէր խրատ տվե, օր ինքը նորեն շինեք, ուստին սաղցներ: Տեյ մ'օր հիմա ա Լոխմանին նա սաղ է, նա մեռած. պտուկած ճվա կը՝ «լից գա, լից գա»:

Պ Ա Տ Մ Ա Ն Ա Ն

Պապ և մեծն Ներսես

Հայոց Պապ թագավորը մե մանչն սիրե կը եղե. Ներսես կաթողիկոսին կըսե կը թը՝ արի, ինձի աս տղին հետ պսակե: Ներսեսն ա անխժե կը

ու կըսե կը թը՝ բու էլիկդ օսմանցոց ձեռքը եթմիշ օխթը տարի գերի մնա, բու մարմինտ ա հողը շընդունե, տեյ մ'օր վերջին դատաստանը, եփ իրար հետ էրթանք դատաստան: Ատոր հմար ա Պապի մարմինը հեյ չի հանգստի գերեղմանի մեջ:

Անցած վախթերը մեկմ՝ Երուսաղեմ կէրթա հաճի գլի: Ետ օր դառնա կը, Քամաղ քաղաքը դիմանա օր Սալանինը ջամու մեջ մե կուպիմ է զրած: Կըսե՝ հըլը էրթամ տեսնեմ ատ ո՞ւմ ճանդակն է: Կէրթա ջամին, իրեն թուրք ցուց կուտա, տասը դուռուշ կուտա օր իրեն ցըցընեն: Հայուր տարեկան մե էխայարմ ասոր զոդուոց կառնե տանի կը կուպու րովը. կաշե շորցած օսկոտանքը ցցված մարդմ պառկած է կուպու մեջ, հարցնե կը՝ աս վեմ պիտի ըլլի, ատ էխայարը կըսե թը՝ դոյին փաթիլաճի, յա աքսի քիմսալարդան տըր (ոչխրի թագավորը կամ հին մարդկանցից մինն է): Ըշտը ատիկ Պապն է, դատաստանի օրը պիտի վեր ելլե, ներսեսի հետ էրթա դատաստան¹⁸:

Պապի անխժվիլը

Հայոց Պապ թագավորը մե տղամ սիրե կէղե, մե օրմ՝ ասոր աղջկա շոր հագցնե տանի կը մե վանքմ հետը պսակվի կը: Ներսես կաթողիկոսն օր գիմանա, կըսե կը վանքին թը՝ «Հըլը տերտերը մարթ էր, չի՛ մացալ պսակեց, դու ինչի՞ չիմացար, տակն ու վրա ըլլիս»:

Ան սըհաթին վանքը տակ ու վրա գըլլի ու տեյ մ'օր հիմի ա ատպես մնա կը: Պապին ա անխժե կը սե թագի գառնա կը, տեյ մ'օր հիմի ա անիկ շո՛՛՛ թուրքերը ասպտեն կենեն կը:

Կար-բար

Վախթովմ Մուրճախեթու գյուղը լաղերը ընկնին կը հարսիմ էտեմին օր բռնեն: Աս հարսը կաշե օր շարա շկա ատ շնեռուն ձեռքեն խլըսելու, խնդուե կը աստծմեն, օր իրեն քար դարձնե ու ազատե ատ

¹⁸ Են էր Թագավորն Պապ ի պղծութեան թաւալեայ, երբեմն այլոց էդ եղեալ տայր գիերն ի խառնակութիւն. եւ երբեմն զայլս էդ արարեալ, զարուսն խառնակեալ պղծեր... Այլ սուրբն Ներսէս եպիսկոպոսոսպետն Հայոց հանապազօր ընդգիմացեալ թագաւորին Պապայ, կշտամբէր եւ հանդիմանէր մեծաւ վկայութեամբ հանդիմանութեամբ ե վասն շարեաց նորա բողոքոց ոչ համարձակէր նմա զսեմա եկեղեցոցն կոխել եւ ոչ մտանել նմա ի ներքս... Գնէր ատաղի նորա վկայութիւնս ի գրոց, ա՛՛ արկանելով յավիտենական դատաստանացն պատժովք՝ զայ ի զգաստութիւն եւ ի լաւաւալ... (Փաւստոս Բյուզանդ, Պատմութիւն Հայոց, Վենետիկ, 1832, դպրություն Ե, ԳԷ. ԻԲ և ԻԳ):

կենը, ես թեզ հասած ըլլելի, ցորեն հացըն ա պաս կէնեի: Խեղճ գեղացիք օր գարի հացով տել իրիկուն դատին, արուն քրտինք մտնին կը, քաղքցիք պաս օրը բնշի պտի ցորեն հաց ուտեն»:

Հակոբ պատրիարք

Սուլթան Մահմուտի վախժանը թուրքերը հայերին շատ նեղութիւն կուտային. խեղճերը օր ու արև շունեին: Մե օրմ սուլթան Մահմուտը կանչել Հակոբ պատրիարքին կրսե կը թը՝ մեղք է, քու էլլիկա հերիք է նեղութեն քաշե, արի ձեռք քաշե, թը ձեռ սուտ հավատը թողնեք մեր ճշմարիտ հավտին դառնաք կը, ես ֆարման կուտամ քու էլլիկիտ մազին ա չդիպչին: Հակոբ պատրիարքն ա կրսե կը, թը՝ իմ էլլիկա անպես էլլիկմ է, օր նեղութենն պրծնելու համար իսն լուս հավատը չի ուրանա: Հիմա օր գլուխս գարնես՝ ատպես թղթիմ տակ ձեռք չեմ քաշե: Խաթրով չեք դառնա՝ գոռով դարձնեմ կը, կրսե սուլթանը: Թուխտը քուկտ, իշխանութենը քուկտ, կրսե Հակոբ պատրիարքը, ի՞նչ կրնըմ քսե:

Մեկալ օրը Սուլթանը հրամայել կ'օր Արաքստանու մե քյահլան ձիմ թամբեն տանին ժամին դուռը մարն ատեն ու ճվան, թը սուլթանի հրամանն է, վեկ օր Մահմուտի դնին դառնա՝ աս ձին, ազմ խազնա ու փաշայութեն ստանա կը: Տանին կը ձին ժամին դուռը պըտըտընեն կը, գալող էրթցող գիմանա, կանցնի կէրթա. ժամվորն օր գելլե, ժամարար գհանան գելլե ժամեն դուս, տեսնի կը ձին՝ խելըք կէրթա. հըմը ֆարաշան մե կողմ ցկե կու վազզե հեծնի կը ձին: Օսահաթ ասոր ալլահ ալլահով, տասվերկու մուլլայով տանին կը թագավորին, սյունըթեն կը, փաշայութեն, ազամա խազանա կուտան կը:

Սուլթանը կանչել կը Հակոբ պատրիարքին ու կրսե կը թը. տես, մե էյրաթի բանովմ քու ժամարար գհանատ դառուցի, արի վախժան ստորագրութեն տու, վերջանա:

— Թագավոր ապուստ, կրսե Հակոբ պատրիարքը, ներե, մե խոսք քսեմ: Դորթ է, ժամարար գհանաս դառուցի, հըմը՝ ատիկ թուրքի տղա գըլլի:

Սուլթանի հերսը գելլե, կրսե գնացեք հարցուցեք ասոր մօրը, թը ատ տղան ո՞ւմեն է:

Կերթան գուզան օր ատոր մարը հինգ տարի առաջ վախժաներ է:

— Է՛, վնաս շունի, կրսե Հակոբ պատրիարքը, կաղաչեմ օր գահմատ քաշես գաս հետս, ես անոր հարցնեմ կը:

Սուլթանը հօժարի կը, Հակոբ պատրիարքը ղգեստավորի կը, կերթան գերեզմաները, ատոր մոր գերեզմանը գտնին կը: Հակոբ պատրիարք-

ըր ձեռքերը վերե բարձրցընե, աղոթե կ'ու կրսե. «Աստու անունով հրամայեմ կը քեզի, օր դուս էլլես ու քսես թը աս գհանա տղան հումե՞ն է»:

Մեմ ա բիրտան հինգ տարվա մեռածը գելլե դուս ու կրսե. «Մե նիշարեցեմ է էդե ատ տղաս, ու կենա կանցնի գետնի տակը»:

Սուլթանը աս օր տեսնի կը, շատ զարմանա կը, հըմը մուլաները կրսեն կը, թը՝ ատ հեզ գյուղպայաճութեն էր, ախար ատքան հրաշագործ է, կրկու շուն դրկեմ, թող ուրիշ բան դառցընե:

Սուլթանը հրամայել կը՝ մե սնդկիմ՝ մեջ էրկու լակոտ գնեն, դայիմ կողպեն, բերեն Հակոբ պատրիարքին: Հակոբ պատրիարքը խաշակնքե կ'ու կրսե՝ տարեք: Տանին կը. սուլթանը բանա կը, օր էրկու հատ կարմիր խնձոր, հավասի կառնե կուտե: Մուլլեքը կրսեն. «Տեսա՞ր, Հակոբ պատրիարքը քեզի շան լակոտ ուտեցուց»: «Լավ,— կրսե Սուլթանը,— գուրա էրեք, թող շան լակոտ էլլի կերածս»:

Թմբկաբերդի առումը

Թմբկաբերդի քրդերը պատմեցին ինձ, թե մի ժամանակ Թմբկաբերդում իշխում էր մի հայ իշխան: Պարսից թագավորն եկել, երկար պաշարել է այս բերդը, սակայն չէ կարողացել առնել: Իշխանի կինը սիրահարվել է պարսից շահի վրա և ծածուկ առել է նորա համությունը՝ յուր հետ ամուսնանալու, եթե ինքը սպանել յուր ամուսնուն և բերդը հանձնել շահին: Եվ իբր նա սպանել է ամուսնուն, հարբեցրել է զորքին և բերդի բանալիները ուղարկել շահին: Շահն այսպիսով տիրել է բերդին և հարցրել է մատնիչ իշխանուհուն. «Ես եմ գեղեցիկ, թե՞ ամուսինդ»: Եվ երբ սա պատասխանել է թե. «Ամուսինս գեղեցիկ էր», շահը հրամայել է կապել սորան ձիու ագիից և քաշ տալ մինչև մեռնելը, ասելով, թե. «Եթե ամուսինդ շահից գեղեցիկ էր՝ ինչո՞ւ սպանեցիր»:

Օհան Օձնեցի

Ումներն օր թագավորութեն ունեին, հայերին շատ նեղութեն կուտային եղե. վարանաթաղ տախտակը ծակեին, անցնեին կը մարդոց գլխն ու էրկու կողքը մեկ-մեկ մարդ նստած շարտուները պըտըտեին կ'եղե: Յորեն հացն ա հազար ու մեկ նեղութենով գտնին կ'եղե: Աս վախժանը Ստամպուլու մեջը մե օրը արի կնկանմ՝ էրկու տղան հիվանդ գլին, գուզան կէրերան, թը. «Մեզի կտորմ՝ ցորեն հաց տու՝ ուտենք»: Մարը, ձունը գլխուն, բան չի ունենա տունն օր տանի ծախի ցորեն հացի տա, կէրթա ուտում դրկյներեն կտորմ՝ ցորեն հաց գուզե, թը.

«Աստժու սիրուն, տղաքս հիվանդ են, բարքերը ցորեն հաց գոզեմ, հորե-
րուդ խերին կտորմ՝ տվեք տանիմ, բյալքիմ ուտեն, լավնանք»:

Հեշ մեկմ՝ ա չի տա, քաշե քաշկատե կը կնկանը. կտորմ՝ հացի հը-
մար գուզեն, օր հետը լակվըռթին: Ատ խեղճ կնիկը լայեն էրերալեն գել-
լե կէրթա Օհան Օձնեցուն բովը, ոտվիբը գըլնի, թը. «Տղաքս հիվանդ
պառկած՝ կտորմ՝ ցորեն հաց գուզեմ, չեն տա, գուզեն օր մե կտորմ՝ հա-
ցի հմար լակվըռթին հետս. դու դիտես, օտքըտ եմ ընկե, մեղք են տղա-
քըս»: Օհան Օձնեցին հարցնե կը փոքրավորին, թը՝ դուրապը հեշ հաց ու-
նի՞նք:

— Զէ՛,— կըսե փոքրավորը,— ինչ օր կար քիլմ՝ առաջ հանեցի կե-
րանք:

— Մեմ՝ ա աշե,— կըսե Օհան Օձնեցին: Փոքրավորը բանա դուրապը
կաշե, օր երեք հատ դոճա թոփխանա գրած է: Զարմանքով վերցնե կու-
տա կնկանը: Կինը շնորհակալ գլլի կէրթա:

Օհան Օձնեցին ինքն իրեն կուտա-կառնե, կուտա-կառնե, դրկե զլտ-
ճուն կանչե՝ մե լավ թուրմ շինել կուտա: Թուրը շինել կուտա՝ օրհնե կու-
զրկե կը Օսմանճըղին, թը. «Իմ օրհնած թուրս կապե մեշքդ, արի, իմ ա-
դոթթովս աստված քեզի պիտի տա էրկընհրը»: Օսմանճըղը կառնե թուրը,
կապե կը մեշքն ու նիղամը խառնե, առաջ գուզա Ստամպուլու վրա: Խա-
պարը գուզա Կոստանդին թաքավորին, ատ վախճըն ա թաքավորը՝ ծովի
դրադը քեֆ էնելու ղնացած լղե. ձուկ բռնեք, լցեր թավեն տապկեն կե-
ղե: Թագավորին օր իմաց կուտան. թը Օսմանճըղը իրեն վրա գուզա,
«էհ,— կըսե,— ակար աս ձուկը թավեցեն գելլե ծովն գըլնի՝ Օսման-
ճըղն ա գուզա Պոլիսը կառնե»: Ան խոսքը կըսե-չըսե՝ մեյմ ա կիսաէփ
ձուկը թավեցեն թախլա կուտա ու ընկնի կը ծովը: Հըմը օսահաթ թաքա-
վորի թաղաթը կտոփ կը, ալ բանմ ա չի կրնա էնե: Օսմանճըղը գուզա քա-
ղաքը փաթթե կը, ասիկ կանչե կը իրեն մարգոցմեն մեկին, թուրը կուտա
անոր ու կըսե կ'օր իրեն ղուլխը զարնե: Անա ղարկե սպանե կը թաքա-
վորին: Օսմանճըղը գուզա քաղաքը կառնե նստի կը: Օհան Օձնեցին գեմ
կերթա, օրհնե կը ու մեր ազգը անոր ամանաթ ուլա կուտա: Մեմ ա
խնդիրք կենե, օր մեր ազգեն սալգաթ շառնե: Ան ա խոսք կուտա կը: Հի-
մի մեր ազգը օսմանցոց բովը ամանաթ ուլա է:

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ

Ախալցխու բերթին շինութենը

Վախտավը՝ եփ հայերը Ախալցխու բերթը շինեին կեղե՝ պատերը
քանի վեր քաշեն կը՝ վար թափին կը, հեշ չեն բռնե էղե:

Հարցնեն գիմանան օր թամալին մեշ սաղ-սաղ շորս աղջիկ պիտի
դնեն օր պատերը կայնին: Գըլնին հավար-հավար գուզան, օր աղջիկ
դոնին ու սաղ-սաղ թամալին վրա կայնեցընեն՝ վրան պատ շարեն, հը-
մը՝ հեշ մե տեղմ ա չեն գոնի: Խլուլասա մե կնիկմ իրեն քրոջ եթում աղ-
ջիկը բերե ծախե կը ատոնց: Ատոնք ալ մե կոտմ օսկի կուտան ատ մոր-
քուրին, կառնեն աղջիկը, տանին կայնեցնեն կը բերթի թամալը ու պատը
շարեն կը: Աղջիկը գուլա ու մորքուրին կըսե.

Շարեցի՛ն, մորքուր, շարեցի՛ն,
Տեյ մ'օր ձնկներս հասուցին:

Մորքուրը պատասխանե կը.

Թո՛ղ շարեն, Շողիկս, թո՛ղ շարեն,
Տեյ մ'օր մեշքդ հասցնեն:

Եփ օր տեյ մ'օր մեշքը շարեն կը՝ աղջիկը կենա կըսե.

Շարեցի՛ն, մորքուր, շարեցի՛ն,
Տեյ մ'օր մեշքս հասուցին:

Մորքուրը անթիեն կըսե.

Թո՛ղ շարեն, Շողիկս, թո՛ղ շարեն,
Տեյ մ'օր ծծկրտ հասցընեն:

Աղջիկը նորեն պատասխան կուտա.

Շարեցի՛ն, մորքուր, շարեցի՛ն,
Տեյ մ'օր ծծկրտ հասուցին:

Թո՛ղ շարեն, Շողիկս, թո՛ղ շարեն
Տեյ մ'օր բուկտ հասցընեն:

Մորքուրն օր կըսե, տեյ մ'օր բուկը շարեն կ'ու, աղջիկը մեննի կը:
Իշտե ատոր հըմար ալ է, օր բերթին պատերը տեյ մ'օր հիմի գուլան կը:

Բիւնգլ

Փաշին մեկը կերթա Բիւնգլու սարերը քեֆ էնելու նյոքարը դոխմ՝

Տորթի, տանի կը աղբուրը լվալու, բիրտան դոխը սաղնա, թոփ կը վրա-
յնն կաթկթած ջուրը մե-մե աղբուր դառնա, հազար ակն բղխա կը: Ատոր
հըմար ա Բինգյուլ կովի:

Բինգյուլ

Մե քոռ աղջիկմ աղբուրը հետ, Մշու ու էրգրուժի միջի սարերն ի՞նչ է,
օշխար կարծն էղն:

Մե օրմ՝ աս աղջիկը քոռ-քոռնա կերթա մե աղբուրմ՝ գտնի կը- լը-
վացվի կը, աչքերը կը բացվի: Աշխարհք իրան կուտան, աթալ-թափալ
գըյնի տուն: Հարն ու մարը օր տեսնեն կը՝ մաթ մնան կը. հարցնեն կը
թը. «Ղչի, ատ ի՞նչը էղավ օր աչքերուտ լուսը բացվավ»: Անա թը. «Սա-
րին գլոխը աղբուրմ՝ կա, լվացվա, աչքերս բացվավ»: Վազդեն կ'օր մեկ
չէ՝ հազար աղբուր գլուխն կը. արթը ատ սարին անունը դնեն կը Բինգյուլ:

Վարդիու շինվիլը

Վախտովը՝ Վանսգոմի վանքին մեջը մե ճգնավորմ՝ էղն: Ատ վախ-
թերն ա աճմեն շահին աղջիկը հիվանդ գլի էղն, ինչքան դեղ, մյահլամ
կենե՝ շարա չի կրնը գտնի: Յալճիներուն աշել կուտա, գիմանա կ'օր սալթ
Վանսգոմի ճգնավորը կրնը իրեն լավցնեն: Աս աղջիկը աղաչի կը հորը՝
օր յա բերել տա ատ ճգնավորին, յա իրեն դրկն քովը, հըմը շահը հեշ չի
հոժարի: Հե՛շ ատաթ է, օր ճգնավորմ՝ շահիմ աղջկա դեղ էնն: Աս աղջ-
կա ցավն օր շատ գոռն կը՝ հոգու կսկծուն, գողտուկ կանչի կը մե շար-
վատարմ՝ ու կըսեն կ'օր իրեն տանի Վանսգոմ: Չարվատարը մուրրի մնա
կը՝ տանի վայ է, շրտանի՝ վայ է: Տանի՝ շահը գլոխը կտռել կուտա, շտա-
նի՝ աղջիկը: Խյուլասա էրկու օրմ՝ իղին գուզի՝ օր էրթա պատրաստու-
թեն տեսնի. իյը թողը կառնի փախչի կը: Ծամփան դաթրներուն մեջ
շարթըմ գըյնի՝ բիտտուն կը շարգի: Ասիկ հասկանա կ'օր աստուժու ցա-
սումեն էր՝ դառնա կերթա շահին աղջկանը կառնն, գիշերանց փախցնն
կը մեր գեղը²², Աղջիկը տերտերանց վերի կալը շատը կը գարնն, մարդ
կը դրկն Վանեցգոմ ճգնավորին՝ օր գա իրեն լավցընեն: Ծգնավորը խա-

պար կենն կը, թը իմ դեղս մկրտությունն է, ակար գուզն լավնալ, թող
գա մկրտվի: Ասիկ կերթա մկրտվի կը, ու ինչոր օժը շապիթը վար կը
ցկե՝ ան ալ հիվանդութենը ցկե լավնա կը: Կավ-լավնա կ'օրա կերթա
Թմբուկ բերթը կենա կը:

Մե օրմ՝ աս աղջիկը թեք կոռած լակլակըմ՝ գտնի կը, բերն թեք
կապն լավցնն, թոցնն կը: Մեկ ալ տարին աս լակլակը իրեք ճաղ բերա-
նը գուզա դնն կը աս աղջկան ծնկին: Աղջիկը անպես զան կենն կը թը՝
լակլակը գուզն ըսն, թը դուն մարթ ես, դուն գուլպադ գործն, ճգնելը քու
բանըտ չէ: Սիրտը շատ ցավի կը, սրտին կառնն. ատա իմ լավութանս
դեմն է կըսն: Մեմ՝ ա լակլակը ճաղերը կառնն ցկե կը տաքցված կաթերուն
մեջ, օսահաթ կաթերուն մեկը օսկի, մեկն արծաթ, մեկն ա էրկաթ կոռի
կը: Աղջիկը ուրախնա՝ գուզա կաշի կ'օր ճաղերը կենա էրեսը կեցնր են,
վերցնն նորեն ուրիշ կաթերու մեջ ցկե կը, անոնք ա օսկի, արծաթ, էր-
կաթ կառնն կը: Թեզմ սյուրում օշխար կառնն ու կսկսն հարստություն
դիզել: Թմբուկ բերթը թազադան շինն, շինցընն կը, անտից ա կերթա
Վարդիու վանքը շինել կուտա: Իրեն դոնախանան օր շինեն, պրծնին կը՝
հրամայն կ'օր փողրանքներ դնեն իրեն դոնախանեցնն տեյ մ'օր օշխար
արծելու տեղը, օր անտից կաթը լըլեն՝ գա ինքը օսկի ու արծաթ շինն,
Վարդիու մատուռներն ու օղաները կտռել տա:

Չուպնի կարմուները

Վախտովը մե չուպանմ՝ Քոփրիթով գեղը Հննար սարի վրան Հննար
սրբին գերեզմնին քովերը բեհին ոշխարները կարծեր: Ասիկ անպես աստ-
վածավախ մարթ էր օր՝ հեշ մե բանմ՝ չէր էնն, տեյմ՝ օր ս. Հակոբա ա-
նունը կտար: Մե օրմ՝ ալի ս. Հակոբա անունը հիշն կ'ու մե բաղչիմ դը-
րաղ առվիմ կողք գըյնի խոտերուն վրա քնի կը: Մ. Հակոբը գուզա ասոր
հարվները փոխն ու վերցնն տանի Հարաշի Շամշի բաղաքի թագավորին
բաղչին դրաղը խոտերուն վրա դնն կը: Ատ թագավորին մեկուճար աղ-
ջիկն ա, օր հեշ դուս չէր էլն, աշխարքի անունն ա չէր ուզն տա, ատ օրը
գուզա բաղչան ծուռ գալու: Գուզա մտնի կը բախլան²³, տեսնի կը հա-
զար ու մեկ թավուր ծաղիկներ հոտով աշխարք լցեր են, մեյլի ծառները
կարմիր ու դեղին են, հավքերն ա աս ծառեն ան ծառը թռնելով անպես
անուշ կանչին կոր, մարդ նա՛ ուտն, նա՛ խմն, կայնի ատոնց սեյր էնն,
կանչն աստիեն ջրերը գոշգոշալեն կէրթան, բարակ քամին ա օր չի փչն,

²² Պատմողը գյուժրեցի մի հայ գյուղացի էր, որ ինձ առաջնորդեց Վանեցգոմ, Թմբուկ և Վարդիու:

Մինևույն ավանդությունը ինձ պատմեցին և նորա համադրուղացիներից, Վար-
գիայի, Վանեցգոմի նշանավոր վանքերը որ ամբողջովին փորված են ժայռի մեջ,
նույնպես և Թմբուկի նշանավոր 7 բլուրների վրա շինված բերդը նկարագրված կը լինի
գրքիս Բ մասում:

²³ Այգու նկարագրությունը պատմողին է, որ կարծախցի մի գյուղացի է:

գիտես թը՝ հոգուտ թիւերուն կը դիպչի: Աս աղջիկը աստին անթիւն ժուռ գալեն գուգա շափսին քովը, կաշե օր դուռը մե տղամ է պառկե, մե առնաժուտմ, էրեսը լսի մեջ կորեր է: Ասիկ կաշե, կաշե՝ շի կշտանա, շրի ճամբեցնե գելլե դուս գուգա քովը, հանե կը աղլուխն ու կուտա իրեն քառասուն քոծերն շորսին՝ օր բունեն էրեսին, արևը լը նեղեցընե: Ինքն ա կաշի կը քովն ու սեյր կենե թե ատիկ ինչոյ անուշ քնի կը: Բիրտան տղան ետ գարթի կը, տեսնի կը ատ աղջկան, հրեշտակ զան կենե, ետեա կը քաշվի, ատիկ բուն կը ձեռքեն, տանե կը հոր քովը, կըսե:

— Հայրի՛կ, դու գուգիթ, օր ինձի կարգես, ահա ես իմ նշանածս գտեր եմ. գըլլի ասէ, շիլլի աս է:

Թագավորը ատ տղին հարց ու փորձ կենե, բանմ՝ շի հասկնա, կըսե. «Աղջի, վե՛զ գիտե ասիկ ինս է, շինս է, մեր մարդիքը խոմ Վարդին անցնե:

— Չէ՛, — կըսե աղջիկը, — ատոր շեք տա՛ ես ընծի սրպաննեմ կը: Աղջիկն օր ասպես քյասա կապե կտոն կը՝ թագավոր ալ ձեն շի հանե, օխթը գիշեր հարսնիք կենե՝ ատոնց պօսակ կը:

Չոպանը դառնա կը թագավորի փեսա, ինքն իրան կորցընե կը, ալ նա՛ մար միտքը կը փերե, նա՛ իրենց գեղը, նա՛ իրեն ոչխրները, ս. Հակոբին բիլա մոռնա կը. կուտե, իմե, քեֆ կէնե:

Ս. Հակոբի սրտին դժար գուգա օր իրեն մոռցամ: Մե գիշերմ՝ ատ չոպանը շի հանգստի, դառնա կը աս կողքին, դառնա կը ան կողքին, կընիկը կըսե կը թը՝ քլլի օր շապիթդ կոշտ է, անտի շես հանգստի, առ իմ շապիթս հագի: Կառնե հագնի կը, քունը տանի կը: Մեմ՝ ա առաժոտուն աշքեր բանա կ'օր օրը ցերեկ է էղե, ինքն ա իրենց սարը, քեֆին ոչխրներուն քով, իրեն ավալթվա չոպնի շորերով պառկած է: Աշքերը սրքե կաշե, սալթ շապիկը իրենը շէ, մուլբրի մնա կը, կըսե թը՝ էրազ էր, աս շապիթն ի՞նչ է, թը զորթ էր, աս շորերն ի՞նչ է, փառք քեզ ս. Հակոբ, փառք քեզ:

Ս. Հակոբը խնդա կը:

Ասիկ գելլե ոչխարը քշե կերթա տուն, մերը դեմ կվազնե, փաթթվի կը վիզը. «Տղա՛, կըսե, աս իրեք տարի է՝ ո՛ւր էիր, ի՞նչ էղամ քեզի, օր հալետր մորդ դարտ ու դամի մեջ էլար գնացիր»:

Թը. «Ես ա շիտեմ, լա՛վ է օր լը հարցնես», կըսե կենա իրա չոպնութենը կէնե:

Հիմի գանք թագավորի աղջկանը:

Ատոր մե տղամ՝ գըլլի, օր եղած օրեն գուգա կ'ու կէրերա, ինչ կենին՝ ձենը շի կտոնե, ֆալճու աշել կուտան, կըսեն կը թը՝ տղան պիտի լա

տեյ մ'օր հորը գանիթ՝ գիրկը տաք: է՛, հե՛ր, ո՛ւր ես, վե՛ր շուր օր գան քեզի գտնեն: Թագավորի աղջիկը հագնի կը փաշի հալվներ, կառնե աշխրքին խագնան, գըլլի աշխարքե աշխարհ, ինչքան մարդ օր կա, կանչե, փարա կուտա, տղան գիրկը դնե, կ'օր, ատպեսով մարթուն գտնի:

Աշխարք ման գալեն ետե գուգա աս Քյոփրիթը ետ ընկած գեղն ա:

Չոպնի մարն օր գիմնա թը՝ մե մենծ փաշամ է էկե, կառնե տղի իսա շապիթը, օր էրծին մեջը թագավորի աղջկանը հետ փոխեր էր, փերե ատոր փեշկաշ կլնե, օր քանիմ՝ դուռուշ ստանա, տանի իրա պակասութենը հոգա:

Աս փաշան օր շապիթը կառնե, օսահաթ ճանչե կ'օր իրեն շապիթն է, հարցնե կը թը՝ աս շապիթը քեզի ո՛ւրտից է: Անա թը. «Ձիտեմ, տղաս օր կորեր էր՝ ատիկ հագը էկամ»: Թեղմ կանչել կուտա տղին:

Չոպանը շոմպախը ձեռքը, քոլուրը գուլար գուգա կայնի կը փաշին առաջը: Փաշան վերցնե տղան ատոր գիրկը դնե կը, օսահաթ տղան ձենը կտոնե կ'ու խնդա կը: Փաշան ատոր պատմել կուտա իրեն կյանքը, ատիկ ա կըսե թը. «Օշխար կարծեի, քնա, էրծիս մեջը գնացի թագավորիմ աղջիկ առա, շիտեմ վալլա զորթ էր, սուտ էր»:

«Ղորդ էր, — կըսե փաշան — ըշտա ան աղջիկն ա ես էի, օր քեզի ասքան ժուռ էկա գտա»: Աս կըսե ու վրայի շորերը վար ցկե, իրեն զպալովը էրենա կը տղին: Չոպանը օսահաթ ճանչե կը ատոր, ալ շի գիտնա՝ ի՞նչ էնե, աշխարք իրեն կուտան:

«է՛, — կըսե աղջիկը, — քեզի օր գտա, հիմի ուխտս պիտի կատարեմ. անպես կարմունջմ՝ պիտի շինենք օր, տեյ մ'օր աշխրքին վերջը դիմանա»:

Թեղմ քար, փատ թափել կուտան, հավկթի դեղնուցքով քիրաջը կեփեն Մուրատ շալին (Նփրատ) վրա Չոպնի կարմունջը շինել կուտան, գելլեն կերթան իրենց էրկիրը:

ԿՅԱՆՔԻ ՊԱՏԿԵՐՆԵՐ

Հաւս ու կեսուր

Մե կեսուրմ՝ իրեն հարսին հեշ շի ուզե էղե. հարսին օր տեսնի կը էղե, գիտե թը գրողը տեսնի կը: Խեղճ հարսը խելուք, շալը էկող, լսի կըտոր աղջիկմ՝ է էղե, հըմը ինչ էնես, օր ծակծկած կեսուրի փորի օձերը շին թողնի, օր օր ու արև տեսնի: Օրվանմ՝ մեկը կեսուրը աղջկանը խրատ կուտա օր՝ հավկթիմ՝ մեջ աղու լըլե, կ'ու կուտա հարսին: Հարսն ա միամրտտան կպչե կուտե: Կպչե կուտե, քիշըմ կանցնի, շի անցնի՝ գընկնի վար՝ ծառվնա կը, կըսե:

Կեսուր կեսուր
Քարե մսուր,
Մե պուտմ՝ ջուր,
Սիրտս էրեց:

«Գրող խմե», կըսե կեսուրն ու շիտա:
Տեղերկնկանը կաղաչե.

Տեղեր կնիկ,
Օձի բնիկ,
Պուտ մ՝ ջրիկ,
Սիրտս էրեցիկ:

Տեղերկնիկն ա թողնե քաշվի կը քովեն, պուտմ՝ ջուրն ի՞նչ է՝ շի տա:
Արթղ տալին կաղաչե.

Տալիկ, տալիկ,
Սե-սե սալիկ,
Պուտմ՝ ջրիկ,
Սիրտս էրեցիկ:

Ան ա թը. «Գրողս ու ցավս խմե»: Աս վախթիր տեքերը նես մտնի կը:
Հարսը ատոր կաղաչե.

Տաքրիկ, տաքրիկ,
Պաղ աղքրիկ,
Սիրտս էրեցիկ:

Տաքը ջուր կուտա կը, հարսը խմե, քիչմ կտքա՝ հանգե կը: Օսա-
հաթ կեսուր ու տալ տանին գոմը թաղին, խուփն էրեսին դնեն կը: Էտինք-
վան մարդը գուգա տուն, կաշե օր կնիկը շկա, մորը հարցնե կը, թը.

Անա, անա,
Քյաֆիր անա,
Շուշանս ո՞ւր է:

Մարը կըսե.

Օղուլ, օղուլ,
Ջուրն է գնացե:

Քիչմ կանցնի, տեսնի կ'օր շեկավ, կենա հարցնե կը.

Անա, անա,
Քյաֆիր անա,
Ջրվորն էկավ,
Շուշանս շեկավ:

Մարը թը.

Օղուլ, օղուլ,
Բուրդ վլալու է գնացե:

Մարդը բյաքլայե, բյաքլայե, տեսնի կ'օր Շուշանը շեկավ՝ կըսե մորը.

Անա, անա,
Քյաֆիր անա.
Դրուտն ըսե՝
Շուշանս ո՞ւր է:

Մարը էլ շի պահե, կըսե.

Գոմին վերե խուփն էրեսին,
Շեկիկ մազեր գետնի վերսին:

Տղան կերթա կաշե, օր ի՞նչ՝ կնիկը մեռած, թաղած է...

Աղփատ Սեակ

Էրգրում աղքատ Սհակ անունով մե տղամ սիրահարվի կը Հակոբ ա-
ղայի Ալմաստ աղջկանը վրա: Գիշեր ցերեկ քունը կոռե, ատոնց պատի
տակը կանչե կ'ու կէրի: Հակոբ աղան անընունք քատար շցկելու համար
ադ աղքդին աղջիկ շիտա, հըմը ինչ էնես, օր ատորեն վազ շի կրնը գա-
ղօր գիշեր իրեն դոներն է: Տեսնի կ'օր շարա շկա, ասիկ աղջկանը կը պը-
տըտցնե օր փախցնե, գաղտուց կառնե աղջիկն ու գուգա Արգահան: Տղան
թեզմ գիմանա աղջկա ուր ըլլիլը՝ էտենե կերթա կհասնի: Աստեղ տհա շատ
կէրի ու գուգե: Աս բանը Ալի բյակին անկաճը գըջնի, կանչե կը տղին, կը-
սե կը. «Թը ակար աղջկանը ատպես շատ գուգես, արի թուրքըցի, ես աղ-
ջիկը զոռով առնմ՝ քեզի տամ»: Տղան հոժարի կը, աղջկանը համար իրեն
լուս համտեն ձեռք քաշե կը: Ալի բյակը մարդ դրիկ՝ Հակոբ աղի աղջիկը
կուգե կը ատ տղին հըմար: Հակոբ աղան ա ջուհապ կուտա կը, թը. «Տա-

լու օր ըլլեի, հայ վախժր կուտայի, ես տնես տեղես էղա, էկա իրենն ասյա-
վինա, օր աղջիկս ատոր շտամ, հիմի ինքր գուզն խլի տա: Փուշն օր փուշ
է, իրենն ասյավինած դշին պահես, պահպանես կը, ինքր մե փշիմ՝ դտար ա՞
էհտիպար շունի: Ալի բյակը կաշն օր զորթ կրսե, կանչե կը Սհակին, կրսե.
«Իմ աղջիկս, ան երեսիլի մոլլին աղջիկը ուզե՞ տամ, զոտով ան աղջիկը
քեզի շեմ կրնը տա»:

— Ես ան աղջկա հմար իմ լուս հավատս թողի, ձեր սուտ հավտին
դառա, եի օր հիմի ա անոր ամնիկ շպտի ըլլիմ, ես կենա հայ եմ ու հայ,—
կրսե Սհակն ու պտղուցմ հող ցկե կը բերանը հըմը տեղն ու տեղը տա-
պանչով զարնե ինքն իրան սպանե կը:

Հայերը գուզան տանին ատոր թաղին կը, մեմ ա կաշեն կ'օր վրան
լուսը կամար կապեց:

ԿԱՐՆՈ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Կարնո գավառը, որտեղից դարուս 30 թվին 14000 հայ գերդաստաններ դաղթեցին Ախալցխա, Ախալքալաք, Մալկա և Աղեքսանդրապոլ, գտնվում է Բարձր Հայքում: Սա մի ընդարձակ դաշտավայր է, ծովի մակերևույթից 5740 ոտնաչափ բարձրությամբ, որ 32 մղոն երկարություն ունի արևելքից արևմուտք և 14—18 մղոն լայնություն հարավից հյուսիս: Գրեթե ամեն կողմից շրջապատված է բարձր լեռներով, որոնց մեջ նշանավոր են արևելյան կողմում գտնվող Փալանթյոքանը, Քոփտաղը և ուրիշներ: Այս լեռներից մանավանդ Ոսկյանց կամ Սուքիասյանց և կամ Տումլու կոչված սարից բխում են բյուրավոր աղբյուրներ, որոնք կազմում են Սև ջրի (Գարասու) Եփրատի հյուղի ափունքը: Դաշտավայրի գրեթե կենտրոնում, արեւելքից դեպի արևմուտք տարածվում է Կարնո շամբը, ուր ճախրում են բյուրավոր թռչունների երամներ՝ վայրի բազ, վայրի սագ, արոս, վայրի աղավնի, լոր, սարեկ, կաքավ, արծիվ, ձկնկույ, արագիլ, կոռնեկ:

Երկիրը ընդհանրապես շատ ջրառատ է, հողը արգավանդ և բերրի: Հարուստ է աղի (Աշղալա), երկաթի հանքերով և հանքային ջրերով (Իլիճա, Սողուկ-չերմուկ, Գարարզ, Արծաթի, Քարվոր, Ճինիս և այլն):

Կլիման սաստիկ ցուրտ է, սակայն առողջարար. առաջին անգամ ձյուն գալիս է դաշտավայրերում սեպտեմբերի վերջին կամ հոկտեմբերի սկզբին, իսկ լեռների վրա օգոստոսին. հավում է ապրիլի վերջին: Ձմեռը 20—25° ցուրտ է լինում, ամառը 3 40° տաք¹:

Բուսականությունը ճոխ, սակայն անփայտ և անպտուղ, առատությամբ աճում են հացաբույսեր և կանաչեղեններ: Կենդանիներից նշանավոր են ձի, կովը, ոչխարը և ջորին, վայրի այծ և վայրի ոչխար, ջրշուն և այլն²:

ԷՐԶՐՈՒՄ ԵՎ ՆՈՐԱ ԳՅՈՒՂԵՐ

Կարնո գավառի նշանավոր միակ քաղաքն է էրզրումը, որ հայերեն կոչվում է Կարնո քաղաք կամ Քեոդուպոլիս: Ասորեստանի բևեռածեղ գրվածքներից իմանում ենք, որ Քրիստոսից դեռ 8—9 դար առաջ Կարնո գավառը «Միդիս անունով մի ինքնազուլիս պետություն էր կազմում, որ հետո Պարսից Դարեհ արքայի ձեռքով նվաճվեցավ: Հունաց առասպելախառն պատմությունների (Պլինիոս և Ստրաբոն) ասելով՝ ոմն Carenifis

¹ Ինչուլ Քեոփիլոս, Ճանապարհորդություն լազիստանի և Հայաստանի մեջ: «Փղբա», 1881, № 5—6, էջ 104:

² Նույն տեղում:

սիրահարմարութիւնով այստեղի պատմական օդին և հրաշալի դիրքին, հիմնել է քաղաք և կոշիկ է յուր անունով, որ հետո հայերը իբր թե աղավաղել են և կոշիկ Կարին: Այսպես թե այնպես՝ բայց այն ժամանակից, երբ հռովմայեցիվոց կայսրութիւնը և պարսից տերութիւնը Հայաստանը տիրապետելու խնդիրը դարևոր պատերազմների առարկա շինեցին, Կարին քաղաքը մի առանձին ռազմագիտական նշանակութիւն ստացավ³: Այդ նշանակութիւնը պահպանում էր և այն ժամանակ, երբ Արշակունյաց թագավորութեան վերջանալուց հետո Հայաստանը տիրապետելու վեճը շարունակվեց բյուզանդացիվոց և պարսից մեջ: Կամենալով ընդմիջտ առաջն աննել պարսից բուռն ձգտումներին, Քեոզոս կայսրը յուր թագավորութեան սահմանների մոտ մի առաջնակարգ ռազմագիտական կետ ընտրեց և այնտեղ Անատոլիոս զորավարի ձեռքով շինեց, լավ ևս նորոգեց Կարին քաղաքն ու բերդը: Քաղաքը գտնվում է Կարնո դաշտի արևելյան մասում և բաղկացած է միջնաբերդից, քաղաքից և արվարձանից: Միջնաբերդը, որ կոչվում է Իջդալա, գտնվում է մի բլրի վրա, շրջապատված է 12 բարձր աշտարակներով և ունի միայն մի դուռ, այստեղ շինված էր բերդակալի և մի քանի այլ տներ, այստեղ էր և վառողանոցը, որ բոլոր շինութիւններին բարձր էր և դրսից երևում էր, այնպես որ շատ մեծ պակասութիւն էր բերում բերդին, որովհետև թշնամին կարող էր միջնաբերդի բարձրութիւն ունեցող հանդիպակաց Քոփդաղ լեռան դազաթից ումը հասցընել վառողանոցը և կրակը ձգել: Այստեղ է գտնվում և Քեփսի բարձր միմարեն, մթերանոցի մոտ կղմինդրից գլանաձև շինված. սորա գազաթին կար մի մեծ ժամացույց. որի զարկը լսելի էր ամբողջ քաղաքին, և որը ռուսները վայր առան: Սրա մոտ կա մի շինութիւն, որի մասին ասում են, թե եկեղեցի է եղել: Քաղաքը պատած է երկու կարգ պարսպով, որոնց միջի տարածութիւնը 10 արշինաչափ է և բոլորովին դատարկ է թողնւված, որպեսզի պատերազմի ժամանակ գավառի պաշտպանը այստեղ պատսպարվեն:

Այս երկու պարիսպները ունեն 72 աշտարակ և շորս դուռ, միմյանց հանդեպ, բայց ոչ ուղղակի, այլ փոքր ինչ շեղված նախապարսպի դրոները կրկնապարսպի դռներից. հյուսիս արևելքից՝ Գեվրիզ գաբուսի, արևմուտքից՝ Էրզնկյա գաբուսի, հյուսիսից՝ Կյուրճի գաբուսի և հարավից՝ Եննի գաբուսի:

Քաղաքի շուրջը կրկնապարսպի առջևով ձգվում է 3 սաժեն լայնութեամբ խոր խրամ, ցած պարսպով պատած, առանց աշտարակների:

Այստեղ է գտնվում փառայի պալատը, տաճկաց և հայոց բնակութիւններ, այստեղ է և միջնաբերդը: Արվարձանը գտնվում է խրամի շուրջը. բնակիչները էրզրում քաղաքը այս են համարում, որովհետև բնակիչների մեծամասնութիւնը, վաճառանոցները և շուկաները այդտեղ են: Արվարձանի շուրջը ևս բոլորում է մի ուրիշ անպարիսպ խրամ, որ 10 կամ 11 դուռ ունի, որոնք առհասարակ ձեպիս գաբու են կոչվում, որովհետև թե դռները և թե խրամը ճեպուով (շտապով) են շինված թահմասի գալու երկյուղից:

Դարուս սկզբում⁴ քաղաքը արևելյան գույն ուներ, գրեթե բոլոր փողոցները ծուռումուռ, անկանոն և անսալահատակ էին, այս պատճառով էլ ամառը սաստիկ փոշի, իսկ ձմեռը անանցանելի ցիխեր էր լինում: Տները ցած և անկանոն էին, սովորաբար միհարկանի, փոքրիկ դռներով և պատուհաններով. միայն քրիստոնեից թաղում կային երկհարկանի տներ, որոնց վերի հարկը դուրս ցցված էր. նա պահպանվում էր երբեմն սրված սյուներով, իսկ ծածկոց կազմող տանիքը պաշտպանում էր տունը անձրեից և արևից:

Տներից շատերը, մանավանդ միհարկանիները լուսավորվում էին միայն տանիքի լուսամուտով՝ հերթիկ, որ ծածկված էր լինում լույս անցկացնող և անձրեից պաշտպանող ձիթած թղթի կոնուսով: Տների առջևի հրապարակները գարնանը իսկական մարզեր էին դառնում, որոնց վրա արածում էին դառներ և այծեր. ամառը դոքա ծառայում էին թեզեքի (թիթեն, քակոր) չորացնելու տեղ: Կենդանիների ազրը խորանարդաձև կտրում և չորացնում էին: Աղբատները հավաքում էին աղբը և նրանցից գնդեր շինելով խփում այստեղին, ուր կպած մնում էին մինչև խալառ չորանալը, արձակելով շատ անախորժ հոտ:

Քակորը միակ վառելանյութն է, որ գործ է ածվում ամբողջ Կարնո բարձրավանդակում. մի ձիւ հարյուր հիսուն կիլոգրամ ծանրութեան բեռին վճարում էին 4—5 ֆրանկ:

Շրջակա բլուրներից հոսում են բաղմաթիվ աղբյուրներ, ինչպես Նահատակի աղբյուր, Կաթնաղբյուր, Ճեննեթ փունարի, որոնք անցնելով քաղաքի միջով, իրենց վրա կառուցված կամուրջներով փողոցներին տալիս էին մի բոլորովին ինքնակերպ տեսք:

Շինութիւններից նշանավոր են քաղաքի⁵ արվարձանում գտնվող հայոց երկու եկեղեցիները, որոնք իրար շատ մոտ են, և երկուսն էլ Ս. Աստ-

³ «Արձագանք», 1890, № 2, Ա. Ե.

⁴ Մեր թվականութեան:

⁵ Ինճիկյան Ղ., Աշխարհագրութիւն, Հայաստան, Վենետիկ, 1832:

վածածնի անունով են, սակայն սովորաբար Վերի և Վարի ժամ են կոչվում: Վերի եկեղեցին ուներ կաթողիկե, վարի եկեղեցու մոտ գտնվում է հայոց գերեզմանատունը, ուր ամփոփված են Սահակի, Հովսեփի և այլ շատ նահատակների մարմինները:

Քաղմաթիվ մզկիթներ կան, բայց նրանցից միայն երկուսն են ճրջմարիտ հետաքրքիր: Ուշուճի-Ջամի մզկիթը և Մուրղո Սերա աշտարակը: Քաղաքի շուրջը ընդարձակ դաշտի վրա տարածված են բազմաթիվ գյուղեր, իրենց ծուռուժուռ փողոցներով, գետնափոր տներով, ընդարձակ կալերով և փոքրիկ խարխուլ եկեղեցիով կամ մզկիթով: Գյուղի մեջ եթե կար մի փոքր ի շատև վայելուչ շենք, դա ազալի՝ գյուղի տիրոջ բնակարանն էր: Գյուղերից նշանավոր են իրենց վանքերով հետևյալները: Մուտուրկա՝ քաղաքից մոտ մի ժամ հեռու, ուր գտնվում է Լուսավորչի բարձրանիստ և բարձրապարիսպ վանքը. եկեղեցին քարաշեն է, փոքր և անշուք, միայն ավանդատնում կա մի դետնափոր դուր, ուր ավանդության ասելով Ս. Գրիգոր Լուսավորչի Աբտաշյառի Խոր Վիրապը ձղելու տանելիս, հանգիստ է առել: Այստեղ նստում էր Կարնո առաջնորդը: Երկրորդ վանքն է Ս. Աստվածածնի Կարմիր վանքը Հինձք գյուղի մոտ, քաղաքից 3 ժամ հեռու, որ հիմնարկել է Ներսես Մեծը և հետո նորոգված է: Սա Լուսավորչա վանքի երկու մեծությամբ է, երեքտորանյան, շքա կողմից ձգված են կամուրներ, և սոցա վրա բարձրացրած կարմիր քարից սրածայր գմբեթ: Այստեղից կես ժամ հեռու, ձորի մեջ գտնվում է «Հոփսի սիմյանց քարայր» ուխտատեղին, որի մոտ կան երկու ավերակ մատուռներ և խաչքարեր, որոնց մոտից բխում է մի սառնորակ աղբյուր:

Երրորդ վանքն է Խաչկա վանքը, քաղաքից 4 ժամ հեռու: Ավանդությունն ասում է, թե Տումլի լեռան գագաթին, որի ստորոտում գտնվում է վանքը, պահված է խաչափայտի մի մասը, որ ընծայել է Հերակլ կոյսրը իրեն զորքը 3 օր կերակրող մի տիկնոջ: Խաչկա վանքից բխում է Խաչափայտի ականակիտ և սառնորակ ջուրը, որ թափվում է Սև ջրի մեջ:

ԲՆԱԿԻՉՆԵՐԸ

Թե Կարնո քաղաքի և թե նորս գավառի բնակիչներն էին առճիկները և հայերը: Սոքա կամ միասին խառն էին ապրում կամ առանձին թաղերում և գյուղերում: Կրթությունից զուրկ և կրոնամուլ լինելով՝ այս երկու ազգերը սիրով չէին կարող ապրել, և չէին ապրում: Թուրքերն առաջինություն էին համարում «գյավուրի» արյունը թափել, իսկ հայերը կրոնական ատելություն էին զգում դեպի նոցա: Հաճախ պատժից ազատվելու

համար առաջարկվում էր հայերին ընդունել մահմեդական կրոնը, և երբ սոքա ընդդիմադրում էին, տանջանքներով ստիպում և վերջ ի վերջո նահատակում էին:

Հայ օրիորդներն եթե դուր էին գալիս թուրքերին, մեծ հալածանաց էին ենթարկվում, և եթե չէին համաձայնվում հավատափոխ լինելով ամուսնանալ թուրքերի հետ, շարաշար մահով նահատակվում էին: Այսպես եղավ և Ս. Վառվառե կույսը: Իսկ եթե հայ երիտասարդները դուր էին գալիս թուրք կանանց կամ աղջիկներին, սոքա մեղադրում էին սոցա իբր իրենց բռնաբարոզների, և կառավարությունը ստիպում էր սոցա հավատափոխ լինելով ամուսնանալ նոցա հետ, և երբ չէին համաձայնում, նահատակում էին: Այսպիսի պատճառով նահատակվեցավ էրզրումում Մկրտիչը՝ Մկոն:

Եկեղեցին միշտ հալածանաց տակ էր, հին եկեղեցիները նորոգելու հրաման չկար, իսկ նորը կառուցելու համար թույլատվությունը պիտի խնդրվեր սուլթանից:

Գյուղերում հայ քահանաները թուրք երեխաների ծաղրի առարկան էին: Եվ դեռ սա բավական չէ, շատ անգամ նոցանից քարկոծվում էին: Թուրքը ամեն մի շնչին բանի համար հայհոյում և թակում էր հային, իսկ սա ստիպված էր լռելյայն տանել և համբերել: Իսկ եթե համարձակվեր փոխադարձաբար հայհոյել կամ մի հատ խփել, այն ժամանակ թուրքերը խմբով թափվում էին վրան, սաստիկ թակում էին, և դեռ այս բավական չէ, դատարանում գանգատվում էին, թե դա թուրքերի հավատը հայհոյեց: Հայ վկաների վկայությունը չէր անցնում, իսկ մի թուրք վկայի վկայությունը բավական էր, որ հայերին սկսեին տանջել և տուգանքի ու մահի ենթարկել:

Այսպես ապրում էին այս երկու ժողովուրդները. մին յուր իշխանություն մյուս անձնավստահ, մյուսը ստրկական դառն զգացումով: Եվ եթե շատ գյուղերում արտաքուստ հաշտ էին, սակայն ներքուստ կրոնական ատելություն և վրեժխնդրություն էին զգում:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՐՈՒԹՅՈՒՆ

Ա. Քաղաքացիոց

Էրզրումի բնակիչներից հայերը գլխավորապես պարապում էին վաճառականություն: Էրզրումը Պարսկաստանի և Տաճկաստանի վաճառականության կենտրոնն էր, ուստի և թե տեղացի և թե օտար վաճառականներ անդադար լցվում էին էրզրում և ծաղկեցնում վաճառականու-

թյունը: Ներքերում էին օսմանյան սահմաններից՝ շաքար, սուրճ, նիշատիր, լեզակ, կարմիր որդան, հինա, երկաթ, պողպատ, պղինձ: Ներքերում էին նաև զոմշի մորթի(Ախալցխայից և Թիֆլիզից), կտորեղեններ՝ խումաշ, խուֆնի, շիշեկլի (Հալեպից), ֆես, մանր ապրանքներ՝ հայելի, ածելի, թուղթ, մկրատ, ֆրանսիական մահուղ, առլազ, զատիֆա և այլ կտորներ: Պարսկաստանի սահմաններից բերում էին շալ, մուշտակներ (թուլայեթ), բամբակ:

Իսկ արտահանում էին՝ ցորեն, գարի, զանազան պղնձեղեն և արծաթեղեն շինվածքներ, դեղքեր և այլն: Կարինում կար մաքսատուն, որ սուլթան Համիտի ժամանակները հետևյալ մաքսն էր առնում. Օսմանյան տերության սահմաններից եկած ամեն տեսակ ապրանքից՝ հարյուրին չորս, իսկ Պարսկաստանի սահմաններից՝ հարյուրին տասնմեկ: Բացի մաքսից վճարում էին տասանորդ՝ մաքսատան ծառայողներին, որ կոչվում էր ֆաղլա: Ապրանքը քաղաք մտցնելու համար՝ որտեղից և ինչ մեծությամբ կամ գնի լինեք, միևնույն էր, պիտի վճարեին 22 փարա իհտիսապ ահմեսի: Արտահանած ապրանքի համար վճարում էին քաղաքից հանելու համար՝ բեռին 2 զուրուշ, 8 փարա և 100-ին 11 մաքս⁶:

Բացի վաճառականությունից ժողովուրդը պարապում էր և արհեստներով, որոնցից առավելապես ծաղկած էր սղնձագործությունը, ոսկերչությունը, արծաթագործությունը: Մեծ էր և որմնադիրների, քարտաշների, հյուանների, դանակ շինողների թիվը:

Քաղաքացիների մի մասն էլ պարապում էր երկրագործությամբ և պարտիզպանությամբ, մշակելով քաղաքի շրջակայքի ընդարձակ դաշտերը:

Բ. Գյուղացվոց

Կարնո գավառի թե հայ և թե տաճիկ գյուղացիք գլխավորապես պարապում էին երկրագործությամբ: Կարնո ընդարձակ դաշտավայրը լիովին բավական էր բոլոր բնակիչներին, սակայն անկանոն բաժանված լինելով՝ շատերի հողերը անմշակ էր լինում, շատերն էլ հող չունենալով ունեցողներին մաքապա էին լինում: Հողը գլխավորապես անցած էր թուրք աղաների ձեռքը, որոնք գրեթե տիրել էին բոլոր գյուղերը և բացի սեփականության իրավունքից վարում էին և վարչական իրավունքներ:

Գյուղացի հողատերեր, մանավանդ հայ, շատ քիչ կային, և դոքա գնել էին հողը վճարելով սոմառին մոտ 500 զուռուշ: Սեփականություն

դարձրած հողը արքունի դատարանով հաստատում էին՝ քափի էին անում: Թափի եղած հողը ոչ աղան և ոչ տերությունը կարող էր խլել, այլ որպես ժառանգություն անցնում էր սերունդից սերունդ, մինչև մինը կվաճառեր:

Սեփական հողի համար տասանորդ էին սուլթան տերությանը: Տասանորդները հավաքում էր յուրու աղասին (եկամտի տեր), որ աճուրդով գնել էր այդ իրավունքը սուլթանից: Հաճախ յուրու աղասին փոխանակ տասից մեկ, 7-ից, 5-ից մեկ էր վերցնում, նայելով թե ինքը ինչքանով էր գնել այդ իրավունքը սուլթանից և ինչպիսի կոշտությունով կարող էր լրացնել յուր տված կաշառքները և վճարը և գեռ աշխատանք հանել:

Հողատերը մշակում էր յուր հողը որքան կարող էր, մնացածը տալիս էր ուրիշի՝ մարապայի, մշակելու այս երեք պայմանով՝ 1. Եթե հողը միայն հողատիրոջ՝ աղայինն էր, աղան ստանում էր ամբողջ հնձի միայն 1/3-ը: 2. Եթե հողը և սերմն էր աղայինը, աղան սերմը վերցնում և մնացածը կիսում էր մարապայի հետ: 3. Եթե ամեն ինչ՝ հող, սերմ, կենդանիներ, գործիքներ, մարապայի ուսեստը և այլն աղային էին, և միայն աշխատանքը մարապայինը, այն ժամանակ աղան ստանում էր 2, իսկ մարապան՝ մի մասը:

Մարապան առնում էր աղայից 2—5 հարյուր զուռուշ պարտք՝ անստուններ և գործիքներ գնելու, և այս փողի համար շահ չէր վճարում, քանի այդ աղայի մոտ մարապա էր, բայց չէր կարող այդ աղայի մոտից դուրս գալ առանց նախապես պարտքը լիովին վճարելու: Մինչ իսկ չէր կարելի, կամ գրեթե չէր կարելի դուրս գալ աղայի մոտից և պարտքի համար շահ վճարել: Թեև այժմյան նահապետական ձևով էին մշակում արտերը, սակայն երկիրը շատ բերրի լինելով, հասկը շատ առատ էր լինում, աննվազը 1—16, և մարապան, չնայելով յուր ստացած փոքր մասին, այնուամենայնիվ ցորեն հաց էր ուտեցնում յուր գերդաստանին և ոչ գարեխառն հաց, ինչպես այժմ:

Բացի երկրագործությունից ժողովրդի մեծամասնությունը պարապում էր ջուֆլակուրյամբ. գործում էին շալ, կտավ, խսիր, կարպետ. գիտեին հյուանություն, դարբնություն, տուն շինել, բայց այս բոլորը միայն իրենց պեռքերը հոգալու համար: Այս արհեստները նոցա առանձին զրամ չէին առլիս, որովհետև նախ՝ գրեթե բոլորը գիտենալով՝ ուրիշին գործ առաջարկող չկար և երկրորդ՝ հագիվ յուրաքանչյուրը յուր պետքերից ափելի կարողանար պատրաստել: Ամուսնուն օգնում էր կինը, բացի տան կառավարությունից նա թեշիկ, ջահրա էր մանում, գուլպա գոր-

⁶ Ինքիեյան Ա., Աշխարհագրություն, Հայաստան, Վենետիկ, 1832, էջ 73—75:

ծում, կար անում, շալ, կտավ գործում և դաշտային պարապման մեջ ամուսնուն օգնում:

Այս գավառում սաստիկ տարածված էր մանու փոխ առնելը. կանայք բամբակից թել էին մանում և այս մանածը մեկ ու կես բամբակի հետ փոխում, այսպիսով բամբակ ավելացնում ու շալ գործում, անեցի-նեքին հանդերձ կարելու:

Գյուղացիք պարապում էին և անասնապահությանը. պահում էին եզ, գոմեշ, կով, ուլխար և ձի: Կովի և ուլխարի կաթից պատրաստում էին մածուն, թան, շորթան, կարագ, պանիր և վազնաթ: Կենդանիների մսից, քացի կերակուրների մեջ գործածելուց, շինում էին պաստուրմա, շուճուխ և դավուրմա կին դնում:

Այս պարապմունքներով ժողովուրդը ձեռք էր բերած հետևյալ կարողությունը:

1. Համբան կամ կոտը՝ ամենահարուստ գերդաստանը, որ բաղկացած էր 40—50 անգամներից, մոտավորապես ուներ 1000 զլուխ ուլխար, 5 լուծ գոմեշ, 10 լուծ եզ, 5 կով, 2 մատակ և մոտավորապես 100 օրավար հող: 2. Կես համբան կամ կես կոտը, որի գերդաստանը բաղկանում էր 30—40 անգամից, ուներ մոտավորապես 400—500 զլուխ ուլխար, 2 լուծ գոմեշ, 4 լուծ եզ, 3 կով, 1 մատակ, վարում էր մոտավորապես 60 օրավար հող: 3. Չարեկը կամ բուսարը՝ ստորին կարողության գերդաստանը մոտավորապես ուներ 1 զույգ եզ, 4 կով, 15—20 ուլխար և 10 սոմառնոց հող: 4. Մարապան՝ մոտավորապես 4 լուծ եզ, 1—2 կով, 1 մատակ, վարում էր 30—60 օրավար ազալապատկան հող: Գերդաստանը բաղկանում էր 15—30 անգամից:

Բոլոր դասակարգերի հազուստը միատեսակ էր, պող շուխայից, որ իրենք էին մանում, գործում, թուրքերը թույլ չէին տալիս լավ կտորներ հագնելու. ոտներին հագնում էին տրեխներ: Ժողովրդյան սահաստը ևս չափավոր էր: Համբան ճաշին ուտում էր թանով ապուր և էրիշտով փլավ, կամ խաշիլ, բանջար և առհասարակ 2 տեսակ կերակուր, իսկ ընթրիքին՝ ապուր, մածուն, պանիր: Կես համբան ճաշին ուտում էր միայն թանով ապուր կամ մի տեսակ ուրիշ կերակուր, իսկ երեկոյին միայն ապուր: Չարեկը ճաշին միայն ապուր, իսկ երեկոյին ցամաք հաց և երբեմն պանիր:

Այսպես ուրեմն՝ տեսնում ենք, որ գյուղացից թե հագուստը և թե ուտեստը գլխավորապես իրենց պատրաստածներն էին և ոչ թե գնած: Յուր պետքերը հոգալուց հետո շատ քիչ բան էր մնում նրան վաճառքի հանելու, որ առձեռն դրամ ստանար հարկը տալու և զանազան անհրա-

ժեշտ ծախքերը հոգալու: Եթե հաջողեր նրան տարեկան 150 դուռուշ առձեռն փող ունենալ ծախսի համար, գրեթե ոչ մի բանի պետք չէր զգա: Նա տանում էր քաղաք ծախելու խոտ, հարդ, աթար, ճիլ, եղեգն, կոճան, գարի, ցորեն, ալյուր, խիար, սոխ, մանած, գոմշի կաշի, մածուն, յուղ, պանիր, անասունների եմ գոքա քաղաքում մոտավորապես արժեին.

Ալյուր, լիտրը*.

Ցորեն

Գարին, սոմառը (25 փուտ)՝ 25 դուռուշ

խոտը, մի բարդ (30 խուրձ)՝ 25 փարա

Հարդը

Կովը՝ 10—15 դուռուշ

Եզը՝ 20—25 դուռուշ

Գոմեշը՝ 60—65 դուռուշ

Ուլխարը՝ 2—3 դուռուշ

Հավը

Յուղի հոխան՝ 50 փարա

Պանրի հոխան

Հավկիթ, 40 հատը՝ 1 փարա

Մեղրի հոխան

Այս գներին համեմատ էին և մյուս ապրանքները: Մինը ծախել է մի գոմեշ 60 դուռուշի և այդ փողով գնել է.

1 ձեռք կլապիտոնի շոր՝ թագվորի համար, 15 հոխա օղի, 4 լիտր բրինձ, 2 լիտր լավ արյուկ, 2 զույգ յամանի, 2 զույգ մյաս-բարուն, 3 հոխա կաշին-շամիլ:

Բաղազի խանութում մատների վրա հաշվելով՝ տեսնում է 35 փարա մնում է քիսեն, 20 փարան էլ տալիս է քահանային՝ որդուն պակելու համար, իսկ 15 փարան ետ ձգում «սև ալուր համար»: Սակայն մշակը կամ ծառան մի ամբողջ տարում ստանում էր 10—30 դուռուշ և ոչ ավելի: Ինչպես երևում է, գյուղացիք ունեին մի համեստ ապրուստ, սակայն գյուղական արդյունաբերական արդյունքները այնքան չնչին գին ունեին, որ գյուղացիք դոցա վաճառմամբ չէին կարողանում քաղաքից հարկավոր պիտույքները գնել և վճարել արքունի հարկերը, որ մոտավորապես հետևյալն էր. խաբան, գլխարհարկ, որ ստնում էին 15 տարեկանից վեր այր մարդկանցից, և այս չափով.

Ալայից (հարսաից) 30դ., 20դ., 13դ.

* Ձեռագիր սկզբնաղբյուրում արժեքները չեն նշանակված:

Աննայից (միջակից) 20դ., 15դ., 10դ.

Ատնայից (լուսնորից) 10դ., 10դ., 8դ.

Սպինն՝ 30 փարից-3 դուռ.

Սալյան, գյուղի ծախսը՝ 5—10 դ.

Տասանորդ՝ թե հացհատիկներից և թե խոտից: Հասկանալի է, թե ինչպիսի բանություններ էին գործում հարկահանները հարկը և յուշոր աղասին՝ բերքի տասանորդը հավաքելիս:

Եվ հենց այս պատճառով գերդաստաններից մի կամ երկու անգամ, առավելապես երիտասարդներ զնում էին Կ. Պոլսի մշակութային անելու, դրամ վաստակելու: Սոքա պարտք էին առնում մատավորապես 25—100 դուռուշ, վճարելով 20 տոկոս շահ: Սա կոչվում էր փախուս և մաս-մաս ուղարկվում էր Պոլսից: Պարտք առնողը հաճախ սրբավ էր զնում յուր արտը, որ պարտատերը շատ անգամ գրավում էր, մինչ իսկ պարտքը վճարած զեպրում: Մշակութային դիմածները սովորաբար 7 տարի զեպրում էին Կ. Պոլսում, ապրելով եռ ընկած խաներում և վատ շրջաններում: Այս 7 տարիների ընթացքում նոքա հազիվ կարողանում էին իրենց պարտքը շահովն հանդերձ վճարել և տարեկան 10—20 դուռուշ տուն ուղարկել, իսկ նոցա ընտանիքները թեև կարողանում էին ամուսնու ուղարկած գուժարով վճարել արքունի հարկերը, սակայն զրկված լինելով ուտեստ մատակարարող ձեռքերից, սաստիկ աղքատության էին մատնվում և այս, մասամբ էլ այլ, պատճառներից անբարոյականանում էին: Նորահարսերի ապօրինի դավաճանները կամ ձղվում էին եկեղեցու դուռը և կամ խեղդվում անզգորեն: Յոթը ձիվ տարիներից հետո մշակութային գիմած առույզ երիտասարդի կամ մահվան բոթն էր գալիս, կամ ինքը վերադառնում արդեն ուժահատ և բարոյապես թուլացած:

Ժողովուրդը բացի վերոհիշյալ պարտքերը վճարելուց պարտավոր էր պահել և դալին ու հայրին՝ փաշի զորքին:

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ամբողջ Ռուսահայաստանը և Անատոլիան կառավարվում էր մի սերասկիրով, որ նստում էր էրզրումում: Նրան ենթարկվում էին ինչպես զինվորական, այնպես և քաղաքային գործերը: Նա նշանակում և փոխում էր գավառապետներին, որոշում էր հարկերն ու տուրքերը, արձակում մահվան վճիռներ:

Այս պաշտոնը ամենանշանավոր պաշտոններից մինը լինելով, շատերը ցանկանում էին ստանձնել, ուստի և մեծամեծ կաշտոքներ առյուծ միայն կարողանում էին հաջողացնել, և, հասկանալի է, որ այս սվածները պիտի հանեին ժողովրդից:

Ռուս-տաճկական պատերազմի ժամանակ սիրասկիր նշանակված էր Հալիբ փաշան, որ նստելու էր 1-ինի ժամանակ որպես Բ. դռան պատգամավոր երկար ապրել էր Փարիզում և մի առժամանակ եղել էր վեդիր:

Գյուղական կառավարություն

Յուրաքանչյուր գյուղ յուր առաջավոր ծերի միջոցով de jure և աղայի en facto հաճությամբ ընտրում է մի տանուտեր, քահանա, որ անվարձ և անժամանակ ծառայում էր, մինչև մի վատ գործի համար չեռացվելը:

Հայ և թուրք խառն բնակված գյուղերում Բեհան լինում էր հայերից կամ թուրքերից, նայելով թե ում ավելի ձայն կտային, կամ ումից ավելի կաշտոք էր անել աղան, իսկ եթե համաձայնություն չկայանար՝ կրնալին հրկու բեհա, յուրաքանչյուրը յուր ազգից, յուր համար, սակայն այս շատ հազիվ էր պատահում:

Քեհայի պիտավոր պարտականությունն էր կառարել տալ փաշայի և աղայի հրամանները, օգնել հարկը հավաքելուն, հավաքել դայու և լույսի համար գարի, բուժանել դային ու հայթին աները և դատ կտրել:

Հասարակ գանդատները նա մեծակ վերջացնում էր, փոքր ինչ ծանր պանդատի համար նա հրավիրում էր գյուղի առաջավորներին ժողովի և նոցա միջնորդությամբ վերջացնում: Եթե հաշտություն չկայանար, քեհան գանդատավորին և մեղադրվողին տանում հանձնում էր աղին կամ բողաք՝ դատարանին, դատուն կամ մուֆթուն: Իսկապես գյուղի տերը և կառավարիչը նրա թուրք կալվածատերը՝ աղան էր: Հողի մեծ մասը աղային պատկանելով ժողովրդի մի մասը նրա մարնպան, մյուսն էլ նրա պարտուպանն էր, հետևապես և նրա հյու ծառաները: Եվ այս պատճառով էլ աղան բացի կալվածական իրավունքից օգտվում էր և վարչական իրավունքով: Նա դատ էր կտրում և մեղավորից տուգանք առնում լողուս յուր գրգանի, փախախա զնում և բանտարկում մի բանի օր յուր գրմում:

Բացի կալվածական արդյունքներից, որոնց մասին խոսեցինք, նա ժողովրդից ստանում էր և այլ տուրքեր:

Սրինակ նշանադրությունից ստանում էր մի ուխար և հարսանիքից մի հոխա շայֆա, օտար գյուղից ազգիկ անելիս աղայից՝ մի ուխար, նշանավոր տոներին՝ զայֆա և գաններ իբր ընծա և այլն:

Միևնույն ժամանակ կատարել էր տալիս և ձրի ծառայություններ, սրինակ, գյուղը պիտի բերեր աղայի փայտը, ջարդեր, դարաներ, շիներ նրա բնակարանը, ձի կամ սալ տար, որ նրա խանութները տեղ զնա-

յին: Գյուղի հարսները պիտի գզեին աղաչի բուրգը, բնաղուն անեին նրա ցորենը, քաղհան անեին նրա բանջարանոցը և այլն:

Մինչև անգամ աղան կաշառք էր առնում երիտասարդից և նրան մերժած աղջկան և առավելապես հարսին ստիպում ամուսնանալ այդ երիտասարդի հետ: Բայց սոցա փոխարեն նա էլ պաշտպանում էր գյուղացիներին, երբ սոքա ուխտատեղիներում կռվում էին ուրիշ գյուղացիների հետ, որ հաճախ պատահում էր, հսկում էր բարոյականության վրա: շքում էր գյուղում և եթե տեսներ մի հայ հարս դուռը կանգնած, յափուշը քանդած, կկանչեր ամուսնուն և հանդիմանելով կպատվիրեր խիստ պահել կնոջը, կհանդիմաներ նաև եթե տղամարդը կնոջ ձեռքը բռնած պարեր, կամ ձութ ծամեր:

Դալի և հայքա

Ժողովուրդն ընդհանրապես գոհ էր աղաներից, գոհ էր և սուլթանից, միայն սաստիկ նեղված էր դալիից ու հայթից և փաշի ստորին պաշտոնյաներից:

Դալին և հայթան ամբողջ ձմեռը մնում էին առավելապես հայ գյուղերում, իսկ ամառը ամեն ամիս գալիս 5—20 օր մնում, գնում, երբ դոցա գունդը երևար, քեհան ընդառաջ պիտի ելներ գյուղի մարդկանցով, որ պատվով իջեցներ նոցա, ձիաները բռնել տար՝ և ապա բաժաններ տները՝ նոցա ունեցած հողի բանակության համեմատ:

Դալիի ու հայթի ձայնը լսելուն պես՝ իրարանցում էր տիրում ամբողջ գյուղում, աղջիկները, հարսները և երեխաները իսկույն պահ էին մըտնում: Բայց որովհետև դալին կամ հայթան բռնության մաս էին գալիս տան բուրբ անկյունները, այդ պատճառով սոցա առավելապես պահում էին խորի մեջ փաթաթած և տնկած, ծալքի ետևը, մառանում և այլն: Սակայն և այնպես շատերի անմեղությունը դոհ էր լինում այդ բարբարոսների բռնության: Ոչ ոք չէր համարձակվում ընդդիմադրել դոցա, որովհետև բավական էր մի թույլ ընդդիմադրություն, և դալին կամ հայթան կխփեր կսպաներ, առանց ինքը պատժի ենթարկվելու:

Բազմաթիվ տխուր դեպքերից հիշենք մի քանիսը:

Ձինիս գյուղում օրիորդ Սառայի պառավ հողդիկինը կաշառվելով դալիներից Սառային հանում է խորի միջից և տանում ձիթհանք, այս-

տեղ նրան բռնում են դալիները, և երբ Սառան ընդդիմադրում է նոցա, նոքա կտրում են նրա գլուխը, ձգում ձիթհանքի ավաղանը, իսկ մարմինը քաշ տալիս, ձգում կալը: Աղջկա ծնողքը գանկելով մարմինը, տանում են էրզրում և զանգատվում փաշին, սակայն սա բոլորովին ուշադրություն չի դարձնում:

Հայթաների մի խումբ էլ գողանում և պահում է մի սիրուն երեխա, երբ գյուղացիք իմանում և պահանջում են՝ սպանում են երեխային և տալիս նրանց ձեռքը: Ժողովրդի ջանքը՝ հայթաներին պատժել տալու, ապարդյուն է անցնում:

Հենց որ ցրվեցան դալին ու հայթան տները, իսկույն տնեցիք փռում դարդարում են օղաները, գոմը լավ ավելում, ձիաները կապում, տակը մի թիզ խուշկի ածում, գնում ջուր կրում, որ ձիերը ջրեն, ձմռան սարսափելի ցրտին գյուղացիք իրենք ջուր պիտի կրեին, որ դալու կամ հայթի ձիերը ջրեն: Թույլ չէին տալիս, որ ձիերը տանեն ջրելու: Երբ բերում էին ջուր դալիալաշին (գլխավորը) թույլ չէր տալիս ջրելու «Դիշ փարաջի վերքի իջան, գլավոր» — ասում էր նա, այսինքն՝ ատամի փող (խմելու վարձ) տուր, որ խմե, անհավատ: Գյուղացին անճարացած հանում մի երկու դուրուշ կամ մի երկու դուլգ գուլպա էր տալիս դալիպաշուն, որ թույլ տար ձիուն բարեհաճել ջուր խմելու: Ձիաները ջրելուց հետո գյուղացին գնում գյուղական դալու և հայթի ձիաների համար հավաքած շտեմարանից դարի բերում, լավ մաքրում, տալիս ձիերին: Տնեցիներից մինը կանգնում էր ձիերի մոտ, որ անդազար տակերը սրբե և խուշկի ցանե:

Ձիերի հոգսից աղատվելուց հետո դալիպաշին մտնում էր ոչխարանոցը և առանց տիրոջը հարցնելու ընտրում ամենալավ խոյը և խփում գետնին մորթելու: և դեռ այս բավական չէ՝ «գանակը քոռ է, գլավոր, փող տուր, որ սրնա» հրամայում էր գյուղացուն: Վերջինս վիզը ծռած հանում էր յուր հոգեպահուտ մի քանի փարան կամ դուռուշը և տալիս, որ յուր քրտինքի գին սիրելի խոյը մորթեն, ուտեն: Մորթում էր խոյը, միսը չավուշը տանում պահում էր, թոնիրը վառել տալիս և սկսում կերակուր պատրաստել, անխնայաբար պահանջում և գործածում էր յուղ, հավկիթ, ձավար, բրինձ, էրիշտա և այլն: Եվ եթե տանտիկինը խնայեր և քիչ բերեր, բերածը կածեր թոնիրը և ամանը տանտիկնոջ դլխին տալով կհրամայեր շատ բերել: Եյր կերակուրները կպատրաստվեին, չավուշը փող կուպեր տանտիրոջից, որ տանի խոնչան դնե և հաց տա ուտելու դալուն կամ հայթին: Մի քանի փարա կամ դուրուշ կամ մի դուլգ գուլպա էլ կտալին սրան, կտաներ հացը կզեներ: դալին կամ հայթան կբուրբեր խոն-

7 10 դալի իջել են Թվանճ գյուղի Արթնի մոտ, երբ սա չէ կարողացել շատով մարդիկ հավաքել, որ սոցա ձիաները բռնեն ման ածեն, դալիալաշին քարով խփել կհամեռ վայր է ձգել Արթնին:

չի շուրջը, բայց հացին ձեռք չէր տա: Տանտերը դեմերը կկանգնեի նոցա ծառայելու:

«Տե՛հ, դի՛շ փարասի վեր քի յյախ» — կասեր գլխավորը: Տանտերը կհաներ մի քանի դուռուշ կամ մի դուռ սոնապան (պահիճ) և տալով գլխավորին կազաչեր բարեհաճել բերանը բանալ այդքան քշով, որովհետև ինքը աղքատ էր և միջոց չունեի ավելի տալու:

Վերջապես կուտեին ճաշը, բայց վաչ էր եթև շհավանեին կերակուրը, ուղղակի կվերցնեին ամանն ու կտալին տանտիրոջ գլխին: Այս պատճառով էլ գյուղացին յուր բոլոր ուտելիքներին ամենալավ մասը պահում էր դոցա համար: Եվ այդպես էլ կանեին ընթրիքը, զուրս կերթալին դյուղի մեջ ման գալու, որ հարս ու աղջիկ, սիրուն տղաներ տեսնեն...

Երեկոյին կպահանջեին բոլորովին նոր անկողին և եթև շքերեին՝ սաստիկ կծծեին, մինչև որ դրկցներից գտնեին բերեին, կամ կդիջանեին նոցա սաստիկ աղաչանաց և երգման, թե շունեն: Թեև նոքա չունենալ, չկա բառը չէին հասկանում և անպայման պահանջում էին ուզածները բերել: Այսպես, Ըղտածոր գյուղում ձմեռը մի դալիպաշի շորացած թուփ է պահանջում, և երբ չեն կարողանում գտնել բերել, հրացանը առնում և ընկնում է կանանց հետևից: Երեք տեղերկնիկներ փախչում են տուն և դուռը փակում, դալիպաշին արձակում է հրացանը, զնդակը ծակում է դուռը և սպանում երեք կանանց էլ, որոնք դռան դեմ էին ընկել, բանալն արգելելու համար: Մարդասպան դալիպաշին անպատիժ թողնում հեռանում է:

Գրեթե նույն տեսակ նեղություններ տալիս էին քաղաքացվոց ենիչերիները: Այսպիսի նեղություն տալիս էին և փաշի բեռնակիրները (խարմանտարները): Մյուս կողմից շրջակա գավառներից գալիս էին քրդերի ավազակախմբեր և քշում տանում գյուղացվոց հոտերը:

ԿԱՐԱՊԵՏ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Մանկուրյունը⁸

Տանութերորդ դարի վերջում Բարձր Հայքի Սպեր գավառի Հուսուտ գյուղում ապրում էր Կարապետ Եղիկօղլի անունով մի հայ մարդ: Սա իր ահագին հարստությամբ, իմաստությամբ վարկ և անուն էր հանել, որ էրդրումի փաշան դրան նշանակել էր այդ գավառը կառավարող

ուժը դատավորներից մինը: Կարապետ Եղիկօղլին դատավարությամբ այնքան համբավ էր ստացել, որ օսմանցիք «Հայ թագավորացն» էին կոչում դրան և այս օտառուք այնքան ոգևորել էր նրան, որ թողել էր յուր Եղիկ-Օղլի ազգանունը և կոչվել Բագրատունի: Սա ուներ Գրիգոր և Հարություն անունով երկու որդի, որոնք հասարակական և տերունական պաշտոններ չէին վարում, այլ պարապում էին վաճառականությամբ: Գրիգոր Բագրատունյանը արքուն հասակի մեջ սիրահարվել էր Մահտեսի Թորոս Փոտյանցի Արեգնազան անունով 13 տարեկան գեղեցիկ աղջկան, սակայն չէր համարձակվում ուզել, որովհետև օսմանցի իշխանավոր մարդիկ, որոնցից գլխավորն էր Մեհմետ Գերեբեգի (գավառապետ), նույնպես սիրահարված էին Արեգնազանին և որոշած էին բռնությամբ ձեռք բերել նրան, եթե սիրով չհաջողացնեին. մեկ էլ որ նրա պառավ մամ Զանազան խանուժը միշտ զգուշացնում էր նրան չընկնել օսմանցիների հետ, ավելցնելով միանգամայն, թե յուր թոռանը (Գրիգորին) «լայիզո՞ղ» բան է առնել աղքատի աղջիկ: Մի երեկո Թորոս Փոտյանցը լսում է, որ Մեհմետ աղա Գերեբեգի մարդիկը շատ անցուդարձ են արել իրենց տան առջևից, երկյուղ է կրում, թե մի գուցե նույն դիշերը հարձակվեն յուր տան վրա և աղջկանը փախցնեն, ուստի և գնում աղերսում է Զանազան խանուժին, որ եթե ոչ ի սեր յուր թոռան, գոնե ի սեր քրիստոնեության, փրկե յուր աղջկանը՝ Արեգնազանին: Զանազան տիկինը, որ մինչև այդ ժամանակ հակառակ էր Գրիգորի և Արեգնազանի ամուսնությանը, այժմ ցանկանալով թույլ շտալ օսմանցիներին հավատափոխ անել մի հայ աղջկա, մի քանի կտրիճ մարդկանց առաջնորդությամբ և Թորոս Փոտյանցի խնամակալությամբ նույն գիշերը յուր թոռան՝ Գրիգորի հետ փախցնում է էրդրումի Կան գյուղը և հայրական կարողության մեծ մասը տալիս նոցա: Կան գյուղում Գրիգորը պսակվում է և փոխադրվում էրդրում, ուր պարապում է վաճառականությամբ: Կարճ միջոցից հետո վախճանվում է Զանազան խանուժը, և Գրիգորն իր Հարություն եղբորն ու Ավետիս աներորդուն հրավիրում է էրդրում, իր մոտ: Գրիգորն ու Արեգնազանը ունեցան երկու արու որդի, որոնցից անդրանիկը՝ Հովհաննեսը ծնվել է 1779 թվի մայիսի 18-ին:

Բոլորովին հայտնի չէ, թե ինչպես անցկացրեց Հովհաննեսը յուր մանկությունը, միայն հազիվ տասը տարեկան է եղել, երբ ժանտախտից վախճանել են նրա հայրն և փոքր եղբայրը, Արեգնազանը ամուսնացել է մի ուրիշի հետ, սակայն վեց ամսից հետո ինքն էլ է մահացել, և Գրիգոր Բագրատունյանի ամբողջ կարողությունը, ընայելով նրա արած կտակին, անցել է Թորոս Փոտյանցի, սրա որդի Ավետիսի և Արեգնազանի

⁸ Բացի բազմաթիվ ձերբանկարի պատճառներից, օգտվել եմ և հայր Գեղամյանի ու Պոտոսի գրություններից: 428

երկրորդ ամուսնու ձեռքը: Հովհաննեսը բոլորովին զրկվում է հայրական ժառանգութունից և խորթ հոր խնամքով տրվում է Հակոբ անունով մի մետաքսազործի մոտ ծառայելու և արհեստ սովորելու: Բայց որովհետև Հովհաննեսի սրտովը չէր, ուստի և վարպետի մոտից հաճախ փախչում էր, որի համար և վարպետը նրան սաստիկ թակում էր: Այս միջոցներում, երբ Հովհաննեսը հաղիվ տասներկու տարեկան կլիներ, կիմ անապատից մի վարդապետ գալիս է էրզրում: Հովհաննեսը սրա հետ գնում է էկին և հայ վիճակի առաջնորդ Միքայել արքեպիսկոպոսի մոտ սպասավոր մտնում: Սրա մոտ Հովհաննեսը սովորում է հայերեն գրել ու կարդալ, և ծածուկ կարդալով եպիսկոպոսի գրքերը, ինքնուրունաբար զարգանում է: Միքայել արքեպիսկոպոսը նկատելով, որ Հովհաննեսը մեծ ընդունակություն և շատ սեր ունի գեպի ուսումը, յուր հաշվով 1788 թվին ուղարկում է Կոստանդնուպոլիս, ուր նա այն ժամանակվա գիտնականների մոտ սովորում է քերականություն, ճարտասանություն, տրամաբանություն, աստվածաբանություն և օսմանյան լեզու:

Կարապետ կուսակրոն

Հովհաննեսը յոթ տարի շարունակ ուսանում է և հետո, 1795 թվին վերադառնում է էկին, Միքայել արքեպիսկոպոսի մոտ, որ մի քանի տարվա ընթացքում ձեռնադրում է նրան դպիր, էրզրումի Ս. Աստվածածին վանքումը սարկավագ և ապա 1801 թվին էկին քաղաքի Ս. Գևորգ եկեղեցում վարդապետ, փոխելով նրա անունը Կարապետ: Կարճ ժամանակից հետո Միքայել արքեպիսկոպոսը նշանակում է Կարապետ վարդապետին «ընդհանուր կարավարիչ» էկինի և էրզրումի բոլոր եկեղեցական կարվածների վրա: Սրա նախորդ Հակոբ վարդապետը ռիսակալում է Կարապետ վարդապետի դեմ և Միքայել արքեպիսկոպոսի մահից հետո, 1804 թվին կազմում է մի բավական ղորեղ կուսակցություն՝ Կարապետ վարդապետի վարկը ձգելու ժողովրդյան աչքում և ստանալու ինչպես եկեղեցական կարվածների կառավարությունը, այնպես և թեմի առաջնորդությունը: Սակայն այս բանը նրան չի հաջողվում, որովհետև Կարապետ վարդապետը յուր անխոնջ և արդյունաշատ գործունեությամբ դրավել էր ժողովրդի մեծամասնության համակրանքը, որոնք բողոքում էին Հակոբ վարդապետի ամիրա և էֆենտի կուսակիցների դեմ: Վերջապես համաձայնություն է կայանում Հակոբ վարդապետի կուսակիցների և ժողովրդյան մեջ, որ առաջնորդ լինի Հակոբ վարդապետը, իսկ եկեղեցական կարվածների կառավարիչ մնա դարձյալ Կարապետ վարդապետը:

Սակայն, վերջինս հասկանալով, որ Հակոբ վարդապետի մտադրությունն է առաջնորդ կարգվելուց անմիջապես հեռացնել իրեն եկեղեցական կարվածների կառավարությունից, ուղղակի գնում է Պոլիս և 1808 թվի օգոստոսի 21-ին, Հովհաննես պատրիարքից առաջնորդ է նշանակվում և սուլթանի հրովարտակով հաստատվելով, վերադառնում է էրզրում:

Այստեղ նրա առաջին գործը լինում է բարվոքել վանքերի անտեսական դրությունը, քարոզիչներ նշանակել գյուղերում, և հետո Հակոբ ամիրա Մամիկոնյանի հետ գալիս է Ս. էջմիածին, ուր 1811 թվի նոյեմբերի 2-ին Եփրեմ Կաթողիկոսից արքեպիսկոպոս է ձեռնադրվում և վերադառնում էրզրում:

Ս ո Վ

1811 թվին էր բումում սաստիկ սով է ընկնում, որովհետև սաստիկ երաշտից երեք տարի շարունակ ցանքսերը լավ չէին եղել: Ժողովուրդը վերագրելով այդ մեղքերին, պոռնիկներին հալածում էր, միմյանց մեղադրելով կովում էին, շները քաղցածությունից կատաղում էին և այսուայնկողմ վազելով մարդկանց խածոտում. մարդիկ արտերում թափառելով հավաքում և ուտում չին ատուղ, բանջար, կոճղեղ, մատուկ, քյուշնա, ձիթհանքերը թափառելով խլիլում և ուտում էին կոպտոնը՝ ձեթը հանած կտավատի մնացորդը: Իսկ մի մեծ բազմություն լուսաբացից իսկ սպասում էր մսավաճառի խանութի առաջ, որ եթե չկարողանա գնել մի կտոր միս, գոնե փորտիքն ու աղիքները ձեռք բերե, սովատանջ աղքատները պարզում էին ձեռքերը, որ գոնե մի բուն արյուն խմեն, բայց որովհետև սոցա թիվն էլ շատ էր, միմյանց մղում, կովում էին, թուլները ոտի տակ գնալով՝ փողոցում ընկնում մեռնում էին, իսկ որոնց հաջողվում էր մի աման արյուն ստանալ, տանում էին տուն, լցնում հոացրած ջրի մեջ, ուր մակարովում պնդանում էր, և ուտում էին:

Մի քանի մայրեր սովի ճիրաններից ազատվելու համար իրենց որդոցը զարու և ցորենի հետ փոխում էին: Կարծախցի Գրիգորյանց Ստեփանը երեք կոտ գարով փոխած է:

Գեռ մինչև այսօր չէ էրզրումի գաղթականները, որոնք սարսափելով պատմում են սովի տառապանքները, ամենայն օր աղոթում են.

Երկինք գետին ստեղծող,
Քեզնից խնդրեմ կը
էրկնուց ցող,
Գետնուց պտուղ,

Հացին ածնութուն,
Մահին թանգութուն,
Մահ տու, սով մի տա:

Ահա այս սատապանքների ժամանակ ժողովրդյան օգնության է հասնում Կարապետ արքեպիսկոպոսը, որ Հակոբ ամիրալի և ուրիշ մեծատունների օժանդակությամբ բաց է անում մի աղքատանոց, ուր 180 աղքատ սնունդ և հանդերձ էին ստանում, իսկ ուրիշ աղքատների նա ալյուր, ցորեն և գարի էր բաժանում յուր կառավարիչ եղած ժամանակ սահմանած եկեղեցական շտեմարաններից:

Վերջապես նոր նշանակված Բալյուլ փաշան կանչում է շտեմարանատերերին և աշխատում է համոզել նոցա բանալ և փոքր ինչ էժան վաճառել իրենց ամբարած ցորենն ու գարին, սակայն նոքա ցանկանալով ավելի երկար պահել, ավելի թանկ ծախելու հուսալով, խաբում էին նրան, թե բոլորը սպառվել է: Փաշան մյուս օրը ծպտված շրջում և տեղեկանում է, թե ուր կա պահված ցորեն ու գարի: Հետևյալ օրը նա ստիպմամբ հանել է տալիս և հրամայում է սոմառը փոխանակ 180 զուռուշի, 80 զուռուշի ծախել: Երկու թուրք շտեմարանապետեր խելազարվում են, բայց ժողովուրդը ցորեն է ստանում, ցանք անում, որով և սովը վերջանում է: Երախտագետ ժողովուրդը գեռ մինչև այսօր էլ հիշելով այդ փաշային, ավելացնում է, թե նրա գերեզմանի հողը կաթ կմակրթե:

Ազգային գանձանակ

Ժողովրդի տառապանքը միայն սովի ժամանակ չէր, առատության տարիներին էլ նա մեծ նեղություն էր կրում տիրապետող տարրից: Վիճակի շատ եկեղեցիները պարտքի տակ էին ընկած, մի քանիսն էլ գրավված էին թուրքերից: Հարկահանները նեղում էին ժողովրդյան, բանտարկում և ավելի էին պահանջում: Կարապետ արքեպիսկոպոսը, որ արթուն հսկում էր յուր հոտի վրա, ազատում է նրան և այս նեղությունից՝ նա վանքապատկան արոտատեղիներում պահել է սալիս բազմաթիվ նախիրներ և հոտեր, որոնց սոված արդյունքով ազատում է պարտքից Ս. Աստվածածնի վանքը և մի քանի ուրիշ նշանավոր ուխտատեղիներ, վերանորոգում ու պարսպապատում Ս. Լուսավորիչ և Ս. Խաչ վանքերը: Բացի սրանից հիմնում է միջազգային գանձանակ, որի մեջ ամենայն օր յուրաքանչյուր արհեստավոր և վաճառական ձգում է յուր առևտրից ստացած փողի տասներորդը, որով և վճարվում էր արքունի հարկը և խնամվում մի քանի աղքատ:

Կարապետ արքեպիսկոպոսը, հասկանալով կրթության նշանակությունը, էրզրումում բաց է անում Կարապետյան ուսումնարանը, որի համար հրավիրում է Պոլսից Հովհաննես (Արզար մականվանյալ) վարժապետը, Շեքերճյան Գրիգոր պատվելին, Կարապետ վարժապետ Վանեցին, Գևորգ պատվելի Տեր-Հովհաննիսյան և վերջերում Կարապետ Չմշկյան: Նա յուր իմաստալից քարոզներով համոզում էր ծնողներին ուղարկել իրենց որդոցը դպրոց և շքավորներին բացի իրեն խնամոց տակն աննելուց, ծնողներին էլ ամսական մի քանի կոտ ցորեն գարի էր տալիս, որ որդոցը դպրոցից շահեն, նոցա արհեստի, ծառայության տալու, նոցա շնչին ոռճկից իրենք օգտվելու նպատակով:

Ժ ա ն ա խ ս

1825 թվին ժողովուրդը նորից սկսում է տանջվել «բարի բան» կոչված տարափոխիկ հիվանդությամբ. մարդկանց բուկր ուռչում էր, եթե ներսից էր լինում՝ երեք օրում խեղդվում էր, իսկ եթե դրսից՝ առողջանում: Թժիշկ բուրդովին շիար, միայն քահանան ավետարան էր կարդում հիվանդի դիտին: Հարյուրավոր մարդիկ մեռնում էին անօգնական, և մեկ կողմից այս դժբախտությունները, մեկ կողմից հայթայի և դալու պատճառած նեղությունները, մյուս կողմից կրոնական հալածանքն ու տիրապետող տարրերի ճնշումը կտրում էր ժողովրդի սերը հայրենիքից:

Ռուս-տանկական պատերազմ

1828 թվին հրապարակվում է Ռուս-տանկական պատերազմը, և հայերն իրենց փրկությունը սկսում են հրազել ռուսներից, որոնց նոքա հրեակաշում էին որպես «հայ-քրիստոնյաներ», իրենց «շեկ քեռիներ», որոնք պիտի գային և իրենց ազատեին...:

Ռուսաց զորքը հետզհետե հաղթանակներ էր տանում և հառաչում դեպի Արզրում, հայերը չկարողանալով իրենց ներքին ուրախությունը զսպել, կասկածանաց տեղիք էին տալիս, և երբ ռուսները Ախալցխան առան, թուրքերն իրենց բնատուր երկչուությամբ և անվստահությամբ սկսան կասկածել թե մի գուցե հայերը միանան ռուսների հետ և իրենց ավելի ծանր դրության մեջ ձգեն, վհատած սկսան զանազան պատճառներ պատրել էրզրումի և բոլոր վիճակի քրիստոնյաներին կոտորելու: Բայց

նախ և առաջ հարկավոր էր սպանել հայերի պաշտպան և ներկայացուցիչ Կարապետ արքեպիսկոպոսին:

Եվ ահա մի կիրակի օր երկու զինվոր (ղավազ) գալիս են եկեղեցի և իմացնում են Կարապետ արքեպիսկոպոսին, թե՛ փաշան շտապով կանչում է նորան: Սա ստիպվում է թողնել Ս. Պատարագը, շոքում է սեղանի առաջ, արտասվելով համբուրում է Ս. Խաչը և զինվորների հետ զնում է զեպի փաշայի պալատը: Ժողովուրդը տեսնելով այդ անսովոր հրավերը և իրենց «մեծավորի» հուզվելը և արտասվելը, սարսափում և քաշվում ամրանում է իրենց տները:

Կարապետ արքեպիսկոպոսը յուր մտերիմների միջոցով արդեն լսել էր տաճիկ մեծամեծների մտադրությունը և կարծելով թե արդեն իրեն սպանելու են տանում, սաստիկ վախենում է, պատուվում է ներքին շքրթունքը և այդ ճեղքից ու քթից հորդությամբ հոսող արյունը ապականում է միրուքն ու վերարկուն, իսկ ինքը բուրդովին անզգայացած հեծում է և ուխն չի զգում, մինչև որ յուր հավատարիմ Գևորգ սպասավորի բերած ջրով սթափվում է և լվացվելով մոտակա աղբյուրում, մտնում է փաշայի սարայը: Այստեղ սերասկյարի նախագահությամբ զինվորական խորհրդի էին հավաքվել զինվորական և քաղաքական մեծամեծ պաշտոնյաները, որոնց սովորական ողջույնը տալուց հետո Կարապետ արքեպիսկոպոսը կանգնած սպասում է յուր դատապարտության և վճռին: Ժողովը յուր խորհուրդը վերջացնելուց հետո հայտնում է նրան, թե՛ որովհետև նա յուր ժողովուրդը վատ է կրթել, որ երեկյան օրը խանութները կողպել և քաշվել տները խորհուրդ են արել օսմանցիներից ապստամբելու, ուստի զինվորական խորհուրդը վճռել է բոլոր ժողովուրդը սրի անցկացնել և նախապես նոցա եպիսկոպոսին սպանել:

Կարապետ արքեպիսկոպոսը հայտնում է, թե հայերը կողպել էին խանութները, հետևելով օսմանցիներին, որոնց հակառակ վարվելը հանդրադրություն կլիներ:

Սակայն փաշան բարկանում է և ասում, թե՛ օսմանցիք կարող են փակել, որովհետև նոքա տանը նստած որոգայթ չեն լարե տերության դեմ:

— Երբ հայերի կողմից տերությանը մի որևէ վնաս հասնի, ես ինքս կլինեմ պատասխանատու, — պատասխանում է Կարապետ արքեպիսկոպոսը, — իսկ եթե նոցա խանութներ փակելը հաճելի չէ Ձերդ վսեմության, հրամայեցեք, ես իսկույն բանալ կտամ:

— Այ բաշադան գեշմիշ (լուսնյակն երդկից անց է կացել, ուշ է ար-

դեն), — գոռոզաբար պատասխանում է փաշան, — զինվորական խորհրդի որոշումը պիտի կատարվի:

Այս խոսքը Կարապետ արքեպիսկոպոսի վրա սարսափ է ձգում, և նրա պատուված շքրթունքից նորից արյուն է հոսում:

Միլեյտար Ահմատ աղան տեսնելով արքեպիսկոպոսի դրուժյունը և լսելով ճանապարհին պատահածը, խղճում է և համոզում խորհրդին փոխել վճիռը, Կարապետ արքեպիսկոպոսից առնել փրկանք, իսկ ժողովրդին աշխատեցնել արքունի ծառայությամբ, որ ժամանակ չունենա այդպիսի «փինթի» բաների վրա մտածելու:

Կարապետ արքեպիսկոպոսը իսկույն յուր փոքրավորի ձեռամբ բերել է առաջ 40 քիսա դրամ (մի քիսան 550 դուռուշ) և մի ձի, հանձնում է փաշային և հրաման ստանալով քաղաքի շուրջ ժողովրդյան խրամ փորել տալ, ուրախացած վերադառնում է տուն, կանչում է յուր ժողովրդյան և համոզում է գնալ քաղաքի շուրջը խրամ փորել:

Սրկու ժամից հետո էրգրումի աշխատելու ընդունակ հայ բնակիչները բա՛հ, թի, փետատ առած գնում են քաղաքի շուրջը խրամ փորելու: Կարապետ արքեպիսկոպոսն էլ ժամկուշի շորքը հագած երեք օր շարունակ փորում է ժողովրդյան հետ, հետո զինվորական խորհրդի որոշմամբ ձի նստած խրամների վերակացու Ղելիբ փաշայի հետ շրջում և խրախուսում է ժողովրդին, որը թողած յուր օրական պարենը հայթայթող արհեստան ու առուսուրք, առավոտվանից մինչև երեկո աշխատում էր արքունի խրամի վրա:

Հայր Գեղամյանը թուրքերենից թարգմանել է այն երգը, որով հայ ժողովուրդը հայտնել է յուր տխրալի վիճակը. առաջ ենք բերում այն ամբողջությամբ.

Մոսկովը (ոռուք) հասավ էրգրումին,

Վալը եկավ հայոց գլխին,

Սաստիկ հրամանը վեզիրի

Քունը կտրեց մեր աչքերի.

Գնանք խրամը, խրամը:

Ձմեռ գուգա բուք ու բորան,

Մեր ընտանյաց հայն է յաման,

Թողինք գործերս ցիրուցան,

Եկանք հասանք ՚ի Ս. Նշան.

Փորենք խրամը, խրամը:

Բա՛հ, թի, փետատներ զիզվեցան,

Մեծ ու փոքր հիվանդացան,
Բն շիններ սուրբ օրհնություն (եպիսկոպոսի)
Ամենքին էլ հալն էր զուլում.

Փորենք խրամը, խրամը:

Արի, եղբայր, փորենք խրամ,
Հիմի կուզա Ղեկի փաշան,
Թող, ի՞նչ ես մտածում այդքան,
Աստված կլինի մեր պահապան.

Գնանք խրամը, խրամը:

Փետատը զարկինք ապառաժին,
Ջուր հանեցինք քարի միջին,
Բայց ձագուկներս մորը կշտին
Կարոտ մնացին ցամաք հացին.

Գնանք խրամը, խրամը:

Հայր սուրբ ահա հեծած յուր ձին
Կուգա, եղբայրք, երթանք աշին,
Նորա օրհնությունը մեր գլխին,
Աստված պահե կյանքն յուր անգին.

Գնանք խրամը, խրամը:

Հող ու մոխրում թավալվոր,
Միտք ու ուշքերս եղավ մոլոր,
Յաման, Հայր սուրբ, զուրբան քեզի,
Մեր ընտանյաց հոգսը քաշի.

Գնանք խրամը, խրամը:

Մոսկովն եկավ շարան շարան,
Ցա օխտանուն (Ս. Կարապետ) քեզի զուրբան,
Խնամք արա հայոց վերան,
Չմնաց մեր վրա շան.

Գնանք խրամը, խրամը:

Խրամի փորելը տևում է ամբողջ շորս ամիս, և այս երկար ժամանակամիջոցում հայ ժողովուրդը կրում է շատ զրկանք և նեղություն:

Շատ ընտանիքներ, որոնց ամուսինները աշխատում էին խրամում, ամբողջ օրերով մնացին քաղցած, և միայն Կարապետ արքեպիսկոպոսն էր, որ հավաքում էր այդպիսիներին ու ցորեն, գարի, ալյուր, յուղ բաժանում:

Հազիվ թե խրամները փորել վերջացրել էին, և ահա Կարապետ

արքեպիսկոպոսը մի նոր անասելի նեղության մեջ է ընկնում: Ամենայն հայոց Եփրեմ կաթողիկոսը մի կոնդակ է ուղարկում Կարապետ արքեպիսկոպոսին, որով պատվիրում է համոզել ժողովրդյան «որպես քրիստոնյաների՝ օգնելու ռուսներին, երբ նոքա էրգրումին կմտենան»: Այս կոնդակը ընկնում է փաշաների ձեռքը, որոնք նորից ատյան են կանչում Կարապետ արքեպիսկոպոսին: Սակայն սա նախապես իմանալով այդ բանը, կաշառում էր արքունի թարգմանին, որը ատյանի առաջ տարբեր իմաստով է թարգմանում կաթողիկոսի կոնդակը: Եվ թեպետ այս անգամ էլ արքեպիսկոպոսը ազատվում է մահից, սակայն դարձյալ տուգանքի, և ժողովուրդը նորանոր աշխատանքի է ենթարկվում:

Մի անգամ էլ փաշան պահանջում է Կարապետ արքեպիսկոպոսից հրեք օրվա ընթացքում 200 համետած ձի ճարել, զուրքի պաշարը էրգրումից բանակը տեղափոխելու: Չնայած որ քաղաքացիք արհեստներով ու առևտրով էին զբաղվում, և շատ քշերը ձի ունեին, այնուամենայնիվ Կարապետ արքեպիսկոպոսը յուր ժամկոչների միջոցով կարողանում է ճարել 200 ձի: Փաշան շատ շնորհակալ է լինում և հրավիրում է նրան սուրճի, սակայն արքեպիսկոպոսը հրաժարվում է, վախենալով, թե միգուցե թունավորված լինի:

1828 թվի նոյեմբեր ամսից մինչև 1829 թվի ապրիլ ամիսը տաճկաց զորքը ձմեռում է գյուղերում և տնտեսական մեծ վնասներ պատճառում առավելապես հայ ժողովրդին, իսկ հրե ռուսները Ղարսն առնում են, այդտեղից հետ փախչող ձիավոր միլիցիան մտնում է էրզրումի գյուղերը և թալանում առավելապես հայերին, որոնք երկյուղից լեռներն են փախչում:

Եվ երբ ռուսները դիմում են դեպի էրզրում, Օվալի քրդերը թալանում են հայերի գյուղերը և փախչում երկրի խորքերը:

Վերջապես՝ ռուսները Պասկևիչի առաջնորդությամբ մտնում են էրզրումին, առանց պատերազմի առնում են Հասան-Ղալան և բանակում 15 վերստ հեռավորությամբ:

Բեկովիչ զեսպանը ուղարկվում է էրզրում բանակցելու սերասկյարի հետ քաղաքը հանձնելու մասին: Բայց որովհետև Պասկևիչը ի միջի այլոց պահանջում էր, որ սերասկյարը և նրա փաշաները գերի համարվեին, ուստի սերասկյարը հրավեր է կարգում ժողովրդյան՝ պաշտպան հանդիսանալ հավատի և ընտանեկան սրբությունի: Եվ խաժամուժը ոգևորված ահագին աղաղակներով թափառում էր փողոցներում, հարձակվում Բեկովիչի տան վրա, կամենալով կտոր-կտոր անել նրան և պատահած քրիստոնյաներին իսկույն կեթ սպանում էր: Այս պատճառով էլ բոլոր քրիս-

տոնյաները ապաստանում, թաք են կենում նկուղներում և գետնափոր անցքերում, ինքը՝ Կարապետ արքեպիսկոպոսը երեք օր շարունակ պահվում է հայ Մանվելիօղլյանցի տան խոնավ նկուղում, որտեղ և գրում է մի նամակ կոմս Պասկևիչին և մաքսատան բեռնակիր Ֆերման անունով մի կտրիճ հայի տրեխներում հասցնում կոմսին: Այդ թղթի մեջ Կարապետ արքեպիսկոպոսը հայտնելով քրիստոնյաների վիճակը, միևնույն ժամանակ ցույց է տալիս թե ինչ ճանապարհով և ո՞ր կողմից պետք է հարձակվել քաղաքի վրա:

Վերջապես 1829 թվի հունիսի 27-ին երեկոյան ժամը 3-ին Այան ազա ամենածերունի պատգամավորը մատուցանում է Պասկևիչին քաղաքի բանալիները և մի հակիրճ ճառով հայտնում, որ էրզրումի ժողովուրդը լիովին անձնատուր է լինում նրան:

Այս լուրը մի վայրկյանում տարածվում է ամբողջ քաղաքում, և բոլոր թաքնված հայերը դուրս են գալիս իրենց թաքստյան տեղերից: Կարապետ արքեպիսկոպոսն էլ դուրս է գալիս խոնավ նկուղից, փոխում է հանդերձները և ձի հեծած, ձեռին խաչ, Շեքերճյան Գրիգոր պատվելուք ընկերակցությամբ դիմում է Ս. Նշան լյառը Պասկևիչին դիմավորելու: Որպես քրիստոնյա եպիսկոպոս նա իրավունք չունեք քաղաքի մահճակահան պատգամավորների հետ միասին գնալու, ուստի և միայնակ ընդառաջ է իջնում Պասկևիչին, Թոփ-տաղ լեռան վրայից խաչակնքում է ուսաց զորքը և մտահնում կոմսին: Սա խորին հարգանք ընդունում է նրան և գրկախառնվում:

Երեկոյան ժամը 5-ին ուսաց զորքը մտնում է քաղաք և տիրում բոլոր ամրություններին:

Հաշտություն և հայերի գաղթելը

Հանկարծ լուր է տարածվում, թե սեպտեմբերի 2-ին Ադրիանապոլսում հաշտություն է կայացել 12 դաշնագրությամբ, որով Ախալցխան, Ասպինջան, Քորլխանը, Անզորը, Խրթվիզը, Ախալթալաքը, Գյումրին, Անախը, Օֆ և Փոթին մնում են ուսաց, իսկ Ղարսը, Էրզրումը, Բալսուրթը և Բալազանը վերագարձվում են օսմանցիներին:

Ժողովուրդը, որ բոլորովին չէր սպասում ուսաների վերադարձին և այնքան նեղել էր թուրքերին, սարսափելի դրուժյան մեջ է ընկնում: Նա պարզ տեսնում է, որ ուսաները հեռանալուն պես՝ տաճիկները իրենց բոլորին կոտորելու են ի վրեժխնդրություն այն նախատիների և հալածանքի, որ նորա հասցրել էին նոցա: Եվ թեպես դաշնագրության է և ժՔ

հողվածները կյանքի և հավատի ապահովություն էին տալիս, և Մահապի Գևորգ ազա բալսուրդցի հարուստ վաճառականը մի քանի երևելի անձանց հետ այդ միջոցում Կ. Պոլիս գնալով Սուլթան Մահմուտից հրովարտակ էր բերել հատկապես հայերի ապահովության համար, սակայն ժողովրդյան սուաջավորները դիտեին, որ դոքա մնալու են որպես մեռյալ տառ, և թուրք ամբոխը յուր գիտեցածն անելու էր, ուստի ցանկացան գաղթել Ռուսաստան:

Կարապետ արքեպիսկոպոսը սկզբում հակառակ էր գաղթականության և այս մասին գրել տեղեկացրել էր պատրիարքարանին: Սրբազան Կարապետ պատրիարքը Բարդուղիմեոս եպիսկոպոսին ուղարկում է էրզրումի ժողովրդյան համոզելու՝ շղթթել: Կարապետ արքեպիսկոպոսը վշտանալով, որ պատրիարքարանը յուր վրա վստահություն չունեցավ, ուրիշին նշանակեց, վճռում է գաղթել և գաղթեցնել տալ հայ ժողովրդույն: Ուստի յուր իրավարանի մեջ դնում է սուր և խաչ, կանչում է գյուղերի քահանաներին և քեհաներին, քարոզում է նոցա գաղթել և ամփոփում է յուր քարոզը հետևյալ խոսքերով. «Ահա սուր և խաչ. ով ուզում է խաչը, թող հետևի ինձ, ով ուզում է սուրը՝ թող մնա»: Քահանաներն էլ խաչը, թող հետևի ինձ, ով ուզում է սուրը՝ թող մնա»: Քահանաներն ու քեհանները համաձայնում են գաղթել նրա հետ և գնում են իրենց ժողովուրդներին ևս նույնը քարոզելու: Հետո Թաղեոս և Հարություն վարդապետներին ու Զենիս գյուղի Տեր-Գրիգոր քահանային ուղարկում է գյուղերը նույնը քարոզելու:

Թաղեոս վարդապետը, Տեր-Սարգիս քահանան և Խաչատուր Գրիգորյանցը Կարապետ եպիսկոպոսից ուղարկված էին Ախալցխայի և Գյումրու կողմերը երկրի մասին տեղեկություններ բերելու. սորա էլ երևի կաշառված՝ վերադարձին համբավ են բերում, թե. «այնպիսի բարեխից երկիր է, որ զոշկիդ բուրդը թափե, բամբակ կոխե (լից). կորկոտի տեղ բրինձ կե. թամազ արուկի տեղ օրդուբադու արուկ կե»:

Ժողովուրդը հավատալով սոցա խոսքին, շտապում է թողնիլ յուր հայրենական բնակավայրը, յուր դարևոր աշխատանաց արգասիք՝ հայրենական բնակարաններն ու կալվածները, վայր թափել տան կահկարասիքը և գաղթել:

1830 թվի մայիսի 15-ին գաղթականների մի մեծ բազմություն Կարապետ արքեպիսկոպոսի սուաջնորդությամբ ճանապարհ է ընկնում դեպի Ռուսաստան: Բոլոր գաղթականների թիվը հասնում էր 14 000 ընտանիք⁹, մոտ 95000 հոգու, որոնցից 6500 ընտանիքը էրզրումից և նրա

⁹ «Собрание актов относящихся к истории Армянского народа», часть II, էջ 184.

փառաշուքից էին, 4200 ընտանիք Բայազետից ու նրա փառաշուքու-
նից, 2264 տուն Ղարսից և նրա վիճակից, իսկ մնացածները զանազան
կողմերից:

Այս գաղթականները փոքրիկ խմբակներ կազմելով ընտրում էին
իրենց միջից մի-մի առաջնորդ, ինչպես Հաճի Կարապետ Ֆարմանյանն
է: Ռուս կառավարությունից ևս ստանում էին 5—6 պահապան կողակ-
ներ և կամաց-կամաց, մեծ մասը տիղմի միջով, օրական 4 ժամ միայն
ճանապարհ գնում, — շարաթը մի անգամ երկու օր հանգստանում ավե-
րակ գյուղերում:

Այսպես ճանապարհին անպաստելի նեղություններ կրելով դալիս
հասնում են Ղարս, ուր մի փոքր հանգիստ անելուց հետ այստեղի գաղ-
թականների հետ գալիս են Գյումրի և Արփաշայի ափին բնակում: Այս-
տեղից արդեն էրզրումի գաղթականները Կարապետ արքեպիսկոպոսի
առաջնորդությամբ գալիս են Ախալքալաք, Ախալցխա և Սալկա, Ղարսս
գաղթականները մնում են Գյումրի և Փամբակ:

Թե Կարապետ արքեպիսկոպոսը և թե ռուս կառավարությունը բա-
վական օգնում են գաղթական հայ ժողովրդյան, բաժանելով նոցա ինչ-
պես փող, այնպես և ալյուր, ցորեն, սալիք և բեռնակիր անասուններու
Այսպես 1831 թվի ապրիլի 24-ին կայսերական հրովարտակով ընծայ-
վում է գաղթականներին 380 000 ռուբլի և իրավունք է տրվում զանձա-
րանից մինչև 1 500 000 ռուբլի դրամ պարտք տալ ալղ ժողովրդյան, չորս
տարուց հետո վեց տարվա ընթացքում վճարելու պայմանով¹⁰: Այսպես և
ճրիաբար բաժանվում է արհեստավորներին մետաքս, բամբակ, երկաթ,
պղինձ, գործիքներ և այլն:

¹⁰ «Собр. актов», часть I, էջ 61:

ՄԱՆՈՒԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ե. Լալայանի «Ծրկերի» առաջին հատորը բաղկացած է Ջավախքին
վերաբերող 3 ամբողջական հատվածից:

Առաջինը կրում է «Ջավախք» (նյութեր ապագա ուսումնասիրության
համար) խորագիրը, հրատարակված «Ազգագրական հանդեսի» Ա
(1896 թ., էջ 117—378), Բ (1897 թ., էջ 245—295), Գ (1898 թ., էջ 91—
104), Դ (1898 թ., էջ 159) գրքերում, ըստ որում, Ա և Բ գրքերի նյութերը
1897 թ. հրատարակված են առանձին գրքով՝ «Ջավախք» խորագրով,
արտատպված «Ազգագրական հանդեսից»: «Ազգագրական հանդեսի» Գ
գրքում զետեղված «Ջավախքի բանավոր պահանջությունից» 177 քառ-
յակ-վիճակի երգերի կապակցությամբ սողատակի նշումներից պարզ-
վում է, որ 1—91 քառյակները Ե. Լալայանի գրառումներն են, իսկ 92—
177-ը՝ Հ. Աղնատրյանինը: «Ազգագրական հանդեսի» Դ գրքում տեղ
գտած «Մածկալեզուներ» համառոտ նյութի առթիվ Ե. Լալայանը ոչինչ
չի նշում, բայց քանի որ նյութը վերաբերում է Ջավախքի տարածքին,
ուստի դա էլ միացրել ենք այս ընդհանուր հատվածին:

Երկրորդ ինքնուրույն հատվածը այս հատորի կազմում է «Ջավախ-
քի բուրմունք» ժողովածուն, որը լույս է ընծայել Թիֆլիսի Հայոց հրա-
տարակչական ընկերությունը («Ժողովրդական նյութեր» մատենաշարի
Բ գիրք), 1892 թ.: Ջավախք անվան վերաբերյալ Ե. Լալայանը ծանոթա-
գրել է՝ Ախալցխայի և Ախալքալաքի գավառ «Ջավախքի բուրմունք»
ժողովածուի առթիվ Գ. Վանցյանը «Մուրճ» ամսագրում (1892, № 7—8)
հրատարակել է գրախոսություն, որին պատասխանել է Ե. Լալայանը
նույն ամսագրի 1892 թ. № 10-ում: Ե. Լալայանի պատասխանում հանգա-
մանորեն լուստարանվում է «Ջավախք» աշխատության ստեղծման
պատմությունը:

Այս հատորի երրորդ հատվածը «Կարնո գաղթականություն» ան-
տիպ աշխատանքն է, որը պահպանվում է Հայաստանի պատմության պե-
տական թանգարանի ազգագրական արխիվի Ե. Լալայանի ֆոնդում: Այս
աշխատությունն ունի սևագիր (ղրված Ե. Լալայանի ձեռքով) թերի և մաք-

բազիր (ուրիշի ձեռքով արտագրված) ամբողջական օրինակ: Աշխատությունը որոշ հապավումներով հրատարակել է Մ. Ղ. Գարբինյանը «Բանբեր-Հայաստանի արխիվներին» հանգեսում (1974, № 3):

Գր. Վանցյանի «Մուրճ» հանդեսում հրատարակած գրախոսության առթիվ Ե. Լալայանի պատասխանինց և կողմնակի այլ հիշատակություններից պարզվում է, որ մինչ 1890-ական թվականներին արդեն Ե. Լալայանն ուներ պատրաստի վիճակում Ջավախքին վերաբերող մի ամբողջական աշխատություն (շուրջ 1600 էջ ծավալով), որի մասին գրական կարծիք են հայտնել պրոֆ. Գ. Խալաթյանը և Սահակ-Մեսրոպյան մրցանակաբաշխության հանձնաժողովը:

Հնարավորություն չունենալով այդ աշխատությունը առանձին գրքով, ամբողջական տեսքով հրատարակելու, Ե. Լալայանը այդ աշխատության նյութերը լույս է ընծայում հատվածաբար՝ սկզբում «Ջավախքի բուրմունք» բանահյուսական ժողովածուն, ապա որոշ ազգագրական նյութեր «Հանդես ամսօրեա»-ում, ֆրանսիական մարդաբանական հանդեսներում և վերջապես հիմնական մասը պարբերաբար հրատարակվում է իր իսկ հիմնադրած «Ազգագրական հանդեսի» Ա, Բ, Գ, Դ գրքերում:

Ցավոք, այդ մեծ ու արժեքավոր աշխատության շատ նյութեր (ժողովրդական խաղեր, պարերի նկարագրություններ, երգերի նոտագրություններ, բարբառի ուսումնասիրություն, առակներ, հեքիաթներ, առածներ, լուսանկարներ և այլն) չեն արժանանում տպագրության: Մեր պրպտումները տարբեր արխիվներում ցանկալի արդյունք չավեցին: Հայտնաբերվեց միայն այդ աշխատության ձեռագիր մի հատված՝ «Կարնո գաղթականություն», որը և տպագրվում է ներկա հատորում:

«Ջավախքի բուրմունքի» առթիվ Գր. Վանցյանի գրախոսության մեջ կան իրավացի դիտողություններ՝ նկատված վրիպակների և բարբառից կատարված շեղումների վերաբերյալ: Ե. Լալայանն իր պատասխանում ընդունում է դրանք և բացատրում նրանով, որ դրքի տպագրության ժամանակ արտասահմանում գտնվելու պատճառով ինքը անձամբ չի կարողացել վերահասու լինել սրբագրությանը:

Մենք աշխատել ենք որքան հնարավոր է շտկել այդ վրիպումները: Այսպես, օրինակ, «Ջավախքի բուրմունք» ժողովածուի «Երկրադործական երգեր» բաժնում տպագրված է՝ «Մուսլիկ գիշեր ու գին գազեր», ճշգրտել ենք՝ «Մուսլիկ գոմեշ ուր գին գուզեր» և այլն:

Ե. Լալայանը իր պատասխանում առարկում է նաև Գր. Վանցյանի ոչ իրավացի դիտողություններին: Խոսելով Գր. Վանցյանի այն դիտողության մասին, թե ինչու ժողովածուի նյութերը տարբեր բարբառներով

են, Ե. Լալայանը պատասխանում է. «Իմ նպատակս չի եղել միայն Կարնի գաղթականների մասին նյութեր հավաքել, այլ Ջավախքի ամբողջ ազգաբնակչության և բացի դրանից այդ գավառաբարբառի նմուշներն անհրաժեշտ են մի գավառաբարբառի մի ուրիշ գավառաբարբառի աղդեցության տակ կրած փոփոխություններն ուսումնասիրելու համար» («Մուրճ», 1892 թ., № 10, էջ 1493):

«Ջավախք» (նյութեր ապագա ուսումնասիրության համար) աշխատության «նշանավոր տոներ» բաժնում Ե. Լալայանը դրել է Հ. Մալխասյանի «Բարեկենդան» հոգվածը, նշելով դրա մասին հետևյալը. «Որովհետև բարեկենդանին ես գյուղերում չեմ եղել, ուստի խնդրել եմ պ. Մալխասյանին, որ տեղացի է, նկարագրելու այդ, որի համար և շնորհակալությունս եմ հայտնում»:

ՑԱՆԿԵՐ

ԱՆՉՆԱՆՈՒՆՆԵՐԻ

- Արզուկ Կասին 41
- Արեւյան Պ. 31
- Արեւիյան Մ. 9, 13, 25
- Արիխ 46
- Արուզա 37
- Աղամ 236, 341
- Ազնաուրյան Հ. 441
- Ազորիկ թագավոր վրաց 42
- Աթարեհիյան Լ. 15
- Աթանաս 300
- Աթո 218
- Աթոյենց Մինաս 256
- Ալ 236
- Ալեքսան 375
- Ալեքսանդր Բ 63
- Ալեքսանդր Մակեդոնացի 18, 36, 40
- Ալեքսանդր, վրաց թագածառանգ 39
- Ալիշան 45
- Ալմաստ 411
- Ալֆատին 398
- Ախլցխու փաշա 39
- Ակինյան Ն. 32
- Ակո 361
- Ահարոն 345
- Ահմատ բեկ 300
- Աղանիկ 371, 372
- Ահառյան Արմենուհի 24
- Ահառյան Հ. 9, 24
- Ամբակում իշխան 61
- Ամիրջուան 429
- Այան աղա 438
- Անանիկյան Ստեփանոս 56
- Անատոլիոս 416
- Անդոր 438
- Անետ 242
- Անուշավան 385
- Աշուշա բղեշխ 35
- Ասատուր 233, 234
- Ավետիք 368, 369
- Ատրպետ 13
- Արամ 294
- Արամզեւ թագ. վրաց 42
- Արեգնաղան 429
- Արշակ 359, 360, 361
- Արշեղ կամ Արշիկ թագավոր վրաց
- Արտաշամա 36
- Արտաշես Ա 36
- Արքայիկ 24
- Բագրատ Արտանուշցի 42
- Բագրատ Գ. թագավոր վրաց 36
- Բագրատ Դ 37
- Բագրատ Մեծ 41, 42, 43
- Բաղալ 246
- Բալլուլ փաշա 432
- Բաղդասարյան Խորեն, քահանա 304

- Բալազիտ սուլթան 300
- Բաշ-աղա, Խրքթըզի գալմադամ 41
- Բարդուղիմեոս եպիսկոպոս 439
- Բարսեղ քահանա 59
- Բարսեղյան Ա. 23
- Բեկուլի 437
- Բենես (Սահակ Մովսիսյան) 24
- Բերնաշնակի Ա. 31
- Բորողին Ի. 12
- Բունակ 28
- Գարբիել հրեշտակ 211, 337
- Գալուստյան Աղաջան 68
- Գալուստյան Գալուստ 68
- Գալանն 348, 349
- Գարան 385
- Գարարզ 415
- Գրիյան Կարապետ 80
- Գեղամյան 435
- Գեղամյան Հայկ 438
- Գեորգի Գ. 43
- Գյուլպանկյան Սարգիս 377
- Գյուլֆերի 181
- Գրիգոր 86, 293, 295, 302, 361, 400, 429
- Գրիգոր Լուսավորիչ 212, 418
- Գրիգոր Տաթևացի 18
- Գրիգորյանց Խաչատուր 439
- Գրիգորյանց Ստեփան 431
- Գուդուվիլ, զորավար 39
- Գուշար 35
- Գևորգ 434
- Գևորգ Փ. թագավոր 75
- Գևորգ Սահակաձե 40
- Դաբաղյան Վեսպեր 23
- Դադյան 24
- Դավիթ 41, 51, 372
- Դավիթ Անհաղթ 18
- Դավիթ Հայրապետ 297
- Դավիթ մարգարե 345
- Դարբինյան Մ. Ղ. 442

- Դեյրու Քեոփիլոս 415
- Դարեհ 415
- Դերեբրդի Մահմետ 429
- Դիմիտրի արքա վրաց 43
- Դիվին 51
- Դշխուն 375
- Դրողով գավառապետ 126
- Եղիա մարգարե 240, 241, 344, 390
- Եղիկողլի Կարապետ 428—430
- Եղիսարեթ 86
- Եվա 236, 385
- Երևմիա 297
- Երևանու սարգար 39
- Եփրեմ 294, 362
- Եփրեմ կաթողիկոս 431, 437
- Զաքարյակի 87
- Զանադան 429
- Զանդ ժորժ 31
- Զելիսակի Ս. 9
- Զևոր Գլակ 305
- Զրմո 378
- Զվիագ իրիստավ 43
- Զվյագինցե Ն. 31
- Թադոն 327, 385
- Թադոս առաքյալ 297
- Թադոս վարդապետ 436
- Թախր-բեկ 58
- Թահմազ շահ 42, 300
- Թահի 297
- Թամար թագուհի 43, 44, 75
- Թանջա 385
- Թելլոր Լ. 31
- Թեոդոս գրիչ 305
- Թեոդոս կալսր 416
- Թեոդորոս 294
- Թորոմանյան Թ. 9
- Թորոս 295
- Թորոսյան Հ. 9
- Թումա 297

1 Անձնանունների շարքում ընդգրկված են նաև գերբնական և երեակայական էակների անունները:

Իգնատիոս քահանա 300
Իսահակյան Ա. 24
Իսկուհի 184
Իսմայել 296
Իսրայել 377
Իփեկյան Գ. 13

Լալայան, Երվանդ Ա. 7—32,
441—443

Լեկեոն հրեշտակ 215, 216
Լեկեոն ձուկ 392
Լեւոնյան Ե. 31

Լեոն 9
Լիպարիտ Օրբելյան 37
Լիսիցյան Ատ. 9
Լոխման 395—398
Լևոն 305

Լևոն Գ., թագ. արխաղայ 43
Լևոնյան Գ. 13

Խալաթյանց Գր. 13, 17, 442
Խաղութ 297
Խամալան 41

Խաչատուր վարդապետ 305
Խենթ 297
Խմշի-օղլի 41

Խոստիկյան Մ. 13
Խրիմյան Մկրտիչ/Հայրիկ 8, 9

Սաղկար Մկր 223

Վարձիկովներ 63—65
Վաճո 58

Վախտարյո աթարեկ 42
Վանայան Ս. 13
Վանեսարին Գ. 31

Վատրալեսկի 39
Վարա-Մուրզա Հ. 9
Վարապետ աղա 209

Վարապետ արքեպիսկոպոս 125, 428—440
Վարապետ էպիսկոպոս 58, 83
Վարապետ Վանեցի 433

Վարապետ քահ. Ռայիսյան 297

Վարապետ քահ 85
Վրլիսկեզոն 88
Վիրակճուրբ ոգի 232, 233

Վիրակոս 297, 386
Վիրակոսյան Գրիգոր 56
Վյուրիկյան թագ. 36

Վյուրոս թագ. 40
Վոլոշի 89, 90
Վոստանդին Ա., թագ. վրաց 43

Վովալեսկի Մ. 31
Վուժիկյան Շ. 23
Վարդին 181

Վուրդինյան Տեր-Առաքել 66

Հալիբ-փաշա 425
Հակոբ 411, 430

Հակոբ կաթողիկոս 301
Հակոբ ամիրա 432

Հակոբ պատրիարք 256, 402
Հակոբ վարդապետ 430
Հաճի-բեկ 58

Համբարձումյան Հ. 13
Համիր 420

Հայկանուշ 386
Հայր Արրուհամ 344

Հասան Օղլի Հասան խան 86
Հասան Օղլի Փաշա աղա 66
Հարություն 351, 370, 429

Հարություն վարդապետ 439
Հարությունյան Արամ 8
Հարությունյան-Լալայան Հայկանուշ 8,
12

Հեթում Բ. 66—67
Հեղինե 85

Հեղնար 245, 386
Հերակլես թագավոր Կախեթու 37
Հիշտեկ կամ Վիրակճուրբ ոգի 232, 235

Հիսուս Քրիստոս 168, 236, 331,
333, 334, 337, 338, 341, 344, 346, 348
Հորոս 22

Հոռոմ (Հոփփսիմե) 86
Հովհաննես (Հանես) 39, 92, 298, 429
Հովհաննես գրիչ 297

Հովհաննես եպիսկոպոս 298

Հովհաննես կաթողիկոս 36
Հովհաննես պատրիարք 431
Հովհաննես վարժապետ 433

Հովհաննես վրացի եպիսկոպոս 43
Հովհաննես քահ. Իգիթյանյանց 210
Հովհաննիսյան Մ. 13

Հովհաննիսյան Սարգիս 394
Հովթ Երանելի 393, 394
Հովսեփ գրիչ 298

Հովսեփ 213
Հ. Վ. 15

Ղազար 362
Ղեկիբ փաշա 435, 436

Ճոնյաց 43

Մալխասյան Հ. 279, 443
Մակիտ 386
Մահմուդ սուլթան 402

Մահմուդ խան 296
Մամիկոնյան Հակոբ 431
Մանգիլոզյանց 438

Մառ ն, 29
Մատթեոս առաքյալ 214
Մատթեոս Ուոհայեցի 37, 305

Մարգարիտ 86
Մարթա 334
Մարթամ 213, 335, 337, 342, 346, 348

Մարթամ Մաղթաղիեացի 292
Մարկոս 389
Մարտիրոս 241, 338, 342

Մարտիրոսյան ն. 23
Մելիքսեթ-Բեկ 9, 13
Մելիք-Աղաբյան Ա. 10, 12

Մելիք-Փաշայան Կ. Վ. 32
Մելքոն 302, 304
Մեղավորյան Հ. 9

Մեսրոպ 43
Միլարիտ 415
Միհրդատ 36

Միհրդատ Գ 42
Միհրան բղեշխ 36
Միքայել արքեպիսկոպոս 430

Միքայել հրեշտակապետ 239
Մխիթար 71, 73
Մխիթար Գոշ 29

Մխիթարյաններ 8, 30
Մկրտիչ 419
Մուկիբ 31

Մուլա Նասր-էղդին 22
Մուսիկ 219—220
Մովսես 343

Մովսես երբեմնացի 35
Մովսես Մարգարե 252
Մորզան Լ. 31

Մուսվյան Ա. 28
Մուհամմեդ 394
Մուհամմատ սուլթան 301

Մուշեղ սպարապետ 36
Մուսիկ 221
Մուրատ 386, 409

Յաղության Կարապետ 55
Յաղութ 378, 385
Յուզաբեր 209

Նադեժդին 101
Նազինյան Ա. Մ. 32
Նազու 359

Նահապետ ձերբունի 82
Նապոլեոն 1-ին 425
Նավասարդյան Տ. 17, 21

Նևրսես 86, 331
Ներսես Մեծ 348—349, 418
Նժդեհյան Գր. 24

Նիկողայոս Աթանչելագործ 66—68
Նինեֆար 298
Նոյ 393, 394—395

Նունես կույս 48
Նուրին 386

Շալմյան Ս. 23
Շահաղեղ Ս. 9
Շերենց Գ. 17

Շերենցյան Գրիգոր 433, 438
Շմալոն 377
Շողան 387

Շողեր 242, 243, 386, 397

Շուպեն 35
Շուշան 86, 327, 387
Չարրզ Արամ 24
Չմշկյան Կարապետ 433
Չոպանյան Ա. 30
Չորեքմուսր ոգի 232, 233, 235

Պալխո 291
Պալպուրոցյան, կալվածատեր 52
Պանգելեվոն բժիշկ 66, 68
Պապ Քազավոր 298—299
Պապիկ 86
Պապյան Մարգար 378
Պասկևիչ 39, 437, 438
Պատուլչի գնդապետ 39
Պեզադյան Ե. 23
Պեղձևոն 211, 215, 216
Պետրի 31
Պետրոս 332, 334, 338, 339
Պետրոս քահանա 296
Պլինիոս 415
Պոզոգա Ա. 31
Պոզոս 237, 252, 334, 338, 339, 369
Պոմպեոս 40

Ջավախոս 35, 42
Ջիվանի 13
Ջճանշահ խան 298

Ռանսկի, դորապետ 41
Ռիլենկամպֆ 50

Սազայել 215, 216
Սաթղ աղա 61
Սալլաթ 359, 360, 361
Սահակ 411
Սամել 302, 304
Սամուելյան Խ. 31
Սանամ 378, 287
Սապոգելա ոմե 85
Սառա 334, 387, 426—427
Սարգիս 88, 296, 299, 377
Սարգիս աթաբեկ 37
Սարգիս Ճոնյաց 43

Սարգսյան Ա. 8, 31
Սարգսյան Մկրտիչ 252—253
Սարիբեկ 297
Սեդրակ 377
Սելիմ 300
Սերովբե հրեշտակ 211
Սիլեյուս Աճառ աղա 435
Սիրբին (Սրբուհի) 86
Սկինդեր 28
Սմբաթով զավառապետ 87
Սոլարյան Ա. 24
Սողոմոն 68, 345, 347
Սողոմոն Քաչ. Խմերկթիայի 37
Սողոմոն իմաստուն 391
Սոնա 319, 385
Սոֆո 323
Սպենսեր Հ. 16
Ստեփան-Տեփան 184
Ստեփաննոս 39, 332
Ստեփանոս Նախավկա 66—68, 215
Ստարաոն 415
Սրվանձալանց Գ. 17
Սուլեյման Խոնդկար 300
Սուլթան Մահմուտ 439
Սուրբ Արիստակես 401
Սուրբ Գրիգոր 72, 342
Սուրբ Գևորգ 57, 245, 246, 259, 292, 341, 344
Սուրբ Կարապետ 214, 244, 245, 246, 256, 292, 296, 350
Սուրբ Կիրակոս 338
Սուրբ Հակոբ 245, 259, 302, 407
Սուրբ Հակոբ Մծրնա հայրապետ 66—68, 298
Սուրբ Հարություն 287
Սուրբ Հովհաննես 295
Սուրբ Մարգարիտ 332
Սուրբ Նիկողոս 71
Սուրբ Սարգիս 13, 71, 245, 255, 270—272, 298, 340, 341, 349
Սուրբ Ստեփանոս 293
Սուրբ Վարդան 305
Սուրբ Վառվառն 419
Սուրբուս վարդապետ 126

Վալզեն, Քաչ. վրաց 35
Վախթանգ Ե 35
Վախթանգ Ղուրդասյան 35
Վախուշտի 40, 42
Վաղարշակ Ա 35
Վալյան հավր 392
Վանո 9, 93
Վանցյան Գր. 15, 89, 441, 442
Վասիլ Քազավոր 293
Վարդան 86, 231
Վարդան Բարձրբերդցի 43
Վարդան բղջիս վրաց 35
Վարթեղույանկենց 219—220
Վարթուն 86
Վերա Ջիմշուտ 41
Վերմիշ Գ. 109

Տեր-Աղեքսանդրյանց Գ. 17
Տեր-Առաքել հայր 68
Տեր-Առաքել Սյունյաց եպիսկոպոս 305
Տեր-Ավետիսյան Տեր-Գրիգոր 60
Տեր-Բարդուղիմեոս 291
Տեր-Գարբրիելյան Տեր-Վարապետ 300
Տեր-Գրիգոր քահանա 439
Տեր Գավթիթ 295
Տեր Զարարիտ 295
Տեր Ըստասկես 298
Տեր Հակոբ 296
Տեր-Հարությունյան Տեր-Մակար 78, 80
Տեր-Հովհաննիսյան Գևորգ 433
Տեր-Նազարյան Ղ. 15
Տեր-Սանվելյան Պետրոս 39
Տեր-Մելքոնյան Տեր-Ստեփան 300
Տեր Մովսես 341
Տիգրան 376
Տիմոթ վարդապետ 43

Տիրուն 369, 387
Տորոզով 50
Ունան 345
Ուվարովա Պ. 25
Ուրբաթմուսր ոգի 232, 233, 235

Փանար 302
Փասունձև 387, 388
Փանավաղ Քաչ. 42
Փարսման Քաչ. 42
Փավստոս Բուզանդ 36
Փախադյան Վրթ. 24
Փեթոն 376
Փելեմալճյան Աղարաբ 39
Փիլիպպոս առարյալ 214
Փորբշիկյան Խ. 24
Փայայանց Թորոս 429

Քերոբ 142, 377
Քերովրե հրեշտակ 211
Քյոսա տերաեր 230
Քյոսովի 51, 77
Քրիստոս 66, 88, 124, 168, 206, 211, 212, 229, 236, 292, 293, 294, 295, 300, 302, 331, 336, 338, 339, 341, 342, 343, 346, 350, 351, 390, 392, 394: Տե՛ս նաև Հիսուս Քրիստոս

Օհան Օձնեցի 18, 403—404
Օհաննես 371
Օսկևհատ 86

Յալլատի 398
Յարմանյան հաճի Կարապետ 440
Յիրման 438
Յիրաղ 378

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ

Արամիստան 118
 Արտովկա գյուղ 50
 Արխայի բերդ 42
 Արուզ գյուղ 297
 Արուզ լիճ 46, 50
 Արուզ լեռ 46, 57, 257, 371,
 Ադիաման գյուղ 26
 Ալաթուսան գյուղ 50
 Ալաշկերտ 19, 23, 358
 Ալաստան գյուղ 84, 127
 Ալեքսանդրապոլ 7, 21, 23, 53, 63, 114,
 119, 124, 328, 415, 438:
 Ալեքսանդրապոլի գավառ
 44, 90, 180, 213:
 Ալիշան լիճ 50
 Ալվար գյուղ 57
 Ախալցխա 7, 37, 52, 53,
 85, 118, 119, 124, 223, 328, 388,
 404—405, 415, 420, 433, 438, 439,
 440:
 Ախալցխայի գավառ 40, 90,
 108, 180:
 Ախալքալաք 7, 8, 19, 54—56, 57,
 60, 61, 63, 65, 79, 91, 95, 96, 108,
 116, 129, 388, 438:
 Ախալքալաքի գավառ 14, 36, 37,
 38, 39, 41, 44, 47, 48, 50
 52, 54, 77, 83, 91, 93, 95,
 96, 99, 101, 104, 107, 212,
 108, 109, 110, 116, 119, 121,
 191, 238, 244, 245, 259, 260, 291,
 415, 440

Ախալքալաք-չայ 58
 Ախալքալաքի դաշտավայր 51, 52
 Ականջ գյուղաքաղաք 298
 Աղղաշ 57
 Աղթամար կղզի 297
 Աղրատ սուրբ ուխտատեղի 261
 Անափ 438
 Անդրիկովկաս 8, 23
 Աշտարակ 21
 Ասիա 41
 Ասորեստան 415
 Ասպինջա 40, 438
 Արա բերդ 60
 Արարատան 402
 Արագած գյուղ 60—61,
 127, 261, 297:
 Արագած 58
 Արարատյան դաշտ 21, 23
 Արդահան 57, 59, 68, 119,
 280, 411:
 Արդահանի գավառ 14, 39, 44,
 50, 83, 85, 90:
 Արտղ (Արաքս) 238
 Արծաթի 306, 415:
 Արձրունիք 297
 Արճեշ 23
 Արնբուստեք լճակ 50
 Արտաշատ 418
 Արրեն 426
 Արցախ 24
 Արփալայ 440

Բարերդ 302
 Բայազետ 19, 438, 440
 Բայրուրդ 438
 Բասեն 23
 Բավրա գյուղ 14, 85, 118
 Բարալեթ 58—60, 24, 90, 127:
 Բարձր Հայք 415, 428
 Բեժանո գյուղ 45, 58, 298:
 Բիրբեր սար 44, 46
 Բերդի լիճ 65
 Բղավես գյուղ 261, 291
 Բիղեշինու բարձրավանդակ 57
 Բիթլիս 23
 Բինգյուլ 205, 406
 Բուլալու բարձրավանդակ 57
 Բոյուկդարու գետ 48
 Բորժոմի 44
 Բորչալու 119
 Բույանըխ 357, 358
 Բուղղաշեն լիճ 4, 50

Գաղեշ գյուղ 300
 Գանձա գյուղ 51, 127, 184,
 242, 246, 260:
 Գանձայի գետ 48
 Գանձակ 19
 Գարեխայի ոստիկանություն 40, 63
 Գարիլովկա 62—64
 Գելադի վանք 43
 Գեղարքունիք 15
 Գիլլի դեռ 26
 Գիմպիժու ձոր 229
 Գլակա վանք 214
 Գյոզգաղ 57, 65, 260
 Գյոզգաղի լեռնաշղթա 44
 Գյոզգաղ (Կապույտ լեռ) 47
 Գյուլա հասարակություն 85
 Գյուլմուրգա գյուղ 43, 66 231,
 50, 53
 Գյուլիի թաղ 354, 355
 Գյումրի 245, 338, 438, 439, 440:
 Գողտաշ լեռ 209
 Գողորբերի լեռ 46
 Գոթկլլու գյուղ 77

Գուլավեր 359
 Գոմ գյուղ 252, 261
 Գոնդուրա գյուղ 127
 Գովա գյուղ 60
 Գորի 44
 Գուգարք 35, 36
 Գաղեշ 261
 Գավազրան լ-շղթա 47
 Դեներ 26
 Դիլիսկա գյուղ 127, 246, 291, 392:
 Դիլիթ գյուղ 45, 53, 83, 261, 291:
 Դերիկ 416
 Եների 416
 Երուշեռ 35
 Երուսաղեմ 68, 171, 173, 211, 227,
 338, 399:
 Երեան 12, 317, 318, 322, 328, 354:
 Եփրատ 238, 415

Զագյուրտան լեռ 53
 Զակ գյուղ 53, 118
 Զանդեղուր 19, 23
 Զանգուրա 181
 Զրեշու գուշավայր 45
 Էլար 27
 Էկին 430
 Էշտիա գյուղ 84, 118, 127, 181:
 Էջմիածին 11, 431
 Էրզրում 57, 240, 291, 305, 388, 406,
 415—417, 419—420, 424, 433,
 435, 437, 438, 439:
 Էրզրումի գավառ 39
 Էրզրումի վիլայեթ 83
 Էլատոձոր 428
 Թաղեստ առաքյալի տաճար 298
 Թավրիզ 300
 Թափարավան դեռ 48, 54, 61:
 Թափարավան լիճ 45
 Թարշա 260

1 Տեղանունների շարքում ընդգրկված են նաև շինությունների, ամրոցների, վանքե-
 րի, ուխտատեղիների անունները:

Քննչություն 415
Քննիչի միևնույն 416
Քրիստոս 416
Քրիստոս 7, 10, 11, 12, 13, 25, 26,
29, 30, 114, 118, 119, 124, 420
Քրիստոսի գավառ 90
Քրիստոսի նահանգ 44, 107, 108:
Քմեցիներ 403
Քմեցի կամ Քմեցի 70--72, 406
Քորթան գյուղ 65
Քորթի գյուղ 84
Քոփ-գող լեռ 438
Քվանճ գյուղ 84, 426
Քրիստոս լեռներ 39

Ճնճ 8, 31
Իլիճա 415
Իջնալա 416

Լեկնա ավերակ 58
Լենինգրադ 28
Լեռնային Ղարաբաղ 7
Լիճ 430
Լոնդոն 8
Լոռի 19, 23
Լուսավորիչ լեռ 260

Խաղաղաց գավառ 302
Խանդոյի 52
Խանչալիի գյուղ 47, 57
Խանչալիի լիճ 49, 241
Խաչ Մաղարա 83
Խաչի սար 261
Խիզարավրտ գյուղ 84, 114, 127:
Խըրթըղ 40—41, 45, 83, 115, 127:
Խըրթըղու հովիտ 52
Խըրթըղի Լորակ 54, 114
Խըրթըղ 438
Խոմեմի-խեի գետ 58
Խնուս 83, 84
Խոզաղային լիճ 44, 52, 56, 57
Խուլղումա գյուղ 14, 85:
Խոշա վանք 319

Խոսպիա լեռ 260
Խորենյա գյուղ 83
Խորթըղ 259
Խորթըրակ 418
Խորթուն գավառ 302
Խրամ բաղաբ 25
Մալկա 44, 415, 440
Մաղկավանք 325
Մալկի գյուղ 62
Մուղրուք 400
Մունզու 42—43
Մունզուի եկեղեցի 42

Կաթնաղբյուր 417
Կաղզվան 23, 321
Կամուխ 399
Կան գյուղ 429
Կասպից ծով 296
Կարանառ ավերակ 58
Կարապետյան ուսումնարան 433
Կարին 68, 83
Կարծախ գյուղ 52, 56, 57, 58, 127,
181, 260, 309, 394, 431
Կարմիր վանք 319
Կարմիր վանք գյուղ 25
Կարնո բարձրավանդակ 417
Կարնո գավառ 415—440
Կարնո շամբ 415
Կարս 23, 39, 57, 119, 300, 437, 438,
440

Կարաբիկում գյուղ 14, 58, 85, 127, 118-
Կեղի գավառ 302, 304
Կիլիկիա թագ 57
Կյուստուլու լեռ 44
Կյուսուր 416
Կոկիտ գյուղ 45
Կոլք 325
Կոլքուր 36
Կոստանդնուպոլիս 30, 84, 424, 430:
Կովկաս 11, 30, 41, 48, 59, 191
Կորխ գյուղ 48, 58, 118, 370
Կովկասի 41
Կուրկում գյուղ 118 291

Կուկաս 372
Կուսկուս 372
Կուռնալեթ գյուղ 260, 262, 221, 400:
Կուր 41, 44, 48, 52, 71, 72, 73
Կուրի գաղաթաղ 35
Կուրյան շայ 49

Հարեչառան 407
Հալեպ 420
Հոգաբանի 29
Հայաստան 28, 30:
Հայոց աշխարհ 299
Հասան-Ղաթա 437
Հարադոզի ձմնապարհ 239
Հարթ 23
Հին Նախիջևան 23
Հինձր գյուղ 418
Հնդկաստան 42
Հննար լեռ 467
Հոկամ գյուղ 57, 127
Հոկամ լիճ 50
Հորդանան 168, 331
Հունուս գյուղ 428

Ղատանա լեռ 65
Ղափուրմա գյուղ 48
Ղարաբաղ 23
Ղարաղախի լեռներ 47
Ղարաղուզե լեռ 46
Ղարաղուզե լ-շղթա 47
Ղարասու գյուղ 300
Ղարասու թափա 261
Ղափան 24
Ղըզլը-Քիլիսա գյուղ 49
Ղըրխ-բուլաղ 48, 54
Ղուլախի գյուղ 26, 302
Ղուռթ-Ղուստեղ 377

Ճանճղա գյուղ 261, 291, 298, 301
Ճղաղալորի վանք 260
Ճիկիս 415
Ճուլ լեռ 44
Ճոպ լեռ 57
Մակարդասու դեռ 48

Մանից գյուղ 72
Մատառասու լեռներ 47
Մատառասու լիճ 49
Մարգարատան 42, 54, 115
Մարտիկ ձոր 44
Մարտու զինակ 48
Մեծ Արաբյալ գյուղ 51, 261
Մեծ գյուղեջ լեռ 65
Մեծ Արաբ լեռ 46
Մեծ Դու գյուղ 57
Մեծ ձոր 60
Մեծ ջուր գետ 48, 58:
Մեծ Մամար գյուղ 79—82
Մեռած ծով 392
Մկրենիս գյուղ 81, 118
Մլաքը 242, 243
Միխայիլովա 119
Մուխու զուղ 44
Մոկա 23
Մոկրիս(Քոս) լեռներ 47, 48
Մոկրիսի գյուղ 399, 400
Մոսկովա, Մոսկով 26, 27, 435
Մրթախ ձոր 26
Մրթեթ 41
Մուլիս 314
Մուլ 358, 406
Մուտուրկա գյուղ 418
Մուրադվա գյուղ 54
Մուրադվախի լեռներ 45
Մուրասա շայ 238
Մուրճ գյուղ 77

Յոթվերք 245
Նախիջևան 25
Նահատակի աղբյուր 417
Նոյաբաղախի գետ 77
Նարայար 85
Ներսիսյան գյուղ 7
Նիժ 16
Նիկիա 401
Նիսա գյուղ 57
Նոր Բայազետ 15, 30
Նոր Բայազետի գավառ 15, 25

Նոր Նախիջևան 24
Նորաշեն թաղ. 57
Շահաստան բաղար 300
Շամշի քաղաք 407
Շավենարաթ կամ Դալի դաղ լեռ, 44, 46
Շատախ 23
Շարուր-Դարալուգյալ 23, 24, 26
Շիրակալ վայր 319
Շրեշ բլուր 27
Շուշի 8
Պակիանց կամ Սուքիասյանց լեռ 415
Չանդուրա գյուղ 58
Չրխաղվար լեռ 53
Չլորի լեռներ 45
Չխարտբելու հանրալին չուր 53
Չորեքեաի լեռներ 53
Չորեի կամուրջ 230, 407—409
Չպլախ լիճ 50
Պատկանա գյուղ 48
Պարսկաստան 41, 419
Պոլիս 41, 404
Պոնտոս ձով 36, 296
Ջավախք 19, 21, 34—413
Ջահուկ գետ 296
Ջենիս գյուղ 61, 62, 426, 439
Ջուրղունիս գյուղ 47
Թաղիսնովկա գյուղ 45, 51
Թեխա գյուղ 86
Թշուռնիք 23
Թուսաստան 32, 57, 107—108, 439:
Պաթլիսա գ. 51, 61—62, 127, 181, 291, 298
Պաթլիսա գետակ 48, 50
Սահաթարակո 37
Սաղամոս գյուղ 48, 45, 65—66
Սամսար լեռներ 44, 46, 77
Սամսար լեռ 53
Սամցխե 41
Սանահին 29
Սասուն 23
Սարոս գյուղ 114, 52, 124

Սիմոնի գյուղ 361
Սիրակ գյուղ 261
Սիրակ մատուռ ուխտատեղի 261
Սղնաղ ամբոց 49, 53
Սոկյուսլի գյուղ 62
Սովուկ չերմուկ 415
Սպեր 242, 428
Ստամբուլ 319, 380, 403
Սրբի սար 260
Սուրպ գյուղ 65, 260, 291, 292:
Սուկերլաթ բերդ 61
Սուրբ Աստվածածին ուխտատեղի 262
Սուրբ Աստվածածին վանք 432
Սուրբ Աստվածածին վերափոխման եկեղեցի 43, 73—75
Սուրբ Ավետարան ուխտատեղի 261
Սուրբ Գրիգոր ավետարան ուխտատեղի 260, 262, 291
Սուրբ Դեորդ մատուռ 65
Սուրբ Դեորդ կամ Յուլյան վերան ուխտատեղի 260, 261
Սուրբ Բենդուրուս ուխտատեղի 260
Սուրբ Կուսովորչի վանք 432
Սուրբ Խաչ Լիկղեցի 55, 125, 126, 432
Սուրբ Խաչատուր ուխտատեղի 261
Սուրբ Հակոբ ուխտատեղի 261
Սուրբ Հովհաննես վանք 241
Սուրբ Հովհաննես ուխտատեղի 56, 260, 262
Սուրբ Հովհաննես Մմինդա Թաանեն ուխտատեղի 261
Սուրբ Մինաս ուխտատեղի 60, 361
Սուրբ Նշան լեռ 438
Սուրբ Սանդիսյան ուսումնարան 126, 129
Սուրբ Սարգիս ուխտատեղի 60, 261
Սուրբ Ստեփանոս ուխտատեղի 261
Սուրբ Փրկիչ եկեղեցի 53
Սե չուր 238, 415, 418
Վաղարշապատ 21
Վալոց ձոր 30
Վան 19, 23
Վանսղոմ/Վանեցոմ 406

Վաչիանի գյուղ 53, 127, 181, 260, 298.
Վաչիանոս լիճ 50
Վաստուրական 16, 19, 29, 30
Վարդավ գյուղ 84
Վարդաշեն 16
Վարձիա կամ Վարձուհիք 26, 43—44, 73—77, 213, 401, 496—407
Վարկան գյուղ 84, 118
Վարկանդու գետակ 45
Վեյ գյուղ 85
Վենետիկ 30
Վերա թաղամաս 41
Վիեննա 8
Վրաստան 26, 28, 36, 41, 42
Տաճկաստան 37, 57, 419
Տամբուկա գյուղ 45
Տամբուկույի գետակ 48
Տավ-դոթեի լեռ 44, 46
Տավշան-Սափա բլուր 260
Տիոնետու գավառ 108
Տմախուր լիճ 44, 49
Տյուսիկ կամ Թոսկլի 41—42
Տոր-ձղալի գետ 35
Տրոիցկա գյուղ 45
Տուման-գյուղ լիճ 45, 48
Տումուլ լեռ 415, 418
Տոմսուր գետ 48
Տուս գյուղ 14, 85, 86
Տուրքիս գյուղ 64
Յիլիե-չվարի լեռներ 45
Յիպերեախիկեղի լեռնաշղթա 44
Ուղուն-Օրա Աշադա գյուղ 25
Ուճմանա գյուղ 84
Փուլանթոբյան լեռ 415
Փամբակ 440
Փարիզ 8, 14
Փարսլի 21
Փարսլանու կալ Թափարավան լիճ 48,

241
Փիս գյուղ 52
Փոթի 119, 438
Փոկա գյուղ 51, 83, 181, 300
Փոցխով գետ 35
Փոքր Աբու 46
Փոքր Արաղյուլ 261
Փոքր Գյունեյ սար 65
Փոքր Կու գյուղ 57
Փոքր Մարթիա ավերակ 79
Փոքր Սամսար գյուղ 79—82
Փոքրիկ Ավետարան ուխտատեղի 261
Քաղերեղոն 365
Քաղց սուն 42
Քաղերեղոնիք 24, 298
Քառսուն մակուեր 282—283
Քարվոր 415
Քիսուսի գետ 52
Քիսուսի լեռ 79
Քիլգա գյուղ 84, 127
Քյուլթափա գյուղ 25
Քյուլթաբյան 177
Քորյան 438
Քուզլու ապաստան 46
Քոսոզու բերդ 77—78
Քոսոզու լեռ 81
Քոփոթիք 407
Քուսլուր 238
Սյուդա հանքուլին չուր 53
Սյուլերա գյուղ 261, 291
Սեան ախաբ ուխտատեղի 261, 291
Սղյան վերան 57
Սշական 21
Սոնասու կալ 211
Սվա 437
Սվա Թավթա գյուղ 229
Օրճա գյուղ 58, 118
Օֆ 438
Յրանդասան 398

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ինստիտուտի կողմից	5
Նույնը կալայանի կյանքն ու գիտական գործունեությունը	7

ԶԱՎԱՍՔ (ՆՅՈՒԹԵՐ ԱՓԱԳԱ ՌԵՍՈՒՐՍԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ)

Պատմական համառոտ տեսություն	35
Զավախքի տեղագրությունը	44
Նշանավոր գյուղերը	53
Հնություններ	66
Քնակիչներ	83
Վիճակագրական տեղեկություններ	93
Աղագրականության շարժումը	101
Զավախքի բնական և արդյունաբերական ուժերը և բնակիչների աշտեսական գործունեությունը	109
ժողովրդի լուսավորությունը	125
Հայ գյուղացիների բնակարանները	130
Զգեստ և զարդ	133
Ընտանեկան բարք	138
Հավատք	212
Հավելված. նշանավոր տոներ	266
Հայ դրշագիրներ	291
Զավախքի բանավոր գրականությունից. Վիճակի երգեր	305
Մածկալիզուներ	328

ԶԱՎԱՍՔԻ ԲՈՒՐՄՈՒՆԵՐ

Ազգրքներ	
Առողջություն և հիվանդություն	331
Մենդկանի	331
Աշից հատի	333
Մասհանդուստի	334
Թիթի	335
Առջրմուկի	335
Հիվանդի վերա (կաթնուրիկաց)	335
Ասորյա կյանք	
Քնից զարթնեղիս	335
Անկողին մտնելիս	336
Տղան լողացնելիս	340

Հաց հիճիս	340
Խնացի հարելիս	340
Գեղկալ	340
Գուռը փակելիս	341
Հանրային հարաբերություններ	
Զար աշքի	343
Վախի	348
Զար դրկցից ազատվելու	350
Անորհն մարդկանցից ազատվելու	351
Նրգեր	
Սիրո երգեր	352
Պարերգեր	ՅՄԵՍՍՍՍԻ ԳՆՏՅԻՐԸ 359
Հարսանյաց երգեր	365
Ընտանեկան երգեր	(Խորհրտամբ րմիլ) ԳՄԻՐԸ 368
Մահերգեր	375
Պանդխտության երգեր	Ի 378
Նրկրադործի երգեր	381
Նրգիծական և ծաղրաշարք երգեր	384
Ավանդություններ	
Կրոնական	390
Կերպարանափոխություն	393
Պատմական	398
Տեղագրական	404
Կյանքի պատկերներ	Մալմարոսի 409
Կարեն գաղա	Մալմարոսի 415
Էրզրում և Նորա դուրեղը	415
Քնակիչներ	418
Տեսնական դրություն	419
Կատակաբանություն	424
Կարասիք առնելիս	428
Մանկավարժություններ	
Մանկավարժություն	437
Մանկեր	441
Մանկեր	444
Մանկեր	446
Մանկեր	450

ԵՐԿԱՆԻ ԼԱՍՅԱՆ

Երկեր (Հինգ հատորով)

Հատ. I

Հրատ. խմբագիր Փ. Հ. Մազանյան
Գեղ. խմբագիր Հ. Ն. Գառնապետյան
Տեխ. խմբագիր Լ. Կ. Հանուքյանյան
Սրբագրիչ Ա. Ա. Ավանեսյան

ИБ № 563

Հանձնված է շարվածքի 9. 09 1982 թ.: Ստորագրված է տպագրության 27. 05. 1982 թ.:
Վճ 06823: Չափը 60x84/16 թուղթ № 1: Տառատեսակ «Գրքի սովորական», բարձր
տպագրություն: Պայմ. 26,30 մամ., տպագր. 28,63+2 ներգիր: Հրատ.-հաշվարկ. 2242:
մամուլ: Տպաքանակ 2000: Պատվեր № 950: Հրատ. № 5785: Գինը 3: ք. 65 կր.
ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 375019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24:
Издательство АН АрмССР, 375019, Ереван, пр. Маршала Баграмяна, 24-г.

ՀՍՍՀ ԳԱ հրատարակչության տպարան, 375019.

Երևան, Մարշալ Բաղրամյանի պող. 24:

Типография Издательства АН АрмССР, 375019, Ереван,
пр. Маршала Баграмяна, 24.